ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
(*հոդվածների ժողովածու*)

SCIENTIFIC READINGS
(*collection of articles*)

НАУЧНЫЕ ЧТЕНИЯ
(*сборник статей*)

ՇՈՒՇԻԻ ԱՋԱՏԱԳՐՄԱՆ
25-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԱՐՊԻ ՈՒԳԸ
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ

Ստեփանակերտ 2017

ՀՏԴ 001
ԳՄԴ 72
Գ 602

Շուշիհազատագրման 25 – րդտարեդարձին
նվիրված ուսանողական գիտաժողովի նյութեր

ՏպագրվումէՀրցախիպետականհամալսարանի
գիտականխորհրդիորոշմամբ

Գիտաժողովի խորհուրդ

ՄԱՆՈՒՇ ՄԻՆԱՍՅԱՆ - ԱրՊՀ ռեկտոր, նախագահ
ՎԱՀՐԱՄ ԲԱԼԱՅԱՆ - Արցախի Հանրապետության Ազգային ժողովի փոխնախագահ
ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ - Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի փոխնախարար
ԼԱՐԻՍԱ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ – ՌՀՀ քաղաքականության և իրավունքի ինստիտուտի տնօրեն
ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ – Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի դեկան
ՎԱԼԵՐԻ ԱՎԱՆԵՍՅԱՆ - ԱրՊՀգիտականևմիջազգայինհամագործակցության գծովպրոռեկտոր
ԱՐՄԻՆԵ ԱՌՍՏԱՄՅԱՆ - ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկան
ՎԱՐԴԳԵՍ ՍԱՖԱՐՅԱՆ - ԱրՊՀ պատմության ամբիոնի վարիչ

Գիտական ընթերցումներ: Հոդվածների ժողովածու.-
Գ 602 Ստեփանակերտ: ԱրՊ Հիրատ., 2017.- 340 էջ:

ՀՏԴ 001
ԳՄԴ 72

ISBN 978-9939-1-0676-2
© ԱրՊ Հիրատ., 2017

ՀՏԴ 51(004.02) Կիրառական *մաթեմատիկա*

Նաստասյա Ավետիսյան
ԱրՊՀ, 3-րդ կուրս
nastasya.avetisyan@gmail.com

ԵՐԿՐԱՉԱՓԱԿԱՆ ՄԵԹՈԴՈՎ ԼՈՒԾՎՈՂ ԳԾԽ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ

Ուսումնասիրելով ԳԾԽ-ի լուծման տարբեր մեթոդներ, հանգեցինք այն եզրակացության, որ երկու փոփոխականներով ԳԾԽ-ն նպատակահարմար է լուծել երկարաչափական մեթոդով: Ուսումնասիրելով այդ մեթոդը ստեղծեցի ծրագիր, որը ստանալով անհրաժեշտ տվյալներ՝ ավտոմատ կերպով որոշում է նպատակային ֆունկցիայի արժեքը ու օպտիմալ պլանը:

Բանալի բառեր. մաթեմատիկական մեթոդ, ծրագրավորում, երկրաչափական մեկնաբանություն, նպատակային ֆունկցիա, օպտիմալ արժեք:

Настасья Аветисян
АРГУ, 3-ий курс
nastasya.avetisyan@gmail.com

РЕАЛИЗАЦИЯ ЗАДАЧ ЛИНЕЙНОГО ПРОГРАММИРОВАНИЯ, КОТОРЫЕ РЕШАЮТСЯ ГЕОМЕТРИЧЕСКИМ МЕТОДОМ С ПОМОЩЬЮ СРЕДСТВ ПРОГРАММИРОВАНИЯ

В условиях рыночных отношений из множества возможных вариантов приходится искать наилучшие. Изучив различные методы решения задач линейного программирования, пришли к выводу, что задачи линейного программирования с двумя переменными целесообразно решить с помощью геометрического метода. Изучая этот метод, создала программу, которая, получив необходимые данные, автоматически определяет значение целевой функции и оптимальный план.

Ключевые слова: математические методы, программирование, геометрическая интерпретация, целевая функция, оптимальное значение.

Nastasya Avetisyan
ASU, 3rd year
nastasya.avetisyan@gmail.com

USING THE PROGRAMMING IMPLEMENTATION OF LINEAR PROGRAMMING PROBLEMS WHICH IS SOLVED BY GEOMETRIC METHOD

Studing various methods of solving LPP ve have came to the conclusion that the LPP with two variables is advisable to solve using a geometric method. As the result of the research created a program that, after getting all the necessary data automatically determines the value of the objective function and the optimal plan.

Keywords: mathematical methods, programming, geometrical interpretation, the objective function, the optimal value.

Գործնականում ամենուր հանդիպում ենք տարաբնույթ խնդիրների, որոնք արտացո-լում են շուկայական հարաբերությունների կարևորագույն օրենքներից մեկը՝ միջոցների սակավության պայմաններում լավագույն լուծման որոշում: Շատ խնդիրներ, որոնց հետ հարկ է լինում գործ ունենալ առօրյա պրակտիկայում, բազմատարբերակ են: Շուկայական հարաբերությունների պայմաններում բազմաթիվ հնարավոր տարբերակների մեջ հարկ է լինում փնտրել ամենալավը, որը և դրվում է բնական, տնտեսական ու տեխնիկական հնարավորությունների հիմքում: Դրա հետ կապված անհրաժեշտություն է առաջացել տնտեսական իրավիճակների և համակարգերի վերլուծության ու միավորման համար կիրառել մաթեմատիկական մեթոդներ և ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ, լուծելով սահմանափակումներով բազմաթիվ էքստրեմալ խնդիրներ:

Դիտարկել ենք ֆունկցիա, որի էքստրեմալ արժեքը պետք է գտնել տնտեսական հնարա-վորությունների պայմաններում, երբ համակարգերը տրված են սահմանափակումներով: Խնդրի լուծման համար ստեղծում ենք մաթեմատիկական մոդել և ծրագիր, որը կթույլատրի իրականացնել նմանատիպ խնդիրների ավտոմատ լուծումը և իր մեջ պետք է ներառի.

1. անհայտ մեծությունների համակցություն, որոնք համակարգը կբերեն կատարյալ տեսքի, կունենա կառավարման վեկտոր, կառավարում, ստրատեգիա և այլն:

2. նպատակային ֆունկցիա, որը թույլ կտա ընտրել ամենալավ տարբերակը բազմաթիվ հնարավոր տարբերակներից: Ամենալավ տարբերակը նպատակային ֆունկցիային տալիս է էքստրեմալ արժեք: Դա կարող է լինել եկամուտը, թողարկման ծավալը կամ իրացումը, արտադրության ծախսերը, շրջանառության ծախսերը և այլն:

Այս պայմանները բխում են ռեսուրսների սահմանափակությունից, որոնց տիրապե-տում է հասարակությունը ժամանակի ցանկացած պահին՝ ելնելով պահանջմունքների բավարարման անհրաժեշտությունից, արտադրական և տեխնոլոգիական գործընթաց-ների զարգացման պայմաններից: Սահմանափակ կարող են լինել ոչ միայն նյութական, ֆինանսական և աշխատանքային ռեսուրսները, այլև տեխնիկական, տեխնոլոգիական և ընդհանրապես գիտական պոտենցիալի հնարավորությունները: Մաթեմատիկական սահմանափակումներն արտացոլվում են հավասարումների և անհավասարումների տեսքով: Նրանց համակցությունը ձևավորում է թույլատրելի լուծումների բնագավառը /տնտեսական հնարավորությունների բնագավառը/:

Ծրագիրը, որը բավարարում է խնդրի սահմանափակման համակարգին, անվանում ենք թույլատրելի: Թույլատրելի ծրագիրը, որը նպատակային ֆունկցիային տալիս էքստրեմալ նշանակություն, կոչվում է օպտիմալ, և ընդհանրապես պարտադիր չէ, որ միակը լինի, հնարավոր են դեպքեր, երբ այն գոյություն չունի, կամ ունի վերջնական կամ անթիվ լուծու-մներ: Գծային ծրագրավորման մեթոդները և մոդելները հատկապես լայն կիրառություն են ստացել ռեսուրսների խնայողության խնդիրների, արտադրատրանսպորտային և այլ խնդիրների լուծման բնագավառում: Արտադրանքի բաշխման լուծման համար երկրաչափական մեթոդի ընդհանուր լուծման համար մշակված ծրագիրն ամբողջովին ավտոմատացրել է մոդելի իրականացումը և իր մեջ պարունակում է.

1. սկզբնական հենքային լուծում գտնելու կարողություն,
2. հենքային լուծման արդյունավետության հատկանիշի առկայություն,
3. ոչ վատթար հենքային լուծման ի գալու կարողություն:

ԳԾԽ-ի լուծման համար գոյություն ունեն բազմաթիվ կիրառական ծրագրեր, որոնց միջոցով ավտոմատ կատարվում են հաշվարկները՝ չիմանալով թե ինչ քայլեր են կատարվում տվյալ հաշվարկների համար: Դրանցից են՝ Microsoft Excel, Statistica, Matrix Laboratory, MathCAD, STADIA և այլն: Այդ կիրառական ծրագրերում տվյալները մտցնելով ավտոմատ ստանում ենք պատասխանը:

Համացանցի զարգացումը բերեց նրան, որ աշխարհի տարբեր մասերում գտնվող ծրագ-րավորողները, ստեղծելով տարբեր մեթոդների ծրագրեր տեղադրում են համացանցում և մյուս ծրագրավորողների հետ այն քննարկվում, մշակում և ձգտում են ստեղծել օպտիմալ ծրագրային կոդ, որի օգտագործման դեպքում քիչ ժամանակ և հիշողություն է պահանջում:

Հետազոտությունները ցույց են տվել, որ որոշ մեթոդների համար կան տարբեր ծրագրավորման լեզուներով գրված ծրագրեր, բայց չկա որևէ ծրագիր երկրաչափական մեթոդի լուծման համար:

Տնտեսական խնդիրների երկրաչափական մեկնաբանությունը հնարավորություն է տալիս տեսանելի պատկերացնել դրանց կառուցվածքը, հայտնաբերել յուրահատկությունները և բացահայտել ավելի բարդ հատկությունների հետազոտման ուղիները:

Սրանից ելներով նպատակահարմար կլինի քննարկել երկրաչափական մեթոդը, իսկ ծրագիրը գրելու համար պետք է իմանալ լուծման քայլերը:

Տրված է գծային ծրագրավորման խնդիր հետևյալ տեսքով.

<u>Խնդիր.</u> Գտնել այն (x^*,y^*), որի դեպքում

$$f = c_1x + c_2y \to \max(min) \quad (1),$$

ֆունկցիան կձգտի մաքսիմումի (մինիմումի) և կբավարարի հետևյալ պայմաններին.

$$\left.\begin{array}{c} a_1x + b_1y + d_1 \geq 0 \\ a_2x + b_2y + d_2 \geq 0 \\ \dots\dots\dots\dots\dots\dots\dots\dots \\ a_mx + b_my + d_m \geq 0 \end{array}\right\} \quad (2)$$

$$x \geq 0 \qquad y \geq 0 \quad (3)$$

Այս խնդրի[1, էջ 28- 30] լուծումը ստանալու համար կոորդինատային հարթության վրա կառուցում ենք (2) համակարգի լուծումների բազմությունը:

Եթե ի նկատի ունենանք նաև (3) պայմանը, ապա լուծումների բազմությունը կստացվի կոորդինատական առանցքի առաջին քառորդը: Տրված խնդրի լուծումը հանգում է հետև-յալին,

լուծումների բազմությունից գտնել X այնպիսի կետ, որի կոորդինատները տեղադրելով նպատակային ֆունկցիայի մեջ, ստացվի նրա մաքսիմում կամ մինիմում արժեքը:

Այժմ պարզենք (1) նպատակային ֆունկցիայի երկրաչափական իմաստը[1, էջ 46 - 50]: Այդ նպատակով նախ ֆունկցիան հավասարեցնենք զրոյի (կարելի է հավասարեցնել ցանկացած թվի):

$$f = 0 \text{ կամ } c_1x + c_2y = 0 \qquad (4)$$

Ստացված առաջին աստիճանի հավասարումը (4) հարթության վրա պատկերվում է ուղիղ գծի տեսքով, որը անցնում է կոորդինատների սկզբնակետով և ուղղահայաց է $\overline{N}(c_1, c_2)$ վեկտորին:



Այնուհետև ֆունկցիային տալով տարբեր արժեքներ ($f = c', f = c'', \ldots$) ստանում ենք զուգահեռ գծերի ընտանիք, որոնք կոչվում են նպատակային ֆունկցիայի մակարդակի ուղիղ գծեր: Մեծացնելով ֆունկցիայի արժեքը 0-ից մինչև ∞, մակարդակի գծերը «լցնում» են մի ամբողջ կիսահարթություն, որի սահմանն է f = 0 գիծը: Եթե ֆունկցիայի արժեքը փոքրացնենք 0-ից մինչև -∞, ապա մակարդակի գծերը «կշարժվեն» հակառակ ուղղությամբ՝ «լցնելով» հարթության երկրորդ կեսը: Արդյունքում կստանանք, որ եթե ֆունկցիայի արժեքը փոփոխվում է -∞-ից մինչև ∞, ապա մակարդակի գծերը «լցնում են» ամբողջ հարթությունը:

Տեղաշարժելով f=0 գիծը դեպի լուծումների բազմությունը, մակարդակի գծերից կգտնենք այն երկուսը, որոնք M տիրույթը ընդգրկում են իրենց մեջ և լուծումների բազմության՝ հետ ունեն առնվազն մեկ կետ: Այն գծերը, որոնք անցնում են A և B կետերով, լուծումների բազմության համար կոչվում են հենման գծեր: Պարզ է, որ հենման գծերը M տիրույթի հետ ունեն մեկ ընդհանուր կետ: Հենման գծերից այն, որն առաջինն է հանդիպում M տիրույթի հետ, համապատասխանում է f ֆունկցիայի մինիմում արժեքին (A կետով անցնող գիծը), իսկ վերջինը՝ մաքսիմում արժեքին (B կետով անցնող գիծ): Սակայն հնարավոր է այնպիսի դեպք, երբ հենման գծերից մեկը (կամ երկուսն էլ) համընկնի լուծումների բազմության կողմերից որևէ մեկի հետ (տես գծագրում): Այս դեպքում այդ հատվածի բոլոր կետերի համար f ֆունկցիան կստանա միևնույն մաքսիմում արժեքը:

Նպատակային ֆունկցիայի օպտիմալ արժեքները գտնելու համար անհրաժեշտ է որոշել A և B կետերի կոորդինատները և նրանց համար հաշվել f ֆունկցիայի արժեքները: Այդ կետերի կոորդինատները կգտնվեն, եթե լուծենք այն ուղիղների հավասարումներով կազմված համակարգը, որոնց հատումից ստացվել է տվյալ կետերը:

ԳԾԽ-ն երկրաչափական մեթոդով լուծելու համար պետք է կատարվեն հետևյալ քայլերը՝

1. սահմանափակման համակարգի հաշվառման հետ կառուցել Ω թույլատրելի լուծումների շրջան,
2. կառուցել $N = (c_1, c_2)$ նպատակային ֆունկցիայի ամենաարագ աճելու վեկտոր,
3. տանել $Z=Z_0$ մակարդակի կամայական գիծ,
4. մաքսիմումի որոշման ժամանակ $Z=Z_0$ մակարդակի գիծը տեղափոխել N վեկտորի ուղղությամբ այնպես, որ այն վերաբերվի թույլատրելի լուծումների շրջանին նրա ծայրամասային կետում,
5. մինիմումի որոշման ժամանակ $Z=Z_0$ մակարդակի գիծը տեղափոխել բացասական գրադիենտի ուղղությամբ,
6. հաշվել նպատակային ֆունկցիայի արժեքը:

Տվյալ մեթոդի ծրագրային կոդը կառուցելու համար առաջարկում եմ հետևյալ քայլերի հաջորդականությունը:

1. Ներմուծել ծրագրի կողմից պահանջվող տվյալները:
2. Եթե պետք է որոշվի մաքսիմում արժեքը, ապա ստուգվում են լուծումների բազմու-թյան սահմանափակությունը: Եթե այն սահմանափակ է, կատարվում է հաջորդ քայլը: Հակառակ դեպքում տպվում է հաղորդագրություն, որտեղ գրված է ՛՛Տվյալ պայմանների դեպքում լուծումների բազմությունը անսահմանափակ է, և մաքսի-մումի արժեքը հնարավոր չէ որոշել՛՛:
3. Ներմուծած բոլոր հավասարումները ու անհավասարումները ներկայացնում է ուղիղների միջոցով:
4. Ծրագիրը գտնում է տվյալ ուղիղների հատման կոորդինատները առանցքների հետ, ինչպես նաև վերցնում է (0,0) կոորդինատը:
5. Որոշում է զույգ առ զույգ ուղիղների հատման կոորդինատները:
6. Ստացված կոորդինատներից ընտրում է բոլոր պայմաններին բավարարող կոորդինատները:

7. Եթե կոորդինատների քանակը

ա) հավասար է 0-ի, ապա տվյալ խնդիրը լուծում չունի,

բ) հավասար է 1-ի, ապա այն հանդիսանում է խնդրի լուծումը, նպատակային ֆունկցիայի արժեքը տվյալ կետում հանդիսանում է մաքսիմում կամ մինիմում:

գ) մեծ կամ հավասար է երկուսից, ապա տվյալ խնդիրը ունի և մաքսիմումի և մինիմումի արժեքներ, ընդ որում նրանք հավասար չեն:

8. Որոշում է նպատակային ֆունկցիայի արժեքը տվյալ բոլոր պայմաններին բավարարող կոորդինատներում և որոշում մաքսիմալ (մինիմալ) արժեքը:
9. Արտածում է նպատակային ֆունկցիայի արժեքը՝ նշելով կոորդինատները:
10. Ծրագիրն ավարտում է աշխատանքը:

Ծրագիրը աշխատում է [0;100] միջակայքում: Անսահմանափակությունը ստուգում է (101; i) և (i; 101) միջակայքերում, որտեղ $i = \overline{0,100}$:

Ներկայացնենք ծրագրի մի քանի հատվածները՝ իրենց բացատրությամբ:

Հետևյալ կոդը գտնում է տրված գծերի հատման կետերը: Այն կատարվում է հետևյալ կերպ: Տվյալների մուտքագրման ժամանակ ստեղծվում է n չափանի չորս հատ զանգված [3, էջ 60-65], որտեղ համապատասխանաբար լրացվում են X_1-ի, X_2-ի, հավասարության կամ անհավասարության նշանը, ազատ անդամի արժեքը: Սկզբից ընտրում է 0 ինդեքս ունեցող ուղղի պարամետրերը և այն հաջորդական ստուգում մյուս ուղիղների հետ: Ստուգումը կատարվում է հետևյալ կերպ. ունենք երկու ներդրված ցիկլեր, որոնց արժեքները փոխվում են 0-ից մինչև 100 (այս միջակայքում է աշխատում ծրագիրը) և այդ արժեքները բազմապատկում ուղիղների պարամետրերի հետ: Եթե տվյալ արժեքները միաժամանակ բավարարում են երկու հավասարումներին, ապա այն հանդիսանում է հատման կետ: Այնուհետև ընտրում ենք 1 ինդեքս ունեցող տողի պարամետրերը և ստուգում, սկսած 2 ինդեքս ունեցող ուղղի պարամետրերի հետ, որը հնարավորություն է տալիս խուսափել կրկնվող կոորդինատներից: Եթե այն ամեն անգամ սկսի 0-ից, ապա կունենաք 0 ինդեքսով ուղղի հատումը 0,1,2,…,n ինդեքսով ուղիղների հետ, 1 ինդեքսով ուղղի հատումը 0,1,2,…,n ինդեքսով ուղիղների հետ և այսպես շարունակելով ամեն անգամ կստանանք նույն տվյալները: Իսկ այն դեպքում, երբ քննարկվի նույն ուղիղը (օրինակ 0 ինդեքսով ուղիղը 0 ինդեքս ունեցող ուղղի հետ), ապա մենք կստանանք համընկնող ուղիղներ, որոնց համար 0-ից մինչև 100 միջակայքի թվերը հանդիսանում են հատման կոորդինատներ: Դրանից խուսափելու համար մենք սկսում ենք համեմատել j (j=$\overline{1,n}$) ինդեքսով ուղիղը z (z=[j+1,n]) միջակայքին պատկանող ինդեքսներով ուղիղների հետ:

```
for (int j = 0; j < n-1; ++j){
    for (int z = j + 1; z < n; ++z){
        for (int i = 1; i < 101; ++i){
            for (int w = 1; w < 101; ++w) {
                if (((a[j] * i + b[j] * w) = = c[j]) && ((a[z] * i + b[z] * w) = = c[z])) {
                    p[k] = i; q[k] = w; ++k;
} } } } }
```

Տվյալ կոդը գտնում է առանցքների հետ հատման կետերը: X_1 առանցքի հետ հատման կետում X_2 կոորդինատը կլինի զրո, իսկ X_1 կոորդինատը հավասար կլինի ազատ անդամի հարաբերությունը x_1 գործակցի հետ: Այստեղ օգտագործվել է երկու պայման՝ ազատ անդամը և գործակիցը, որոնք միաժամանակ պետք է լինեն կամ դրական կամ բացասական, ինչը կապահովի կոորդինատների դրական լինելը:

```
for (int g = 0; g < n; ++g){
    if ( (a[g] > 0 && c[g] >= 0) || (a[g] < 0 && c[g] <= 0)) {
        p[k] = c[g] / a[g]; q[k] = 0; ++k; }
    if ((b[g] > 0 && c[g] >= 0) || (b[g] < 0 && c[g] <= 0)){
        p[k] = 0; q[k] = c[g] / b[g]; ++k; }
}
```

Տվյալ կոդում հաշվվում և տպվում է պատասխանը: Եթե վերը նշած կոդերում ստացված կոորդինատներից ոչ մեկը չի բավարարում պայմաններին, ապա թույլատրելի լուծում չկա և կոորդինատների քանակը հավասար է 0-ի: Եթե պայմաններին բավարարում է մեկ կոորդինատը, ապա խնդիրն ունի միակ լուծում, որը հանդիսանում է և մաքսիմալը, և մինիմալը: Ծրագիրը արտածում է նպատակային ֆունկցիայի արժեքը և տվյալ կոորդինատը: Եթե պայմաններին բավարարող

կոորդինատների քանակը շատ է 1-ից, ապա պղպջակների մեթոդով գտնվում է մաքսիմալ կամ մինիմալ արժեքը և արտածում է նպատակային ֆունկցիայի արժեքը և տվյալ կոորդինատը:

```
if (l == 0) {
    Console.WriteLine("xndiry lutum chuni");
}else if (l == 1){
    Console.WriteLine("xndiry uni miajn mek lutum");
    Console.WriteLine(f[0]);
    Console.WriteLine("(x1=" + pn[0] + ", x2=" + qn[0] + ")");
}else{
    maxi = f[0];  pnp = pn[0];   qnp = qn[0];
    //մաքսիմումի դեպք
    for (int i = 1; i < l; i++){
        if (f[i] > maxi) {
            maxi = f[i]; pnp = pn[i];  qnp = qn[i];
    } }
    //մինիմումի դեպք
    for (int i = 1; i < l; i++){
        if (f[i] < maxi){
            maxi = f[i]; pnp = pn[i]; qnp = qn[i];
   }   }
    Console.WriteLine(maxi);
    Console.WriteLine("(x1=" + pnp + ", x2=" + qnp + ")");}
```

Գոյություն ունեն բազմաթիվ խնդիրներ, որոնք կարելի է լուծել երկրաչափական մեթոդով օգտագործելով ստեղծված ծրագրային միջավայրը:

Օրինակ: Յուրաքանչյուր կենդանի կերակրելու համար անհրաժեշտ է ստանալ ոչ պակաս քան S1 տեսակի սննդանյութից 14 միավոր, S2 տեսակից՝ 15 միավոր, իսկ S3 տեսակից՝ 10 միավոր: Սննդակարգը կազմելու համար օգտագործում են երկու տեսակի կեր: Կերում պարունակող յուրաքանչյուր կիլոգրամում սննդանյութերի քանակը և գինը (հազար դրամ) ներկայացված է աղյուսակում [2, էջ 80 - 86]:

Կառուցենք նպատակային ֆունկցիան և սահմանափակումների համակարգը:

$$f = 3 * x_1 + 7 * x_2 \to min$$

$$\begin{cases} x_1 + 2x_2 \geq 14 \\ x_1 + 3x_2 \geq 15 \\ 2x_1 + x_2 \geq 10 \end{cases}$$

$$x_1 \geq 0, x_2 \geq 0$$

Նպատակային ֆունկցիան ձգտում է մինիմալացնել ծախսերը՝ ապահովելով սննդանյութերի անհրաժեշտ քանակը:

Սննդանյութ	1 կգ կերում առկա սննդանյութերի միավոր քանակը	
	կեր 1	կեր 2
S_1	1	2
S_2	1	3
S_3	2	1
1 կգ կերի գինը	3	7

Մտցնենք տվյալները ծրագրի մեջ: Սկզբից մտցնում ենք հավասարումների ու անհավասարումների քանակը, որից հետո ներմուծում ենք նպատակային ֆունկցիայի գործակիցները, և ինչի է այն ձգտում: Հետո ներմուծում ենք հավասարումների կամ անհա-վասարումների գործակիցները, իրենց նշանը և ազատ անդամը: Վերջին ներմուծված տվյալից հետո ստանում ենք նպատակային ֆունկցիայի արժեքը և x_1-ի ու x_2-ի օպտիմալ արժեքները:

```
Nermutelq havasarumneri kam anhavasarumneri qanaky(1 mec)3
Nermutel npatakajin funkciaji x1-? gorcakicy3
Nermutel npatakajin funkciaji x2-? gorcakicy7
Nermutel te inchi e dzktum npatakajin funkcian (max kam min)min
Nermutel1 havasarumneri kam anhavasarumneri x1-i gorcakicy1
Nermutel 1 havasarumneri kam anhavasarumneri x2-? gorcakicy2
Nermutel 1 havasarumneri kam anhavasarumneri nshany (>=, <=, =>>=
Nermutel 1 havasarumneri kam anhavasarumneri azad andamy14
Nermutel2 havasarumneri kam anhavasarumneri x1-i gorcakicy1
Nermutel 2 havasarumneri kam anhavasarumneri x2-? gorcakicy3
Nermutel 2 havasarumneri kam anhavasarumneri nshany (>=, <=, =>>=
Nermutel 2 havasarumneri kam anhavasarumneri azad andamy15
Nermutel3 havasarumneri kam anhavasarumneri x1-i gorcakicy2
Nermutel 3 havasarumneri kam anhavasarumneri x2-? gorcakicy1
Nermutel 3 havasarumneri kam anhavasarumneri nshany (>=, <=, =>>=
Nermutel 3 havasarumneri kam anhavasarumneri azad andamy10
43
(x1=12, x2=1)
```

Ծրագրի կատարումից ստացած արժեքներից հասկանում ենք, որ պետք է տալ առաջին տեսակից 12 կգ կեր և երկրորդ տեսակից 1 կգ կեր, որպեսզի անասունները ստանան նորմային համապատասխան սննդանյութեր և կերի վրա ծախսված գումարը լինի փոքրագույնը:

Երկրաչափորեն այն կլուծվի հետևյալ ձևով:



Օրինակ: Նախատեսվում է արտադրել երկու տեսակի արտադրանք: Առաջին տեսակի միավոր արտադրանքի արտադրման համար պահանջվում է հումքի առաջին տեսակից 2 կգ, երկրորդ տեսակից 1 կգ: Երկրորդ տեսակի միավոր արտադրանքի արտադրման համար պահանջվում է հումքի առաջին տեսակից 1 կգ, երկրորդ տեսակից 1 կգ: Առկա է առաջին հումքից 10 կգ, երկրորդ հումքից 7 կգ: Առաջին արտադրանքի իրացումից կստանաք 6 դրամական միավոր, երկրորդ տեսակից՝ 4 դրամական միավոր:

Կազմենք նպատակային ֆունկցիան և սահմանափակումների համակարգը:

$$f = 6x_1 + 4x_2 \to max$$
$$\begin{cases} 2x_1 + x_2 \le 10 \\ x_1 + x_2 \le 7 \end{cases}$$
$$x_1 \ge, x_2 \ge 0$$

Նպատակային ֆունկցիան ձգտում է մաքսիմումի, այսինքն ձգտում ենք մաքսիմալացնել շահույթը: Համակարգը պարունակում է 2 անհավասարություն:

Մտցնենք տվյալները ծրագրի մեջ:

```
Nermutelq havasarumneri kam anhavasarumneri qanaky(1 mec)2
Nermutel npatakajin funkciaji x1-? gorcakicy6
Nermutel npatakajin funkciaji x2-? gorcakicy4
Nermutel te inchi e dzktum npatakajin funkcian (max kam min)max
Nermutel1 havasarumneri kam anhavasarumneri x1-i gorcakicy2
Nermutel 1 havasarumneri kam anhavasarumneri x2-? gorcakicy1
Nermutel 1 havasarumneri kam anhavasarumneri nshany (>=, <=, =><=
Nermutel 1 havasarumneri kam anhavasarumneri azad andamy10
Nermutel2 havasarumneri kam anhavasarumneri x1-i gorcakicy1
Nermutel 2 havasarumneri kam anhavasarumneri x2-? gorcakicy1
Nermutel 2 havasarumneri kam anhavasarumneri nshany (>=, <=, =><=
Nermutel 2 havasarumneri kam anhavasarumneri azad andamy7
34
(x1=3, x2=4)
```

Ծրագրի կատարումից ստացած արժեքներից հասկանում ենք, որ պետք է արտադրել առաջին տեսակից 3 միավոր արտադրանք և երկրորդ տեսակից 4 միավոր արտադրանք, որպեսզի օգտագործած ռեսուրսների քանակը չգերազանցի առկա ռեսուրսների քանակը, իսկ շահույթը լինի առավելագույնը:

Ուսումնասիրելով ԳԾԽ-ի լուծման տարբեր մեթոդներ, հանգեցինք այն եզրակացության, որ երկու փոփոխականներով ԳԾԽ-ն նպատակահարմար է լուծել երկարաչափական մեթոդով: Ուսումնասիրելով այդ մեթոդը ստեղծեցի ծրագիր, որը ստանալով անհրաժեշտ տվյալներ՝ ավտոմատ կերպով որոշում է նպատակային ֆունկցիայի արժեքը ու օպտիմալ պլանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ա.Խ. Դանիելյան., Գծային ծրագրավորման մեթոդներ, Ուսումնական ձեռնարկ,Երևան, 2003 թ.
2. *Մ.Ա. Սահակյան, Ն.Ա. Բեկնազարյան, Հ.Յ. Հակոբյան, Խ.Վ. Քերոբյան.,* Տնտեսության վերածության մաթեմատիկական եղանակներ, ՀՀԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն. Երևան մաս I, II 1997 թ.,2001թ.
3. Т. А. Павловская. «C#. Программирование на языке высокого уровня. Учебник для вузов - СПб. Изд.,Питер, 2007г.

ՀՏԴ 531.6

Ֆիզիկա

Հայրապետյան Ռինատ
Արցախի Պետական Համալսարան, 2-րդ կուրս
rinat.hairapetian@gmail.com

ՊԱՀՊԱՆՄԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԽԱՆԻԿԱՅԻ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐՈՒՄ

Այս աշխատանքում դիտարկվելու են էներգիայի, իմպուլսի և իմպուլսի մոմենտի պահպանման օրենքները: Պետք է նշել, որ դրանք դիտակվելու են ոչ ռելյատիվիստական շրջանակներում, որտեղ ճշմարիտ են Գալիլեյի ձևափոխությունները, արագությունները շատ փոքր են լույսի արագության հետ համեմատած և զանգվածը կախված չէ արագությունից:

Օգտագործելով պահպանման օրենքները մենք կարող ենք ավելի խորը ուսումնասիրել խնդիրները և նմանություններ տեսնել այս թե այն երևույթների հետ:

Բանալի բառեր՝ իմպուլս, իմպուլսի մոմենտ, բախում, կինետիկ էներգիա, պոտենցիալ էներգիա, կենտրոնախույզ էներգիա, առաձգական ուժ, լարվածություն:

Ринат Айрапетян
Арцахский государственный университет, 2-ой курс
rinat.hairapetian@gmail.com

ПРИМЕНЕНИЕ ЗАКОНОВ СОХРАНЕНИЯ В НЕКОТОРЫХ ФИЗИЧЕСКИХ ЗАДАЧАХ

В этой работе будут рассмотрены законы сохранения энергии, импульса и момента импульса. Причем они будут рассмотрены для нерелятивистской области, в которой справедливы преобразования Галилея, скорости очень малы по сравнению со скоростью света и масса не зависит от скорости.

Используя законы сохранения, мы можем более глубоко изучить задачи и видеть схожести с теми или иными явлениями.

Ключевые слова: импульс, момент импульса, столкновение, кинетическая энергия, потенциальная энергия, центробежная энергия,сила упругости,напряжение.

Rinat Hayrapetyan
ASU, 2nd year
rinat.hairapetian@gmail.com

APPLICATION OF CONSERVATION LAWS IN SOME PHYSICAL PROBLEMS

This work consider the laws of conservation, which are known to be a consequence of the properties of symmetry in the universe.

As an application, several tasks were solved, indicating how powerful the conservation laws are, when, directly, the application of Newton's laws is not so effective, and when it is impossible to determine the resulting force.

Keywords- impulse,a ngular momentum, collision, kinetic energy, potential energy, centrifugal energy, elastic force, tension.

Բնության մեջ գոյություն ունեն մի քանի պահպանման օրենքներ: Դրանցից որոշները կարելի է համարել ճշգրիտ, մյուսները՝ մոտավոր: Սովորաբար, պահպանման օրենքները հանդիսանում են տիեզերքում համաչափության հատկությունների հետևանք:

Այս աշխատանքում դիտարկվելու են էներգիայի, իմպուլսի և իմպուլսի մոմենտի պահպանման օրենքները: Պետք է նշել, որ դրանք դիտակվելու են ոչ ռելյատիվիստական շրջանակներում, որտեղ ճշմարիտ են Գալիլեյի ձևափոխությունները, արագությունները շատ փոքր են լույսի արագության հետ համեմատած և զանգվածը կախված չէ արագությունից:

Պահպանման օրենքները իրենցից ներկայացնում են հզոր գործիքներ, որոնցից համատարած օգտվում են ֆիզիկոսները: Դրա համար կան մի շարք պատճառներ.

1. Պահպանման օրենքները կախված չեն հետագծի տեսքից և գործող ուժերի բնույթից: Այդ պատճառով պահպանման օրենքները հնարավորություն են տալիս շարժման հավասարումներից ստանալ

բավականին ընդհանրացված և էական հետևություններ: Երբեմն պահպանման օրենքներից հետևում է, որ ինչ-որ բան հնարավոր չէ:

2. Պահպանման օրենքները կարող են օգտագործվել նույնիսկ այն դեպքերում, երբ ուժերը անհայտ են:

3. Պահպանման օրենքները սերտ կապված են ինվարիանտության հետ: Հաճախ, նոր և դեռ անհասկանալի երևույթներ ուսումնասիրելիս պահպանման օրենքները հանդիսանում են մեզ հայտնի ֆիզիկական փաստերից ամենաապշեցուցիչը: Դրանք կարող են մերալ ինվարիանտության մասին համապատասխան պատկերացումներին:

4. Նույնիսկ այն դեպքերում, երբ ուժերը ճշգրիտ հայտնի են, պահպանման օրենքները կարող են բավական օգնություն ցույց տալ մասնիկների շարժման խնդիրը լուծելիս:

Էնեգիայի պահպանման օրենք

Էներգիայի պահպանման օրենքը պնդում է, որ համակարգի լրիվ էներգիան հաստատուն է, եթե դրա մասնիկների միջև փոխազդեցությունը ուղղակի կերպով կախված չէ ժամանակից: Այս օրենքը ասում է, որ գոյություն ունի մի որոշ՝ մասնիկի արագությունից և դիրքից կախված, սկալյար ֆունկցիա, որը ժամանակի ընթացքում չի փոխվում՝ այն պայմանով, որ դիտարկվող ժամանակահատվածում արտաքին փոխազդեցությունը չի փոխվում:

Էներգիայի պահպանման օրենքը ժամանակի համասեռության հետևանք է:

Էներգիայի պահպանման օրենքը իր մեջ ներառում է աշխատանքի, կինետիկ և պոտենցիալ էներգիաների հասկացությունները: Տանք դրանց սահմանումները:

$K = \frac{mv^2}{2}$ մեծությունը անվանում են մասնիկի կինետիկ էներգիա: m-ը մասնիկի զանգվածն է, v-ն՝մասնիկի արագությունը: Կինետիկ էներգիան շարժման էներգիան է:

$A = Fs$ մեծությունը անվանում են մասնիկի վրա գործադրված F ուժի կատարած աշխատանք: s-ը մասնիկի տեղափոխությունն է:

Գործադրվող ուժի աշխատանքը հավասար է մասնիկի կինետիկ էներգիայի փոփոխությանը:

$U = -\int \vec{F}\, d\vec{r}$ անվանում են մասնիկի պոտենցիալ էներգիա: Պոտենցիալ էներգիան փոխազդեցության կամ դիրքի էներգիա է:

$E = K + U$ մեծությունը կոչվում է լրիվ էներգիա: Էներգիայի և աշխատանքի չափման միավորն է 1 Ջոուլ:

Նշենք, որ պահպանման օրենքները չեն կարող մեզ տալ նոր տեղեկություն՝ համեմատած նրան, որը կարող է ստացվել $\vec{F} = m\vec{a}$ շարժման հավասարումից:

Հիմնական խնդիրը կայանում է նրանում, որպեսզի գտնվի էներգիայի արտահայտություն, որը կախված չէ ժամանակից և համաձայնության մեջ է գտնվում $\vec{F} = m\vec{a}$ հավասարության մեջ:

Իմպուլսի պահպանման օրենքը

Մարմինների փակ համակարգի իմպուլսը ժամանակի ընթացքում չի փոխվում:

$\frac{d\vec{p}}{dt} = 0$ կամ $\vec{p} = \sum_{i=1}^{n}(m_i\vec{v}_i) = const$:

Իմպուլսի պահպանման օրենքը տարածության համասեռության հետևանք է:

Նյութական կետերի համակարգի զանգվածների կենտրոն կամ իներցիայի կենտրոն անվանում են այն մտովի C կետը, որի դիրքը բնութագրում է այդ համակարգի զանգվածի բաշխվածությունը: Դրա շառավիղ վեկտորը որոշվում է $\vec{r}_c = \frac{\sum_{i=1}^{n}(m_i\vec{r}_i)}{\sum_{i=1}^{n} m_i}$ բանաձևով:

Համակարգի իմպուլսը հավասար է համակարգի զանգվածի և զանգվածի կենտրոնի արագության արտադրյալին ՝ $\vec{p} = m\vec{v_c}$:

Օգտագործելով իմպուլսի պահպանման օրեքը և վերջին հավասարումը ստանում ենք, որ $\frac{d\vec{p}}{dt} = m\frac{d\vec{v}_c}{dt} = 0$, այսինքն մեկուսացված (փակ) համակարգում զանգվածների կենտրոնը գտնվում է դադարի վիճակում կամ կատարում է ուղղագիծ հավասարաչափ շարժում:

Զանգվածի կենտրոնի արագացումը որոշվում է համակարգի վրա արդյունարար ուժի և զանգվածի հարաբերությամբ:

Իմպուլսի մոմենտի պահպանման օրենքը

Առանձին մասնիկների J իմպուլսի մոմենտը կամայական ընտրված ֆիքսված կետի նկատմամբ որոշվում է $\vec{J} \equiv \vec{r} \times \vec{p} \equiv \vec{r} \times m\vec{v}$ առնչությամբ:

Իմպուլսի մոմենտը չափվում է 1գ· սմ^2/վ կամ 1Ջոուլ/վ միավորերով:
Պտտման մոմենտը որոշվում է հետևյալ առնչությամբ $\overrightarrow{N} \equiv \vec{r} \times \vec{F}$:
Իմպուլսի մոմենտի փոփոխությունը հավասար է պտտման մոմենտին $\frac{d\vec{J}}{dt} = \vec{N}$: Եթե $\overrightarrow{N}$=0 ապա $\vec{J} = const$:

Իմպուլսի մոմենտը հաստատուն է արտաքին պտտման մոմենտների բացակայության դեպքում:
Կենտրոնական է կոչվում այն ուժը, որը միշտ ուղղված է ճիշտ դեպի որոշ ընտրված կետը կամ այդ կետից:

Կենտրոնական ուժերի համար իմպուլսի մոմենտը պահպանվում է հաստատուն $\frac{d\vec{J}}{dt} = 0$:
Մասնիկների համակարգի արդյունարար իմպուլսի մոմենտը իներցիալ հաշվարկման համակարգում կամայականոևեն ընտրված կետի նկատմամբ որոշվում է հետևյալ առնչությամբ՝

$$J = \sum_{i=1}^{n} m_i \overrightarrow{v_i} \times \overrightarrow{r_i}$$

Փակ համակարգի իմպուլսի մոմենտը ցանկացած կոորդինատական համակարգում ժամանակի ընթացքում անփոփոխ է:
Իմպուլսի մոմենտի պահպանման օրենքը պտույտի նկատմամբ տարածության իզոտրոպության հետևանք է:
Եթե $\overrightarrow{R_c}$ զանգվածների կենտրոնի շառավիղ վեկտորն է, ապա իմպուլսի մոմենտի համար կարող ենք գրել $\vec{J} = \overrightarrow{J_c} + \overrightarrow{R_c} \times \overrightarrow{P}$, որտեղ $\overrightarrow{J_c}$ –ն իմպուլսի մոմենտն է զանգվածների կենտրոնի նկատմամբ, իսկ $\overrightarrow{P} = \sum m_n \overrightarrow{v_n}$ ՝ լրիվ իմպուլսը:
$\overrightarrow{R_c} \times \overrightarrow{P}$ արտահայտում է զանգվածների կենտրոնի իմպուլսի մոմենտը հաշվարկի սկզբնակետի նկատմամբ:

Խնդիրների լուծման օրինակներ՝

Խնդիր 1: m զանգվածով A մարմինը գտնվում է ողորկ հորիզոնական հարթության վրա: Այն թելով կապված է P (տես նկարը) և անկշիռ ճախարակով գցված նույն զանգվածով B: Բացի դրանից A մարմինը միացված է O կետին, թեթև չդեֆորմացված $l_0 = 50$ սմ երկարությամբ և $k = \frac{5mg}{l_0}$ կոշտությամբ զսպանակի միջոցով: PA թելը վառվեց և A մարմինըսկսեց շարժվել: Գտնել նրա արագությունը հարթությունից պոկման պահին:



Լուծում: Էներգիայի պահպանման օրենքից կստանանք՝

$$\frac{2mv^2}{2} + \frac{kr_0^2}{2} = mgx, \quad (1)$$

որտեղ պոկման պահին $CD = r_0 = \sqrt{x_0^2 + y_0^2}$ զսպանակի երկարացումն է, v մարմնի արագությունը:
Պոկման պահին $mg = ky_0$, $y_0 = \frac{l_0}{5}$: Նկատենք , որ CK=y_0 , $kD = x_0$: Տարրական երկրաչափական

հաշվարկից կգնենք , որ $x = 5x_0$, $x_0 = \frac{3}{20} l_0$, $r_0^2 = \frac{l_0^2}{16}$, տեղադրելով (1)-ում x-ի, r_0-ի արժեքները կգտնենք, որ $v = \sqrt{\frac{19}{32} g l_0} = 1.7$ մ/վ:

Խնդիր 2: m_1 զանգվածով մասնիկը բախվում է դադարի վիճակում գտնվող m_2 զանգվածով մասնիկի հետ: Բացարձակ առաձգական հարվածի դեպքում կինետիկ էներգիայի հարաբերական ո՞ր մասը կկորցնի m_1 մասնիկը ,եթե

ա) նրա հետցատկումը ուղղահայաց է սկզբնական ուղղությանը:

բ) բախումը կենտրոնական է:

Լուծում: ա)Գրենք իմպուլսի և էներգիայի պահպանման օրենքները:

$$m_1 \overrightarrow{v}_1 = m_1 \overrightarrow{u}_1 + m_2 \overrightarrow{u}_2 \quad (1)$$

$$\frac{m_1 v_1^2}{2} = \frac{m_1 u_1^2}{2} + \frac{m_2 u_2^2}{2} \quad (2)$$

որտեղ $\overrightarrow{v_1}$ և $\overrightarrow{u_1}$ համապատասխան բախումից առաջ և հետո m_1 մասնիկի արագություններն են, $\overrightarrow{u_2}$ -ը m_2 մասնիկի բախման հետևանքով ձեռքբերած արագությունն է: Համաձայն (2)-ի m_1 մասնիկի կինետիկ էներգիայի հարաբերական մասը կլինի՝ $\frac{\Delta K}{K} = 1 - \frac{u_1^2}{v_1^2}$ (3)

Բախումը տեղի է ունենում հետևյալ սխեմայով՝



(1) –ից իմպուլսների համապատասխան x և y պրոյեկցիաների համար կստանանք հետևյալ առնչությունները

$m_1 v_1 = m_2 u_2 \cos\theta$ (4)

$m_1 u_1 = m_2 u_2 \sin\theta$ (5)

(4)-ի, (5)-ի և (1)-ի համատեղ լուծումը կբերի ,որ

$\frac{m_2 - m_1}{m_2 + m_1} = \frac{u_1^2}{v_1^2}$ (6):

Այսինքն անհրաժեշտ է, որ $m_2 > m_1$: Տեղադրելով (6)-ը (3)-ում կգտնենք , որ

$\frac{\Delta K}{K} = \frac{2m_1}{m_1 + m_2}$ (7):

բ) Այս դեպքի համար (1)-ից և (2)-ից կստանանք՝

$\frac{u_1^2}{v_1^2} = \frac{(m_2 - m_1)^2}{(m_2 + m_1)^2}$ (8)

տեղադրելով (8)-ը (3)-ում կգտնենք, որ

$\frac{\Delta K}{K} = \frac{4m_1 m_2}{(m_1 + m_2)^2}$:

Խնդիր 3: Ողորկ հորիզոնական հարթության վրա շարժվում է m զանգվածով մասնիկ կապված չձգվող թելի ծայրից, իսկ թելի մյուս ծայրը հաստատուն արագությամբ ներքաշում են O անցքով (տես նկարը): Գտնել թելի ձգվածության ուժի կախվածությունը մասնիկի և անցքի r հեռավորությունից , եթե $r = r_0$ դեպքում թելի անկյունային արագությունը հավասար է եղել ω_0:



Լուծում: Թելի կողմից մասնիկի վրա ազդող ուժը հավասար է F ձգվածության ուժին և ուղղված է շառավղով: Այդ պատճառով պտտվող մոմենտը հավասար է զրոյի և հետևաբար իմպուլսի մոմենտը պետքէ մնա հաստատուն՝ $mv_0r_0 = mvr$: (1)

r_0 հեռավորության վրա գտնվող մասնիկի K կինետիկ էներգիան հավասար է $\frac{mv_0^2}{2}$:

Երբ հեռավորությունը նվազում է մինչև r-ի, k-ն աճում է և այդ աճը հավասար է F ուժի կատարած A աշխատանքին:

Այսինքն՝ A=K(r)-K(r_0)=$\frac{1}{2}\frac{m\omega_0^2r_0^2}{r^2}[r_0^2 - r^2]$, (2)

որովհետև համապատասխան (1)-ի $v = \frac{v_0r_0}{r}$:

Մյուս կողմից՝ $A = \int_{r_0}^{r} Fdr$ (3):

Հաշվի առնելով, որ $F = \frac{dA}{dr}$ և դիֆերանցելով (2) –ը, կստանանք՝

$F(r) = \frac{m\omega_0^2r_0^4}{r^3}$:

Խնդիր 4: Սարքում (տես նկարը) m=0.20 կգ զանգվածով M օղագոտին ամրացված է k=20 ն/մ կոշտությամբ զսպանակների միջև: Օղագոտին առանց շփման կարող է սահել AB հորիզոնական ձողով: Սարքը պտտվում է ω=4.4 ռադ/վ անկյունային արագությամբ AB ձողի միջնակետով անցնող ուղղաձիգ առանցքի շուրջ: Գտնել օղագոտու փոքր տատանումների պարբերությունը: ω-ի ո՞ր արժեքի դեպքում օղագոտու տատանումները կդադարեն:



Լուծում: Գրենք լրիվ էներգիայի արտահայտությունը տվյալ դեպքի համար՝

$E = \frac{m}{2}(\dot{r}^2 + r^2\dot{\varphi}^2) + U(r)$,որտեղ $\dot{r}$-ը գծային արագությունն է, $\dot{\varphi}$ –ը՝ անկյունային արագությունը: Որոշ ձևափոխություններ անելուց հետո այն կունենա

$E = \frac{m\dot{r}^2}{2} + \frac{J^2}{m^2r^2} + \frac{kr^2}{2}$ տեսքը ,որտեղ J-ը իմպուլսի մոմոնետն է:

Արտաքին ուժերը բացակայում են , հետևաբար իմպուլսի մոմենտի պահպանման օրենքի համաձայն իմպուլսի մոմենտը մնալու է հաստատուն J=const:

Ուշադրություն դարձնենք $\frac{J^2}{m^2r^2}$ գումարելու վրա՝ որը հաճախ անվանում են կենտրոնախույզ էներգիա: Քանի որ այդ արտահայտության մեջ J-ը և m-ը հաստատուն են, ապա դրա փոփոխությունը կախված է միայն r-ի փոփոխությունից : Այստեղից մենք տեսնում ենք , որ այն իր ֆիզիկական իմաստով ավելի մոտ է պոտենցիալ էներգիային, այդ պատճառով ավելի նպատակահարմար է $U_{էֆ} = \frac{J^2}{m^2r^2} + \frac{kr^2}{2}$ արտահայտությունը համարել էֆեկտիվ պոտենցիալ:

Մյուս կողմից այդպիսի շարժումը նման է միաչափ շարժման r ուղղությամբ և է $U_{էֆ} = \frac{J^2}{m^2r^2} + \frac{kr^2}{2}$ էֆեկտիվ պոտենցիալում:

Գրենք էներգիայի պահպանման օրենքը՝ $\frac{dE}{dt}=0$, կամ որ նույնն է $m\ddot{r}=-kr+m\omega^2 r$ կամ $\ddot{r}+(\omega_0^2+\omega^2)r=0$, որտեղ $\omega_0^2=\frac{2k}{m}$: Այսպիսով՝ պարբերությունը հավասար է $2\pi/\sqrt{\frac{2k}{m}-\omega^2}=0.7$ վ: Նման համակարգում, եթե օղագոտին շեղել են հավասարակշռության դիրքից, տատանումները կդադարեն, եթե $\omega\geq\sqrt{\frac{2k}{m}}$:

Եզրափակում: Այսպիսսով, բերված օրինակների վրա երևում է , որ պահպանման օրենքների կիրառությամբ լուծվող խնդիրները ունեն անգնահատելի առավելություն այն դեպքերում, երբ Նյուտոնի օրենքների անմիջական կիրառումը չեն բերում խնդրի արագ լուծմանը, իսկ երբեմն անհնարին են դարձնում այն:

Այնուամենայնիվ անհրաժեշտ է նշել, որ պահպանման օրենքները ոչ մի նոր բան մեզ չեն տալիս Նյուտոնի օրենքների համեմատ:

Գրականություն՝

1. Киттель Ч. и др., Берклеевский квурс физики Том 1 Механика - М.:Наука, 1975г.
2. Ландау Л.Д. и Лифшиц Е.М., Механика -М.:Ф-МЛ.1958г.
3. Ալեքսանյան Ալ. Գ., Մեխանիկայի ֆիզիկական հիմունքներ խնդիրներ և լուծումներ – Ստեփանակերտ: ԱրՊՀ հրատարակչություն , 2012թ.

ՀՏԴ 519.7(00:681.5(00.4))

Կիրառական մաթեմատիկա

Մարինա Հակոբյան, Ռաֆայել Բաբայան
ԱրՊՀ, 3-րդ կուրս
marina.hakopian97@gmail.ru

ՊԱՀԵՍՏԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ

Համակարգիչների օգտագործումը հնարավորություն է տալիս ավտոմատացնել պահեստից խանութ ապրանքի տեղաշարժի հաշվառումը:

Ստեղծված ծրագիրն ապահովում է այն բոլոր պահանջները, որոնք առկա են պահեստների աշխատանքը կառավարելու գործընթացում. ապրանքների ընդունում, բաշխում և հանձնում, այս գործառույթների իրականացման համար անհրաժեշտ բոլոր տվյալները (ապրանքների վերաբերյալ տվյալներ, խանութների և նրանց կատարած պատվերների վերաբերյալ տվյալներ) պահպանվում են համապատասխան տվյալների հենքում:

Բանալի բառեր. պահեստ, ավտոմատացում, ապրանքների հաշվառք, կառավարում, տեխնոլոգիա, ինտերֆեյս,արդյունավետություն

Марина Акопян, Рафаэль Бабаян
АрГУ, 3-ий курс
marina.hakopian97@gmail.ru

ПРОЕКТИРОВАНИЕ АВТОМАТИЗИРОВАННОЙ СИСТЕМЫ РАБОТ СКЛАДА

Использование компьютеров позволяет автоматизировать расчет движения товара от склада до магазина.

Созданная программа предоставляет возможность исполнить все требования, которые возникают при регулировании работы процесса хранения. прием и распределение товаров, передача, хранение всех необходимый данных (данные о продукции, данные о магазинах и их заказоахнеобходимой) для выполнения этих функций в соответствующих баз данных.

Ключевые слова. склад, автоматизация, учет товаров, управление, технология, интерфейс, производительность

Marina Hakopian, Rafael Babayan
ASU, 3rd year
marina.hakopian97@gmail.ru

DESIGNING AN AUTOMATED WAREHOUSE WORK SYSTEM

Using computers allows you to automate the calculation of the movement of goods from the warehouse to the store.

The created program provides an opportunity to fulfill all the requirements that arise when regulating the operation of the storage process. Reception and distribution of goods, transfer, storage of all necessary data (product data, store data and their order-required) to perform these functions in the relevant databases.

Key words. storage, automation, accounting of goods, management, technology, interface, productivity

Ավտոմատ կառավարման ներկայիս համակարգերը հնարավորություն են տալիս արդյունավետ կերպով իրականացնելու բեռների տեղաշարժի հաշվառման վերահսկողությունը:

Պահեստավորման դերն աճում է ժամանակակից հասարակությունում, որը պայմանավորված է արտադրության և վաճառքի ծավալների աճմամբ: Պահեստը շինություն է, որը նախատեսված է նյութական ապրանքների պահեստավորման և պահեստային ծառայությունների մատուցման համար: Պահեստում առկա պաշարների արդյունավետ ղեկավարումը թույլ է տալիս տրամադրել օգտագործողներին ժամանակակից և լիակատար տեղեկություններ պաշարների և պատվերների կատարման մասին:

Ավտոմատացումը անհրաժեշտ է, քանի որ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռնված հնարավորությունների օգտագործումը հեշտացնում է պահեստի աշխատանքը, և դա ունի զարգացման միտում:

Պահեստի ավտոմատացումն իրենից ներկայացնում է մի կարգավորված համակարգ, որտեղ կատարվում են բեռների նախապատրաստման, փոխադրման և պահեստավորման բոլոր պահանջները:

Առաջին փուլում սկանավորում են գծիկավոր կոդի տեղեկությունը և այն մուտքագրում համակարգիչ, որտեղ այն համեմատվում է բեռները ուղեկցող փաստաթղթերի հետ: Եթե տեղեկությունը համապատասխանում է, ապա այն մտցվում է տվյալների հենքը և բեռը շարունակում է հոսքագծով շարժվելը: Եթե որևէ պատճառով գծիկավոր կոդը չի կարդացվել կամ այն չի համապատասխանում ուղեկցող փաստաթղթերի հետ, ապա այն հեռացվում է հոսքագծից և բեռը տեղափոխում է կոնտեյներ, որտեղ այն ուսումնասիրում է մասնագետը: Մասնագետը գտնում է պատճառը, թե ինչու բեռը չի անցել առաջնային ստուգումը, և որոշում է շտրիխավորել բեռը կամ վերադարձել այն ուղարկողին: Բեռի շտրիխավորման համար տեղեկությունը ընթերցվում է ուղեկցող փաստաթղթերից և մտցվում է ծրագիրը օպերատորի կողմից, որը հաջորդ փուլում կձևավորի գծիկավոր կոդը: Դրանից հետո, երբ գծիկավոր կոդը տպագրվում է, օպերատորը ջնջում է հինը, ձեռքով կպցնում նոր գծիկավոր կոդը և ուղարկում բեռը հոսքագիծ:

Դրանից հետո օպերատորը սեղմում է «Պահեստ նոր ապրանքների մուտքագրում» կոճակը, ընտրում ապրանքի անվանումը և նշում քանակը: Այդ պատուհանը ունի հետևյալ տեսքը՝



Ծրագիրը ավտոմատ կերպով հաշվում է, թե քանի պատվեր պետք է կատարվի տվյալ պահին և քանի պատվերի կատարման ժամկետն է անցել, բայց դեռ չի կատարվել, և «Պատվերի կատարում» կոճակի մոտ տպում է այդ քանակը: Այդ պատուհանը ունի հետևյալ տեսքը՝



Պատվերներ կատարելու համար օպերատորը սեղմում է «Պատվերի կատարում» կոճակը: Ներքևում կա փակվող ցանկ, որը պարունակում է պատվերի կոդը: Ընտրելով թե ինչ պատվեր ենք ուզում

կատարել, ապա փակվող ցուցակի մոտ առաջանում է գրառում: Պատվերի կատարման պատուհանը ունի հետևյալ տեսքը՝



Եթե պահեստում առկա ապրանքների քանակը բավարարում է տվյալ պատվերի կատարմանը, ապա

- այդ քանակը հանվում է պահեստում առկա ապրաքների քանակից,
- այդ պատվերում ապրանքի, խանութի, քանակի և տվյալ պատվեր կատարող աշխատողի տվյալները մուտքագրվում են «Վաճառված ապրանքների ցանկ»-ին համապատասխանող տվյալների հենքում գտնվող աղյուսակի մեջ,
- կատարված պատվերն ջնջվում է «Պատվերների ցանկ»-ին համապատասխանող տվյալների հենքում գտնվող աղյուսակից:

Աշխատանքում ուսումնասիրվել է պահեստներում բեռների տեղաշարժի հաշվառման համակարգի ավտոմատացումը: Դիտարկվել է շահագործվող համակարգի հիմնական սկզբունքները, վեր են լուծվել հնարավոր սխալները:

Բեռների տեղաշարժի հաշվառման ավտոմատացված համակարգը նախատեսված է զգալիորեն նվազացնել ժամանակի ծախսն ու բեռների հաշվառման և դասակարգման պրոցեսում մասնակցող անձնակազմի քանակը:Աշխատանքում դիտարկված ժամանակակից տեխնոլոգիաները թույլ են տալիս հասնել այդ արդյունքին՝ առանց որակի իջեցմանը:

Նմանատիպ համակարգերի տեղադրումն ու օգտագործումը միջազգային բեռնափոխադրման ամուր ցանցի կառուցման անբաժանելի մասն է:

Բեռնահամալիրն իրենից ներկայացնում է ժամանակակից համալիր՝ նախատեսված նյութական հոսքերի ստացման, դասակարգման և ուղղարկման համար: Համալիրում իրականացվող մեթոդների և գործիքների բարելավումը օգնում է նվազացնել բեռների տեղափոխման ծախսերը և բեռների հասցնելու ժամանակը:

Գիտատեխնիկական առաջադիմության ցուցանիշ է համարվում առաջադիմության ինդեքսը ($J_{ա}$), որը որոշվում է հետևյալ ձևով՝

$$J_{ա} = H_{Արտ\ աշխ} / H_{Արտ\ հիմ}$$

որտեղ $H_{Արտ\ աշխ}$ գիտատեխնիկական արտադրանքի գիտատեխնիկական մակարդակի ընդհանրացված քանակական չափն է՝ աշխատանքի արդյունքը, $H_{ԳՏԱրտ\ հիմ}$ գիտատեխնիկական արտադրանքի գիտատեխնիկական մակարդակի ընդհանրացված քանակական չափն է, որը ընդունված է համեմատման համար

$$H_{Արտ\ աշխ} = \frac{\sum_{աշխ} Q_{աշխi} R_i}{\sum_i R_i}$$

որտեղ $Q_{աշխi}$ – գիտատեխնիկական արտադրանքի i-րդ հատկանիշի ցուցանիշային արժեքն է, այսինքն աշխատանքի արդյունքն է՝ արտահայտված բալերով:

R_i – գիտատեխնիկական արտադրանքի i-րդ հատկանիշի գործակցի կշռային արժեքն է, արտահայտված է միավոր մասով:

$$H_{\text{Արտ հիմ}} = \frac{\sum_i Q_{\text{հիմ}\,i} R_i}{\sum_i R_i}$$

որտեղ $Q_{\text{հիմ}i}$ – գիտատեխնիկական արտադրանքի i-րդ հատկանիշի ցուցանիշային արժեքն է, որը ընդունված է համեմատման համար և արտահայտված է բալերով:

Աշխատանքի արդունավետության գնահատման մեխանիզմը տեսնելու համար կատարած աշխատանքին տվել ենք մոտավոր գնահատականներ, որոնք ներկայացված են աղյուսակում: Համեմատության համար հիմք է ընդունված նմանատիպ բեռնահամալիրի ծրագրի նախորդ մշակումներից մեկը : Աղյուսակ 1

Գիտահետազոտական աշխատանքի արդունավետության հայտանիշը	Գիտատեխնիկական արդյունքի արդունավետության հատկանիշի կարևորությունը	Գիտատեխմիկական արտադրանքի հատկությունների մակարդակը, որը ընդունված է համեմատման համար	Գիտատեխնիկական արտադրանքի հատկությունների մակարդակը, որը հանդիսանում է աշխատանքի արդյունք
Գիտահետազոտական աշխատանքի մակարդակը (նորություն)	0,4	4	8
Գիտահետազոտական աշխատանքի հեռանկարայնություն	0,4	4	7
Գիտատեխնիկական արտադրանքի արդյունքի կիրառման հնարավորությունը	0,2	3	7

Աղյուսակի տվյալներից ելնելով կատարում ենք հետևյալ հաշվարկները

$$H = \frac{8 \cdot 0{,}4 + 7 \cdot 0{,}4 + 7 \cdot 0{,}2}{0{,}4 + 0{,}4 + 0{,}2} = 7{,}4 \quad H = \frac{4 \cdot 0{,}4 + 4 \cdot 0{,}4 + 3 \cdot 0{,}2}{0{,}4 + 0{,}4 + 0{,}2} = 3{,}8$$

$$J = \frac{7{,}4}{3{,}8} = 1{,}95$$

Եթե ուսումնասիրման արդյունքում ստացվել է առաջադիմության ինդեքսը մեծ մեկից ($J = 1.95 > 1$), ապա այն նպատակահարմար է օգտագործել հետագա գործունեության մեջ:

Այսպիսով, համակարգիչների օգտագործումը հնարավորություն է տալիս ավտոմատացնել պահեստից խանութ ապրանքի տեղաշարժի հաշվառումը:

Ստեղծված ծրագիրն ապահովում է այն բոլոր պահանջները, որոնք առկա են պահեստների աշխատանքը կառավարելու գործընթացում. ապրանքների ընդունում, բաշխում և հանձնում, այս գործառույթների իրականացման համար անհրաժեշտ բոլոր տվյալները (ապրանքների վերաբերյալ տվյալներ, խանութների և նրանց կատարած պատվերների վերաբերյալ տվյալներ) պահպանվում են համապատասխան տվյալների հենքում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Баранов В.В., Калянов Г.Н., Попов Ю.И. у др. «Автоматизация управления предприятием» -М.:ИНФРА-М, 2010г. – 239с.
2. «Проектирование автоматизированных систем обработки информации и управления» Хетагуров Я.А. - Агата 2015г. – 20 с.
3. Кристиан Нейгел и др. "C# 5.0 и платформа .NET 4.5 для профессионалов = Professional C# 5.0 and .NET 4.5" — М.: , "Диалектика", 2013.

ՀՏԴ 519.7(37.01:004.738) Կիրառական մաթեմատիկա

Դիանա Իսրայելյան
ԱրՊՀ, 3-րդ կուրս
israelyan.diana@mail.ru

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հաշվի առնելով ներկայումս էլեկտրոնային ուսուցողական ռեսուրսների կարևորությունն ուսումնական գործընթացում առաջարկում եմ էլեկտրոնային գրադարանի համար նախատեսված վեբ – կայքը կցել ԱրՊՀ-ի վեբ – կայքին, որպեսզի հեռակա բաժնի ուսանողները կարողանան հեշտությամբ ծանոթանալ ուսումնական գործընթացին: Նախատեսվում է ավելացնել ևս մի քանի հնարավորություններ օգտագործողական ինտերֆեյսում և որոշ ֆունկցիան կապված տվյալների պաշտպանության և անվտանգության հետ:

Բանալի բառեր. էլեկրտոնային ուսուցողական ռեսուրսներ, նորագույն տեխնոլոգիաներ, ծրագրավորում, գրադարան, վեբ - կայք:

Диана Исраелян
АрГУ, 3-ий курс
israelyan.diana@mail.ru

ПРИМЕНЕНИЕ ЭЛЕКТРОННЫХ ОБУЧАЮЩИХ РЕСУРСОВ В СИСТЕМЕ ДИСТАНЦИОННОГО ОБУЧЕНИЯ

Учитывая важность электронных образовательных ресурсов в процессе обучения, я предлагаю, чтобы прикрепить веб-сайт библиотеки к веб – сайту АрГУ, чтобы студенты
заочного отделения могли легко ознакомиться с учебным процессом. Планируется добавить несколько возможностей пользователей интерфейса и некоторые функции, связанные с защитой и безопасностью данных.

Ключевые слова: электронные образовательные ресурсы, современные технологии,
Программирование, библиотека, веб - сайт.

Diana Israelyan
ASU, 3rd year
israelyan.diana@mail.ru

THE APPLICATION OF E-LEARNING RESOURCES IN THE SYSTEM OF DISTANCE LEARNING

Given the importance of electronic educational resources in the learning process, I suggest to attach the library website to the website of the ArSU, so that students correspondence department could easily familiarize themselves with the educational process. It is planned to add several features of the interface users and some functions related to the protection and security of data.

Key words: electronic educational resources, modern technologies, programming, library,
web - sait.

21-րդ դարը համարվում է գիտական առաջընթացի և բարձր տեխնոլոգիաների դարաշրջան: Վերջին տասնամյակների ընթացքում համացանցը և վեբ – տեխնոլոգիաները դարձել են աշխարհում ամենահաջողված նախագծերը: Նորագույն տեխնոլոգիաներն ամենամեծ ազդեցությունն են թողել մարդկու վրա և նրա համար ստեղծել են նոր աշխարհ, ներթափանցելով մարդկային գործունեության համարյա բոլոր բնագավառների մեջ: Դրանք հեշտացնում են մարդու գործունեությունը, հնարավորություն են տալիս ավտոմատացնել տարբեր կրթական, արտադրական և տեխնոլոգիական գործընթացներ:

Եթե սկզբնական շրջանում համացացը դիտվել է որպես թույլ փոխկապակցված համակարգիչների խումբ, որոնք հաղորդակցման և տվյալներ փոխանցման համար օգտագործում էին ստանդաևտ պրոտակոլները, ապա այժմ համացանցը ծառայությունների և տեխնոլոգիաների համախմբություն է, որը հնարավորություն է տալիս մարդկանց ազատ շփվելու, գրքեր կարդալու, կիսելու իրենց մտքերն ուրիշների հետ, իմանալու վերջին նորությունները:

Անցումը իրազեկված հասարակությանը նորանոր պահանջներ է դնում կրթական համակարգի առաջ: Դա առաջին հերթին նշանակում է, որ տեղեկատվությունն առաջնակարգ տեղ է գրավում հասարակության զարգացման բոլոր ոլորտներում, ինչի յուրացման համար անհրաժեշտ են նոր մոտեցումներ, որն էլ հենց հանդիսանում է էլեկտրոնային ուսուցումը:

Ինֆորմացիայի քանակի անընդհատ ավելացումը և ուսումնական ժամանակի սահմանափակ լինելը կրթական համակարգում նոր մեթոդներ և նորագույն տեխնոլոգիաների ներդրման անհրաժեշտություն է առաջացնում:

Նորագույն տեխնոլոգիաների ներդրումը կրթական համակարգում հնարավորություն է տալիս ավանդական ուսուցումը դարձնել ավելի պատկերավոր և ակնառու, զարգացնել սովորողի աշխարհայացքը:

Ներկայումս կրթական համակարգում լայնորեն կիրառվում է հեռակա ուսուցումը: Հեռակա կրթությունն առանց արտադրությունից կտրվելու բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթությամբ մասնագետների պատրաստման ու որակավորման, ինչպես նաև ընդհանուր միջնակարգ կրթություն ստանալու ձևերից մեկն է: Հեռակա կրթության ուսուցման հիմնական ձևը ուսանողների (սովորողների) ինքնուրույն աշխատանքն է:

Հեռակա ուսուցման համակարգն ուսանողին հնարավորություն է ընձեռում աշխատանքին զուգահեռ ստանալ բարձրագույն մասնագիտական կրթություն:

Հեռակա ուսուցման բովանդակությունն որոշվում է բարձրագույն կրթության պետական կրթական չափորոշիչներով, իսկ ուսումնական պլանը կազմվում է առկա ուսուցման համապատասխան մասնագիտության ուսումնական պլանի հիման վրա: Աշխատաշուկայի մշտադիտարկման արդյունքներից ելնելով՝ ուսումնական ծրագրերը կազմելիս հաշվի են առնվում մասնագիտության հանդեպ ժամանակակից պահանջները՝ աշխատաշուկայում շրջանավարտների մրցունակությունն ապահովելու նպատակով:

Էլեկտրոնային ուսուցողական ռեսուրսների միջոցով ուսուցման կազմակերպման առավելությունն ավանդական ուսուցման նկատմամբ կայանում է նրանում, որ սովորողը կարողանում է իրեն հետաքրքրող հարցի վերաբերյալ ստանալ առավելագույն չափով ինֆորմացիա, հաղորդակցվել տարբեր երկրներում ապրող մարդկանց հետ, ֆորումների միջոցով արագորեն ստանալ հարցերի պատասխաններ համապատասխան մասնագետներից, իրականացնել փորձի փոխանակում:

Էլեկտրոնային ուսուցողական ռեսուրսները ծրագրային, տեխնիկական և կազմակերպչական միջոցների համախումբ են, որոնք ունեն էլեկտրոնային և ուսուցողական բնույթ ու տեղադրված են համակարգիչներում և համացանցում:

Էլեկտրոնային ուսուցողական ռեսուրսն իր մեջ ներառում է տվյալներ, տեղեկատվություն, ծրագրային ապահովում, որոնք անհրաժեշտ են դրանց ստեղծման և կրթական գործընթացում կիրառման համար: [1; էջ 3]

Էլեկտրոնային ուսուցողական ռեսուրսները լինում են հետևյալ տեսակի.

- Էլեկտրոնային տվյալներ,
- Էլեկտրոնային ծրագրեր կամ էլ դրանց համակցություն մեկ ռեսուրսի մեջ:

Էլեկտրոնային տվյալները լինում են տեքստային, թվային, ձայնային, գրաֆիկական: Էլեկտրոնային ծրագրերը լինում են համակարգային, կիրառական և ծառայողական:

Էլեկտրոնային ուսուցողական ռեսուրսները կարելի է դասակարգել հետևյալ ձևով.

1. ըստ նպատակային նշանակության՝ պաշտոնական, գիտական, ուսումնական, ուսումնամեթոդական, տեղեկատվական,
2. ըստ կառուցվածքի՝ միահատոր, բազմահատոր, էլեկտրոնային շարք,
3. ըստ ժանրի՝ էլեկտրոնային պորտալներ, համալսարանների, ֆակուլտետների, ամբիոնների վեբ – կայքեր, տվյալների հենքեր, էլեկտրոնային գրադարաններ, տեղեկատվական – փնտրողական համակարգեր:

Խոսելով ուսումնադաստիարակչական գործընթացում էլեկտրոնային ռեսուրսների նշանակության մասին, անհրաժեշտ է հաշվի առնել ժամանակակից կրթական համակարգի

առանձնահատկությունները, որտեղ կան ուսումնառության տարբեր ձևեր և կարևոր դեր ունեն ինքնուրույն աշխատանքները: Հաշվի առնելով այդ ամենը, անհրաժեշտ է ապահովել ուսումնամեթոդական ռեսուրսների հասանելիություն բազմաթիվ օգտագործողների համար, ինչպես նաև ուսուցման անհատական մոտեցում և հետադարձ կապի հնարավորություն: [2; էջ 63]

Էլեկտրոնային ռեսուրսների ներկայացվող հիմնական պահանջներն են.

1. Մանկավարժական պահանջներ (խրատական սկզբունքներ, մեթոդական պահանջներ, ուսումնական դասընթացի թեմայի ընտրության հիմնավորում),
2. Տեխնիկական պահանջներ,
3. Գեղագիտական պահանջներ:

Ինչպես ավանդական կրթությունը, այնպես էլ էլեկտրոնային ուսուցողական ռեսուրսներն ունեն հետևյալ սկզբունքները և կանոնները.

1. Ակնառու դիտողական: Մանկավարժական հոգեբանության մեջ ուսուցման և շրջական աշխարհի ընկալման հիմնական միջոցներն են տեսողությունը, լսողությունը և աբստրակտ մտածելակերպը: Լսողությունը և տեսողությունն ունեն կարևոր և արդյունավետ դեր: Դրանք հնարավորություն են տալիս ստանալ առավելագույն չափով ինֆորմացիա աուդիո, վիդեո և այլ տեսակի մուլտիմեդիական միջոցներից, կենտրոնացնելով ուշադրությունը:
2. Ինտերակտիվություն: Ուսուցման ընթացքում սովորողը պետք է իրականացնի մի շարք ինտերակտիվ գործողություններ՝ ուսումնական նյութի դիտում և ունկնդրում, դիմել տեղեկատվական համակարգին, պատասխանել ստուգողական հարցերին, ինչը նպաստում է գիտակցության զարգացմանը և մատուցված նյութը դարձնում ավելի հիշվող:
3. Հասանելիություն: Պարզ շարադրված նյութն ընկալելի է և հնարավորություն է տալիս նյութը սովորել ինչպես ուսուցչի (ծնողի) օգնությամբ, այնպես էլ ինքնուրույն:
4. Ներկայացման հաջորդականություն: Երկխոսության ինտերֆեյսը, հղումների համակարգը թույլ է տալիս դիմել նախորդ կամ հաջորդ ուսումնական նյութին, ինչպես նաև ցանկացած տեղեկատվական և հանրագիտարանային ինֆորմացիայի:
5. Նյութի մոդուլացում: Ուսումնական նյութը բաժանված է մոդուլների (մոդուլների հիմքում թեմաներն են) և միկրոմոդուլների (միկրոմոդուլների հիմքում հասկացություններն են):

Ուսումնական բոլոր նյութերը պետք է ներկայացվեն մուլտիմեդիական ձևով: Էլեկտրոնային ուսուցողական ռեսուրսներն իրենցից ներկայացնում են արդյունավետ մեխանիզմ, որոնք մատուցված նյութը շնորհիվ լսողական և տեսողական հիշողության դարձնում են արագ հիշվող:

Էլեկտրանային ուսուցողական ռեսուրսի օրիանակ է հանդիսանում հեռակա բաժնի համար ստեղծված էլեկտրոնային գրադարանի վեբ – կայքը: Այն հնարավորություն է տալիս համալսարանի բոլոր ֆակուլտետների ամբիոններին, որոնք ունեն հեռակա բաժիններ տեղադրել իրենց դասախոսությունները և ուսումնառության համար անհրաժեշտ նյութերը:

Ուսանողների մի մասն ապրելով սահմանամերձ և հեռավոր գյուղերում չեն կարողանում հաճախակի այցելել համալսարան և վերցնել անհրաժեշտ գրականության ցանկը ու դասախոսությունները: Էլեկտրոնային գրադարանի միջոցով նրանք կկարողանան համացանցի միջոցով ներբեռնել կամ online կարդալ գրքերը, ծանոթանալ դասախոսություններին, առարկաներին:

Էլեկտրոնային գրադարանի համար նախատեսված վեբ – կայքը բաղկացած է երկու մասից՝ օգտագործողական ինտերֆեյսից և ադմինիստրատորային մասից: Օգտագործողական ինտերֆեյսը, ադմինիստրատորային մասը և տվյալների հենքը միմյանց հետ փոխկապցված են: Օրինակ ադմինիստրատորային մասից նոր գիրք ավելացնելիս այն ավելացվում է տվյալների հենքի համապատասխան աղյուսակի մեջ և երևում է օգտագործողական ինտերֆեյսում:

Ամբողջ ծրագիրը բաղկացած է երկու բանդլից՝ AdminBundle և AppBundle: Բանդլը [3, էջ 25] համարվում է Symfony նվազագույն միավորը: Այն ֆայլերի խումբ է, որոնք ներառված են համապատասխան թղթապանակների մեջ, միասին կազմում են մեկ կատալոգ ու կատարում են մեկ ֆունկցիա:

Ադմինիստրատիվ մասից հնարավոր է ավելացնել նոր ֆակուլտետներ, ամբիոններ, մասնագիտություններ, տեղադրել գրքեր և դասախոսություններ: Ինչպես նաև փնտրման միջոցով արագորեն գտնել անհրաժեշտ տեղեկությունները, փոփոխել կամ ջնջել եղած տվյալները:

Ադմինիստրատիվ մասն ունի հետևյալ տեսքը.





Օգտագործողական ինտերֆեյսը կազմված է գլխավոր մենյուից, որը պարունակում է համալսարանի բոլոր ֆակուլտետների անվանումները: Դրանցից որևէ մեկը սեղմելով բացվում է տվյալ ֆակուլտետի այն ամբիոնների ցանկը, որոնք ունեն հեռակա բաժիններ: Ընտրելով անհրաժեշտ ամբիոնը բացվում են համապատասխան մասնագիտությունները: Սեղմելով դրանցից մեկի վրա բացվում է տվյալ մասնագիտությանը համապատասխանող գրքերի և դասախոսությունների ցանկը: Յուրաքանչյուր գրքի դիմաց նշված է գրքի անունը, հեղինակի անունը, առարկայի անվանումը, գրքի նկարը: Ամեն գրքի մոտ կա «Կարդալ» հղում, որը սեղմելով կբացվի տվյալ գիրքը նոր էջում:

Վեբ – կայքում կա նաև հետաքրքիր փաստերի բլոկ, որտեղ ներկայացվում են տարբեր փաստեր գրքերի մասին:

Օգտագործողական ինտերֆեյսն ունի հետևյալ տեսքը.



Հաշվի առնելով ներկայումս էլեկտրոնային ուսուցողական ռեսուրսների կարևորությունն ուսումնական գործընթացում առաջարկում եմ էլեկտրոնային գրադարանի համար նախատեսված վեբ – կայքը կցել ԱրՊՀ-ի վեբ – կայքին, որպեսզի հեռակա բաժնի ուսանողները կարողանան հեշտությամբ ծանոթանալ ուսումնական գործընթացին: Նախատեսվում է ավելացնել ևս մի քանի հնարավորություններ օգտագործողական ինտերֆեյսում և որոշ ֆունկցիան կապված տվյալների պաշտպանության և անվտանգության հետ:

Օգտագործված գրականության ցանկը

1. «Электронные образовательные ресурсы нового поколения в вопросах и ответах»,
А. В. Осин, И. И. Калина, Москва - 29 стр.
2. «Информационные технологии в образовании», Захарова И. Г., Москва 2010 г. - 190 стр.
3. «Symfony book 2.7», by SensoLabs , 2015 y. - 234 p.

УДК 91(37.02)

География

Абрамян Артур
Арцахский Государственный Университет
факультет Естествознания,
кафедра Географии, студент IV курса
Научный руководитель –
кандидат географических наук, доцент А. В. Григорян
э-почта: artur.abrahamyan.1122@mail.ru

ОРГАНИЗАЦИЯ УЧЕБЫ ДВУХКОМПЛЕКТНЫХ КЛАССАХ ВО ВРЕМЯ ОБУЧЕНИЯ ПРЕДМЕТА «ГЕОГРАФИЯ»

В работе выдвинуты проблемы, возникающие перед учителями при преподавании предмета ,,География”, также предлогаются способы для решения проблемы. В двухкомплектных классах необходимо организовать самостоятельные работы с помощью употребления разнообразного распределяющего материала в разных стадиях урока-при передаче и закреплении ногово материала и при проверки. Как методическая помощь предлагаются подьоды анализа план-конспекта урока географии в двухкомлектных классах.

Ключевые слова: двухкомплектных класс, план двухкомплектного класса, многокомлектный класс, метод ,,Снежка”, план анализа.

Abrahamyan Arthur
Artsakh State University The department of Natural Sciences
Geography student lV-year
Scientific head - the candidate of geographic sciences,
associate professor A. V. Grigoryan
e-mail: artur.abrahamyan.1122@mail.ru

PLANNING EDUCATION IN TWO-GRADED CLASSES DURING «GEOGRAPHY» COURSE TEACHING

Here are shown a number of problems which fased ,,Geography” teachers and are recommended ways solving them effectively in this work. It is necessary to arrange the use of various distribution materials independently during various stages of the program, strengthening and testing new material. There are offered the analysis of iesson plan from ,,Geography” as a metodological assistance.

Key words: two-graded class, a daily plan for a two-graded class, mulitigraded class, ,,Snowball’’ method, review plan.

Աբրահամյան Արթուր Գ.
ԱրՊՀ Բնագիտական ֆակուլտետ,
Աշխարհագրության ամբիոն, IV կուրսի ուսանող
Գիտական ղեկավար՝ աշխ. գիտ. թեկնածու,
դոցենտ Գրիգորյան Ա. Վ.
Էլ. հասցե՝ artur.abrahamyan.1122@mail.ru

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՐԿԿԱԶՄ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Աշխատանքում մատնանշվում են երկկազմ դասարաններում «Աշխարհագրություն» առարկա դասավանդող ուսուցիչների առջև ծառացած մի շարք խնդիրներ և առաջարվում են դրանց արդյունավետ լուծման ուղիներ: Անհրաժեշտ է երկկազմ դասարաններում տարատեսակ բաշխիչ նյութերի կիրառումով ինքնուրույն աշխատանքներ կազմակերպել դասի տարբեր փուլերում՝ նոր նյութի հաղորդման, ամրապնդման և ստուգման ընթացքում: Որպես մեթոդական օգնություն առաջարկվում են երկկազմ դասարանի «Աշխարհագրություն» դասի պլան սեղմագրի վերլուծման մոտցումներ:

Բանալի բառեր. երկկազմ դասարան, երկկազմ դասարանի պլան, բազմակազմ դասարան, «Ձնագնդի» մեթոդ, վերլուծման պլան:

Մեր օրերում բոլորիս մտահոգող հարցերից մեկը դպրոցում ուսուցման գործընթացի կատարելագործումն է, որը նշանակում է բարձրացնել ոչ միայն ուսման բովանդակությունը, այլև ուսումնական նյութի մատուցման մեթոդների, ձևերի, եղանակների գիտական մակարդակը, ինչպես նաև այդ նյութի յուրացումն աշակերտների կողմից: Իսկ դա առաջին հերթին ենթադրում է դասի արդյունավետության բարձրացում, որպես դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքի հիմնական ձև:

Արցախի ծայրամասային, բարձրլեռնային և սակավաթիվ բնակչությամբ բնակավայրերում հանրակրթության կազմակերպումն ուսուցիչների դասավանդման դժվարին խնդիրներից մեկն է: Դա առնչվում է երկկազմ և բազմակազմ դասարաններում ուսուցման կազմակերպման հետ: Ներկայումս, աշակերտների քանակի նվազման պատճառով այդպիսի դասարանների թիվն ամեն տարի ավելանում է: Մարտունու շրջանի որոշ դպրոցներում նույնիսկ առկա են եռակազմ դասարաններ (Հացի, Մսմնա, Գավահան և այլն):

Բազմակազմ դասարանների ձևավորումը պայմանավորված է ժողովրդագրական, տնտեսական և քաղաքական մի շարք գործոններով: Արցախում դրանցից կարելի է մատնանշել որոշ գյուղական բնակավայրերի օրեցօր դատարկումը, որը տեղի է ունենում միգրացիոն ամենաբարձր շարժունակությամբ օժտված բնակչության, այսինքն՝ երիտասարդության տեղափոխմամբ: Արդյունքում ստացվում է այն, որ նման բնակավայրերն աստիճանաբար «ծերանում» են: Վերջին տարիներին Արցախում նկատվող ուրբանիզացիայի հետևանքով՝ շատ ընտանիքների խոշոր բնակավայրերում բնակություն հաստատելու միտումը (քաղաք, քաղաքամերձ արվարձան և այլն) ավելացրեց նման բնակավայրերի աշակերտների թվաքանակը: Մինչդեռ ծայրամասերում գտնվող որոշ դպրոցներում աշակերտների թվաքանակը գնալով պակասում է, ինչի պատճառով էլ միավորվում են երկու կամ ավելի տարիքային խմբեր՝ ստեղծում երկկազմ և բազմակազմ դասարաններ: Մեր աշխատանքում փորձելու ենք ներկայացնել նմանատիպ դասարաններում ուսուցում կազմաերպելու համար ուսուցչի առջև ծառացած խնդիրներն ու լուծման ուղիները, բերել օրինակ՝ որպես մեթոդական օգնություն:

Ուսուցման գործընթացի կազմակերպման և կատարելագործման, նորացման ու արդիականացման ձևերի ու մեթոդների մշակումը գերխնդիր է ոչ միայն Արցախում, այլև ամբողջ աշխարհում: Մի կողմից փաստ է տարբեր տարիքային խմբերից բաղկացած դասարանը, իսկ մյուս կողմից՝ զարգացման ժամանակակից մակարդակը, ինչը պահանջում է, որ երկկազմ դասարաններում «Աշխարհագրություն» դասավանդող ուսուցիչները սովորողներին զինեն այնպիսի գիտելիքներով, որոնք համահունչ լինեն միակազմ դասարաններում դասավանդող ուսուցիչների հաղորդած գիտելիքներին: Դրան հասնելու ամենակարճ ճանապարհը ուսուցման մեթոդների անընդհատ կատարելագործումն է: Ներկայումս նոր ուսումնական պլանների, ծրագրերի փոփոխությամբ «տուժվել» և բարդ իրավիճակում հայտնվել է «Աշխարհագրություն» առարկան, քանի որ 6-7 դասարաններում վերոհիշյալ առարկայի տարեկան 68 ժամաքանակը սեղմվել ու դարձել է 34: Բնականաբար այդպիսի սեղմվածությունն ավելի բարդ բնույթ է կրում երկկազմ դասարաններում, որն արժանացել է աշխարհագրություն դասավանդող ուսուցիչների քննադատությանը: Նրանք վերապատրաստման դասընթացներից ինչ-որ չափով դժգոհում են պնդելով, որ այդ դասընթացներն իրենց չեն պատրաստել երկկազմ և բազմակազմ դասարաններում դասավանդելու համար: Նմանատիպ դասարաններում 45 րոպեանոց դասաժամի ընթացքում ուսուցիչը կրկնապատկվելով նվազեցնում է աշակերտների հետ աշխատաժամանակը և հարցականի տակ դնում առարկայական ծրագրի լիարժեք իրականացումը[1]:

Երկկազմ դասարաններում «Աշխարհագրության» ուսուցումն այժմ, ավելի քան երբևէ, ձեռք է բերել հույժ կարևոր նշանակություն: Այն սովորողներին հիմնավոր գիտելիքներ է տալիս բնության և մարդկային գործունեության բոլոր բնագավառների վերաբերյալ: Լինելով գերզգայուն գիտություն կյանքում և աշխարհում կատարվող փոփոխությունների նկատմամբ՝ այն բավականին դժվարին է դարձնում երկկազմ և բազմակազմ դասարաններում աշխարհագրություն դասավանդող ուսուցիչների գործը: Որպեսզի ուսուցիչը հաղթահարի այդ դժվարությունները, պետք է ոչ միայն փայլի աշխարհագրական գիտելիքներով, այլև մանկավարժության համընդհանուր օրենքների, մեթոդների և մասնավոր մեթոդիկայի իմացությամբ, տիրապետի ուսուցման բազմազան ձևերի և մոտեցումների, որպեսզի դասի ընթացքում առաջացած ցանկացած իրավիճակից դուրս գալու ճիշտ ելք գտնի և սովորողներին մատչելի դարձնի այն նյութը, որը հաղորդվում է տվյալ դասի ընթացքում: Անհրաժեշտ է,

[1] Ոսկանյան Ա., Բազմահամակազմ դասարանների վիճակը ՀՀ դպրոցներում (Մանկավարժություն գիտամեթոդական ամսագիր): Երևան, 2011թ., № 5, էջ 37:

որ երկկազմ դասարաններում դասավանդող աշխարհագրության մասնագետներն ունենան մանկավարժական վարպետություն, ինչը ենթադրում է իր դասավանդած առարկայի հիմնավոր իմացում, դաստիարակության և մանկավարժական կարողությունների առկայություն: Երկկազմ դասարանում դասավանդող աշխարհագրության ուսուցչից պահանջվում է ոչ միայն լավ դասավանդել իր առարկան, այլև կազմակերպել նմանատիպ դասարանը, այն համախմբել և ապահովել հսկողությունը աշակերտների վարքի նկատմամբ: Դասի յուրաքանչյուր փուլի համար հարկավոր է ընտրել խոսքային, որոնողական, ինչպես նաև խթանման ու հսկողության ձևերի լավագույն զուգակցում: Բացի այդ, անհրաժեշտ է ուսուցման երկդասարանական, խմբային և անհատական ձևերն այնպես զուգակցել, որ լավագույն ձևով հաշվի առնվեն դասարանի աշակերտների հնարավորությունները: Պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել մեկ դասասենյակում գտնվող երկու տարբեր դասարանների աշակերտների ինտելեկտի, կամքի, հույզերի, հետաքրքրությունների զարգացման բնագավառում նկատվող թերությունների վերացմանը, ապահովելով աշակերտների կողմից ուսումնական գործողությունների գիտակցումը: Աշխարհագրության որոշ թեմաների ժամանակ նպատակահարմար է օգտագործել քննարկվող նյութին վերաբերող գեղարվեստական գրականություն, ինչը օգնում է աշակերտներին լավ հասկանալ նոր նյութը՝ ստեղծել համապատասխան հուզական տրամադրություն: Երկկազմ դասարաններում նոր նյութի մատուցման ժամանակ պարտադիր է ապահովել ուղիղ կապ, այսինքն՝ գիտական հարուստ ինֆորմացիայի հաղորդումն աշակերտներին: Չափազանց կարևոր է ուղիղ կապից բացի, ապահովել հետադարձ կապը: Դա նշանակում է աշակերտների կողմից շարադրանքի գիտակցական յուրացումն ու ընկալումը: Այս դեպքում աշխարհագրության ուսուցիչը պետք է խելամտորեն կիրառի համագործակցության սկզբունքը, այսինքն՝ ուսուցման և դաստիարակության գործընթացում հաշվի առնի աշակերտների կարծիքը, ցանկությունները, առաջարկությունները և հետաքրքրությունները: Դասավանդման արվեստին տիրապետող աշխարհագրության ուսուցիչը երբեք աշակերտների նկատմամբ անպատասխանատու վերաբերմունք չպետք է դրսևորվի, աշակերտներին չպետք է գնահատի կամայականորեն, որովհետև ուսուցչի կողմից անտեսվող ամեն մի սխալ, կարող է վատ անդրադառնալ աշակերտների հոգեբանության վրա: Երկկազմ դասարաններում Աշխարհագրություն առարկայի ուսուցման կազմակերպման ժամանակ կարող են առաջանալ ինչպես դրական, այնպես էլ բացասական երևույթներ: Որպես դրական երևույթ կարելի է դիտարկել ուսուցչից բացի մեծահասակ աշակերտների կողմից փոքրահասակների վերահսկողության իրականացումը, բարձր դասարանցիների համար անցած նյութերին անդրադառնալու, ավելի շատ ինքնուրույն աշխատանք կատարելու հնարավորության ստեղծումը, համաթեմա դասերի ուսուցման ընթացքում աշակերտների ակտիվության զարգացումը և այլն: Բացասական երևույթներից են՝ աշակերտների ուշադրության շեղումը՝ մյուս դասարանի աշակերտների գործողությունների, քարտեզների վրա, ինչպես նաև ինքնուրույն աշխատանքի խանգարումը, ուսուցչի կողմից միևնույն դասասենյակում տարբեր տարիքի սովորողների նկատմամբ վերաբերմունքի տարբերությունից բխող հետևանքները և այլն[1]: Ընդհանուր մանկավարժական դրույթները, մեթոդական աշխատանքները պահանջում են ստեղծագործական վերամիավորում[2]: Սա է պատճառը, որ երկկազմ դասարաններում դասավանդող աշխարհագրության ուսուցիչներն անընդհատ գտնվում են մանկավարժական հնարների որոնումների մեջ:

Ներկայացնում ենք երկկազմ դասարաններում Աշխարհագրության դասի կազմակերպման պլան-սեղմագրի վերլուծում, որը մեր կարծիքով կարելի է օգտագործել տարբեր դասարաններից ձևավորված երկկազմ դասարանում կազմակերպվող Աշխարհագրության դասի ժամանակ:

Երկկազմ դասարանում (այս դեպքում 8-9 դասարաններ)

Աշխարհագրության դասի վերլուծման պլան

Թեմաները

8-րդ դասարան – Արևելյան Եվրոպայի բնական պայմանները և ռեսուրսները:

9-րդ դասարան – Հայկական լեռնաշխարհի կլիմայական առանձնահատկությունները:

Դասի տիպը՝ *համակցված:*

[1] Ադամյան Ն., Գրիգորյան Ք., Ուսուցման կազմակերպումը բազմակազմ դասարաններում: Մանկավարժություն, 2015թ., №4, էջ 52:

[2] Թորոսյան Կ., Երկկազմ դասարաններում աշխատանքի կազմակերպման և դասերի պլանավորման առանձնահատկությունները (Նախաշավիղ գիտամեթոդական հանդես): Երևան, 2009թ., № 1-2, էջ 6:

Նյութական ապահովվածությունը՝ *Աշխարհագրական ատլաս և Հայկական լեռնաշխարհի ֆիզիկական քարտեզ:*

Միջառարկայական և ներառարկայական կապ՝ *աշխարհագրություն 6-րդ դասարան (8-րդ դասարանի համար) և բնագիտություն 5-րդ դասարան (9-րդ դասարանի համար):*

Դասի նպատակները՝

ա) Ակադեմիական - դասի հիմնական հասկացությունների իմացության չափորոշիչային պահանջների մատուցում:

բ) Զարգացնող - կլիմայական առանձնահատկությունների դրսևորումների տարբերությունների մասին պատկերացումների զարգացում:

1. Դասի կազմակերպչական օղակ-3 րոպե

-Այս ընթացքում ուսուցիչը դասարանում ստեղծում է աշխատանքային տրամադրություն, կատարում աշակերտների հաճախումների հաշվառում, դասամատյանի լրացում, հերթապահների միջոցով քարտեզների ամրացում և այլն:

2. Հին դասի հարցում-10 րոպե

- Ուսուցիչը ստուգում է տնային առաջադրանքները, մի քանի հարցումով աշակերտներին նախապատրրաստում նրանց կողմից մատուցվելիք թեմային, որից հետո հին դասի հարցում կատարում:

3. Խթանման փուլ-4 րոպե

- Ուսուցիչը ներկայացնում է երկու դասարանների ուսումնասիրվելիք թեմաները:

- «Ձնագնդի» մեթոդի օգնությամբ ուսուցիչը կատարում է աշակերտների կարծիքների փոխանակում, ընտրություն, հավաքում և կարծիքների կազմում: Օրինակ, պատասխանել «Ինչպիսի՞ նմանություններ և տարբերություններ կունենան Արևելյան Եվրոպայի և Հայկական լեռնաշխարհի կլիմայական պայմանները» և այլն:

- Ուսուցիչը պետք է նախապատրաստած լինի թերթեր, որտեղ խառնաշփոթ գրված կլինի նմանություններն ու տարբերությունները: Աշակերտները ծանոթանալով գրվածքներին՝ կատարում են նշումներ հետևյալ պայմանական նշաններով. տարբերություններ «-», նմանություններ «+»:

4. Իմաստի ընկալման փուլ-18 րոպե

- Ուսուցիչն 8-րդ դասարանցիներին բացատրում և հանձնարարում է ուրվագծային քարտեզի վրա կատարել ինքնուրույն աշխատանք նշելով՝ Արևելյան Եվրոպայի ռեսուրսները:

- 8-րդ դասարանի կատարման ընթացքում ուսուցիչը մատուցում է 9-րդ դասարանի նոր նյութը և նախօրոք թերթերի վրա կազմած հարցերը տալիս է աշակերտներին, իսկ վերջիններս փորձում են դասագրքից օգտվելով գտնել դրանց պատասխանները:

- Եթե 8-րդ դասարանցիները դեռ չեն ավարտել ինքնուրույն աշխատանքը, ապա ուսուցիչը հանձնարարում է շարունակել տանը և մատուցում նոր թեման:

5. Կշռադատման փուլ-8 րոպե

-Այս փուլում ուսուցիչը կարող է պարզաբանել աշակերտների մոտ առաջացած անհասկանալի հարցերը, միաժամանակ զարգացնելով աշակերտների ընդհանրացում կատարելու հմտությունը[1]: Կարելի է այս փուլն օգտագործել նաև թեստային առաջադրանքների մեկընդմեջ ընթերցմամբ, որը կամրապնդի աշակերտների գիտելիքները: Այս փուլում կարևոր է նաև միջառարկայական կապերի պահպանումը[2]:

6. Գնահատման փուլ և տնային հանձնարարություն-2 րոպե

-Ուսուցիչը մեծ ուշադրություն է դարձնում աշակերտներին գնահատելիս, քանի որ այս դեպքում հաճախ կարող են առաջանալ էթիկական պլանի սխալներ: Ցանկալի է աշակերտներին գնահատել նրանց կատարած աշխատանքի, նյութի հիմնականը երկրորդայինից տարբերելու, գրագետ հարցեր կազմելու կարողությունների հիման վրա: Պետք է վերլուծել գնահատականի ձևավորման չափանիշները, որպեսզի աշակերտների մոտ չառաջանան դժգոհություններ: Այս ամենը չպետք է արհամարվի աշխարհագրության ուսուցչի կողմից, հակառակ դեպքում բացասաբար կանդրադառնա աշակերտների հետագա ուսումնական գործունեության վրա. նրանք կմնան անտարբեր ուսման նկատմամբ:

[1] Հովսեփյան Ա., Հովհաննիսյան Գ., Աշխարհագրության ուսուցչի ձեռնարկ: Երևան, 2007թ., էջ 24:

[2] Սարգսյան Խ., Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա: Երևան, 2002թ., էջ 219:

-Վերջում ուսուցիչը հանձնարարում է տնային աշխատանք՝ կատարման ընթացքի անհասկանալի մասերը բացատրելով:

Օգտագործված գրականություն

1. Ադամյան Ն., Գրիգորյան Ք., Ուսուցման կազմակերպումը բազմակազմ դասարաններում (Մանկավարժություն գիտամեթոդական ամսագիր): 2015թ., №4, էջ 64:
2. Բոլդիրև Ն. Ի., Դասդեկ: Երևան, 1974թ., 328 էջ:
3. Թորոսյան Կ., Երկկազմ դասարաններում աշխատանքի կազմակերպման և դասերի պլանավորման առանձնահատկությունները (Նախաշավիղ գիտամեթոդական հանդես): Երևան, 2009թ., № 1-2, 129 էջ:
4. Հանրակրթություն (ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարություն), կազմ.՝ Ա. Սարգսյան: Ստեփանակերտ, 2016թ., 500 էջ:
5. Հարությունյան Գ. Հ., Դասի արդյունավետության բարձրացման ուղիները (օգնություն ուսուցչին): Ստեփանակերտ, 1999թ., 31 էջ:
6. Հովսեփյան Ա., Հովհաննիսյան Գ., Աշխարհագրության ուսուցչի ձեռնարկ: Երևան, 2007թ., 88 էջ:
7. Ղալաչյան Մ., Սակավակազմ դպրոցների հիմնախնդիրները (Մանկավարժություն գիտամեթոդական ամսագիր): Երևան, 2010թ., № 2, 64 էջ:
8. Մանկավարժություն (գիտամեթոդական վերլուծական ամսագիր): Գլխ. խմբ. Մկրտչյան Մ., 2009թ. № 7-8, 128 էջ:
9. Ոսկանյան Ա., Բազմահամակազմ դասարանների վիճակը ՀՀ դպրոցներում (Մանկավարժություն գիտամեթոդական ամսագիր): Երևան, 2011թ., № 5, 65 էջ:
10. Սարգսյան Խ., Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա: Երևան, 2002թ., 324 էջ:

ՀՏԴ 547

Քիմիա

Դիանա Ավանեսյան
Արցախի պետական համալսարան, 3-րդ կուրս
diana.avanesyan97@mail.ru

ԻԶՈՄԵՐԻԱՅԻ ԵՐԵՎՈՒՅԹԸ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՔԻՄԻԱՅՈՒՄ

Աշխատանքում ուսումնասիրվել և դասակարգվել են օրգանական միացություններին յուրահատուկ իզոմերիայի տեսակները: Նմանատիպ դասակարգումը հնարավորություն է տալիս ելնելով իզոմերիայի ձևից գաղափար կազմել միացության այս կամ այն դասին պատկանելիության մասին:

Բանալի բառեր – օրգանական միացություններ, իզոմերիա, մետամերիա, տաուտոմերիա, կոնֆորմացիա, կոնֆիգուրացիա

Диана Аванесян
АрГУ, 3-ий курс
diana.avanesyan97@mail.ru

ЯВЛЕНИЕ ИЗОМЕРИИ В ОРГАНИЧЕСКОЙ ХИМИИ

В работе изучены и классифицированы типы изомерии соответствующие органическим соеденениям. Такая классификация позволяет, на основе формы изомерии, составить представление о принадлежности соединения к тому или иному классу.

Ключевые слова: органические соединения, изомерия, метамерия, таутомерия, конформация, конфигурация

Diana Avanesyan
ASU, 3rd year
diana.avanesyan97@mail.ru

THE PHENOMENON OF ISOMERISM IN ORGANIC CHEMISTRY

This work studies and classifies the types of isomerism that is special to organic combinations. Such classification allows to make an idea, based on the form of isomerism, about to which class the connections belong.

Key words: organic connections, isomerism, metamerism, tautomerism, conformation, configuration

Հայտնի է, որ օրգանական միացությունները բազմաթիվ են և բազմազան: Երբեմն հարց է ծագում. ինչու՞ գոյություն ունեցող տարրերից միայն ածխածինն ունի այդպիսի յուրահատկություն և այդքան շատ միացություններ կարող է առաջացնել:

Այդ հարցի պատասխանը հեշտ է գտնել, հիմնվելով անօրգանական և օրգանական քիմիայում հայտնի փաստերի, երևույթների և օրինաչափությունների ուսումնասիրությունների և մեկնաբանությունների վրա:

Օրգանական միացությունների բազմաթիվ և բազմազան լինելու պատճառը օրգանական քիմիայում հայտնի հետևյալ երեք երևույթներն են՝ իզոմերիայի, հոմոլոգիայի և իզոլոգիայի:

Այս աշխատանքի նպատակն է մանրամասն քննարկելու իզոմերիայի երևույթը:

Դեռևս 1822թ. Ֆ. Վյոլլերի կողմից հայտնաբերվել են միացություններ, որոնք ունեն նույն բաղադրությունը, սակայն խիստ տարբերվում են իրենց ֆիզիկական և քիմիական հատկություններով:Որոշ ժամանակ անց Յա. Բերցելյուսը առաջարկեց իզոմերիա և իզոմերներ անվանումները, որոնցով բնութագրվում էին միևնույն բաղադրություն և մոլային զանգված, սակայն տարբեր հատկություններ ունենալու երևույթը և նյութերը:Բերցելյուսը, իսկ այնուհետև Յ. Դյուման բացատրում էին այդ երևույթը մոլեկուլում ատոմների տարբեր դասավորությամբ, այսինքն՝ իրար միացման տարբեր ձևերով:

Այդ երևույթը իր վերջնական բացատրությունը գտավ Ա. Մ. Բուտլերովի օրգանական միացությունների կառուցվածքային տեսության ձևավորումից հետո, որի հիման վրա Բուտլերովին հաջողվեց կանխատեսել, իսկ 1867թ.՝ սինթեզել բութանի երկրորդ իզոմերը՝ իզոբութանը:

$CH_3 - CH_2 - CH_2 - CH_3$ $CH_3 - CH(CH_3) - CH_3$

բութան եռ. ջերմ. 0.5℃ իզոբութան եռ. ջերմ. -12℃

Օրգանական քիմիայում ընդունված է չճյուղավորված շղթաներն անվանել նորմալ, իսկ ճյուղավորված շղթայով իզոմերները՝ իզոմիացություններ, վերջիններս եռում են ավելի ցածր ջերմաստիճանում և քիմիապես ավելի ակտիվ են:

Ա. Մ. Բուտլերովի կառուցվածքային տեսության հետագա զարգացումը հանգեցրեց իզոմերիայի նոր տեսակների հայտնաբերման:

Ներկայիս հայտնի օրգանական միացությունների իզոմերիայի տեսակները կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

1. Կառուցվածքային իզոմերիա: Իզոմերիայի այս տեսակը կարելի է բաժանել առանձին խմբերի.

- շղթայական իզոմերիա (պայմանավորված է ածխածնային շղթայի կառուցվածքով, այսինքն՝ ածխածնի ատոմների միացման կարգով)

$^{1}CH_3 - ^{2}CH_2 - ^{3}CH_2 - ^{4}CH_3$ $CH_3 - CH(CH_3) - CH_3$

բութան իզոբութան

2-մեթիլ պրոպան

- դիրքային իզոմերիա(պայմանավորված է կրկնակի կամ եռակի կապերի, հալոգեն, կարբոնիլ, հիդրօքսի և այլ բնութագրիչ խմբերի դիրքով)

$CH_3 - CH_2 - CH_2 - J$ $CH_3 - CH(J) - CH_3$

1-պրոպիլ յոդիդ 2-պրոպիլ յոդիդ կամ
իզոպրոպիլ յոդիդ

կամ

$^{4}CH_3 - ^{3}CH_2 - ^{2}C \equiv ^{1}CH$ $^{1}CH_3 - ^{2}C \equiv ^{3}C - ^{4}CH_3$

1-բութին 2-բութին

$^{1}CH_2 = ^{2}CH - ^{3}CH_2 - ^{4}CH_3$ $^{1}CH_3 - ^{2}CH = ^{3}CH - ^{4}CH_3$

1-բութեն 2-բութեն

$^{4}CH_3 - ^{3}CH_2 - ^{2}CH_2 - ^{1}CH_2 - OH$ $^{4}CH_3 - ^{3}CH_2 - ^{2}CH(OH) - ^{1}CH_3$

1-բութանոլ 2- բութանոլ

- Իզոմերիա, որը պայմանավորված է մեկից ավելի բնութագրիչ խմբերի դիրքով՝ նրանց դասավորությամբ ածխածնային շղթայում.



օրթո-օքսիֆենոլ մեթա-օքսիֆենոլ պարա-օքսիֆենոլ

1,2-դիօքսիբենզոլ 1,3-դիօքսիբենզոլ 1,4-դիօքսիբենզոլ

պիրոկատեխին ռեզորցին հիդրոքինոն

$CH_2(OH) - CH_2 - CH_2 - CH_2(OH)$ $CH_2(OH) - CH(OH) - CH_2 - CH_3$

1,4-բութանդիոլ 1,2 բութանդիոլ

• Մետամերիա, որը պայմանավորված է տեղակալիչների մեջ ածխածնի ատոմների թվով:Մետամերներ են՝



պրոպանաթթվի էթիլ էսթեր բութանաթթվի մեթիլ էսթեր

կամ

եռմեթիլամին մեթիլ էթիլամին

2. Շարժուն (դինամիկ) իզոմերիա՝ տաուտոմերիա (սա երկու կամ ամելի իզոմեր ձևերի միաժամանակյա համագոյակցությունն է)



պիրազոլոն – 5 երեք տաուտոմեր ձևերը

կամ



Ացետոքացախաթթվական էսթեր

3.Դասային իզոոմերիա:Պայմանավորված է նրանով, որ նյութերը, ունենալով միևնույն որակական և քանակական բաղադրությունը պատկանում են օրգանական միացությունների տարբեր դասերի և, բնականաբար, օժտված են տարբեր հատկություններով:Օրինակ՝ ացետիլենային և դիենային ածխաջրածինները դասային իզոմերներ են C_nH_{2n-2} ընդհանուր բանաձևով.

մեթիլացետիլեն ալլեն
(պրոպին) (պրոպադիեն)

կամ



դիմեթիլացետիլեն դիվինիլ
(2-բութին) (բութադիեն – 1,3)

Դասային իզոմերներ են նաև միատոմանի սպիրտները և եթերները:Այդ դասի միացությունների ընդհանուր բանաձևն է $C_nH_{2n+2}O$

էթիլ սպիրտ դիմեթիլ եթեր
(էթանոլ)

Էթիլենային ածխաջրածինները և ցիկլոալկանները ևս դասային իզոմերներ են:Դրանց ընդհանուր բանաձևն է C_nH_{2n}



պրոպեն ցիկլոպրոպան

$C_nH_{2n}O$ ընդհանուր բանաձև ունեն կարբոնաթթուները և դրանց ածանցյալ հանդիսացող էսթերները.

քացախաթթու մրջնաթթվի մեթիլ էսթեր

4. Տարածական իզոմերիա

Այն իզոմերիան, որը ծագում է տարածության մեջ ատոմենրի և ատոմական խմբերի տարբեր դասավորության հետևանքով, ստացել է տարածական իզոմերիա անունը:Տարածական իզոմերիան ունի երեք տարատեսակներ.

ա) պտտական իզոմերա

Դեռևս 1874թ. քիմիայում ընդունված էին Վանտ-Հոֆի և Լե-Բելի կողմից առաջ քաշված հետևյալ երկու վարկածները:

Առաջինը՝ չորս պարզ կապ ունեցող ածխածնի ատոմը ունի տարածական տետրաէդրական կառուցվածք, որի շնորհիվ այդպիսի ածխածնի մոտ չորս տարբեր տեղակալիչների առկայության դեպքում քիրալ՝ ոչ սմետրիկ (ասմետրիկ) և պայմանավորում է տարածական իզոմերիայի գոյության հնարավորությունը նման մոլեկուլներում:

Երկրորդը՝ ածխածին-ածխածին պարզ կապի շուրջը գոյություն ունի նրանց միացված ատոմների և ատոմական խմբերի ներքին ազատ պտտում, որի հետևանքով էլ, կախված նրանց տարածական դասավորությունից, իզոմերիան բացակայում է: Սակայն, հետագայում այդ վարկածը վերանայվեց և ցույց տրվեց, որ այդ պտտումը լրիվ ազատ լինել չի կարող, և որ ներքին պտտման ընթացքում տեղակալիչները իրար նկատմամբ ձեռք են բերում տարբեր,բայց որոշակի դասավորություն, որի հետևանքով մոլեկուլը հանդես է գալիս էներգիապես ավելի կամ պակաս շահավետ ձևերով՝ կոնֆորմացիաներով:

Այսպիսով կախված C – C պարզ կապի շուրջն առկա ներքին պտտումից և դրա հետևանքով մոլեկուլում ատոմների և ատոմական խմբերի տարածական դասավորությունից, ի հայտ են գալիս պտտական իզոմերներ՝ կոնֆորմերներ:Կոնֆորմացիանները, որոնցում տեղակալիչները գտնվում են միմյանց դիմաց (պտտման աստիճանը 0°C կամ 360°C), առավել մոտ դիրքում, օժտված են բարձր էներգիայով և կոչվում են <<ծածկված >>:

Կոնֆորմացիաները, որոնցում տեղակալիչները գտնվում են առավել մեծ հեռավորության վրա (պտտման անկյունը 180°), գտնվում են ցածր էներգետիկ մակարդակի վրա և կոչվում են <<արգելակված>>:

Էներգետիկ առումով միջին դիրք գրավող կոնֆորմացիաները կոչվում են շեղված, կամ գոշ-կոնֆորմացիաներ:Ստորև բերված են բութանի բոլոր կոնֆորմացիանրը:



ծածկված շեղված (գոշ) արգելակված

Կոնֆորմացիաները յուրահատուկ են նաև ցիկլիկ ածխաջրածիններին (5 և 6 անդամանի):Օրինակ ցիկլոհեքսանի համար հայտնի են մի շարք կոնֆորմերներ, որոնցից ավելի ցածր լարվածություն ունեն մի քանի ոչ հարթ, այսպես կոչված, նավակ, բազկաթոռ և զեթաձև կոնֆորմերները (կայուն են բազկաթոռ իզոմերները):



բազկաթոռ նավակ

բ) Երկրաչափական կամ ցիս-տրանս իզոմերիա

Այս իզոմերիան յուրահատուկ է էթիլենային ածխաջրածիններին և այլ օրգանական միացություններին , որոնք ածխածնի ատոմների միջև պարունակում են կրկնակի կապ, և այդ ածխածնի ատոմների շուրջը, ատոմները կամ ատոմական խմբերը π կապով անցնող հարթության նկատմամբ գրավում են տարբեր դիրքեր՝ ցիս և տրանս:



ցիս բութեն – 2



տրանսբութեն – 2



տրանս-1,3-դիմեթիլ ցիկլոբութան



ցիս-1,3-դիմեթիլ ցիկլոբութան

գ) Օպտիկական իզոմերիա

1874 թ. Լե-Բելը և Վանտ-Հոֆն իրարից անկախ առաջարկեցին վարկած ածխածնի ատոմի ոչ հարթ, տետրաէդրական կառուցվածքի վերաբերյալ, որից էլ հետևում էր, որ չորս տարբեր տեղակալիչների առկայության դեպքում հնարավոր էր երկու տարբեր տարածական կառուցվածքով իզոմերների գոյությունը:Ածխածնի այդպիսի ատոմը կոչվում է քիրալ կամ ասմետրիկ:





Այսպիսի տարածական կառուցվածք ունեցող միացություններն ունեն նույն ֆիզիկական և քիմիական հատկություններ և իրարից տարբերվում են օպտիկական, բյուրեղագրական և ֆիզիոլոգիական հատկություններով: Այդ իզոմերներից մեկը լույսի բևեռացման հարթությունը պտտում է աջ (այդ իզոմերը նշանակում են R տառով լատիներեն rectus բառից, որը նշանակում է աջ), իսկ մյուսը՝ ձախ (այդ իզոմերը նշանակում են S տառով՝ ելնելով լատիներեն sinister բառից, որը նշանակում է ձախ):Այդ նյութերը օպտիկապես ակտիվ նյութեր են, հայելային պատկերներ, օպտիկական իզոմերներ, հակապատկերներ կամ էնանտիոմերներ: Մեր երկու ձեռքերն օրինակ, էնանտիոմերներ են:Ընդունված է ասել, որ այդպիսի մոլեկուլները քիրալ են:Իսկ եթե մոլեկուլը նույնատիպ է իր հայելային պատկերին, ապա այն աքիրալ է:

Օրինակ կաթնաթթվի մոլեկուլը՝ պարունակում է ասմետրիկ ածխածնի մեկ ատոմ, որը քիրալ է:



Պատկերենք նրա երկու հակապատկերները հարթության մեջ Ֆիշերի պրոյեկցիոն բանաձևի օգնությամբ.





Կետգծի օգնությամբ ընդգծվում է, որ COOH և CH_3 խմբերը գտնվում են դիտողից ավելի հեռու, քան H և OH-ը:



Կաթնաթթվի ֆիշերային պրոէկցիոն բանաձևերն են.

Հայտնի են բազմաթիվ անօրգանական և օրգանական նյութեր, օրինակ՝ քվարցը, կալիումի քլորատը, կալիումի բրոմատը, որոնք չեն պարունակում C-ի ատոմ, սակայն սրանց բյուրեղները ցուցաբերում են օպտիկական ակտիվություն:Այսինքն քիրալ կամ ասմետրիկ ածխածնի առկայությունն անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է օպտիկապես ակտիվ լինելու համար:

Մոլեկուլը կարող է չպարունակել ածխածնի՝ քիրալ ատոմ, բայց լինել օպտիկապես ակտիվ, եթե այդ մոլեկուլը չունի սմետրիայի առանցք կամ հարթություն, որ հնարավոր լինի ունենալ հայելային պատկերներ, հակապատկերներ կամ օպտիկական իզոմերներ:Ուրեմն՝ օպտիկական ակտիվությամբ են օժտված բոլոր այն միացությունները, որոնք չունեն ասիմետրիկ կառուցվածք:

Գրականություն

1. Վ. Վ. Դովլաթյան, Թ. Օ. Չաքրյան – Օրգանական քիմիայի դասընթաց, Երևան 2011
2. Մ. Գ. Զալինյան – Օրգանական քիմիայի դասընթաց, Երևան 2007
3. В. П. Дядченко – Введение в стереохимию, Москва 1994
4. Н. В. Зык, Н. К. Белоглазкина, В. Н. Тиханушкина – Основы стереохимии, Москва 1998
5. И. М. Сеченова – Органическая химия, Москва 2003
6. В. Ф. Травень – Органическая химия т . 2, Москва 2004
7. Orgchem.ru/chem1/P2_12.htm
8. Chem21.info/info/1636280/

ՀՏԴ 582.7(479.243) *Կենսաբանություն*

Արփինե Յարամիշյան
Արցախի պետական համալսարան, 2-րդ կուրս
yaramishyan.arpine@mail.ru

ԱՐՑԱԽՈՒՄ ԱՃՈՂ ՎԱՐԴԱԶԳԻՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՈՐՈՇ ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱԽՏԱՀԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՄՆԿԱՅԻՆ

Հետազոտության նյութ հանդիսացող տեր-բույսերը համարվում են արժեքավոր տեսակներ, որոնց ախտահարման արդյունքում տեղի է ունենում բերքի մասնակի կորուստ և համային որակների փոփոխություն:

Մեր ուսումնասիրությունների վերլուծության ընթացքում հայտնաբերվել և իդենտիֆիկացվել են սալորենու 5, բալենու՝ 6 և տանձենու 5 տեսակի սնկային հիվանդություններ, որոնց ախտահարության հետևանքով վարակված բույսերի տերևները ժամանակից շուտ գունափոխվում և թափվում են, ցողունները ձևախախտվում, ծաղիկները այրվում, փտում և չեն փոշոտվում, իսկ սերմերը և պտուղները ճաքճքում ու դեֆորմացվում են կորցնելով համային հատկությունները, ապրանքային արժեքը և այլն:

Հոդվածում հատկանշվում է նաև պայքարի միջոցառումների կիրառումը, ինչպես նաև կայուն սորտերի ստացումը:

Բանալի բառեր- վարդազգիներ, դեղաբույսեր, սնկային հիվանդություն, տեր-բույս, մակաբույծ, ախտահարել, պայքարի մեթոդներ, սուբստրատ, սպորակրություն, ֆիզիոլոգիական պրոցեսներ, վեգետացիա:

Арпине Ярамищян
АрГУ, 2-ой курс
yaramishyan.arpine@mail.ru

ПОРАЖЕННОСТЬ ГРИБКОВЫМИ ЗАБОЛЕВАНИЯМИ НЕКОТОРЫХ ВИДОВ ПЛОДОВЫХ ДЕРЕВЬЕВ СЕМЕЙСТВА РОЗОВЫХ, РАСТУЩИХ В АРЦАХЕ

Поражение грибковыми болезнями растений, считающимся ценными видами, приводит к потере урожая и измененић вкусовых характеристик.

В результате анализа итогов наших исследований обнаружены и идентифицированы 5 грибковых заболеваний у сливы, 6 у вишни и 5 у груши. Листья пораженных растений преждевременно меняют окрас, стебли деформируются, цветы сгорают, гниют и не опыляются. Семена и плоды раскалываются и деформируются, теряют аромат и товарные качества.

В статье особо выделяются применение средств борьбы, а также получение устойчивых сортов,

Ключевые слова: розоцветные, лекарственные травы, грибковые заболевания, растения-хозяева, паразиты, загрязнение, методы борьбы, субстрате, спороносные, физиологических процессы, растительность rosaceae.

Arpine Yaramishyan
ASU, 2nd year
yaramishyan.arpine@mail.ru

THE FUNGAL DISEASES OF SOME SPECIES OF FRUIT TREES OF THE PINK FAMILY GROWING IN ARTSAKH

The host plants which are the main research materials are considered to be valuable species, and its infection causes loss of crops and change of gustatory characteristics.

The analysis of studies found and identified fungal diseases in 5 types of plums, 6 types of cherries and in 5 types of pears. Due to the contamination of the mentioned plants, the leaves change its color prematurely and fall, the stems are deformed, the flowers are burnt, do not rot and make much pollen. The seeds and fruits are rived and deformed by losing its flavor properties, commodity prices and so on.

The article features the application of control measures, as well as the receipt of resistant varieties

Key words: rosaceae, medical herbs, fungal diseases, host-plants, parasites, contamination, methods of struggle, substratum, sporiferous, physiological processes, vegetation

Վարդազգիների (Rosaceae) ընտանիքն ընդգրկում է արտաքին տեսքով բազմազան բույսերի 100-130 ցեղ և 2000-4000 տեսակ՝ ծառեր, թփեր, խոտաբույսեր, որոնք տարածված են նաև Արցախի տարբեր շրջաններում:

Մի շարք վարդազգիների պտուղներ հարուստ են ածխաջրերով, վիտամիններով, օրգանական թթուներով և մարդու համար օգտակար այլ նյութերով: Այդ պատճառով այս ընտանիքի շատ բույսեր դասվում են պտղատու և հատապտղային կարևորագույն դեղագործական նշանակության բույսերի շարքին (1):

Սնկային հիվանդություններով ախտահարվում են բույսերի արմատային համակարգը, ցողունները տերևները, ծաղիկները, պտուղները և սերմերը: Ինտենսիվ ախտահարվածության ժամանակ նվազում է բույսերի նպատակային նշանակությունը, քանի որ խախտվում է դրանց ֆիզիոլոգիական գործընթացները (2):

Մակաբույծ սնկերի ինտենսիվ զարգացումը հիվանդ բույսերի մոտ կարող է առաջացնել ծաղիկների այրվածքներ, փտում, տերևների և պտուղների գունափոխում, դեֆորմացում, մումիֆիկացում, իսկ ծառերի բների վրա՝ խեժածորում ու կնճռոտվածություն (8):

Հետազոտության նյութ հանդիսացող տեր-բույսերը համարվում են արժեքավոր տեսակներ, որոնց ախտահարման արդյունքում տեղի է ունենում բերքի մասնակի կորուստ և համային որակների փոփոխություն: Այդ իսկ պատճառով դրանց սնկային հիվանդությունների բազմազանության ուսումնասիրությունը և դրանց մասին տեղեկացվածությունը հրատապ խնդիր է:

Մեր ուսումնասիրությունների արդյունքների վերլուծության համար առաջնորդվել ենք մակրոսկոպիկ և միկրոսկոպիկ հետազոտման մեթոդներով, իսկ հայտնաբերված սնկերի տեսակները համապատասխանեցրել ենք ժամանակակից կարգաբանությանը (9-13):

Մակրոսկոպիկ մեթոդը դա հիվանդ բույսի արտաքին զննումն է: Որի դեպքում հաշվի է առնվում բույսի զարգացման փուլը, հիվանդության տարածվածությունը, հիվանդության տևողությունը, որը կախված է հիվանդության ընթացքի բնույթից:

Այս մեթոդը հնարավորություն է տալիս նախնական եզրակացության գալ հիվանդության տիպի մասին: Մակրոսկոպիկ հետազոտման մեթոդին հաջորդում է մանրադիտակային հետազոտման մեթոդը, որի դեպքում հիվանդ բույսի ախտահարված հյուսվածքները ուսումնասիրվում են մանրադիտակի օգնությամբ, հայտնաբերում անատոմիական փոփոխությունները, ապա՝ հիվանդության հարուցիչին (2):

Նմանատիպ հետազոտություններն Արցախում հիմք են դրվել ԼՂՀ կառավարության աջակցությամբ իրականացվող թեմաների շրջանակներում՝ Գ.Գ. Մարգարյանի ղեկավարությամբ (3-7): Ներկայացվող վերլուծությունը ևս գիտական թեմայի արդյունքների մասնակի ամփոփում է:

Աշխատանքում ներկայացնում ենք սննդային, դեղագործական նշանակություն ունեցող և լայնորեն կիրառվող վարդազգիների ընտանիքին պատկանող բուսատեսակների վրա հայտնաբերված սնկային հիվանդությունների բնութագրիչ առանձնահատկությունները:

Արցախի տարածքում սնկային հիվանդություններով ախտահարված վարդազգիների ընտանիքին պատկանող որոշ ծառատեսակների սնկային հիվանդությունների վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են ստորև:

1. Տեր-բույս՝ սալորենի, Prunus sp.:

1.1 Կարմիր բծավորություն կամ սնկային այրում – Polystigmina rubra Sacc. /պայուսակային փուլ Polystigma rubrum DC./: Ախտահարված տերևների վրա առաջանում են կարմիր կետեր, օջախներ, փայլուն, բարձիկանման, որոնք տերևների զույգ մակերեսներին կտրուկ տեսանելի են: Ստորին մակերեսին նկատվում է փոքրիկ կետավոր գծեր: Սպորներն անգույն են: Նկարագրվող սունկը լայնորեն տարածված է Արցախի ողջ տարածքում և զգալի վնաս է հասցնում բերքատվությանը: Հիվանդ ծառատեսակը ժամանակից շուտ տերևաթափում է:

1.2 **Կաթնագույն փայլ – Stereum purpureum Pers.**: Տերևների վրա դիտվում է սպիտակավուն, փայլուն, արծաթավուն, կաթնագույն ամբողջական տարածվածությամբ փառ: Հետագայում առաջանում են հիվանդ օջախներ՝ աստիճանաբար մահացող հյուսվածքներով: Տերևները դառնում են փխրուն և մահանում են: Բնափայտի գույնը ստանում է սովորականից մուգ երանգ: Նշված սնկի սնկամարմինը գտնվում է բնափայտում: Նրանք իրենցից ներկայացնում են բարակ թիթեղիկներ, շերտեր, որոնք խիտ

կպնում են կեղևին կամ տարածվում նրա մակերեսին: Վերին հատվածում նրանք մոխրագույն են, իսկ ստորին հատվածում՝ մանուշակագույն

1.3 «Գրպանիկներ հիվանդություն» - Exoascus pruni Sadeb.: Սունկը ախտահարում է հիմնականում պտուղները և առաջացնում ոչ նորմալ պտուղներ: Ախտահարված պտուղների փոխարեն ոչ թե պտուղ է ձևավորվում, այլ գրպանիկներ կամ տոպրակներ, որոնք զուրկ են կորիզից: Հուլիսի վերջին հիվանդ պտղի մակերեսն ամբողջությամբ ծածկվում է սպիտակամոխրագույն փառով, որն իրենից ներկայացնում է սպորակրություն: Սպորակրությունը կազմված է պայուսակների շերտերից, որից յուրաքանչյուրի մեջ գտնվում են գնդաձև կամ էլիպսոիդալ սպորները: Ախտահարված պտուղները պիտանի չեն սննդի կամ մշակման համար: Ծառերի վրա երկար չեն մնում և թափվում են: Սպորները ձևավորվում են հիվանդ պտուղների վրա և տարածվում են այգում, ընկնելով բնափայտի վնասված կեղևների վրա ձմեռում են և պահպանվում մինչև հաջորդ գարուն: Գարնանը ձմեռած սպորները առաջացնում են երկրորդնային սպորներ, որոնք համարվում են նոր հիվանդության վարակակիր: Ախտահարվում են ծաղիկները, որոնցից առաջանում են տձև գրպանիկանման պտուղներ: Սնկի զարգացմանը նպաստում է խոնավությունը և քամու առկայությունը:

1.4 Կլեյստերոսպորոզ-Clasterosporium carpophilum (Lev.) Aderh. /Mycosphaerellaceae/: Վարակված տերևների վրա առաջանում են 2-3սմ մեծության բաց դարչնագույն կլոր բծեր, որոնք հետագայում կենտրոնից սկսում են չորանալ և թափվել: Վերջինիս հետևանքով տերևները դառնում են ծակոտկեն: Տերևակոթունի վարակի դեպքում տերևները թափվում են: Վարակը տարածվում է նաև շիվերի վրա, որոնք հիմնականում չորանում են: Հիվանդ պտուղները ձևախախտվում են, պտղաթաղանթի վրա առաջանում են կարմրավուն բծեր, որոնք միաձուլվելով առաջացնում են դարչնագույն բարձիկներ և նվազեցնում պտղի ապրանքային ու համային հատկությունները : Սունկը ձմեռում է միցելիումի տեսքով ծառի ճյուղերի վրա, իսկ կոնիդիումների տեսքով՝ հողի տակ: Սնկի տարածումից խուսափելու համար առաջարկվում է վաղ գարնանը վառել ախտահարված ճյուղերը :

1.5 Պտղային փտում-Monila fructigena Pers.: Ախտահարված պտուղների վրա սպորակրության բարձիկները դասավորված են շրջակենտրոն: Սպորները շղթաներով են, կլորավուն կամ էլիպսոիդալ: Սունկը արագ տարածվում և զարգանում է մեղմ խոնավ կլիմայական պայմաններում՝ սկսած վաղ գարունից: Ընկալունակ են այն պտուղները, որոնք ունեն մեխանիկական վնասվածքներ: Սկզբում ախտահարված պտղի վրա առաջանում են գորշ կետեր կամ բծեր, որից հետո նրանք չափերով մեծանում են: Պտղամիսը փտում է և կորցնում համը: Հետագայում ախտահարված օջախի մակերեսին առաջանում են սպորակրություններ բարձիկների ձևով: Ախտահարված պտուղները հիմնականում պոկվում են ծառերից: Սունկը ձմեռում է մոմիֆիկացված պտուղների վրա:

Այսպիսով վարդազգիների ընտանիքին պատկանող սալորենու վրա իդենտիֆիկացվել է 5 տեսակի սնկային հիվանդություն, որոնք ախտահարելով նշված բուսատեսակը առաջացնում են տերևների և պտուղների գունափոխում, դեֆորմացում, մոմիֆիկացում և փտում:

2. Տեր-բույս՝ բալենի, Cerasus vulgaris Mill.

2.1 Բալենու ցերկոսպորոզ – Cercospora cerasella Sacc. Պայուսակավոր ստադիա՝ Mycosphaerella cerasella Aderh.**:** Ախտահարված տերևների վրա առաջանում են մուգ մանուշակագույն, հազվադեպ բաց գորշագույն, դեղին կամ մոխրագույն, սովորաբար մուգ մանուշակագույն եզրագծով երբեմն պոկվող և թափվող եզրագծերով: Ախտահարված կետերի օջախների վրա ցրված կամ կուտակված են փոքր, մուգ սպորակրություններ: Սպորները գորշավուն են կամ գունատ ձիթագույն, երկարավուն և գլանաձև, իլիկաձև ունի ձգված և երկար վերջավորություն, որոնք ուղիղ են կամ կորացած:

2.2 Գորշ բծավորություն – Phyllostica prunicola (Opiz.) Sacc.: Ախտահարված տերևների վրա առաջանում են գորշ կետեր՝ օջախներ, որոնք փոքր են, կլորավուն, առավել մուգ եզրագծով, որոնք պոկվում են: Ախտահարված օջախների զույգ մակերեսներին առաջանում են սև պիկնիդներ: Սպորները ձվաձև են կամ էլիպսոիդային, միաբջիջ են, անգույն կամ ձիթագույն:

2.3 Մոնիլային այրվածք – Monilia laxa Ehr. (M.cinerea Bonord.): Ախտահարված տերևները շատ արագ գորշանում և չորանում են, մնում են ճյուղերին կպած գորշացած և չորացած ծաղիկների հետ: Ախտահարված ճյուղերի վրա կարելի է տեսնել մոխրագույն կլորավուն փոքր սպորակույտեր: Սպորները տեղակայված են շղթաներով, կլորավուն են կամ ձվաձև, անգույն:

2.4 Exoascus minor Sadeb.: Ախտահարված տերևների ծայրերը մահանում են և տերևները ստանում են ալիքավոր տեսք, հատկապես տերևների ստորին մասերում ձևավորվում է խիտ դեղնասպիտակավուն ոսկանման փառ՝ սպորակրություն: Տերևները հոտավետ բույր են ստանում: Ախտահարված տերևները թափվում են ավելի վաղ, քան առողջ տերևները:

2.5 Մոխրագույն բորբոսանման փտում: Ծաղիկների վրա առաջանում է մոխրագույն թավշե փառ, սնկամարմինը և սպորակրությունն առաջանում են այդ փառում, որին հպվելուց փոշիանում են:

2.6 Դառը փտում - Colletotrichum fructigenum (Berk.) Vassil.: Ախտահարվում են պտուղները: Ախտահարումները գորշավուն են և մահացու, նրանց վրա ձևավորվում են գունատ վարդագույն սպորակրության բարձիկներ, որոնք տեղակայված են հատուկ արտահայտված կլորավուն կետերով: Սպորները երկարավուն են, իսկ հիմնական մասսայով բաց գունատ վարդագույն:

3. Տեր-բույս տանձենի

3.1.Տանձենու ժանգասունկ-Gymnosporangium fuscum R. Hedw.:Ախտահարվում են տերևները, որոնց վերին մակերեսին գոյանում է կլորավուն կամ կարմրավուն բարձիկանման կետ՝ փոքրիկ կետիկներով: Դրան զուգահեռ՝ տերևի ստորին մակերեսին առաջանում են կոնաձև երկարավուն գոյացություններ որոնք բացվում են: Այդ գոյացումներում ձևավորվում են սպորները, որոնք ցրվում են հետագայում դրանց բացվելուց:

Հայտնաբերվել է Pyrus sp. տեսակի վրա Ասկերանի շրջանի Ավետարանոց և Ակնաղբյուր գյուղերում, Մարտունու շրջանի Նինգի, Հաղորտի և Թաղավարդ գյուղերում, Մարտակերտի շրջանի Վանք և Քոլատակ գյուղերում :

Սունկը տարատեր է, ոչ լրիվ զարգացման ցիկլով: Սպերմագոնիումները և էցիումները ձևավորվում են Pyrus ցեղին պատկանող բույսերի վրա, տելիոսպորները՝ Juniperus sabinae տեսակի վրա:

Gymnosporangium fuscum սնկով վարակված տանձենու ծառեր Ղարաբաղի տարածքում հայտնաբերվել են 2014թ: Նույնիսկ հայտնաբերման ժամանակ վարակը մեծ տարածում չի ունեցել և ախտահարված ծառերի վրա հայտնաբերվել են վարակակիր 2-3 տերևներ: Ղարաբաղում տանձենու ժանգասունկը կարելի է ասել հազվադեպ հանդիպող տեսակ է:

3.2 Տանձենու սպիտակ բծավորություն Septoria piricola Desm.: Կետերը կամ բծերը սպիտակավուն են կամ բաց մոխրագույն, կլորավուն, մուգ եզրագծով, նրանց վրա կան սև կետավոր պիկնիդներ: Սպորները թելանման են , ձգված, անգույն և մի քանի միջնապատով :

3.3 Տանձենու մոնիլոզ կամ փթում- Monilia fructigena Pers.: Սպորակրությունը ցրված է, ախտահարված օջախներում առաջանում են մոխրագույն կլորավուն փոքր սպորային կուտակումներ : Սպորները շղթաներով են կլորավուն կամ էլիպսոիդանման և անգույն :

3.4 Տանձենու բորբոսանման փթում-Botrytis cinerea Pers.: Ախտահարվում են պտուղները: Փտումը թաց է, ախտահարված հյուսվածքը ծածկվում է մոխրագույն թավշե փառով, որն իրենից ներկայացնում է սնկի հարուցիչի կոնիդիալ սպորակրություն: Կոնիդիակիրները ծառի նման ճյուղավորված են: Սպորները միաբջիջ են, անգույն և օվալաձև, երբեմն ձևավորվում են սև սկլերոցիումներ: Մնկի զարգացմանը նպաստում է մեխանիկական վնասվածքները և թույլ կենսագործունեություն ունեցող պտուղները: Տաք և սառը ջերմաստիճանների անկանոն հերթափոխը համարվում է սնկի զարգացման հիմնական պատճառը: Վարակված և փտած պտուղների մակերեսին առաջանում է մոխրագույն փոշենման զանգված, որին հպվելուց փոշիանում է, սպորներն անգույն են թույլ փքվածությամբ, ձվաձև, միաբջիջ: Սունկը տարածված տեսակ է, հայտնաբերվել է ուսումնասիրության բոլոր տարիներին և գրեթե ամենուր:

3.5 Սև բորբոսանման փթում-Rhizopus nigricans Ehrb.: Ախտահարվում են պտուղները : Վարակված պտուղների մակերեսին առաջանում է սկզբում սպիտակավուն սնկամարմին, այնուհետև սև զանգված, որտեղ կարելի է տեսնել բազմաթիվ փոքրիկ գլխիկներ :

Այսպիսով հետազոտությունների վերլուծության ընթացքում հայտնաբերվել և իդենտիֆիկացվել են սալորենու 5, բալենու՝ 6 և տանձենու 5 տեսակի սնկային հիվանդություն, որոնք ախտահարելով նշված բուսատեսակները առաջացնում են տերևների գունափոխում, դեֆորմացում, խախտվում է կենսագործունեության պրոցեսները: Դիտվում է ծաղիկների այրվածքներ, փտում, նաև պտուղների ձևափոխում, գունափոխում, մումիֆիկացում և փտում, իսկ ծառերի բների վրա կարող է դիտվել կնճռոտվածություն:

Սնկային հիվանդությունների դեմ կիրառվում են պայքարի ագրոտեխնիկական և քիմիական տարբեր միջոցառումներ, ստեղծվում են նոր կայուն սորտեր: Պայքարի միջոցառումների նպատակային և արդյունավետ իրականացման համար պետք է անպայման հաշվի առնել բույսերի վեգետացիոն շրջանը: Որոշ վարդազգիներ պետք է սրսկվեն ծաղկման շրջանում, մյուսները՝ պարբերաբար, իսկ երբեմն նաև մինչև բույսերի ցանքը կամ տնկիների տեղադրումը անհրաժեշտ է քիմիական մշակման ենթարկել սուբստրատը: Այս հարցը դեռևս շարունակում է մնալ շատ սելեկցիոների, գյուղատնտեսների և սնկաբանների ուշադրության կենտրոնում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Կանաչ դեղատուփ
2. Աբրահամյան Ջ.Հ., Նանագյուլյան Ս.Գ., Ամիրյան Ա.Ա., ֆիտոպաթոլոգիա Երևան 2004, 58 էջ:
3. Մարգարյան Գ.Գ., Դեղձենու սնկային հիվանդությունները, ուղեցույց<<Դիզակ պլյուս>> հրատարակչություն 2017, 14 էջ:
4. Մարգարյան Գ.Գ , Կարտոֆիլի սնկային հիվանդությունները, ուղեցույց<<Դիզակ պլյուս>> հրատարակչություն 2017, 14 էջ:
5. Մարգարյան Գ.Գ., Խնձորենու սնկային հիվանդությունները, ուղեցույց<<Դիզակ պլյուս>> հրատարակչություն 2017, 16էջ:
6. Մարգարյան Գ.Գ., Լոլիկի սնկային հիվանդությունները, ուղեցույց<<Դիզակ պլյուս>> հրատարակչություն 2017, 14 էջ:
7. Մարգարյան Գ.Գ., Վարունգի, պղպեղի և սմբուկի սնկային հիվանդությունները , ուղեցույց<<Դիզակ պլյուս>> հրատարակչություն 2017, 18 էջ:
8. Նանագյուլյան Ս.Գ., Մարգարյան Գ.Գ., Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժանգասնկերը, Ստեփանակերտ 2015, 138 էջ:
9. Ашотян А. Лечебник. Справочник по фитотерапии. Ереван. - 2007. - 608 с.
10. Горленко В.М., /под. ред./ Фитопатология, Учебники и усевные пособия для виссич сельскохозяйственных усевных заведений, Колос, 1980 318с.
11. Лонгин Д.К. Болезни сельскохозяйственных растений Казахстана, Кайнар, 1965, 2007, 366с.
12. Пидопличко Н.М. Грибы паразиты культурных растений. Определитель. -Киев.: Наукова думка,1977. - Т.1. -295 с.
13. http://www.indexfungorum.org

ՀՏԴ 582.7(479.243) *Կենսաբանություն*

Լուսինե Հովհաննիսյան
Արցախի պետական համալսարան, մագիստրատուրա 1-ին կուրս
lusin1101@yandex.ru

ԱՐՑԱԽՈՒՄ ՏԱՐԱԾՎԱԾ ՈՐՈՇ ԴԵՂԱԲՈՒՅՍԵՐԻ ԱԽՏԱՀԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՄՆԿԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

Արցախի հարուստ կենսաբազմազանությունը բարենպաստ միջավայր է մակաբույծ սնկերի զարգացման համար, ինչի արդյունքում տեղի է ունենում տեր-բույսի կենսագործունեության պրոցեսների խախտում: Հանրապետության տարածքում աճող վայրի բույսերի բազմաթիվ տեսակներ օգտագործվում են սննդում և արտադրությունում, իսկ սնկային հիվանդություններով ախտահարված տեր-բույսերը կորցնում են իրենց նպատակային նշանակությունը:

Կատարված հետազոտությունների արդյունքում բացահայտվել և ներկայացվել են տեղեկություններ 4 ընտանիքի պատկանող մեկական բուսատեսակի դեղագործական, սննդային նշանակության և դրանց վրա մակաբուծող 8 սնկատեսակի վերաբերյալ:

Սնկային հիվանդությունների մասին տեղեկացվածությունը հնարավորություն կտա բացառել սննդում հիվանդ բույսերի օգտագործումը և խուսափել դրանց թունավորումներից:

***Բանալի բառեր**: Տեր-բույս, դեղաբույս, մակաբույծ, սունկ, հարուցիչ, սպորներ, կոնիդիումներ, ժանգասունկ, ալրացող:*

Лусине Ованнисян
АрГУ, магистратура 1-ый курс
lusin1101@yandex.ru

ИССЛЕДОВАНИЯ ГРИБКОВЫХ ЗАБОЛЕВАНИЙ НЕКОТОРЫХ ЛЕКАРСТВЕННЫХ РАСТЕНИЙ ВСТРЕЧАЮЩИХСЯ НА ТЕРРИТОРИИ АРЦАХА

Богатое биоразнообразие Арцаха благоприятная среда для развития грибковых паразитов, которые впоследствии приводят к нарушению процессов жизнедеятельности растений-хозяев. На территории нашей республики растут много диких растений, которые используются как продукт питания и в производственных целях, а растения которые заболели грибковыми заболеваниями теряют свое целевое значение.

В ходе исследований была выявлена и представлена информация о восьми видах грибковых паразитов, которые паразитировали на четырех растениях, которые принадлежвших четырем разным семействам, каждый со своим фармацевтическим и питательным значением.

Информированность о грибковых заболеваниях растений поможет нам предотвратить пищевые отравления которые вызывают больные растения.

***Ключевые слова**: растение хозяйка, лекарственные растения, паразиты, грибки, вирусы, спор, конидии, ржавчинные грибы и грибок.*

Lusine Hovhannisyan
ASU, Master's degree 1st year
lusin1101@yandex.ru

RESEARCH FUNGAL DISEASES OF SOME MEDICINAL PLANTS FOUND IN THE TERRITORY OF ARTSAKH

The rich biodiversity of Artsakh is a favorable environment for the development of fungal parasites, subsequently there are disruptions in the processes of vital activity of master plants. A lot of wild plants grow on the territory of our republic, they are used as a food product and for production purposes, and plants that have become infected with fungal diseases lose their target value.

During the research, there was identified and presented the information on eight species of fungal parasites that were parasitized on four plants that belonged to four different families and each has its own pharmaceutical and nutritional value.

Awareness of fungal diseases of plants will help us prevent food poisoning that cause sick plants.

Keywords: master plant, medicinal plants, parasites, fungi, viruses, spores, conidia, rust fungi and fungus.

Սնկերի ավելի քան 10.000 տեսակ հանդիսանում են բույսերի հիվանդությունների հարուցիչներ: Վարակի փոխանցման հիմնական աղբյուրներն են հողը, բուսական մնացորդները, ինչպես նաև միկոզներով ախտահարված սերմացուն և ցանքանյութը: Մակաբույծ սնկի հարուցիչը թափանցելով

բուսական օրգանիզմ՝ զարգանում է և հանգեցնում տեր-բույսի կենսական պրոցեսների խախտման, հիվանդ օջախի ձևախախտման, ինչպես նաև նպատակային նշանակության կորստի:

Սնկային հիվանդության զարգացման ընթացքում տեր-բույսի վեգետատիվ և գեներատիվ օրգանների վրա առաջանում են տարբեր գոյացություններ, որոնք իրենցից ներկայացնում են այս կամ այն սնկի սպորների կուտակումներ: Դրանք կարող են լինել տարբեր գույնի, կլորավուն, օվալաձև, գլանաձև կամ անկանոն տեսքի, փոշենման, բարձիկավոր, փառի տեսքով և այլն (1):

Տարեց տարի ընդլայնվում է վայրի աճող ուտելի բույսերի սպառման շուկան: Օգտագործում են բույսերի տերևները, ցողունները, ծաղիկները, սերմերը, պտուղները, արմատները, արմատների կեղևը և դրանցից պատրաստված թուրմերը: Վայրի աճող դեղագործական և սննդային նշանակության բույսերի ախտահարումը սնկային հիվանդություններով՝ կարող է հանգեցնել սննդային թունավորումների, դեղագործական հատկության նվազման և այլն:

Արցախի բնակչության զգալի մասն այսօր սննդում մեծ տեղ է տալիս վայրի աճող բուսատեսակներին, ուստի դրանց սնկային հիվանդությունների բազմազանության ուսումնասիրությունը և դրանց մասին տեղեկացվածությունը հրատապ խնդիր է:

Սնկային հիվանդությունները հայտնաբերվում և իդենտիֆիկացվում են մակրոսկոպիկ և միկրոսկոպիկ /մանրադիտակային/ հետազոտման մեթոդներով: Մակրոսկոպիկ կամ արտաքին զննման մեթոդը կիրառվում է, երբ բույսի վրա ի հայտ են գալիս հիվանդության առաջին ախտանշանները՝ սնկի սպորների առաջացում, հիվանդ օրգանների գունափոխում կամ ձևախախտում: Մակրոսկոպիկ հետազոտմանը հաջորդում է մանրադիտակային հետազոտությունը, որը զուգակցվում է որոշիչների կիրառմամբ (6,8,9):

Մեր հետազոտությունների արդյունքների վերլուծության համար առաջնորդվել ենք վերը նշված հետազոտման մեթոդներով, իսկ հայտնաբերված սնկերի տեսակները համապատասխանեցրել ենք ժամանակակից կարգաբանությանը (10):

Նմանատիպ հետազոտություններն Արցախում հիմք են դրվել ԼՂՀ կառավարության աջակցությամբ իրականացվող թեմանների շրջանակներում՝ Գ.Գ. Մարգարյանի ղեկավարությամբ (2-7): Մեր հետազոտությունների վերլուծությունը ևս գիտական թեմայի արդյունքների մասնակի ամփոփում է:

Աշխատանքում ներկայացնում ենք սննդային, դեղագործական նշանակություն ունեցող և լայնորեն կիրառվող որոշ բուսատեսակների վրա հայտնաբերված սնկային հիվանդությունների բնութագրիչ առանձնահատկությունները և բերվում են տեր-բույսի դեղագործական նշանակության վերաբերյալ ամփոփ տեղեկություն:

1.Ընտանիք՝ շրթնածաղկավորներ - Lamiaceae, տեր-բույս՝ Mentha officinale L.:

1.1 Puccinia menthae Pers /ժանգասունկ/- Pucciniaceae: Նկարագրվող սունկը /նկար 1/ զարգանում է անանուխի և շրթնածաղկավորների ընտանիքին պատկանող որոշ այլ բույսերի վրա: Սնկի զարգացման ընթացքում ձևավորվում են սպերմագոնիումներ, էցիդիումներ, ուրեդինիոսպորներ և տելիոսպորներ: Արցախում հաճախ է հանդիպում ուրեդինիո և տելիոսպորակրությունը: Ուրեդինիումները տերևների ստորին մակերեսներին են՝ դարչնագույն գունավորության, կլոր են կամ օվալաձև, միախառնվում են և փոշիանում: Տերևների ստորին հատվածում տեղակայված ուրեդինիումներին զուգահեռ տերևների վերին մակերեսին դիտվում է մանուշակագույն կետեր: Ուրեդինիոսպորները կլորավուն են կամ էլիպսոիդալ, բաց դարչնագույն և փշիկապատ թաղանթով: Տելիումները նման են ուրեդինիումներին, սակայն սև գունավորության են: Տելիոսպորները երկարավուն են, էլիպսոիդալ: Ջույգ բջիջները միանման են, գագաթում բթացած է, միջնորմում ձգվածքը բացակայում է:

Սնկի ինտենսիվ ախտահարության արդյունքում կտրուկ նվազում է բույսի դեղագործական նշանակությունը:

1.2 Golovinomyces cichoracearum (DC.) V.P. Heluta /ալրացող/- Erysiphaceae: Անանուխի ալրացողն ի հայտ է գալիս վեգետացիայի երկրորդ փուլում: Տեր-բույսի տերևների վերին մակերեսներին և ցողունների վրա առաջանում է սպիտակ ցանցանման փառ: Ախտահարված տերևները գորշանում են, դառնում փխրուն և չորանում: Ախտահարված օջախներում առաջացած ալրանման փառն իրենից ներկայացնում է սնկի կոնիդիալ սպորակրություն: Կոնիդիակիրները պարզ են և կարճ, անգույն, շղթաներով: Վեգետացիայի վերջում ախտահարված տերևների վրա ձևավորվում են բազմաթիվ գնդաձև կլեյստոտեցիումներ, որոնք ունեն պարզ և կարճ հավելումներ: Յուրաքանչյուր կլեյստոտեցիումի մեջ առկա է կարճ ոտիկով մինչև 10 պայուսակ: Յուրաքանչյուր պայուսակում

գտնվում է 2 էլիպսաձև ասկոսպոր: Հիվանդությունը զարգանում է խոնավ բնակլիմայական պայմանների առկայության դեպքում:

Անանուխի դեղագործական նշանակությունը. Ջրաթուրմը հիմնականում օգտագործում են ստամոքսաաղիքային տրակտի սպազմների, աղեփքանքի, լուծերի և փսխման, լեղաքարային հիվանդության, գլխացավերի, առատ դաշտանի և այլ դեպքերում: Անանուխի թուրմը կարելի է օգտագործել նաև բերանի խոռոչը և կոկորդը ողողելու, ինչպես նաև մաշկի քորի ժամանակ: Պատրաստում են նաև եփուկ և օգտագործում լոգանքների կամ հոգնայի նպատակով և նյարդային ընդհանուր անհանգիստ վիճակի դեպքում: Անանուխի տերևներով պատրաստված թեյն ունի հանգստացնող ազդեցություն:

2.Ընտանիք՝ թիթեռնածաղկավորներ - Papilionaceae, տեր-բույս՝ Trifolium pratense L.

2.1 Colletotrichum trifolii Bain /անտրակնոզ/ Glomerellaceae: Սունկը /նկար 2/ ԼՂՀ-ում հաճախ հանդիպող տեսակ է: Ախտահարվածությունն արտահայտվում է սև կամ գորշ կետերի ձևով, որոնք առաջանում են տերևների, ցողունների վրա: Ախտահարված օջախների կենտրոնում հյուսվածքը գունատվում է դառնում բաց գորշավուն կամ մոխրագույն: Ախտահարումների վրա առկա է կետավոր ծածկույթ, որտեղ կուտակված են բազմաթիվ շոշափուկներ: Սպորներն անգույն են, միաբջիջ, գլանաձև, ուղիղ, գույգ վերջավորություններում՝ կլորավուն:

2.2 Uromyces fallens (Arthur) Barthol. /ժանգասունկ/ Pucciniaceae: ԼՂՀ-ում հաճախ հանդիպող սունկ է: Սպերմագոնիումները, էցիդիումները, ուրեդինիումները և տելիոսպորները զարգանում են նշված տեր-բույսի վրա: ԼՂՀ-ում հայտնաբերվել է ուրեդինիո- և տելիոսպորները: Ուրեդինիումները տեղակայված են տերևների ստորին մակերեսներին, փոքր են, կլորավուն, ժանգադարչնագույն և փոշիացող: Ուրեդինիոսպորները էլիպսոիդալ են, դարչնագույն, թաղանթը՝ փոքր գորտնուկապատ: Տելիումները տերևների ստորին մակերեսներին են և ցողունների վրա, կլորավուն են, փքված, սև գունավորության: Տելիոսպորներն էլիպսաձև են, մուգ դարչնագույն, թաղանթը հարթ է, մանր գորտնուկավոր և ունեն անգույն ծծակ: Նշված սնկի վարակը նվազեցնելու կամ բացառելու նպատակով անհրաժեշտ է սերմերը ենթարկել քիմիական մշակման:

2.3 Uromyces triffolii-repentis /ժանգասունկ/ Pucciniaceae: Հաճախ հանդիպող տեսակ է: Սպերմագոնիումները, էցիդիումները, ուրեդինիումները և տելիումները զարգանում են նշված տեր-բույսի վրա: Սպերմագոնիումները և էցիդիումները ԼՂՀ-ում չեն հայտնաբերվել:

Ուրեդինիումները տեղակայված են տերևների ստորին մակերեսներին, մանր են, գորշ, կլորավուն, հավասարաչափ ցրված և փոշիացող: Ուրեդինիոսպորներն էլիպսոիդալ են, դեղնավուն և գորտնուկավոր թաղանթով: Տելիումները տելիոսպորներով նման են Uromyces fallens սնկի տելիումներին ու տելիոսպորներին: ԼՂՀ-ում հայտնաբերվել է Ասկերանի, Մարտունու և Մարտակերտի մի շարք համայնքներում:

2.4 Erysiphe cruciferarum Opiz ex L. Junell, /ալրացող/ Erysiphaceae: Նկարագրվող սունկը /նկար 3/ ԼՂՀ-ում լայնորեն տարածված է: Բույսերը պատվում են սպիտակավուն, ցանցավոր, պահպանվող փառով: Դրանց մեջ առկա է անգույն, միաբջիջ, էլիպսոիդալ սպորներ: Ամռան 2-րդ կեսին մուգ փառում ի հայտ են գալիս կետավոր պտղամարմիններ (կլեյստոկարպեր):

Երեքնուկի դեղագործական նշանակությունը. Երեքնուկի արմատների եփուկը ժողովրդական բժշկության մեջ օգտագործվում է ճողվածքների, կանացի օրգանների բորբոքումների դեպքում և որպես հակաուռուցքային միջոց: Վերգետնյա մասն օգտագործվում է որպես հականեխիչ, հակալնդախտային, ախորժաբեր, հակամալարիային, միզամուղ, գլխացավերը և գլխապտույտները վերացնող միջոց: Հյութն օգտագործվում է բրոնխիտների, քրոնիկական հազի, թունավորումների, սուր մրսածությունների ժամանակ և որպես հակաուռուցքային միջոց: Արտաքին ձևով (սպեղանի, տաք թրջոցներ) օգտագործվում է թարախակույտերի, այրվածքների, ռևմատիկ ցավերի ժամանակ՝ որպես վերքերը բուժող, փափկեցնող և ցավամոքիչ միջոց:

3.Ընտանիք՝ Խուլեղինջազգիներ - Lamiaceae, տեր-բույս՝ Salvia sp. S. officinale L.:

3.1 Puccinia nigrescens L.A. Kirchn /ժանգասունկ/ Pucciniaceae: Խոնավ բնակլիմայական պայմաններում հաճախ հանդիպող տեսակ է: Սպերմագոնիումները, էցիդիումները, ուրեդինիումները և տելիումները զարգանում են եղեսպակի վրա: ԼՂՀ-ում հայտնաբերվել են ուրեդինիո- և տելիոսպորներ: Ուրեդինիումները տեղակայված են տերևների ստորին մակերեսներին, բավականին խոշոր, կլորավուն, մուգ դարչնագույն ցրված բարձիկներ են, չեն միախառնվում, բայց փոշիանում են: Ուրեդինիոսպորները կլորավուն են, դարչնագույն, թաղանթը պատված է մազիկներով: Տելիոսպորները տերևների ստորին մակերեսներին են, նույնպես խոշոր են, կլորավուն, սև,

մակերեսային և չեն միախառնվում: Տելիոսպորները երկարավուն են, երկբջիջ: Միջնորմը թույլ ձգվածքով է, թաղանթը հարթ է: Սպորները դարչնագույն գունավորության են, ունեն փխրուն ոտիկ: Սունկը ԼՂՀ-ում տարածված տեսակ է: Նշված սնկի ինտենսիվ ախտահարման արդյունքում խանգարվում է բույսի ֆիզիոլոգիական գործընթացները և բույսը կորցնում է դեղագործական նշանակությունը:

Եղեսպակի դեղագործական նշանակությունը. Եղեսպակն ունի նյարդերը հանգստացնող, քնաբեր, հակասնկային, արյունարգել հատկություն: Չոր խոտի փոշու հոտը վերադարձնում է ուշագնաց մարդու գիտակցությունն ու կանխում է գլխապտույտը: Նվազեցնում է շաքարի պարունակությունն արյան մեջ:

4.Ընտանիք՝ նեխուրազգիներ - Apiaceae, տեր-բույս՝ Chaerophyllum temulum L.:

4.1 Puccinia retifera /ժանգասունկ/ Pucciniaceae: Սունկը զարգանում է շուշանբանջարի վրա /նկար 4/, որի վրա ձևավորվում են սնկի սպերմագոնիումները, էցիդիումները, ուրեդինիումները և տելիումները: Սպերմագոնիումները տեղակայված են էցիդիումների հետ, դեղնագորշագույն են, գնդաձև: Էցիդիումները տեղակայված են տերևների ստորին մակերեսներին խոշոր խմբերով, երբեմն ձևախախտված օջախների վրա: Էցիդիոսպորները կլորավուն են, մանր գորտնուկավոր թաղանթով: Ուրեդինիումները տեղակայված են տերևների ստորին մակերեսներին, կլորավուն են, մանր, բաց գորշագույն, խիտ ցրված են, չեն միախառնվում, փոշիացող են: Ուրեդինիոսպորներն էլիպսաձև են կամ կլորավուն, բաց գորշագույն են, հազվադեպ գորտնուկավոր թաղանթով: Տելիումները տեղակայված են տերևների ստորին մակերեսներին, կլորավուն են, խոշոր, խիտ ցրված, չեն միախառնվում, փոշիացող են: Տելիոսպորներն երկարավուն են, ձվաձև, նրա զույգ բջջակները միանման են, միջնորմը երբեմն թեք է: Ոտիկը գրեթե անգույն է և փխրուն: ԼՂՀ-ում նշված սունկը տարածված տեսակ է:

Շուշանբանջարի դեղագործական նշանակությունը. Շուշանբանջարը շատ օգտակար բույս է: Նրա հաստացած, գազարի նման սպիտակ պալարները ունեն հաճելի հոտ, տապակած՝ շագանակի համ: Շուշանբանջարը հիմնականում հավաքվում է պահածոյացման նպատակով և որպես այդպիսին ունի մեծ պահանջարկ:

Այսպիսով՝ ներկայացվեցին տեղեկություններ 4 ընտանիքի պատկանող մեկական բուսատեսակի դեղագործական, սննդային նշանակության և դրանց վրա մակաբուծող 8 սնկատեսակի վերաբերյալ:

Կատարված հետազոտությունները հնարավորություն տվեցին որոշակի պատկերացում կազմել սնկային հիվանդությունների արտաքին ախտանշանների դրսևորման մասին: Դրանց վերաբերյալ տեղեկացվածությունը հնարավորություն կտա բացառել սննդում հիվանդ բույսերի օգտագործումը և խուսափել դրանց թունավորումներից: Այդքանով հանդերձ հեշտությամբ կարելի է տարբերակել առողջ բույսը հիվանդից և իդենտիֆիկացնել մակաբուծող սունկը:

Նկ.1 տեր-բույս՝անանուխ
սունկ՝Puccinia menthae Pers/ժանգասունկ/

Նկ.2 տեր-բույս՝երեքնուկ
սունկ՝ Colletotrichum trifolii Bain /անտրակնոզ/

Նկ.3 տեր-բույս՝ ավելուկ
սունկ՝Erysiphe cruciferarum Opiz ex L. Junell /ալրացող/

Նկ.4 տեր-բույս՝շուշանբանջար
սունկ՝ Puccinia retifera /ժանգասունկ/

Օգտագործված գրականության ցանկ

1. Աբրահամյան Ջ.Հ., Նանագյուլյան Ս.Գ., Ամիրյան Ա.Ա., ֆիտոպաթոլոգիա Երևան 2004, 58 էջ:
2. Մարգարյան Գ.Գ., Նանագյուլյան Ս.Գ. ԼՂՀ ժանգասնկերի խմբավորումն ըստ տեր-բույսերի, Հայաստանի կենսաբանական հանդես, 2009, 4 էջ:
3. Մարգարյան Գ.Գ., Ժանգասնկերով ախտահարված բույսերի տարածվածությունը ԼՂՀ տարածքում, ԱրՊՀ գիտական տեղեկագիր, Ստեփանակերտ, 5 էջ
4. Մարգարյան Գ.Գ., ԼՂՀ-ում ժանգասնկերով ախտահարված տեր-բույսերի խմբավորումն ըստ տնտեսական նշանակության, Երևան 2011, 7 էջ:
5. Մարգարյան Գ.Գ., Բույսերի հիվանդություններ, Ստեփանակերտ 2014, 83 էջ:
6. Նանագյուլյան Ս.Գ., Մարգարյան Գ.Գ., Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժանգասնկերը, Ստեփանակերտ 2015, 138 էջ:
7. Մարգարյան Գ.Գ., Ք.Գ. Քոչարյան, Ս.Բ. Պետրոսյան, Աստղածաղկազգիների ընտանիքին պատկանող որոշ դեղաբույսերի ախտահարվածությունը սնկային հիվանդություններով, ԱրՊՀ Գիտական տեղեկա·իր, Ստեփանակերտ, 1/ 2015, 5 էջ:
8. Азбукина З.М. Ржавчинные грибы (Низшие растения, грибы и мохообразные). - Владивосток: Дальнаука. - 2005. - 615 с Ашотян А. Лечебник. Справочник по фитотерапии. Ереван. - 2007. - 608 с.
9. Горленко В.М. Болезни растений и внешняя среда /Очерки биологии и экологии паразитов растений/: фитопатология, микология, 2012г., - 124
10. http://www.indexfungorum.org

ՀՏԴ 595.7 Միջատաբանություն, Բուսաբանություն

Անուշ Ղարիբյան
Արցախի պետական համալսարան, 3-րդ կուրս
anush.garibyan.98@mail.ru

ԷԼԵԿՏՐԱՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՈՒՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ՎՐԱ

Տվյալ աշխատանքում քննարկվում են բջջային հեռախոսների շուրջ առաջացած էլեկտրամագնիսական դաշտի ազդեցությունը մեղուների (*Api smellifera*) վարքի վրա, կապը տվյալ տարածքում նրանց խտության նվազման հետ, ինչը պայմանավորված է ԷՄԴ-ի կենսաբանական ազդեցությամբ: Փորձ է արվել տարբեր մեթոդների միջոցով գրանցել և վերլուծել նշված փոփոխությունները, ինչպես նաև բացահայտել բոլոր հնարավոր ազդեցությունների արդյունքները և հետևանքները ապագայում:

Բանալի բառեր. մեղու, էլեկտրամագնիսական ալիքներ, բջջային հեռախոս, համացանց, ալեհավաքներ, փոշոտում, ծաղիկներ:

Ануш Гарибян
АрГУ, 3-ий курс
anush.garibyan.98@mail.ru

ИЗУЧЕНИЕ ВЛИЯНИЯ ЭЛЕКТРОМАГНИТНОГО ПОЛЯ НА НЕКОТОРЫЕ АСПЕКТЫ ПОВЕДЕНИЯ ПЧЕЛ

В данной статье обсуждаются вопросы, касающиеся влияния электромагнитного поля, создаваемого излучением мобильных телефонов и других источников, на некоторые аспекты поведения таких общественных насекомых, как пчелы, а также на понижение их плотности в данной местности. С помощью различных методов сделана попытка зарегистрировать и разъяснить данные изменения, а также выявить возможные последствия влияния данного физического фактора в будущем.

Ключевые слова: пчелы, электромагнитные волны, мобильный телефон, интернет, антенны, опыление, цветы.

Anush Gharibyan
ASU, 3rd year
anush.garibyan.98@mail.ru

BEHAVIOR INVESTIGATION OF THE ELECTROMAGNETIC FIELD ON THE SOME ASPECTS OF THE BEE'S

In this article are discussed the influence of the electromagnetic field around the mobile phones on the bee's behavior, the relationship with their reduction of density in that area, which is connected with the EMR's biological influence. By different methods was tried to make annotate and analyze the changes and also reveal all possible influence`s results and consequences in future.

Key words: bees, electromagnetic waves, mobile phone, Internet, antennas, pollinate, flowers.

Ներածություն

Ներկայիս աշխարհը, ցավոք սրտի, թե բարեբախտաբար, հիմնված է գերհզոր տեխնոլոգիաների և համակարգերի վրա: Այսօր ժամանակակից մարդը իր գործունեությունը չի պատկերացնում առանց համակարգիչների, բջջային հեռախոսների, համացանցի և նորագույն այլ գաջետների: Մենք իսկապես սրանց միջոցով կարող ենք արագ և արդյունավետ ստանալ այն արդյունքը, որին ձգտում ենք: Դրան զուգահեռ մենք վնասում և աղտոտում ենք այն միջավայրը, որտեղ ապրում ենք ու որից կախված ենք, և իհարկե, ինքներս մեզ ենք վնասում:

Ամեն օր մենք լողում ենք «էլեկտրամագնիսական ճառագայթման ծովում», որը ստեղծվում է շինություններում էլեկտրական հոսանքի գծերի, մեր առօրյա կյանքի անբաժանելի մասը կազմող տեխնիկական սարքերի՝ համակագիչների, բջջային հեռախոսների, դրանց ալեհավաքների, ռադիոկապերի կողմից: Այսօր մարդկությունը կանգնած է հսկայական առողջապահական ճգնաժամի մեծ սպառնալիքի առջև: Դրա պատճառներից մեկը բջջային հեռախոսների էլեկտրամագնիսական ճառագայթումն է: Պատահական չէ, որ այն անվանում են 21-րդ դարի «ծխացող զենք» [1]:

Գրական ակնարկ

Հեռախոսներից առավել վտանգավոր են բջջային կապի հաղորդիչ ալեհավաքները: Դրանց քանակով է պայմանավորված բջջային կապի որակը, որոնք տեղադրվում են ամենուր՝ քաղաքներում, գյուղերում, բաձր սարերի գագաթներին: Բջջային հեռախոսների անվտանգության մասին հարցերը ծագեցին վաղ՝ 1990-ականներին, երբ մի գործարար հայց ներկայացրեց, որ իր կնոջ՝ ուղեղի քաղցկեղից մահվան պատճառը հենց բջջային հեռախոսն էր: Գիտնականները պարզել են, որ բջջային հեռախոսի ճառագայթումը կարող է պատճառ հանդիսանալ կենդանի բջջում ԴՆԹ-ի վնասման, նրա վերականգման խաթարման և սրտի աշխատանքի խանգարմանը: Ուսումնասիրությունները վկայում են, որ բջջային հեռախոսի ճառագայթումը նպաստում է ուռուցքների առաջացմանը և պոտենցյալ պայմաններ է պարունակում աուտիզմի, ուշադրության պակասի, վարքային ու հոգեբանական խնդիրների ձևավորման համար [1]:

Իմ աշխատանքի միջոցով ես փորձել եմ ուսումնասիրել բջջային հեռախոսների ճառագայթման ազդեցությունը մի հետաքրքիր արարածների վրա, ինչպիսիք մեղուներն են: Մեղուներն այն բացառիկ միջատներից են, որոնց օգտակար դերն ու նշանակությունը բնության ու մարդու համար թերագնահատելն ուղղակի անհնար է: Ըստ գիտնականների՝ մեղուների հայրենիքը Հարավային Ասիան է, որտեղից էլ կատարվել է նրանց միգրացիան մյուս մայրցամաքներ: Մեր երկրում մշակվում են հարյուրավոր գյուղատնտեսական կուլտուրաներ, որոնք խաչաձև փոշոտման կարիք ունեն: Մեղուների կողմից ծաղիկների, գյուղատնտեսական մշակաբույսերի փոշոտումը էական ու կարևոր այն դերն է, միայն որի համար անհրաժեշտ է մեծ ուշադրությամբ վերաբերվել սրանց: Մեղուները հասարակական միջատներ են, նրանք ապրում են խմբերով՝ ընտանիքներով: Մարդիկ վաղուց են գնահատել մեղրի արժեքավոր հատկությունները և ընտելացրել մեղուներին: Սրանք գրեթե ընտանի են և ապրում են մեղվանոցներում՝ փեթակների մեջ: Մեղվաընտանիքը կենսաբանական ամբողջություն է, որտեղ բոլոր անհատները փոխկապված են և ընդունակ չեն ինքնուրույն գոյության: Բաղկացածէ 1 մայրմեղվից, 60-80 հզ. Աշխատավոր մեղուներից և մի քանի հարյուր (երբեմն՝հազար) բոռերից: Աշխատավոր մեղուն ապրում է 26–40 օր: Մեղուները շատ զգայուն են, նրանք ունեն բավականին բարդ վարք, ունեն ժամանակի զգացողություն: Սրանց բնորոշ է նաև մի հետաքրքիր երևույթ՝ մեղուների պարը, որը կապված է սննդի հետ: Լաբորատոր հետազոտությունները ցույց են տվել, որ մեղուները տարբեր վայրերից նեկտար հավաքելու համար, ընտրում են շրջապտույտի ու վերադարձի ամենակարճ, ամենաարդյունավետ ուղին:

Հաստատված է, որ մեղուները օգտագործում են երկրի մագնիսական դաշտը ինֆորմացիայի փոխանցման համակարգում: Ա. Լ. Չիժեվսկին 1926 թվականին հաստատեց էլեկտրաստատիկ դաշտի ազդեցությունը մեղուների վրա, իսկ ավելի ուշ Գ. Ա. Կաժննիկովը ցույց տվեց, որ օդի ուժեղ իոնացումը որոշակի ազդեցություն ունի բոռերի և մայր մեղուների սեռական օրգանների վրա: Շվեցարիայում երկար դիտարկումների արդյունքում բացահայտվել է, որ մագնիսական դաշտերի գունավոր սպեկտրերը դժվարեցնում են մեղուների կողմնորոշումը տարածության մեջ: Բանն այն է, որ մեղուների տեսողությունը կատարվում է հատուկ բջիջներով, որոնք պարունակում են կրիպտոքրոմ սպիտակուցը, և որով նրանք ընկալում են կապույտ և մանուշակագույն գույները, իսկ մագնիսական դաշտը արտացոլվում է հենց այդ սխեմայով [2]:

Գիտնականների վերջին տարիների ուսումնասիրությունները մեղուների քանակի նվազման վերաբերյալ հաստատեցին այն փաստը, որ դա ոչ այնքան շատ հիվանդությունների, քիմիկատների ազդեցությամբ էպայմանավորված, այլ էլեկտրամագնիսական ճառագայթմամբ, բջջային հեռախոսների կապերով: Վերջին տարիներին աշխարհի տարբեր երկրներում, հատկապես Միացյալ Նահանգներում, Եվրոպայում, սկսած 2007 թվականից, գրանցվել է մեղուների քանակի զգալի կրճատում: Իսկ օրինակ Ռուսաստանում վերջին տարիներին ուսումնասիրությունները ցույց են տվել, որ բացի մեղուներից, զգալի նվազել է նաև տառականների քանակը: Բազմաթիվ դեպքեր են գրանցվել, երբ մեղուները թողնում են իրենց փեթակները, սնունդը և այլևս չեն վերադառնում: Այդ պատճառով ԱՄՆ-ում տուժել է մեղվաբուծության 80%-ը, Եվրոպական տարբեր երկրներում 40-60%-ը:

2010 թվականին Հնդկաստանում կենդանիների վրա բջջային հեռախոսների ճառագայթման ազդեցության ուսումնասիրության համար ստեղծվեց խումբ՝ Մումբայի Բնության պահպանության տնօրեն Ա. Ռամխանի գլխավորությամբ: Խմբին միացան 13 մասնագետներ, այդ թվում՝ վայրի Բնության Ինստիտուտը, Տեխնոլոգիական համալսարանը, շրջապատող միջավայրի և անտառային տնտեսությունների նախարարությունը, հեռահաղորդակցման նախարարությունը և այլ կազմակերպություններ:

Բջջային հեռախոսների օգտագործողների քանակով, որը հասնում է մինչև 800 միլիոնի, Հնդկաստանը զիջում է միայն Չինաստանին: Բայց հեռախոսների ալեհավաքների տեղադրման ժամանակ նրանք չէին ենթադրում, որ էլեկտրամագնիսական ճառագայթումը վտանգավոր է կենդանիների համար: Պենջաբի համալսարանի մասնագետները կատարեցին մի քանի փորձեր, օրինակ՝ մոտ 5-30 րոպե էլեկտրամագնիսական ճառագայթման ենթարկեցին ճնճղուկի 50 ձու, որի հետևանքով բոլորի սաղմերը վնասվեցին: Նրանք փորձարկեցին նաև մեղուներին: Մեղուների փեթակում 10 րոպե տեղադրեցին հեռախոսներ, որոնք աշխատում էին 900 մեգահերց հաճախությամբ: Արդյունքում աշխատավոր մեղուները հեռացան փեթակից, իսկ ճառագայթահարված մայր մեղվի ձվադրությունը նվազեց 3.5 անգամ, համեմատած սովորական պայմանների մայր մեղվի հետ [3]:

Ուսումնասիրման օբյեկտներն ու մեթոդները

Մեր աշխատանքում ուսումնասիրման օբյեկտներ են հանդիսացել Արցախի տարացքում տարածված մեղուները (*Apis mellifera*) և նրանց ընտանիքները: Ուսումնասիրվել է նրանց վարքի ասպեկտները և զգայունությունը, այնպիսի ֆիզիկական գործոնի նկատմամբ, ինչպիսին է բջջային հեռախոսների, ալեհավաքների կողմից արտազատվող էլեկտրամագնիսական ճառագայթումը:

Փորձերի ժամանակ օգտագործել ենք բջջային հեռախոսներ (և սմարտֆոններ)՝ «Motorola Droid», «Nokia Lumia 900», «Lenovo A7000», «Apple iPhone», «Samsung Galaxy ACE3 GT-S7272» և զանգերի ժամանակ ճառագայթվող էլեկտրամագնիսական դաշտի ազդեցության տակ ուսումնասիրել ենք մեղուների պահվածքը:

Մյուս մեթոդը հարցման մեթոդն էր, որի ժամանակ և մեղվաբուծությամբ զբաղվողների, և Մարտունու շրջանի Գիշի գյուղի բնակիչների հարցման միջոցով պարզում էինք ճառագայթման հնարավոր ազդեցությունը մեղուների վրա, նրանց թվի կրճատման կապը հեռախոսների, ալեհավաքների կողմից ճառագայթման հետ:

Դիտման մեթոդի օգնությամբ մենք ուսումնասիրել ենք մեղուների քանակը ծաղկած ծառերի, բույսերի վրա և նրանց պահվածքը:

Արդյունքները և նրանց քննարկումը

Մեղուների վրա էլեկտրամագնիսական ճառագայթումների ազդեցության ուսումնասիրությունները, ինչպես արդեն նշվել է, կատարել ենք Մարտունու շրջանի Գիշի գյուղում: Գյուղը շրջապատված է անտառով և հարուստ է բուսականությամբ: Նրանց գերակշռող մասը կազմում են բազմատեսակ ծաղկող բույսերը, որոնք իրենց գույնով և հոտով գրավում են մեղուներին: Այդ պատճառով գյուղը և նրա շրջապատող բնությունը հարմար միջավայր է մեղուների բազմացման համար, և օգտվելով դրանից, բնակիչները, արդեն երկար տարիներ զբաղվում են մեղվաբուծությամբ: Գյուղում վերջին 6-7 տարիներին հասանելի է համացանցը: Դրա համար գյուղի տարբեր վայրերում տեղադրված է 3 ալեհավաք: Գյուղը բավականին մեծ է, բնակչության թիվը հասնում է մոտ 1500 և ավելիի, և արդեն շատ վաղուց բոլորին էլ հասանելի է բջջային հեռախոսները: Վերը նշված հանգամանքները նպաստավոր պայմաններ են հանդիսացել ուսումնասիրությունները կատարելու համար: Այստեղ հանդիպել եմ մի քանի մեղվաբույծների և հարցման միջոցով պարզել որոշ փաստեր՝ վերջին տարիներին մեղվաբուծության խնդիրների հետ կապված: Հարցման ժամանակ գյուղացիների մեծամասնությունը հաստատեցին, որ վերջին տարիներին, իսկապես, մեղուների քանակը բավականին նվազել է: Օրինակ՝ գյուղի ներքնի հատվածում համացանցի ալեհավաքի տեղադրումից հետո մեկ տարում ոչնչացել են մոտակա տներում պահվող մեղվաընտանիքները: Երկար տարիներ մեղվաբուծությամբ զբաղվող գյուղի բնակիչ մի կին, նունպես հաստատեց այդ փաստը: Նշեցին նաև, որ շատ հաճախ մեղուները հեռանում են իրենց փեթակներից և այլևս չեն վերադառնում: Մեկ այլ մեղվաբույծ մի հետաքրքիր փաստ նշեց, որ մեղվափեթակների դիմացի մասով ցանց էր կապված և ժամանակի ընթացքում նրանք նկատեցին, որ երբ մեղուները բեռնավորված նեկտարով գալիս են, հաճախ բախվում են ցանցին և ընկնում, այն դեպքում, երբ ցանցը բավականին մեծ էր:

Բերված փաստերը հաստատում են, որ իսկապես մեղուների վրա վատ ազդեցություն են թողնում բջջային հեռախոսների, գյուղում տեղադրված համացանցի 3 ալեհավաքների շուրջ առաջացած էլեկտրամագնիսական դաշտը:

Ավելի համոզվելու համար մի շարք փորձեր կատարեցինք: Թաքնվել եմ ամբողջովին ծաղկած, բավականին մեծ ծառի մոտ անշարժ վիճակում, որպեսզի մեղուներին ավելորդ անհանգստություն չպատճառեմ: Նախօրոք ինձ հետվերցրել եմ վերը նշված մակնիշների բջջային հեռախոսներից մեկը, որը նախօրոք դրել եմ անձայն ռեժիմում: Այնուհետև, նախօրոք պայմանավորվածության համաձայն, որոշակի հեռավորության վրա գտնվող իմ ընկերը զանգում է իմ հեռախոսի վրա: Մի քանի վարկյանից

նկատեցի, որ մեղուները սկսում են անհանգստանալ, մի ծաղկից մյուսը գնալ, իսկ մի քանի րոպեից ծառի այն կողմում, որտեղ կանգնած էի, այլևս մեղուներ չկային: Այդպես կրկնեցի բազմաթիվ անգամ, տարբեր ծառերի մոտ, գյուղի տարբեր հատվածներում, մեղուների տարբեր ընտանիքների հետ և ամեն անգամ ստանում էի միևնույն արդյունքը:

SAR (Specifik Absorption Rate)՝ դա էլեկտրոմագնիսական էներգիայի կլանման գործակիցն է, որը բնորոշում է բջջային հեռախոսի ազդեցությունը մարդու մարմնի հյուսվածքների վրա: SAR-ի չափման միավորն է հանդիսանում Վտ/կգ-ը: Որքան փոքր է այդ ցուցանիշը, այնքան տվյալ ապարատի ազդեցությունը քիչ վտանգ է կրում:

Ինչպես արդեն նշվել է, իմ փորձերում ես օգտագործել եմ տարբեր մակնիշների բջջային հեռախոսներ (և սմարտֆոններ), որոնք օժտված են կենսաբանական ազդման տարբեր միավորներով [4]:

Դեռ 1996 թվականին կապի ամերիկյան Դաշնային գործակալությունը (FCC) հրատարակել է SAR-ի պարամետրը՝ մարմնի կողմից բջջային հեռախոսների ԷՄԾ կլանման ֆիքսող անվտանգ մակարդակը: Ստորև բերվում են մեր կողմից օգտագործված բջջային հեռախոսների այդ չափանիշը, ըստ թուլացման (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1: Տարածքը լքած մեղուների քանակությունը կախված բջջային հեռախոսի մակնիշից և օգտագործման ժամանակահատվածից (վրկ):

№	Բջջային հեռախոսի մակնիշ	SAR	Վրկ	
			50%	100%
1.	Motorola Droid	1.56	≈35	≈100
2.	Nokia Lumia 900	1.49	≈40	≈115
3.	Lenovo A7000	1.46	≈46	≈134
4.	Apple iPhone	0.971	≈78	≈179
5.	Samsung Galaxy ACE3 GT-S7272	0.47	≈90	≈230



Դիագրամա 1: Տվյալ ժամանակահատվածում տարածքը լքած մեղուների քանակությունը կախված ազդած բջջային հեռախոսի մակնիշից՝ 1 - Motorola Droid, 2 - Nokia Lumia 900, 3 - Lenovo A7000, 4 - Apple iPhone, 5 - Samsung Galaxy ACE3 GT-S7272:

Ընդհանուր առմամբ գյուղացիները փաստեցին, որ վերջին 5-6 տարիներին նվազել է բերքատվությունը: Օրինակ՝ ծառերը բավականին առատ ծաղկում են, բայց որպես պտուղ ձևավորվում է չնչին մասը: Դա այն դեպքում, երբ եղանակային պայմանները նորմալ են՝ մեր կլիմային բնորոշ:

Կարող ենք ենթադրել, որ դա պայմանավորված է մեղուների քանակի նվազմամբ, և դրան զուգահեռ ծաղիկների փոշոտման կրճատմամբ:

Եզրակացություններ

Այդ կարգի փոփոխությունները, որոնք գրանցվել են մեր կողմից, առնվազն վկայում են այն մասին, որ էլեկտրամագնիսական դաշտը ազդում է մեղվի նյարդային համակարգի վրա: Այդպիսի էֆեկտ կարող է ստացվել այն դեպքում, երբ ԷՄԴ-ն ուղիղ ազդեցություն է թողնում նյարդային համակարգի, նեյրոնների մեմբրանների վրա, գրանցվում են նյարդային իմպուլսների փոխանցման շեղումներ կենսաէլեկտրաքիմիական ռետրանսլատորների (սինափսների) մակարդակով, և ինչպես հետևանք՝ միջատների կողմնորոշման խախտում տարածության մեջ: Հնարավոր են նաև խախտումներ նյարդային բջիջներում տեղի ունեցող սինթեզների գործընթացներում, որոնք նկատվել են նախկինում (Յու.Ա.Խոլոդով, Ռ.Ի.Կրուտիկով):

Օգտագործված գրականություն

1. http://nout.am/cloud/2201/
2. Влияние магнитного поля на жизнедеятельность пчел (http://armic.am/modules.php?name=News&file=view&news_id=318)
3. ЖУРНАЛ «ПЧЕЛОВОДСТВО», Негативное воздействие электромагнитного излучения на птиц и пчел, (http://beejournal.ru/v-mire/823-negativnoe-vozdejstvie-elektromagnitnogo-izlucheniya-na-ptits-i-pchel)
4. http://mypong.ru/upload/press/PR10.html
5. Безопасность жизнедеятельности /Белов С.В., Ильницкая А.В., Козьяков А.Ф. и др. - М.: Высшая школа, 2007. — 616 с.
6. Закон РК «О радиационной безопасности» от 23 апреля 1998 г.
7. Закон РК «Об использовании атомной энергии» от 14 апреля 1997 г.
8. Нормы радиационной безопасности (НРБ-99). Гигиенические нормативы. -Алматы,1999, Утверждены постановлением Главного государственного санитарного врача Республики Казахстан от 9.12.1999 г. № 10 Введены в действие с 01.01.2000 г.
9. https://dev.by/ckeditor_assets/pictures/5734/content_1_new.jpg
10. Василенко О.И. - "Радиационная экология" – М.: Медицина, 2004. – 216с С.П. Ярмоленко, А.А. Вайнсон. Радиобиология человека и животных" -Москва: Высшая школа,2004-544с.

ՀՏԴ 82-3 Գրականություն

Թինա Այվազյան
Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան,
մագիստրատուրա 1-ին կուրս
ayvazyan.tina@mail.ru

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐՈՒՄ ՉԸՆԴԳՐԿՎԱԾ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՓՈՐՁ

Հոդվածում անդրադարձել ենք Հ. Սարիբեկյանի ժողովածուներում չընդգրկված պատմվածքներին, փորձել ենք մեկնաբանել սրանցում առկա խորհրդանշանները, հեղինակային այլաասացությունը, վեր հանել ենթատեքստային ասելիքը՝մեկնելով այն հեղինակի ստեղծագործության տիրույթում, բացահայտել հեղինակային նպատակադրումը և նրա իրացման կերպը՝այս ճանապարհով հասնելով գաղափարի բացահայտմանը:

Բանալի բառեր՝ *խորհրդանիշ, ենթատեքստ, այլաասացություն, մեկնաբանություն, պատմվածք, Սարիբեկյան*

Тина Айвазян
ВГУ, магистратура 1-ый курс
ayvazyan.tina@mail.ru

ПОПЫТКА КОМЕНТИРОВАНИЯ ПОВЕСТЕЙ, НЕ ВХОДЯЩИХ В СБОРНИКИ ГРАЧЬИ САРИБЕКЯАНА

В статье обратились к повестям Г. Сарибекяна, не входящих в какой-либо цборник, попытались комментировать имеющиеся в них символы, авторское иносказание, выявить подтекстный смысл, толковая в пространстве творчества автора, определить авторскую цель и способ ее реализации, таким оброзом добываясь выявлению идеи.

Ключевые слова*: подтекст, символ, иносказание, комментирование, повесть, Сарибекян.*

Tina Ayvazyan
VSU, Master's degree 1st year
ayvazyan.tina@mail.ru

THE COMMENTING EXPERIMENT OF THE STORIES NOT INCLUDING IN THE COLLECTIONS OF HRACHYA SARIBEKYAN

In the article we have focused on the stories wich are not included in any collection of Hrachya Saribekyan, we have tried to comment the symbols,the author allegory, to reveal the implication tale, directing it into the creative field of the author, to reveal the author singleness of purpose and its realizing way: in this way to a achieve the revealing of this idea.Cay words: implication, symbol, allegory, comment, story, Saribekyan.

Keywords: *Implication, symbol, allegory, comment, story, Saribekyan*

Հր. Սարիբեկյանի ստեղծագործությունը մի կողմից հեղինակի կենսագրության, նրա հոգևոր կյանքի մի մասն է (ընդ որում, այդ հոգևոր կյանքն էլ՝ տվյալ պատմական ժամանակաշրջանի), մյուս կողմից այն իրականության գեղարվեստական վերարտադրությունն է՝ ամենատարբեր միջոցներով կերտված: Ընդհանրապես, ամբողջ ստեղծագործությունն է դիտվում հեղինակի մտածողության իրացում, որտեղ իմաստային և ոճական կողմերը ընկալվում են իբրև ամբողջի բաղկացուցիչ մասեր, որոնց հիմքը հեղինակի մտածողությունն է: Հասկանալու համար այդ մտածողությունը պիտի ուշադրություն դարձնենք դրա այն կողմերին, որոնք իրենց բացահայտում են ստեղծագործությունը մեկնաբանելիս (ապորիաների առկայություն, երազների, գենետիկ հիշողության նկատմամբ ընդգծված վերաբերմունք): Հր. Սարիբեկյանի 2000-ական թվականներին տպագրված պատմվածքները՝«Կույրինը կույրին», «Ապորիա», «Հաղորդություն», «Հավերժական շարժիչ», «Եկեղեցին», «Այնտեղ՝աչքերդ երբ բացես», սերտորեն կապված են նրա կենսագրության հետ, այդ կենսագրության գեղարվեստականացման փորձեր են, երբեմն էլ նպաստում են, որ ընթերցողի համար պարզ դառնա հեղինակի ապրած

ժամանակը: Այս պատմվածքները նաև գեղարվեստականորեն ընդհանրացված են, հեղինակի կողմից որոշակի հիմունքներով կառուցված: Սրանցում առկա են մի շարք իրողություններ՝ երազներ, խորհրդանշաններ, ենթատեքստ, որոնք երբեմն դժվարըմբռնելի են դարձնում մտահղացման ընկալումը և բացահայտումը: Երազները վաղուց են գործածվում գեղարվեստական գրականության մեջ խորհրդավոր մթնոլորտ ստեղծելու, ստեղծագործության գաղափարական բովանդակության, կերպարի հոգեբանության բացահայտման համար: Ենթատեքստը որևէ տեքստի ներքին, փակ իմաստ է: Սրա հիմքում ընկած է մարդու՝ իրականությունը զուգահեռաբար ընկալելու յուրահատկությունը կամ երկու տարբեր իրականությունները միաժամանակ ընկալելը: Ենթատեքստ ունեցող ստեղծագործության սյուժեն երկպլանային է: Առաջին՝ երևացող պլանում, ցույց են տրվում այն գործողությունները, որոնք միանգամից և առանց որոշակի լարման ընկալվում են ընթերցողի կողմից: Միայն թե տեքստում կա չերևացող երկրորդ պլան, որ զուգահեռվում է առաջինի հետ. այն շեշտում, երբեմն վերափոխում է առաջին պլանի բովանդակությունը: Խորհրդանշանները նպաստում են այլասացությանը, բուն ասելիքի «սքողմանը»: Մեկնաբանման համար բանալիներ են վերնագրերը, կերպարները, բնաբանները, ընձայականները, դետալները և այլն:

Երազները: Նշված պատմվածքներում տեղ գտած «գեղարվեստական երազներից» յուրաքանչյուրը ունի իր կառուցվածքը, առանձնահատկությունները և կատարում է յուրահատուկ ընդգծված գործառույթ տվյալ ստեղծագործության մեջ: Գրականագիտության մեջ գեղարվեստական երազը հստակ մեկնաբանություն չի ստացել: Այն երբեմն հնար է դիտվում, երբեմն՝ միջոց կամ կաղապար, իսկ երբեմն էլ թեմա: Սրա պատճառն այն է, որ երազը տարբեր գրողների կամ նույն գրողի առանձին ստեղծագործությունների մեջ տարբեր գործառույթ է կատարում: Յու. Լոտմանը երազը համարում է «տեքստ տեքստի մեջ»[1]: Երազը ստեղծագործության գեղարվեստական իրականության մեջ կարող է դիտվել ինքնուրույն միավոր: Այն կարող է տվյալ ստեղծագործության պայմանական իրականության հետ փոխներգործել կամ հակադրվել նրան, մտնել տվյալ գեղարվեստական պայմանականության մեջ և դառնալ նրա բաղկացուցիչ մասը: Գեղարվեստական երազի համար հիմնականում առանձնացվում են հետևյալ չափանիշները՝

ա) սահմաններից մեկի պարտադիր առկայություն, երբ ստեղծագործության մեջ նշվում է, որ կերպարը տեղափոխվում է երազի իրականություն,

բ) ստեղծագործության պայմանական իրականության տարածաժամանակային հարաբերություններից տարբերվող տարածաժամանակային հարաբերություն,

գ) սուբյեկտիվ կառուցվածք, այսինքն՝ ուշադրություն է դարձվում, թե երազն ում է պատկանում՝ հեղինակ- պատմողին, թե կերպարներից մեկին,

դ) կարևորվում են երազների թեմաները՝ մահվան թեմա, հիվանդության թեմա, այլ աշխարհներում հայտնվելու թեմա և այլն:

Երազները սովորաբար երեք տիպի են լինում: Երազի տիպը որոշելու համար կարևոր է հասկանալ ստեղծագործության պայմանական իրականության մեջ նրա սահմանը: Եթե երազը հստակորեն սահմանազատված է, այսինքն՝ հեղինակն ընդգծում է սկիզբն ու վերջը՝կիրառելով «երազ տեսա», «երազիս մեջ», «արթնացա», «աչքերս բացի» և նմանատիպ արտահայտություններ կամ ինչ-որ դետալով փորձում է հասկացնել, ապա երազը սյուժեի առկայության և պայմանական իրականությունից տարբերվող տարածաժամանակային հարաբերության շնորհիվ պայմանական իրականության ներսում ձևավորում է մի այլ իրականություն՝երազի իրականությունը, որը կարող է հակադրվել տվյալ պայմանական իրականությանը, ներգործել նրա վրա, այլաբանորեն կրկնել այն, մեկնաբանել, կանխատեսել հետագա իրադարձությունները և այլն: Սահմաններից մեկի բացակայության դեպքում երազը անցումային շրջանում է, այսինքն՝ այն մի կողմից փակ է, հասկացվում է, որ երազ է՝տարբերվելով պայմանական իրականությունից, մյուս կողմից այն ձգտում է պայմանական իրականության հետ համադրման, նրանում տեղի ունեցող իրադարձությունների հետ զուգահեռման: Երազների երրորդ տիպը պայմանական իրականության հետ վերջնականապես ձուլված երազներն են, և երբեմն դժվար է հասկանալ՝որն է իրականությունը, որը՝երազը, երբեմն էլ դրանք պարզապես միահյուսված են՝պահպանելով իրենց հարաբերական ինքնուրույնությունը: Կարևորվում է նաև ծավալը: Երազները կարող են արտահայտվել մեկ նախադասությամբ, մի ամբողջ հատվածով կամ ընդգրկել ամբողջ ստեղծագործությունը: Առանձնացվում է նաև երազ երազի մեջ կամ կրկնակի երազ, որտեղ երազ տեսնողը արթնանում է ոչ թե իրականության մեջ, այլ մի ուրիշ երազում կամ

[1] Лотман Ю., Сон-семиотическое окно,yanko.lib.ru.

մեկնաբանում է տեսած երազը երկրորդում: Ընդհանրապես բոլոր երազները պայմանական իրականության հետ միշտ պահպանում են կապը՝ իրականացնելով ամենատարբեր գործառույթներ՝կերպարի հոգեբանության բացահայտում, ստեղծագործության գաղափարական բովանդակության բացահայտում և այլն: Գեղարվեստական երազները բաժանվում են նաև իմաստային խմբերի՝երազ-հայտնություն, երազ-թափառում, երազ-կանխազգացում, երազ-նախազգուշացում, անցյալի տպավորությունները արդիականացնող երազ, գենետիկ հիշողության արտահայտության երազ, երազ-ցանկություն, սիրո երազ և այլն: Սրանց ուսումնասիրման համար սովորաբար առանձնացվում է երեք մեթոդ՝հոգեբանական, գրականագիտական, մետաֆիզիկական (Բեգենոմ Ա.): Հոգեբանականի դեպքում ստեղծագործությունը օգտագործվում է իբրև հոգեբանական ախտանիշների ամբողջություն ներկայացնող փաստաթուղթ: Այստեղ գեղարվեստական ստեղծագործությունը հոգեբանության դիրքերից է ուսումնասիրվում: Գրականագիտականի դեպքում երազն ուսումնասիրվում է իբրև գեղարվեստական ստեղծագործության կառուցվածքի առանձին բաղադրիչ, որը ունի որոշակի գործառույթ, իսկ մետաֆիզիկականը քննում է, թե ինչ իրականություն է ստեղծվում ստեղծագործության մեջ, և երազների ուսումնասիրությունը կատարում է գեղարվեստական իրականության ուսումնասիրման հետ զուգահեռ: Սարիբեկյանի ստեղծագործության մեջ երազներն էական դեր ունեն, և դա բացատրվում է առաջին հերթին գրողի՝այդ երազների նկատմամբ ունեցած վերաբերմունքով: Հարցազրույցներում հաճախակի է հեղինակն անդրադառնում այս հարցին. «Ես երազների օրագիր եմ պահում, բայց հենց փորձում եմ երազներս վերածել պատմվածքների, կենսագրությունից զուրկ բաներ են ստացվում: Իսկական գրականության մեջ կենցաղայինն ու անսովորը, առօրյան ու երազը մի հուն են մտնում»[1]: Իրականի ու երազի նմանատիպ համադրություն է առկա նրա պատմվածքներում: Իրականությունն ու երազը այնպես են պատկերվում, ասես օբյեկտիվության նույն աստիճանին են: «Եկեղեցին» պատմվածքի գեղարվեստական իրականության մեջ առանձնացնում ենք երեք երազ: Այս երազները երկրորդ տիպի մեջ են մտնում: Մի սահմանը փակ է, մյուսը՝ բաց: Երազի և պայմանական իրականության փոխհարաբերությունը ապահովող հետաքրքիր եղանակ է կիրառված առաջին և երրորդ երազներում: Դրանք իրար շարունակում են՝ ինչ-որ մի կետում միահյուսվելով, այնուհետև առաջինում շարունակվում է երազը՝հասնելով իր տրամաբանական ավարտին, որը, սակայն, չի ընդգծվում, այլ սրան անմիջապես հաջորդում է իրականությունը: Երրորդում, թեպետ սահմանները հստակ են, բայց այն չենք կարող պայմանական իրականության ներսում առկա իրականություն դիտել, որովհետև երազին, անորոշ մի կետում, միախռնվել է պայմանական իրականությունը, իսկ սահմանների առկայությունը թույլ չի տալիս, որ այն մտնի երրորդ տիպի մեջ: Առաջին երկուսը կերպարներից մեկի՝ քրոջ երազն է, իսկ երրորդը՝գլխավոր կերպարինը, որ նույնանում է հեղինակ պատմողի հետ: Դրանք են՝

ա)«Գիշերվա մի պահի քույրս վախեցած արթնացավ. **երազ էր տեսել**: Պատմեց: Երազն իրականության թաքնված կողմի պես էր. ներկայացրեց ինձ**: Իբրև թե հիվանդանոցը, որտեղ մահացել էր մայրս, ծննդատուն էր եղել իրականում:** Բժիշկը մորս հղիություն էր կանխորոշել: Երբեք մորս այդքան կենսուրախ չէինք տեսել: Նա փայփայում էր պտուղը: Խանդի պես մի բան էր շարժվում իմ ներսում, երբ մտածում էի, որ երեխան կարող է տղա լինել. բոլորից թաքուն ես չէի ուզում, որ երեխան ծնվի, չէի ուզում, որ մորս սերը կիսի ինձ հետ: Ես օտարություն էի զգում չծնված մանկան հանդեպ: Մի քանի ամիս անց մայրս սոսկալի ցավեր ունեցավ, արյունահոսեց: Նրան տագնապեցնում էր այն, որ հղիությունն իր արտաքինի վրա չի երևում: Բժիշկները քաղցկեղը շփոթել էին հղիության հետ. մայրս քաղցկեղի ուռուցք էր փայփայել: Քրոջս երազը նրա թերահավատությունն էր մահվան հանդեպ, բժիշկների մոլությանը հավատալու նրա անսահման ցանկությունը, բայց նաև՝անզորությունը իրականության մղձավանջի դեմ: Ըստ այդ մղձավանջի՝ մայրս մահացել էր երկունքից հետո: Մանուկն ատամնաշարով էր ծնվել ու արյունոտ. արյունը չէր մաքրվել նրա մարմնից. երեխան մարդ չէր, այլ քաղցկեղի ուռուցք»[2]:

բ) «Մորս մահից հետո կարճ ժամանակ անց հայրս ամուսնացավ: **Քույրս երազում տեսել էր**, որ հորս երկրորդ կինը բոլորից թաքուն՝հաճույքից աղավաղված դեմքով կուրծք էր տալիս այդ երեխային: Հորս երկրորդ կինը մահացավ կրծքի քաղցկեղից»[3]:

[1] Այսօր վաղվա օրն է. Հրաչյա Սարիբեկյանի գաղտնապատկերները ենթագիտակցության խորշերից, gradaran.mskh.am.
[2] Եկեղեցին, https://elenasargsyan.wordpress.com.
[3] Նույն տեղում:

գ)«Այդ գիշեր, դիակի կողքին քնած, **ես էլ էի երազ տեսել**. ասես դագաղի առջև քնած՝ տեսել էի, թե իրականում որտեղ էինք մենք. թափառում էինք գերեզմանոցում: Անձրև էր մաղում: Կանգնած էինք հորս եկեղեցու առջև: Հորս գերեզմանի վրա պապս շիրմաքարի բարձրության եկեղեցի է կանգնեցրել: Այդ եկեղեցին նման է ամենաիսկական եկեղեցու: Առաջին անգամ երազիս մեջ էր, որ այդ նմանությունն ու փոքրությունը սարսափ ազդեցին: Երազում սարսափելի է զգալ, որ Աստված գոյություն չունի, իսկ փոքրիկ եկեղեցին, նման լինելով իսկական եկեղեցու, ժխտում էր Աստծո գոյությունը: Փոքրիկ եկեղեցին ծաղրում էր մեռյալների աշխարհը, ես կռահեցի, որ մեռյալները մահից չեն կարող այնքան փոքրացած լինել, որ կարողանան մտնել այդ եկեղեցին: Ինձ զարմացրեց այն, որ հայրս մահից անհետացել էր և հիմա հորս փնտրած, թե Աստծուն... Մթության մեջ ես կարդացի շիրմաքարի վրա գրվածը և առաջին անգամ կռահեցի Հարություն անվան թաքնված իմաստը: Մենք կանգնած էինք փոքրիկ, մեր ծնկի բարձրության եկեղեցու առջև և չգիտեինք անձրևից պատսպարվելու համար ինչպես մտնել ներս՝այդ փոքրիկ եկեղեին: Քույրս խաչակնքեց, բայց փոքր, շատ փոքր, իր վզնոցի խաչի չափով՝բաժակի մեջ աղ լցնելու պես. ես հասկացա, այդպես խաչակնքելը փոքրիկ եկեղեցի մտնելու միակ բանալին է**...Դռան չխկոցը չթողեց, որ երազս մինչև վերջ հիշեմ »**[1]:

Երազի իրադարձությունների ոչ իրական լինելը ընդգծելու համար հեղինակը առաջին երազում կիրառում է նաև իբրև թե վերաբերականը: Փաստորեն, հեղինակը սահմաններից մեկը ընդգծում է դրանց երազ լինելը հստակեցնելու համար, մյուսը բաց է թողնում՝ իրականության հետ ունեցած փոխադարձ կապը ապահովելով, քանի որ այն ինչ կատարվում էր երազում, դրևորվում էր նաև կյանքում: Ինչ վերաբերում է նշված պատմվածքների երազների՝պայմանական իրականության հետ ունեցած տարածաժամանակային հարաբերությանը, ապա հեղինակը դրանք ներկայացնում է իբրև մի գիշերվա ընթացքում կատարված. «Գիշերվա մի պահի քույրս վախեցած արթնացավ. երազ էր տեսել: Պատմեց», բայց, ըստ դեպքերի տրամաբանական զարգացման, առաջին երազը պիտի հաջորդեր մոր մահվանը, իսկ երկրորդը նախորդեր հոր երկրորդ կնոջ մահվանը: Ըստ էության՝ միայն երրորդ երազն է պատկանում այդ գիշերվան: Երազների մեջ առկա բուն տարածաժամանակային հարաբերությունը դարձյալ տարբերվում է պայմանական իրականության տարածաժամանակային հարաբերությունից: Առաջին երազում տարածությունը՝հիվանդանոցը, տարբերվում է պայմանական իրականության տարածությունից, իսկ ժամանակը ուղղվում է դեպի անցյալ (անցյալի իրողություններն են երազի նյութ դառնում): Երկրորդ երազում տարածությունը անորոշ է, իսկ ժամանակը ուղղվում է դեպի ներկա (ներկայի գործողություններն են երազի նյութ դառնում), իսկ երրորդ երազում տարածությունը դարձյալ այլ է՝գերեզմանոցը, ժամանակը ուղղված է ապագային (ապագայում կատարվելիքն է երազի նյութ դառնում): Պայմանական իրականության նկատմամբ երեք երազներն էլ դեռ նոր կատարելի են, կանխագուշակում են հետագա իրադարձությունները: Իմաստային տեսանկյունից առաջին երազը անցյալի դեպքերն արդիականացնող երազ է, երկրորդը՝ կանխատեսող, իսկ երրորդը՝ երազ-թափառում է:

«Կույրինը կույրին» պատմվածքի երազը առաջին տիպին է պատկանում: Այն սյուժետային է, ունի հստակ ընդգծված սահմաններ: Սա մի առանձին իրականություն է պայմանական իրականության մեջ, որն ունի երկրորդ տարածք՝անապատը, և ժամանակի դեպի անցյալ (1915թ) ուղղվածություն: Այն հետևյալն է՝

«Այդ օրը ես այնքան էի արևի տակ հողից մոլախոտ հանել, այնքան էի քայլել, այնքան էի մեռյալների անուններ կարդացել, այնքան էի վազել, այնքան էի հոգնել, որ գիշերն աչքերս ակամա փակվեցին, ու երազում ինձ թվաց, որ ծերունու կուրությամբ եմ քնել և **տեսա երազ**, որ նրա մոր հիշողությունն ու հոր հոգեվարքը պիտի լիներ: Տեսա անապատը, կույր ծերունու մորն ու նրա ծարավ ամուսնուն, տեսա ոնց են թուրքերը կնոջ աչքի առաջ ամուսնուն ողջ-ողջ թաղում շիկացած ավազների մեջ: Թաղեցին ուղղահայաց, երկնքի մեջտեղում հոգեվարքի անշարժացած արևի տակ թողնելով միայն նրա մարմնի վերին մասը՝կիսանդրին, և նրան ջուր խմեցրին, տեսա՝ոնց են թաղած մարդու բերանը՝անապատում լքելուց առաջ ջուր լցնում ու նա ոնց է անհագորեն կլանում ջուրը: Տեսա՝ ոնց են կնոջը քշում հեռացնում ամուսնուց, կնոջը թվում է, որ ամուսինը ժպտում է իրեն կամ ամուսինն իրոք ժպտում էր անընդհատ դեպի իրեն շրջվող կնոջը, գուցե ամուսնուն էր թվում որ կինն անընդհատ շրջվում է, տեսա՝ինչպես է ամուսինը արևից ու քամու բերած ավազից փակել աչքերը՝գուցե աչքերը փակելով անդարձորեն կանխորոշելով որդու կուրությունը և կռահեցի, որ ջուր է խմել մահից մի քիչ երկար մտածելու ժամանակ կորզելու համար, որովհետև վստահ չի, որ մեռնելուց հետո հնարավոր կլինի

[1] Նույն տեղում:

կենտրոնանալ որևէ մտքի վրա: Ջուր խմեց մի քիչ երկար մտածելու համար, որ իր կինը որովայնում բոլորից թաքցնում է իր դիմազծերի նմանությունը: Հասցրի նկատել, որ անապատի ավազներում թաղված, նա ուզում է բացել աչքերը, բայց արևի կուրացնող լույսն ու ավազե տաք քամին թույլ չեն տալիս: **Այդ առավոտ իմ աչքերն էլ չէին բացվում** »[1]:

«Հաղորդություն» պատմվածքում ևս երազը հստակորեն ընդգծված է պայմանական իրականության մեջ: Հեղինակը ընդգծում է և երազի իրականություն տեղափոխվելը, և պայմանական իրականություն վերադառնալը. «Ամառային շոգ կեսօր էր: Ընկուզենու ստվերում նստած գիրք էի կարդում, երբ հանկարծ ինձ նույն ընկուզենու տակ քնած տեսա», «Հանկարծ արթնացա այդ կուրացումից, որ թվում էր անդարձ»: Գոծողությունները զարգանում են մի կարևոր իրադարձության՝ երազի շուրջ, այսինքն՝երազն է պատմվածքի կենտրոնական իրադարձությունը: Տարածաժամանակային հարաբերության տեսանկյունից այն ունի հետևյալ առանձնահատկությունները՝տարածությունը նույն պայմանական իրականության տարածությունն է՝փոքր-ինչ փոփոխված.«Ամեն ինչ խորհրդավոր կերպով նույնն էր՝ներառյալ ստվերների ձևերը: Ձիերին, որ հանկարծ հայտնվեցին մեր բակում… », իսկ ժամանակը անցյալից է մոտենում ներկային, քանի որ ոչ թե կերպարն է տեղափոխվում, այլ անցյալից են մտնում նրա ներկան: Այն հետևյալն է՝

«Ամառային շոգ կեսօր էր: Ընկուզենու ստվերում նստած գիրք էի կարդում, երբ հանկարծ ինձ նույն **ընկուզենու տակ քնած տեսա:** Ամեն ինչ խորհրդավոր կերպով նույնն էր՝ներառյալ ստվերների ձևերը: Ձիերին, որ հանկարծ հայտնվեցին մեր բակում, արտաքին աշխարհից իմ լսողություն թափանցած փնչոցի պատկերային հավելում կհամարեի գիտակցությանս կողմից, եթե չլիներ արյան վառ հետքը սպիտակ շապիկիս վրա: Ձիերը փնչացնում էին՝մահվան շնչառություն ու սարսափ սփռելով իրենց շուրջ. մեռած ձիեր էին: Դափ-դատարկ ակնախոռոչներն էին վկայում այդ մասին: Ձիավորներն արնագույն գլխաշորերով էին: Լուռ էին: Իսկույն հասկացա, որ նրանց թրերի անսովոր փայլը սրության նշան է: Փորձեցի ելնել տեղիցս, չստացվեց: Տատիս ձայն տալ, լեզուս կապ էր ընկել, գոնե ճչալ, բայց ճիչս դուրս չեկավ. կարծես փորձում էի ճչալ, որ արթնանամ, բայց արթնանալու ելք չկար, իսկ նրանց թրերի սրությունն անխուսափելի էր: Գլխատվում ու ցավ չէի զգում: Ի՞նչ եմ անելու առանց գլխի, ի՞նչ եմ անելու առանց գլխի: Ինձ համակել էր կարճ ժամանակում արյունաքամ լինելու ամբողջ սարսափը: Ես խարխափում էի խավարի մեջ: Մի անհուն ու անսփոփ հուսալքություն, անելանելություն էր պատել ինձ: Մնում էր միայն անկողնուն հասնել՝ արյունաքամ լինելու համար… **Հանկարծ արթնացա** այդ կուրացումից, որ թվում էր անդարձ»[2]:

Իմաստային տեսանկյունից «Կույրկը կույրին» և «Հաղորդություն» պատմվածքների երազները գենետիկ հիշողության արտահայտության երազներ են: Անդրադառնալով իր երազներին՝ Հր. Սարիբեկյանը նշում է. «Մարդը ոչ միայն ձեռքբերովի, այլև գենետիկ հիշողության կրողն է: Պատահական չէ, որ ես ասում եմ, թե իմ երազներն իմ ներշնչանքի աղբյուրն են: Փաստորեն, երազների մեջ ես գնում եմ դեպի իմ գենետիկ հիշողությունը: Նույն մարդը հազար տարի առաջ նույն երազն է տեսել, ինչ ես եմ այսօր տեսնում…»[3]: Գենետիկ հիշողությունը ամբողջ տոհմի յուրահատուկ փորձն է տոհմի առանձին անհատի մոտ և փոխանցվում է ժառանգաբար: Հոգեբան Ա. Շուտցենբերգերը առաջ է քաշում տրանսգեներացիոն շղթայի տեսությունը: Սրա հիմքում այն է, որ մեր նախնիների համար կարևոր իրադարձությունները, տարեթվերը, ամսաթվերը պահվում են մեր հիշողության մեջ և կարող են կրկնվել: Եթե տվյալ տոհմից ինչ-որ մեկի մոտ որևէ ամսաթվի կամ կյանքի մի ժամանակաշրջանում դժբախտություն է տեղի ունեցել, ապա հնարավոր է, որ այն փոխանցվի ժառանգաբար և այդ տոհմի մի այլ ներկայացուցչի կողմից վերապրվի նույն օրը կամ կյանքի նույն ժամանակաշրջանում: Հատկապես այն դեպքում, երբ այդ իրողությունը տոհմում գաղտնի է պահվել: Ընդ որում՝ երբեմն անվան նույնությունն է դառնում ճակատագրի փոխանցման միջոց: «Եկեղեցին» պատմվածքում կա այդ իրողության արձագանքը.«Այն, ինչ քողարկված կերպով մորս մահը կապում է հորս երկրորդ կնոջ մահվանը, հորս անունն է՝Հարություն: Պապիս Հարություն հայրը երկու կին է ունեցել. երկուսն էլ մահացել են քաղցկեղից: Գուցե հորս հասնելու համար հորս պապի ճակատագրի միակ ուղին անունն է եղել: Հորս իր պապի անունով ու ճակատագրով են կնքել…»[4]: «Հաղորդություն» պատմվածքում

[1] Կույրինը կույրին, gisher.ru.

[2] Հաղորդություն, www.grakantert.am.

[3] Այսօր վաղվա օրն է. Հրաչյա Սարիբեկյանի գաղտնապատկերները ենթագիտակցության խորշերից, gradaran.mskh.am.

[4] Եկեղեցին, https://elenasargsyan.wordpress.com.

տոհմական գաղտնիքի մասին տեղեկություն է տրվում այն մարդուն, ով գլխատվածի անվանակիցն էր: Երազի նշանակությունը պարզվում է, երբ բացահայտվում է պապի գաղտնիքը.«Մահից առաջ պապս պատմեց նրա մահվան սոսկալի մանրամասները, մի պահ փշաքաղվեցի. այդ մահը պատահել էր ինձ հետ...Պապս էլ չէր տեսել նրան, իր ծնվելուց երեք տարի առաջ՝ հազար ինը հարյուր տասնհինգ թվականին էին գլխատել նրան...»[1]: «Կույրինը կույրին» պատմվածքում պատկերված երազը նախնու ապրածը «մարմնով վերապրելու» և այն սերնդեսերունդ փոխանցվելու մասին է: Նա, ում փոխանցվում է գաղտնիքը, իր մեջ կրում է «գերեզման», որտեղ «թաղում է վատ թաղված մեռելներին»: Այդ գործընթացը տեղի է ունենում այնպես, իբր գոյություն ունի «ակտիվ ուրվական»: Այդ ուրվականը հենց այդ «վատ թաղված» նախնին է, որի մահը տառապալից է եղել կամ պարզապես այդ մարդու արարքներց տուժել է նրա ընտանիքը: Այս պարագայում կույր ծերունին, մետաղադրամը ձեռքին, հիշեցնում է պապին, ով պատմվածքի մեջ հիշատակվում է. «...Պապս նույնիսկ իր թաղման ծեսի ու դագաղի փողն էր հետ գցում, իսկ մայրս դժգոհում էր, որ ես ծակ կոշիկներով եմ դպրոց գնում»: Այս դեպքում գերեզմանը ավելի շուտ կերպարի ենթագիտակցության մեջ է, և կույրից փախչելն ու անունը չասելը ուրվականի համար հերթական գերեզման չդառնալու նպատակն է հետապնդում, ուստի բնաբանը՝«Մեռյալին ձեռք չմեկնեք», նշանակում է չներմարմնավորեք նրան: Պատմվածքն ամբողջությամբ փոխաբերություն է: Գերեզմանը և իրական է, և խորհրդանիշ, կերպարները խորհրդանշաններ են, որոնք կոչված են այս կամ այն իրողությունը ազդանշելու: Ճամփորդությունը գերեզմանոցում առաջին հերթին ներքին ճանապարհորդություն է հիշեցնում, և գերեզմանոցի ճանապարհի եզրապատի կավճե զգուշացումներից մեկը՝«Երբեք չճամփորդես մեռյալի հետ», հնչում է իբրև կերպարի ներաշխարհում առկա արգելք, իսկ այն խախտելուց հետո «Ցանկացած զբոսանք, անգամ գերեզմանոցում, պետք է հետաքրքիր դարձնել» տողը իբրև ինքնարդարացում: Գլխավոր կերպարին հաջողվում է խույս տալ «իր գոյությունից կառչել փորձող» ծերունու հետապնդումներից, որովհետև փոխել է անունը: Մյուս կողմից՝պատմվածքի մեջ դրսևորվող պղնձե դրամի պտույտը հուշում է տալու, նվիրելու և համապատասխանաբար նաև ստանալու մասին: Խոսքը արժանապատիվ արարքի և համապատասխան գնահատականի մասին է: Ստացվում է՝ իր վառած մոմի լույսը կօգնի աստծուն, աստված՝կույրին, կույրը՝կույր Մարիամին, կույր Մարիամն էլ՝իրեն:

«Հավերժական շարժիչը» պատմվածքում գործ ունենք երազ երազի մեջ կառույցի հետ, որտեղ արթնացումը տեղի է ունենում երկրորդ երազի մեջ:

«Մի անգամ **երազ տեսա**. մայրս Պրահայում էր, տրամվայ նստեց, փորձեցի հեծանիվով հասնել նրան, պտտեցի ոտնակները, պտտեցի, որ հասնեմ տրամվային, տրամվայը ղողանջեց, երազիս մեջ **արթնացա** մեր սենյակում. Հասկացա, որ անշարժ հեծանիվիս ոտնակներն եմ պտտում. կռահեցի, որ տրամվայը երազիս մեջ երազ եմ տեսել»[2]:

«Ապորիա» պատմվածքի երազը պայմանական իրականության բաղկացուցիչ մասն է: Երազի և իրականության սահմանները ջնջված են, և այնպիսի տպավորություն է ստեղծվում, թե իրականությունը համարժեք է երազին, իսկ երազը՝իրականությանը: Այն, պայմանական իրականության մեջ լինելով, զուգահեռվում է այդ իրականության մեջ տեղի ունեցող իրադարձություններին, դառնում նրանց արտապատկերը՝ պահպանելով իր հարաբերական ինքնուրույնությունը, այսինքն՝ ընկալվելով իբրև երազ: Այն ներկա իրադարձությունների այլաբանական պատկերն է և օժտված է կրկնելիությամբ:

«Գիշերը չէի կարողանում քնել: Նայում էի դիմացս գտնվող դատարկ մահճակալին: Կես քուն, կես արթուն լսում էի հոկտեմբերի՝գիշերային լռությունը թմբկահարող սառն անձրևի ձայնը... Այդ ձայնից երազիս մեջ պղտոր, կանաչ ջուր էր գոյանում, որի պարունակն իրականում թոքերս էին. գետ էր, լիճ, կամ առասպելական ջրափոս, ու նրա մեջ խեղդվում էի: Առավոտյան ջերմությունս իջել էր: Անձրևը չէր կտրվել: Ամեն օր արթնանում էի քրտնած, ասես վերմակս անձրևի խոնավությունն էր ներծծում: Անձրևը չէր դադարում, և ես ամեն օր երազում պղտոր ջրերի մեջ խեղդվում էի: Հետո բուժքույրն զգուշացրեց, որ թոքային հիվանդները սովորաբար ջրահեղձության երազներ են տեսնում: Գիշերներն առաստաղը ճնշում էր կրծքավանդակս: Մանկության հիշողությունները մղձավանջի ծուղակներ էին դառնում» [3]:

[1] Հաղորդություն, www.grakantert.am.
[2] Հավերժական շարժիչ, m.mamul.am.
[3] Ապորիա, ardzak.org.

Խորհրդանշաններ

Հեղինակի ներանձնական խորհրդաբանությունը բացահայտելու համար իբրև խորհրդանիշ են ծառայում առաջին հերթին վերնագրերը: «Կույրինը կույրին» վերնագրի ձևային կողմը ազդանշում է աստվածաշնչյան հայտնի տող. «Աստծունը աստծուն, կեսարինը կեսարին», իսկ իմաստային կողմը իր մեջ ամփոփում է և ուղիղ իմաստը՝ կույրից տալ կույրին (պատմվածքում կա կույր ծերունու մետաղադրամները կույր Մարիամին փոխանցելու պահը), և աստվածաշնչյան իմաստը՝յուրաքանչյուրին տալ իրեն արժանին, որ բացահայտվում է ենթատեքստում: «Ապորիա†» պատմվածքի վերնագրի կողքին կա խաչի նշան: Հոգեբանության մեջ այն կիրառվում է ծագումնաբանական ծառի կառուցման ժամանակ (այն դեպքում, երբ ընտանիքի այդ անդամը մահացել է), որ իրենից ներկայացնում է կյանքի կարևոր իրադարձությունների ծառ՝կառուցված միայն հիշողությամբ, այսինքն՝ինչ է ընտանիքը պահում իր հիշողության մեջ՝կարևոր իրադարձություններ, տարեթվեր և այլն: Փաստորեն, ապորիան դժվար լուծելի կամ անլուծելի իրավիճակ է, իսկ խաչը խորհրդանշում է մահը, այսինքն՝անլուծելի իրավիճակը մահն է: Պատմվածքում պատկերված է մոր մահը: Ապորիաներն առաջանում են մտածածի և իրականության հակադրությունից: Մոր մահը չիմանալով՝գլխավոր կերպարը վազում է վերջին անգամ նրան տեսնելու՝հաղթահարելով տարածությունը, հիվանդությունը, կալանքը, «թունելների վախը», բայց կյանքի առաջադրած անլուծելի իրավիճակը՝ մահը հաղթահարել, նշանակում է, վազել գոյություն չունեցող տեղ: «Հաղորդություն» վերնագիրը երկու բևեռ է ենթադրում՝տեղեկություն տվող և ընկալող: Պատմվածքում իբրև հաղորդող հանդես են գալիս նախնին, որ հաղորդում է իր սոսկալի մահվան մանրամասները և գլխավոր կերպարը, որ ընթերցողին է հաղորդում իր ապրումները: Ըստ այդմ՝ունենում ենք նաև երկու ընկալող՝գլխավոր կերպարը և ընթերցողը: Այսպիսով՝գլխավոր կերպարը հայտնվում է միջին դիրքում: Կերպարի երազը և ամբողջ պատմվածքը՝ իբրև կյանքի մի արտասովոր իրողության հաղորդում է ընթերցողին: «Հավերժական շարժիչը» խորհրդանշում է հավերժ ապրող մարդուն, իսկ Պրահայի ժամացույցը՝ հավերժական, անավարտ կյանքը, որի գոյությունը երազանք է: Սիրանուշ Մարգարյանը, անդրադառնալով այս պատմվածքին, նշում է. «Ու ասես աշխարհում ոչինչ չի փոխվում՝ մեկը գալիս է, մյուսը՝ հիշողության ճանապարհով հեռանում: Մնում է միայն մի Երազ, կյանքի ու մահվան արանքում չծերացող մի պատմություն, թե այնտեղ, հեռու-հեռավոր Պրահայում մի ժամացույց կա…»[1]: Մարդու կյանքը նման է մի սովորական ժամացույցի, որի շարժիչը մարդն է: Այդ շարժիչի կանգը խորհրդանշում է ավարտը կյանքի: Այսպիսով՝եթե Արամ Պաչյանի «Ճանապարհ հեծանիվով» պատմվածքում հեծանիվը դառնում է կյանքի մի ժամանակահատվածի՝դեռահասության շրջանի խորհրդանիշ, ապա Հր. Սարիբեկյանի մոտ հավերժական շարժիչը հավերժ ապրող մարդու խորհրդանիշն է: Խորհրդանշանի դերով հանդես են գալիս նաև բնաբանները: «Հաղորդություն» պատմվածքի բնաբանը՝ «Մեռյալները ողջերից զորեղ են: Եվ ավելի շատ: Նրանք մեր շուրջն են, և նրանց մտադրություններն անհայտ են մեզ», արդեն իսկ հուշում է մի իրականության մասին, որը սոսկ ապրողներին չի պատկանում: «Եկեղեցին» պատմվածի աստվածաշնչյան բնաբանի բացահայտումը նպաստում է պատմվածքի գաղափարի բացահայտմանը: «Ես էլ ասում եմ քեզ, որ դու ես Պետրոս և այդ վեմի վրա կշինեմ իմ եկեղեցին» տողը իր սուրբգրային մեկնաբանությամբ նշանակում է, որ Քրիստոս Պետրոսին կարգում է եկեղեցու հիմնասյուն, տալիս է առաջնորդության առաքելությունը: Պատմվածքում ուղղակիորեն զուգահեռվում են աստված և երկրային հայրը. «Ինձ զարմացրեց այն, որ հայրս մահից անհետացել էր և հիմա հորս փնտրած, թե Աստծուն»: Հոր և աստծո զուգահեռը ենթադրում է նաև եկեղեցու և տան զուգահեռ, ուստի եկեղեցին տունն է խորհրդանշում, և հոր մահից հետո որդին է դառնում տան սյունը, առաջնորդությունը և ընտանիքի անդամների խնամքը հանձնվում է նրան: Այդ մասին է վկայում հետևյալ տողը. «Քույրս նկատեց, որ հորս մահից հետո իմ դիմագծերն ավելի են նմանվել հորս դիմագծերին: Հորս մահից հետո իմ և մահվան միջև կանգնած մարդ չկար այլևս»: «Այնտեղ՝աչքերդ երբ բացես» պատմվածքում առկա երկու շերտերը պայմանավորում են ենթատեքստի գոյությունը: Առաջին՝երևացող պլանում պատկերվում է գլխավոր կերպարի սիրային արկածը, որը ողբերգական ավարտ ունեցավ: Չլսելով հրեա ընկերոջ զգուշացումը՝սիրային կապի մեջ է մտնում մի արաբ աղջկա հոտ: Հարաբերությունները հասնում են մերձեցման: Աղջկա եղբայրները գտնում են նրան և, ցույց տալով արյան հետքերով սպիտակ սավանը, գլխատում: Աստվածաշնչյան որոշ զուգահեռներ են միայն բացահայտում բուն ասելիքը: Առաջին զուգահեռը աղջիկ-Հիսուս զուգահեռն է, որի հիմքում զոհի գաղափարն է. «Մի անգամ արաբական շուկայում հոգևորական

[1] Մարգարյան Ս., Գրական զուգահեռներ, Երևան, 2009, 248 էջ:

ընկերներիցս մեկը ցույց տվեց մի սալաքար, որի վրա Հիսուսն էր սայթաքել, երբ նրան տանում էին Գողգոթա: Այդ օրվանից, ինձ թվում էր, աղջկան փնտրելը նույնն է, ինչ Հիսուսին որոնելը», մեկ այլ հատվածում մի գծի վրա են դրվում խաչի դատարկությունը և աղջկա՝այդ պահին իր կողքին լինելը. «Պատառոտված հագուստներով, տապից հյուծված դեմքերով մի խումբ հավատամոլներ դատարկ խաչը պարզել էին իրենց առջև ու համրաքայլ ընթանում էին նրա հետևից, կարծես չէին էլ նկատել, որ Հիսուսը խաչի վրա չէ: Նրան հանդիպեցի արաբական շուկայում»: Երկրորդ զուգահեռը գլխավոր կերպար-սալաքար զուգահեռն է, հիմքում՝ անկման պատճառ հանդիսացողի կամ մեղավորի գաղափարն է: Նույն սկզբունքով զուգահեռման հաջորդ եզրը աղջիկ-մայր, գլխավոր կերպար-քաղցկեղ զուգահեռն է.«Հայացքս երկար՝ ինձ արնաքամ անելու օրը կռահելու նման, սևեռված մնաց արյան հետքի վրա: Եվ գրեթե կորցրի ինձ, երբ, աչքերը փակ, մահացած մորս նմանեցրի աղջկան: Հաճույքից աղավաղված դեմքը հոգեվարքից առաջ մորս դեմքի վրա քաղցկեղի ջղակծկումներն էին հիշեցնում: Հեշտանքից հետո դեմքը լրիվ մահացած մորս դեմքին նմանվեց: Նրա հեշտանքից երկյուղած՝ պառկեցի մեջքիս վրա և հիշեցի: Այն ժամանակ զարմացել էի՝ ինչպիսի հանդարտ դեմքով է մայրս տանում իր մահը, որ քաղցկեղի ցավերի շարունակություն էի պատկերացնում: Մահով հաղթեց քաղցկեղին»: Ընդ որում կա նաև պատժի արդարացի լինելու գաղափարը.«Ամենասոսկալին այն էր, որ հնարավոր է՝ինձ գլխատելու համար Աստծո թողտվությունն ուներ»: Պատժից հետո մեղավորն էլ է վերածվում զոհի. «Որոշ ժամանակ դեռ տեսնում էի աշխարհը: Նրանք պպզեցին գլխիս առջև, մեկը թփթփացրեց այտիս, մյուսը ծխախոտ դրեց բերանս, երրորդը վառեց ու միասին սկսեցին հռհռալ, բայց քրքիջը չէր լսվում. աշխարհը համրացել էր»: Ունենում ենք անմեղ զոհ+մեղավոր զոհ կաղապարը: Հիմքում մեղքի ու անմեղության սահմանի գաղափարն է, իսկ հատուցումը՝այնտեղ, որ տեղի գաղափար ունի և նշանակում է այն աշխարհում: Ստեղծագործության վերնագիրը իր մեջ խտացնում է փակ իմաստի մի մասը:

Կենսագրական հիմք

Սարիբեկյանի պատմվածքները կենսագրական փաստերի հիման վրա կառուցված գեղարվեստական կառույցներ են, որոնք գեղարվեստականացման ուժով դարձել են ընդհանրական՝հիմքում պահելով կենսագրական փաստը: Իր ստեղծագործությանը անդրադառնալիս հեղինակը հաճախ է մեջբերում կյանքի այս կամ այն դրվագը, որի գեղարվեստական տարբերակը դառնում է որևէ ստեղծագործություն կամ ստեղծագործության մի հատված: Ուսումնասիրվող պատմվածքների համար կենսագրական հիմք են հեղինակի՝ հարցազրույցներում տարբեր առիթներով արված բացահայտումները: «Ապորիա» պատմվածքը հետևյալ իրադարձությունների արձագանքն է.«Երբ մայրս պառկեց հիվանդանոցում, 14 թե 15 տարեկանում առաջին անգամ եկա Երևան: Ես միանգամից սիրեցի Երևանը, որովհետև շատ արև, շատ տաքություն տեսա ու զգացի…»[1]: «Հավերժական շարժիչը» պատմվածքի որոշ իրադարձությունների համար կենսագրական հիմք է հետևյալ մեջբերումը.«...Իմ մայրը քաղցկեղով հիվանդ էր և ահավոր սուր ցավերի մեջ: Եվ նա մահացավ, իսկ ես սովորաբար ասում եմ, որ կորցրի ծնողներիս, որովհետև հայրս մորս մահից հետո անմիջապես ամուսնացավ, և ես ու քույրս հեռացանք տնից: Ես զգացի, որ թիկունքս մահվան դիմաց բաց մնաց»[2]: Նույն իրադրությունների հետքերը կան նաև «Կույրինը կույրին» պատմվածքում: Հեղինակի կենսագրական տվյալներից իմանում ենք, որ 2004 թվականին եղել է Երուսաղեմում: «Այնտեղ՝աչքերդ երբ բացես» պատմվածքի իրադարձությունները ևս ծավալվում են այնտեղ: Կենսագրական փաստերի հետ կապը ապահովում են որոշ կերպարների անունների՝իրական կյանքում ունեցած անվանումների հետ նույնությունը (Օր.՝հոր անունը՝Հարություն), ինչպես նաև ընծայականների առկայությունը (Օր.՝«Ապորիայում» «Ա. Ն.-ին՝ճակատագրերի զուգադիպման համար», «Հավերժական շարժիչը պատմվածքում՝«Արամ Պաչյանին, որ գրել է «Ճանապարհ հեծանիվով» պատմվածքը»):

Այսպիսով՝ «Կույրինը կույրին», «Ապորիա», «Հաղորդություն», «Հավերժական շարժիչ», «Եկեղեցին», «Այնտեղ՝աչքերդ երբ բացես» պատմվածքների մեկնաբանությունը հանգեցնում է նրանցում առկա մի շարք իրողությունների՝ երազների, խորհրդանշանների, ենթատեքստի բացահայտմանը, դրանց դերի ու նշանակության պարզաբանմանը: Երազների և պայմանական իրականության փոխհարաբերության հստակեցումը թույլ է տալիս ենթադրել, որ երազները Հր. Սարիբեկյանի ստեղծագործության մեջ

[1] Այսօր վաղվա օրն է. Հրաչյա Սարիբեկյանի գաղտնապատկերները ենթագիտակցության խորշերից, gradaran.mskh.am.

[2] Նույն տեղում:

բազմագործառույթ են: Նրանք նպաստում են գաղափարական բովանդակության բացահայտմանը, դառնում են թեմա՝միևնույն ժամանակ մնալով հնար՝ պայմանական իրականության հետ ամենատարբեր հարաբերություններ ձևավորելով, իսկ խորհրդանշանները ոչ միայն երևույթներն ու իրողությունները այլաբանորեն պատկերելու միջոց են, այլև հեղինակային մտահղացումը մատնանշող հղումներ: Սրանց մեկնաբանմամբ գալիս ենք այն եզրահանգման, որ պատմվածքների գեղարվեստական իրականության բնույթը համադրական է, այն իրականի և անիրականի յուրօրինակ համադրում է, որտեղ այդ երկուսը նույն հարթության վրա են: Մյուս կողմից կենսագրական փաստերը փաստում են սրանց կենսական հիմքը:

Օգտագործված գրականություն

1.Лотман Ю., Сон-семиотическое окно, yanko.lib.ru.

2. Այսօր վաղվա օրն է. Հրաչյա Սարիբեկյանի գաղտնապատկերները ենթագիտակցության խորշերից, gradaran.mskh.am.

3. Եկեղեցին, https://elenasargsyan.wordpress.com.

4. Կույրինը կույրին, gisher.ru.

5.Հաղորդություն, www.grakantert.am.

6.Հավերժական շարժիչ, m.mamul.am.

7. Ապորիա, ardzak.org.

8. Մարգարյան Ս., Գրական զուգահեռներ, Երևան, 2009, 248էջ:

ՀՏԴ 82-1

Պոեզիա

Սոնա Ալավերդյան
Գորիսի պետական համալսարան, 4-րդ կուրս
sona.alaverdyan.2013@mail.ru

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏԱՐԳԱՆԴԱՅԻՆ ՓՈՒԼՈՒՄ ՄԱՅՐ – ՈՐԴԻ – ՀԱՅՐ ԿԱՊԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ ՊՈԵԶԻԱՅԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ժամանակակից հայ պոեզիայում արծարծված և ուշադրության արժանի խնդիրներից մեկը մոր, որդու և հոր կապն է, որի ուսումնասիրության համար չափազանց կարևոր է հիշողության հետարգանդային փուլը:

Սույն հոդվածում փորձ է արվել ներկայացնել մայր-որդի-հայր հարաբերությունները և դրանց կրած փոփոխությունները, որոնք էապես կապված են արգանդային հիշողության հետ:

Բանալի բառեր. *մայր, որդի, հայր, հետարգանդային հիշողություն, արգանդային հիշողություն, մինչէդիպյան փուլ, էդիպյան փուլ:*

Сона Алавердян
ГГУ, 4-ый курс
sona.alaverdyan.2013@mail.ru

СВЯЗЬ МАТЬ-СЫН-ОТЕЦ В КОНТЕКСТЕ СОВРЕМЕННОЙ АРМЯНСКОЙ ПОЭЗИИ В ФАЗЕ ПОСЛЕУТРОБНОЙ ПАМЯТИ

В современной армянской поэзии поднятый и примечательный один из вопросов - связь матери, сына и отца, для исследования которого слишком важна фаза послеутробной памяти.
В этой статье пытались представить отношения матери, сына и отца, и их носящие изменения, которые по существу связаны с утробной памятью.

Ключевые слова: *Мать, сын, отец, послеутробная память, утробная память, про эдипова фаза, эдипова фаза.*

Sona Alaverdyan
GSU, 4th year
sona.alaverdyan.2013@mail.ru

MOTHER-SON-FATHER RELATIONSHIP PHASE OF POST-WOMB MEMORY IN THE CONTEXT OF MODERN ARMENIAN POETRY

One of reflected and worthwhile issues in Modern Armenian Poetry is mother-son-father relationship. To study this relationship deeply is extremely important post-womb memory phase.

The given article examines mother-son-father relationship and its development which is essentially connected with womb memory.

Keywords: *mother, son, father, post-womb memory, womb memory, pre-Oedipal phase, Oedipal phase.*

Աշխարհի ընկալման գործում մարդու համար չափազանց կարևոր է սեփական անձի հայտնագործումը, որը կապված է իմացության գործընթացի և հիշողության հետ: Դա իրականացվում է ինքնաղիտման միջոցով, երբ անձը, շարժվելով ժամանակի ընկալման ընդունված սկզբունքով՝ անցյալ-ներկա-ապագա բաժանմամբ, ապագան միացնում է ներկային և գնում դեպի անցյալ: Նպատակին հասնելու՝ եսը «փնտրելու» համար որպես ելման կետ ընտրվում է հիշողության ամենամոտ փուլը՝ **հետարգանդայինը:**

Հետարգանդային կկոչենք հիշողության այն փուլը, որ սկսվում է մարդու լույս աշխարհ գալու պահից և շարունակվում մինչև նրա ֆիզիկական վախճանը: Այս փուլի ցանկացած հիշողություն ամուր թելերով կապված է մանկության հետ.

Մանկությունից հեռու ո՛չ ես եմ ես,
ո՛չ էլ հեռուն է ինձ նմանվում...[1]

Այսինքն ինչ էլ կատարվի կյանքի հաջորդ փուլերում, դրա արմատները գտնվելու են մանկության տարիներում, և միակ պատասխանատուն նա է լինելու: Մարդկային կյանքի ավելի ուշ շրջանը կարող է միայն վերցնել իր հետ պատահած փաստերը և, փորձելով հաղթահարել դրա հետ կապված իմացական թակարդները, հետևություններ անել: Ընդ որում, նա ոչինչ փոխել չի կարող (թեպետև ջանալու է խուսափել), որովհետև մանկությունը նրան պահում է որպես պատանդ:

Սույն հոդվածի շրջանակում հետարգանդային հիշողության քննման համար մանկության և հասուն տարիքի կապն օգտագործելիս նպատակահարմար ենք գտել անդրադառնալ միայն մայր-որդի-հայր կապին: Բանն այն է, որ մանկությունը հիմնականում կապվում է ծնողների հետ ունեցած հարաբերությունների մասին հիշողություններին: Սակայն պետք է նշել, որ տարբեր սեռի ներկայացուցիչների պարագայում ունենում ենք կապվածության տարբեր կերպեր: 20-րդ դարի նշանավոր հոգեվերլուծաբան Զ. Ֆրոյդը նման փոխհարաբերությունների հարցը ուսումնասիրելիս առանձնացնում է ծնողների հետ կապվածության մինչէդիպյան և էդիպյան փուլեր: Եվ եթե աղջիկների դեպքում կապվածության երկու փուլերն էլ առկա են, այսինքն աղջկա՝ մոր հետ կապվածության նախնական փուլին՝ մինչէդիպյանին, հաջորդում է հոր հետ կապվածության փուլը՝ էդիպյանը, ապա տղաների պարագայում, ըստ Ֆրոյդի, նկատելի է միայն մոր հետ ուժեղ կապվածության էդիպյան փուլը:[2] Ուրեմն հասկանալի է, թե ինչքան կարևոր է պոեզիայում հարցին անդրադառնալիս հաշվի առնել սեռով պայմանավորված ընկալման տարբերությունները:

Հիշողության հետարգանդային փուլում մայր-որդի-հայր փոխահարաբերությունների խնդրում փաստորեն մանկությունը այն հիմնական տարածությունն է, որտեղ տանող ճանապարհին նկատվում են նահանջների, կանգառների դեպքեր, սակայն դրանք լուրջ խոչընդոտներ չեն դառնում պոետի համար՝ իրականացնելու դեպի կենտրոն որոնման գործընթացը: Կենտրոնը նրա համար էներգետիկ մի աղբյուր է, որին տիրանալու դեպքում կկարողանա հարկ եղած պահին օգտվել էներգիայի կույտից և հետարգանդային հիշողությունը ձեռք բերելուց հետո անցում կատարել հիշողության երկրորդ՝ արգանդային փուլին: Սակայն նախ և առաջ հարկավոր է հասնել էներգետիկ այդ աղբյուրին, որն ինքնաճանաչման նախնական փուլում անորոշության պահեստի տեսքով է հանդես գալիս:

Ինչպես իգական, այնպես էլ արական սեռերի համար մոր կերպարը կարևոր է այնքանով, որ անգամ հասունության փուլում նկատվում են մանկության տարիներին մոր հետ ունեցած հարաբերությունների, կապվածության ու կերպարի հետքերը: Եթե աղջիկների պարագայում մայրական կապվածությունը փոխարինվում է էլեկտրայի բարդույթի շրջանով, ապա տղաների մոտ նկատում ենք կապվածության էլ ավելի ուժեղացում, ինչը վերածվում է էդիպյան բարդույթի, և դրա հետևանքները արձագանքվում են տղայի հետագա ողջ կյանքի ընթացքում:

Սեփական արմատների ճանաչման, «հոգու առաջին տառին» մոտենալու համար ծնողների միջև ընտրություն կատարելիս տղան դիմում է մորը՝ ենթագիտակցորեն ունենալով իրենց միասին լինելու մասին նախնական հիշողությունը: Հենրիկ Էդոյանն ասում է.

Այսպես խոսելով մանկության մասին դու
մոտենում ես քո մոր
աղոթքներին...[3]

Մայրը դառնում է սիրո այն օբյեկտը, որը կկարողանա երեխային փոխանցել կենսական ինֆորմացիա հետարգանդային փուլում ապրելու համար: Իսկ այդ ինֆորմացիան երեխան մորից ստանում է կրծքի կաթի միջոցով: Կուրծքը տվյալ դեպքում խողովակի դեր է կատարում երեխայի և մոր զգացմունքային կապի ստեղծման համար: Ստեղծված զգացմունքային խողովակով է հասունության տարիքում տղան (աղջիկը փորձելու է հրաժարվել) իր կյանքի շարժման բանաձևը հասկանում: Ահա թե ինչու Է. Միլիտոնյանը մայրական կուրծքը համեմատում է «երկրագնդի» հետ.

Կպել եմ այս շարժումին,
Ինչպես մորս կրծքին:
Մայր իմ, ինչո՞ւ էր կուրծքդ նման երկրագնդին:[4]

[1] Արդի հայ քնարերգություն. Հայաստան-Արցախ, հ. Ա, Սամվել Կոսոյան, ՀԳՄ, Երևան, 2008, էջ 208:
[2] Զիգմունդ Ֆրոյդ, Հոգեվերլուծության ներածություն, Զանգակ 97, Երևան, 2002, էջ 222-224 և 390-401:
[3] Հենրիկ Էդոյան, Այժմ և միշտ: Բանաստեղծություններ, Սովետական գրող, Երևան, 1987, էջ 201:
[4] Էդվարդ Միլիտոնյան, Ցասման հաց /բանաստեղծություններ/, Տիժեռնակ, Երևան, 2006, էջ 162:

Ուրեմն հետարգանդային փուլում մոր և որդու միջև կապը վերականգնվում է մայրական կրծքի միջոցով, և ուղեղը բավարավածության զգացում է ապրում այս աշխարհում լինելու և իր մեջ մորը բնորոշ հատկանիշներ ընդգրկելու համար։

Ի՞նչ հետևանքներ կարող է ունենալ որդու մայրական ուժեղ կապվածությունը և մորը բնորոշ հատկանիշները իր ներսում ընդգրկած լինելը։ Ընդհանրապես տղայի ներսում կանացի նախասկզբից հատկանիշների առկայության մասին խոսվել է դեռևս հին հույն փիլիսոփաների կողմից։ Իսկ 20-րդ դարում Կառլ Յունգը, անդրադառնալով **անիմա և անիմուս** (արական և իգական հոգի) նախաձևերի հիմնախնդրին, նշում է. «Տղայի կյանքի առաջին տարիներին Անիման միախառնվում է ամենակարող մոր կերպարի հետ և իր հետքն է թողնում նրա ամբողջ ճակատագրի վրա՝ ամբողջ կյանքում պահպանելով այն զգացմունքային կապը, որը կամ խոչընդոտում է նրան, կամ էլ, ընդհակառակը, արիություն է ներշնչում ամենաքաջ արարքների համար»[1]: Այսինքն, ըստ Յունգի, Անիմայի ձևավորման գործում մեծ է մոր կերպարի ազդեցությունը։ Տղան հետագա ողջ կյանքում անգիտակցաբար կողմնորոշվում է իր ներսում եղած կանացի հատկանիշների համար պատասխանատու մոր կերպարով, որպես ժառանգություն մորից վերցնում է նրա աչքերով աշխարհին «նայելու կերպը»։ Ճանաչողության այս տարօրինակ ձևը հնարավորություն է տալիս որդուն մայրական աչքերով ստեղծել աշխարհի յուրօրինակ պատկերը, որի մեջ հավաքվում են աշխարահաշարժ երևույթները և միաժամանակ ստեղծում ձայնային պատկեր՝ կազմված բնական միջավայրի, այնտեղ ապրող կենդանիների ու մարդկանց ինքնարտահայտման հնչյուններից, այլ կերպ ասած՝ «շուրջերքը» կազմող էներգետիկ աղբյուրներից.

Քո խոշոր ու սև աչքերով դիտելիս զգում եմ՝
Ինչպես եմ մագնիսական դաշտի մեջ հավաքում
Շուրջերքը զննելու խոհը,
Կենդանիների հանդեպ բնազդային սերը,
Լիալուսինը, մարգերը, գյուղի առուն,
Անբան մարդու հանդեպ հանկարծահաս զայրույթը,
Անգամ որդու խեղճ պահվածքի ցասումը,
Եվ եզանն ու մարդուն համառորեն առաջ մղելու կիրքը։
Եվ շատ այլ բաներ, որոնց անունը դեռ չգիտեմ։[2]

Մայր և որդի օրգանիզմների միջև կապն այնքան ամուր է, որ անգամ մոր չգոյության պայմաններում, որդին շարունակում է մխրճված լինել նրա ներսում, ավելին՝ նա դառնում է մոր ձայնի վանկը, որը կառավարվում է արգանդային փուլում առաջացած և հետարգանդայինում չկտրված պորտալարի միջոցով։ Մայր և դուստր հարաբերությունների մասին խոսելիս նշում ենք, որ դուստրը մոր հետ հարաբերությունները խզելու համար հրաժարվում է պորտալարից՝ հավատացնելով ինքն իրեն, թե «պորտալարը օրեցօր բարակող մազ է»[3], «կկտրվի մի օր»[4]: Այնինչ որդու համար նույն այդ պորտալարը ոչ թե խեղդող պարան է, որից պետք է հրաժարվել, այլ ներքին աշխարհի հետ (որտեղ բնակվում է մայրը) կապող օղակ, որ պետք է ամուր պահպանել, հակառակ դեպքում կվերանա «այս և այն աշխարհների» միաձուլությունը.

Դու այնքան ես մխրճված իմ մեջ,
Որ թվում ՝ հող եմ և աճյունդ եմ կրում,
Եվ հոգիդ միաժամանակ, և կենդանի կանչդ ինձ տուն ձգող։
Չէ, Պորտալարը չի կտրվել։
Եվ ոչ ես եմ ուզում կտրվի, ոչ դու։
Եվ ուրախությամբ զարմանում եմ, թե այս ինչ միաձույլ են
Այս ու այն աշխարհները։
Մայր ու որդի արարածները։[5]

[1] Յուրի Հովականյան, Հոգեվերլուծական փիլիսոփայություն (Ֆրոյդ, Յունգ, Ֆրոմ), Հեղինակային հրատարակություն, Երևան, 2001, էջ 75։

[2] Էդվարդ Միլիտոնյան, Մատնահետք։ Բանաստեղծություններ, Նաիրի, Երևան, 2000, էջ 61։

[3] Մանե Գրիգորյան, Յուրտ կին /Բանաստեղծություններ/, Անտարես, 2013, էջ 92։

[4] Նույն տեղում։

[5] Էդվարդ Միլիտոնյան, Մատնահետք։ Բանաստեղծություններ, Նաիրի, Երևան, 2000, էջ 61։

Մայր և որդի աշխարհների միաձուլություն նկատվում է անգամ այն դեպքում, երբ որդին գիտակցում է՝ ինքն այս տիեզերքի անսահմանության մեջ, «ուր մեր շարժումը արձագանք չունի»[1], բացարձակ միայնակ է: Նրանց կապը պահպանվում է, քանի որ մոր մասին ունեցած մտապատկերը շարունակում է իր հետ լինել: Սրա միակ բացատրությունն այն է, որ ինքը մայրն էլ մենակության ծնունդն է ու կրողը. մայրը՝ որպես իգական սկիզբ, որպես Եվա, մենակություն է ժառանգել արական սկզբից՝ Ադամից և այդ զգացումը փոխանցում է հաջորդ սերունդներին: Մենակության աղբյուրի մասին խոսվում է Վարդան Հակոբյանի «Խոնարհում» բանաստեղծության մեջ.

Ամենաառաջին զգացումը,
որ ապրել է Ադամը՝
աշխարհ գալու օրից ի վեր,
մենակությունն է:
Եվան ծնվել է մենակությունից,
Եվայի մայրը մենակությունն է:[2]

Տղայի հասունացմանը զուգահեռ նկատվում է սեփական հոգում առկա մայրական իշխանության բեռից թեթևանալու և մանկությունից հրաժարվելու պահանջ, որպեսզի անձնական ու անկախ հայացքների սկիզբը դրվի: Դա նման է հին հույն ողբերգակ Սոֆոկլեսի ստեղծագործության վերջին հատվածին, երբ Էդիպը խնդրում է Կրեոնտից՝ մորեղբորից.

Ինձ այս երկրից շուտ աքսորիր և դուրս նետիր շուտափույթ,
Որ մարդկանցից ողջույնի խոսք ես չլսեմ բնավին:[3]

Էդիպի նման տղան հասունացման ընթացքում ուզում է մանկությունից հեռանալ և սկսել նոր ու ազատ կյանք՝ նետելով այն բոլոր հատկանիշները, որ կա իր ներսում, բայց որը ժառանգություն է ստացել և պետք է ոչնչացնել: Դրա համար նա դիմում է մեկ այլ կնոջ օգնությանը, սակայն իրականում ենթագիտակցորեն ընտրում է մի օբյեկտ, որի ներսում դնում է մոր մասին ունեցած մտապատկերը: Այսինք այդ հրաժարումը վերածվում է մի յուրօրինակ վերադարձի: Բոլոր այն կանանց մեջ, որոնց նա ընտրում է, չգիտակցված կերպով տեսնում է միևնույն կնոջը՝ մորը, քանի որ մորից օտարացումը ազդում է ողջ կյանքի և հատկապես ընտրվելիք կանանց հետ ունեցած հարաբերությունների վրա: Այդ հարցում չափազանց կարևոր նշանակություն ունի մարմնական բույրը: Մայրական մարմնի բույրի հիշողությունն է առաջնորդում տղային կնոջ ընտրության ժամանակ: Հուսիկ Արայի «Բուրմունքի հիշողությունը» պոեմում հեղինակը ներկայացնում է «խոսքով ու մարմնով» իր ընտրյալին երկրպագությունը, և նրա սիրելու կերպը նման է **արարման կանացի հոտի** որոնմանը: Չնայած հեղինակի կողմից պոեմում չենք նկատում սիրելի կնոջ օբյեկտի մեջ **գիտակցված** փնտրտուք մայրական բույրի, բայց նրան ուղղորդողը **ենթագիտակցությունն է:** Իսկ ենթագիտակցությունը հետևյալի մասին է հաղորդում. արգանդային ժամանակից սկսած մոր հետ լինելով՝ տղան հիշողության մեջ պահպանում է կանացի հոտը, որը մանկության տարիներին շարունակաբար առնում է մորից, բայց հասուն տարիքում՝ մայրական իշխանությունից հրաժարվելուց հետո, արդեն կորցնում: Մարմնի այդ բույրը կենսական այնպիսի նշանակություն ունի տղայի համար, որ նա կորցնելուց հետո ամբողջ կյանքում զբաղվում է դրա փնտրտուքով, բայց արդեն կանացի ուրիշ օբյեկտների մեջ:

Քո հոտի հիշողությունն է ինձ չարչարում,
քեզ փնտրում եմ բնության մեջ, էգ գազան,
և մարմնիդ գեղեցկությունը գտնում,
որ վայրի ազատությունն է:[4]

Տղամարդու կյանքում կնոջ կարևորությունը դեռևս առաջին մարդու օրինակով ենք տեսնում: Ուրեմն նա մշտապես կանացի օբյեկտի կարիքը ունի, ում հետ միասնություն կկազմի: Եթե արգանդայինում և

[1] Հենրիկ Էդոյան, Այժմ և միշտ: Բանաստեղծություններ, Սովետական գրող, Երևան, 1987, էջ 75:
[2] Վարդան Հակոբյան, Թևերի հեռուն (երկերի ժողովածու): Բանաստեղծություններ, Հայաստան, Երևան, 2003, էջ 143:
[3] Հույն ողբերգակներ, Հայպետհրատ, Երևան, 1950, էջ 137:
[4] Հուսիկ Արա, Բուրմունքի հիշողությունը, http://granish.org/%D5%B0%D5%B8%D6%82%D5%BD%D5%AB%D5%AF-%D5%A1%D6%80%D5%A1-%D5%A2%D5%B8%D6%82%D6%80%D5%B4%D5%B8%D6%82%D5%B6%D6%84%D5%AB-%D5%B0%D5%AB%D5%B7%D5%B8%D5%B2%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8/

մանկության տարիներին այդ օբյեկտը մայրն է, ապա հասուն տարիքում կանացի մարմինն է, որին տղամարդու մարմինը «հնազանդ է» այնպես, ինչպես հնազանդ էր մոր մարմնին (արգանդայինում) և կերպարին (հետարգանդայինում).

Մարմնիս հպարտությունը հնազանդ է մարմնիդ,
մենք մի մարմին ենք՝ ներդաշնակորեն հյուսված.
խաչվել ենք ինչպես հասարակածն ու միջօրեականը՝
ուղղահայաց ու հորիզոնական:[1]

Վերհիշելով մարդու երկսեռության մասին տեսությունը՝ կարող ենք ասել, որ տղամարդուն (նաև կնոջը) հավասարակշռություն և ամբողջականություն պահպանելու համար անհրաժեշտ է հակառակ սեռի հոգեգծերի առկայություն, իսկ դա կատարվում է կնոջ հետ մերձեցման ժամանակ: «Մերձեցում» բառը այստեղ պետք է ընկալել ոչ միայն սեռական հարաբերություններ ունենալու իմաստով, այլև կանացի (նաև մայրական) օբյեկտի առկայության և նրա հետ միասնություն կազմելու նշանակությամբ: Սա է պատճառը, որ եթե Կարեն Անտաշյանը մորն ուղղված բանաստեղծությունը ավարտում է «Ու ես աշխարհում կմրսեմ առանց քեզ»[2] տողով, ապա Հուսիկ Արան նույնանման իրավիճակում հայտնվում է սիրած կնոջ բացակայության դեպքում՝ «առանց քո մարմնի ցուրտ եմ, մրսում եմ»[3]:

Տղայի հոգեկան աշխարհի և սեփական ուղու ձևավորման գործում չափազանց կարևոր են նաև հոր կերպարի ներգրավածությունը և նրա հետ ունեցած հարաբերությունները, որոնք մանիպուլացիոն նշանակություն են ունենում նրա համար: Տղան, իհարկե, չի գիտակցում թաքուն ղեկավարվող այն ձգտումների մասին, որ ուղղորդում են իրեն լույս աշխարհ գալուց հետո մորից զրկվելու վախից ազատվելու համար հենարաններ գտնելիս: Դա ոչ թե մարմնական վախ պետք է համարենք, այլ կամքի որոշում, երբ նա նոր հենարաններ է փնտրում հանձինս արտաքին աշխարհում գտնվող մոր և հոր: Եվ քանի որ նախապես մոր հետ անցակցրել է ինը ամիս և զգացել նրան, այլ կերպ ասած՝ ճանաչել նրա ներքին աշխարհը, լույս աշխարհ գալուց հետո արդեն մնում է մայրական աշխարհը նաև տեսանելի դարձնել, իսկ ահա հայրական աշխարհը տղան ոչ թե պետք է տեսնի, այլ մի ամբողջ կյանք անցկացնի զգալու և ճանաչելու համար: Արևշատ Ավագյանը «Նորոգված հայացք» բանաստեղծության մեջ ասում է.

Մարդն իր աչքերը բացում է՝
մորը տեսնելու և հորը ճանաչելու համար,
չորեքթաթ պտտվում ծնողների շուրջը...[4]

Մորը տեսնելը և հորը ճանաչելը արվում է անհրաժեշտ կոորդինատային համակարգի ստեղծման համար, սակայն ինչպես աղջիկների դեպքում, այնպես էլ տղաների պարագայում գործում է հակառակ սեռի օգնությանը դիմելու և նույն սեռի ծնողական աշխարհից փախչելու, ներքին տարաձայնությունում նրան սպանելու կարգը, որը համաձայն է նախասահմանված ներդաշնակության կանոնին: Ու եթե հասունացման զուգահեռ աղջիկը աստիճանաբար վերականգնում էր մոր հետ երբևէ խզած կապերը, ապա որդին էլ նույն ընթացքում ճանաչման գործընթացում քիչ-քիչ մոտենում է հայրական աշխարհին՝ պատասխանելով իրենց միջև հոսող «Հարցի երաժշտությանը»: Էդուարդ Հարենցի մոտ, օրինակ, այդ գործընթացի համար պոեզիան է աստիճան դառնում.

Պոեզիան մի աստիճան է,
որը ի՛նքն է
ինձ բարձրանում
ներքև
մեղքի հրվանդանից:
Իմ և հորս միջև
հոսում է Հարցի երաժշտությունը,

[1] Նույն տեղում:
[2] Կարեն Անտաշյան, Վերջից հետո, սկզբից առաջ: Բանաստեղծություններ, ՀԳՄ, Երևան, 2004, էջ 56:
[3] Հուսիկ Արա, Բուրմունքի հիշողությունը, http://granish.org/%D5%B0%D5%B8%D6%82%D5%BD%D5%AB%D5%AF-%D5%A1%D6%80%D5%A1-%D5%A2%D5%B8%D6%82%D6%80%D5%B4%D5%B8%D6%82%D5%B6%D6%84%D5%AB-%D5%B0%D5%AB%D5%B7%D5%B8%D5%B2%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8/
[4] Արևշատ Ավագյան, Հոգենյութ: Բանաստեղծություններ, Վահան, Երևան, 2000, էջ 192:

որի ջրերում
մահից լողանում են բառերը՝
մորեմերկ, ինչպես աղոթքս վանքում…[1]

Հարցերը պատասխաններ գտնում են, երբ մարմինը հոսում է ու ժամանակի մեջ տարածվում, իսկ ժամանակը դառնում է դեպի իր հիշողությունը ու գտնում կորսված հուշը այն մասին, որ տղան իր մեջ պարունակում է նաև հոր էությունը: Նա հասկանում է, որ ինքը **հոր մտահղացման մի մասն է կազմում**, իսկ մինչ այդ խուսափել էր տեսնել իր պատկերը հոր ստվերում: Աչքերը դեպի ներս շրջելով՝ նա հոգու անհուն տարածության մեջ ոչ թե տեսնում, այլ ճանաչում է այդքան տանջանքների, հոգեկան կեղեքումների պատճառ դարձած հայր և որդի աշխարների յուրօրինակ կապը: Այդ կապը չի ստեղծվում բառերի երևացող մասով, ընդհակառակը, բառերը «ժամանակի մակերեսին» ինֆորմացիոն խոչընդոտներ են, և պետք է կարողանալ ըմբռնել հայրական ոչ սովորական լեզուն: Ինչպես Վ. Հակոբյանն է ասում. «հայրս խոսում էր միշտ չերևացող մասերով բառերի»[2]: Հասկանալով բառերի չերևացող մասերը՝ նա տեսնում է, որ իր բոլոր տարիներին հայրական աշխարհի հետքը կա, ու նորից հոր պահանջն է զգում, որպեսզի կարողանա իր ուսերի վրա կրել «հայացքը մարդկանց // և ձեռքը ժամանակի»[3]: Նա դա անում է՝ իր մեջ հայրական խոսքը կրելով այնպես, ինչպես «խնձորի սերմը խնձորի մեջ դրված»[4]:

Որդու՝ հորը աստիճանաբար ըմբռնումը Է. Հարենցի մոտ վերածվում է փոխօգնության՝ ուղղված հորը, որը կարող է որդու տողերի «ճաքած առէջների մեջ» տեսնել իր մյուս աչքը, այսինքն՝ ստեղծած էակին.

Բա՛ց թող ջանքերդ իմ,
հա՛յր,
մի՛ հանդուրժիր քեզ,
աչքդ խնայի՛ր,
որով կարենաս նայել
մյուս աչքիդ՝
տողերիս ճաքած առէջների մեջ,
ուր, միևնույն է,
քեզնից խուսափել չես կարենալու…
Բայց խուսափի՛ր,
մի՛ հանդուրժիր քեզնից,
հա՛յր,
աչքս խնայիր…[5]

Տարածության մեջ տղան մարմնի մասին ամբողջական զգացում և պատկերացում ունենում է, երբ հաշտվում է հոր հետ, այսինքն երբ ճանաչողության գործընթացը ավարտին է հասնում: Իսկ դա կատարվում է սեփական որդու գոյության առկայության միջոցով, երբ ճանապարհի միջնամասում կանգնած՝ առջևով անցնում է հայրը, իսկ հետևից որդին է գալիս, և նրանցից ոչ մեկը մյուսին չի հասնելու («Որդին հորն է փնտրում, բայց հայրը գնում է առաջ…»[6]).

Երբ նայում եմ առաջ – տեսնում եմ քեզ,
երբ նայում եմ հետ – տեսնում եմ իմ որդուն,
ձեր երկուսի մազերն էլ սպիտակ են:[7]

Այսպիսով, տղայի՝ արգանդային փուլից եկող մոր հետ կապվածության հիշողությունը և հետարգանդայինում նրա կյանքի շարունակությունը լինելը անցնում է հետևյալ փուլերով՝

1. արգանդային հիշողության անմիջական ազդեցությամբ ուժեղ կապվածություն մորից. էդիպյան շրջան,

[1] Էդուարդ Հարենց, Ինտերմեդիա ջրերից: Պոեզիա, Անտարես, Երևան, 2014, էջ 61:
[2] Վարդան Հակոբյան, Թևերի հեռուն (երկերի ժողովածու): Բանաստեղծություններ, Հայաստան, Երևան, 2003, էջ 10:
[3] Հենրիկ Էդոյան, Այժմ և միշտ: Բանաստեղծություններ, Սովետական գրող, Երևան, 1987, էջ 150:
[4] Նույն տեղում, էջ 151:
[5] Էդուարդ Հարենց, Ինտերմեդիա ջրերից: Պոեզիա, Անտարես, Երևան, 2014, էջ 109:
[6] Հենրիկ Էդոյան, Այժմ և միշտ: Բանաստեղծություններ, Սովետական գրող, Երևան, 1987, էջ 55:
[7] Նույն տեղում, էջ 152:

2. հասունացմանը զուգահեռ մայրական իշխանության բեռից թեթևանալու և մանկությունից հրաժարվելու պահանջ մեկ այլ կնոջ օգնությամբ,
3. սեփական գոյության կոորդինատային համակարգի մասին ամբողջական պատկերացում ստանալու նպատակով հայրական սկզբի ճանաչման համար քայլերի ձեռնարկում,
4. հայրական աշխարհի ճանաչման վերջնական ավարտ և մարմնի մասին ամբողջական պատկերացում սեփական որդու գոյության միջոցով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Անտաշյան Կ., Վերջից հետո, սկզբից առաջ: Բանաստեղծություններ, ՀԳՄ, Երևան, 2004, - 70 էջ:
2. Ավագյան Ա., Հոգենյութ: Բանաստեղծություններ, Վահան, Երևան, 2000, - 224 էջ:
3. Արա Հ., Բուրմունքի հիշողությունը:
http://granish.org/%D5%B0%D5%B8%D6%82%D5%BD%D5%AB%D5%AF-%D5%A1%D6%80%D5%A1-%D5%A2%D5%B8%D6%82%D6%80%D5%B4%D5%B8%D6%82%D5%B6%D6%84%D5%AB-%D5%B0%D5%AB%D5%B7%D5%B8%D5%B2%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8/
4. Արդի հայ քնարերգություն. Հայաստան-Արցախ, հ. Ա, ՀԳՄ, Երևան, 2008, - 520 էջ:
5. Գրիգորյան Մ., Յուրտ կին /Բանաստեղծություններ/, Անտարես, 2013, - 112 էջ:
6. Էդոյան Հ., Այժմ և միշտ: Բանաստեղծություններ, Սովետական գրող, Երևան, 1987, -256 էջ:
7. Հակոբյան Վ., Թևերի հեռուն (երկերի ժողովածու): Բանաստեղծություններ, Հայաստան, Երևան, 2003, -156 էջ:
8. Հարենց Հ., Ինտերմեդիա ջրերից: Պոեզիա, Անտարես, Երևան, 2014, - 128 էջ:
9. Հովականյան Յ., Հոգեվերլուծական փիլիսոփայություն (Ֆրոյդ, Յունգ, Ֆրոմ), Հեղինակային հրատարակություն, Երևան, 2001, - 172 էջ:
10. Հույն ողբերգակներ, Հայպետհրատ, Երևան, 1950, - 399 էջ:
11. Միլիտոնյան Է., Մատնահետք: Բանաստեղծություններ, Նաիրի, Երևան, 2000, - 159 էջ:
12. Միլիտոնյան Է., Ցասման հաց /բանաստեղծություններ/, Ծիծեռնակ, Երևան, 2006, - 200 էջ:
13. Ֆրոյդ Զ., Հոգեվերլուծության ներածություն, Զանգակ 97, Երևան, 2002, - 472 էջ:

ՀՏԴ 82.09

Գրականություն
Կարեն Մանուչարյան
Վանաձորի պետական համալսարան
098150411@mail.ru

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԻ «ԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ և ՏՈՆՈ ՏԱԼՅԱՆԸ» ԵՐԿԸ

Աշխատանքը նվիրված է Հրաչյա Սարիբեկյանի «Կեցությունը եւ Տոնո Տալյանը» երկին: Ստեղծագործությունը վերլուծելիս օգտագործել ենք կառուցվածքային և փիլիսոփայական մեթոդներ: Երկը դիտել ենք իրագործվածի և հավանականի փիլիսոփայական հարաբերության համայնապատկերում՝ փորձելով ամբողջացնել հեղինակի կողմից ներկայացված տարակերպ հակադրությունները: Ասվածն ավելի պարզ ցույց տալու համար օգտագործել ենք աղյուսակներ և սխեմաներ՝ օգտվելով կառուցվածքային գրականագիտության օրինաչափություններից:

Բանալի բառեր *՝ փոխարկելիություն, շարունակելիություն, կառուցվածք, իրագործվածի հարթություն, հավանականի հարթություն:*

Карен Манучарян
Ванадзорский государственный университет
098150411@mail.ru

ПРОИЗВЕДЕНИЕ ГРАЧИЯ САРИБЕКЯНА “БЫТИЕ И ТОНО ТАЛЯН”

Работа посвящена сочинению Грачия Сарибекяна “Бытие и Тоно Талян”. Анализируя произведение, использовались структурные и философские методы. Произведение рассматривалось в панораме соотношений реализовавшегося в философии вероятности, пытаясь привести в целостность, приведенные автором разногласия. Для наглядности использовались таблицы и схемы, пользуясь закономерностями структурного литературоведения.

Ключевые слова*: обратимость, продолжительность, структура, плоскость реализовавщегося, плоскость вероятности*

Karen Manucharyan
Vanadzor State University
098150411@mail.ru

HRACHYA SARIBEKYAN’S “SUBSISTENCE AND TONO TALYAN”

This work is dedicated to Hrachya Saribekyan’s “Subsistence and Tono Talyan” composition. In analyzing the work we have used structural and philosophical methods. We have viewed the composition in the philosophical context of the actual and hypothetical, trying to summarize the different juxtapositions presented by the author. To visualize the abovementioned, we have used tables and diagrams, using the patterns of structural Literary criticism.

Keywords*: interchangeability, continuity, structure, dimension of the committed, theoretical dimension*

«Կեցությունը և Տոնո Տալյանը» երկը վերջին տարիների հայ գրականության ուշագրավ երևույթներից է: Յուրօրինակ գաղափարական բովանդակությունն իր ընդգրկունությամբ պայմանավորել է ինքնատիպ կոմպոզիցիա և կերպավորման արվեստ:

Սկսենք ստեղծագործության թեմայից ու գաղափարական բովանդակությունից: Մեզ հետաքրքրող խնդրի տեսանկյունից սրանք առաջնայինն են, քանի որ յուրօրինակ կերպավորման արվեստն ու կոմպոզիցիան պայմանավորված են հենց սրանցով: Լայն առումով ստեղծագործությունն առհասարակ մարդկային կյանքի մասին է, ավելի կոնկրետ՝ դրա տարբեր հարթությունների. «Այն, ինչ կոչվում է մարդկային կյանք, բաղկացած է երեք հարթություններից, որոնցից երկուսը՝ ժամանակից ու տարածությունից դուրս չգիտակցված հնարավորը և հնարավոր չիրագործվածը, իսկ մեկը՝ ժամանակի ու տարածության մեջ հնարավոր իրագործվածը՝ հաճախ նույն ինքը՝ վատնած ժամանակը»:[1] Այս հատվածն ինչ-որ առումով բանալի է ողջ ստեղծագործության համար: Այստեղ արդեն որոշակիորեն գծագրված է բովանդակային ինքնատիպությունը: Պարզ է, որ մենք գործ ունենք ոչ թե իրականության

[1] **Հ. Սարիբեկյան**, Գուշակություններ հայելիներով, Երևան, 2003, էջ 64:

որևէ ոլորտի կամ տարբեր ոլորտների, այլ **ընդհանրացված իրականության և իրականությունից դուրս գոյություն ունեցող իրողությունների բախման կամ համագործակցության հետ:** Իրականության և իրականությունից դուրս գտնվող երևույթների հակադրությունները առաջ են բերում հավանականի և իրագործվածի, անցողիկի և հավերժի տարակերպ հարաբերություններ:[1] Իրականության մեջ պատկերվող յուրաքանչյուր երևույթ ունի այլ հարթության վրա գտնվող որևէ հակադրություն: Առաջին գլխում մենք հստակ կերպով տեսնում ենք իրականությունից դուրս գտնվող որոշակի երևույթներ, որոնք կարող ենք դիտել իրագործելի և անիրագործելի հավանականի համայնապատկերում:[2] Հեղինակի բնորոշմամբ՝ դրանք չգիտակցված հնարավորի և հնարավոր չիրագործվածի արտահայտություններ են: Պարզ է, որ Տոնո Տալյանի կողմից չկարդացված գրքերի ընթերցումը, գիրք գրելու հանգամանքը և կնոջ նվաճումը դուրս են իրագործվածի հարթությունից: Իրագործվածի հարթության վրա գտնվող Տոնո Տալյանի ճակատագիրը որոշակիորեն հակադրվում է չգիտակցված հնարավորի ոլորտին: Տոնո Տալյանի նմանակը իր տարբեր դրսևորումներով ներկայացնում է անցյալի կամ անորոշ ապագայի որևէ իրողություն, որ պատկանում է մեկ այլ հարթության: Այսպես՝ եթե Տոնո Տալյանի կողմից գրված գիրքը, չկարդացած գրքերի ընթերցումը և կնոջ նվաճումը ներկային հարաբերվում են անցյալի, ապա լոգարանի դիակը՝ անորոշ ապագայի մեջ: Առաջին դեպքում հստակ կերպով կարելի է նկատել իրագործվածի և հավանականի ցայտուն հակադրությունները, որոնք բացառում են այլ հարթությանը պատկանող դեպքերի ներթափանցումը իրականություն: Դրանք անիրագործելի հավանականի արտահայտություններն են. «Գրքերի մեջ նկատեց ևս մեկը, հեղինակ՝ Տոնո Տալյան: Վերցրեց գիրքը, ծանոթագրության մեջ կարդաց իր կենսագրականը: Բայց չէ՞ որ ինքը գիրք չի գրել, այդպիսի փաստ իր կենսագրության մեջ չկա: Եվ այդ պահին Տոնո Տալյանը հասավ պայծառացման ու հասկացավ, որ կա մեկ ուրիշ Տոնո Տալյան, որ ապրում է մեկ այլ հարթության վրա՝ ժամանակից ու տարածությունից դուրս»:[3] «Տոնո Տալյանը մտավ ննջասենյակ: Հոգնած էր, քնել էր ուզում: Անկողնում դարձյալ այդ նմանակն էր՝ մի կնոջ հետ սիրախաղ անելիս: Ճանաչեց. այն կինն էր, ում սիրում և ցանկանում էր»[4]: Երկրորդ դեպքում մենք գործ ունենք իրագործելի հավանականի հետ, քանի որ պատկերված գործողությունը ներկային հարաբերվում է անորոշ ապագայի մեջ և չունի որևէ հակադրություն իրականության վրա. «-Հիշու՞մ ես,-ժտաց դիակը,-երեկ դու լողանալիս ցանկություն ունեցար կտրել երակներդ: Դու ես ինձ կենդանություն տվել, Տոնո՛: Բայց ես դեռ տկար եմ, թեև քաղցկեղի նման կարող եմ լափել ուղեղդ»[5]: Տվյալ դեպքում մենք հստակ կարող ենք սահմանել այս երկու հարթություններին պատկանող պատկերների երկտիպ հարաբերությունները: Այսպես՝ եթե հավանականի հարթության գործողությունը իրագործվածին հարաբերվում է անցյալի մեջ, մենք գործ ունենք փոխարկելիական հարաբերության հետ, իսկ եթե այն հարաբերվում է անորոշ ապագայի մեջ, այդ հարաբերությունը շարունակելիական է:

Գծապատկեր 1



[1] Հավանականի և իրագործվածի հարաբերության մասին տե՛ս **Կ. Մանուչարյան**, Բացակաների ներկայությունը Արամ Պաչյանի «Ու՞ր ես, Լյով» և «Ցտեսություն, Ծիտ» երկերում, անտիպ հոդված:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] **Հ. Սարիբեկյան**, Գուշակություններ հայելիներով, Երևան, 2003, էջ 65:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում, էջ 66:

Այժմ փորձենք տեսնել գեղարվեստական այն հնարներն ու պայմանականությունները, որոնք ծառայում են անիմանալիի արտահայտմանը և չգիտակցված հնարավորի ու հնարավոր չիրագործվածի պատկերմանը: Հ. Սարիբեկյանը դրանք արտահայտել է գեղարվեստական ամենատարբեր հնարներով՝ պատրանք (Տոնո Տալյանի նմանակ, դիակ, զուգարանում նստած երեխա), երազ (հանդիպում մահվան հետ, կերպար-նախատիպային Տոնո Տալյանների հանդիպումը), մահ (իրական Տոնո Տալյան և մահ), գեղարվեստական իրականություն (իրական Մինաս Մինասյան և Մինաս Մինասյանի գեղարվեստական կերպար, նախատիպ Տոնո Տալյան և կերպար Տոնո Տալյան):

Աղյուսակ 1 *Իրականությունից դուրս գոյություն ունեցողն արտահայտելու գեղարվեստական հնարներ և ոլորտներ*

պատրանք (պայմ.)	երազ	մահ	գեղարվեստական իրականություն
Տալյանի նմանակ (գլուխ առաջին) դիակ (գլուխ առաջին) երեխա (գլուխ առաջին)	կերպար-նախատիպային Տոնո Տալյանների հանդիպում (գլուխ չորրորդ) հանդիպում մահվան հետ (գլուխ երկրորդ)	Տոնո Տալյան և մահ (գլուխ երկրորդ)	իրական Մինաս Մինասյան և Մինաս Մինասյանի գեղարվեստական կերպար (գլուխ երրորդ) կերպար- նախատիպային Տոնո Տալյաններ (գլուխ չորրորդ)

Գծապատկեր 2 *Իրականի և անիրականի երկաստիճան*



Վերջին գծապատկերում ներկայացված են իրականի և անիրականի երկաստիճան հակադրությունները: Երկու դեպքում էլ գեղարվեստական ելակետային հնարը երազն է, որը, սակայն, բացահայտվում է վերջում: Երկու դեպքում էլ իրականության մեջ ամփոփվածը և իրականությունից դուրս գտնվողը ներկայացնում են անցողիկի և հավերժի հակադրությունը: Գեղարվեստական կերպարը հավերժ է՝ ի հակադրություն մարդկային անհատի, և մահը հավերժ է՝ ի հակադրություն մարդկային կյանքի: Երկու դեպքում էլ այս հակադրության հիմքը մարդ արարածի՝ մահկանացու լինելու հանգամանքն է (գլուխ II և գլուխ IV):

Դառնանք առաջին պարբերությանը: Մինչև այժմ մենք իրականությունից դուրս գոյություն ունեցողը դիտարկում էինք որպես միասնական ոլորտ: Բայց հեղինակն այն բաժանել է ենթաոլորտների (չգիտակցված հնարավոր և հնարավոր չիրագործված): Տարածության և ժամանակի մեջ գոյություն ունեցող հնարավոր իրագործվածը հաճախ նույնացվում է վատնած ժամանակին (գլուխ առաջին): Փորձենք իրականությունը նույնպես բաժանել ենթաոլորտների: **Հաճախ** բառը հուշում է, որ վատնած ժամանակի և իրականության միջև լիակատար համապատասխանություն չկա: Վատնած ժամանակը իրականության ենթաոլորտն է: Փորձենք սխեմայի տեսքով ներկայացնել վերն ասվածը՝ իրականության մյուս ենթաոլորտը պայմանականորեն համարելով **արդյունավետ ժամանակ** (հեղինակը չի խոսում այս ենթաոլորտի մասին):



Տոնո Տալյանի կողմից չգրված գիրքը չգիտակցված հնարավորի դրսևորումն է (անիրագործելի հավանական), ինքնասպանությունը՝ հնարավոր չիրագործվածի (իրագործելի հավանական), զուգարանում նստած երեխան՝ վատնած ժամանակի: Ինչպես չկար արդյունավետ ժամանակի հիշատակումը, այնպես էլ բացակայում է դրա գեղարվեստական արտահայտությունը: Սա ցույց է տալիս, որ ինչպես չկատարվածն էր գերիշխում իրականությանը, այնպես էլ իրականության մեջ վատնումն է գերիշխում արդյունավետությանը:

Բովանդակային այսօրինակ բարդությունը պայմանավորել է կերպարային յուրօրինակ մտածողություն: Առհասարակ **գեղարվեստական կերպար** հասկացությունը այստեղ երբեմն ծառայում է որպես անիրականի ոլորտի արտահայտիչ: Եվ գեղարվեստական կերպարը այդ առումով հակադրվում է մարդկային անհատին:

Վերը նշված ոլորտների հերթափոխն ու հեղհեղուկությունը պայմանավորել են կոմպոզիցիոն յուրահատուկ եղանակներ: Առաջին պարբերությունն ունի «բանալի խոսքի» նշանակություն: Կոմպոզիցիոն կարևոր առանձնահատկություններ են ստեղծագործության մի գլուխը մյուսով փոխարինելու, գլուխը բացառելու կամ հաստատելու հանգամանքները (II և III գլուխներ):

Ուշագրավ է նաև սարիբեկյանական հումորը: Այն Սարիբեկյանի ինքնատիպ գեղարվեստական մտածողության յուրովի արձագանքն է: Հումորը հաճախ արտահայտվում է փակագծերում նշված այս կամ այն արտահայտության, նաև գլուխը եզրափակող նախադասությունների միջոցով: Առաջին գլուխը եզրափակող նախադասությունը կարելի է համարել **գործողությունն առկախ թողնելու հումորային**

«արդարացում». «Այդ պահին ես ծխախոտ էի վառում, իմ մի պահ անուշադրության պատճառով կորցրեցի հերոսիս, ինչի համար ներողություն եմ խնդրում քեզնից, իմ ընթերցող»[1]:

Աղյուսակ 2 *Իրականի և անիրականի տարաբնույթ հակադրություններ*

գլուխ	իրականություն	իրականությունից դուրս
առաջին	Տոնո Տալյան	նմանակ, դիակ, երեխա
երկրորդ	Տոնո Տալյան քնած Տոնո Տալյան	մահ երազ
երրորդ	Մինաս Մինասյան	Մինաս Մինասյանի գեղարվեստական կերպար
չորրորդ	նախատիպ քնած Տոնո Տալյան	կերպար երազ
հինգերորդ	լինե՛լ	չլինե՛լ
վերջաբան	ցուցանակ (պայմ.)	Տոնո Տալյանի պատմվածքների ժողովածու

Այսպիսով՝ Հ. Սարիբեկյանը ստեղծել է մի երկ, որի յուրաքաչյուր պատկեր ներկայացված է հակադրությունների համակարգում: Իրականության մեջ ամփոփվածի հարաբերությունը անիրականի ոլորտի հետ պայմանավորել է ուրույն պատկերային համակարգ, որի առանձին տարրերի փոխհարաբերությունները ստեղծել են այս երկի բարդ շինվածքը: Դրա ամբողջականությանը նպաստել են Հ. Սարիբեկյանի կողմից օգտագործված գեղարվեստական հնարները:

Գրականություն

1. Մանուչարյան Կ., Բացակաների ներկայությունը Արամ Պաչյանի «Ու՞ր ես, Լյով» և «Ցտեսություն, Ծիտ» երկերում, անտիպ հոդված:
2. Սանթոյան Մ., Գրականագիտական բառարան, Երևան, «Վան Արյան» հրատ., 2009, 280 էջ:
3. Սարիբեկյան Հ., Գուշակություններ հայելիներով, Երևան, «Զանգակ-97» հրատ., 2003, 76 էջ:

[1] Նույն տեղում, էջ 66:

ՀՏԴ 82-1

Պոեզիա
Մելինե Պետրոսյան
ԱրՊՀ, մագիստրատուրա 1-ին կուրս
osipyan_spartak@mail.ru

ԿՈՄԻՏԱՍ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՆ

Հոդվածում փորձել ենք հետազոտել Կոմիտաս Հակոբյանի պոեզիան:

Կոմիտաս Հակոբյանը բանաստեղծ-ազատամարտիկ է, ով ապրել է ընդամենը 22 տարի, բայց իրենից հետո թողել է հարուստ գրական ժառանգություն: Նրա բանաստեղծությունները երեք ոճով են՝ հայրենասիրական, փիլիսոփայական և սիրային:

Բանալի բառեր՝ բանաստեղծ, պատերազմ, բանաստեղծություն, սեր, հայրենասիրություն, փիլիսոփայություն

Meline Petrosyan
ArGU, magistratura 1-yi kurs
osipyan_spartak@mail.ru

THE POETRY OF KOMITAS HAKOBYAN

The poetry of Komitas Hakobyan. In this article, we examine the poetry of Komitas Hakobyan. Komitas Hakobyan, who was a soldier-poet, died at the age of 22, but left a rich literary heritage. His poems are of 3 types: patriotic, philosophical and romantic.

Keywords: soldier poet, war, poem, patriotic, philosophical, romantic.

Мелине Петросян
ASU, Master's degree 1st year
osipyan_spartak@mail.ru

ПОЕЗИЯ КОМИТАСА АКОПЯНА

В этой статье мы попытались исследовать поэзию Комитаса Акобяна.
Комитас Акобян поэт-освободитель, кто прожил всего 22 года, но оставил после себя богатое литературное наследие. Его стихи были в трех стилях-потриотические, философские и любовные.

Ключевые слова: поэт - освободитель, война, поэт, патриот, философ, любовные стихотворение.

20-րդ դարավերջին արցախահայության գոյապայքարի ողբերգահերոսական տարիներին ասպարեզ եկան զենքն ու գրիչը մեկտեղած տաղանդավոր երիտասարդ անհատականություններ, որոնցից էր Կոմիտաս Հակոբյանը:

Կոմիտաս Հակոբյանի նման բացառիկ անհատները ծնվում են ոչ միայն ժամանակի, այլև հող հայրենիի դարավոր սպասումից, դառնում ազգային ճանապարհի հոգևոր խորհրդանիշ, կորուստներն ու վերագտնումները կամրջող անբեկանելի գաղափար:

Կոմիտաս Հակոբյան. Արցախի պետական համալսարանի բանասիրական բաժանմունքի ուսանող: Ծնվել է 1972 թ-ի հունիսի մեկին՝ Արցախի Քերթ գյուղում:

Երբ արցախյան շարժումը պարտադրաբար մտավ զինված պայքարի փուլ՝ գերազանցիկ ուսանողը կամավոր զինվորագրվեց հայրենիքի պաշտպանության սրբազան գործին՝ մարտական գործողությունների ընթացքում դրսևորելով անկոտրուն ոգի, հասուն կամք, արժանապատիվ ինքնություն:

1993թ-ին Ստեփանակերտում լույս տեսավ Կոմիտաս Հակոբյանի պոետական հայտնությունը ազդարարող <<Գոյության պատրանք>> ժողովածուն: Սկիզբը անսովոր էր ու խոստումնալից: Ընթերցողի գրասեղանը ժամանակի ընթացքում պետք է իմաստավորվեր Հակոբյանի ուրիշ ժողովածուներով ևս, սակայն նախախնամության կանխորոշումը այլ էր, պատերազմական իրավիճակում կանխատեսելի, բայց և անընդունելի: 1994թ-ի մայիսի 5-ին Կոմիտասը զոհվում է ազատագրական մարտերից մեկում՝ հետմահու պարգևատրվելով ԼՂՀ արիության համար մեդալով:

1997 – ին Երևանում լույս տեսավ Կոմիտաս Հակոբյանի <<Նվիրում>> խորագրով երկրորդ ժողովածուն: Գիրքն ընդգրկում էր նաև հեղինակի օրագրային գրառումները, որոնք ավելի առարկայական, ընդգրկուն են դարձնում զինվոր-բանաստեղծի ստեղծագործական

անհատականությունը: Կոմիտաս Հակոբյանի բանաստեղծական հայտնությունը անմիջապես նկատեցին հայ գրականության երևելի դեմքերից շատերը: <<Բանաստեղծ-զինվոր Կոմիտաս Հակոբյանը,-նկատում է Մետաքսեն,- իր ստեղծագործական աշխարհի խարույկն ունի, որ հրավառել է իր սեփական արյան կարմիր գնդիկներով, որոնք, մեկիկ-մեկիկ բոցավառվելով, պիտի լուսավորեն աստղերի միջով ձգվող նրա հավիտենական ճանապարհը>>[1]:

Գիրքը նկատողների մեջ էր նաև Սերո Խանզադյանը.

<<Ծավալով սրտի պես փոքր, բայց սրտի պես կյանք ու ոգի կենդանի պահող բանաստեղծական այս պատառիկները,-գրում է նա,- համազգային արժեքներ են: Կարդացի և Ղարաբաղի նկատմամբ ունեցածս հպարտությունը դարձավ անեզեր, հավատս՝ աներեր>>[2]:

Կոմիտասի դասախոս, լեզվաբան ու բարբառագետ Գուրգեն Բաղդասարյանը հիշում է. <<Զինվորի հագուստը շատ էր սազում նրան: Երբ որ այդ հագուստով մտավ լսարան, ես իսկույն հիշեցի Թաթուլ Հուրյանին: Տարբերությունը ժամանակային էր: Թաթուլը Մեծ հայրենականի մասնակից էր, իսկ Կոմիտասը՝ Արցախյան պատերազմի: Երկուսին էլ վիճակված էր նույն ճակատագիրը՝ հայրենիքի համար հերոսաբար մարտնչել ու զոհվել>>[3]:

Կոմիտաս Հակոբյանը միանգամից հռչակեց իր ստեղծագործական անհատականությունը: Նրա բանաստեղծական արվեստը հատկանշվում էր գեղարվեստական ինքնատիպության, պատկերային առանձնահատուկ համակարգով, անսովոր բառընդերքով, հոգեխույզ մտահայացքով, մտքի անորսալի թռիչքներով:

Հակոբյանի բանաստեղծությունների մեջ ծանրակշիռ տեղ ունեն հայրենասիրական ստեղծագործությունները:

Պատերազմի կնիքով դրոշմված օրվա ընթացքն է պատկերվում այս բանաստեղծության մեջ.

Արևածագին խաղաղ էր օրը,
Ջերմ էին շնչում շնչավորները արևածագին,
Իսկ իրիկնացող օրվա անդորրը
Հեղեղվեց հեղձուկ օդով վառոդի:

Բանաստեղծը պատկերակերտման արտասովոր եղանակներով, մտքի սրությամբ և խորաթափանց մտահայացքով է անդրադարձնում վերջալույսի թախծոտ ժպիտը՝ ուղղված հրանոթերից ծխացող մայր հողին.

Իրիկնանում էր: ՈՒ մարտադաշտում
Ծխում են խփված հրասայլերը,
Վանք իմ, թծնամուն ի տես կարկառվիր,
Որ ննջեն հաղթած նահատակներդ:

Պոետական հանճարով օժտված երիտասարդը հոգեցունց ապրումներ է ունենում, երբ մարդը վերադառնում է նախամարդու տեսակին՝ սպանում, ավերում, վայրագություններ սփռում. բանաստեղծի հարցադրումը ձեռք է բերում համամարդկային հնչեղություն:

Տեսել եք, արդյոք
Ոնց է սպանում
Մարդն իր նմանին,
Տեսել եք, ոնց են
Անտեր շները:

<<Ախ աղջկայք դիցուհիներ>> բանաստեղծության մեջ պոետի հոգին կարոտ է սիրո, տաք շնչի, ներդաշնակ զգացողությունների: Պատերազմի թոհուբոհում հայրենանվեր զինվորի ցավն ու կարոտը կարող են սփոփել ազգի սերուցքն արարող զգայուն ու խորախորհուրդ էակները:

[1] Ափսոսանքի մորմոք, Մետաքսե
[2] Սերո Խանզադյան, Մենք ենք մեր սարերը, Ողջունում եմ, Արցախ 1993
[3] Գուրգեն Բաղդասարյան, Մարտիկ, Գոյության պատրանք և պատրանքի գոյություն, Արցախ, 1995թ.

Ախ, աղջկայք դիցուհիներ,
Չի համբուրել ձեզնից ոչ ոք
Ցեխոտ շուրթս խրամատում,
Չի ջերմացել սառցակալած օրերի մեջ
Դեմքս երբեք ձեր տաք շնչից:

Հոգեխույզ բանաստեղծը կանխազգում էր տարաժամ մահվան գալուստը, բայց ինքնակեղեքմամբ ու հոգեբանական տագնապներով չէր օղակում ես-ի մայրամուտը, որովհետև անանձնական երջանկության զգացումն ավելի հախուռն էր, հաղթող.

Մի օր կծրարես
Իմ վարքը՝
Որպես հիշողություն…
Ես չեմ լինի:
Ես ուրվականների ուղեկցությամբ
Կհասնեմ հրեշտակների մոտ,
Նրանք իրենց մարմնից
Կառնեն ոգին
Ու ինձ կձեռնադրեն
Անդրերկրյան առասպելների քահանա:

Արտասովոր տարերային հույզերով ու պատկերներով է հագեցած Կոմիտաս Հակոբյանի սիրային պոեզիան:

Սեր, որը հասունացման հոգևոր ճանապարհին դեռևս բազմաթիվ ցնորաբեր գիշերների տարերքով պիտի անցներ՝ հավիտյան և մեկընդմիշտ ամրագրվելու.

Ափդ կատարյալ չէ՝
Իբրև ինթ մոմակալ,
Ես դեռ պիտի լացեմ
Ամրանալու համար:

<<Քեզ>> բանաստեղծության մեջ երջանկության ափերից հեռացած քնարական հերոսը սիրո անդարձ մոռացումն է վերապրում, սակայն ինչքան ուժգին է ժխտում սերը, այնքան ամրագրում է նրա կենսահաստատ ուժը.

Իմ լուսե երազները
Հանգչում են մոմե լրջությամբ,
ՈՒ քո անունը ծերանում է իմ մեջ:
Քեզ հիշելուց արյունս ցավում է:

Հենց այս հոգետանջ ցավի մեջ է ինքնահաստատվում սերը:

Սիրո անօրինակ հրճվանքի, ներդաշնակ հոգեվիճակի արտացոլք է հետևյալ բանաստեղծությունը, որն ուղեկցվում է զգայական անընդգրկելի վայրիվերումներով.

Երբ էր արդյոք հիշում ես,
Երբ ես գինով գիշերվա
Երակի մեջ ոսկեղեն
Քո շուրթերի կրակով
Աստվածացա քո գրկում:

Սիրո հավիտենական ճամփորդ քնարական հերոսն իր գոյության ողջ ընթացքը քննելով՝ փորձում է ճանաչել կյանքի յուրաքնչյուր հյուղեն.

Հիմա ես այնքան եմ մեծացել,
որ հազիվ թե հիշեմ
տարիները իմ անդրսերյան,
ու … այնտեղ է իմ սկիզբը,

այն անզուսպ գիշերվա
և լուսնի կաթնագույն
հիշողության մեջ:

Իր երիտասարդ տարիքին գերազանցող մտահորիզոն ուներ բանաստեղծը: Այդ են վկայում նրա խոհափիլիսոփայական բավականին հասուն ստեղծագործությունները.

Բանաստեղծն ի սկբանե զգում էր, որ աշխարհ է եկել առասպելանալու, բայց հաղթության գինին ըմպելուց հետո միայն, և իր յուրօրինակ անձնվիրությամբ վերծանեց առասպելացման խորհուրդը.

Որպես երևույթ առասպելանալ
Իմ անձեռակերտ
Հուշերի խորքում:

Աստվածային ձիրքով օժտված երիտասարդը ձգտում էր հասնել ու ձուլվել աստվածների մոգությանը: Սա փիլիսոփայական մտասևեռում է, որն անշուշտ ունի բազմաշերտ ընդերք.

Օ՛ լիներ մի ձայն,
Որ ինձ հաղորդության տաներ
Աստվածների:
Ես իմ էությանը կմիախառնեմ
Նրանց մոգությունը,
Ու կվերադառնամ … ոգեղենացած:

Կյանքի սովորական, առօրյա ընթացքը բանաստեղծական ես-ի համար չէ: Ինչպես Ավ. Իսահակյանն է ասում <<Կյանքն առանց թռիչքի գին չունի>>:

Ճշմարիտ բանաստեղծի սլացքն ազատ է, անորսալի, սովորական մահկանացուի համար անըմբռնելի: Կոմիտաս Հակոբյան բանաստեղծի խառնվածքը չհանդուրժեց սողացող մարդու անարգ տեսակը.

Տուր ինձ ապրելու
մի այլ ձև,
դուրս մղիր ինձ
քո մգլոտ երակի միջից,
ես ճախրանքի համար եմ ծնվել

ժամանակի փոշին չկլանեց Կոմիտաս Հակոբյանի փոքրիկ, բայց մեծ հատընտիրը: Կոմիտաս Հակոբյանը իր չապրած օրերի տերն է այսօր և այդպես կլինի ընդմիշտ՝ հավիտյանս հավիտենից:

Օգտագործված գրականության ցանկ

1. Սերո Խանզադյան, Մենք ենք մեր սարերը, << Ողջունում եմ>>, Արցախ 1993թ:
2. Գուրգեն Բաղդասարյան, ,<< Գոյության պատրանք և պատրանքի գոյություն>>, Մարտիկ, Արցախ, 1995թ:
3. Հակոբյան Կ., Նվիրում, ‹‹Առերեսում››-Անի հրատ. համալիր, Ե., 1997, 74 էջ:
4. Արիս Գրիգորյան, <<Բանաստեղծի գոյությունը>>, Մարտիկ, 2007, հունիս:

ՀՏԴ 82-9

Գրականություն

Շուշան Ներսեսյան
Վանաձորի պետական համալսարան, 2-րդ կուրս
armenia.armenia.2012@mail.ru

ԹԻՖԼԻՍԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԸ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

«Թիֆլիսի գեղարվեստական կերպարը հայ գրականության մեջ» հոդվածում կոնկրետ գործերի հիմքով փորձել ենք ներկայացնել հեքիաթային Թիֆլիսը՝ որպես «ուրախ հարսանքատուն», կենցաղը, վարքուբարքը, մարդկանց՝ իրենց յուրօրինակ կենսափիլիսոփայությամբ

Բանալի բառեր՝ *Հին Թիֆլիս, Հավլաբար, Սեյիդաբաթ և Սոլոլակ, գոզալներ, գեներալ-դամաներ, զիմզիմովներ, կինտո-դարաչոխելի, պեպոներ, լոտոյախաղեր, վեչերներ*:

Шушан Нерсесян
Ванадзорский государственный университет, второй курс
armenia.armenia.2012@mail.ru

ХУДОЖЕСТВЕННЫЙ ОБРАЗ ТИФЛИСА В АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЕ

При анализе статьи "Художественный образ Тифлиса в армянской литературе" основываясь на конкретных произведениях, представляется сказочный Тифлис как "радостный свадебный дом", быт , нравы и обычам и людей с их необычной жизнерадостной философией.

Ключевые слова. Старый Тифлис, Авлабар, Сейидабат и Сололак, гозалы, генеральши, зимзимовы, кинто-карачохели, пепы, игра в лото, вечера.

Shushan Nersesyan
Vanadzor state university, 2nd year
armenia.armenia.2012@mail.ru

THE ARTISTIC IMAGE OF TBILISI IN ARMENINAN LITERATURE

In the article "The artistic image of Tbilisi in Armeninan literature" on the basis of different works we tried to represent fairy Tbilisi as "a cheerful wedding place", its way of life, customs and people with their unique life philosophy.

Keywords. Old Tbilisi, Havlabar, Seydibat and Sololak, beauties, lady –generals, the zimzimovs, kinto-gharachokhely, the pepos, lottery games, evenings.

Մի քիչ տուտուց էր Թիֆլիսը, մի քիչ իմաստուն, մի քիչ շռայլ, ասպետ ու դարդիմանդ…
Ա. Այվազյան

«Էն մի առանձին, յուրատեսակ աշխարհիք էր, որի մեջ եկել միացել էին կովկասյան ժողովուրդներն ամենքն իրենց առանձնահատուկ կյանքով ու երանգով և հորինել էին ազգերի մի վերին աստիճանի գրավիչ ու հետաքրքրական խառնուրդ ու կյանք: Եվ որովհետև էդ կյանքին տոն տվողը վրացական անհոգ ու զվարթ ոգին էր, էդ պատճառով էլ հին Թիֆլիսը իրարու խորթ տարրերի էտնոգրաֆիական մի ժողովածու չէր հանդիսանում, այլ մի ուրախ հարսանքատուն, ուր հրավիրված էին Կովկասի բոլոր ազգերն ու ցեղերը – քեֆ քաշելու: Տեսնողը զարմանամ էր, թե՝ էս մարդիկը ե՞րբ են աշխատում, որ էսպես շարունակ ուրախանում են ու պար գալի: Էսպես էր ապրում հին Թիֆլիսը – գժի նման»[1]

Երկար տարիներ Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսը իր հարկի տակ է հյուրընկալել հայ մտավորականությանը: Հայ գրողներից շատերը, կերտելով Թիֆլիսի գեղարվստական կերպարը, հայ գրականություն են բերել Թիֆլիսն իր բնակիչներով, իր վարք ու բարքով, իր սովորույթներով ու կենցաղավարությամբ: Այս հոդվածում մեր նպատակն է քննել Թիֆլիսի գեղարվեստական կերպարը մի քանի հայ գրողների գործերում, մասնավորապես՝ ուշմիջնադարյան բանաստեղծներ Նաղաշ

[1] **Հովհաննես Թումանյան,** Երկերի ժողովածու, հ 4, «ՀԱՅՊԵՏՀՐԱՏ» հրատարակչություն, Երևան, 1951, էջ 236: Այսուհետ՝ ՀԹ:

Հովնաթանի ու Սայաթ-Նովայի տաղերում, ականավոր դրամատուրգ Գաբրիել Սունդուկյանի ու արձակագիր Նար-Դոսի գործերում, որոնք ներկայացրել են մասնավորապես Թիֆլիսի մի քանի հայտնի թաղամասեր և արձակագիր Աղասի Այվազյանի ստեղծագործություններում: Հեղինակների ստեղծագործություններում Թիֆլիսն ամբողջանում է իր գեղեցկուհիներով, իր բնակիչներով և իր թաղամասերով:

Առաջիններից մեկը, որ կերտեց Թիֆլիսի գեղարվեստական կերպարը, ուշմիջնադարյան բանաստեղծ Նաղաշ Հովնաթանն էր: Հեղինակն իր կյանքի մի մասն անց է կացրել Թիֆլիսում, ըստ որոշ տեղեկությունների[1]՝ նա ապրել ու ստեղծագործել է վրաց արքա Վախթանգ Վեցերորդի պալատում: Թիֆլիսը, նրա բնությունն ու գոզալները, չէին կարող անտարբեր թողնել գեղեցիկը տեսնող ու փառաբանող, գեղեցիկին անհաշիվ դրվատանքներ շռայլող Նաղաշին ու չազդել նրա ստեղծագործական մտահորիզոնի վրա: Թիֆլիսյան կյանքի անմիջական ներգործությամբ էլ ստեղծվեց «**Տաղ ի վերայ Գուրջստանայ գօզալներին**» տաղը, որի մեջ օրհներգված են Թիֆլիս քաղաքն ու նրա գեղեցկուհիները: Տաղի հենց առաջին տողում ակնհայտ է հեղինակի վերաբերմունքը Թիֆլիսին, նա տաղն սկսում է՝ գովերգելով նախ Թիֆլիսը, ապա Թիֆլիսի գոզալներին. ***«Գովեմ սրտիւ ուրախական Թիֆլիզ քաղաքն պատուական»***: Հեղինակը գովերգում է Թիֆլիսն՝ այն անվանելով **պատվական, շեն** քաղաք: Հովնաթանի գովերգած Թիֆլիսը շեն էր, որովհետև այնտեղ էին ապրում ***խաթունները, արմատանները, թաւադները*** *(սրանցից յուրաքանչյուրը այս կամ այն կերպ առնչվում է ազնվական միջավայրին.* ***արմատանը***՝ *հազվագյուտ, գեղեցիկ,* ***թավադը*** *ազնվական տիտղոս է Վրաստանում,* ***խաթունը***՝ *տիկին, տիրուհի):* Այսպիսի գոզալներին սազական է միայն ճոխ Թիֆլիսը: Մի Թիֆլիս, որտեղ հորդում էր սերը, գեղեցիկը, գույներից՝ կարմիրը, ծաղիկներից՝ վարդը, խմիչքներից՝ գինին (թիֆլիսյան գինետների մասին հետագայում կխոսի Աղասի Այվազյանը): Նաղաշ Հովնաթանը հանգամանորեն նկարագրել է գոզալներին՝ պատկերելով նրանց արտաքին ֆիզիկական տվյալները, հագուկապը, շարժուձևը ու մարդկանց վրա ունեցած ներգործությունը: Գոզալներն ունեն ***վարդի նման կարմիր երես***, ***կամար կապած դալամ ունքեր***, ***շամսի դամար վառ աչքեր***, ***դասատայ ոլորած վարսեր***, ***մուբարակ***(վայելուչ) ***բոյ***, ***լայն բատան***(թիկունք), ***քաղցր լեզու***, ***համով խոսք***, գոզալները հագել են ***աթլաս***, կապել են ***մուրասայ քամար***, քայլում են սիրամարգի նման ու ոսկե ջամով գինի են խմում: Մի խոսքով. այս գոզալները ***«ուշք ու խելք կտանեն մարդի»:*** Ճիշտ նույն կերպ Գուրջիստանա գոզալների մասին խոսել է նաև հայ գրող, մանկավարժ, հրապարակախոս Մեսրոպ Թաղիադյանը, իր «**Ճանապարհորդություն ի Հայս**» ուղեգրության մեջ[2]՝ մասնավորապես նշելով. «*Բնակիչք նորա հռչակավոր են ի գեղեցկութիւնս մարմնոց իւրեանց. իրանք նոցա նոճօրէն ածեալք, հերքն թուխ, աչկունքն արեգակունք, մորթք սպիտակուկարմիր, միջկունքն բարակ, և լեզուք անուշախոսք՝ յօրինեն զնոսա ցանկալիս ամենայն ազգաց…*»(ՄԹ, 169): Մեծագույն բանաստեղծ Եղիշե Չարենցը իր «Տաղարան» շարքի բանաստեղծություններից մեկում նույնպես պատկերում է Գյուրջիստանն ու իրեն շլացրած մի գոզալի. «*Ես մի անգին գոզալ տեսա-Գյուրջիստանի քաղաքումը,- Վզին՝ վարդեր ու խալ տեսա- Գյուրջիստանի քաղաքումը: Կանգնել էր լեն քույհ մեջը, հագին ատլաս ու խաս ուներ, Գլխին ոսկի ու շալ տեսա-Գյուրջիստանի քաղաքումը*»[3]: Գեղեցիկը տեսնող ու փառաբանող երգիչ Նաղաշ Հովնաթանը ոչ միայն տաղերգու էր, այլև նկարիչ: Ահա նկարչի հմտությամբ ամենավառ գույներով ու երանգներով է պատկերել գոզալներին ու նրանց Թիֆլիսը՝ գրականություն բերելով կենդանի, խոսուն Թիֆլիս, որտեղ ***«Ես՝ Նաղաշս մեղաց ծով եմ, Նոցա սիրովն գինով եմ, Խապար չեմ թե ինչպե՞ս գովեմ՝ Շեն Թիֆլիզու թաւադներեն»***: Նաղաշ Հովնաթանի այս տաղի լավագույն շարունակությունը Սայաթ-Նովայի թողած գրական հարուստ ժառանգությունն է: Եթե Նաղաշ Հովնաթանը իր կյանքի մի ինչ-որ հատված անցկացրեց Թիֆլիսում, ապա նույնը Սայաթ-Նովայի մասին ասել չենք կարող: Նա ծնվել ու կյանքի զգալի հատված է անց կացրել Թիֆլիսում: Նախ նշենք, որ հեղինակի մայրը ծնունդով Թիֆլիսի Հավլաբար թաղամասից էր, ինքը՝ Սայաթ-Նովան բազմիցս ոգեշնչվել է թիֆլիսյան միջավայրով, որի բնակիչն էր ինքը: Ինչպես նշում է Հենրիկ Բախչինյանը իր «**Սայաթ-Նովա**» աշխատության մեջ[4]

---

[1] **Հայ քնարերգության մատենաշար,** Նաղաշ Հովնաթան, տաղեր, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1983, էջ 6:

[2] **Մեսրոպ Թաղիադյան,** Ուղեգրություններ, Հոդվածներ, նամակներ, վավերագրեր, «Հայկական ՍՍՀ ԳԱ» հրատարակչություն, Երևան, 1975: Այսուհետև՝ ՄԹ:

[3] **Եղիշե Չարենց**, Երկերի ժողովածու, հ 1, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1986:

[4] **Հենրիկ Բախչինյան**, Սայաթ-Նովա, կյանքը և գործը, «Հայկական ՍՍՀ ԳԱ» հրատարակչություն, Երևան, 1988: Այսուհետ՝ ՀԲ:

«Սայաթ-Նովային ծնող ու սնող միջավայրը 18-րդ դարի Վրաստանն էր» (ՀԲ, 23), նույն հեղինակը վկայում է նաև, որ ***«Սայաթ-Նովան կյանքի մեծ մասն ապրել է Քարթլիի մայրաքաղաք Թիֆլիսում»*** (ՀԲ, 26): Հենրիկ Բախչինյանն իր աշխատության մեջ բերում է վրաց աշխարհագիր Վախուշտիի վկայությունը Թիֆլիսի կառուցվածքի մասին. *«Թիֆլիսը 18-րդ դարում բաղկացած էր երեք հիմնական մասից՝ բուն քաղաքը, Կալան կամ Բերդի շրջանը և Իսանին կամ Հավլաբարը: Բուն Թիֆլիսը և Հավլաբարը համարվել են հայկական, իսկ Կալան վրացական թաղամաս»* (ՀԲ, 26): 18-րդ դարի Թիֆլիսը գտնվում էր մի շարք ճանապարհների հանգուցակետում, ինչը մեծապես նպաստում էր առևտրի զարգացմանը, այդ ճանապարհներով անցնող քարավանները հետագայում իրենց պատկերավոր արտահայտությունն են գտել Սայաթ-Նովայի ստեղծագործության մեջ: Բնականաբար, պատկերվածը Հին Թիֆլիսն է՝ իր ողջ ճոխությամբ: Հինթիֆլիսյան ճոխությանը զուգահեռ ներկայացվում է այն կյանքը, որով ապրում էր թիֆլիսեցին՝ խնջույքներ, քեֆեր, երգ ու երաժշտություն, գինի, անվերջ շարունակվող ուրախություններ: Հին Թիֆլիսում մի ուրիշ երևույթ էր կինտ - ղարաչոխելիների աշխարհը, առանց որի Թիֆլիս քաղաքը լիարժեք չէր լինի: Իհարկե, Թիֆլիսն ունեցել է նաև տխրության պահեր, բայց թիֆլիսեցին իր քաղաքի տխրության հետ տխրել, ուրախության հետ ուրախացել է: Այսպիսին էր, ահա Հին Թիֆլիսը՝ ***«այն քաղաքը, որի ուրախություններից ու վշտերից, երգերից ու վերքերից ծնվեց մեծ մարդասերն ու սիրահարը, մեծ բանաստեղծն ու գուսանը, որին անհնարին է ճանաչել ու հասկանալ առանց Թիֆլիսի, և Թիֆլիսն էլ՝ առանց Սայաթ-Նովայի»*** (ՀԲ, 31-32):

Սայաթ-Նովայի ստեղծագործական գործունեությունը համընկավ Հերակլի գահակալության տարիներին, երբ Սայաթ-Նովան աշխատում էր Հերակլի պալատում՝ որպես պալատական երգիչ, աշուղ: Վրաց պատմագրության, այնուհետև սայաթնովագիտության մեջ տարածված է եղել այն կարծիքը, որ վրաց արքայի պալատում գտնվելու տարիներին աշուղը սիրահարվել է վրաց Թեյմուրազ արքայի դստերը՝ Հերակլի քույր Աննա Բատոնաշվիլիին: Սայաթ-Նովայի սիրո առասպելը դեռ վերջնականորեն բացահայտված չէ, անընդհատ քննարկումների առարկա է դառնում այն, թե կոնկրետ ով է եղել Սայաթ-Նովայի գոզալը, այն մեկը, որ ոգեշնչման աղբյուր է եղել աշուղի համար: Բայց նրա թողած սիրերգությունը լավագույն ապացույցն է այն բանի, որ այնուամենայնիվ եղել է այն գոզալը, որ կարողացել է Սայաթ- Նովային բացահայտել որպես սիրերգակ ու դարձնել վարդի և սիրո երգիչ: Սայաթ- Նովան շարունակեց Հովնաթանի՝ կնոջ կատարելության գովն ու այն բարձրացրեց մի նոր մակարդակի: Սայաթ-Նովայի գոզալն էլ է շքեղ, գեղեցիկ, ճոխ: Բանաստեղծը իր գոզալին բնութագրելու համար ընտրել է մի կատարյալ գունավոր բառարան, որ կարող էր ունենալ միայն կատարելությանը սիրահարված բանաստեղծը, և այդ բառարանից հատ-հատ ընտրել է բառեր ու գովերգել է իր գոզալին: Նա երգել է արտաքին գեղեցկությունը. ***ռանգը***(գույնը)՝ ***շաքար***, աչքերը՝ ***կարմիր վարթ, ակնակապ թաս, օսկե փիալա, ակոեքը***(ատամները)՝ ***մարջրիտ, ալմաս, լիգուն՝ շաքար, պռոշը***(շրթունքը)՝ **ղանդ**, մեջքը ***ջեյրանի*** է կամ ***սալբու՝ չինարի պես***, ***ձեները՝ քաղցր*** և այլն: Բանաստեղծը չի խնայել ու շռայլել է իր գոզալին լավագույն բառերը, համեմատել նրան թռչունների հետ՝ ***կրակե ծովեմեն դուրս եկած ռաշ***(առասպելական ձի) ու ***ջեյրան***, ***թութի դուշ***, ***ռաշ նազան***, թանկագին քարերի հետ՝ ***պատվական անգին ջավահիր***, ***ծովեմեն դուրս եկած զարա ուլունք***, ծաղիկների հետ՝ ***հուտով հիլ, միխակ, դարիչին, վարթ, մանիշակ, սուսամբար, կարմրագույն դաշտի ծաղիկ, հովտաց շուշան***, համեմատում է նրան լուսնի՝ ***ջավահիր լուսին***, արեգակի՝ ***արեգակի նման փարա***, ***արեգակի դեմըն փար***, սուլթաննորի ու խաների հետ՝ ***սուլթան ու խան իս, լալ- բադեշխան իս*** և այլն: Չնայած Սայաթ-Նովան ստեղծագործեց երեք լեզուներով, այնուամենայնիվ հրաշալի կերտեց ու իր ստեղծագործական աշխարհ բերեց մի չորրորդ լեզու, այն է թիֆլիսահայ բարբառը, որով էլ անմիջական կապ ստեղծեց իր ու ընթերցողի միջև: Թիֆլիսահայ բարբառով գրված նրա տաղերը լավագույններից են նրա թողած գրական ժառանգության մեջ:

Թե՛ Նաղաշ Հովնաթանը, թե՛ Սայաթ-Նովան երգեցին Թիֆլիսը՝ այն պատկերելով արտակարգ գույներով, վառ պատկերներով, ճոխ ու չկրկնվող կենցաղավարությամբ: Բերելով գեղարվեստական պատկերներ՝ կերտեցին **գոզալների Թիֆլիսը**:

Սայաթ-Նովայի ժամանակներից անցել էր ավելի քան հարյուր տարի, երբ Թիֆլիսը ծնունդ տվեց հայ մեծ դրամատուրգին՝ Գաբրիել Սունդուկյանին, որ ճակատագրի բերումով շատ թելերով հավերժ կապված մնաց Թիֆլիսին: Ծնվեց, ապրեց ու ստեղծագործեց Թիֆլիսում: Հարյուր տարին քիչ ժամանակ չէ սերնդափոխության համար. փոխվել էին մարդիկ, չէր փոխվել Թիֆլիսը. նա նորից գունավոր էր , ճոխ, խրախճանքներով, քեֆերով, «վեչերներով»: Սունդուկյանն իր ստեղծագործության մեջ կողք կողքի պատկերեց երկու Թիֆլիս: Նույն քաղաքի երկու իրարից ծայրաստիճան տարբեր

թաղամասեր՝ նույնպիսի տարբեր բնակիչներով: Ահա Թիֆլիսի թաղամասերից մեկը **Մեյիդաբաթը**՝ աղքատների թաղամասը և, ինչպես հեղինակն է ասում ***երանելի*** **Սոլոլակը**՝ հարուստների թաղամասը: Հենց իր հերոսներից մեկի՝ Մակակոյի խոսքով էլ ներկայացնում է այդ երկու թաղամասերի հավերժական հակամարտությունը. *«Աբա վու՞նց կուլի, վուր էս հանգի լեն քուչումը, էս հանգի անցուդարձանողներումը, էն հանգի լաչաթրիան բիջը նրանն էրևա, ի՞նչ կոսին: Իրանց թաղումը-Մեյիդաբաթումը, Մեյիդնումը, նիղ քուչերումը, էլի գլուխը քարը տա, յոլա էր գնում բանը. Ամա էստի-Սոլոլակումը քաղաքն ուրիշ քաղաք էր, քուչեն ուրիշ քուչա էր, մարթիքը ուրիշ մարթիք էին ու կնդիրքը-ուրիշ կնդիրք»*[1], մեկ այլ հատվածում ավելացնում է՝ *«Քուչեն էն էր, տնիրն էնդունք. Ամա ի՞նչեմեն է էլի, յա վո՞ւնց է էլի, մե բաշ դիփ մետի երկու երիք գազ բացրացիլ է: Գանա տունն էլ ծա՞ռ է, վուր իրան իրան բացրանա…»* ու *«Էս խո ձիր քուչեն չէ, վուր անդերութենեմեն ցիխը ցիխի վրա, ախպն ախպի վրա, տարես տարի վրեն էնդադա ավելցիլ է, վուր մե քանի տներու ներքի էտաժը հիմի հենց բռնե սարդափ է կտրվի: Դեմուդեմի տնիրը խո մե հեստի շինվել էր, հեստի հանգի ներկվիլ էր, վուր կոսեր թաքավուրական պալատնիր ըլի: Ի՛նչ փարշևանդնիր, ի՛նչ արծըվնիր, ի՛նչ բաբաթ բաբաթ վարթիր ու ծաղիկնիր, ալիբաստրեմեն շինած էստի էնդի պատերու վրա կպցրած էին, վուրը դռներու ու ագռղկերու գլխներու վրա, վուրը սրանց տակն ու կղկներու վրա. Ինչ ցուգրումելա պստի բալկոննիր օրփեր ատլասի նման ներկած…»*(ԳՍ, *212*): Թիֆլիսում, ինչպես վերը նշեցինք, բնակվում էին ամենատարբեր սոցիալական շերտերի մարդիկ, կողք կողքի ապրում էին զիմզիմովներն ու պեպոները, գեներալ դամաներն ու կինտո-ղարաչոխելիները, և սրանցից յուրաքանչյուրը լրացնում էր մնացածին, առանց ցանկացած մեկի Թիֆլիսը կիսատ կլիներ, չէր լրիվանա: Ահա այդ լրիվության մի մասն էր կինտո-ղարաչոխելիների ստեղծած միջավայրը: Սրանց մասին Բախչինյանը վկայում է. *«իրենց արդար վաստակով ապրող և իրենց վաստակածը զվարթորեն վայելել կարողացող այդ կենսարար արհեստավոր-առևտրականները իրենց սրամտություններով, ժողովրդական հյութեղ բառ ու բանով, թևավոր խոսքերով մի յուրահատուկ կոլորիտ էին տալիս քաղաքին՝ նրա առօրյան դարձնելով գունեղ ու տոնական»* (ՀԲ, 30): Ահա այն միջավայրը, որ ստեղծել էին կինտո-ղարաչոխելիները ու տարածել ողջ Թիֆլիսում: Գրականության մեջ կինտոների լավագույն ներկայացուցիչը Պեպոն է: Ահա պեպոներին է վիճակվել պայքարել զիմզիմովների, զամբախովների՝ անկուշտ թալանչիների դեմ՝ փորձելով մաքուր պահել իրենց ու իրենց նմանների՝ հալալ աշխատանքով ապրող մարդկանց անունն ու պատիվը: Սունդուկյանը հրաշալի գույներով է պատկերում նաև թիֆլիսյան վեչերները, որ կազմակերպում էին գեներալ դամաները: Ահա այդ վեչերները դառնում են բամբասանքի լավագույն աղբյուր: Վեչերի մասնակիցները իսկական թիֆլիսյան գոզալներ են՝ հագած, կապած, զուգված ու զարդարված. *«Քանի Նատաշա ու Անիչկա, քանի Դարինկա ու Քալինկա, քանի Մաշինկա ու Սաշինկա, քանի Նինիչկա ու Սոնիչկա… Ինչ ռանգե ռանգ հագուստնիր, ինչ զուքս՝ կարմիր, կանաչ, ամվի, դեղին, գավանա, բորդո, ցիս փեր, ծղլիս փեր, պիրիս փեր, թագվիս փեր, մախոխիս փեր, մոդնիս փեր. Ինչ դումաշնիր՝ գլասե, ֆայե, մորե, կաշմիր, մախմուր. Ինչ մոդեք, գիպյուրնիր, բլոնդնիր, բրիլիանտնիր, օսկե ձեցկվիկ ճապաններու հաստութին, մենաքրե սահաթնիր կղկանը դայիմացրած, բրասլետնիր ու ճակտի աղլխնիր վուր, վուր, վուր… լիզու պիտի, վուր պատմե»* (ԳՍ, 219):

Նույն Թիֆլիսի՝ այդ ճոխության ու խրախճանքների աշխարհի կողքին գոյատևում է մի ուրիշ աշխարհ՝ ծայրաստիճան աղքատության ու կարիքի մեջ խրված Հավլաբարը՝ *«Մեծ ու փարթամ քաղաքի ծայրամասերից մեկի թաղը: Հավիտենական աղբով ծածկված ծուռտիկ – մուռտիկ փողոցներ, որոնք նեղլիկ անցքերով գնում խաչաձևում են իրար կամ դեմ առնում մի պատի՝ կույր մուրացկանի պես: Իրար վրա թափված, իրարու հենված տնակներ, որոնց խարխուլ լաբիրինթները թվում է , թե ամեն րոպե պատրաստ են թափվելու անցորդի գլխին: Փոքրիկ պատուհաններ՝ կեսը ապակի, կեսը թղթած, փտած դռներ, հողածածկ տափակ կտուրներ, որոնք ձմեռը տնքում են ձյունի ծանրության տակ, գարնանը ծածկվում փարթամ կանաչով և անձրևների ժամանակ կաթում, կաթում, կաթում՝ ստիպելով խեղճ ու թշվառ բնակիչներին պատսպարվել ծալքերում, դռների ու պատուհանների խոռոչներում, չուլ ու փալասների տակ»*[2]: Սա նարդոսյան Հավլաբարն է, բայց Նար-Դոսից կես դար անց կերտվեց այվազյանական Հավլաբարը: Աղասի Այվազյանը յուրօրինակ մոտեցմամբ պատկերեց Թիֆլիսի Հավլաբար թաղամասը, ուր մարդիկ սովորականի նման ապրում են, աշխատում, սիրում ու ատում, ուր սովորականի նման բարևում են, հալ ու հարցեք անում, բայց մի ոչ սովորական ձևով կտրվում են

[1] **Գաբրիել Սունդուկյան**, Երկերի լիակատար ժողովածու, հ 3, «Հայկական ՍՍՌ ԳԱ» հրատարակչություն, 1952, էջ 211: Այսուհետ՝ ԳՍ

[2] **Նար-Դոս,** Պատմվածքներ, վիպակներ, «Լույս» հրատարակչություն, Երևան, 1978:

աշխարհից ու այնտեղ մի ուրիշ աշխարհ են ստեղծում. Հավլաբարը Թիֆլսի մեջ ապրող մի առանձին Թիֆլիս էր. «*Հավլաբարից ամեն ինչ երևում է: Ամբողջ Թիֆլիսը իր ծակուծուկով՝ Շեյթան բազարը, Երևանյան հրապարակը, Սապնի քուչան, Նարիղալան, Սուրբ-Սարգիսը, Միոնը, հունական եկեղեցին… Հավլաբարից երևում են պարոն Խատիսովի, Մելիք-Կազարովի տները, Թամամշևի քարվանսարայը, Տեր-Օսիպովի, Ջուբալովի թատրոնները, Գոգիլովի բաղնիքը… Հավլաբարից երևում են տիկին Սալոմկայի խաժ աչքերը, մադամ Սուսաննայի ճերմակ ոտքերը, քալբատոնի Մերիի՝ ֆունիկուլյորին միշտ ուղղված, նրան հավասար պահած հպարտ կուրծքը… Հավլաբարից երևում են չարչի Մարտիրոսի ներքնակի մեջ հավաքած փողերը, բմբուլի գող Սոփոյի ճերմակ մազերը, Լոքո Սաքոյի կարկատանները… Հավլաբարից, տ՛ո, երևում է Կոջորը, Բորչալոն, Շավնաբադին ու… Փարիզը: Հավլաբարից երևում են Թիֆլիսի հարսանիքներն ու թաղումները, հիվանդություններն ու երազները… Հավլաբարից երևում են Թիֆլիսի դարդերը*»[1]: Խոսելով Հավլաբարի դարդերից՝ հեղինակն ավելացնում է՝ «*Դարդերը շատ են Թիֆլիսում, Հավլաբարի շուրջն ու Հավլաբարում…*»(ԱԱ, 321): Դարդիման է Հավլաբարը: Հավլաբարն ու իր բնակիչը հաճախ նույնանում են, միաձուլվում, դառնում մեկ մարմին ու հոգի՝ «*…մազերը ճերմակ, ինչպես Հավլաբարի մաքրությունը, աչքերը կապույտ, ոնց որ Հավլաբարի երազանքը, բոյ-բուսաթով, ոնց որ Հավլաբարի բարձրությունը Թիֆլիսի վրա*»(ԱԱ, 322): Քաղաքի հոգեբանությունը անմիջականորեն կապվում է նրա յուրաքանչյուր բնակչի հոգեբանության հետ: Աղասի Այվազյանը գրականություն բերեց **պատվախնդիր ու թասիբով Թիֆլիսը.** «*Հավլաբարում մարդիկ թասիբ են պահում, նամուսի համար իրար աչք են հանում, իրար սպանում են, իրենք իրենց են սպանում… Ու սիրում են սպանելու չափ, ատելու չափ, փախչելու չափ…*»(ԱԱ, 322): Բնակիչները մի գեղեցիկ սովորություն ունեին, նրանք հատուկ գդակներ էին դնում, որ հարգանք հայտնելուց գլուխները մերկացնեն. «*էլ ուրիշ ոնց կարող էին հարգանք հայտնել*»(ԱԱ, 323): Հեղինակը Հավլաբարը պատկերում է մարդկային շատ հատկանիշներով. Հավլաբարը կարող էր նեղանալ, խռովել, բայց շատ շուտ հաշտվել: Հավլաբարը բացսիրտ ու խանդոտ է, Հավլաբարը ծնողի նման հոգատար էր, երեխայի նման պարզ ու միամիտ, երեխայի նման մաքուր, Հավլաբարը անկեղծ էր ու երբեք չէր ստում. «*Իմաստո՛ւն Հավլաբար, գի՛ծ Հավլաբար…*»

Աղասի Այվազյանի, նրա ստեղծագործության ու աշխարհայացքի ձևավորման վրա մեծ հետք է թողել Թիֆլիսը, թիֆլիսյան աշխարհն ու մարդիկ: Կյանքի զգալի հատվածը Թիֆլիսում ապրած Աղասի Այվազյանն էլ իր նախորդների նման Թիֆլիսը տեղափոխեց իր ստեղծագործության մեջ: Տեղափոխության այդ ճանապարհին գրողը ոչինչ չմոռացավ, նա իր ստեղծագործություն բերեց **բացառիկ ապրող ու կենսունակ Թիֆլիս**: Թիֆլիսն Այվազյանի ստեղծագործություններում իր հերոսների հետ ապրում էր, նրանց հետ տխրում, մտածում, ուրախանում, սիրում ու հիասթափվում:

Այդ գիժ, խենթ Թիֆլիսը միշտ շարունակում էր մնալ քեֆերի, խրախճանքների ու շքերթների կենտրոնում. «*Թիֆլիսի գավառային թագավորական փողոց Գալավինսկի զբոսանքի էին դուրս եկել Օրթաճալայի զվարճության վայրի երեսուներկու գեղեցկուհիներ. Նրանց հանգստյան օրն էր այդ երկուշաբթին: Օրորվում էին նրանց կոնքերը ասես խռովության նախապատրաստման մեջ, գույնզգույն շրջազգեստները Քռի փրփրած ալիքների նման իրար են գալիս՝ գծագրում նրանց ոտքերը տիրակալի գռեհիկ կեցվածքով… Կանայք զարդարված էին ժանյակով ու մետաքսով, ծոպերով ու փայլուն քարերով… Հագուստների խայտաբղետ գույների արանքից կրակում էին կանանց հայացքները, Թիֆլիսի համար մի նոր հայացք՝ քաղցր ու լիրբ, ամենակարող ու երկչոտ, խելոք ու խենթ, խորամանկ ու հասարակ, կարկոտ ու մարած… Եվ ո՛վ գիտե ինչեր կատարեց այդ հաղթարշավը խեղճուկրակ Թիֆլիսում…*»(ԱԱ, 360):

«*Ասինք հին Թիֆլիսը, որ մի առանձին ինքնուրույն աշխարհք ու զվարթ կյանք էր ներկայացնում իր համով ու հոտով, լեզվով ու ադաթով, աղ ու հացով, նիստ ու կացով – անցել է արդեն: Անցել է, և անդառնալի: Ինչ որ տվել է, էլ չի կրկնելու: Բայց ի՞նչ է տվել, ի՞նչ ժառանգություն է թողել գալիք սերունդներին, աշխարհիքին, պատմությանը: Էս հաշիվը կտեսնվի անշուշտ, և կասվի թե՝ հին Թիֆլիսը հայոց գրականությանն էլ երկու մեծ անուն է թողել – Սայաթ – Նովա և Գաբրիել Սունդուկյան: Հարազա՛տ – Թիֆլիսի լեզվով, Թիֆլիսի շնչով, Թիֆլիսի հոգով… Նրանք կան և մնալու են Թիֆլիսի, և հին Թիֆլիսի մեծ ու հարազատ զավակները*»(ՀԹ, 239):

[1] **Աղասի Այվազյան,** Ընտիր երկեր, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1987, էջ 320: Այսուհետ՝ ԱԱ:

Օգտագործված գրականության ցանկ՝

Աղասի Այվազյան, Ընտիր երկեր, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1987, էջ 320:
Գաբրիել Սունդուկյան, Երկերի լիակատար ժողովածու, հ 3, «Հայկական ՍՍՌ ԳԱ» հրատարակչություն, 1952:
Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, հ 1, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1986:
Հայ քնարերգության մատենաշար, Նաղաշ Հովնաթան, տաղեր, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1983:
Հենրիկ Բախչինյան, Սայաթ-Նովա, կյանքը և գործը, «Հայկական ՍՍՀ ԳԱ» հրատարակչություն, Երևան, 1988:
Հովհաննես Թումանյան, Երկերի ժողովածու, հ 4, «ՀԱՅՊԵՏՀՐԱՏ» հրատարակչություն, Երևան, 1951:

Մեսրոպ Թաղիադյան, Ուղեգրություններ, Հոդվածներ, նամակներ, վավերագրեր, «Հայկական ՍՍՀ ԳԱ» հրատարակչություն, Երևան, 1975:
Նար-Դոս, Պատմվածքներ, վիպակներ, «Լույս» հրատարակչություն, Երևան, 1978:

Համառոտագրություններ՝
ԱԱ_Աղասի Այվազյան
ԳՍ_Գաբրիել Սունդուկյան
ՀԲ_Հենրիկ Բախչինյան
ՀԹ_Հովհաննես Թումանյան
ՆՀ_Նաղաշ Հովնաթան

ՀՏԴ 82-1

Պոեզիա

Էդիտա Ալթունյան
Արցախի պետական համալսարան, 3-րդ կուրս
edita_altunyan@mail.ru

ՄԻՋԽՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ ՏԱՐԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԲԱՌԵՐԸ Պ. ՍԵՎԱԿԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Խոսքիմասային տարարժեքությունը քերականական այնպիսի իրողություն է, որտեղ առկա են արտահայտության դիտվածքում (ձևականորեն) չտարբերվող և բովանդակության դիտվածքում (իմաստով) հակադրվող միավորների խմբեր: Ուսումնասիրելով խոսքիմասային տարարժեք բառերը Պ. Սևակի ստեղծագործություններում՝ եկել ենք այն համոզման, որ կան ինչպես խոսքիմասային երկարժեք, այնպես էլ եռարժեք և նույնիսկ քառարժեք բառեր: Բառի խոսքիմասային տեղաշարժերն ու փոփոխությունները կարող են ընթանալ ինչպես նյութական բովանդակություն ունեցող խոսքի մասերի սահմաններում, այնպես էլ դրանց և սպասարկու բառերի միջև: Երբեմն էլ տեղաշարժեր են նկատվում սպասարկու խոսքի մասերի միջև: Տարարժեքության պատճառ կարող են դառնալ բառի փոխանվանական կիրառությունը, նյութական բովանդակություն ունեցող բառերի խոսքիմասային արժեքի տրոհումը, իմաստափոխությունը և այլն:

Բանալի բառեր՝ խոսքի մասեր, խոսքիմասային տարարժեք բառեր, ներխոսքիմասային տարարժեքություն, միջխոսքիմասային տարարժեքություն, ձևաբանություն, շարահյուսություն:

Эдита Алтунян
АрГУ, 3-ий курс
edita_altunyan@mail.ru

МЕТАНОМИЧЕСКОЕ ПРИМЕНЕНИЕ В ПРОИЗВЕДЕНИЯХ ПАРУЙРА СЕВАКА

Метаномическое применение является грамматическим критерием, в котором существуют единичные группы с одинаковым значением в выражении (формально) и группы, которые противоречат сюжету (семантически). Анализируя часть речевых слов с разной ценностью в работах Паруйра Севака, мы заверили, что есть не только двузначный смысл, но и три значения и даже четыре значения слова. Часть речевых движений и изменений может протекать на границах части речевых слов материального смысла и между их вспомогательных слов. Иногда мы замечаем движения между вспомогательными словами. Причиной разницы значений может стать использование метонимии слова, разделение части речевой ценности, изменение смысла и т. д.

Ключевые слова: части речи, часть речевой разности, взаимосвязь внутри частями речи, взаимосвязь между частями речи, метаномическое применение морфология, синтаксис.

Edita Altunyan
ASU, 3rd year
edita_altunyan@mail.ru

PART OF SPEECH WORDS WITH DIFFERENT VALUE IN PARUYR SEVAK'S POETRY

Part of speech difference of values is a grammatical criterion where there are unit groups with the same meaning in expression (formally) and groups which contradict in plot (semantically). Analyzing the part of speech words with different value in Paruyr Sevak's works we assured that there are not only double meaning, but three meaning and even four meaning words as well. The part of speech movements and changes can proceed on the boundaries of the part of speech words of material meaning and between them and auxiliary words. Sometimes we notice movements between auxiliary words. The reason for the difference of values can become the usage of the metonymy of the word, the division of part of speech value, change of meaning etc.

Key words: part of speech, part of speech words of different values, inner part of speech divergence, inter part of speech divergence, morphology, syntax.

Լեզվի պատմական զարգացման ընթացքում որոշ բառեր ու բառաձևեր, բառիմաստային ու գործառական յուրահատկություններով պայմանավորված, սկսում են համատեղել խոսքիմասային մի քանի իմաստներ՝ առաջ բերելով քերականական իմաստի երկփեղկվածություն, տարարժեքություն:

Խոսքիմասային տարարժեք բառերը հավասարապես հանդես են գալիս երկու կամ ավելի ձևաբանական արժեքով՝ շարահյուսական մակարդակում համապատասխանաբար արտահայտելով տարբեր ձևաբանական իմաստներ այն բանի հետևանքով, որ այդ բառերը տարբեր խոսքի մասերի հատուկ ձևավորում չունեն: <<Այդպիսի բառերի խոսքիմասային պատկանելությունը որոշելիս ելնում ենք դրանց շարահյուսական կիրառությունից. ձևաբանական արժեքի բաշխումը տեղի է ունենում շարահյուսական մակարդակում, քանի որ իմաստազատիչ մյուս գործոնները տվյալ դեպքում չեզոքանում են>>[1]:

Լեզվի մեջ փոխանցումը կարող է լինել ներխոսքիմասային և միջխոսքիմասային: Միջխոսքիմասային փոխանցումն էլ իր հերթին լինում է լրիվ և մասնակի:

Ձևաբանական տարարժեքությանն անդրադարձել են Գ. Սևակը, Ա. Աբրահամյանը, Էդ. Աղայանը, Գ. Գարեգինյանը, Գ. Ջահուկյանը, Մ. Ասատրյանը, Ս. Աբրահամյանը, Լ. Խաչատրյանը, Ն. Պառնասյանը և այլք[2]:

Սույն հոդվածում մենք կփորձենք **գոյական//ածական**, **ածական//մակբայ**, **ածական//կապ**, **մակբայ//կապ**, **շաղկապ//վերաբերական**, **մակբայ//վերաբերական**, **մակբայ//շաղկապ**, **դերանուն//շակապ**, **կապ//շաղկապ**, **կապ//դերանուն, գոյական//կապ**, **գոյական//մակբայ**, **թվական//դերանուն**, **թվական//կապ**, **ածական//մակբայ//վերաբերական**, **գոյական//ածական//մակբայ, մակբայ//շաղկապ//վերաբերական, ածական//մակբայ//գոյական//վերաբերական** տարարժեք բառերի քննությունը կատարել Պ. Սևակի ստեղծագործություններից բերված բնագրային օրինակներով:

1.Ածական//գոյական: Ածական//գոյական տարարժեքությունը առաջանում է ածականի նախնական արժեքի երկփեղկման հետևանքով, ածականի փոխանվանական կիրառության հիմքի վրա: Այսպիսի բառերը ածականական կիրառությամբ ցույց են տալիս հատկանիշ, գոյականական կիառությամբ՝ այդ հատկանիշով բնորոշվող անձ: Այդպիսի բառերից են՝ աղքատ, ագահ, ապստամբ, ջահել, հարուստ, դավաճան, ծեր, կախարդ, առևտրական, վիրավոր, գիտնական, ազգայնական, ազնվական, հեղափոխական, պալատական, լեռնական չքավոր և այլն: Բերենք դրանց գործածության բնագրային օրինակներ:

Աղքատ- Բայց…ես ո՛նց եմ ուզում Ու երազում, Անգի՛ն, Քո ոտքերը տեսնել իմ գրկաբաց շեմքին, Քեզ մեկընդմիշտ տեսնել իմ տանն **աղքատ** ու հին…// Ձյունը ի՞նչ է իմանում, Թե **աղքատը** փայտ չունի. Ճամփան ի՞նչ է իմանում, Թե ձին ոտքին պայտ չունի…

Ջահել- Դառնամ փառաբանեմ **ջահել** աղջիկների ծիծաղն աննպատակ, Նրանց կանչող ե՛րգը, նրանց անցնող վե՛րքը սիրո՛վ փառաբանեմ…// Իսկ ինձ թվում է, թե դեռ պիտի Ես վերստին դառնամ **ջահել**՝ Իբրև հայտնի մարմանամարզիկ, Մրցանակներ անվերջ շահեմ…

Հարուստ-…Սակայն դու անհատակ վիհերից այդ ելնելով անելարան, Երջանիկ և գոհ ժպիտով մի, որ հատուկ է գանձեր պեղող մարդուն, Հասկացար, որ հրաշք է կյանքս- անհունորեն **հարուստ** ու գերառատ…// Թե վաստակածս գրպանս մնար՝ Անտեղի տեղը չհալվեր-կորչեր, Ինձ կարող էին և **հարուստ** կոչել:

Կախարդ- Հայ ելևէջի վայրի տարերքը, Մի **կախարդ** ձեռքով, Որտեղ որ պետք էր, Դառնում էր անձրև՝ Ծլարկած արտում, Դառնում ջրաղաց, Էրանի քամի՝ Ցանկացա՛ծ ժամին…// Գիտե՛մ, գիտե՛մ, Գուշակ է՛լ ես, **կախարդ** է՛լ ես. Չէ՞ որ դու ինձ ոտով-գլխով կախարդել ես:

2. Ածական//Մակբայ: Լեզվի պատմական զարգացման ընթացքում խոսքիմասային մասնակի փոխանցման հետևանքով ածականը կարող է համատեղել նաև մակբայի խոսքիմասային իմաստ՝ ցուցաբերելով խոսքիմասային տարարժեքություն[3]:

Այդպիսի բառերց են՝ ամուր, ամփոփ, աջ, անջատ, առատ, զվարթ, ժիր, լավ, լուռ, խաղաղ, խիստ, խոժոռ, կարճ, հանդարտ, հարթ, հավասար, հեշտ, ձախ, ճիշտ, մարմանդ, մեղմ, մռայլ, շիտակ, շռայլ, ուրախ, պակաս, պարզ, պարկեշտ, սեղմ, սխալ, սուտ, վատ, տխուր, ծուռ, ձիգ, նոր, նվագ և այլն:

Այս բառերի տարարժեք գործածությունների համար բերենք մի քանի բնագրային օրինակներ.

[1] Լ.Մ. Խաչատրյան, Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ, Երևան, 1985, էջ 32:

[2] Հ. Ղազարյան, Շ. Մինասյան, Լեզվական տարարժեքության մի քանի դրսևորումներ, Ստեփանակերտ, 2016, էջ 49:

[3] Տես՝ նույն տեղում, էջ 37:

Հանդարտ- Դու հորդաբուխ, դու **հանդարտ** քամի. Դու իմաստուն, դու գեղեցկություն, Դու մայր քնքշող, դու շոյող ձեռք. Դու միանգամայն իմ սեր ու լույս…// Ախ, ինչ բախտ է կյանքում լինել Ամենքի պես, Ամենքի հետ, Գիշերները հանգիստ քնել՝ Ամենքի պես, Ամենքի հետ, Լինել անդարդ, Լինել **հանդարտ**՝ Ամենքի պես, Ամենքի հետ…

Նոր-Ես **նոր** մի պոետ, անհայտ տակավին, Խոհերի անտես մակույկին նստած՝ Չգիտեմ, արդյոք կլինի՞ քամի, Որ առաջ մղի իմ առագաստը:// Դեռ **նոր** հանդիպած՝ մենք բաժանվեցինք, Իրար **նոր** գտած՝ կորցրինք իրար…

3.Ածական//Կապ: Ածական//կապ տարարժեքությամբ հանդես են գալիս համաձայն, հակառակ, անկախ և նման այլ բառեր: Օրինակ՝

Հակառակ- Հիշեցի նաև այն խոսքը հայտնի, Որ եթե մեկից կոչվեց մեծամիտ Եվ կամ անհեթեթ Եվ կամ խելագար, Դու **հակառակը** չե՛ս ապացուցի՝ Որքա՛ն էլ ջանաս…//Ու մենք պիտի լինենք թլվատ՝ ջրի՛ նման, Եվ լինենք կույր՝ կրակի՛ պես, Ուր՝ **հակառակ** մեր իմացած հին օրենքի՝ Մարմինները ջերմությունից չեն լայնանում. Այլ կծկվու՛մ, Եվ լուծվում են բոլոր հարցերն՝ աղի՛ նման…

4.Մակբայ//Կապ: Մակբայ//կապ փոխանցման ընթացքում որոշ բառեր զուգահեռաբար հանդես են գալիս ձևաբանական երկու արժեքով: Մի շարք տեղի և ժամանակի կապեր ունեն մակբայական ծագում: Մակբայների և կապերի միջև հարաբերություններ նկատվում են հետևյալ հիմունքով. <<Առարկայական նշանակությամբ թուլացած բառերը, հակվելով բայերին, մակբայական իմաստ են արտահայտում, իսկ հակվելով գոյականներին՝ կապային իմաստ են արտահայտում>>[1]: Այդպիսի բառերց են՝ առաջ, հետո, հեռու, դուրս, վերև, ներքև և այլն: Բերենք օրինակներ.

Առաջ- Անհարմար է բոբիկ քայլել, Այս կոշիկն էլ շատ է նեղում: Ինչպե՞ս քայլել առանց ուղու, Այս ճամփան էլ շատ է շեղում: Դոփե՞լ տեղում: Բայց դրանից Ո՛չ կոշիկդ կլայնանա, Ո՛չ էլ ցավը կմեղմանա… Ցավն է հաճախ **առաջ** մղում: // Թե մի օր փնտրես այն իդեալական, անթերի մարդուն/ Հայելու **առաջ** կանգնիր պարզապես Ու երկար նայիր աչքերիդ խորքում… **Հետո-**Պիտի մրսես, որ տաքանաս ու լավ զգաս: Պիտի ցավի, **հետո** անցնի, որ հասկանաս Ինչքան լավ է առանց ցավի:// Եվ՝ որքան տրտում-նույնքան կենսագին՝ Տարիներ **հետո** նա պիտի դառնա Մի ժողովրդի ազնիվ կենսագիր…

Հեռու- Հեռու ես, **հեռու**՛, Ու ձայն չես տա ինձ՝ որքան էլ ձայն տամ: Գիտե՛մ, որ չկա՛ս, Ու չեմ գտնի քեզ՝ որքան էլ փնտրեմ: Բայց…մի՞թե սրտին բան կհասկացնես: // Քեզանից **հեռու** Ես ապրում էի Կարծես թե ինքս էլ ինձանից **հեռու**:

Մակբայ//կապ տարարժեքությամբ հանդես են գալիս նաև շարունակ և շուրջ բառերը: Օրինակ՝

Շարունակ-Ա՛խ, սիրտս նաև նման է կարծես… Նման է կարծես մի ջինջ վտակի, Ու տարբե՛ր հունով, բայց դեպի քեզ է **Շարունակ** վազում…// Ու…հասկանում եմ, որ ես չե՛մ կարող Լոկ մի բան սարքել՝ Ա՛յն միայն, Ինչին ճշմարտություն են կոչել աշխարհում: Լոկ ա՛յդ չի սարքվում, Թեպետ և անվե՛րջ, դարե՛ր **շարունակ** Ջանում են սարքել…

Շուրջ-Շուրջը շող էր, մեռնող մարդու ժպիտ կարծես, Մայր է մտնում արևն ահա արևմուտքում. Հորիզոնը արնալեցուն աչք է կարծես, Հրագունդը-դեղնած, գունատ աշնան պարտեզ:// Մի թաս խավիծով կամ ձվածեղով՝ Ծննդկանի **շուրջ** նստեցին նրանք՝ Որդուն մաղթելով արևշատություն, Նորատի մորը՝ շուտ ապաշխարանք, Աղվորիկ մի հարս, Բարի տատություն…

5.Շաղկապ//Վերաբերական: Պ. Սևակի ստեղծագործություններում շաղկապ//վերաբերական տարարժեքությամբ հանդես եկող բառերից են՝

Իսկ- … Իսկ աշխարհում Երջանկությունն ավելի է տարողունակ, Քան տանջանքը, Թե չէ սողուն ժամանակը այդպես արագ չէր սլանա՝ Երջանկության ժամը վայրկյան դարձնելով…// Ա՛յդ մենք էինք, ընկե՛ր, այդ ժողովուրդն էր իմ, Որին իր **իսկ** տան մեջ, իր սեփական հողում Մորթում էին մի խաչ և մի կիսատ լուսին…

Միայն-Միայն դու…<<մե՛ք քիչ կամա՛ց գնա, գոզա՛լ>>,- Որ քո կամաց և անշտապ քելքի չափին համաչափվի Մեր խեղճ սրտի տրոփյունը համաչափված…// Ես օգնեցի բոլորին, ես ինձ **միայն** չօգնեցի, Կորով տվի ամենքին, **Միայն** ինքս հոգնեցի:

Հենց-Հե՛նց երգեցիր՝ Դու ուրի՛շ ես. Միանգամի՛ց գեղեցկացած, Ո՛չ թե մարդ ես, Այլ կախա՛րդ ես, Մո՛գ ես, Դյու՛թ ես: // **Հենց** այնպես կյանքում ոչինչ չի ծնվում, Կյանքում **հենց** այնպես չի մեռնում ոչինչ,

[1] Հ. Ղազարյան, Շ. Մինասյան, Լեզվական տարարժեքության մի քանի դրսևորումներ, Ստեփանակերտ, 2016, էջ 9:

Երբեմն ամեն ինչ ոչինչ է դառնում, Երբեմն էլ ոչինչն է դառնում ամեն ինչ: Կամ՝ Մի՛ վրդովվեք, եթե ասեն Փառասերին **հենց** փառասե՛ր, Ոչ թե համեստ. Սրիկային՝ **հենց** սրիկա՛,/ Ո՛չ թե ազնիվ…

6. Մակբայ//Վերաբերական: Վերաբերականների մեջ առանձին խումբ են կազմում մակբայական ծագում ունեցողները, որոնց մի մասն այսօր առանձնանում է մակբայ//վերաբերական տարարժեքությամբ: Այդպիսի բառերց են՝ իմիջիայլոց, մասնավորապես, առավելապես, հատկապես, հավանաբար, իսկապես, բնավ, ամենևին և այլն: Բերենք բնագրային օրինակ.

Իսկապես- Ես, **իսկապես** ասած, այսպես եմ հասկանում.- Մեր մեջ ամեն լավ բան մանկականն է, Ուստի մանկականն է լավի ածականը. Այդպես չի կարելի կոչել ժխտականը: Կամ՝ Ծանոթացա՞ք արդյոք: Դու՝ չգիտեմ, Իսկ քեզ ճանաչեցի ես **իսկապես**…// Եգիպտոսն ինքն է ավազ ներմուծում, Այն էլ ում համար. Իր… Սահարայի՛: Ծաղրուծանա՞կ է: Կատա՞կ է հիմար: Բայց Սահարայի ավազն **իսկապես** Շինարարական շաղախ չի՛ դառնում… Մանր է չափազանց:

7.Մակբայ//Շաղկապ: Գրաբարում և միջին հայերենում մակբայի և շաղկապի խոսքիմասային արժեքով հանդես էին գալիս իբր, իբրև, ապա և այլ բառեր: Ժամանակակից հայերենում մակբայի և շաղկապի զուգահեռ արժեքներ ունեն նախ և ապա բառերը[1]: Եթե ապա բառը ընկալենք հետո իմաստով, կունենանք ժամանակի մակբայ, իսկ եթե իրար է կապում բաղադրիչ նախադասություններ՝ շաղկապ է:

Բերենք համապատասխան օրինակ Պ. Սևակի ստեղծագործություններից.

Ապա-Նա ամուսին դարձավ և հայր դարձավ **ապա**: Իր իսկ ձեռքով շինած տան լայն բակում, Մատղաշ ընկուզենու ըստվերի տակ, այգում Առաջնեկը նրա խաղաց…// Ու թե հիմա, իմ բալի՛կս, ես քո գլխին ճառ եմ կարդում, **Ապա** միայն նրա համար, որ շատ հաճախ կյանքում մարդու, Եթե իր մեծ բաժինն ունի ժամանակը, ինքը դարը, Բայց և այնպես քիչ չի ազդում նաև ընտրած ճանապարհը:

Ապա բառի մի այլ արտահայտություն է հապա-ն, որն ապա-ի նշված իմաստների հետ ունի նաև եղանակավորող բառի ձևաբանական արժեք[2]: Օրինակ՝

Հաշվեցե՛ք **հապա**, Թե ի՞նչ ալիքով, քանի՞ վայրկյանում Եվ քանի՞ գրամ արյուն է հոսում աղջըկա սրտից Դեպի ամոթխած այտերը նրա՝ Առաջ բերելով ա՛յն բռնկումը ջերմամիջուկային, Որ մինչև այսօր, միամտաբա՛ր, շիկնանք ենք կոչել:

8.Դերանուն//շաղկապ: Այս տարարժեքությամբ հանդես են գալիս այլ, որ, այնինչ, ինչ բառերը: Այլ-ը անորոշ դերանուն է՝ ուրիշ իմաստով, նաև համադասական շաղկապ՝ հակասման իմաստով[3]: Երկու խոսքի մասի արժեքով էլ այն հաճախ է կիրառվում Պ. Սևակի ստեղծագործություններում: Օրինակ՝

Այլ- Այն, ինչ կոչվում է գրանակություն, Դեսպանատու՛ն չէ, Որ զգա՛ս-խորհե՛ս-մտածե՛ս մի բան Եվ **այլ** բան անես: // Հրաժարվում եմ այ՛ն միակ արկից, Որ պատերազմի ելք չի որոշում, **Այլ** միայն տասնյակ մարդկանց է հոշում: Կամ՝ Մինչդեռ ես մա՛րդ էի, քաղաքացի և հա՛յ, Նա մարդ չէր, **այլ** պանդուխտ- Մի բառ, որ չեմ կարող Քո մայրենի լեզվով վճիտ թարգմանել…

9. Կապ//Շաղկապ: Ժամանակակից հայերենում մի շարք բառեր ունեն կապական և շաղկապական զուգահեռ արժեքներ: Դրանցից է, օրինակ, մինչև բառը.

Մինչև- Անվավեր սիրո հորձանուտի մեջ Գլուխս եմ հանում ես՝ լոտոսի պես. **Մինչև** կզակս արդեն ջրասույզ՝ Չեմ խեղդվում դարձյալ…// **Մինչև** չգժվի՝ ջուրը չի եռա, Կեղև չի պատռի հատիկը նռան: Ծառե՞րն են փթթում՝ Գժվա՛ծ են անշուշտ: Բառերն էլ **մինչև** կարգին չգժվեն՝ Ե՛րգ չեն դառնալու… Ա՛խ, ուր էր թե ես միշտ գիժ լինեի…

10.Կապ//Դերանուն: Ինչպես բառը իր բուն ձևաբանական արժեքով հարցական-հարաբերական դերանուն է: Տարածված է զուգադիր և մենադիր կիրառությամբ: Զուգադիր կիրառությամբ (երբ գլխավոր նախադասության մեջ առկա է համապատասխան այնպես հարաբերյալը) ինչպես բառը համարվում է կապակցական բառ՝ դերանվանական արժեքը չկորցրած[4]: Մենադիր կիրառության դեպքում ինչպես բառը կարող է ցուցաբերել և՛ կապի, և՛ դերանվան արժեք: Այս դեպքում իմաստային տարբերակման գործում երբեմն կարևոր դեր է կատարում հոդը: Որպես կապ՝ այն իր խնդրի հետ կատարում է ձևի պարագայի պաշտոն.

[1] Տե՛ս՝ Լ.Մ. Խաչատրյան, Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ, Երևան, 1985, էջ 42:
[2] Տե՛ս՝ Նույն տեղում, էջ 42:
[3] Հ. Ղազարյան, Շ. Մինասյան, Լեզվական տարարժեքության մի քանի դրսևորումներ, Ստեփանակերտ, 2016, էջ 52:
[4] Տե՛ս՝ Լ.Մ. Խաչատրյան, Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ, Երևան, 1985, էջ 46:

Ես սիրում եմ քեզ, սիրում եմ խելագարի պես, Գազանի նման, **ինչպես** հիվանդ: Գրկում եմ քեզ, հպվում եմ քեզ, միանում եմ քեզ հետ: Ես լալիս եմ: Եվ լալիս եմ: Աստված մի արասցե, որ քեզ համար էլ այսքան անմարդկային տխուր լինի:

Երբ հոլովառու բառը գործածվում է հոդով, ապա վերածվում է ենթակայի, որի կողքին արդեն ինչպես բառը դիտվում է իբրև հարաբերական դերանուն, որով կապակցվում է զեղչված ստորոգյալով ձևի պարագա երկրորդական նախադասությունը գլխավորին: Օրինակ՝

Դու մի հորինված էակ ես գուցե Ու հանդիպել ես ինձ մտքումս լոկ: Բայց իրական ես, **ինչպես** բուրմունքը Հողի՛, Վարունգի՛, Խոտի՛ Մատիտի՛…

11. Գոյական//Կապ: Կապերի մի զգալի մասը գոյականական ծագում ունի, ըստ որում՝ կապերի և կապական բառերի կարող են վերածվել գոյականի և՛ուղիղ, թե՛ք ձևերը: Դրանց համար բնորոշ են և՛ նյութական, և՛ հարաբերության նշանակությունները՝ առաջին կամ երկրորդ նշանակության հավասարաչափ դրսևորմամբ կամ դրանցից մեկի կամ մյուսի գերակշռությամբ: Այդպիսի բառերից են՝ երեսից, ձեռքից, պահին, միջոցին, հասցեին և այլն[1]: Ձեռքից բառը, լինելով ձեռք բառի բացառական հոլովաձևը, առարկայական իմաստով գոյական է, *պատճառով* իմաստով՝ պատճառի կապ[2]:

Ձեռքից- Բախտի նման՝ հեռվից դու իշխում ես վրաս, Բախտի նման՝ գտած ու զուր **ձեռքից** գցած, Գուցե արդեն գտած ուրիշ բախտ ու երազ, Ուրիշի հետ գուցե նույնիսկ երջանկացած:

//Ամենքը իրենց Բախտից են դժգոհ Եվ ոչ թե խելքից: Իսկ ես, տե՛ր աստված Կրակն եմ ընկել Իմ խելքի **ձեռքից**:

12. Գոյական//Մակբայ: Պ. Սևակի ստեղծագործություններում, թեև քիչ, բայց կան նաև գոյական//մակբայ տարարժեքությամբ բառեր: Օրինակ՝

Հանգիստ- Հանգիստ չեն տալիս ինձ օր ու գիշեր, Իմ հոգսը թողած՝ Հոգում ձե՛զ համար… Լվացարարի տենդով եմ այրվում, Ուզում եմ մաքրել աշխարհը համայն…// Ախ, ինչ բախտ է կյանքում լինել Ամենքի պես, Ամենքի հետ, Գիշերները **հանգիստ** քնել՝ Ամենքի պես, Ամենքի հետ…

13. Թվական//Դերանուն: Թվական//դերանուն տարարժեքությամբ հանդես է գալիս մի բառը: Այստեղ դարձյալ որոշիչ դեր կարող է կատարել հոդը: Մի բառի խոսքի մասային իմաստը կարող է պայմանավորված լինել լրացյալի հոդով կամ առանց հոդի գործածությամբ: Մի բառը անհոդ լրացյալի մոտ ընկալվում է և՛ որպես անորոշ դերանուն, և՛ որպես թվական, իսկ հոդով լրացյալի մոտ՝ միայն թվական: Բերենք բնագրային օրինակներ.

Մի- Գտնում, սակայն չի թաքցնում, Այլ տալիս է իր տիրո՛ջը՝ Մարդկությա՛նը, Վերադարձնում նրա կորած գեղեցկության Կամ բարության, Ազնվության և կամ սիրո **Մի** նշխարը **Մի** մանսունքը: // Սակայն այդ թվին Մայր Հայաստանի Արգանդը եղավ սրբորեն բեղուն: **Մի** մանուկ ծնվեց Լոռվա Դսեղում…Կամ՝ Գնացել ես մարդու Եվ… մտածե՛լ, Թե սերն ինքը Եթե կյանքում նա կա Հետո **մի** օր կգա, Թո՛ղ որ առաջնեկի՝ Քեզ պես ու քեզ նման **մի** աղջկա, Թո՛ղ որ երկրորդ մանկան՝ Իր հոր քթից թռած **մի** շեկլիկի Ծննդի հետ,-մեկ է՝ Միայն թե գա…

14.Թվական//Կապ: Թվական//կապ տարարժեքությամբ օրինակներ հազվադեպ են հանդիպում Պարույր Սևակի ստեղծագործություններում: Օրինակ՝

Մեկ-Բա՛րև, **Մեկ** հատիկ այս բառն եմ ասում՝ Կնքված անձնագիր ցույց տալու նման, Կենսագրություն պատմելու նման, Կամ հարցաթերթիկ լրացնելու պես:// Ականջովը **մեկ** Թթու թան չարժե, կարծում է՝ պիտի Եվ լեռներ շարժե, Իսկ լեռներն, ինչ խոսք, Չեն շարժվում տեղից.- Նա կարող է լոկ Աթոռներ շարժել:

15. Ածական//Մակբայ//Վերաբերական: Այսպիսի տարարժեքությամբ քիչ բառեր են հանդիպում Պ. Սևակի պոեզիայում: Դրանցից է, օրինակ, ուղիղ բառը, որը, լինելով ածական և մակբայ, իմաստափոխությամբ ձեռք է բերել նաև վերաբերականի արժեք(հենց սաստկականի իմաստով)[3]: Բերենք բնագրային մեկ օրինակ.

Ուղիղ- Թե նեղեցին ու շեղեցին մեր ուղուց՝ **Ուղիղ** ճամփի դու՛ մղեցիր մեզ անվերջ… Դու դարավոր երգի ցանքը քաղեցիր, Մեր ծով բերքը դու՛ թաղեցիր մեր սրտում Ու թխեցիր՝ հա՛ց դարձրիր հոգևոր…// Օգնիր ինձ կյանքում **ուղիղ** ընթանալ, Եթե քնած եմ՝ քնից արթնանալ,Թե դուռը բաց է՝ իզուր չբանալ, Եղածով երբեք չհանգստանալ, Եվ չասել թե իմ արածն արեցի://Երկնքից անկախ մի լեռնակղզի՝

[1] Մ. Ե. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Զևաբանություն, Երևան, 2004, էջ 364:

[2] Հ. Ղազարյան, Շ. Մինասյան, Լեզվական տարարժեքության մի քանի դրսևորումներ, Ստեփանակերտ, 2016, էջ 51:

[3] Հ. Ղազարյան, Շ. Մինասյան, Լեզվական տարարժեքության մի քանի դրսևորումներ, Ստեփանակերտ, 2016, էջ 30:

Հայաստան աշխարհ: Երկնքից անկախ այդ լեռնակղզու **ուղիղ** կենտրոնում՝ Երկու զանգ հսկա ու անձեռագործ:

16. Գոյական//Ածական//Մակբայ: Այս տարարժեքությամբ Պ. Սևակի պոեզիայում հանդիպում է սուտ բառը: Բերենք բնագրային օրինակներ.

Սուտ-Թեկուզ և ձեռքդ գրչից զրկեն, Դու, միևնու՛յնն է, պիտի՛ որ երգես: Թո՛ղ չտան ոչ մի լիազորություն, Դու, մե՛կ է, **սուտը** պիտի՛ որ հերքես:// **Սուտ** խոստումով կապել ես ինձ, Մանկան նման խաբել ես ինձ, Ու չես տվել ոչինչ, ոչինչ…//Ճառագայթային այս հիվանդությամբ տանջվում են նրա՛նք… Լոկ նրա՛նք, Որոնց չեն կարողանում ո՛չ մի կերպ սիրել Բոլոր դարերի արքաներն ամեն Եվ կործանում են սրանց ո՛չ միայն աքսորով, բանտում, Այլ նաև սրանց պալատ բերելով Ու… **սուտ** սիրելով…

17.Մակբայ//Շաղկապ//Վերաբերական: Նշված տարարժեքությամբ առանձնանում է էլ բառը: Օրինակ.

Թող լինի այնպես, Ինչպես հուշում ես. **Էլ** չենք հանդիպի՝ Ինչպես ուզում ես: Ինչ էլ որ լինի՝ Հիշելու բան կա. Քեզ մոտ ավարտվեց Սիրո ուսումս:// Եկեք մենք **էլ** վերև նայենք՝ Ոչ թե կույրի, այլ ծառի՛ պես, Որպեսզի մեզ երբեմն զգանք Քիչ ավելի մոտիկ օդին, քան թե հողին…// Ապրելու կեսն **էլ** պատվով մեռնելն է: Ա՛խ, երանի՛ թե ես այնպես մեռնեմ Որ դու… ինձ սգաս: Ա՛խ իմ հայրենի՛ք… Ես ոչինչ, ոչինչ քեզ տալ չեմ կարող. Ինչ **էլ** տամ՝ կրկին տվածդ եմ տալիս:

18. Ածական//Մակբայ//Գոյական//Վրաբերական: Այս տարարժեքությամբ Պ. Սևակի ստեղծագործություններում հանդիպում է ճիշտ բառը:

Ճիշտ-Անկեղծ ասած՝ դու բնավ էլ այն չես եղել, Ա՛յն չես եղել, ինչ-որ ես եմ կարծել երկար, Ու՞ր ես, ասա՛, դեւ ինձ մղել, **ճիշտ** ճամփից ես միայն շեղել…// Գուցե կյանքս **ճիշտ** չեմ ապրում, վերջն է եկել, ո՞վ գիտի. Մի շտապիր պախարեկել, գլխի գալիքն ո՞վ գիտի:// Սուտ կա, որ **ճիշտ** արժե: Ու ես հավատում եմ մեր հնարած ստին, Թե չենք կորցնի իրար:// Ու երբ լուծվում ես՝ **ճիշտ** աղի նման Դու չես երևում, Դու համ ես դառնում…

Այսպիսով, Ուսումնասիրելով խոսքիմասային տարարժեք բառերը Պ. Սևակի ստեղծագործություններում՝ եկել ենք այն համոզման, որ կան ինչպես խոսքիմասային երկարժեք, այնպես էլ եռարժեք և նույնիսկ քառարժեք բառեր և այդ տարարժեքության պատճառ կարող են դառնալ բառի փոխանվանական կիրառությունը, նյութական բովանդակություն ունեցող բառերի խոսքիմասային արժեքի տրոհումը, իմաստափոխությունը և այլն:

ՀՏԴ 81՝34 *Հայոց լեզու*

Մայրանուշ Շահումյան
Ասպիրանտ, ԵՊՀ, Հայ բանասիրության ֆակուլտետ
mayashahumyan@gmail.com

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ (ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ) ՀԱՐՑԵՐԸ ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հոդվածում քննության են առնվում արևմտահայերենի հնչյունական համակարգի առանձնահատկությունները, արևելահայերենից տարբերվող հատկանիշները, որոնց անդրադարձել է Հրաչյա Աճառյանն իր աշխատություններում: Ընդգծվում են այդ տարբերությունները ձևավորող ինչպես լեզվական, այնպես էլ արտալեզվական գործոնները: Լեզվաբանների կարծիքների համադրմամբ վեր են հանվում բաղաձայնական համակարգի առանձնահատկությունները և տարբերությունների առաջացրած դժվարությունները:

Բանալի բառեր՝ Արևելահայերեն, արևմտահայերեն, բաղաձայնական համակարգ, հնչյունաբանական տարբերություններ

Шаумян Майрануш
Аспирантура, ЕГУ, факультет армянской филологии
mayashahumyan@gmail.com

ФОНЕТИЧЕСКИЕ ВОПРОСЫ ЗАПАДНОАРМЯНСКОГО ЯЗЫКА В РАБОТАХ ГРАЧЬЯ АЧАРЯНА

В данной статье рассматриваются фонетические особенности западноармянского языка, а так же различающиеся аспекты от восточноармянского языка на основе исследований Грачья Ачаряна. Подчеркиваются предпосылки и результаты таких различий. В качестве предпосылок рассматриваются как внутрилингвистические, так и внешнелингвистические факторы способствующие этим различиям. Сравнивая мнения лингвистов акцентируются основные характеристики системы согласных и трудности связанные с этим различиями.

Ключевые слова: Восточноармянский язык, западноармянский язык, система согласных, фонетические различия.

Shahumyan Mayranush
Graduate School, Yerevan State University, Faculty of Armenian Philology
mayashahumyan@gmail.com

PHONETIC ISSUES OF THE WESTERN ARMENIAN LANGUAGE IN THE STUDIES OF HRACHYA ATCHARYAN

In this article we study phonetic specifications of the Western Armenian language and also the factors causing the difference between the Eastern Armenian language based on the studies of Hrachya Atsharyan. Reasons and results of such differences are also put in high focus in this research. As a material for this study both linguistic and cultural backgrounds are involved. By comparing opinions of diverse linguists we emphasize the main characteristics of consonant system of the Western Armenian and the difficulties caused by these differences.

Keywords: Eastern Armenian language, Western Armenian language, consonant system, phonetic differences.

Գրական արևմտահայերենի մյուս բաժինների համեմատությամբ Աճառյանը հնչյունական համակարգին զգալիորեն ավելի քիչ է անդրադարձել, չնայած արևելահայերենի և արևմտահայերենի տարբերությունները առավելապես ցայտուն են դրսևորվում հնչյունական կազմում և ձևաբանական համակարգերում: Նա հիմնականում ներկայացրել է արտասանական պլանի առանձնահատկությունները և մի քանի նկատառում է արել ուղղագրության վերաբերյալ:

Նշենք, որ երկու գրականների հնչյունական համակարգը, ընդհանուր լինելով հանդերձ, այբուբենի մեջ դրսևորում է որոշակի տարբերություններ: Դրանք վերաբերում են *ու* և *և* տառերին և դրանց հնչյունական արժեքներին: Նախ՝ արևմտահայերենում *ու*-ն, որպես առանձին տառ, այբուբենում չի ընդգրկվում և, լինելով մեկ հնչյունի գրային նշան, այդուհանդերձ, գրվում է երկու տառով՝ *ո + ւ*.

այբուբենում *ու*-ի փոխարեն հանդես է գալիս *ւ* (վյուն) տառը: Իսկ *և*-ը արևմտահայերենում սովորաբար գրվում է *է + ւ* տառակապակցությամբ, սակայն արտասանության պլանում տարբերություն չի դրսևորում[1]:

Արևմտահայերենի հնչյունաբանության վերաբերյալ Աճառյանի դրույթները կարելի է ամփոփել արևելահայ-արևմտահայ հնչյունական համակարգի տարբերությունների մասին նրա եզրահանգումներով: Նա նախ և առաջ նշում է հնչյունական համակարգի արտասանական պլանում ի հայտ եկող տարբերությունները՝ բացահայտելով ու բացատրելով բաղաձայնական համակարգի եռաշարք-երկշարք հակադրությունը.

1. «Գլխավորապես պայթականների թրթռուն և պարզ խուլ աստիճաններն են, որ երկու գրական լեզուների մեջ իրարից տարբեր են հնչվում»[2]: Փաստելով, որ արևելահայերենում դրանք մնում են անփոփոխ, ինչպես գրաբարում էր, նշում է. «…արևմտյան գրաբարում պարզ խուլերը դառնում են թրթռուն, իսկ թրթռունները (ձայնեղները) դառնում են թավ (շնչեղ խուլ)»[3]: Փաստորեն, Աճառյանը արձանագրում է հնչյունափոխական մի կարևոր հանգամանք, որը նա անվանել էր տեղաշարժ-տեղափոխություն, ըստ որի՝ արևմտահայերենի բաղաձայնական համակարգը գրաբարյան եռաստիճանից վերածվել է երկաստիճան խլազուրկ համակարգի, որտեղ, ինչպես և վերը նշվեց, խուլ պայթականները հնչում են որպես ձայնեղներ, ձայնեղները՝ շնչեղ խուլեր: Այս փոփոխության հետ մեկտեղ, «Բառերի գրությունը, սակայն, չի փոխվում, և գրողներին է մնում որոշել, թե այս ինչ բառը *բ* տառով պետք է գրել, թե *փ* տառով և այլն»[4]:

Այս երևույթը, սակայն, միանշանակ չի գործում, ընկալվում ու բացատրվում:

Արևմտահայերենի ուսումնասիրությամբ զբաղվող ժամանակակից հեղինակները ուշադրություն են հրավիրում արևմտահայերի բանավոր խոսքում նկատվող պարզ խուլերի շրջանառման վրա: Ակնհայտ է դառնում, որ մեր օրերում սփյուռքահայ-արևմտահայությունը բանավոր խոսքում այլևս հետևողական չէ ձայնեղների պարտադիր շնչեղխլացման հարցում: Ըստ Յու. Ավետիսյանի, օրինակ, վերջին տարիներին Հայաստան-Սփյուռք հարաբերությունների սերտացումը, փոխադարձ ակտիվ շփումները և լեզվական տարբեր իրողությունների փոխներթափանցումներն ու, իհարկե, նաև արևմտահայերենի արդի գոյավիճակը հանգեցրել են ձայնեղ-խուլ հակադրության կրճատմանը և դժվարացրել նրանց տարբերակումը կենդանի խոսքում[5]: Մյուս կողմից՝ Ա. Սարգսյանի կարծիքով գերակա լեզուներն էլ իրենց ազդեցությունն են ունենում արևմտահայերենի բաղաձայնական համակարգի եռաստիճան դառնալու վրա[6]: Անդրադառնալով հիշյալ հարցին՝ Սաքապետոյանը, հաստատելով, որ արևմտահայերենում պարզ խուլերի առաջացումը կամ հստակորեն առանձնանալը արտասանության պլանում գերակա լեզուների ազդեցությամբ ևս պայմանավորվել կարող է, նշում է՝ այդ դեպքում նրա ընդգրկունությունը համակարգային չի լինի, այլ կտարածվի միայն որոշակի դիրքերի վրա: Նրա մոտեցմամբ արտասանական պլանում պարզ խուլերի առկայությունը հիմնականում պայմանավորված է բառի մեջ հնչյունի ունեցած դիրքով. «…պարզ խուլերի առկայությունը արևմտահայերենում հաճախ փոխազդեցական հնչյունափոխության հետևանք է»[7]:

Մեր կարծիքով այս իրողության պատճառը հիմնականում պայմանավորված է հնչողական հարմարությամբ, արտասանական ապարատի աշխատանքը ակամա հեշտացնելու ձգտումով: Որպես ապացույց կարող ենք վկայակոչել նաև Աճառյանի այն պնդումը, թե «Պոլսեցին այս բառերը ([*թուղթ, հաստ, մտանել, հատանիլ*]) հնչում է խուլ *տ* ձայնով, բայց հենց որ կարիք է լինում հեգելու կամ վանկերը բաժանելու, նույն *տ-ն* դառնում է *դ… թուխդը* կամ *թուխդը* և այլն, *հաստ է* կամ *հասդ է…*»[8]: Նրա պնդմամբ «Խոսողները, սակայն, գիտակից չեն թրթռունի և խուլի այս խաղերին, նույնիսկ խուլ

[1] Տե'ս Ավետիսյան Յու., Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական հնչյունաբանություն, Ե., 2011, էջ 5:

[2] Աճառյան Հր., Հայոց լեզվի պատմություն, Ե., հ. 2, 1951, էջ 554:

[3] Նույն տեղում, էջ 554:

[4] Նույն տեղում, էջ 554:

[5] Տե'ս Ավետիսյան Յու., Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական հնչյունաբանություն, Ե., 2011, էջ 31-32:

[6] Սարգսյան Ա., Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ, Ե., 1985, էջ 26:

[7] Սաքապետոյան Ռ., Արևմտահայերենի դասագիրք, Ե., 2006, էջ 12:

[8] Աճառյան Հր., Քննություն Պոլսահայ բարբառի, Ե., 1941, էջ 11:

բաղաձայններից հետո առաջացած փոփոխության, և միշտ այնպես են ըմբռնում, թե իրենց արտաբերած երկու զանազան հնչյունները միատեսակ թրթռուն են»[1]:

Իհարկե, մեր կարծիքով այս առումով մեծ ազդեցություն ունի նաև նախորդ դարի սկզբին պոլսահայերի՝ արևելահայերի հետ շփվելու և մեծապես ազդվելու հանգամանքը (այն շարունակվում է նաև մեր օրերում արևմտահայ-սփյուռքահայերի պարագայում):

Իսկ այն, որ Ռ. Սաքապետոյանը հանգամանորեն պարզաբանում է, թե ինչու *դժբախտ* բառը, արևմտահայերենի կանոնների համաձայն, չի հնչում *թշփախտ,* այլ փոխազդեցական հնչյունափոխության երեք տարբեր տեսակների հետևանքով հնչում է *թըշփախտ*[2], ըստ ամենայնի մեր տեսակետի առավել գիտական վերլուծությունն է: Բայց և այնպես, արևմտահայերենի կրողների հետ մեր շփումների ու նրանց խոսքը ոչ համապատասխան ապարատի օգնությամբ ուսումնասիրելով, կարող ենք պնդել, որ առավել հաճախ կարելի է լսել *թըշպախտ,* քան *թըշփախտ* ՝ ելնելով դարձյալ հնչողական հարմարավետությունից (Արտո Վաոն, Վիգեն Բողոսսյան...): Այս առումով հետաքրքիր է Աճառյանի բերած բնորոշ օրինակը. «Այսպես միևնույն՝ *դուռը բա'ց* նախադասությունը եթե ուղղված է մի հասարակ դռնապանի, արտասանվում է *դուռը բա'ց* կամ *տուռը պա'ց*, իսկ երբ ուղղված է մի գրական անձի, արտասանվում է *թուռը փա'ց»[3]:* Նմանօրինակ իրողություններից ելնելով՝ Սաքապետոյանը ենթադրում է, որ խուլերը լիովին չեն ձայնեղանում, այլ գրավում են որոշակի միջին դիրք (օրինակ) *պ*-ի և *բ*-ի միջև, «նույնը վերաբերում է ձայնեղների շնչեղխլացմանը»[4]:

Հետաքրքիր է, որ Աճառյանի կատարած քննությունից մոտ 15 տարի առաջ Հովի. Գազանճյանը արձանագրում է. «Արեւմտեան աշխարհաբարի մէջ այս երեք աստիճանները վերածուած են երկուքի, որովհետեւ միջակ [ձայնեղ] եւ թաւ [շնչեղ խուլ] բաղաձայններու հնչումները գրեթէ նոյնացած են»[5]: Նա «տառերու արդի (արեւմտեան) հնչումներուն համեմատ» պայթական խուլերը անվանում է «նուրբեր», իսկ «նմանաձայներ» է համարում այն բառերի շարքը, որոնք նմանվել են արևմտահայ երկշարք բաղաձայնական համակարգի պատճառով, օրինակ՝ գող և քող, թեւ և դեւ, ցախ եւ ձախ և այլն[6]:

Փաստորեն, երևույթը քննարկման առարկա դարձել է թե՛ Աճառյանից առաջ, թե՛ նրանից հետո և շարունակվում է ուսումնասիրության համար բաց մնալ, քանի որ լեզուն և հատկապես արևմտահայերենի արտասանությունը փոխվում է ինչպես այլ լեզուների (չէ՞ որ այժմ արևմտահայերենի կրողները հիմնականում տիրապետում են մի քանի օտար լեզուների), այնպես էլ լեզվական ու արտալեզվական մի շարք գործոնների ազդեցությամբ:

2. Հնչյունաբանության մյուս տարբերությունը, որ արձանագրում է Աճառյանը, վերաբերում է մասնավոր դեպքերի: Նա առանձնացրել է բառերի մի խումբ, որը, արևմտահայերենի օրինաչափությունների համաձայն, գրվում է երկու *յ*-ով՝ առաջացնելով նուրբ տարբերություններ նաև արտասանության պլանում: Այդպիսի բառերից են, օրինակ, *հայեացք* և *երեկոյեան* բառերը, որոնք արևմտյան գրականում հնչում են երկու *յ*-ով՝ *հայյացք, երեկոյյան*՝ ի տարբերություն արևելահայերենի մի *յ*-ով հնչողության՝ *հայացք, երեկոյան*[7]*:*

3. Աճառյանի առանձնացրած հնչական մյուս տարբերությունը վերաբերում է *-ուի* տառակապակցության արտասանությանը: Այն արևելահայերենում միշտ կարդացվում է *վի,* իսկ արևմտահայերենում՝ թե՛ *վի,* թե՛ *ուի.* կրավորական բայերի կազմում այն հնչում է *վի (սիրվի, բերվի, տրվի),* իսկ սեռական հոլովով դրված բառերի դեպքում՝ *ուի (կատուի, թթուի, արուի, քաղցուի):* Նա որպես բացառություն առանձնացնում է *լեզու* բառը, որի պարագայում սեռականով դրված տարբերակը հնչվում է որպես *լեզվի* (սպասելի *ուի-ի* փոխարեն)[8]:

4. Արևելահայ-արևմտահայ հնչական տարբերություններին անդրադառնալիս անհրաժեշտ է առանձնացնել մի փոքր բառախումբ ևս, որը, բնականաբար, չի անտեսվել Աճառյանի կողմից: Խոսքը գաղտնավանկ ունեցող որոշ բառերի մասին է, ինչպես՝ *բզկտել, ձեռնհաս, ձեռնտու, ընկճել,* այն

[1] Նույն տեղում, էջ 11:
[2] Սաքապետոյան Ռ., Արևմտահայերենի դասագիրք, Ե., 2006, էջ 12:
[3] Աճառյան Հր., Քննություն Պոլսահայ բարբառի, Ե., 1941, էջ 12:
[4] Սաքապետոյան Ռ., Արևմտահայերենի դասագիրք, Ե., 2006, էջ 11:
[5] Գազանճեան Յ., Նոր քերականութիւն արդի հայ լեզուի, Կ. Պոլիս, 1924, էջ 10:
[6] Տե'ս նույն տեղում, էջ 22:
[7] Տե'ս Աճառյան Հր., Հայոց լեզվի պատմություն, Ե., հ. 2, 1951, էջ 554:
[8] Տե'ս նույն տեղում, էջ 554:

դեպքում, երբ արևելահայերենում *ը*-ն արտասանվում է այլ դիրքերում՝ *բզկըտել, ձեռնըհաս, ձեռնըտու, ընկըճել* և այլն։

Անհրաժեշտ է նաև ընդգծել մի կարևոր հանգամանք. կան բառեր, որոնց դեպքում գաղտնավանկի *ը*-ի դիրքը իմաստատարբերակիչ (զատիչ) դեր է կատարում, ինչպես օրինակ՝ *անցնել* բառը առանց *ը*-ի արտասանության դեպքում ունի *անցնել* իմաստը, իսկ *ը*-ով՝ *անցընել* դեպքում՝ *անցկացնել* իմաստը, այդ պատճառով որոշ դեպքերում նախընտրելի է դառնում գաղտնավանկի *ը*-ն արտահայտել նաև գրության մեջ։ Այս իմաստով կարծիք կա, թե այդ հակադրությունը խոնարհման համակարգում իսկ դրսևորվում է, բայց ժամանակակից լեզվաբան Ավետիսյանի մոտեցմամբ «...օրինակ՝ անցյալ ժամանակի մի շարք կազմություններում դրանք ձևով ամբողջությամբ համընկնում են» *(անցնիլ> կ'անցնէի = անցնումէի, անցընել> կ'անց(ը)նէի= անցկացնում էի),* այդ պատճառով արդարացված է *անցընել* ներգործական-պատճառական բայի *ը*-ով գրությունը[1]։ Բնականաբար, այն դեպքերում, երբ գաղտնավանկի *ը*-ի դիրքը իմաստային տարբերություն է առաջ բերում արևմտահայ գրականի ներսում, ակնկալելի է նույնպիսի հակադրություն նաև արևելյան գրականի համարժեք բառի նկատմամբ։

5. Վերջապես ինչական ամենամեծ տարբերությունները ներկայացնող բառախումբը, ըստ Աճառյանի, օտար բառերն են և առավելապես նոր անձնանուններ ու տեղանունները։ «Արևելահայոց *կոմիտե, կուրս, կիլոգրամ* ևն բառերը արևմտահայը կարդում է *gomide, gurs, gilokram* և որպեսզի կարդա կովկասեցոց ձևով, գրում է *գումիդէ* կամ *քումիթէ, գուրս* կամ *քուրս, քիլօկրամ* ևն»[2]։ Նույն դժվարություններն են առաջանում նաև անձնանունների դեպքում, ինչպես՝ *Վիկտոր Հիւգօ,* արտասանվում է *Վիգդոր Հիւքօ,* և իրական արտասանությունն ապահովելու համար արևմտահայը պիտի գրի *Վիքթոր Հիւկօ։* Որպես արդյունք՝ ունենում ենք աղճատված գրություն։

Այստեղ անհրաժեշտ ենք համարում կատարել մի նկատառում ևս. փաստորեն, ինչ վերաբերում է բառերի այն խմբին, որտեղ արևելահայերը կարդում են ձայնեղ հնչյուններ՝ *բ, գ, դ, ձ, ջ,* ապա այս պարագայում խնդիրը (գրել այնպես, որպեսզի կարդան արևելահայերի պես) համեմատաբար հեշտ է. կգրեն պայթական խուլ համարժեքները՝ *պ, կ, տ, ծ, ճ (գրամ*-ը կգրեն *կրամ, գունդ-ը՝ կունտ),* և կկարդան ձայնեղ։ Իսկ երբ խոսքն այն դեպքերի մասին է, երբ արևելահայերը կարդում են պայթական խուլեր, արևմտահայերը գրեն ձայնեղ թե շնչեղ խուլ գրային նշանները, միևնույնն է, չեն կարդա արևելահայ արտասանությամբ, և հետևաբար շատ դժվար է լինում տարբերակել՝ արդյոք ձայնեղներն են ավելի մոտ պայթական խուլերին, թե, այնուամենայնիվ, շնչեղ խուլերը։ Եվ Աճառյանի նշած «իրական արտասանությունն» ապահովելու դեպքում *Հիւկօ* գրությունը լիովին արդարացված է, իսկ *Վիքթոր*-ը նույն հաջողությամբ կարող է *Վիկտոր գրվել* (չէ՞ որ *Վիքթոր* և Վիգդոր արտասանական տարբերակները հավասարապես տարբեր են *Վիկտոր*-ից։ Իսկ պայթական, թե շնչեղ խուլ արտասանություն նախընտրել՝ ճաշակի հարց է բարեհնչունության տեսանկյունից և ոչ թե «իրական արտասանությանն» ավելի մոտ կամ դրանից ավելի տարբեր լինելու հարց)։

Հնում փոխառված հատուկ անունների գրության մեջ լեզվաբանը փոփոխություն չի արձանագրում՝ *Պողոս, Մարտիրոս,* որոնց արտասանությունը, բնականաբար, լեզվի ընդհանուր հնչյունական համակարգին համապատասխան՝ *Բողոս, Մարդիրոս* է հնչվում, իսկ նոր անունները գրում են *Բիեռ* կամ *Փիեռ։* Հին անուններից գրության որոշակի փոփոխություն է նկատվում *Հովակիմ* անվան դեպքում, որը Պոլսի բարբառում հանդիպում էր *Օվագէմ* ձևով[3]։

Ինչ վերաբերում է աշխարհագրական անուններին, ապա դրանցից առավել հները գրությունն անփոփոխ են պահում *(Եգիպտոս, Պելոպոնէս, Գաղիա, Գերմանիա),* սակայն արտասանվում են երկաստիճան խլազուրկ համակարգին համապատասխան՝ *Յեքիբդոս, Բելսբոնէս, Քաղիա, Քերմանիա։* Մյուս կողմից, սակայն, նոր անունները, հետևելով ընդհանրապես իտալական ձևին, ըստ Աճառյանի, գրվում են *Պելճիքա, Զուիցերիա, Շուէտ* ևն, այն դեպքում, երբ արևելահայերենը ռուսերենի համաբանությամբ տառադարձում է որպես *Բելգիա, Շվեյցարիա, Շվեդիա* ևն։ Որպես ցայտուն օրինակ կարելի է առանձնացնել թերևս *Ռուսաստան* տեղանվան արևմտահայ տառադարձումը՝ *Ռուսիա* տարբերակով։

Ըստ էության, օտար բառերի տառադարձության և արտասանության ոլորտը այն բաժինն է, որտեղ նախ արևմտահայերենը չունի նորմավորված ու համակարգված սկզբունքներ, որոնց հետևելով՝

[1] Տե՛ս Ավետիսյան Յու., Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական հնչյունաբանություն, Ե., 2011, էջ 16:

[2] Աճառյան Հր., Հայոց լեզվի պատմություն, Ե., հ. 2, 1951, էջ 554-555:

[3] Տե՛ս Աճառյան Հր., Քննություն Պոլսահայ բարբառի, Ե., 1941, էջ 23:

միօրինակ կներկայանան օտար բառերը արևմտահայերենում, ապա և սա հնչյունական համակարգի հենց այն ոլորտն է, որով երկու գրականները առավել ցայտուն տարբերություններ են դրսևորում:

Վերոհիշյալ խնդրին մեկ այլ տեղ անդրադառնալով՝ Աճառյանը ուշագրավ դիտարկումներ է առաջ բերում: Այսպես՝ նա նշում է. «Բելգիայի մայրաքաղաքը ֆրանսերեն գրությամբ գրվում է *Bruxeles,* որ, ըստ օրինի, պիտի հնչվեր *Բրյուքսել,* բայց հնչվում է *Բրյուսել:* Դրա համար էլ արևմտահայերը գրում են *Պրիւքսէլ,* իսկ արևելահայերը գրում են *Բրյուսել* (խրախուսվելով ռուսերեն *Брюссель* ձևից)»[1]: «*Ճապոնիա* երկրանունը չինական ծագում ունի (ճապոնացիք իրենց երկիրը կոչում են *Նիպպոն*): Չինարենում այդ բառը կազմված է *jə «արեգակ, արև»+pən* «ելնել, ելք, ծագել», ուստի նշանակում է *«Արևելք»* (այսպես է կոչված, քանի որ այդ երկիրը Չինաստանի արևելքում է): Նախ ֆրանսիացիք գրել են իրենց լեզվի տառադարձությամբ՝ *Japan,* որ շատ համապատասխան է չինարենին և կարդացվում է *Ժապոն:* Նույնը անգլիացիք կարդում են *Ջապըն,* որովհետև անգլերենում *ժ* չկա, և տառը կարդացվում է *ջ:* Սա առաջին քայլն է սխալ տառադարձության: Գերմանացիք, վերցնելով նույն բառը, կարդում են *Յափոն,* որովհետև իրենց լեզվի մեջ ո՛չ *ժ* կա և ո՛չ էլ *ջ,* այլ *j* տառը կարդացվում է *y=յ:* Գերմաներենից էլ նույն բառը, անցնելով ռուսերենին, գրվում և հնչվում է *Япония:* Հայերենում արևմտահայերը գրում են *Ճաբոն,* որ համապատասխանում է անգլերենին (գրությամբ և հնչումով): Արևելահայերը, մերթ հետևելով ռուսերենին, գրում են *Յապոնիա* և մերթ հետևելով արևմտահայերենին, գրում են *Ճապոնիա,* որի մեջ *ճ* տառի հնչումը սխալ է, որովհետև արևմտահայ ձևով է»[2]: Մանրամասն և քայլ առ քայլ բացատրությանը հավելենք միայն, որ *Յապոնիա* ձևը հնացած է և այժմ գործածությունից դուրս է եկել՝ իր տեղը զիջելով արևմտահայերենից փոխառված ձևին: Մյուս կողմից, սակայն, մեր կարծիքով կտրուկ ու ոչ ճիշտ է Աճառյանի այն որակումը, թե սխալ է *Ճապոնիա* ձևը այն պատճառով միայն, որ արևմտահայերեն ձևն է, քանի որ փոխադարձ փոխառության որակ ունի սա ինչու ոչ արտասանության ոլորտում ևս:

Անդրադառնալով հնչյունափոխական երևույթների դրսևորմանը արևմտահայերենում՝ նշենք, որ Աճառյանը դրանք առանձնակի քննության առարկա չի դարձրել, բայց Պոլսի բարբառի ուսումնասիրության մեջ հանգամանորեն կանգ է առել այդ բարբառի հնչյունափոխական տարբեր երևույթների վրա, որոնք այժմ նկատվում են նաև արևմտահայ գրականությունում: Այսպես, եթե *ա* ձայնավորը արևելահայերենում կայուն ձայնավոր է, և նրա հնչյունափոխության դեպքերը համակարգային բնույթ չունեն, ապա արևմտահայերենում այն ավելի հաճախ է հնչյունափոխության ենթարկվում:

Կանոնավոր հնչյունափոխության տարբերակներից բացի, հարկավոր է նշել նաև *ա>ը* հնչյունափոխության մասին բառասկզբում, քանի որ այս երևույթը բնորոշ է միայն արևմտահայերենին և ոչ մեծաքանակ բառերի դեպքում է գործում: Աճառյանի օրինակներից նշենք *առնել>անել>ընել, ասել>ըսել*, ու սա հատկապես հանդիպում է ռնգային *և*-ին նախորդող դիրքերում:

Աճառյանը որպես Պոլսի բարբառի առանձնահատկություն առանձնացնում է նաև *ա>ի* հնչյունափոխության բառասկզբի դեպքերը, որոնք, սակայն, նկատվում են նաև արևմտահայերենում, և կարելի է տարածել արևմտահայերենի վրա ևս: Այսպես, ըստ նրա՝ *անկանիլ>ինչալ* փոփոխությունը առաջ է եկել այսպես. նախ *անկանիլ* բայը վերածվել է *ընկնիլ* ձևի, ապա նախաձայն *ը*-ն վերջին վանկի *ի*-ի ազդեցությամբ (առնմանությամբ) փոխվել է *ի*-ի, հետո դարձել է *ինիլ,* և լծորդության փոփոխությամբ էլ վերջնականապես ձևավորվել է *ինչալ* բայաձևը[3]: Հետաքրքիր է, որ արևելահայերենը հնչյունափոխության այս շղթայի *(անկանիլ-ընկնիլ-ինկնիլ-ինիլ-ինչալ)* առաջին քայլն է պահպանել, իհարկե, լծորդության փոփոխությամբ), իսկ ահա արևմտահայերենում հնչյունափոխությունը մի քանի քայլ ևս առաջ է գնացել:

Ի-ի հնչյունափոխության դեպքերից առանձնացնում է մի շարք յուրահատկություններ, որոնցից, մեր դիտարկմամբ, արևմտահայերենին է անցել *լինել-ըլլալ* ձևը:

Աճառյանը *այ* երկբարբառի փոխակերպումը (*ա*-ի կամ *է*-ի) և պահպանումը ներկայացնում է որպես համապատասխանաբար բարբառին և գրական լեզվին հատուկ իրողություններ՝ *այդ-ադ, այլ-ալ, այրել-էրել:* Վստահորեն կարող ենք արձանագրել, որ *այ*-ի հնչյունափոխումը *ա*-ի, իսկ երբեմն նաև *է*-ի ժամանակակից արևմտահայերենի բնորոշ օրինաչափություններից են *(քալել, էրիկմարդ* և այլն):

[1] Աճառյան Հր., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ VI, Ե., 1971, էջ 74:

[2] Նույն տեղում, էջ 77-78:

[3] Աճառյան Հր., Քննություն Պոլսահայ բարբառի, Ե., 1941, էջ 18:

Ույ հնչյունակապակցության *ոյ* գրությունն այսօր էլ արևմտահայերենի ամենաբնորոշ իրողություններից է՝ *լոյս, քոյր, զգոյշ* և այլն, նույնը նաև՝ *յա* հնչյունակապակցության՝ *էա* գրության դեպքում՝ *մեծութեան, լայնութեան* և այլն։ Ուշագրավ ենք համարում այն, որ Աճառյանը նշում է, որ *էա*-ն գրական լեզու է մուտք գործում *յա* տարբերակով՝ որպես օրինակներ բերելով *առաքեալ-առաքյալ, Արուսեակ-Արուսյակ, լուսաւորեալ-լուսավորյալ, օրհնեալ-օրհնյալ* և այլն։ Պետք է նշել, սակայն, որ այսօր ականատես ենք լինում այն իրողությանը, որ այս բոլոր ձևերն արևմտյան գրականում շարունակում են պահպանել իրենց գրության *էա* և արտասանության *յա* ձևը՝ «Ամրան վերջին օրը Հայաստանի մայրաքաղաքի բնակիչներն ու հիւրերը կարելիութիւն ունեցան զգալու Ուիլեըմ Սարոյեանի կեանքին եւ ստեղծագործութիւններուն մթնոլորտը՝ նշելով անոր ծննդեան 108ամեակը Երեւանի Թումանեանի այգիին մէջ»[1]և այլն։

Մինչև բաղաձայնների հնչյունափոխական երևույթները քննելը անհրաժեշտ ենք համարում նշել, որ եթե անգամ արևմտահայերենի հնչյունափոխական երևույթների քննությունը մենք բխեցնում ենք Աճառյանի պոլսահայ բարբառի ուսումնասիրությունից, այդ առումով արևմտահայերենի հնչյունափոխության որոշ իրողություններ կամ օրինաչափություններ եթե անգամ չեն ընդգրկվում այստեղ, ապա արդեն եղած չափով հիմք են ընդունվում հետագա ուսումնասիրությունների համար։ Հարցին անդրադարձողներից Յու. Ավետիսյանը «Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական հնչյունաբանություն» գրքում, Ս. Ղուկասյանը «Գրական արևելահայերենի և արևմտահայերենի հնչերանգային առանձնահատկությունները», Ռ. Սաքապետոյանը «Արևմտահայերենի դասագիրք», Ա. Սարգսյանը «Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ» գրքերում որպես հիմք-նշաձող ընդունելով Աճառյանի դրույթները՝ կատարում են իրենց դիտարկումները և հետագա ուսումնասիրությունները։

Բաղաձայնների հնչյունափոխական երևույթների քննությունը լեզվաբանը սկսում է բավականին հետաքրքիր իրողությունների արձանագրումով. «Բառասկզբում գրաբար *բ*՝ Պոլսի բարբառում սովորական կանոնով դառնում է *բ. բակ-բագ, բամբակ-բամբագ, բանալ-բանալ...»*[2]։ Այստեղ, սակայն, նկատվում են նաև որոշակի բացառություններ՝ *բուք-փուք, բամբասել-փամփասել, բորբոսիլ-փորփրսնիլ* և այլն։ Վերոհիշյալ օրինաչափությունը Աճառյանը տարածում է նաև *գ*-ի, *դ*-ի, *ձ*-ի, *ջ*-ի վրա՝ *գաղտուկ-գաղդուգ, դանակ-դանագ, ձայն-ձան, ձիւն-ձուն, ջարդել-ջարթել* և այլն։ Փաստորեն, այնուհետև վկայում է, որ գրական լեզվի ազդեցությամբ, «կրոնական լեզվից» փոխառվելիս հատուկ անունների և թուրքերենից ազդված բառերի դեպքում *բ*-ն դառնում է *փ, պ, կ, տ, ծ, ճ* բաղաձայնները վերածվում են *բ, գ, դ, ձ, ջ*-ի՝ *պատառել-բադռել, ծակուիլ-ձագվիլ, ծալլել-ձալլել, ճանապարհ-ջամփա, Տաճատ-Դաջատ*[3] և այլն։ Փաստորեն, բաղաձայնների հնչյունափոխությանն անդրադառնալով՝ գործնականում ցույց է տալիս երկաստիճան խլազուրկ պայթական բաղաձայնական համակարգի էությունը, չնայած, ինչպես արդեն նշել ենք, մյուս կողմից նաև երևում է, որ որոշ դիրքերում խուլ հնչյունները պահպանվում են։

Շփական բաղաձայններին անդրադառնալով՝ Աճառյանը *ռ* և *ր* բաղաձայնների առիթով մասնավորապես գրում է, որ Պոլսի բարբառում դրանք սկսել են շփոթվել. «Հասարակ գործածության մեջ թեև *ռ* և *ր* իրարից տարբեր հնչումներ ունին, բայց հաճախ *ռ* դրվում է սաստկություն ցույց տալու համար, իսկ *ր* ավելի տկար պարագաներում է գործածվում»[4]։ Իսկ մեր օրերում արդեն այս հակադրությանն անդրադառնալով՝ ժամանակակիցները արձանագրում են. «Արևմտահայերենում այս հակադրությունը չի գործում, և արտասանության պլանում կատարվել է համահարթեցում նույնիսկ *ռ* հնչույթի համար ավանդական դիրքերում (*և*-ից առաջ)՝ *առնել-արնել, դառնալ-թարնալ...»*[5]։

Աճառյանը ուղղագրությանն անդրադառնալիս զարմանալիորեն քիչ բառեր է ներկայացնում (բացի վերը նշվածներից), որոնք այս կամ այն պատճառով տարբերվում են իրարից երկու գրական լեզուներում։ Ընդ որում, բերելով օրինակները՝ նա սխալ է համարում արևմտահայ տարբերակները. *կենտրոն-կեդրոն, արձագանք-արձագանգ, դժգոյն-տժգոյն, դժգոհ-տժգոհ*[6] և այլն։

Հնչյունական համակարգի այս բոլոր տարբերությունները հետաքրքրություն են առաջացրել լեզվաբանների, հետազոտողների շրջանում՝ ուսումնասիրելու՝ այս կամ այն լեզվական մակարդակում

[1] http://asbarez.com/arm/263099/Ուիլեըմ-Սարոյեանի-108ամեակի-նշում/

[2] Աճառյան Հր., Քննություն Պոլսահայ բարբառի, Ե., 1941, էջ 32:

[3] Տե'ս Աճառյան Հր., Քննություն Պոլսահայ բարբառի, Ե., 1941, էջ 32-83:

[4] Նույն տեղում, էջ 70:

[5] Սաքապետոյան Ռ., Արևմտահայերենի դասագիրք, Ե., 2006, էջ 13:

[6] Աճառյան Հր., Հայոց լեզվի պատմություն, Ե., հ. 2, 1951, էջ 555:

առկա տարբերությունները որքանով են ազդում երկու գրականների հնչերանգի վրա, կան արդյոք հնչերանգային, տեմպի, արագության տարբերություններ, թե ոչ: Այդուհանդերձ, սակայն, հարկ չենք համարում անդրադառնալ դրանց, քանի որ Աճառյանն իր աշխատություններում չի բարձրացրել այդ հարցերը, այնուամենայնիվ, որպես հետաքրքիր փաստ, նշենք միայն, որ խոսքի տևողության կամ տեմպի մասին Ա. Սարգսյանի կատարած վիճակագրական հետազոտությունից պարզ է դառնում, որ արևելահայ խոսքն ավելի արագ է[1], իսկ համեմատաբար ուշ շրջանում իր կատարած հետազոտության արդյունքներով Ս. Ղուկասյանը արձանագրում է, որ նման տարբերություն, այնուամենայնիվ, չկա[2]:

Օգտագործված գրականություն

1. Աճառյան Հր., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ VI, Ե., 1971:
2. Աճառյան Հր., Հայոց լեզվի պատմություն, Ե., հ. 2, 1951:
3. Աճառյան Հր., Քննություն Պոլսահայ բարբառի, Ե., 1941:
4. Ավետիսյան Յու., Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական հնչյունաբանություն, Ե., 2011:
5. Գազանճեան Յ., Նոր քերականութիւն արդի հայ լեզուի, Կ. Պոլիս, 1924:
6. Ղուկասյան Ս., Գրական արևելահայերենի և արևմտահայերենի հնչերանգային առանձնահատկությունները, Ե., 1990:
7. Սարգսյան Ա., Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ, Ե., 1985:
8. Սաքապետոյան Ռ., Արևմտահայերենի դասագիրք, Ե., 2006:
9. http://asbarez.com/arm/263099/Ուիլերմ-Սարոյեանի-108ամեակի-նշում/

[1] Սարգսյան Ա., Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ, Ե., 1985, էջ 78:

[2] Ղուկասյան Ս., Գրական արևելահայերենի և արևմտահայերենի հնչերանգային առանձնահատկությունները, Ե., 1990, էջ 7:

ՀՏԴ 81՝36

Հայոց լեզու

Արեվիկ Լալայան
Արցախի պետական համալսարան, շրջանավարտ
arevik.lalayan@mail.ru

ԳԼԽԱՎՈՐ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՈՐԵՎԷ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՆՈՂ ՉՓոխԱԿԵՐՊՎՈՂ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆՆԵՐԸ ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՊԱՏՄԱՎԵՊԵՐՈՒՄ

«Գլխավոր նախադասության որևէ անդամի լրացնող չփոխակերպվող երկրորդականները Հայկ Խաչատրյանի պատմավեպերում» վերնագրով հոդվածում անդրադարձել ենք այն չփոխակերպվող բարդ ստորադասական նախադասություններին, որոնց երկրորդական նախադասությունը կատարում է գերադաս նախադասության որևէ անդամի պաշտոն: Այս բնույթի նախադասությունների փոխակերպմանը կարող են արգելք հանդիսանալ, մի կողմից՝ բաղադրիչ նախադասությունների կապակցության որոշ ձևեր, մյուս կողմից՝ փոխակերպված տարբերակում ելակետային կառույցներում առկա իմաստային երանգավորումների չպահպանվելը: Բնագրային ուսումնասիրությունից պարզել ենք, որ կարող են լինել չփոխակերպման այլ պատճառներ ևս, ինչպես, օրինակ՝ ուղիղ խնդիր ստորադաս նախադասության կազմում ուրիշի ուղղակի խոսքի առկայությունը, երկրորդական նախադասության ստորոգյալի ժխտական լինելը, երկրորդական նախադասությունների՝ իրենց հերթին երկրորդական նախադասություն ունենալը և այլն:

Բանալի բառեր՝ չփոխակերպվող նախադասություն, գերադաս անդամ, փոխակերպում, կախյալ նախադասություն, կապակցման միջոց, ծավալուն երկրորդական նախադասություն, ոճական անհարթություն:

Аревик Лалаян
АрГУ, выпускница
arevik.lalayan@mail.ru

ДОПОЛНЯЮЩИЕ НЕ ПРЕОБРАЗОВАННЫЕ ВТОРИЧНЫЕ ПРЕДЛОЖЕНИЯ КАКОГО-НИБУДЬ ЧЛЕНА В РОМАНАХ АЙКА ХАЧАТРЯНА

В статье "Дополняющие не преобразованные вторичные предложения какого-нибудь члена в романах Айка Хачатряна" мы говорили о токих не преобразованных сложноподчененных предложениях, вторичное предложение которых играет роль члена главного предложения. Преобразованию таких предложений могут предотвратить с одной стороны некоторые формы связи компонетнтых предложений,с другой стороны не сохроненность в преобразованном варианте в начальных формах существующего оттенка смысла. В первоначальном исследовании мы обнаружили,что могут быть и другие причины непреобразования.Например: присутствие прямой речи в прямой объект вторичном предложении, отрецательное сказуемое в вторичном предложении, имение вторичного предложения в самом втаричном предложении, и так далее.

Ключевые слова: не преобразованные предложения,

Arevik Lalayan
ASU, Graduate
arevik.lalayan@mail.ru

SUPPLEMENTARY NOT CONVERTED SECONDARY PROPOSALS OF ANY MEMBER IN THE HOMES OF HAYK KHACHATRYAN

In the current article we discuss the unconverted sentences, where subordinate clauses perform a certain grammatical function to the principal clause. The process of conversion may represent a difficult set of problems: on one hand some types of the connection of the clauses, on the other hand the fact of not preserved shades of meaning of the basic sentences in the converted sentences. But according to the course of our investigation, we can point out that other difficulties may also be possible: e. g. the presence of the reported speech in the object clauses; the negative predicate of the subordinate clause, the presence of the third type subordinate clauses, etc.

Keywords: not transformed sentences, the main sentence member, transformation, dependent offer, connectivity, extensive secondary offer, stylistic imperfection.

Չփոխակերպվող նախադասությունների մեջ մեծ թիվ են կազմում այն բարդ ստորադասական նախադասությունները, որոնց կախյալ եզրը լրացնում է ամբողջ գլխավոր նախադասությանը՝ իր լրիվ ծավալով: Սրան հակառակ, համեմատաբար քիչ են այնպիսի չփոխակերպվող նախադասությունները, որոնց ստորադաս բաղադրիչը լրացնում է ոչ թե ամբողջ գլխավորին, այլ նրա մեկ բառով կամ բառակապակցությամբ արտահայտված անդամին՝ լրացնելով կամ ընդարձակելով դրանց իմաստները ստորոգումային միավորներով: Այս բնույթի նախադասությունները գլխավոր նախադասության անդամներին (բացառյալ պարզ ստորոգյալը) հարաբերակից կախյալ նախադասություններն են:[1]

Այսպիսով՝ կարող ենք նշել, որ գերադաս եզրի որևէ անդամի կամ բառակապակցության լրացնող երկրորդական նախադասությունները նույնպես կարող են չփոխակերպվել կամ չպարզեցվել: Այս երևույթը պայմանավորված է հիմնականում երկու գործոնով.

1. Փոխակերպման համար արգելք են հանդիսանում բաղադրիչ նախադասությունների կապակցության որոշ ձևեր:

2. Փոխակերպման համար արգելք է հանդիսանում փոխակերպված տարբերակում ելակետային կառույցներում առկա իմաստային երանգավորումների չպահպանվելը:[2]

Գլխավոր նախադասության որևէ անդամի լրացնող չփոխակերպվող նախադասությունները բնութագրելու համար ներկայացնենք կապակցման այն միջոցները, որոնք արգելք են դառնում փոխակերպման համար.

ա)Այն բարդ նախադասությունները, որնց կախյալ եզրը, անկախ իր շարահյուսական գործառույթից, գերդասի հետ կապվում է ***ուր*** կամ ***որտեղ*** հարաբերականներով, ենթակա չեն փոխակերպման:[3] Բերենք օրինակներ Հ. Խաչատրյանի պատմավեպերից.

Արածանիի ակունքների մոտ է եղել հայոց զորքի գլխավոր բանակատեղին՝ Շահազի վանքը, ***ուր աշխարհաժողովներ էին գումարում***:

Դա Բագրատն էր հրաման տվել ետ քաշվել այնտեղից , ***որտեղ արցախցիները զգալի կորուստներ էին կրել***:

Բերված երկրորդականները գլխավորի հետ կապակցված են ***ուր*** և ***որտեղ*** հարաբերականներով, և կատարում են որոշչի և տեղի պարագայի շարահյուսական գործառույթ, ընդ որում ոչ առաջինը, ոչ երկրորդը չեն փոխակերպվում մի բառով կամ բառակապակցությամբ արտահայտված անդամով:

բ)Փոխակերպում թույլ չեն տալիս նաև այն կապակցությունները, որոնք իրացվել են ***ինչ, որ*** և ***ով*** հարաբերականների թեքված ձևերով:[4] Օրինակ.

Ապարանքի առջև, հսկա պատի կենտրոնական մասում, նրբին արվեստով քանդակված էր արևի գունդը, ***որից սկիզբ առնող բոսորագույն ճառագայթները տարածվում էին չորս բոլորը:***

ԱվանԿիրակոսի որդին էր, հարազատ որդին, ***ում չէր փոխի նույնիսկ Գագիկ արքայի թագի հետ:***

Ինչ, որ, ով հարաբերականների թեքված ձևերով կապակցված նախադասությունների չփոխակերպման համար կարևոր դեր ունի նաև երկրորդական նախադասության շարահյուսական գործառույթը, ինչպես նաև կապակցող միջոցների թեք ձևերով հանդես գալը: Եթե նշված հարաբերականներով կապակցված երկրորդականները կատարում են ենթակայի կամ ուղիղ խնդրի պաշտոն, ապա փոխակերպման ենթակա են:[5]Ա.Պապոյանն ու Խ.Բադիկյանը նշված բացառություններին ավելացնում են ևս մեկը. այն նախադասությունները, որոնց կախյալ եզրը

[1]Պապոյան Ա. Ի., Բադիկյան Խ. Գ., Ժամանակակից հայոց լեզու. Շարահյուսություն, Ե., 2003, էջ 372
[2]Տե'ս, Պապոյան Ա. Ի.,Բադիկյան Խ. Գ., նշվ. աշխ.
[3]Պապոյան Ա. Ի., Բադիկյան Խ. Գ., Ժամանակակից հայոց լեզու. Շարահյուսություն, Ե., 2003, էջ 411
[4]Պապոյան Ա. Ի., Բադիկյան Խ. Գ., Ժամանակակից հայոց լեզու. Շարահյուսություն, Ե., 2003, էջ 411
[5]Գարեգինյան Գր. Լ., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1984, էջ 353

կապակցվել է հատկացուցչի դեր կատարող հարաբերականով և ունի բաղադրյալ ստորոգյալ՝ ածական վերադրով, վերջիններս նույնպես կարող են փոխակերպվել:[1]Քանի որ մեր ուսումնասիրության նյութը չփոխակերպվող նախադասություններն են, նշված հարաբերականներով կապակցված փոխակերպման ենթակա նախադասությունների օրինակներ չենք ներկայացնում:

Ինչ, որ, ով հարաբերականները կարող են հանդես գալ նաև կապի խնդրի դերում և նախադասությունները կապակցել հետևյալ կառույցներով՝ ***ում համար, որի պատճառով, ում մասին, որի մասին, ում մեջ, ինչի մասին*** և այլն: Բերենք օրինակներ.

Արքան Աղեղնավորի պատվանդանին դրեց մի փոքրիկ սկահակ, ***որի մեջ թանկագին քարեր կային:***

Ծերունին իր դեսպանական կյանքի քառուղիներում բազում ու բազմաբնույթ հանձնարարություններ էր կատարել, բայց այս մեկը, ***որի համար նա եկել էր Տիգրոն, առավել ծանր ու դժվարին էր թվում:***

գ)Կան նաև որոշակի ոճական և իմաստային յուրահատկություններ ունեցող շաղկապներ, ինչպես՝ ***մանավանդ որ, ինչ է թե, այնքան որ, չլինի թե, թե ինչ է*** և այլն, որոնցով կապակցված երկրորդականները, որպես կանոն, փոխակերպման ենթակա չեն, քանի որ այս դեպքում կկորչեն այդ շաղկապների ակնարկած իմաստային և ոճական երանգները:[2]Բերենք օրինակներ:

Յուրաքանչյուր արցախցի տասն անգամ երդվելիս հինգ անգամ ասում է աստված վկա, հինգ անգամ էլ՝ արևս վկա, ***այնքան որ ոչ հեթանոս Վահագնն է հաղթում արցախցուն, ոչ էլ քրիստոնյա Հիսուս Քրիստոսը*** :

Երբ արքայական ծիրանին զցում են մարդու ուսերին, նա պարտավոր է այն չհանել առնվազն մի ամբողջական գիշեր ու ցերեկ, ***ինչ է թե ժամանակից շուտ հանելը վատ շան է:***

դ)Հաճախ փոխակերպման չեն ենթարկվում նաև ***այնքան… որ, այնպես … որ, այնպիսի … որ*** կապակցական կաղապարներով ձևավորված բարդ ստորադասական նախադասությունները:[3]

Այնքան … որ շաղկապով հիմնականում կապակցվում են չափի պարագա երկրորդական նախադասությունները, որոնք ենթակա չեն փոխակերպման: Օրինակ. Այդ մտքերն այնքան տանջահար արեցին Բակին, **որ նա սկսեց բարձրաձայն խոսել:**

Ջուրն այնքան սառն էր, ***որ ոտքը գետի մեջ դնելուն պես Գազը սկսեց սրթսրթալ:***

Բերված նախադասությունները չեն փոխակերպվում, որովհետև փոխակերպման արդյունքում կստացվեն իմաստային և ոճական տեսակետից անհարթ կառույցներ:

Այնպես … որ կաղապարով կապակցվում են ձևի պարագա երկրորդական նախադասությունները, որոնք կարող են չփոխակերպվել: Օրինակ.

Բայց մինչև պարսկական զորքն ամբողջովին կխուժեր ներս, Կրեսոս արքան գլուխը կորցրել էր այնպես, **որ այլևս չէր մտածում քաղաքի պաշտպաններին ոգևորելու մասին:** Չեն փոխակերպվում նաև ***այնպիսի … որ*** կաղապարով կապակցված որոշիչ երկրորդականները: Բերենք օրինակներ.

Գիտեմ, դու ուզում ես այնպիսի խաղ սարքել, **որ նա արժանանա իմ ատելությանը:** Նա փայտից այնպիսի սնդուկներ ու զարդատուփեր էր սարքում, ***որ կհափշտակեին աշխարհի մեծ թանգարանները:***

Բերված նախադասությունների փոխակերպմանը խոչընդոտում են ոչ միայն կապակցման եղանակները, այլև իմաստային որոշ նրբերանգներ, որոնք չեն պահպանվում փոխակերպված տարբերակում:

Այսպիսով՝ կարող ենք նշել, որ ***այնքան … որ, այնպես … որ, այնպիսի … որ*** կաղապարներով կապակցվում են համապատասխանաբար չափի, ձևի պարագա և որոշիչ երկրորդականներով բարդ ստորադասական նախադասություններ, որոնք հիմնականում փոխակերպման չեն ենթարկվում, քանի որ փոխակերպման գործընթացին խանգարում են վերոնշյալ կապակցման միջոցները, իսկ երբեմն էլ այդ միջոցներին զուգահեռ՝ զանազան այլ հանգամանքներ:

Բարդ ստորադասական նախադասության փոխակերպվելուն կարող է խանգարել ոչ միայն կապակցման եղանակը, այլև այս կամ այն իմաստային երանգների անխուսափելի կորուստը:

---

[1]Պապոյան Ա. Ի., Բադիկյան Խ. Գ., Ժամանակակից հայոց լեզու. Շարահյուսություն, Ե., 2003, էջ 412

[2]Գարեգինյան Գր. Լ., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1984, էջ 355

[3]Գարեգինյան Գր. Լ., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1984, էջ 355

Այսինքն՝ պարզ նախադասության չեն վերածվում այն բարդ ստորադասական նախադասությունները, որոնց փոխակերպված տարբերակում չեն պահպանվում ելակետային կառույցներում առկա իմաստային երանգավորումները: Այսպես՝ որոշչային կախյալ նախադասությամբ բարդ նախադասությունները մեծ մասամբ փոխակերպվում են՝ չհաշված մեր նշած կետերի, որոնք չեն փոխակերպվել կապակցման եղանակների պատճառով: Սակայն կան նաև որոշչային այնպիսի նախադասություններ, որոնց համապատասխան բառով կամ բառակապակցությամբ դրսևորված անդամով փոխակերպվելուն խոչընդոտում է ոչ թե կապակցման եղանակը, այլ իմաստային երանգների անխուսափելի կորուստը: Այդպիսիք են հետևանքային և նպատակային երանգով օժտված որոշչային կախյալ նախադասությունները:[1]Բերենք օրինակներ մեր ուսումնասիրած փաստական նյութից.

Պետք է այնպիսի գործ բռնես, ***որ ուրիշներն ասեն՝ խելքին մոտ բան չէ:***

Հետո մի այնպիսի հիվանդություն ընկավ այստեղ, ***որ տարիներով ոչ մի երեխա չէր ծնվում:***

Առաջին նախադասությունն ունի նպատակային երանգով որոշիչ երկրորդական նախադասություն, իսկ վերջինը հետևանքային երանգով որոշիչ երկրորդական նախադասություն: Բերված նախադասություններից ոչ մեկն էլ չի կարող փոխակերպվել որոշչային գործառույթ ունեցող համապատասխան բառով կամ բառակապակցությամբ, քանի որ չեն պահպանվի նպատակային և հետևանքային իմաստային երանգները: Բացի նշված իմաստային երանգներից՝ բերված նախադասությունների փոխակերպմանը խանգարում է նաև ***այնպիսի … որ*** կապակցման կաղապարը: Փոխակերպված տարբերակում ելակետային կառույցներում առկա իմաստային երանգավորումների չպահպանման պատճառով չեն փոխակերպվում նաև այն բարդ ստորադասական նախադասությունները, որոնց ստորադաս եզրը ձևի կամ չափի պարագաներ են՝ հետևանքային կամ նպատակային երանգով:[2] Բերենք օրինակներ:

Դու չես կարող այնպես անել, ***որ Արցախում ցերեկն ավելի երկար տևի, քան աշխարհի որևէ կողմում:***

Ծիծաղում էի այնքան բարձր, ***որ իմ ձայնից կարող էին արթնանալ հարևան տներում քնած մարդիկ*** :

Բարդ ստորադասական նախադասությունը չի կարող փոխակերպվել, եթե արդյունքում ստացվում է ոճական և արտահայտչական տեսակետից անհարթ կառույց: Ենթակայական կախյալ նախադասությամբ շատ կառույցներ փոխակերպվում են, բայց հաճախ կարող են ստացվել ոճական անհարթություններ: Այդպիսիք են, օրինակ, գերադաս բաղադրիչում ***թվալ*** բայով արտահայտված ստորոգյալ ունեցող նախադասությունները[3] և ծավալուն երկրորդական նախադասությունները: Բերենք օրինակներ:

Նրան թվում էր, ***թե վաղն ավելի լավ կլինի, քան այսօր:***

Կյուրոսին թվում էր, ***թե ինքն աշխարհ է եկել մարդկանց ուսուցանելու, նրանց միանման օրերին իմաստ հաղորդելու համար*** :

Ես քո խորհրդականների խելքը չեմ չափել, գիտեմ միայն, որ նրանք նիրհում են իրենց տոհմածառի շվաքի տակ՝ նույնիսկ չլսելով խորհրդարանի դահլիճի դռան ճռռոցը, որ հասնում է մինչև Սմբատաշեն պարիսպներից դուրս գտնվող Արծրունյաց եկեղեցի՝ փչացնելով ավագ քահանայի նուրբ լսողությունը:

Վերջին օրինակում ունենք ծավալուն երկրորդական նախադասություն, որը չի փոխակերպվում ծավալի պատճառով, քանի որ կստացվի անհարթ կառույց:

Այսպիսով՝ գլխավոր նախադասության որևէ անդամի պաշտոն կատարող երկրորդական նախադասությունների փոխակերպման համար արգելք են հանդիսանում բաղադրիչ նախադասությունների կապակցության ձևերը, փոխակերպված տարբերակում ելակետային կառույցներում առկա իմաստային երանգավորումների չպահպանվելը, երկրորդական նախադասության ծավալուն լինելը:

[1]Պապոյան Ա. Ի., Բադիկյան Խ. Գ., Ժամանակակից հայոց լեզու. Շարահյուսություն, Ե., 2003, էջ 412

[2]Տե՛ս, նույն տեղում, էջ 413

[3]Պապոյան Ա. Ի., Բադիկյան Խ. Գ., Ժամանակակից հայոց լեզու. Շարահյուսություն, Ե., 2003, էջ 413

Մեր աշխատանքում քննարկեցինք տեսական գրականության մեջ նշված բոլոր այն կաղապարները, իմաստային և ոճական առանձնահատկությունները, որոնք արգելք են հանդիսանում փոխակերպման համար: Բայց փաստական նյութի՝ մասնավորապես Հայկ Խաչատրյանի պատմվեպերի ուսումնասիրությունից պարզել ենք, որ կարող են լինել չփոխակերպվող այնպիսի նախադասություններ, որոնք դեռ ուսումնասիրված չեն և, բնականաբար, այդ նախադասությունների չփոխակերպվելու պատճառները նշված չեն տեսական գրականության մեջ: Մեր խնդիրն է Հ. Խաչատրյանի պատմվեպերից դուրս գրել այն բարդ ստորադասական նախադասությունները, որոնք ենթակա չեն փոխակերպման և վերլուծության միջոցով նշել այն պատճառները, որոնց հետևանքով այդ նախադասությունները չեն փոխակերպվում:

Այսպես՝ Հ. Խաչատրյանի պատմվեպերում հանդիպել ենք ուղիղ խնդրի շարահյուսական գործառույթ կատարող այնպիսի երկրորդական նախադասությունների, որոնց փոխակերպման դեպքում առաջանում են արտահայտչական տեսակետից ոչ ցանկալի կառույցներ: Բերենք օրինակներ:

Ինչպես էլ գտել են այս անուշաբերին՝ ինքն իրեն ***ասաց Տիգրանը և որոշեց այլևս որևէ հարց չտալ***:

Մարդ չի կարող մշտապես հիշել նրան, ***ում ամեն օր չի տեսնում***:

Բերված նախադասություններից առաջինը չի փոխակերպվում, որովհետև իր կազմում ունի ուրիշի ուղղակի խոսք և փոխակերպվելու դեպքում հնարավոր չէ իմաստային երանգներն ու արտահայտչամիջոցները նույնությամբ պահպանել: Երկրորդ նախադասության փոխակերպմանը, ըստ երևույթին, խանգարում է երկրորդական նախադասության ստորոգյալի ժխտական լինելը, ինչի հետևանքով փոխակերպման դեպքում ստացվում է ոճականորեն անհարթ կառույց: Իսկ նման անհարթ կառույցների օգտագործումը անհարմար է, և դրանք չեն կարող փոխարինել ելակետային բարդ ստորադասական նախադասությանը:

Բերենք չփոխակերպվող երկրորդականների այլ օրինակներ ևս.

Բայց օժիտի մեջ թանկարժեքը միայն զարդարանքներն էին, ***այսինքն այն, ինչ կարելի է տանել ու ետ բերել հորանց տուն***:

Պարսիկը նրան գերի վերցրեց և տարավ ու հանձնեց Կյուրոսին, իսկ Կրեսոսի համր տղայի լեզուն բացվեց, ***այսինքն՝ նա սկսեց խոսել***:

Բերված օրինակներում երկրորդական նախադասությունը կատարում է բացահայտչի շարահյուսական գործառույթ, կապակցվում է ***այսինքն*** բառով, որն էլ արգելք է հանդիսանում փոխակերպման համար:

Հ. Խաչատրյանի պատմվեպերում հանդիպել ենք նաև այնպիսի նախադասության, որի փոխակերպմանը դարձյալ խանգարում է երկրորդական նախադասության կազմում առկա բացահայտիչը: Օրինակ՝ Կռիվը կատաղի էր, սակայն թշնամուն ահ ու սարսափ պատճառող հայկական այրուձին ընկել էր մի լեռնավանդակի մեջ, որը միայն մի ելք ուներ՝ բաց ծովակը:

Այս նախադասության փոխակերպմանը ևս խոչընդոտում է բացահայտիչը, բայց այն էապես տարբերվում է նախորդ երկու նախադասություններից, որովհետև այս նախադասության մեջ երկրորդական նախադասությունը կատարում է ոչ թե բացահայտչի, այլ որոշչի շարահյուսական գործառույթ: Բայց այդ որոշիչ երկրորդականն իր կազմում ունի բացահայտիչ, որն էլ հենց խանգարում է փոխակերպմանը, քանի որ առաջացնում է ոճական անհարթություն:

Գեղարվեստական գրականությունից հանված որոշ օրինակներից պարզ է դառնում, որ փոխակերպմանը կարող է խանգարել նաև երկրորդական նախադասությունների՝ իրենց հերթին երկրորդական նախադասություն ունենալը: Բերենք օրինակներ:

Զավակս, ես իմ կյանքում երբեք այնքան հանգիստ չեմ եղել, որքան ***այժմ՝ այս պահին, երբ դու ինձ մոտ ես***:

Իսկ հետո հավատացյալների մոտ իմաստուն է ձևանում և հայտնում, ***թե աստված իրեն օժտել է այնպիսի շնորհով, որ կարող է գուշակել, թե վաղը կամ մի քանի օր հետո ինչ նորություն է լինելու քաղաքում***:

Բերված նախադասություններից ոչ մեկն էլ չեն փոխակերպվում, որովհետև նրանցում առկա է ենթաստորադասություն, որի պատճառով էլ չի փոխակերպվում, քանի որ փոխակերպման դեպքում կստացվի անհարթ կառույց:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ բարդ ստորադասական նախադասությունների չփոխակերպման պատճառ կարող են դառնալ ուղիղ խնդիր ստորադաս նախադասության կազմում ուրիշի ուղղակի խոսքի առկայությունը, երկրորդական նախադասության ստորոգյալի ժխտական լինելը, բացահայտիչ երկրորդական նախադասությունների գլխավորի հետ ***այսինքն*** շաղկապով կապակցված լինելը, որոշիչ երկրորդականի՝ իր կազմում բացահայտիչ ունենալը, երկրորդական նախադասությունների՝ իրենց հերթին երկրորդական նախադասություն ունենալը:

Փաստական նյութի առավել լայն ուսումնասիրության պարագայում հնարավոր է բացահայտվեն բարդ ստորադասական նախադասությունների չփոխակերպման այլ պատճառներ ևս:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:
2. Աբրահամյան Ս.Գ., Հայոց լեզու. Շարահյուսություն, Երևան, 2004:
3. Աբրահամյան Ս.Գ. և այլք, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Երևան, 1976:
4.Աբրահամյան Ս.Գ., Առաքելյան Վ.Դ., Քոսյան Վ.Ա., Հայոց լեզու. Շարահյուսություն, մաս 2-րդ, Երևան, 1975:
5. Առաքելյան Վ.Դ., Հայերենի շարահյուսություն, հ. 1-2, Երևան, 1964:
6. Գարեգինյան Գր. Լ., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1984:
7. Զաքարյան Հ., Ավետիսյան Յու., Հայոց լեզու. Շարահյուսություն, Երևան, 2009:
8. Թելյան Լ.Գ., Ժամանակային և պատճառահետևանքային հարաբերություն արտահայտող բարդ նախադասությունների հոմանիշ կառույցները ժամանակակից հայերենում, Լեզվի և ոճի հարցեր», հ. 9, Երևան, 1985:
9. Պապոյան Ա. Ի., Բաղիկյան Խ. Գ., Ժամանակակից հայոց լեզու. Շարահյուսություն, Երևան, 2003:
10. Պապոյան Ա. Ի., Կախյալ շարահարությամբ բարդ նախադասությունները արդի հայերենում, Երևան, «Միտք», 1968:
11. Պառնասյան Ն.Ա., Շարահյուսական հոմանիշները ժամանակակից հայերենում, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ, 1970:
12. Պառնասյան Ն.Ա., Ստորադասական կապակցությունը արդի հայերենի բարդ նախադասություններում, Երևան, ՀՍՍՌ ԳԱ, 1961:
13. Պառնասյան Ն.Ա.,Անշաղկապ բարդ նախադասությունները ժամանակակից հայերենում, «Լեզվի և ոճի հարցեր», հ. 2, Երևան, ՀՍՍՌ ԳԱ, 1964:
14. Սևակ Գ., Հայոց լեզվի շարահյուսություն,Երևան, 1980:

UDC 811.111(81`37) English Semantics

Lusine Vardanyan, Arpine Tatlyan
VSU, 4th year
arpi.tatlyan@mail.ru

SOME SEMANTIC AND PRAGMATIC PECULIARITIES OF TAG QUESTIONS IN MODERN ENGLISH

The aim of this article is to analyze the pragmatic and semantic functions of tag questions. As for the pragmatic functions of tag questions, there have been different attempts to reveal their underlying meaning. The theories of classification are mostly based on the utterance and the manners of pronunciation. Disjunctive questions can have different pragmatic motivations which are studied in this article.

Keywords: tag questions, semantic, pragmatic, function, pronunciation

Лусине Варданян, Арпине Татлян
ВГУ, 4-ый курс
arpi.tatlyan@mail.ru

НЕКОТОРЫЕ ПРОГМАТИЧЕСКИЕ И СМЫСЛОВИЕ ОСОБЕННОСТИ ВОПРОСОВ С ХВОСТОМ В СОВРЕМЕННОМ АНГЛИЙСКОМ ЯЗЫКЕ

Цель этой статьи исследовать смысловые и прагматические функции вопросов с хвостом. С прагматической стороны для исследования вопросов с хвостом есть различные подходы, чтобы открыть их глубокий смысл. Теории классификации вопросов с хвостом в большинстве случаев обосновываются на их виды произношения и акцент. Вопросы с хвостом могут иметь разные прагматические мотивации, которые представлены в этой статье.

Ключевые словы: вопросы с хвостом, смысловые, прагматические, функция, произношения

Լուսինե Վարդանյան, Արփինե Թաթլյան
ՎՊՀ, 4-րդ կուրս
arpi.tatlyan@mail.ru

ՊՈՉԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ և ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Այս հոդվածի նպատակն է վերլուծել պոչավոր հարցերի իմաստաբանական և գործաբանական գործառույթները: Պոչավոր հարցերի ուսումնասիրության գործաբանական տեսանկյունից տարբեր մոտեցումներ են առաջ քաշվել բացահայտելու համար նրանց խորքային նշանակությունը: Պոչավոր հարցերի դասակարգման տեսությունները մեծամասամբ հիմնված են դրանց արտասանության ձևերի և առոգանության վրա: Պոչավոր հարցերը կարող են ունենալ գործաբանական տարբեր մոտիվացիաներ, որոնք էլ ներկայացված են այս հոդվածում:

Բանալի բառեր՝ պոչավոր հարցեր, իմաստաբանական, գործաբանական, գործառույթ, արտասանություն

Disjunctive questions requiring the answer yes or no consist of an affirmative statement followed by a negative question, or a negative statement followed by an affirmative question. The first part is pronounced with a falling intonation and the second part either with a rising intonation or a falling intonation. Most of the researchers single out four or five pragmatic functions of disjunctive questions but the contextual method of analysis reveal that they are more. English has a complex system of disjunctive questions which can be used with a variety of forms and intonations. This type of questions has received large scholarly interest; still, there is little information about their historical development. Tag questions have a great usage: approximately a quarter

of all the questions used in conversation. However, the usage of tags in fiction , in news and in academic prose is much lower. Actually, disjunctive questions are predominantly used pragmatically rather than for requesting information.

Generally, disjunctive questions are divided into three broad categories of use:

- marking the speaker's lack of commitment towards a proposition
- expressing the speaker's uncertainty
- showing more politeness

As for the pragmatic functions of tag questions, there have been different attempts to reveal their underlying meaning and illocutionary force. The theories of classification are mostly based on the utterance and the manners of pronunciation. Disjunctive questions can have different pragmatic motivations. Thus, the novelty of our article is that disjunctive questions are classified and studied in the light of pragmatic analysis. The main outcome of our research is the following classification of disjunctive questions stated below.

- disjunctive questions indicating a request for information
- disjunctive questions indicating a request for agreement
- disjunctive questions indicating inducement
- disjunctive questions expressing emotions
- contact-initiating disjunctive questions
- contact-supporting disjunctive questions
- controlling disjunctive questions

1) Disjunctive questions indicating a request for information

This is one of the most frequently used pragmatic function of tag questions. It presumes that sometimes the speaker is not sure that the statement is true and wants it to be reassured. In this case the disjunctive question is pronounced with a rising intonation and it sounds like a real question requiring information.

(1)"Lowood Orphanage is the house where you have come to live in. I suppose you are an orphan, aren't you?"

(Chr. Bronte , "Jane Eyre" p.25)

(2) 'Well I'd like to stay and talk to this charming wife, 'the sergeant replied. 'But today we're busy with the King's business, aren't we?'

(Ch. Dickens,"Great Expectations" p.34)

In these examples the speaker asks a direct question, to which the hearer can give 'yes' or 'no' definite answers.

2)Disjunctive questions implying a request for agreement

The speaker using tag questions sometimes does not need information but merely expects agreement. The speaker expects the hearer to agree with the statement expressed in the main clause. In this case the speaker is sure that the statement is true and therefore a falling intonation is used on the tag.

(3) *"What is his name? "*

"Bingley, my dear. And he is single! And he has an income of four or five thousand a year. Most fortunate for our girls, huh? "

(Jn. Austen, "Pride and prejudice" p.43)

(4)"It is quit warm in here," Rhett was saying. "It's a good time for having a walk, don't you think so Miss O'Hara? "

(Mrg. Mitchell, "Gone with the wind"p.56)

In these examples, 'Don't you think' and 'you agree' are used as a tag since the speaker wants to ask the hearer's opinion about what he is saying. This can also be considered a kind of request for agreement.

3) Disjunctive questions implying inducement

This kind of disjunctive questions includes perlocutionary biased utterances, that is utterances taking part in persuading and influencing. Disjunctive questions implying inducement occur in context when the speaker tries to persuade the addressee to do something.

(5) *"He put his hand across her lips. 'Don't say these things."*

"But I love you, you know that I love you, right?"

(Mrg. Mitchell ,"Gone with the wind"p.63)

As can be seen from the example, no reply to the question is expected. The tag right' serves as a means of persuasion. The speaker indirectly and tactfully tries to persuade the hearer.

It should be noted here that tagged imperative questions also belong to this group of disjunctive questions.

Sometimes a positive imperative is followed by a positive tag to fulfill the function of making a polite request. For example, 'okay' has the same connotation.

(6) "Call Estella,"Miss Havisham said at last."Go to the door and call her, will you?"

"Well,be good then,Pip,and do what Mr .Jaggers tells you, okay?"

(Ch. Dickens ,"Great Expectations" p.42)

Tags can also be used in invitations.

(7) " I suppose you wouldn't come to tea with me one day, would you?"

(W.S. Maugham,"Theatre" p.35)

In this sentence the speaker doesn't directly invite the hearer but asks a tentative question to see if the hearer would accept his invitation if he made it.

4) Disjunctive questions expressing emotions.

The next pragmatic function which disjunctive questions may fulfill is to express different emotions. Depending on intonation they can express surprise, anger, concern or interest.

(8) "I have come to take your apprentice to London," the lawyer said to Joe.

"You won't stop him from coming I hope, will you?"

(Ch. Dickens,"Great Expectations" p. 71)

(9) A: The party Peter is giving is going to be fantastic.

B: You are going to that party, are you?

As can be seen from the example, the disjunctive question consists of a positive sentence and a positive tag with a rising tone. This can be a reaction of a very curious person who is obviously not satisfied with the information he has. B wants to appease his curiosity by asking A to provide him with more detailed information about the coming party A is invited to. The question may give rise to a number of implicatures, such as

+>I am envious of her; how did it come about that she is invited to that party, but I am not.

+>What if she is lying. She is not on good terms with Peter, but I am.

The symbol +> stands for conversational implicature.

It should be noted that the concept of implicature has its origin in the work of Paul Grice, who made a preliminary division between semantic meaning "what is said" and pragmatic meaning "what is implicated".

5) Contact initiating disjunctive questions

Contacts initiating disjunctive questions are not really a request for information or agreement but an invitation to the hearer to continue the conversation. This kind of disjunctive questions are used to provide a starting point for the illocutionary speech act and consequently function as a kind of rhetorical linking device between the interlocutors of the ongoing discourse. In other words, using this kind of disjunctive question the speaker wants to communicate with the hearer as it is obvious in the main clause that the statement is true.

(10) "Hard weather Mr. Bumble, isn't it?" said the widow. "Yes, indeed, ma'am"

(Ch. Dickens, "Oliver Twist" p. 44)

In the Armenian translation we can see that 'isn't it' is not translated altogether.

(11) –Սիսավոր եղանակ է: -Իրոք որ:

The Armenian translation illustrates well enough that the tag question is a kind of a rhetorical question as the speaker is sure that the weather is bad. It is just a means of initiating contact with the hearer; the speaker wants to make the hearer speak.

6) Contact-supporting disjunctive questions

Contact-supporting disjunctive questions usually serve as a means of not losing contact with the hearer. In other words it helps to break the conversation and to support contact with the hearer.

(12) "Mr.Bennet you should go and call on him as soon as he comes" said Darcy.

"There is no good reason for that is there?"

(Jn. Austen, "Pride and prejudice" p. 52)

7) Controlling disjunctive questions

Controlling disjunctive questions are aimed at checking the hearer's attention. They usually are made by means of 'right' and 'okay'. Tags used for this purpose convey the meaning 'do you understand?' or 'is it clear?'

(13) "I don't want to hear you two girls speaking to him again. Okay?"

(Mrg. Mitchell ,"Gone with the wind" p.61)

Bibliography

1. Chr. Bronte , "Jane Eyre"; October 16th 1847); United Kingdom 507 pages
2. Ch. Dickens ,"Great Expectations"; 1861; United Kingdom ; 544 pages
3. Jn. Austen, "Pride and prejudice"; 28 January 1813; United Kingdom; 432 pages
4. Mrg. Mitchell, "Gone with the wind"; June 30, 1936; United States; 1037 pages
5. Ch. Dickens, "Great Expectations"; 1838 ; England ; 478 pages
6. Algeo, J., 2006, British or American English, Cambridge University Press.
7. Holmes, J., 1995, Women, men and politeness, New York: Longman
8. Holmes, J., 1983, The functions of tag questions, English Language Research Journal, 3, 40-65.
9. Geoffrey G. Leech, 1983, Principles of pragmatics, Unites States of America.

ՀՏԴ 81.38

Հայոց լեզու. Ոճաբանություն
Վարդուհի Սահակյան
ԱրՊՀ,բանասիրական ֆակուլտետ, մագիստրատուրա 1-ին կուրս,
‹‹Հայոց լեզվի պատմություն և գրաքննադատություն››
vsahakyan@inbox.ru

ԿՈՄԻՏԱՍ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պատկերավորությունը խոսքի կարևորագույն և հիմնական արժանիքներից է: Խոսքի պատկերավորությունը հիմնականում ստեղծվում է համապատասխան լեզվաոճական միջոցներով ու հնարանքներով, որոնց գործածությամբ հնարավոր է դառնում պատկերվող իրողությունն ու երևույթները ներկայացնել ավելի գունեղ, տպավորիչ, պատկերավոր, հու-զական ու արտահայտիչ[1]:

Բանալի բառեր՝ խոսք, ոճ, պատկերավորություն, պատկերավորման միջոցներ, փո-խաբերություն, անձնավորում, համեմատություն, մակդիր, շրջասույթ:

Саакян Вардуи
АрГУ, Филологический факультет, магистратура 1-ый курс
vsahakyan@inbox.ru

НЕСКОЛЬКО ЛИНГВОСТИЛИСТИЧЕСКИХ ОСОБЕННОСТЕЙ В ПРОИЗВЕДЕНИЯХ КОМИТАСА АКОПЯНА

Эта статья посвящена герою Арцахской освободительной войны, несколько лингвостилистических особенностей произведений поэта Комитаса Акопяна. В произведениях поэта в системе визуализации имеют решающее значение метафора, сравнение, эпитет и парафраза. Мало использовались оставшиеся выразительные средства.

Ключевые слова- речь, стиль, образность, выразительные средства, метафора, олицетво-рение, сравнение, эпитет, парафраза.

Sahakyan Varduhi
ASU, Faculty of Philology, Master's degree 1st year
vsahakyan@inbox.ru

SEVERAL LINGUO STYLISTIC FEATURES IN THE WORKS OF KOMITAS HAKOBYAN

The article is devoted to the hero of Artsakh liberation struggle Komitas Hakobyan, several works of linguostylistic features. Poet`s works in the imaging system have a great importance the metaphor, the comparison, the epithet and the paraphrase. Imaging and means of expression are used very little.

Keywords- speech, style, imagination, means of expression, metaphor, personification, comparison, epithet, paraphrase.

Պատկերավորությունը խոսքի կարևորագույն և հիմնական արժանիքներից է: Խոսքի պատկերավորությունը հիմնականում ստեղծվում է համապատասխան լեզվաոճական միջոցներով ու հնարանքներով, որոնց գործածությամբ հնարավոր է դառնում պատկերվող իրողությունն ու երևույթները ներկայացնել ավելի գունեղ, տպավորիչ, պատկերավոր, հուզական ու արտահայտիչ2:

Գրողի ոճի ինքնատիպությունը պայմանավորված է ինչպես թեմատիկայի նորութ-յամբ ու բազմազանությամբ, այնպես և նրա խոսքի գեղեցկությամբ:

Լեզվի գեղարվեստական հնարանքները, որոնք բազմերանգ են ու բազմապիսի, հա-ճախ են հանդիպում Արցախյան ազատագրական պայքարի հերոս, ստեղծագործելու աստ-վածատուր տաղանդով օժտված երիտասարդ բանաստեղծ Կոմիտաս Հակոբյանի ստեղծա-գործություններում: Նա, որպես բանաստեղծ, հայտնի է երկու գրքով՝ ‹‹Գոյության պատրանք›› և ‹‹Նվիրում››: Հայոց լեզվի պատկերավորման արդեն կանոնական դարձած հարուստ միջոց-ները այս երկերում աննախադեպ յուրահատուկ նոր գույներ ու արտահայտչական երանգներ են ստանում:

[1] **Եզեկյան Լ.**, Հայոց լեզվի ոճագիտություն, Ե., 2007, էջ 327:
[2] **Եզեկյան Լ.**, Հայոց լեզվի ոճագիտություն, Ե., 2007, էջ 327:

Կոմիտաս Հակոբյանի ստեղծագործությունների պատկերավորման համակարգի մեջ առանձնահատուկ կարևորություն են ստանում փոխաբերությունը, համեմատությունը, մակդիրը, շրջասույթը: Մնացած պատկերավորման ու արտահայտչական միջոցները սակավ են գործածված:

Բառերը խոսքի մեջ հաճախ գործածվում են ոչ ուղղակի, այլ փոխաբերական իմաստ-ով: Փոխաբերական գործածությունն ընդարձակում է բառերի իմաստային կողմը: Փոխաբերությունն այն դարձույթն է, որի դեպքում առարկաների կամ երևույթների նմանեցման հիման վրա մի բառի կամ արտահայտության փոխարեն օգտագործվում է մի այլ բառ կամ արտահայտություն1:

Փոխաբերության նպատակը ոչ թե առարկայի պարզ անվանումն է, այլ նրա հուզական բնութագիրը: Այն խոսքին հաղորդում է հուզական-արտահայտչական երանգավորում, ընթեր-ցողի երևակայության մեջ ստեղծում հույզեր, առարկայական, տպավորիչ պատկերներ:

Կոմիտաս Հակոբյանի ստեղծագործություններում փոխաբերությունը լայն կիրառու-թյուն ունի:

Հիրավի, ի՞նչ է մարդը առանց սիրո: Այս գաղափարը հրաշալի է արտահայտվում փոխաբերության միջոցով, որի շնորհիվ հեղինակն ստեղծում է մարդկային հոգեվիճակի ավարտուն պատկեր, մտքերն ու մտածումները խառնվում են, ուրախ ու տխուր տրամա-դրությունները հաջորդում են միմյանց, հաճախ մարդն ի վիճակի չէ հասկանալու իր հետ կատարվածը: Ահա օրագրային գրառումներից մի հատված՝ նվիրված իր սրտի տիրուհուն. ‹‹Կարոտացավից արյունս… վարակվել է: Արյունս տենչում է քեզ: Դու գիտե՞ս… դու գիշերն ես իմ: Դու շնչում ես իմ մեջ: Բայց դու չկաս հիմա: Ու ես տառապում եմ կա-րո-տա-ցա-վից:

Իմ գիշերները այրվում են քեզնով, իմ երազները քեզնով են սնվում: Դու գունավոր իմ երազների վերելքն ես հեռավոր ու պատրանքային:

Բայց դու… Գունավոր իմ երազների ճերմակ թագուհի, դու կհայտնվես ինձ մոտ, տեսիլքի պես, ու այնժամ Արյունս չի ցավի այլևս, և դու կդառնաս իմ իսկական գիշերը››2: Բանաստեղծն այսպես է ներկայացնում իր հոգեկան աշխարհը, որը վիրավոր է, ցաված, սակայն բյուրեղյա զգացումը լույս և ուրախություն է պարգևում նրան:

‹‹Նունեին›› բանաստեղծության մեջ հեղինակը փոխաբերական ձևով գծում է լուսնի և աստղերի կերպարները: Գիշերվա հմայքը կապված է լուսնի և աստղերի հետ: Այստեղ պարզ երևում է մարդու և բնության կապը, երազն ու իրականությունը մի տեսակ մոտենում, գրեթե միաձուլվում են: Հեղինակը բացում է մարդկային հոգու ծալքերը հետևյալ փոխաբերությամբ.

Գուցե չե՞ս հիշում,
բայց լուսնի հիշողության մեջ
կա մի խոնավ գիշեր:
Ամեն ինչ խաղաղ էր
ու սեր էր կաթում աստղերից3:

Հիշենք ‹‹Ես չեմ ծնվել›› տողով սկսվող բանաստեղծությունը, որն ամբողջությամբ կազմված է փոխաբերական պատկերներից: Այստեղ երևում է բանաստեղծ-արարչի և աստծո կապը. կարծես բանաստեղծ-արարչի հոգու, մտածումի ծալքերը բացվում են հետևյալ փոխաբերությամբ.

Ես չեմ ծնվել:
Աստվածներն են հորինել ինձ:
Ու նախաստեղծ իմ օրվանից
Երակներիս ջրհեղեղում
Գալարվում է աստվածների
Վարքն հեթանոս4:

Ռազմական կրակոցների ու պայթյունների սարսռազդու տեսարաններին ականատես բանաստեղծը օրվա նկարագրությունը հետևյալ փոխաբերական պատկերով է տալիս.

Իսկ իրիկնացող օրվա անդորրը
Հեղեղվեց հեղձուկ հոտով վառոդի:
Մռայլվեց օրը ու փնչաց դաժան…5

Արմեն Մելքոնյանի հիշատակին գրված ‹‹Հրամանատար›› բանաստեղծության մեջ թուրք գազանի մահը փոխաբերական ձևով է պատկերվում.

Ննջիր:
Քեզ զարկողը ոռնացել է վաղուց,
Ուխտդ կատարվել է6:

---

[1] **Զահուկյան Գ.**, **Խլղաթյան Ֆ.**, Հայոց լեզվի ոճաբանություն, Ե., 1988, էջ 36:

[2] **Հակոբյան Կ.**, Նվիրում, Ե., 1997, էջ 67:

[3] Նույն տեղում, էջ 47:

[4] Նույն տեղում, էջ 21:

[5] Նույն տեղում, էջ 5:

[6] Նույն տեղում, էջ 9:

‹‹Հայրենիք իմ Արցախ›› բանաստեղծության մեջ Կոմիտաս Հակոբյանը Արցախը անվանում է ‹‹լեռնացող երազ››, իսկ Արցախի քարերը՝ ‹‹վիմագիր կոչեր››.

Դու՝ լեռնացող երազ,
կորստյան մոխիրներից կարկառված քարերդ
վիմագիր կոչեր են,
որ ոգեշնչում են կյանքդ…1

Իսկ ‹‹Գանձասար›› բանաստեղծության մեջ երիտասարդ բանաստեղծը ինքնատիպ փոխաբերություններ է ստեղծում: Հավատով լցված բանաստեղծը Արցախի գալիքը լուսեղեն թագ է համարում.

Ես իմ հավատի միջից
կարկառված ձեռքս
հպում եմ քո գալիքին,
որ լուսեղեն թագ է2:

Հարյուր տարի ապրելու բաղձանքով տոգորված՝ հեղինակը կիրառում է հետևյալ անկրկնելի փոխաբերությունը.

Երեկոն գեղեցկագույն տիկնոջ
պարանոցի զարդ է,
ու ես ուզում եմ…
հարյուր տարի ապրել3:

Փոխաբերությանը, որպես պատկերավորման միջոցի, բնորոշ է անձնավորումը, որը ոճական այնպիսի հնարանք է, երբ առարկաներին, երևույթներին, գործողություններին վերագրվում է մարդկային այս կամ այն հատկանիշը:

Կոմիտաս Հակոբյանը իր բանաստեղծություններից մեկում անձնավորում է իր հուշերը.

Հիմա կռիվ է, տղերք,
Ու արյուն,
Եվ մարտնչում են
Հուշերն էլ մեզ հետ4:

‹‹Հայրենիք իմ›› տողով սկսվող բանաստեղծության մեջ բանաստեղծը մեղրամոմի այրվելը որպես հառաչանք է պատկերում.

Հայրենիք իմ,
քո առավոտվող օրվա ձայները
ինձ վանք են տանում,
ուր տամկացած քարերի վրա
մեղրամոմերն են հառաչում5:

Հաճախ շնչավորված վերացական գոյականները հանդես են գալիս մարդուն բնորոշ գործառույթներով, ինչը շատ է նպաստում խոսքի հուզականացմանը և բանաստեղծակա-նացմանը, ինչպես՝

Ծառերի վրա
Լույսն է ուշաթափվել6:

Կոմիտաս Հակոբյանի երկերում շնչավորվում են նաև թանձրացական գոյականները .

…Այստեղ՝ ցավի ու մահվան դաշտում
Ռումբերն ու արկերը
Թքում են արյուն7:

Մեկ այլ բանաստեղծության մեջ բնության շնչավորման միջոցով հեղինակն արտահայտում է զգացումներ ու խոհեր կյանքի, սիրո մասին: Այս դեպքում անշունչ առարկաները դառնում են լիարյուն գործող անձ, ապրում ու շնչում են մարդկանց նման, ինչպես՝

Աստղերը մրսում էին երկնքում
(փետրվարյան ցուրտ գիշեր էր):
Իսկ բառընդերքում
մեր սերն էր տաքանում8:

Բանաստեղծի ստեղծագործություններում գեղագիտական պատկերավորման միջոցներից մակդիրը համեմատաբար շատ է կիրառված:

[1] Նույն տեղում, էջ 22:
[2] Նույն տեղում, էջ 23:
[3] Նույն տեղում, էջ 49:
[4] Նույն տեղում, էջ 14:
[5] Նույն տեղում, էջ 24:
[6] Նույն տեղում, էջ 25:
[7] Նույն տեղում, էջ 29:
[8] Նույն տեղում, էջ 50:

Մակդիրը լեզվի պատկերավորման միջոց է, ոճական այնպիսի հնարանք, որի միջոցով տրվում է առարկայի, երևույթի, երբեմն նաև գործողության պատկերավոր, գեղագիտական բնութագրությունը: Այն պատկերավորման այնպիսի միջոց է, որը խտացնում է պատկերները, հարստացնում լեզուն, թարմացնում խոսքը:

Մակդիրն ունի ճանաչողական ու բնութագրական արժեք, արտահայտում է հեղինա-կային դրական կամ բացասական վերաբերմունքն այն առարկայի, երևույթի նկատմամբ, որը տվյալ իրադրությունում էական է դիտվում: ‹‹Հետևաբար, մակդիրները, որպես խոսքի պատկերավորման միջոց, իրենց բնութագրող դերով հանդերձ՝ ունեն անհատական բնույթ, և գրողի կամ բանաստեղծի ոճը բնութագրող, նրա անհատական լեզվարվեստը ցուցադրող կարևոր տարրեր են››1:

Կոմիտաս Հակոբյանի խոսքի հուզականությանը նոր լիցք ու գունագեղություն են հաղորդում թարմ ու ինքնատիպ մակդիրները, որոնք հաճախակի և տեղին են գործածվում նրա երկերում: Անսպասելի ու դիպուկ մակդիրներով հեղինակը տեսանելի ու պատկերավոր է դարձնում որևէ երևույթ, առարկա կամ առանձին կերպարների էությունը:

Մակդիրները հիմնականում արտահայտվում են ածականով, գոյականով, մակբայով և որոշ դերբայներով: Պատկերավորության առումով ավելի տպավորիչ են գոյականով արտահայտված մակդիրները, որոնք առարկան կամ երևույթը բնութագրում են ոչ թե մեկ հատկանիշով, այլ՝ հատկանիշների մի ամբողջ խմբով: Կոմիտաս Հակոբյանի երկերում գոյականով արտահայտված մակդիրները քիչ են կիրառված՝ հիշողության իլիկ, լեռների դուռ, շուրթերի կրակ, երակների ջրհեղեղ, հույսի աստղեր, անհոգության լույս, հիշողության սարդոստայն, մատների հիշողություն:

Բանաստեղծի երկերում առատորեն սփռված են ածականով արտահայտված մակդիրները՝ կյանքոտ հառաչանքներ, տատասկոտ ճամփա, խոնավ գիշեր, ծխահամ օր, խեղճուկրակ մահճակալ, գոյատևնչ հող, աստվածային կամեցողություն, կորստյան մոխիր, վիմագիր կոչեր, խելագար վարք, հողեղեն վարք, լուսեղեն թագ, եղեռնաշունչ օր, աստվածահաճո գավաթներ, երանգափոխ ինքնություն, մահահոլի մենություն, մգլոտ երակ, գունաթափ վայրկյաններ, հեքիաթային տենդ, կաթնագույն հիշողություն, մոմե լրջություն, լուսե պարանոց, բյուրեղյա հոգի:

Կոմիտաս Հակոբյանը գործածում է նաև դերբայներով արտահայտված թարմ ու ինքնատիպ մակդիրներ, ինչպես՝ սառցակալած օրեր, զարկող սառնություն, շփոթված կյանք, փշրված խճանկար, լեռնացող երազ, առավոտվող օր, կնճռոտված հայացքներ, ծերացող հավատ, մեռնող րոպե, հաշմված օր, մակարդվող թախիծ, փլատակված մազեր, ծրարված սեր, փշրված գիշերներ:

Բային՝ գործողությանը լրացնող մակդիրները սահմանափակ են կիրառված՝ ջերմ էին շնչում, փնչաց դաժան, պայթեցին ահեղ, պինդ կացեք, կրակում եմ չափածո:

Քիչ են գործածված նաև բառակապակցությամբ արտահայտված մակդիրները՝ շփոթված մոմի թախծող լեզվակ, լուսնի արծաթ հիշողություն, հույսերի ձեռնադրված արքա, ժամանակի մրոտ թևեր, անապատների դեղին թախիծ, լուսաշողերից հունցված անմեղ մարմին:

Կոմիտաս Հակոբյանի ստեղծագործություններում խոսքի պատկերավորությունն ապահովող լավագույն հնարանքներից է համեմատությունը: Նրա չափածոյում արդեն սովո-րական դարձած, հայտնի համեմատություններից բացի՝ ավելի հաճախ հանդիպում են նոր, թարմ ու ինքնատիպ, հեղինակի անհատական ոճին, նրա մտածողությանը յուրահատուկ կա-ռույցներ:

Համեմատությունը լեզվի պատկերավորման միջոց է, ոճական այնպիսի հնարանք, որի դեպքում որևէ առարկայի կամ երևույթի նկարագրությունն ավելի պարզ ու տպավորիչ, դարձնելու նպատակով համադրվում է այդ առարկայի որևէ կողմի արտաքին կառուցվածքով կամ ներքին իմաստային յուրահատկություններով նման առարկայի կամ երևույթի հետ: Համեմատությունն անձերի, առարկաների և երևույթների հատկանիշները հասկա-նալի, ճանաչելի դարձնելու կարևոր միջոց է: Նրա միջոցով համեմատվող առարկան ու երևույթը տեսանելի են դառնում: Շատ հաճախ համեմատության հիմքում դրվում է առարկա-ների, երևույթների ոչ թե առարկայական հատկանիշը, այլ դրա սուբյեկտիվ, անհատական ընկալումը:

Կոմիտաս Հակոբյանը ստեղծել է այնպիսի համեմատություններ, որտեղ իրար հետ համեմատվում են իրեր, երևույթներ, գործողություններ, վիճակներ: Այսպես՝

1. Իրը համեմատում է իրի հետ (թանձրացական գոյականը թանձրացականի հետ):

‹‹Աշնանային›› բանաստեղծության մեջ հեղինակը չորացած ծառերը համեմատում է սմքած կրծքի հետ.

Մայթերը թաց են,
Ծառերը՝ վաղուց իմաստազրկված,
Սմքած կրծքի պես2:

Սիրած աղջկա մասին գրված ‹‹Նունեին›› բանաստեղծության մեջ հեղինակն իր մատները համեմատում է կերոնի հետ.

…Մատներիս հիշողությամբ,

[1] **Մարության Ա.**, Հայոց լեզվի ոճաբանություն, Ե., 2000, էջ 150:

[2] Նույն տեղում, էջ 51:

որոնք կերոնների պես
հեքիաթային տենդից հալվում էին
քո մարմնին[1]:

2. Իրը, առարկան համեմատում է երևույթի հետ և ընդհակառակը (թանձրացական գոյականը վերացականի հետ):

Ամարասի մասին գրված բանաստեղծության մեջ Կոմիտաս Հակոբյանը Ամարասը համեմատում է գոյատևման առհավատչյայի հետ.

…Ու դու, որպես առհավատչյան գոյատևման,
խոյացել ես գալիքիդ դեմ[2]:

3. Երևույթը համեմատում է երևույթի հետ (վերացական կամ թանձրացական գոյականը վերացականի հետ):

Եղբոր՝ Կամոյի 20-ամյակին նվիրված բանաստեղծության մեջ (‹‹Կամոյին››) հեղինակն իրենց ապրած մանկության տարիները համեմատում է տատի պատմած հեքիաթների հետ.

…Հուշն է միայն, եղբայր,
մեր մանկության վկան,
տարիները՝ հեքիաթ,
նման տատի պատմածներին[3]:

4. Գործողությունը համեմատում է գործողության հետ:

‹‹Գոյության պատրանք›› գրքի բանաստեղծություններից մեկում ժամանակի շփոթվելը համեմատում է եղանակի շփոթվելու հետ.

Աչքերիս մեջ՝ անձրև:
Արև՝ իմ աչքերում:
Շփոթվել է ժամանակը:
Շփոթվել է այնպես, ինչպես
Եղանակը իմ աչքերում[4]:

Շրջասույթը Կոմիտաս Հակոբյանի ստեղծագործություններում լայն կիրառություն ունի: Շրջասույթը այն դարձույթն է, որի դեպքում առարկայի ուղղակի անվանումը փոխարինվում է նկարագրական արտահայտությամբ[5]:

Շրջասույթը փոխանունության մի տեսակն է, որի դեպքում նկարագրական եղանակով ներկայացվում է այդ առարկայի որևէ հատկանիշը: Օրինակ՝ թախծել բայի փոխարեն հեղինակը գործածում է օրը քարշ տալ տաղտուկի միջով արտահայտությունը:

Բերենք այլ օրինակներ՝ ծխախոտի ծխին օրը ագուցել, այսինքն՝ շատ ծխել, հաշմված օր, այսինքն՝ անարդյունավետ օր, նախաստեղծ օր, այսինքն՝ ազգի սկզբնավորման ժամանակաշրջան, հիշողության սարդոստայնում թավալվել, այսինքն՝ հիշել, տագնապոտ օրերի երախ, այսինքն՝ պատերազմ, մահ, հույսի աստղեր, այսինքն՝ կյանք, կրակել չափածո, այսինքն՝ ստեղծագործելով կռվել, առավոտվող օր, այսինքն՝ լուսաբաց, անուշ տառապանք, այսինքն՝ սեր, կարոտ, հուշերը փողոցից վաղուց ավլել, այսինքն՝ սիրահարների հանդիպումները դադարել, ծառերը սմքած կրծքի պես վաղուց իմաստազրկվել, այսինքն՝ ծառերը դեղնել, տերևաթափվել, հեղձուկ վառոդի հոտ, այսինքն՝ պատերազմ, գոյության արմատ, այսինքն՝ հավատ, գոյության սերմեր, այսինքն՝ կյանք, նահատակների լեզու, այսինքն՝ հայերեն, կորուստների դագաղ, այսինքն՝ պարապություն, թմրության հաբ, այսինքն՝ անգործունեություն, ցավի ու մահվան դաշտում, այսինքն՝ պատերազմում, ռումբերն ու արկերն արյուն թքել, այսինքն՝ պատերազմի զոհեր լինել, հիշողության ցանցում մեռնող րոպեներ, այսինքն՝ ներկայի՝ անցյալ դառնալը, ճախրանքի համար ծնվել, այսինքն՝ ստեղծագործող լինել:

Պատկերավորման ու արտահայտչական մնացած միջոցները սակավ են գործածված Կոմիտաս Հակոբյանի ստեղծագործություններում:

Օգտագործված գրականության ցանկ

Եգեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն, Եր. համ. հրատ., Ե., 2007, 367 էջ:
Եգեկյան Լ., Ոճագիտության ուղեցույց, ‹‹Զանգակ- 97›› հրատ., Ե., 2007, 120 էջ:
Հակոբյան Կ., Նվիրում, ‹‹Առերեսում››-Անի հրատ. համալիր, Ե., 1997, 74 էջ:
Մարության Ա., Հայոց լեզվի ոճաբանություն, ‹‹Նաիրի›› հրատ., Ե., 2000, 243 էջ:
Ջահուկյան Գ., Խլղաթյան Ֆ., Հայոց լեզվի ոճաբանություն, ‹‹Լույս›› հրատ., Ե., 1988, 161 էջ:
Ջրբաշյան Էդ., Գրականության տեսություն, Եր. համ. հրատ., Ե., 1980, 496 էջ:

[1] Նույն տեղում, էջ 47:
[2] Նույն տեղում, էջ 26:
[3] Նույն տեղում, էջ 15:
[4] Նույն տեղում, էջ 21:
[5] **Ջահուկյան Գ.**, **Խլղաթյան Ֆ.**, Հայոց լեզվի ոճաբանություն, Ե., 1988, էջ 41:

ՀՏԴ 321(479.243) *Քաղաքագիտություն*

Նարինե Աղաջանյան
Արցախի պետական համալսարան, 2-րդ կուրս
narine-agajanyan@mail.ru

ԼՂԻՄ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Սույն հոդվածում ներկայացված է ԼՂԻՄ-ի ստեղծման մասին պատմական որոշումը և մարզի կազմավորման գործընթացը: Ցույց է տրվում, որ Ադրբեջանը դեմ էր ինքնավարության շնորհմանը և միայն 2 տարվա անընդմեջ պայքարից հետո հնարավոր եղավ ստանալ ինքնավարություն: Եվ հենց ինքնավարությանը դեմ լինելու հան·ամանքն էր պատճառը, որ Ադրբեջանական իշխանությունները վերաձևվեցին 1921թ. հուլիսի 5-ի որոշման կետերը ի շահ իրենց: Ինքնավար մարզը ձևավորվեց ընդամենը 4,4 հազար քկմ տարածքի վրա, նրանից կտրվեցին պատմական հայկական հողերը, իսկ մայր Հայաստանի հետ անմիջական կապի բացառման նպատակով մարզը շրջապատվեց ադրբեջանական իշխանությունների կողմից ստեղծված և ադրբեջանցիներով բնակեցված վարչական միավորներով:

Բանալի բառեր՝ ինքնավարություն, պատմական որոշում, ԼՂԻՄ, արցախահայություն, քաղաքականություն, հայական մաս, էթնիկ զտում:

Narine Agajanyan
ASU, 2nd year
narine-agajanyan@mail.ru

THE FORMATION OF KARABAKH AUTONOMOUS REGION

This article presents a historical decision on establishment of the Nagorno-Karabakh region and the process of formation. It is shown that Azerbaijan was againts granting autonomy and only after 2 years in a row to struggle to gain autonomy. And the fact that the autonomy was the reason that the Azerbaijani authorities reshaped in 1921. points in the interests of their decision on July 5; Autonomous Region was formed just over 4,4 square kilometers of territory, cut off from the historic Armenian lands, and in order to prevent direct contact with Mother Armenia and the region was surrounded by Azerbaijani authorities, and Azeri-populated with administravite untis.

Key words: Autonomy, historic decision, ARNK, politics, part of Armenian, ethnic cleaning

Наринэ Агаджанян
АрГУ, 2-ой курс
narine-agajanyan@mail.ru

ВАПРОС ФОРМИРОВАНИЯ НАГОРНО КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ

В данной статье представлено истарическое решение о создании Нагорно Карабахской Автономной Республики и формировании районного процесса. Показывается, что Азербайджан был против присуждения автономии и только после двухлетней не прекращающейся борьбы стало возможно получить автономию. И именно автономия стала причиной противоречий того, что азербайджанские власти перекраили пункты решения 5-го июля 1921г. в свою пользу Автономный район оформился всего на территории 4,4 тысячи квадратных метрах, от них отрезали исторические армянские земли, а чтобы исключить не посредственную связь с матерью Арменией район был окружен со стороны азербайджанских власти созданными и азербайджанцами заселенными автономными еденцами.

Ключевые слова: Автономия, историческое решение, Нагорно Карабахская Автономная Республика, армяне Арцаха, политика, армянская часть, этническая чистка

1921թ հուլիսի 5-ի ՌԿ(բ)Կ Կովբյուրոյի պլենումի ապօրինի որոշմամբ Լեռնային Ղարաբաղը բռնակցվեց Ադրբեջանին: Այսպես ծագեց Ղարաբաղի հիմնախնդիրը:

Ղարաբաղի հիմնախնդրի էությունը լրիվ բացահայտելու համար նախ նշենք, որ Ադրբեջանական պետություն առաջին անգամ Արևելյան Անդրկովկասում հայտնվել է միայն 1918թ., երբ Օսմանյան կայսրության կողմից ստեղծվել էր Ադրբեջանի դեմոկրատական հանրապետությունը (ԱդՀ): Սակայն Ազգերի լիգան բավարար հիմքեր չէր գտել 1918թ. հռչակված ԱդՀ-ն որպես ինքնիշխան պետություն հռչակելու համար, քանի որ այդ պետությունը հռչակվել էր առանց իրավական հիմքի՝ թուրքական զորքերի օգնությամբ:

Ադրբեջանցիներինե որպես ազգություն անվանումն առաջին անգամ գրանցում է ստացել միայն 1936թ.: Մինչ այդ նրանց բնութագրման համար կիրառվում էին ,կովկասյան թուրքերե, ,մահմեդականներե, ,կովկասյան թաթարներե և այլն: Խորհրդային կարգերի հաստատումից հետո Ադրբեջանը հենց սկզբից նպատակ է դրել զավթել Ղարաբաղը, Նախիջևանը և Զանգեզուրը:

1921թ. Մարտի 16-ին կնքված ռուս-թուրքական պայմանագրի համաձայն Կարսի մարզից, Սուրմալուից բացի, Հայաստանից անջատվեց նաև Նախիջևանը 5,5 հազ. կմ քառակուսի տարածքով, երրորդ կողմին այսինքն Հայաստանին այլևս չվերադարձնելու պայմանով:

Նախիջևանի հարցի լուծումից հետո հերթը հասավ Ղարաբաղին և Զանգեզուրին: Խորհրդային Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովը 1921 հունիսին պնդում էր, որ Ղարաբաղը պետք է մտցվի Ադրբեջանի կազմի մեջ: Հունիսի 27-ին տեղի ունեցած Ադրբեջանի կոմկուսի ԿԿ և Քաղբյուրոյի նիստը որոշեց՝ Ղարաբաղը չհանձնել Խորհրդային Հայաստանին, առաջ քաշելով տնտեսական գործոնը:

Ղարաբաղը Ադրբեջանի կազմում երբեք չէր եղել: 1918-1920թթ. Իշխանությունը Ղարաբաղում իրագործվում էին համագումարների և Ազգային խորհրդի կողմից: Անգամ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո, նոյեմբերի 30-ին Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի քաղբյուրոյի և կազմբյուրոյի համատեղ նիստում ողջունելով Հայաստանի եղբայրական ժողովրդի հաղթանակը, որոշեցին, որ այդ օրվանից վերացված է համարվում սահմանային վեճերը Հայաստանի և Ադրբեջանի միջև: Լեռնային Ղարաբաղը, Նախիջևանը և Զանգեզուրը համարվում են Հայաստանի Հանրապետության անբաժանելի մասեր:

1921թ. Հունիսի 3-ին Կովկասյան բյուրոյի պլենումը ընդունեց որոշում Լեռնային Ղարաբաղը Հայաստանին պատկանելու մասին: Հայաստանի Ժողկոմխորը հիմք ընդունելով Կովկասյան բյուրոյի վերոհիշյալ որոշումը հունիսի 12-ին հայտարարություն ընդունեց Լեռնային Ղարաբաղը Հայաստանի սոցիալիստական հանրապետության անբաժանելի մաս համարելու մասին[1]:

1921թ. Հուլիսի 5-ին կողբյուրոյի նիստը վերանայում է հուլիսի 4-ի որոշումը Ղարաբաղը Հայաստանի կազմի մեջ թողնելու մասին, առանց քվեարկության ու վիճաբանության և ընդունում մին նոր փաստաթուղթ, որում ասվում էր.

ա. Ելնելով մուսուլմանների և հայերի միջև ազգային խաղաղություն հաստատելու անհրաժեշտությունից և վերին ու ստորին Ղարաբաղի տնտեսական կապից՝ Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանի ԽՍՀ-ի սահմաններում՝ նրան տրամադրելով մարզային լայն ինքնավարություն՝ վարչական կենտրոն ունենալով Շուշի քաղաքը, որը մտնում է ինքնավար մարզի կազմի մեջ:

բ. Հանձնարարել Ադրբեջանի Կենտկոմին՝ որոշել ինքնավար մարզի սահմանները և ներկայացնել ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի հաստատմանը:

գ. Հանձնարարել Կենտկոմի Կովկասյան բյուրոյի նախագահությունը՝ բանակցել Հայաստանի Կենտկոմի և Ադրբեջանի Կենտկոմի հետ՝ Լեռնային Ղարաբաղի արտակարգ կոմիսարի պաշտոնի թեկնածության շուրջը:

դ. Լեռնային Ղարաբաղի ինքնավարության շրջանակները պետք է որոշի Ադրբեջանի Կենտկոմը և ներկայացնի Կենտկոմի Կովկասյան բյուրոյի հաստատմանը: Այսպիսով, ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի պլենումի հուլիսի 5-ի ոչ օրինական որոշումով խախտվեց միջազգային իրավունքի հիմնարար՝ ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքը, ոտնահարվեցին Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության ճնշող մեծամասնությունը կազմող (94.4%) հայության իրավունքները, անտեսվեցին Խոհրդային Հայաստանի շահերը: Արտահայտելով հայ ժողովրդի կամքը և քննադատելով ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի անօրինական որոշումը, արդեն հուլիսի 16-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմը միանգամայն սխալ և անօրինական որակեց այն[2]: Միաժամանակ նշենք նաև այն, որ ի տարբերություն Ն. Նարիմանովի, Հայաստանի ներկայացուցիչ Ալ. Մյասնիկյանը այս հարցում չցուցաբերեց

[1] Հրայր Փաշայան Քաղաքական փաստարկները Ղարաբաղյան հիմնախնդրի փաստաթղթերում և կարգավորման գործընթացում. Մաս Առաջին Ստեփանակերտ 2016թ. էջ 25-32

[2] Խաչատրյան Կ., Աբրահամյան Հ., Հայության պայքարը ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար, Երևան 2011, էջ 8:

վճռականություն և սկզբունքայնություն և չպնդեց՝ «Ղարաբաղյան հարցը» ՌԿ(բ)Կ Կենտկոմի քննարկմանը ներկայացնելու կողմնորոշումը:

Կովկասյան բյուրոյի որոշումը միանգամայն ապօրինի էր: Ինչպե՞ս կարելի էր մի ամբողջ ժողովուրդի տարածքների հարցը, երկու հանրապետությունների սահմանների հարցը վճռել ինչ-որ 8 հոգուց բաղկացած մի մարմնի կողմից, որը կարճ ժամանակվա ընթացքում ընդունեց իրար հակասող մի քանի որոշում:Կամ միթե՞ կուսակցական մարմինը, տվյալ դեպքում ՌԿ(բ)կ կկ Կովկասյան բյուրոն իրավասու էր լուծելու տարածքային հարցերը: Նման հարցը կարող էր լուծել միայն բարձրագույն օրենսդիր մարմինը, կամ նվազագույնը բարձր գործադիր մարմինները: Այդ միակողմանի որոշումով, անտեսվեց հայերի ազգային ինքնորոշման սկզբունքը և հայերի էթնիկական կազմը[1]:

Այնուհետև, շուրջ երկու տարի պահանջվեց, որպեսզի Ադրբեջանը վերջապես իրագործեր Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալու պահանջը: Սխալված չէինք լինել, եթե նշենք, որ արցախահայությունը սկուտեղի վրա չտրվեց ինքնավարություն, այլ այն ձեռք բերվեց երկարատև պայքարի արդյունքում:

Այսպես, 1922թ. հոկտեմբերի 27-ին Կիրովի և Օրջոնոկիձեի նախաձեռնությամբ անցկացվեց Անդրերկրկոմի նիստ, որտեղ որոշվեց կոնկրետ քայլեր ձեռնարկել հուլիսի 5-ի որոշումն իրականացնելու ուղղությամբ: Համապատասխան որոշմամբ Ա. Կարակոզովը նշանակվեց Լեռնային Ղարաբաղի գործադիր մարմնի ղեկավար: Ստեղծվեց հանձնաժողով, որը պետք է զբաղվեր ինքնավարության հարցերով:

Ադրբեջանի իշխանությունները Լեռնային Ղարաբաղի լիազոր նշանակեցին Ադրբեջանի նախարարների խորհրդի նախագահի տեղակալ և արհմիությունների հանրապետական խորհրդի նախագահի Լևոն Միրզոյանին: Մինչ այդ Ալեքսանդր Մռավյանի Ղարաբաղից Երևան տեղափոխվելուց հետո Ադրբեջանի իշխանությունները Ղարաբաղի լիազոր էին նշանակել Ալիհեյդար Կարաևին: Ադրբեջանի գործիչները սպառնում էին ուժ գործադրել, եթե արցախահայությունը չկատարեր Ադրբեջանի պահանջները: Նրանք Արցախի շրջաններում հրավիրեցին խորհուրդների շրջանային արտահերթ համագումարներ և փորձեցին կորզել Ադրբեջանի շահերից բխող որոշումներ: 1921թ. օգոստոսի 1-ին Հաղորտի գյուղում տեղի ունեցավ Վարանդայի խորհուրդների արտահերթ համագումարը, որտեղ չնայած Լևոն Միրզոյանի ջանքերին, ադրբեջանանպաստ որոշում չկայացվեց:

1921թ. օգոստոսի 8-ին Լևոն Միրզոյանը, վերադառնալով Բաքու, Ադրբեջանի ղեկավարությանը առաջարկեց Լեռնային Ղարաբաղին տալ ինքնավարություն: Ինքնավարության այս առաջարկը ուներ մեկ նպատակ՝ կոտրել Լեռնային Ղարաբաղի հայության ազգային-ազատագրական շարժման թափը: 1921թ. Ինքնավարության պայմանները կատարելու նպատակով, Ադրկոմկուսի Քաղբյուրոն և Կազմբյուրոն 1921թ. հուլիսի 20-ին ստեղծում են մի հանձնաժողով, որը պետք է մշակեր Լեռնային Ղարաբաղի Սահմանադրությունը:

Հարկ է նշել, որ Ադրբեջանի ղեկավարությունը դեմ էր ինքնավարությանը: 1921թ. սեպտեմբերի 26-ին Ադրկոմկուսի Քաղբյուրոն և Կազմբյուրոն որոշում են. «խնդրել Կովբյուրոյին՝ վերանայելու իր որոշումը Լեռնային Ղարաբաղն առանձնացնելու մասին, այսուհետ ինքնավարություն չհայտարարել»[2]:

Ստեղծվում է հատուկ հանձնաժողով (Կարաև, Էֆենդիև, Ստուկալով և Միրզոյան) և շտապ ուղարկում Ղարաբաղ՝ «նյութեր հավաքելու համար»: Հանձնաժողովի ջանքերով 1921թ. հոկտեմբերի 21-ին հրավիրվեց Լեռնային Ղարաբաղի պատասխանատու աշխատողների կոնֆերանս, որի մասնակիցների ճնշող մեծամասնությունը մուսուլմաններ էին: «Ղարաբաղի դրության մասին» հարցի շուրջը հանդես եկավ Կարաևը: Կոնֆերանսի որոշման մեջ ասված էր. «Ղարաբաղի աշխատավորների կոնֆերանսն աննպատակահարմար է համարում Լեռնային Ղարաբաղի բաժանումն իբրև առանձին ինքնավար մարզի և գտնում է, որ բոլոր միջոցառումները, որոնք նշվում են վերը՝ բանաձևում, հենց հանդիսանում են ղարաբաղյան հարցի լուծում»: Պահանջ է դրվում, որ «ազգայնական հողի և ազգայնական տրամադրություններ ունեցող բոլոր աշխատակիցները պետք է անհետաձգելիորեն դուրս շպրտվեն ու փոխարինվեն ինտեռնացիոնալիստ աշխատակիցներով»: Կոնֆերանսի նման դիրքորոշումը հնարավորություն է ստեղծում աշխատանքից հեռացնելու հայրենասեր անձանց և նրանց փոխարինել ադրբեջանցիներով, կամ ադրբեջանամետ դիրքորոշմամբ հայ աշխատակիցներով:

Ադրբեջանցի պատմագիր Հասանլըն նշում է, թե իբր չնայած այն հանգամանքին, որ աշխատավորների կոնֆերանսը դեմ է արտահայտվել ինքնավարությանը, այդուհանդերձ Ադրբեջանի իշխանությունները քայլեր են ձեռնարկել ինքնավ «արցախահայությանը ինքնավարություն շնորհելու համար»: Հեղինակը գրում է. «... Որոշվեց ուժեղացնել պայքարը բանդիտիզմի դեմ Լեռնային Ղարաբաղում...»: Բանդիտիզմ որակավորումն տրվում էր արցախահայությանը, ովքեր դեմ էին, անընդունելի էին համարում Ադրբեջանի իշխանությունը: Վերջինս ազգայնականներ ու բանդիտներ էր որակում հայրենասեր տարրերին: Հիմնականում արտահայտելով ադրբեջանամետ տարրերի կամքը, հեռացնելով ու հալածելով վճռորոշ կեցվածք ընդունած և Հայաստանի հետ միավորելու պահանջով

[1] Հրանտ Աբրահամյան Մարտնչող Արցախ 1917-2000 Գիրք Ա,(1917-1923) Երևան 2003 էջ 199-233

[2] Բալայան Վ., Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, Երևան, 2011թ., էջ 236:

հանդես եկող անձանց, որոնց ազգայնականներ էին որակում որպես Ադրբեջանի իշխանությունները հայտարարում էին, որ «ղարաբաղյան հարց» որպես այդպիսին գոյություն չունի և իբր թե արցախահայերը նույնպես դեմ եմ ինքնավարությանը: Իրականում ինքնավարությանը դեմ էր Ադրբեջանը, որն ամեն կերպ փորձում էր խոչընդոտել ինքնավարություն ստանալու արցախահայության արդարացի պայքարը: 1922թ. փետրվարին Թիֆլիսում տեղի ունեցած Անդրկովկասյան կոմունիստական կազմակերպությունների առաջին համագումարում Ադրբեջանի ներկայացուցիչ Կուլիևը, անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի ինքնավարության հարցերին, նշել է. «Ադրբեջանական կենտկոմն էլ, որ Ղարաբաղի հարցի պարզաբանման համար հանձնաժողով էր ընտրել, շատ ճիշտ վարվեց, երբ ասում էր, Ղարաբաղին պետք չէ ոչ մի ինքնավարություն: Միայն այդ եղանակով, ըստ Կուլիևի, կհաստատվի իսկական խաղաղություն և Ղարաբաղում և Անդրկովկասում»[1]: Ավելի ուշ, երբ Արցախում հաստատվեց ինքնավարություն, Նարիմանովը (թե ինքը դեմ էր ինքնավարության գաղափարին, ոչ թե այն պատճառով, որ չի ցանկացել, այլ որ իրենք արցախցիները չէին ուզում): Իրականում զգուշացիչ է, որ արցախահայությանը չպետք էր տալ ինհնավորույթուն, որ այն «դանդաղ գործունեության մեջ դրված ռումբ» էր, որ մի օր պետք էր պայթեր... Ադրբեջանցիները լավ էին հասկանում, որ բռնի ուժով, ապօրինի ճանապարհով իրենց բռնակցված Լեռնային Ղարաբաղում հայությունը երբեք չի հաշտվելու Ադրբեջանին միավորվելու հետ, իսկ եթե արցախհայությունը ստանար ինքնավարություն, ապա նման պայմաններում առավել արագ տեղի կունենար վերջիններիս ձգտումը մայր Հայաստանի հետ միավորվելու: Արցախահայության շարունակական պայքարը ստիպեց, որ Լևոն Միրզոյանը 1921թ. օգոստոսի 8-ին Շուշիից Ադրկոմկուսի և Անդրկերկրկոմին դիմի հետևյալ առաջարկով. «Ամբողջ Լեռնային Ղարաբաղն առանձնացնել որպես ինքնուրույն վարչական միավոր՝ ենթակա կենտրոնին և Ադրժողկոմխորհին ու Կենտգործկոմին, իսկ կուսակցության գծով Ադր ԿԿ-ին:

Եվ, այսպես՝ շուրջ 2 տարի պահանջվեց Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունից 1921թ. հուլիսի 5-ի Կովբյուրոյի որոշման կետերի մեծամասնությանը հակասող «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզի» կազմավորման մասին դեկրետն ընդունելու համար: Այս դեկրետի ընդունման քաղաքական հիմնավորումը, ինչպես նշված էր փաստաթղթում բխում էր «հայմուսուլմանական հարաբերությունների կարգավորման անհրաժեշտությունից միասնական պետության մեջ»: Հարկ է ընդգծել, որ 1921թ. հուլիսի 5-ի Կովբյուրոյի որոշումը Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանին թողնելու մասին, մի քայլ առաջ էր ԼՂԻՄ կազմավորման մասին փաստաթղթից: 1921թ. հուլիսի 5-ի ապօրինի որոշումը խիստ խոցելի է: Ինչպես գիտենք, այդ որոշման մեջ ասված էր «Ելնելով մահմեդականների ու հայերի միջև ազգային խաղաղության անհրաժեշտությունից և Վերին ու Ներքին Ղարաբաղի տնտեսական կապից, նրա մշտական կապից Ադրբեջանի հետ, Լեռնային Ղարաբաղը թողնել Ադր. ԽՍՀ սահմաններում՝ նրան տալով մարզային լայն ինքնավարություն՝ վարչական կենտրոն Շուշի քաղաքով, որը մտնում է ինքնավար մարզի մեջ...»[2]: Առաջին իսկ հայացքից ակնհայտ է որոշման խոցելիությունը: Փաստորեն ինչպես նկատում ենք տնտեսական հիմնավորվածությունը վեր է դասված էթնիկական, ազգային հիմնավորումներից, բացի դրանից «Ադրբեջանի հետ տնտեսական կապ» ասվածը նույնպես խիստ մշուշոտ է: Հիմքից սխալ է նաև այն թեզը, որում նշված է թե Լեռնային Ղարաբաղը թողնել Ադր ԽՍՀ սահմաններում, այստեղ անտեսված էր այն իրողությունը, որ Լեռնային Ղարաբաղը երբեք Ադրբեջանի մաս չի կազմել մինչև տվյալ որոշումը»:

1923թ հուլիսի 1-ին Ադրկոմկուսի կենտկոմի նախագահությունը Կենտգործկոմի հանձնարարում է, հռչակել Լեռնային Ղարաբաղ՝ Խանքենդի կենտրոնով և գործադիր կոմիտեով: Մարզի հեղկոմի նախագահ է նշանակվում Արմենակ Կարակոզովը, իսկ կուսմարզկոմի նախագահ՝ Սերո Մանուցյանը: 1923թ. հուլիսի 7-ի Անդրբեջանի կենտգործկոմը ընդունեց հռչակագիր, Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի կազմավորման մասին: Մարզի կենտրոն դարձվեց Խանքենդին, որը 1923թ. կոչվեց Ստեփանակերտ՝ Ստեփան Շահումյանի անունով:

Այսքանով հանդերձ 1923թ. հուլիսի 7-ի ԼՂԻՄ-ի մասին որոշումը չնայած հռչակած ինքնավարությանը, այդուհանդերձ իրենով հակասում էր 1921թ. որոշման կետերին ոչ ի շահ հայերի:

Խախտելով ՌԿ(բ)Կ Կովբյուրոյի որոշումը՝ Ադրբեջանի Կենտգործումը որոշեց մարզը ստեղծել «Լեռնային Ղարաբաղի հայկական մասից»: Մինչդեռ 1921թ. որոշման մեջ ասված էր. «Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանական ԽՍՀ սահմաններում՝ նրան տալով մարզային լայն ինքնավարություն՝ վարչական կենտրոն Շուշիի քաղաքով»[3]:Այսինքն՝ լայն ինքնավարությունը պետք է տրվեր ոչ թե նրա մի մասին, այլ ողջ Լեռնային Ղարաբաղին: Արդյունքում՝ Լեռնային Ղարաբաղի շուրջ 12 հազար քառակուսի կմ տարածքից ստեղծվեց 4.4 հազար քկմ տարածք ընդգրկող ԼՂԻՄ-ը: Երկրորդ կետով նշված էր, որ բոլոր արոտավայրերի, անտառների, այգիների, հողի և ջրի փաստական

[1] Բալայան Վ., նշվ. աշխ., էջ 235:
[2] Ուլուբաբյան Բ. Արցախյան պայքարի տարերգություն, Երևան, 1997, էջ 6:
[3] Փաշայան Հ., Ղարաբաղյան հիմնախնդրի քաղաքական փաստարկները ԼՂԻՄ կազմավորման և Ադր ԽՍՀ կազմից դուրսբերման շրջանի փաստաթղթերում (1923-1988), 21-րդ դար, էջ 29:

տնօրինումը ներկայիս տերերի գործն է: Մարզի կենտրոն հաստատվեց Խանքենդին (Ստեփանակերտը), դա այն դեպքում, երբ 1921թ. որոշմամբ կենտրոն պետք է լիներ Շուշին: Ադրբեջանի իշխանությունները դեմ էին, որ ԼՂԻՄ կենտրոնը դառնար հայոց հինավուրց մշակութային քաղաք Շուշին, հասկանալով, որ այն կդառնար հայության համախմբման կենտրոն:

Այսպիսով Ադր. ԽՍՀ ղեկավարությունը որդեգրեց ԼՂԻՄ-ի որպես ազգային (հայկական) պետական կազմավորման ինքնուրույնությունը սահմանափակելու և նրա ազգային էությունը խեղաթյուրելու քաղաքականություն: Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի անվանման մեջ չի ընդգծված նրա ազգային պատկանելիությունը: Հայկական այդ ինքնավար մարզի սահմանները որոշելիս կանխատեսված ձևով, մարզի կազմի մեջ չեն մտցրել Արցախ-Ղարաբաղի լեռնային մասի զգալի հատվածը, դուրս է թողնվել Գյուլիստանի մելիքության ամբողջ տարածքը՝ այժմյան Շահումյանի շրջանն ու Խանլարի շրջանի, ինչպես նաև Դիզակի մելիքության զգալի հատվածը: Ղարաբաղից անջատեցին նրա հարթավայրային շրջանը և Աղդամ ավանը դարձրին առանձին շրջանի կենտրոն: Ղարաբաղի լեռնային շրջանի արևմտյան հատվածը կտրեցին նրանից և ստեղծեցին մտացածին «Քուրդիստանի գավառ» և դրանով անջրպետ ստեղծեցին Արցախի ու մայր Հայաստանի միջև:

Փոփոխություն տեղի ունեցավ նաև մարզի ինքնավանման մեջ: Սկզբում մարզը կոչվում էր ԱՕՀԿ (ինքնավար մարզ Լեռնային Ղարաբաղի) 1936թ. մարզը վերանվանվեց ՀԿԱՕ (ԼՂԻՄ, Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ) դրանով Ադրբեջանը փորձում էր ցույց տալ, որ ինքնավարությունը տարածվում է Լեռնային Ղարաբաղի մի փոքր մասի վրա: Այսպիսով դեմ լինելով ինքնավարությանը Ադրբեջանական իշխանությունները փորձում էին ամեն կերպ սահմանափակել այն, իսկ նրանց տարիների քաղաքականությունը միտված էր մարզի աստիճանական հայաթափման նպատակին:

1923թ. Ընդունվեց ԼՂԻՄ կանոնադրությունը, իսկ 1924թ. Հուլիսին սահմանադրությունը: ԼՂԻՄ սահմանադրությամբ 1924թ. Նոյեմբերի 26-ին ստեղծվում է ԼՂԻՄ Ժողկոմխորհ: 1925թ. Վերջերին գործում էին բոլոր նախարարությունները և գերատեսչությունները: Սահմանադրությունը իր թերություններով հանդերձ ուներ որոշ նշանակություն: Սահմանադրության գերակայության շնորհիվ սկսվեց վերականգնվել քայքայված տնտեսությունը, զարգանալ Հայաստանի հետ մշակութային և տնտեսական կապերը: Սակայն այդ բոլորը Ադրբեջանի ազգայնամոլների համար ընդունելի չէին: Ահա թե ինչու նրանք 1929թ. վերացրին ԼՂԻՄ սահմանադրությունը և մարզը լրիվ զրկեցին ինքնուրույն գործելուց:

Այսպիսով՝ ՌԿ(բ)Կ կովկասյան բյուրոյի 1921թ. Հուլիսի 5-ի որոշմամբ Ղարաբաղը Խորհրդային Ադրբեջանին բռնակցելուց հետո Ադրբեջանը հայահալած քաղաքականություն վարեց, նպատակ ունենալով Նախիջևանի օրինակով հայաթափել Ղարաբաղը: Սակայն Արցախահայությունը շուրջ 70 տարի պայքարել է իր կորսված իրավունքերը վերականգնելու համար: Գարբաչովյան Վերակառուցման քաղաքականությունը հնարավորություն ընձեռնեց 1988թ նորից բարձրացնել դեռևս 1920-ական թթ սկզբից ծխացող Ղարաբաղյան հիմնախնդիրը:

1988թ. Փետրվարի 20-ին մարզխորհուրդի նստաշրջանը պատմական որոշում ընդունեց ԼՂԻՄ-ը Ադրբեջանի կազմից Հայստանին տալու մասին: Ադրբեջանը բացահայտ պատերազմ սկսեց Արցախի ժողովրդի ազատագրական շարժումը խեղտելու համար: Սակայն արցախահայությունը պատմական հաղթանակ տարավ: Ադրբեջանը ստիպված 1994թ. Մայիսին զինադադար կնքեց:

Հակամարտության հարցի վերջնական լուծման համար բանակցությունները առայսօր դեռևս դրական արդյունքներ չեն տվել: Մեր քաջ զինվորները ավելի քան 2 տասնամյակից ավելի հերոսաբար պաշտպանում են մեր սահմանները:

ՀՏԴ 94(479.24:479.243)

Պատմություն

Բելլա Գասպարյան
ԱրՊՀ, 2-րդ կուրս
bella.gasparian.1998@mail.ru

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱԿԱՀԱՅ ԳՈՐԾԵԼԱՈՃԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Սույն հոդվածում ներկայացվում է ԼՂԻՄ-ի նկատմամբ ԱԽՍՀ վարած պետական քաղաքականությունը, որն ի սկզբանե եղել է խտրական: Արհեստականորեն կասեցվել է մարզի սոցիալ-տնտեսական զարգացումը, այն վերածվել է Ադրբեջանի հումքային կցորդի: Տարվում էին նպատակային աշխատանքներ հայկական մշակութային արժեքները ոչնչացնելու և յուրացնելու համար: Մարզում աստիճանաբար կրճատվում էր հայ բնակչության թիվը:

Վեճը քաղաքակիրթ հուն տեղափոխելուն ուղղված յուրաքանչյուր գործունեության հետևում էին բռնության ծավալում, հայ ազգաբնակչության իրավունքների զանգվածային և համատարած ոտնահարում, ժողովրդավարական բռնանվաճում, տնտեսական շրջափակում և այլն:

Բանալի բառեր՝ ինքնավարություն, օկուպացիա, հայատյացություն, հայաթափություն, վիճելի տարածք, բռնություն

Белла Гаспарян
АрГУ, 2-ой курс
bella.gasparian.1998@mail.ru

АНТИАРМЯНСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ СОВЕТСКОГО АЗЕРБАЙДЖАНА В ГОДЫ АВТОНОМИИ НАГОРНОГО КАРАБАХА

В данной статье представляется политика Азербайджанской ССР, которая первоначально и была дискриминационной. Искуственно было ограниченно социально-экономическое развитие области. Оно превратилось в сырьевую базу Азербайджана. Были проведены целевые работы по уничтожению армянской культуры и присвоению её ценностей. В области постепенно "сокращалось" армянское население.

Все усилия армян решить вопрос правовым путем наталкивались на агрессию, массовое попирание прав армяноязычного населения, экономическую блокаду и так далее.

Ключевые слова: Автономия, оккутация, арменофобия, оспариваемая территория, миграция армян, насилие.

Bella Gasparyan
ASU, 2nd year
bella.gasparian.1998@mail.ru

ANTI-ARMENIAN ACTIVITY OF SOVIET AZERBAIJAN IN THE YEARS OF AUTONOMY OF NAGORNO-KARABAKH

This article presents Azerbaijan's SSR state policy against NK self independent district, wich from the beginner was discriminatory. Artificially was stopped the socio-economic development of district, it had became a pice of Azerbaijan's appendage. Were made targeted works for destruction and appropriation of Armenian cultural values.

In the district gradually reduced the number of Armenian population. The result of replacing discussion to civilization way, were spread of violence, massive and widespread violations of the rights the Armenian population , violent achievement of democration, economic blockade, etc.

Keywords: Autonomy, occupation, armenofobia, the migration of Armenians, disputed territory, violence.

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզը իրենից ներկայացնում է պատմական Արցախ աշխարհի միայն մի ստվար հատվածը: Տերմինը պատմության մեջ առաջին անգամ հիշատակում ենք 1923թ.

հուլիսի 7-ին: Խորհրդային ողջ ժամանակահատվածում Լեռնային Ղարաբաղի հայությունը չհաշտվեց իրեն պարտադրած դատավճռի հետ և տասնյակ տարիներ պայքարեց Մայր հայրենիքին վերամիավորվելու համար:Արցախն Ադրբեջանին բռնակցելուց անմիջապես հետո սկիզբ առավ ազգային-ազատագրական պայքար: Խորհրդային իշխանության ժամանակաշրջանում Լեռնային Ղարաբաղում հասունանում էր սոցիալ-տնտեսական և քաղաքական ճգնաժամ: ԼՂԻՄ-ի ստեղծման հենց սկզբից էլ Ադր.ԽՍՀ-ն կոպտորեն ոտնահարել է ԼՂԻՄ-ի հայ բնակչության իրավունքներն ու շահերը: Դա արտահայտվել է մարզի սոցիալ-տնտեսական զարգացումն արհեստականորեն կասեցնելու, ԼՂԻՄ-ը Ադր.ԽՍՀ-ի հումքային կցորդը դարձնելու, Ղարաբաղը Հայաստանից կտրելու և այն Նախիջևանի օրինակով հայաթափելու նպատակով հատուկ քարոզարշավ վարելու, հայոց լեզուն և հայ մշակույթը սահմանափակելու , հայկական հուշարձանները ոչնչացնելու և տարածքը յուրացնելու փորձերի մեջ:[1]

Ադրբեջանը ուներ հատուկ ծրագիր, որն իրագործելու համար անհրաժեշտ էր ընտրել ճիշտ մարտավարություն : ՈՒստի առաջին քայլը Հայաստանի և Ղարաբաղի միջև անմիջական սահմանի փակումը պիտի լիներ: Մարզը ամեն կերպ զրկված էր տնտեսական ինքնավարությունից: Ադր.ԽՍՀ-ն տվյալ գաղափարը կյանքի կոչելու համար ԼՂԻՄ-ից անջատում է նրա ծայրամասային, սահմանային տարածքները: Որպեսզի այնտեղ խուսափի հայ-ադրբեջանական բախումներից, իշխանությունը տարածաշրջանը բնակեցնում է քրդերով: Անջատված տարածքներում ստեղծվում են Լաչինի, Քելբաջարի, Ղուբաթլուի, Զանգելանի շրջանները : Մարզը <<հայկական թիկունքից>> կտրելուց հետո սկսվեց հակահայկական արշավ: Հայ բնակչության արտաքսումը հայրենի օջախից Ադրբեջանում նպատակաուղղված և մշտատև պետական քաղաքականության բնույթ է կրել, որի մեթոդները ժամանակ առ ժամանակ՝ կենտրոնական իշխանությունների քաղաքականությունից կախված ՝ կերպարանափոխվում էին:[2]

Գործնականորեն վերացված էին բոլոր կապերը Հայաստանի հետ: Կան բազմաթիվ օրինակներ , որոնք հաստատում են ադրբեջանական կառավարչամեքենայի հակահայգործունեությունը:

ԼՂԻՄ-ի հայաթափման և էթնիկ զտումների ուղղությամբ իրականացված նպատակաուղղված քաղաքականության վերաբերյալ բազմաթիվ փաստեր և փաստարկներ գոյություն ունեն : Այդ քաղաքականության մասին հենց իրենք՝ ադրբեջանական ղեկավարներն են բազմիցս վկայել: Դրա արդյունքում ԼՂԻՄ-ի հայ բնակչության թիվը 66 տարվա ընթացքում (1923-1989թթ.) 149,6 հազարից «հասել» է 145,5 հազարի, այն դեպքում, երբ արհեստականորեն ստեղծված նոր էթնոսի՝ ադրբեջանցիների թիվը նույն ժամանակահատվածում 7,7 հազարից հասել է 40,6 հազարի: [3]

Հայ բնակչության ժողովրդագրական պատկերի վրա էականորեն ազդեց նաև Ադրբեջանի կառավարության կողմից դեռևս 1930-ական թվականների սկզբներին մշակված ԼՂԻՄ-ի հայ երիտասարդությանը հայրենի օջախից արտաքսելու դիվային քաղաքականությունը: Իրականում նրանց «հայրենանպաստ աշխատանքի» ֆոնի տակ քշում էին երկրից սևգործ աշխատանք կատարելու: Բռնի հավաքագրումները շարունակվում էին մինչև 1960-ական թվականները:

1950-70ական թվականներին տնտեսությունները խոշորացնելու առիթով հայկական գյուղերից խլվեցին ընդարձակ հողահանդակներ և հանձնվեցին ադրբեջանցիներին: Ադրբեջանի կառավարությունը մարզին զրկել էր պետական բյուջեից, խնայում էր ամենաչնչին օժանդակությունն անգամ, երբ ինքնավարության հռչակման աղմկալից օրերին վերջինս խոստացել էր ամենակարճ ժամանակում վերականգնել ադրբեջանական հրոսակների կողմից հիմնահատակ ավերված Շուշի քաղաքի հայկական մասն ու ավելի քան երեք տասնյակ գյուղերը, ռոռգման ցանցով ծածկել շրջանների ցանքատարածություններն ու այգիները, վիթխարի գումարներ հատկացնել մշակութային շինարարության համար, մարզը դարձնել օրինակելի լուսավորության երկրամաս: Սակայն ոչ միայն չկատարեց իր խոստումներից ոչ մեկը, այլև խանգարեց ամեն մի առաջաքայլ, տնտեսական և մշակույթային ամեն մի նախաձեռնութուն, որ մարզն էր իրականացնում տեղական բյուջեի կամ մարզի տնտեսությունների ողորմելի մասհանումների համար:[4]

Մինչև 1970-ական թվականները բյուջեի հաշվին չի կառուցվել ոչ մի դպրոցական շենք, ակումբ, մշակույթի տուն, առողջապահական և հասարակական այլ շինություն:1989-1990թթ.

[1]Թովմասյան Վ.Հ., Աթաջանյան Վ.Ա., Ներսիսյան ՅՈՒ.Բ., Ղարաբաղյան հարց , Ստեփանակերտ, 1991թ,էջ 17:
[2]Սարումյան Ն.Պ, ԼեռնայինՂարաբաղիԻնքնավարՄարզը 1960-1988 թվականներին , Եր., 2008, էջ 36:
[3]Սարումյան Ն.Պ, Նույնի էջ 52:
[4]ՈՒլուբաբյանԲ.,Արցախյանգոյապայքարը, Եր., 1994, էջ 170:

Դրությամբ մարզում չկային մշակույթի տուն, մանկապատանեկան օջախներ, մարզական և կենցաղային հիմնարկներ:[1] 70 տարիների ընթացքում բազմաթիվ դպրոցներ փակվեցին, սակայն բավականին մեծ պահանջ կար: Երեխաները կամ պետք է ուսում ստանային ոչ հայկական դպրոցներում, կամ էլ առավելագույն դեպքում պետք է տեղափոխվեին Հայաստան : Կենտրոնական իշխանությունն հենց դրան էր ձգտում. արմատներից հեռացնել հայերին , իսկ լավագույն դեպքում ՝ հայաթափել Ղարաբաղը:

Մարզի դրությունը ծանրացնելու համար ադրբեջանական կառավարչամեքենան սկսում է արհեստական նախադրյալներ ստեղծել իրավիճակը խափանելու, հայությանը քշելու, և տարածքը ամբողջությամբ յուրացնելու համար :

Արցախյան չցամաքող գետերը ունեին ոռոգման լայն հնարավորություններ՝ մինչդեռ ջրամբարներ կառուցելու համար հանրապետության կառավարությունը տասնամյակներ շարունակ մարզին միջոցներ չէր հատկացնում: Արցախով են անցնում բազմաթիվ գետեր, որոնց արտադրած էներգիան կլիներ ամենաէժանը: 1930-ական թվականներին Թառթառի միջին հոսանքներում ՝ Մատաղիս ավանի մոտ, կառուցվել էր հիդրոկայան, որը բավարարում էր ոչ միայն Մարդակերտի շրջանի, այլև հարևան Միր-Բաշիրի, Աղդամի ու Բարդայի շրջանների բնակարանների մեծ մասի պահանջները: Իշխանությունները սակայն կանխազգում էին ահավոր վտանգ և պատերազմի նախօրյակին քարուքանդ են անում հէկ-ը: Հրապարակայնորեն հայտարարվեց, թե իբր ոչ մի կարիգ չկա , որպեսզի հանրապետության տարբեր շրջաններում լինեն ջրատնտեսական կառույցներ : Հեկ-ը ավերելով մարզը ոչ միայն չափազանց մեծ տնտեսական չափերի հասնող ֆինանսական կորուստներ ունեցավ , այլև մասնագիտական բանուժից մի մեծ հատված փոխադրվեց աշխատելու Մինգեչաուրի հիդրոհանգույցի շինարարության և հանրապետության այլ շինտեղամասերում: [2]

Նման օրինակները բազմաթիվ են ,երբ բարձր աշխատավարձ ստանալու համար շատ հայեր գնում էին արտագնա աշխատանքի: Շատ դեպքերում արտագաղթած հայերը մշտական բնակություն են հաստատում նոր տարածքներում , որի արդյունքում էլ հայաթափվում էին հայկական գյուղերն ու քաղաքները:

Ճնշումները միանշանակ իրենց զգացնել էին տալիս բոլոր ոլորտներում : Օրինակ՝ Ստեփանակերտի Ղարմետաքսկոմբիատը ԽՍՀՄ մետքսի արտադրման 3 խոշոր ձեռնարկություններից մեկն էր: Թվում է, թե կառույցը պիտի ապահովեր մարզի արդյունաբերական պահանջները: Սակայն իրականում կոմբինատը հազիվ էր գոյատևում, քանի որ այն Ադր.ԽՍՀ ղեկավարության կողմից հմտորեն կցվել է Նուխի-Շաքիի կոմբինատին և քամվում էր վերջինների կողմից: ԼՂԻՄ-ը Ադրեջանին բռնակցելուց հետո կոմբինատը ոչնչի չէր տիրանում ՝ ոչ փառքի, ոչ անվան, ոչ էլ անգամ հարստության, քանի որ ընդամենը հումք էր արտադրում Շաքիի կոմբիանտի համար: Մարզի արդյունաբերական ամենախոշոր ձեռնարկությունը տարեկան կորցնում էր 60 միլիոն ռուբլի միայն այն պատճառով , որ դրված էր Շաքիի մետաքսի կոմբինատից կախման մեջ, ուր նրա արտադրանքն ուղարկվում էր ներկման և իրացման նպատակով:[3] Բնականաբար կոմբինատի աշխատողների աշխատավարձը ևս ավելի ցածր էր քան այնտեղի աշխատողներինը :

60-ական թվականներին Ստեփանակերտում բացվել էր արհեստագործական, հիմնականում շինարարական կադրեր պարտաստող ուսումնարան: Այն կոչված էր սաներ հավաքագրել միայն մարզի գյուղերից, սակայն կադրեր պատրաստվում էին Ադրբեջանի շրջանների ու Բաքվի, Սումգայիթի, Մինգեչաուրի և այլ քաղաքների համար :[4] Ստացվում էր, որ հայ երիտասարդները ստանում էին ուսում, բայց ըստ մասնագիտության նրանք աշխատանք կարող էին գտնել ոչ թե իրենց բնակավայրում, այլ ադրբեջանաբնակ շրջաններում: Ամեն տարի ուսումնարանն ավարտում էր 250-300 երիտասարդներ ու պատանիներ: Դա նշանակում էր, որ ամեն տարի Արցախում առնվազն մեկ գյուղ էր դատարկվում... [5]

Անբարենպաստ վիճակ էր նաև բնակչության կենցաղասպասարկման բնագավառում: Մարզում հայ բնակչության նկատմամբ կանխամտածված քաղաքականությունն իր արտահայտությունն է գտել նաև հայերի աշխատանքի և վարձատրության կազմակերպման համակարգում: Այսինքն մարդիկ աշխատավարձ ստանում էին ոչ թե ըստ աշխատանքի, այլ ըստ ազգային պատկանելիության:

[1]В. Б. Арутюнов , События в Нагорном Карабахе ,хроника ,часть 1, февраль 1988г.-январь 1990г., ст. 21.
[2]ՈՒլուբաբյան Բ., Նույնի , էջ 171:
[3]Աբրամյան Հր, Արցախյան գոյամարտ,Եր, 1991, էջ 69
[4]Нагорно-Карабахская Республика*: путь* к вершинам. Степанакерт:Издание МИД НКР, 2001.
[5]ՈՒլուբաբյանԲ., Նույնի էջ 178:

Առողջապահության բնագավառում մարզը ևս վատթար վիճակում էր : Գային շրջաններ, որոնք անգամ չունեին շրջանային հիվանդանոցներ (օրինակ Ասկերանը):

Արտահերթ և կարևորագույն խնդիրներից էր բնակտարածությունով ապահովված չլինելը: Մարզում շինարարական աշխատանքների տեմպը շատ դանդաղ էր ընթանում՝ կապված շինանյութերի մատակարարման հետ: Սկզբից շինանյութերը մատակարարում էին Հորադիզից, իսկ 1960-ական թվականներից սկսած շինանյութերի առաքման կետեր բացվեցին Աղդամում և Բարդայում, որոնք հեռու էին: Այդ ամենը զգալի կերպով ազդում էին մարզի շինարարական աշխատանքների տեմպի վրա: Շինարարության կազմակերպման խնդիրն առավել քան սրվեց 1980-ական թվականների կեսերին, որը բացատրվում է ոչ միայն Ադրբեջանի տարբեր վայրերից շինանյութերի և շինարարական տեխնիկայի մատակարարման գործում տիրող մշտական խափանումներով , այլև դրանց առաքման ուղղակի դադարեցմամբ: Ադրբեջանի ղեկավարությունը փորձելով պահպանել մարզը որպես ագրարային գոտի , արհեստական խոչնդոտներ էր ստեղծում հեռանկար ունեցող արտադրամասերի զարգացման համար, որի հետևանքով էլ ինժեներատեխնիկական անձնակազմը ստիպված լքում էր մարզը: [1]

Ազգային խտրականության, ճնշման և հալածանքների քաղաքականությունն առավել մոլեգնորեն կիրառվել է մշակույթի ու ժողովրդական կրթության ոլորտներում: Բնակչության կրթությունը գտնվում էր ցածր մակարդակի վրա, քանի որ պետությունը շահագռգռվածություն չէր տեսնում մարզում այն զարգացնելու համար: Ամեն կերպ արգելվում էր հայոց լեզուն և պատմությունը դպրոցներում ուսուցանել: 1969թ.-ին բացվում է Ստեփանակերտի Մանկավարժական համալսարանը, որը Բաքվի Մանկավարժական համալսարանի մասնաճյուղ էր: Այստեղ ևս արգելվում էր հայոց լեզուն և հայոց պատմությունը ,անգամ պատմության բաժնում, իսկ դրա փոխարեն պարտադրում էին Ադրբեջանի պատմություն ուսուցանել:

Լեռնային Ղարաբաղը մայր Հայաստանից կտրելուց հետո Ադրբեջանի երկրամասից հայ բնակչության արտահոսքը արագացնելու համար արհեստականորեն արգելվում է մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ընթացքը: Դա հատուկ կերպով իրեն զգացնել էր տալիս բարձր որակավորման մասնագետներին աշխատանքով չապահովելու հարցում: Հայաստանում կրթություն ստացած երիտասարդները ոչ մի հնարավորություն չունեին մարզում աշխատելու ըստ մասնագիտության: Հայկական կրթություն ունեցող երիտասարդներին արգելվում էր վարչա-կառավարչական մարմիններում աշխատել:

1960-ական թվականների ավարտին և ողջ 1970-ական թվականներին , Ադրբեջանի ղեկավարության հրահանգով ոչնչացվեցին հայկական հուշարձանները:

Լեռնային Ղարաբաղի տնտեսությունը հիմնականում ագրարային բնույթ էր կրում: Արդյունաբերական տնտեսությունները հիմնականում մասնագիտացել էին մետաքսի և մետաքսե գործվածքների, գինու և կոնյակի ավանդական արտադրությունների գծով: Հետագայում արդեն ստեղծվեցին կոշիկի, կահույքի, շինանյութերի, լուսավորման սարքերի և այլ ձեռնարկություններ: Սակայն այն ապրանքները , որոնք արտադրվում էին այս գործարաններում ուղղարկվում էին Ադրբեջան, որտեղ այն «դրոշմվում էր» ադրբեջանական պիտակով և ուղղարկվում վաճառքի Ղարաբաղ՝ բարձր գներով :

Չնայած վերը նշված բռնություններին և ճնշումներին, Ղարաբաղի ինքնավարության շրջանում մարզը մասնակցություն է ունեցել միութենական աշխատանքների բաժանմանը՝իր ապրանքներով: Այդ տարիներին զարկ էր տրվել խաղողագործությանը:[2] Մարզում արտադրվում էր ծխախոտ,կարտոֆիլ, խաղող, միս, կաթ, օղի, բուրդ և այլն : Տանյակ տարիներ ԼՂԻՄ-ում մսի վերամշակման կոմբինատ չի եղել , թեպետ Ստեփանակերտում և Շուշիում կային սպանդանոցներ: Մարզից մթերված կենդանիները տեղափոխվում էին Բաքու, Կիրովաբադ, Սումգայիթ,Իմիշլի, Աղդամ և ադրբեջանական այլ քաղաքներ: Այնուհետև բարձր գներով վաճառքի էին հանվում Ղարաբաղում: Առօրյա անհրաժեշտ ապրանքները , ուտելիքը, մսամթերքը , խմելու ջուրը ԼՂԻՄ-ում խիստ պակաս էին:

Հնարավոր չէ մեկ առ մեկ թվարկել ադրբեջանցիների քաղաքականությունը բնութագրող ոլորտներն ու դեպքերը :

[1]ՍարումյանՆ., Նույնի էջ 57:

[2]Օհանջանյան Փ.Պ., Արցախ-Ղարաբաղ, Ստեփանակերտ, «ԱզատԱրցախ» հրատարակչություն,1998թ., էջ 188:

Այսպիսով, ամփոփելով սույն հոդվածը առանձնացնենք հետևյալ կետերը՝
ա.) Ադրբեջանական իշխանությունների հատուկ քաղաքականության արդյունքում ԼՂԻՄ-ում գրեթե 70 տարիների ընթացքում սոցիալ-տնտեսական ճգնաժամ էր տիրում:
բ) Պատմական Արցախ աշխարհի հյուսիսային շրջանները կարճ ժամանակահատվածում դարձան Ադրբեջանի հայակուլ քաղաքականության զոհը և մի քանի տասնամյակների ընթացքում փոխվեց այդ շրջանների ազգագրական դեմքը:
բ) Մարզում, ըստ վիճակագրական տվյալների, հետևողականորեն <<պակասում էր>> հայ էթնոսի թիվը, որին զուգահեռ բազմաթիվ ադրբեջանցիներ մշտական բնակություն են հաստատում պատմական հայկական հողերում: Պետական մասշտաբով արգելվում էր հայոց լեզուն ու պատմությունը: Նախադրյալներ են ստեղծվում մարզը վերջնականապես ադրբեջանականացնելու համար:
գ) Ծանր պայմաններում էին արդյունաբերությունը, հայ մշակութային կյանքը, տնտեսությունը, ոռոգման,ջրմատակարարման համակարգը, սոցիալ-կենցաղային կյանքը և բազում այլ բնագավառներ: Ջրօգտագործման մինիմալ պայմաններն ապահովում էին ցածր բերքաատվություն:
դ) Բնակարանային շինարարությունը <<լճացման>> շրջանում էր :
ե) ԼՂԻՄ-ի տնտեսության զարգացման արգելակումը արտացոլվել էր բնակչության սոցիալ-կենցաղային բոլոր ոլորտներում, ինչը, բնականաբար, դարձավ հայ բնակչության արտագաղթը խթանող հիմնական գործոններից մեկը:
զ) Մարզում 1980-ական թվականներին և հատկապես 1988թ.-ից սկսած ՝ պայմանավորված հայ ազգային ազատագրական պայքարի հետ, ակտիվանում էին ազգամիջյան հուզումները, որն ի վերջո հանգեցնում է ղարաբաղա-ադրբեջանական պատերազմի:

Այդուհանդերձ, 1985թ. հետո այսպես կոչված <<վերակառուցման>> քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի հայությանը հնարավորություն ընձեռնեց հանդես գալ իրենց ոտնահարված իրավունքները պաշտպանելու և ԼՂԻՄ-ը ՀՍԽՀ-ի հետ վերամիավորվելու:

ԼՂԻՄ-ում ադրբեջանցիների իրականացրած «սպիտակ եղեռնի» քաղաքականությունը, հետագայում պատերազմն ու անգամ հայերի մասսայական ջարդերը ադրբեջանական խոշոր քաղաքներում հնարավորություն չտվեցին վերջիններիս Ղարաբաղը պահել իրենց տրամադրության տակ, և ԼՂԻՄ-ը իր գոյությամբ ու անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակմամբ պատուհաս դարձավ Ադրբեջանի համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Հր.,Մարտնչող Արցախը (1917-2000).- Գիրք Գ (1985-2000).-Ստեփանակերտ,2007:
2. Բալայան Վ., Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության (1813-2007թթ.), Ստեփանակերտ, 2012թ.:
3. Բալայան Վ., Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, Եր., 2002թ:
4. Թովմասյան Վ.Հ., Աթաջանյան Վ.Ա., Ներսիսյան ՅՈՒ.Բ., Ղարաբաղյան հարց , Ստեփանակերտ, 1991թ:
5. Մելքումյան Ս., Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն,Եր.,ՀՀ ԳԱԱ, 1997թ.:
6. Սարումյան Ն., Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը 1960-1988 թվականներին, Եր, 2008թ.:
7. ՈՒլուբաբյան Բ., Արցախյան գյապայքարը, Եր., 1994թ.:
8. Օհանջանյան Փ., Արցախ-Ղարաաբաղ, Ստեփանակերտ, <<Ազատ Արցախ>> հրատարակչություն,1998թ:
9. Арутюнов В. Б. , События в Нагорном Карабахе ,хроника ,часть 1, февраль 1988г.-январь 1990г.
10. Нагорно-Карабахская Республика*:* путь квершинам*.* Степанакерт*:* Издание МИД НКР, 2001г.

ՀՏԴ 94""1991/1994"" (479.243)

Պատմություն

Նոննա Գյուրջյան
Արցախի պետական համալսարան, 3-րդ կուրս
gyurjyan.nonna@mail.ru

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ 1991-1994ԹԹ. ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Սույն հոդվածում փորձեցինք վերլուծել և գնահատել Թուրքիայի դերը 1991-1994 թթ. արցախյան հակամարտությունում:

Լեռնային Ղարաբաղի հակամարտությունն ինչպես իր պատմական, այնպես էլ ներկայիս դրսևորմամբ իրենից ներկայացնում է իրար հետ հակամարտող համաշխարհային քաղաքակրթությունների թատերաբեմ: Ինչպես 20-րդ դարի սկզբին, այնպես էլ հազարամյակի սահմանագլխին Հայաստանի և Արցախի առաջ ծառացավ Թուրքիայի և Ադրբեջանի ոտնձգություններին դիմակայելու խնդիրը: Փորձելով իրագործել իրենց վաղեմի երազանքը՝ Ադրբեջանն իր << ավագ եղբոր >> աջակցությամբ ռազմական գործողություններ սկսեց Արցախի դեմ:

Բանալի բառեր՝ Արցախյան հակամարտություն,թուրքական գործոն,Ադրբեջանական ոտնձգություններ, Ռուսական գործոն, արևմտյան աշխարհ

Нонна Гюрджян
АрГУ, 3-ий курс
gyurjyan.nonna@mail.ru

ТУРЕЦКИЙ ФАКТОР 1991-1994 В АРЦАХСКОМ КОНФЛИКТЕ

В этой статье мы попытались проанализировать и оценить роль Турции в Нагорно- Карабахском конфликте в 1991-1994 годах.

Нагорно- Карабахский конфликт в качестве своего исторического и нынешнего проявления является ареной для конфликтующих между собой мировых цивилизаций . Как в начале 20-ого века , так и на границе тысячелетия перед Арменией и Арцахом возникла проблема сопротивления посягательствам Турции и Азербайджана . Пытаясь осуществить свою давнюю мечту Азербайджан при поддержке своего ''старшего брата '' начал военные действия против Арцаха .

Ключевые слова: Арцах,турецкий фактор, Азербайджан, освободительная война, карабахский конфликт

Nonna Gyurjyan
ASU, 3rd year
gyurjyan.nonna@mail.ru

TURKISH FACTOR 1991-1994 IN THE ARTSAKH CONFLICT

In this article, we tried to analyze and assess The Turkish role in the Nagorno- Karabakh conflict in 1991-1994 .

The Nagorno – Karabakh conflict as its historical and current manifestation is the arena for the conflicting world civilizations. Both at the begining of the 20th century, and at the boundary of the millennium, Armenia and Artsakh faced the problem of resisting the encroachments of Turkey and Azerbaijan .Trying to realize his long – standing dream , Azerbaijan ,with the support of his '' elder brother '' ,began military operations against Artsakh.

Key words: Artsakh, Turkish factor, Azerbaijan, Liberation war, The Karabakh conflict

1980-ական թթ. Հայ–ադրբեջանական լարված հարաբերությունները չէին կարող անտարբեր թողնել թուրքական հասարակական և քաղաքական շրջանակներին: Մինչև ԽՍՀՄ փլուզումը Թուրքիայի դիրքորոշումը ղարաբաղյան հակամարտության նկատմամբ զգուշավոր և հաշվենկատ էր, և խնդիրը հիմնականում դիտվում էր որպես ԽՍՀՄ ներքին հիմնահարց: Սումգայիթում հայկական ջարդերից և արևմտյան մամուլում Ադրբեջանի բացասական կերպարի տարածումից հետո , թուրքական մամուլը և հեռուստատեսությունը կոչ արեցին երկրի ղեկավարությանը ավելի ակտիվ հետաքրքրվել խորհրդային

թուրքերի ճակատագրով: Հետաքրքրական է, որ հայկական ջարդերը Սումգայիթում տեղի են ունեցել «Թուրքիան մեզ կօգնի» կարգախոսով, իսկ թուրքական դրոշները դարձել էին ցույցերի անբաժանելի մասը: Այս համատեքստում Թուրքիան մտահոգված էր Հայոց համազգային շարժման վերաբերյալ համաշխարհային հանրության, մասնավորապես Արևմուտքի, կարծիքով:

Հարկ է նշել, որ իր գործունեությունը բավականին ակտիվացրեց Թուրքիայի հիմնական հատուկ ծառայություններից մեկը՝ Ազգային հետախուզական կազմակերպությունը, որը սերտորեն համագործակցում էր «Գորշ գայլեր» թուրքական ծայրահեղ ազգայնական կազմակերպության ադրբեջանական բաժանմունքի հետ: Հօգուտ Ադրբեջանի հետախուզություն իրականացնելուց բացի Ազգային հետախուզական կազմակերպությունը Բաքվի մերձակայքում գտնվող «Նասոսնայա» ռազմական օդակայանում ուսումնական կենտրոն էր ստեղծել ադրբեջանական դիվերսիոն-հետախուզական ջոկատներ պատրաստելու համար: Այդտեղ մարզվել և 1992թ.-ից հետախուզական խումբ է ղեկավարել Դիլհամ Ասկերովը, որը 2014թ. հուլիսին դիվերսիոն-հետախուզական գործողություն իրականացնելու նպատակով ներթափանցեց ԼՂՀ տարածք և ձերբակալվեց ԼՂՀ իրավապահ մարմինների կողմից:

Ղարաբաղյան շարժումը Թուրքիայում ընդունվեց որպես Ցեղասպանության հետևանքների փոխհատուցման պահանջ, այդ իսկ պատճառով հայերի հնարավոր հաջողությունը դիտվում էր որպես Սևրի պայմանագրի վերականգնման հնարավորություն: Ցույցերը Հայաստանում և Ադրբեջանում «Milliyet» թերթի համաձայն հանդիսացան Թուրքիայի դեպի խորհրդային թուրքերի կողմնորոշման պատճառ : Ղարաբաղյան շարժման առաջին օրերին թուրքական ազգայնական-իսլամիստական շրջանակները այն դիտում էին որպես խաչակրաց արշավանք ընդդեմ խորհրդային թուրքերի, իսկ «Հյուրիեթ»-ը հայտարարում էր այն մասին, որ Թուրքիան իրավունքներ ունի Նախիջևանի, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի և Զանգեզուրի նկատմամբ: «Milliyet» թերթը գրում է, որ ըստ թուրք դիտորդների ,եթե Լեռնային Ղարաբաղը կցվի Հայաստանին, ապա հաջորդ քայլը տարածքային պահանջները կլինեն Թուրքիայից:

Թուրքիայի դիրքորոշման մասին Լեռնային Ղարաբաղի հարցում հետաքրքիր հրապարակում է կատարել «Turkish Daily News» անգլալեզու թերթի խմբագիր Իլնուր Ջևիկը, որում նշվում էր, որ «Թուրքիան ոչ մի գործ չունի Ադրբեջանի հետ և, որ Արևմուտքը փորձում է ներգրավել Թուրքիային Հայաստանի և Ադրբեջանի միջև բախումների մեջ»:

Թուրքական որոշ շրջանակներ Ղարաբաղյան հարցը դիտում էին նույնիսկ վտանգավոր. այն կարող էր լարվածություն առաջացնել խորհրդա-թուրքական հարաբերություններում:

Ղարաբաղյան իրադարձությունների մասին թուրքական ԶԼՄ-ների արձագանքներում մտահոգություն էր առաջացել առաջին հերթին Նախիջևանի կարգավիճակի հնարավոր փոփոխության վերաբերյալ: Խորհրդային ղեկավարության կողմից տարածաշրջանային փոփոխությունները անցանկալի էին Թուրքիայի համար, այդ իսկ պատճառով Թուրքիան առիթը բաց չէր թողնում իրեն հայտարարելու Նախիջևանի անվտանգության երաշխավոր: Ուստի բոլոր միակողմանի քայլերը անցանկալի էին:

1989 թ.դեկտեմբերի 1-ի ՀԽՍՀ Գերագույն խորհրդի Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ կազմում ներգրավելու մասին որոշումը անակնկալ էր թուրքական կողմի համար, և ըստ «Milliyet» թերթի թուրքական կառավարության հայացքն ուղղվեց դեպի Հայաստան:

Թուրքական իշխանությունների հետաքրքրություններն Այսրկովկասում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ ավելի են մեծացել 1990-ին՝ Բաքվի հայկական ջարդերից և քաղաքում խորհրդային զորքեր մտցնելուց հետո, երբ ադրբեջանական հասարակական-քաղաքական շրջանակներում ավելի հաճախ են քննարկվել Թուրքիայի օգնությանը դիմելու և նույնիսկ միասնական պետություն ստեղծելու գաղափարները՝ հիմնված էթնիկական և լեզվական ընդհանրության վրա: Կիրառելով «մեկ ազգ, երկու պետություն» քաղտեխնոլոգիան՝ Թուրքիան և Ադրբեջանը հաստատել են սերտ համագործակցություն, ինչը հարմարավետ է երկու կողմերի համար և թույլ է տալիս ճկուն և բազմակողմանի քաղաքականություն վարել:

Խորհրդային Միության թուլացման հետ մեկտեղ Ղարաբաղյան հակամարտության նկատմամբ Թուրքիայի հետաքրքրությունը ավելի է մեծացել: Այս առումով ուշագրավ է այն փաստը, որ Ղազախստանի նախագահ Ն.Նազարբաևի Թուրքիա կատարած այցից և Ժելեզնովոդսկում կնքված պայմանագրից հետո ,Նազարբաևը հանդես է եկել որպես միջնորդ ոչ միայն հակամարտող կողմերի միջև, այլ նաև Թուրքիայի, ապահովելով վերջինիս անուղղակի ազդեցությունը գործընթացի վրա:

Ադրբեջանի ինքնիշխանության մասին օրենքն ընդունելուց հետո 1991թ.սեպտեմբերին, Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունը հանդես է եկել հատուկ հայտարարությամբ, որ «Թուրքիան հավանությամբ և փոխըմբռնմամբ ողջունում է եղբայրական ադրբեջանական ժողովրդի անկախության մասին որոշումը, որի հետ մենք ունենք ընդհանուր պատմական և մշակութային արժեքներ»: Առաջիններից մեկը ճանաչելով Ադրբեջանի անկախությունը (1991թ. նոյեմբերի 9), թուրքական կողմը պատրաստակամություն հայտնեց միջնորդելու ղարաբաղյան հարցում, դրանով իսկ արտահայտելով իր բացահայտ ադրբեջանամետ դիրքորոշումը:

ԽՄ փլուզումից հետո թուրքական ջանքերը ղարաբաղյան հարցում մտադիր էին ցույց տալ ,որ Թուրքիան պատրաստ է տրամադրել աջակցություն իր հարազատներին ոչ միայն խոսքով, այլ նաև կոնկրետ գործողություններով:Անկասկած, Հարավային Կովկասը աշխարհաքաղաքական տեսակետից զբաղեցնում է ռազմավարական կարևոր դիրք, որը հնարավորություն կտա Թուրքիային ուղղակի կապ հաստատելու Հյուսիսային Կովկասի, Վոլգայի տարածաշրջանի, Կենտրոնական Ասիայի թյուրքական ցեղերի հետ: Թուրքիայի համար հատկապես կարևոր է Ադրբեջանի դերը և աշխարհագրական դիրքը: Այս հիմքի վրա Թուրքիան ընդունեց հետևյալը.

-Ադրբեջանի անկախությունը,

-աջակցելու ապահովել Ադրբեջանի վերահսկողությունը Լեռնային Ղարաբաղի նկատմամբ,

-կանխել Ռուսաստանի դիրքերի ամրապնդումը տարածաշրջանում ,

-մասնակցությունը ադրբեջանական նավթի արտադրությանը և դրա փոխադրումը Թուրքիայով,

-բարեկամության պահպանումը թուրքամետ ադրբեջանական իշխանության հետ:

1992թ. իրանական «Resalat» թերթը գրում է, որ «Լեռնային Ղարաբաղի հարցում, Թուրքիան ունի երեք հիմնական նպատակներ՝ առաջին հերթին, պետք է մեծացնել իր իշխանությունը Ադրբեջանում և ճանապարհ հարթել դեպի Կենտրոնական Ասիա, երկրորդ, մոռացության մատնել հայ-թուրքական թշնամանքը և, վերջապես, երրորդ, տարածաշրջանում պետք է իրականացնել Եվրոպայի և ԱՄՆ-ի հանձնարարությունները... »:

Թուրքիան Ղարաբաղյան հակամարտության փաստացի մասնակիցն է. այդ երկիրն Ադրբեջանին առայսօր սպառազինություն է մատակարարում և աջակցում զինվորական «խորհրդականներով», իսկ պատերազմի տարիներին օգնում էր նաև այսպես կոչված «կամավորականներով»[1]: 1988-1990 թթ. Սումգայիթում և Բաքվում հայ բնակչության ջարդերի անմիջական կազմակերպիչներից էին թուրքական «Գորշ գայլերի» էմիսարները և Թուրքիայի պաշտպանության նախարարության հետախուզության գլխավոր վարչությունը: Պանթուրքիստներն անմիջական մասնակցություն ունեցան նաև Ադրբեջանի ազգային ճակատի ձևավորմանը: Արդեն 1992թ. հունվարին Ադրբեջանի նախագահ Ա.Մութալիբովի՝ Թուրքիա կատարած պաշտոնական այցի ժամանակ պայմանավորվածություն ձեռք բերվեց թուրքական ռազմական ուսումնարաններում ադրբեջանցի սպաների վերապատրաստման վերաբերյալ: Նույն թվականի մարտին Ադրբեջանի վարչապետ Հ.Հասանովը պաշտոնական ուղերձով դիմել է Թուրքիայի նախագահ Թ. Օզալին և վարչապետ Ս.Դեմիրելին «ակնկալելով եղբայրների և բարեկամների կողմից անհետաձգելի օգնություն: Ղարաբաղյան ճակատներում թուրքական բանակի շուրջ հարյուր հիսուն բարձրաստիճան սպաներ , այդ թվում ՝ պահեստի 10 գեներալներ , 1992 թ.-ի սկզբին մասնակցել են ռազմական գործողությունների մշակմանը և ադրբեջանական բանակի գրոհային ու դիվերսիոն ստորաբաժանումների ուսուցմանը[2]:

Քանի որ դիվանագիտական ճանապարհով հօգուտ Ադրբեջանի դրական տեղաշարժեր տեղի չունեցան, Թուրքիան սկսեց շոշափել ուղղակի ռազմական միջամտության գաղափարը ընդդեմ հայերի առաջխաղացման[3]: Երկու անգամ, նախ՝ 1992թ.փետրվարին, երբ հայկական կողմը կարողացավ չեզոքացնել Արցախում ադրբեջանցիների կարևոր հենակետ հանդիսացող Խոջալուն: Մարտի 4-ին, Իզմիրում ելույթ ունենալիս, Թուրքիայի նախագահ Թուրգութ Օզալը սպառնաց ռազմական ուժերով կանգնեցնել հայերի առաջխաղացումը, Մեջլիսում առաջարկվեց դադարեցնել մարդասիրական օգնության առաքումը ՀՀ: ԱՊՀ Կոլեկտիվ զինված ուժերի գլխավոր հրամանատար մարշալ Եվգենի Շապոշնիկովը հայտարարեց. «Թուրքիայի ներխուժումը Հայաստան կարող է հանգեցնել III

[1] Տեր-Հարությունյան Գ., Հայ-ռուսական համագործակցությունը և Թուրքիան, «Հանրապետական» Թ-5, Երևան, 2011,էջ 5

[2] Ավագյան Ա., Թուրք ազգայնամոլների գործունեությունն Ադրբեջանում 1990-1994 թթ. : Հայկական բանակ, 3(49), 2006թ, էջ 50

[3] Сулейманов Э., Эвоян Л. , Две позиции в Нагорно-карабахской войне:Россия и Турция 1990-1994гг. Центральная Азия и Кавказ ,Н4 ,Т-15 ,М. ,2012, с.1-3,

Համաշխարհային պատերազմի»[1]: Այս հայտարարությունը առաջացրեց Անկարայի ինչպես քաղաքական, այնպես էլ ռազմական շրջանակների լուրջ մտահոգությունը: Ռուսաստանի պես հզոր մի երկրի հետ պատերազմի մեջ մտնելուն Թուրքիան բնավ պատրաստ չէր: Առավել ևս, պատմության ընթացքում Ռուսաստանը բազմիցս առիթ է ունեցել ապացուցելու իր զենքի առավելությունը թուրքականի հանդեպ: Դրանից հետո Անկարան սկսեց ավելի մեղմ արտահայտվել արցախյան հիմնախնդրի կապակցությամբ:

Նպատակ ունենալով շրջափակման միջոցով ստիպել ՀՀ-ին միակողմանի զիջումներ կատարել Ղարաբաղի հիմնահարցում՝ Թուրքիան 1993թ. մարտին նախ փակել է հայ-թուրքական սահմանը, ապա նաև՝ իր տարածքով անցնող միջազգային H-50 օդային միջանցքը:

Ապա՝ 1993թ ապրիլին ,երբ հայկական ուժերը վերցրին Քարվաճառը: Ապրիլի 3-ին Ս. Դեմիրելը հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ նա շեշտում էր, որ Հայաստանն ու աշխարհը ճիշտ չգնահատեցին Թուրքիայի համբերատարությունը: Համբերության բաժակը լցվել էր, և Թուրքիան դիմեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին: Թուրքիան հանդես եկավ մի շարք դիվանագիտական նախաձեռնություններով ինչպես ՄԱԿ-ում, այնպես էլ ԵԱՀԿ-ում: 1993թ. ապրիլի 30-ին ընդունված ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդի թիվ 882 բանաձևը պահանջում էր դադարեցնել բռնությունները Լեռնային Ղարաբաղում: Հայկական կողմից պահանջում էր ուժերը դուրս բերել Քարվաճառի և մյուս տարածքներից, ինչպես նաև կոչ էր անում վերսկսել բանակցությունները ԵԱՀԽ շրջանակներում: Հատկանշական է, որ Թուրքիան հայտարարում էր, որ ՄԱԿ-ի բանաձը անտեսելու դեպքում «ագրեսորի» դեմ պատժամիջոցներ է պետք կիրառել:, Թուրքիան պատրաստ էր անմիջականորեն միջամտելու Ղարաբաղյան հակամարտությանը և ներխուժելու Հայաստան, և երկու անգամ էլ Ռուսաստանի վճռական միջամտությունն էր, որ կանխեց պատերազմը:

Տարածաշրջանում ստեղծված պայթյունավտանգ իրավիճակը լիովին փոփոխվեց, երբ Ռուսաստանը, հաղթահարելով ներքին խնդիրները, ավելի ակտիվորեն ներգրավվեց արցախյան հիմնահարցի կարգավորման մեջ: Ռուսաստանի բացառիկ միջամտության շնորհիվ 1994թ. մայիսի 12-ին Արցախում ռազմական գործողությունները դադարեցին: Հաստատվեց զինադադար: Բիշկեկում ստորագրված զինադադարի մասին համաձայնագրից հետո Թուրքիան ակտիվորեն ներգրավվեց բանակցային գործընթացների մեջ: Մասնավորապես, այդ ժամանակ խոսակցություններ կային, որ Լեռնային Ղարաբաղում հնարավոր է միջազգային խաղաղապահ ուժեր տեղակայվեն: Թուրքիան, որ ցանկանում էր Հարավային Կովկասում ունենալ ռազմական ներկայություն, ամեն ջանք գործադրում էր, որպեսզի թուրքական ստորաբաժանումները նույնպես ընդգրկվեն այդ խաղաղապահ ուժերի կազմում: 1994թ. հուլիսին Թուրքիայի զինված ուժերի Գլխավոր շտաբի պետ Դողան Գյուրեշը Բաքվում տված հարցազրույցի ժամանակ լրագրողների այն դիտարկմանը, որ հայկական կողմը դեմ կլինի Թուրքիայի ռազմական ներկայությանը Արցախում, պատասխանեց. «Սերբերը նույնպես դեմ էին թուրքական ներկայությանը, սակայն ներկայումս Բոսնիայում գտնվում է 1500 թուրք զինվոր»: Սակայն, այդ ուղղությամբ Թուրքիայի իրականացրած բոլոր ջանքերն ապարդյուն անցան, և Արցախում միջազգային խաղաղապահ զորքեր չտեղակայվեցին[2]: Հետագայում Թուրքիան ջանքերը կենտրոնացրել է միջազգային տարբեր ատյաններում՝ ՄԱԿ, ԵԱՀԿ, Իսլամական վեհաժողով կազմակերպություն,թյուրքական գագաթնաժողովներ և այլն, Ղարաբաղյան հակամարտության առնչությամբ ադրբեջանամետ դիրքորոշում ապահովելու, ՀՀ-ին դատապարտող բանաձևեր ընդունելու և դրանք իրագործելու ուղղությամբ[3]:

Նկատենք, որ ներկայիս իրավիճակը շատ չի տարբերվում նախկինից. Թուրքիան ամրապնդել է Ադրբեջանի «ավագ եղբոր» կարգավիճակը, և կասկած չի հարուցում, որ ադրբեջանական հակահայկական հռետորաբանությունն ու ռազմատենչությունը պայմանավորված են ոչ միայն «նավթադոլլարների» առատությամբ, այլև՝ առաջին հերթին թուրքական ռազմաքաղաքական-գաղափարախոսական աջակցությամբ:

Արցախյան հակամարտությունը հարկ է դիտարկել իբրև հայ–թուրքական էթնոքաղաքական արմատական հակասությունների մասնավոր դրսևորում, որն ակտուալ է տվյալ պատմական

[1]Չաքրյան Հ.,Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, Երևան, 1998,էջ 11:

[2] Демоян Г, Турция и Карабахксий конфликт в конце XX- начала XXI, Ереван, 2006, с 128.

[3].,Ղարաբաղյան ազատագրական պատերազմը 1988-1994 ,Հանրագիտարան, Խմբ. Այվազյան Հ.Մ, Երևան, 2004 ,էջ213

ժամանակահատվածում: Ընդ որում, իր հենց այդ արմատականության պատճառով՝ հայ-թուրքական հակամարտությունն ունի շարունակական բնույթ և ժամանակ առ ժամանակ «ցիկլային» տրամաբանությամբ ակտուալանալու կայուն միտում: Այս համատեքստում Արցախի տարածքը հարկ է դիտարկել որպես հայ-թուրքական հակամարտության հերթական ցիկլի պատճառ: Հետևաբար, այս իրողությունից ելնելով՝ առավել քան ակնհայտ է դառնում հետևյալը. Արցախի տարածքին տիրապետելը հակամարտող կողմերից յուրաքանչյուրին տալիս է ժամանակի մեջ երկարաձգված հակամարտությունում դիմացինի հանդեպ «մրցակցային ռազմավարական առավելություն»: Տվյալ դեպքում «հայ-թուրքական» ձևակերպման մեջ մենք ներառում ենք նաև Ադրբեջանի հետ առկա վիճահարույց խնդիրները, քանզի ելնում ենք այն համոզմունքից, որ Թուրքիայի և Ադրբեջանի էթնոքաղաքական հեռահար շահերն ու ռազմավարական նպատակները նույնական են: ժամանակակից Ադրբեջանը թուրքական նախագիծ է, թուրքական հեռահար նվաճողական նկրտումների իրականացման մի փուլ: Թուրքիան պակաս շահագրգռված չէ Արցախի տարածքի զավթմամբ, այլ կերպ՝ թրքացմամբ, քան պաշտոնական Բաքուն: Այստեղ հարկ է նշել, որ ռազմավարական բնույթի էթնոքաղաքական շահերի բախում Թուրքիայի և Ադրբեջանի միջև հնարավոր է միայն այն դեպքում, եթե Ադրբեջանի քրդացման գործընթացը, որ սկիզբ է առել ալիևյան կլանի իշխանության օրոք և ներկայումս հարաճուն տեմպերով շարունակվում է, հասնի այնպիսի մասշտաբների, որ էապես փոփոխի այդ պետության էթնիկական դիմագիծը: Այսօր, սակայն, Ադրբեջանի էթնիկական դիմագիծը թուրքական է՝ դրանից բխող բոլոր հետևություններով հանդերձ:

Վերլուծելով Թուրքիայի վարած քաղաքականությունը արցախյան հակամարտությունում, կարող ենք կատարել հետևյալ եզրահանգումները.

1.Խորհրդային Միության փլուզումը փոխեց աշխարհաքաղաքական կոնֆիգուրացիան տարածաշրջանում, ակտիվացնելով տարածաշրջանային գերտերության կարգավիճակի համար թեկնածուների միջև պայքարը: Թուրքիան, մասնակցելով պայքարին, արցախյան հակամարտությունն օգտագործեց Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում իր ազդեցությունն ուժեղացնելու համար:

2.Թուրքիայի մասնակցությունը հակամարտությանը պայմանավորված էր ազգայնական, պանթուրքական տրամադրությունների աճով և միջազգային ասպարեզում լուրջ աջակցությամբ, որ ցուցաբերում էր Արևմուտքը (մասնավորապես՝ ԱՄՆ-ն): Ոչ մի պետություն չի անհանգստանում մեկ այլ պետության ճակատագրով, կան միայն ազգային ու քաղաքական շահեր, այս դեպքում բացառություն չեն ոչ միայն Արևմուտքի երկրները,այլ նաև Ռուսաստանը:

Ամփոփելով՝ որպես հետևություն. հարափոփոխ աշխարհում հայկական երկու պետականությունների, լայն առումով՝ հայապատկան Հայաստանի անվտանգության կայուն երաշխիքներից մեկը տարածքն է՝ ռազմավարական առավելություն տվող տարածքը: Առավել քան ակնհայտ է, որ մենք ստիպված ենք զարգանալ մշտական արտաքին վտանգի պայմաններում, և այդ պարագայում Ադրբեջանի հետ Արցախի պետական սահմանի ներկայիս կոնֆիգուրացիան, Արցախի 11458 քառ. կմ սահմանադրորեն ամրագրված տարածքը հայկական երկու պետությունների կենսունակությունն ապահովող հիմնական գրավականն է: Հատկապես ընդգծենք. Արցախն իբրև պետություն իր նախկին ԼՂԻՄ տարածքով, իր կիսանկլավային վիճակով կենսունակ լինել չի կարող: Առանց Արցախի ներկայիս՝ նրա սահմանադրությամբ ամրագրված 11458 քառ. կմ տարածքի կենսունակ լինել չի կարող և Հայաստանի Հանրապետությունը:

Օգտագործված գրականություն

1. Ավագյան Ա., Թուրք ազգայնամոլների գործունեությունն Ադրբեջանում 1990-1994 թթ. : Հայկական բանակ, 3(49), 2006թ :
2. Չաքրյան Հ., Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, Երևան, 1998 :
3. Տեր-Հարությունյան Գ., Հայ-ռուսական համագործակցությունը և Թուրքիան, «Հանրապետական» Թ-5, Երևան, 2011 :
4. Ղարաբաղյան ազատագրական պատերազմը 1988-1994 ,Հանրագիտարան, Խմբ. Այվազյան Հ.Մ, Երևան, 2004 :
5. Демоян Г, Турция и Карабахксий конфликт в конце XX- начала XXI, Ереван, авторское издание, 2006 .
6. Сулейманов Э., Эвоян Л. , Две позиции в Нагорно-карабахской войне:Россия и Турция 1990-1994гг. Центральная Азия и Кавказ ,Н4 ,Т-15 ,М. ,2012 .

ՀՏԴ 904:78 *Մշակութաբանություն*

Վարդիթեր Կարապետյան
Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարան,
մագիստրատուրա 1-ին կուրս
vard.armenia@mail.ru

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱԿԵՐՏ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քարեգործության այս նմուշները Հայկական մշակույթի անգնահատելի գոհարներից են: Ներկայացված խաչքարերն ու տապանաքարերը հնարավորություն են ընձեռում ճանաչելու և գնահատելու մեր նախնիների թողած ժառանգությունը: Հայոց ազգային նվագարաններով պատկերաքանդակներն ապացուցում են դրանց պատկանելիությունը հայ ժողովրդին և նրա գալիք սերունդներին:

Բանալի բառեր՝ խաչքար, տապանաքար, պատկերաքանդակ, երաժշտական գործիքներ, թառ, փանդիռ, սրինգ, շեփոր:

Вардитер Карапетян
Студентка 1-ого курса магистратуры
Факультета художественного воспитания
Армянского государственного
педагогического университета
им. Х. Абовяна
vard.armenia@mail.ru

КАМЕННЫЕ СВИДЕТЕЛЬСТВА МУЗЫКИ

В Армении с древнейших времён на надгробиях, а после принятия христианства и на хачкарах изображались светские и религиозные сцены, на которых видим музыкантов с музыкальными инструментами, что свидетельствует о наличии струнных, духовых и ударных инструментов в духовной и светской жизни армянского народа.

Таким образом, хачкары Паравадзора XII-XIII вв., надгробия Норатуса, Хацарата и Тавуша свидетельствуют о важной роли и значении музыки в многовековой культурной жизни нашего народа. В статье представлены доказательства, которые свидетельствуют, если не об этнической принадлежности изображённых музыкальных инструментов, то о распространённости в жизни наших предков, а также отношение скульптора к данному искусству.

Ключевые слова: хачкар, надгробия, ваяния, музыкальные инструменты, тар, бандура, флейта, труба

Varditer Karapetyan
Student of the 1st year, magistracy
the Faculty of Art Education
Armenian State
Pedagogical University named after Kh. Abovyan
vard.armenia@mail.ru

STONE EVIDENCE OF THE MUSIC

Discussing carved paintings of cross-stones and gravestones, we can state that in Armenia in different periods, in different periods, on the secular and religious scenes, that are depicted on the cross-stones and gravestones, we see the musical instruments, which indicates the presence of string plucked , wind and percussion instrumentsin the spiritual and social life of the Armenian people.

Thus, cross-stones of Paravadzorof XII-XIII centuries , tombstones of Noratus, Hatsarat and Tavush, evidence on the important role and value of music in the Armenian centuries-old cultural life. The article presents

evidence that suggestsif not always on the ethnicity of instruments mentioned, but about their usage period, regional characteristics, the usage in various ritual, as well as the sculptor's attitude towards craft and art.

Keywords: cross-stone, tombstones, carved painting, musical instruments, tar, pandora, flute, trumpet.

ՀՀ ամբողջ տարածքը պատված է քարակերտ հուշարձաններով՝ ի թիվս հոյակերտ խաչքարերի և տապանաքարերի: Յուրաքանչյուր խաչքար կամ տապանաքար ունեցել է իր ստեղծման շարժառիթը՝ բժշկման, սահմանների պաշտպանության, պատմական փաստերի վավերացման, փրկչագործության և վերջապես՝ որպես մահարձան:

Հոդվածի նպատակն է՝ ներկայացնել Հայաստանի տարածքի երաժշտական թեմայով քարակերտ հուշարձաններ, որոնք հայ ժողովրդի կյանքում երաժշտության կարևոր դերի և նշանակության վկայություններն են:

Հայ մատենագրության մեջ շատ չեն երաժշտական գործիքների ու երաժիշտ կատարողների մասին վկայությունները, մանրանկարչական պատկերումները: Այդ բացը մասամբ լրացնում են հնագիտական նյութերը, որոնք վերաբերում են նաև նախաքրիստոնեական շրջանին: Հայտնի է Սևանա լճի ափամերձ Ծովակ գյուղից հայնաբերված եղջերափողը, իսկ Կարմիր բլուրում՝ բրոնզե ծնծղաները:

Հայաստանում IV դարից սկսած կերտվել են խաչքարեր, որոնք վաղ շրջանում կոչվել են <<Խաչ>> կամ <<Սուրբ նշան>>, իսկ արդեն XIX դարից սկսեցին կոչվել Խաչարձան կամ Խաչքար: Խաչքարերի նշանակությունն առանձնակի ընդգծելու համար դրանք սկսած V դարից տեղադրվում էին պատվանդանի վրա՝ բարձրադիր վայրում առավել հնչեղություն հաղորդելու նպատակով: Այդ մասին մեզ տեղեկություններ է հաղորդում Ագաթանգեղոսը նմանատիպ կոթող հայտնաբերվել է Ջրվեժում:

Քնարի, շնչական երաժշտական գործիքներով կատարող նվագածուների քանդակներով է զարդարված Էրեբունիում հայտնաբերված մ.թ.ա V դ. եղջերագավաթը: Լարային գործիքի պատկերով երաժիշտների տերակոտային արձանիկներ են գտնվել Արտաշատ քաղաքատեղիում, Դվինում՝ ապակե սրվակ՝ լարային նվագարանի պատկերով, ոսկրե սրինգներ՝ Գառնիում և Դվինում: Շեփոր է վերարտադրված Գեղարդի XIII դ. վիմափոր եկեղեցու բեմի [16, 80] և Մշո Առաքելոց եկեղեցու քանդակազարդ դռան վրա, Մաշտոցյան Մատենադարանի XII-XVI դդ. մանրանկարներով զարդարված ձեռագրերի էջերում՝ նվագարանների ձևի, կառուցվածքի հնարավորինս ճշգրիտ արտապատկերումով:

Հայ երաժշտական մշակույթի ուսումնասիրության համար հետաքրքիր է Սյունիքի Պառավաձոր հնավայրում գտնվող թվագրված խաչքարը՝ 1221թ.: Վերջինիս ձախ կողմի հատվածում պատկերված է բամբիռը (փանդիռ) ձեռքին նվագասաց գուսան: Բամբիռի սիմերին հպած նվագասացի ձախ ձեռքը, լայն բացած մատներով, շեշտում է երաժշտական գործիքի լարերին դիպչելը: Խաչքարի քանդակը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել նաև բամբիռի կառուցվածքի և ձևի մասին: Գործիքի գուշը թիանման է: Նվագարանի գրիֆը՝ պարանոցը, կարճ է ու լայն: Բացակայում են ձայնաշարերը, գլխիկի մանրամասները, լարիչ ականջները: Սակայն գուշի և գրիֆի վրա որոշակի նշմարվում են քառաղի բամբիռի լարերը: Գուշի և գրիֆի ստորին մասից կախված է նվագարանն ուսելու պարանը: Այս խաչքարը որևէ հայտնի նվագասաց-գուսանի հիշատակին է նվիրված: Պակաս ուշագրավ չէ նույն տարածաշրջանում գտնվող XII դ. մեկ այլ՝ մեջտեղից երկու կես եղած գեղաքանդակ խաչքար: Խաչքարերի միջնամասում խաչի պատկերն է: Հարթաքանդակի աջ կողմում ծալապատիկ նստած կին երաժշտի պատկերն է: Երաժշտի դեմքը պատկերված է դիմացից և դիմային մասը շրջափակող գլխաշորը իջնում է կրծքին: Աջ ձեռքով բռնել է ջութակ հիշեցնող գործիք, իսկ ձեռքը տարել դեպի ձախ: Ուշագրավ է խաչքարի արձանագրությունը, որն ավանդում է, թե կանգնեցվել է 1194 թ. Աբլիեջի որդի Վասակի կողմից՝ իր եղբայր Հասանի հիշատակին: Կնոջ պատկերի մոտ հիշատակված է հանգուցյալ Հասանի մոր՝ Խուշուշի անունը:

Բացի խաչքարերից երաժշտական գործիքների պատկերներ կան նաև տապանաքարերի վրա: Հորիզոնական տապանաքարերից տեղեկանում ենք երաժշտական գործիքների մասին, որոնք կիրառվել են տարբեր տոնակատարությունների ժամանակ: Հացառատի տապանաքարերից մեկի վրա պատկերված է հարսանեկան տեսարան, որտեղ շատ հստակ երևում են ձիերին հեծնած հարսն ու փեսան, հարսնախպերը, երաժիշտներ և գինի բաժանող մարդը. տեսնում ենք դուդուկ, դափ, քանոն, քամանչա և թառ: Հացառատի տապանաքարերից մեկի (XVI դարի) վրա չորս անկյուններում հրեշտակները նվագում են գալարափող՝ ավետելով Քրիստոսի գալուստը: Նմանատիպ պատկեր ենք տեսնում նաև Սոդքի XVII դարի խաչքարի վրա: 2015 թվականին Տավուշի մարզի Բերդավան

քաղաքից ոչ հեռու գտնվող Գառդուշի սարի շրջակայքում արված պեղումների արդյունքում հայտնաբերվել են տապանաքարեր, որոնց վրա պատկերված են խնջույքի տեսարաններ՝ երաժիշտների և երաժշտական գործիքների պատկերաքանդակներով (տե՛ս նկ. 1): Երաժիշտների մեջ պարզ երևում է նաև կին երաժիշտ: Այս ամենի պատմական վավերացումն է Նորատուս գյուղի IX-XII դդ. մեկ այլ տապանաքար, որի վրա պատկերված է նվագարանների «համաստեղություն»: Միմյանց կողքի նստած երաժիշտների ձեռքին նվագարաններ են՝ քանոն, փանդիռ և դափ [14, աղյուսակ 1423]: Քարեգործության այս նմուշները Հայկական մշակույթի անգնահատելի գոհարներից են: Ներկայացված խաչքարերն ու տապանաքարերը հնարավորություն են ընձեռում ճանաչելու և գնահատելու մեր նախնիների թողած ժառանգությունը:

Նկ. 1 Նոյեմբերյանի տարածաշրջան, XVI դարի տապանաքար:

Քարեգործության այս նմուշները Հայկական մշակույթի անգնահատելի գոհարներից են: Ներկայացված խաչքարերն ու տապանաքարերը հնարավորություն են ընձեռում ճանաչելու և գնահատելու մեր նախնիների թողած ժառանգությունը: Հայոց ազգային նվագարաններով պատկերաքանդակներն ապացուցում են դրանց պատկանելիությունը հայ ժողովրդին և նրա գալիք սերունդներին:

Գրականություն

1. Ազարյան Լ. Ռ., Հայկական խաչքար, Երևան 1978
2. Աղասյան Ա. Վ., Հայ Արվեստի պատմություն, Երևան 2009
3. Աղասյան Ա. Վ., Հակոբյան Հ. Հ., Ղազարյան Վ. Հ., Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձաններ, Երևան 1984
4. Այվազյան Ա. Ա., Ջուղա Նախիջևանի կոթողային հուշարձաններն ու պատկերաքանդակները, Հնագույն Հայաստանի մշակույթի պատմությունից, Երևան 1984
5. Այվազյան Հ. Մ., Քրիստոնյա Հայաստան Հանրագիտարան Երևան 2002
6. Բարխուդարյան Ս. Գ., Դիվան հայ վիմագրության Երևան 1973
7. Կարախանյան Գ. Հ., Երաժիշտ կատարողների քանդակներ XII-XIII դդ. խաչքարերի վրա, Լրաբեր Հասարակական Գիտությունների, 1976 թիվ 3
8. Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները. IX-XIII դարերի խաչքարերը ՀՍՍՀ ԳԱ Երևան 1984
9. Ղազարյան Վ. Հ., Հակոբյան Հ. Հ., Հայ միջնադարյան կերպարվեստի պատմություն, Երևան Զանգակ-97 ՍՊԸ 2013
10. Մարգարյան Ե. Գ. Հայկական խաչքարի մշակույթ Երևան 2010
11. Մելիք-Վրթանեսյան Կ. Ե., Տոնյան Մ. Ա., Երաժշտական բացատրական բառարան, Երևան 1989
12. Շահինյան Ս. Մ., Խաչքար տիեզերական արարչագործության սրբազան համակարգը Երևան 2012
13. Պետրոսյան Հ. Լ., Խաչքարերի ծագումը, գործառությունը, իմաստաբանությունը Երևան 2007
14. Ջանփոլադյան Հ. Մ., Քալանթարյան Ա. Ս., Հայաստանի հնագիտական հուշարձանները, Միջնադարյան Հայաստանի առևտրական կապերը VI-XIII դդ., պրակ IV, Երևան 1988
15. Ցիցիկյան Ա. Մ., Հայկական աղեղնային Արվեստը Երևան, 2011
16. Քոչարյան Ա. Կ., Հայ ժողովրդական նվագարանները Երևան 2008

ՀՏԴ 001 *Մամուլ*

Արմեն Չոփուրյան
Հովհ. Թումանյանի անվան Վանաձորի պետական համալսարան,
մագիստրատուրա 1-ին կուրս
chopuryan.armen@mail.ru

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ, ԻԻՀ)

«Սփյուռքահայ մամուլը հայրենիք-սփյուռք առընչությունների մասին» աշխատանքի մեջ ներկայացված է սփյուռքահայ մամուլի անդրադարձը հայրենիք սփյուռք կապերին տարբեր երկրներում գործող առավել ակտիվ հայկական պարբերականների օրինակով: Աշխատանքի մեջ մասնավորապես ներկայացված է Իրանում հրատարակվող «Ալիք» օրաթերթի անդրադարձը նշված հարցին, և նմանատիպ ձեռնարկների կարևորությունը հայրենքիքի հետ ամուր և անքակտելի կապը պահպանելու համար:

Բանալի բառեր. Հայրենիք-սփյուռք, մամուլ, իրանահայհամայնք, Ալիք օրաթերթ, անդրադարձ, լուսաբանել:

Армен Чопурян
ВГУ, магистратура 1-ый курс
chopuryan.armen@mail.ru

О СВЯЗИ РОДИНА-ДИАСПОРА ЗА РУБЕЖОМ В ПРЕССЕ ЗАРУБЕЖНЫХ АРМЯН

В работе О связи родина армянские колонии за рубежом в пресее зарубежних армян ... представлено возврашение прессы зарубежных армян к связях родина-армянские колонии за рубежом в разных странах на примере действующей более актвно армянской периодической печати. В работе, в частности, представлены возврашеные опубликованной в Иране газеты "Волна" к указанному вопросу и важность подобных пособий для сохранения крепкой и нарушимой связи.

Ключевые слова: Родина-диаспора, пресса, Ирано- армянское сообщество, Волна ежедневно, подбор, иллюстрировать.

Armen Chopuryan
VSU, Master's degree 1st year
chopuryan.armen@mail.ru

MODERLAND-DIASPORAN PRESS

Bearing in mind the most dynamic Armenian periodicals in various countries, the relations between motherland and diaspora is represented in the review of a press so called "Moderland-Diasporan Press". "Alik" daily press is stated in the review, inasmuch as its contribution to this topic is huge. The significance of similar manuals in the process of maintaining firm and inseparable connections with motherland is represented in the above-mentioned press.

Keywords: Motherland, Diaspora, media/pressArmenian community in Iran, "Alik" daily newspaper, review, illustration

Հայ սփյուռքի պատմության ուսումնասիրումը հնարավոր չէ առանց հայրենիք-սփյուռք առնչությունների զարգացման ուսումնասիրման: Այդ առնչությունների վերաբերյալ առավել հավաստի և բովանդակալից տեղեկատվություն պարունակում է մամուլը: Հայաստանի և սփյուռքի հայկական մամուլի ուսումնասիրության կարևորագույն խնդիրը նրա բովանդակության վերլուծությունն է:[1]

Սփյուռքի լրատվամիջոցները, ձևավորելով հայկական տեղեկատվական դաշտ, ստանձնում են առանձնահատուկ գործառույթ՝ հայրենքիքի հետ կապի պահպանման, Հայաստանի ու սփյուռքի մասին տեղեկատվության տարածման և դրանց կերպարի ձևավորման, ազգային գաղափարների ու արժեքների, էթնիկ ու մշակութային ինքնության պահպանման և վերարտադրման գործում:

[1] Կարապետյան Ռ., Հայրենիք-սփյուռք առընչությունները հայկական մամուլում, Երևան 2012, էջ 44:

Աշխարհի տարբեր երկրներում ձևավորված հայկական գաղութներն ավանդաբար ստեղծել են հայկական մամուլ, ինչը վկայել է համայնքի կազմավորման և կարողությունների զարգացման նոր մակարդակի մասին:[1]

Մի շարք երկրների հայկական համայնքներում մամուլն առաջին անգամ լույս է տեսել դեռևս 19-րդ դարից:

Ռուսաստանում առաջին հայերեն պարբերականը՝ «Արևելյան ծանուցում» -ը, լույս է տեսել 1816 թ.-ին Աստրախանում: Հետագայում Ռուսաստանում հրատարակվել է շուրջ 90 անուն պարբերական:[2]

Իրանում առաջին հայերեն պարբերականը՝ «Շավիղը», հիմնադրվել է 1894 թ.-ին, Թեհրանում: Մինչ օրս Իրանում հրատարակվել է ավելի քան 80 անուն հայերեն պարբերական:[3]

ԱՄՆ-ում, Ջերսի Սիթիում 1888-ին լույս է տեսել առաջին պարբերականը՝ «Արեգակը»: Մինչ այսօր լույս է տեսել ավելի քան 300 անուն պարբերական:[4]

Սփյուռքը, ունենալով ազգային պետություն, իր գոյության և ազգային ինքնության կարևոր գործոն է համարում հայրենիքիքի հետ կապը, թեև սփյուռքի յուրաքանչյուր համայնքի համար այն յուրովի է: Համայնքներում Հայաստանի վերաբերյալ մամուլի նյութերում, հոդվածների համամասնությունը տարբեր է՝ կախված տարներ գործոններից՝ աշխարհագրական, քաղաքական, կրոնական և այլն:[5]

Հատկանշական է, որ Հայաստանի մասին քաղաքական հոդվածներն ավելի քիչ ծավալ են զբաղեցնում հայկական մամուլում, քան սփյուռքի թերթերի հրապարակումներում, որոնցից առաջատարը ՌԴ-ն է, ապա՝ ԻԻՀ-ը և ԱՄՆ-ը: Հայրենիքի մասին նյութերն առավել համաչափ և ընդգրկուն են բոլոր ոլորտների համար, այնինչ սփյուռքի տարբեր համայնքներ առավելապես շեշտադրում են որոշակի ոլորտներ: Օրինակ՝ Մոսկվայի հայ համայնքի համար դա ՀՀ տնտեսությունն է, իսկ Իրանի և ԱՄՆ-ի համայքի համար՝ մշակույթը, հոգևոր կյանքը, կրթությունն ու գիտությունը:[6] Սա կարելի է բացատրել նրանով, որ իրանահայ համայնքը, մշտապես գտնվելով մահմեդականացման վտանգի ներքո, առավել շեշտադրում պիտի կատարեր հայապահպանման ուղղությամբ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ թե' Հայաստանի և թե' սփյուռքի հայ համայնքների թերթերի հոդվածների մեծամասնությունը վերաբերում է նախ Հայաստանին, ապա՝ սփյուռքին: Մոսկվայի հայ համայնքը ներկայացնող պարբերականի հայկական հոդվածներով նյութերի ճնշող մեծամասնությունը վերաբերում է Հայաստանին: Հայրենիք-սփյուռք հոդվածների համամասնությունը ՌԴ-ում գործող «Նոյեվ Կովչեգ» թերթում կազմում է ընդամենը 3 տոկոս:[7]

Համեմատության մեջ Թեհրանում տպագրվող «Ալիք» թերթը ամենաշատն է կարևորել հայրենիքի և սփյուռքի փոխադարձ կապը: Այն կազմել է հոդվածների 8,9 տոկոսը:[8] Թերթը հրատարակվում է 1931 թ. մարտի 22-ից նախ որպես շաբաթաթերթ, 1935 թ.-ից երկօրյա, իսկ 1941 թ.-ից օրաթերթ: Ունենալով հակախորհրդային դիրքորոշում՝ այն հանդես է եկել, որպես անկախության ջատագով: Պետք է նշել, որ իրանահայ տեղեկատվական դաշտն ունի իր որոշ առանձնահատկությունները: Ամենահիմնականն այն է, որ Իրանում հայ տպագիր մամուլը վերահսկողության է ենթարկվում Կրոնական փոքրամասնությունների հարցերի գրասենյակի կողմից:

«Ալիք» օրաթերթը եղել է Հայաստան-Իրան կապերի ամրապնդման կողմնակից, ողջունել Հայաստանի տնտեսության զարգացմանն ուղղված ցանկացած ձեռնարկում: Օրինակ՝ 2000 թ. ապրիլի 4-ի իր համարում «Այսօր ավելի քան երբևիցէ Հայաստանին անհրաժեշտ են սփյուռքահայ գործարարների ներդրումները» վերնագրով հոդվածում օրաթերթը գրում է. «Այսօր ավելի քան երբևէ Հայաստանի տնտեսությունն զգում է սփյուռքահայ գործարարների ներդրումների կարիքը, ինչն ուղղակիորեն կնպաստի նոր աշխատատեղերի, հետևաբար նաև, մեծ չափեր ընդգրկող արտագաղթի հիմնախնդրի լուծմանը»: Մինչ այդ, հետևելով սփյուռքահայ այլ համայքների կյանքին օրաթերթը ոգևորությամբ է նշում 1999 թ. նոյեմբերին Բուդապեշտում հիմնադրված ասոցիացիայի ղեկավարների

[1] Հայաստանի և սփյուռքի էթնոսոցիոլոգիական ուսումնասիրություններ 7, Երևան 2014, էջ 47:
[2] Հայ սփյուռք հանրագիտարան, Երևան 2003, էջ 500:
[3] Նույն տեղում, էջ 263:
[4] Նույն տեղում, էջ 77:
[5] Գարապետյան Ռ., Հայրենիք-սփյուռք առընչությունները հայկական մամուլում, Երևան 2012, էջ 46:
[6] Նույն տեղում, էջ 48:
[7] Հայաստանի և սփյուռքի էթնոսոցիոլոգիական ուսումնասիրություններ 1, Երևան 2012, էջ 57:
[8] Նույն տեղում, էջ 60:

կողմից Հայաստանում ներդրումներ կատարելու ծավալուն ծրագիրի՝ ՀՀ վարչապետին ներկայացնելու գործընթացը[1]:

Հայոց պահանջատիրության հարցը օրաթերթի կարևոր թեմաներից է. 1999թ. թվականի ապրիլի 6-ին «Ալիք»-ը ուշադրություն է սևեռում Ջավախքահայության պահանջատիրության հարցին, որտեղ մասնավորապես ասվում էր. «Ապրիլի 4-ին Ախարքալաք ժամանեց Վրաստանի նախագահ Էդուարդ Շևարնաձեն և հանդիպում ունեցավ Ախալքալաքի վարչակազմի ներկայացուցիչների հետ:

Հանդիպումն ուներ նախընտրական բնույթ: Հանդիպման ընթացքում դրսում ցույց էր կազմակերպվել, որի մասնակիցները խորհրդարանից պահանջում էին Հայոց ցեղասպանության ճանաչումը և Ջավախքը՝ Վրաստան մեջ ինքնավար մարզ դառնալը»:[2]

«Ալիք»-ի ապրիլի 11-ի համարում ներկայացվում է ԱՄՆ-ի Լոս Անջելես քաղաքում տեղի ունեցած գիտաժողովի վերաբերյալ հոդված, որը վերնագրված էր «Հայոց ցեղասպանությունը 21-րդ դարի մարտահրավեր»:

Հոդվածում գրված է. «Ապրիլի 8-ին Լոս Անջելեսի համալսարանի «Դիքսոն» սրահում տեղի ունեցավ «Հայոց ցեղասպանությունը և պատմական հիշողությունը՝ 21-րդ դարի մարտահրավեր» թեմայով գիտաժողով:

Գիտաժողովը կազմակերպել էր Հայ կրթական հիմնարկության միջոցներով հիմնված՝ Արդի հայոց պատմության ամբիոնի կողմից և ականավոր պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանի ջանքերով, որը և կատարել է գիտաժողովի բացումը և ներկայացրել «Հայոց ցեղասպանությունը՝ 1915-2000 թթ.» նյութը: Գիտաժողովի ընթացքում համակողմանիորեն ներկայացվել է Հայոց ցեղասպանության իրողությունը: Երկու բաժիններով, 14 մասնագետներ ներկայացրել են իրենց նյութերը՝ անդրադառնալով ցղասպանության պատմական, քաղաքական, իրավական, դատական, կրթական, գրական և հոգեբանական կողմերին: Զեկուցումներով հանդես են եկել Սիմոն Փայասլյանը, Քերի Պասը, Հիլմոր Քայզըրը, Վահրամ Շեմմասյանը, Ռիչարդ Հովհաննիսյանը, Սթիվեն Ջեյքերսը, Րաֆֆի Հովհաննիսյանը և այլք»:[3]

Ապրիլի 26-ին թերթը անդրադարձ է կատարել Իրանում Մեծ եղեռնի միջոցառումների շարքին. մասնավորապես ներկայացված է Նոր Ջուղայում տեղի ունեցած երթը, որը վերնագրված է. «Քայլարշավ և բողոքի համահավաք Նոր Ջուղայում», ինչպես նաև՝ «Ոգեկոչման ձեռնարկներ Թավրիզում», «Հայոց Մեծ եղեռնին նվիրված ձեռնարկներ Ալաքում» և «Ապրիլյան 85-ամյակի ձեռնարկներ Ուրմիայում և շրջակա գյուղերում»:[4]

Շարունակելով հայրենիք-սփյուռք առնչությունների լուսաբանումը «Ալիք» օրաթերթը 2000 թ. ապրիլի 17-ի իր համարում խոսում է նաև մշակութային կապերի մասին:

Մասնավորապես ասվում է. «Իրանի իսլամական հեղափոխության տարեդարձի առիթով Հայաստանի ազգային հեռուստատեսությունը (Հ1) հեռարձակելու է Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի Թեհրանում ունեցած ելույթները»:[5]

Հոդվածների մի ստվար հատված վերաբերում են Հայաստան-Իրան հարաբերություններին. Մայիսի 2-ի համարում օրաթերթը տպագրեց հոդված «Երևանի քաղաքապետի հանդիպումները Թեհրանահայ համայնքի հետ» վերնագրով: Հոդվածում խոսվում է Երևանի քաղաքապետի Իրան կատարված այցի մասին. «Երեկ՝ երկուշաբթի, մայիսի 1-ին պրն. Ա. Բազեյանը իրեն ընկերակցող պատվիրակության, Թեհրանում ՀՀ դեսպանատան անձնակազմի և մի շարք ազգայինների հետ միասին պրն. Հմայակ Նավասարդյանի նախաձեռնությամբ այցելել է Թեհրանի Խաք Սեֆիդ շրջանում գտնվող մի քանի արհեստավորների արհեստանոց-գործարանները և մոտիկից ծանոթացել նրանց աշխատանքներին»

Նույն համարում նշվում է, որ Երևանի քաղաքապետը այցելել է Սասուն թաղամաս և ներկա գտնվելով հայ-մշակութային «Սիփան» միության կենտրոնատեղիում դիմավորվել նույն միության սկաուտական բաժանմունքի կողմից:

<<Պրն. Բազեյանն այցելելով միության տարբեր բաժանմունքներ՝ մասնավորապես հետաքրքրվել է միության գրադարանով, նա խոստացել է նոր հրատարակություններով հարստացնել այդ միավորը»

- «Սույն թվականի մայիսի 1-ին, երեկոյան 6.30-ին, Երևանի քաղաքապետը և իրեն ընկերակցող պատվիրակությունըայցելեցին «Արարատ» մարզավան: Պատվիրակությանը նաև ընկերակցում էին՝

[1] goo.gl/ux9awJ
[2] goo.gl/0sb5Bb
[3] goo.gl/rFqRkY
[4] goo.gl/TErz8Z
[5] goo.gl/5yCsZa

Իրանում Հայաստանի դեսպանության անձնակազմը, Իսլամական խորհրդարանի իրանահայության պատգամավորներ՝ պարոնայք Վարդան Վարդանյանը և Արտավազդ Բալումյանը։

Պատվիրակությանը դիմավորեցին Հայ մշակութային ,Արարատե կազմակերպության պատասխանատուները:

Այցելության սկզբում ՀՄԱԿ-ի կենտրոնական վարչության նախագահ պրն. Վարուժան Առաքելյանն իր ողջույնի խոսքն ասաց մեծարգո պատվիրակության և ապա ամփոփ ձևով փոխանցեց ՀՄԱԿ-ի պատմական և ,Արարատե մարզական կառույցը:

Ընդունելությունից հետո հարգարժան պատվիրակությունն այցելեց ,Արարատե մարզավանի տարբեր բաժիններ:

Այցի ավարտին ՀՄԱԿ-ի հուշամատյանում պրն. Բազեյանն իր տպավորություններից մի երկտող հիշատակ թողեց և ապա կողմերը փոխանակվեցին հուշանվերներովե1

Փաստորեն օրաթերթն իրականացնում է հայ ժողովրդի շահերի պաշտպանությունը և իրանահայ համայնքի հայեցի դիմագծի պահպանումը: Ունի իր սեփական տպարանը և խմբագրատան շենքը: Հրատարակում է նաև իրանահայ դպրոցների դասագրքեր, հայերեն ու պարսկերեն գրքեր և տպագրական այլազան պատվերներ և մինչև այսօր շարունակում է ամենապահանջված լրատուն մնալ:

Այսպիսով, Հայաստանը և նրան առնչվող իրադարձությունները հայկական տեղեկատվական դաշտի կենտրոնում են, որի շուրջը ձևավորվում է համայնքային և համահայկական թեմաների շերտ: Հայրենիքը սփյուռքի կենտրոնն է, ազգային համախմբման, ինքնության պահպանման, համընդհանուր հայկական տարածքի ձևավորման կարևորագույն գործոնը:

[1] goo.gl/gjsogi

ՀՏԴ 341(479.24:479.243) *Իրավագիտություն*

Էլլադա Հայրապետյան
ԱրՊՀ Պատմության և իրավագիտության ֆակուլտետ
«Պատմություն» 3-րդ կուրսի բակալավրիատի ուսանողուհի
Գիտ. ղեկ.՝ պ.գ.թ., դոցենտ Նելլի Բաղդասարյան
ellada-hayrapetyan@mail.ru

ՀԱՅԱՏՅԱՑՈՒԹՅԱՆ ԴՐՍԼՈՐՈՒՄՆԵՐԸ ԱԴՐԲԵՋԱՆԱ-ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԱՆՑԱԾ ՎԱՅՐԵՐՈՒՄ. ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԻՏԱԿԵՏԻՑ /1991-2016 ԹԹ./

Հոդվածում ներկայացվել են հայատյացության դրսևորումները ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության ընթացքում Ադրբեջանի հսկողության տակ անցած վայրերում /1991-2016 թթ. /, որոնք պատժելի են համարվում միջազգային իրավունքի դիտակետից: Օգտագործելով համապատասխան կոնվեցիան՝ Մարաղայի ողբերգությունը ներկայացվել է «ցեղասպանություն» հասկացության սահմաններում: Ընդգծվել է, որ 1991-1994 թ. ռազմական հանցագործությունների անպատժելիության արդյունքը 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմում ռազմական հանցագործությունների դեպքերն են, որոնք սպասում են միջազգային իրավական համարժեք գնահատականների:

Բանալի բառեր՝ Կոլցո» ռազմագործողություն, ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտություն, Մարաղայի ցեղասպանություն, ռազմական հանցագործություններ, ՕՄՕՆ, ՄԱԿ-ի 1948 թ.դեկտեմբերի 9-ի կոնվենցիա, միջազգային կոնվենցիաներ, միջազգային մարդասիրական իրավունք, Ապրիլյան Քառօրյա պատերազմ, Թալիշ:

Эллада Айрапетян
АрГУ факультет истории и права
Исторический 3-ий курс, бакалавр
Науч. рук.: к.и.н., доцент Нелли Багдасарян
ellada-hayrapetyan@mail.ru

ПРОЯВЛЕНИЯ АРМЯНОФОБИИ ВО ВРЕМЯ АЗЕРБАЙДЖАНО-КАРАБАХСКОГО КОНФЛИКТА В МЕСТАХ ПЕРЕХОДИВШИХ ПОД КОНТРОЛЬ АЗЕРБАЙДЖАНА. ОСУЖДЕНИЕ С ТОЧКИ ЗРЕНИЯ МЕЖДУНАРОДНОГО ПРАВА

В статье представлены проявления армянофобии во время азербайджано-карабахского конфликта в местах переходивших под контроль Азербайджана, которые с точки зрения международного права считаются караемыми .Используя соответствующую конвенцию,марагинская трагедия представлена в рамках понятия ,,геноцид ,, Подчёркивалось, что результатом безнаказанности военных преступлений 1991-1994 гг, являются случаи военных преступлений происходившие во время апрельской четырёхдневной войны 2016 г, которые ждут равноценных международных правовых оценок .

Ключевые слова: Операция ,,Кольцо,, ,азербайджано-карабахский конфликт, марагинский геноцид , военные преступления, ОМОН, конвенция ООН от 9 декабря 1948г , международные конвенции, международное гуманитарное право, Апрельская четырёхдневная война, Талиш.

Ellada Hayrapetyan
ASU faculty of history and law
History 3rd course
Supervisor: PHd Nelly Baghdasarian
ellada-hayrapetyan@mail.ru

ANTI-ARMENIAN MANIFESTATIONS DURING AZERBAIJAN-KHARABAKH CONFLICT IN AZERBAIJAN UNDER CONTROL IN PLACES. CONDEMNATION FROM THE POINT OF VIEW OF INTERNATIONAL LAW

The article is about Anti-Armenian manifestations during the Kharabakh conflict in 1991-2016, which are punishable from the foint of view of the international law. Using the appropriate convention the tragedy in Maragha was represented as «genocide». It was underlined that the four-days war in april 2016 was the result of impunity of war crimes in 1991-1994, which are waiting for an adequate legal international reaction.

Keywords: "Ring" operation, the Azerbaijani-Kharabakh conflict, genocide of Maragha, war crimes, the UN Convention in December 9, 1948, international conventions, international humanitarian law,

1991 թ. սեպտեմբերի 2-ին ԼՂՀ հռչակումը, դեկտեմբերի 10-ի հանրաքվեն բացասական արձագանք գտան Ադրբեջանում: Ադրբեջանական ագրեսիան սկզբնական շրջանում կրում էր հիմնականում տեղային բնույթ և դրսևորվեց համապարփակ շրջափակման, պետական և անհատական ունեցվածքի կողոպտման, բերքի և ցանքատարածությունների փչացման կամ բերքահավաքին խոչընդոտելու, հայկական բնակավայրերի, մերձակա օժանդակ տնտեսությունների ու արտադրական ձեռնարկությունների վրա ավազակային զինված հարձակումների և հակաօրինական այլ գործողությունների տեսքով:

Դրանց հաջորդեցին կազմակերպված ու բացահայտ զինված ներխուժումներն ու տարածքները զավթելու, հայ բնակչությանը բռնատեղահանելու նպատակով իրականացվող լայնածավալ ռազմական գործողությունները[1]:

1991-1992թթ. Լեռնային Ղարաբաղում չափազանց ծանր իրավիճակ էր ստեղծվել: 1991թ.ապրիլի վերջին-մայիսի սկզբին Ադրբեջանի ՆԳՆ հատուկ նշանակության միլիցիայի ջոկատները (ՕՄՕՆ) խորհրդային բանակի զորքերի աջակցությամբ սկսեցին պատժիչ գործողություններ, նպատակ ունենալով ԼՂ-ի և նրան հարակից հայաբնակ շրջաններից տեղահանել հայ բնակչությանը: Իրականացվեց «Կոլցո» ռազմագործողությունը, որն ուղղված էր Խանլարի շրջանի Գետաշեն ու Մարտունաշեն գյուղերի, Շահումյանի, Հադրութի ու Շուշիի շրջանների որոշ գյուղերի հայ բնակչության բռնի տեղահանմանը: Մարտական ուղղաթիռների, հրասայլերի և զրահամեքենաների ուղեկցությամբ «անձնագրային ռեժիմի ստուգման» ու «հայ գրոհայիններին զինաթափելու» պատրվակով սկսվեց հարձակումը: Հատկապես թեժ մարտեր բորբոքվեցին Խանլարի շրջանի Գետաշեն ու Մարտունաշեն գյուղերի տարածքներում: Սակայն ուժերը անհավասար էին...[2]: Այդ ռազմագործողության արդյունքում ամբողջովին դատարկվեցին, հիմնահատակ ավերվեցին կամ ադրբեջանցիներով բնակեցվեցին Հադրութի շրջանի 14, Շուշիի շրջանի Բերդաձորի ենթաշրջանի 6 հայկական գյուղեր, Խանլարի շրջանի Ազատ, Գետաշեն, Մարտունաշեն, և Շահումյանի շրջանի Բուզլուխ, Մանաշիդ և Էրքեջ բնակավայրերը[3]:

«Կոլցո» ռազմագործողության ընթացքում տեղի ունեցած դեպքերն իրենց արտացոլումն են գտել միջազգային մի շարք կազմակերպությունների փաստաթղթերում, դարձել լսումների թեմա՝ ՌԴ Գերագույն խորհրդի մարդու իրավունքների կոմիտեում և դատապարտվել Եվրախորհրդարանի համապատասխան բանաձևում: Մոսկովյան «Մեմորիալ» միության իրավապաշտպան կենտրոնն արձանագրել է մարդու հիմնարար իրավունքների կարևորագույն խախտումներ. «Կոպտորեն խախտվել է յուրաքանչյուր մարդու կյանքի, ազատության, անձնական անձեռնմխելիության իրավունքը, կիրառվել են կտտանքներ, կատարվել ինքնակամ կալանքներ և ձերբակալություններ, կատարվել են բազմաթիվ գույքային իրավախախտումներ: Բնակչության տեղահանումը կրել է զանգվածային բնույթ: Այդ խախտումներին հատուկ ցինիկություն է հաղորդում այն փաստը, որ խաղաղ բնակչության նկատմամբ զանգվածային բռնությունը կատարվել է հենց իրավապահպան մարմինների կողմից: Այդ ամենի պատասխանատվությունը ընկնում է ինչպես Ադրբեջանի հանրապետության ՆԳՆ և ՊԱԿ-ի բարձրագույն ղեկավարության, այնպես էլ ԽՍՀՄ ՆԳՆ, պաշտպանության նախարարության և ԽՍՀՄ ՆԳՆ զորքերի հրամանատարության վրա: Այդ հանցագործությունները ստվեր են նետում նաև ԽՍՀՄ բարձրագույն ղեկավարության վրա »[4]:

[1] Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994, Հանրագիտարան , Երևան 2004, էջ 9:
[2] Բալայան Վ. Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, Երևան 2011, էջ270:
[3] НКР. Путь к вершинам . Степанакерт 2001, стр.106.
[4] www.nkr.am.

1991թ. մայիսի 1-ին ԱՄՆ Սենատում ընդունվեց միաձայն որոշում, որով դատապարտվում էին «ԽՍՀՄ և Ադրբեջանի ղեկավարության կողմից Լեռնային Ղարաբաղի, Հայաստանի և Ադրբեջանի հայազգի բնակչության դեմ կատարված հանցագործությունները»: Մայիսի 25-ին ՌԽՖՍՀ ժողովրդական պատգամավորների չորրորդ նստաշրջանում քննարկման դրվեց Հայաստանի և Ադրբեջանի մի շարք շրջաններում ստեղծված իրադրության շուրջ զեկույցի նախագիծը, որն էլ ձայների ճնշող մեծամասնությամբ ընդունվեց: Որոշման մեջ մասնավորապես նշվում էր, որ «համաձայն մարդու իրավունքների միջազգայնորեն ճանաչված նորմերի և համաձայնագրերի՝ անհրաժեշտ է անմիջապես դադարեցնել խաղաղ բնակչության տեղահանումը, ազատ արձակել պատանդներին և զինված բախումների գործերով քննության տակ գտվողներին հանձնել ԽՍՀՄ դատախազության վարույթ»: Այդուհանդերձ, «Կոլցո» ռազմագործողության ընթացքում թույլ տրված հանցագործություններին համապատասխան քաղաքական և իրավական գնահատական չի տրվել միջազգային հանրության կողմից, իսկ կազմակերպիչներն ու կատարողները մնացել են անպատիժ: Չէ, որ «սպանելու ազատությունը հռչակվել էր 3 տարի առաջ Սումգայիթում»[1]:

1992թ. փետրվարի վերջի տվյալներով Լեռնային Ղարաբաղում սպանվել էր 243 մարդ, այդ թվում՝ 37 կին և 14 երեխա, և վիրավորվել 491 մարդ, այդ թվում՝70 կին և 53 երեխա[2]:

Իր ծայրահեղ դաժանությամբ և մարդու իրավունքների զանգվածային խախտումներով աչքի ընկած «Կոլցո» գործողության հետևանքով էր հենց, որ շեշտակիորեն սրվեց լարվածությունը տարածաշրջանում և ղարաբաղյան հակամարտությունը տեղափոխեց ռազմական հարթություն:

<u>Պատերազմի զոհերի պաշտպանության</u> վերաբերյալ իրավանորմով արգելվում են կանխամտածված սպանությունները, խեղում պատճառելը, դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը, տանջանքները, խոշտանգումները: Հատուկ պաշտպանությունից և հովանավորությունից են օգտվում երեխաները, կանայք, հատկապես հղի կանայք, զառամյալները: Պատերազմի զոհերի պաշտպանության վերաբերյալ նորմերի դիտավորյալ խախտումների համար մեղավոր անձինք զինվորական հանցագործներ են և ենթակա են քրեական պատասխանատվության[3]:

Սակայն Ադրբեջանի հանցագործությունները «Կոլցո» օպերացիայով չեն սպառվում: Դրանք շարունակվում են Մարաղայում: Միր-Բաշիրի (Թեր-Թեր) սահմանակից Մարաղա գյուղը երկար ժամանակ ուժգին հրետակոծության էր ենթարկվում, որի հետևանքով, դեռ մինչև ապրիլի 10-ի դեպքերը գյուղում զգալի ավերածություններ կային: 1989թ. մարդահամարի տվյալներով գյուղում բնակվում էր 4660 մարդ: 1992թ. ապրիլի 10-ին, առավոտյան ժամը 5-ին սկսվեց գյուղի գնդակոծությունը: Այն նախորդներից ուժեղ չէր: Սակայն կեսօրին մոտ, գնդակոծության կտրուկ սաստկացումից հետո, Ադրբեջանի կանոնավոր բանակի զորամասերը անցան հարձակման ու մտան Մարաղա: Գրավելու հետևանքով գյուղի մեծ մասն ավերվեց ու հրկիզվեց, 57 բնակիչ սպանվեց, դրանց թվում՝ 9 երեխա, 29 կին: 2 շաբաթ անց գյուղը կրկին հարձակման ենթարկվեց, բնակչությունը բռնի արտաքսվեց, 13 խաղաղ բնակիչ պատանդվեց, որոշների ճակատագիրն այդպես էլ անհայտ մնաց, տները թալանվեցին ու հրկիզվեցին: Մարաղայի ողբերգությունը առանձնանում է մարդու պատկերացումը ցնցող դեպքերով: Անշուշտ, Ադրբեջանի զինված ստորաբաժանումների կողմից իրականացված խաղաղ հայ բնակչության ազգասպանությունը Մարաղայում մարդկային պատմության ողբերգական էջերից մեկն է: Ցավոք, Մարաղայում տեղի ունեցած դեպքերը բոլորովին համաբնույթ չեն արտացոլվել տարածաշրջանային ու համաշխարհային զանգվածային լրատվամիջոցներում: Նման դեպքերի կրկնության նախադրյալ է նաև այն, որ Մարաղայում հայերի ցեղասպանության անմիջական իրագործող ադրբեջանցի զինվորներն ու սպաները իրենց կատարածի համար պատասխանատվության չեն կանչվել: Ադրբեջանի ղեկավարությունը քաջատեղյակ է, թե 1992թ. ապրիլի 10-ին որ զորամասերն են զավթել Մարաղան և թե ինչպիսի հրեշավոր հանցագործություններ էին կատարվում այդ զորամասերի ծառայողների կողմից: ԼՂՀ-ի ղեկավարությունը իր տրամադրության տակ ունի սպանվածների դիակների շիրիմներից հանելու տեսաժապավենը, որ արվել է Բրիտանիայի Միացյալ Թագավորության լորդերի պալատի փոխխոսնակ

[1] Մելիք-Շահնազարյան Լ. Ադրբեջանի ռազմական հանցագործությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խաղաղ բնակչության դեմ, Երևան 1998, էջ 80:
[2] НКР. Путь к вершинам, стр.108.
[3] Քոչարյան Վ. Միջազգային իրավունք, Երևան, 2002, էջ 275 :

բարոնուհի Քերոլայն Քոքսի ներկայությամբ: Տեսակադրերը վկայում են, որ սպանվածների հանդեպ բարբարոսություն է գործադրվել ինչպես մինչև մահը վրա հասնելը, այնպես էլ մահվանից հետո[1]:

Նախորդ գնդակոծությունների ժամանակ, ինչպես նաև գաղթի ճանապարհներին մահացածների հետ միասին Մարաղայում զոհվել է ավելի քան 90 խաղաղ բնակիչ: Տարբեր աստիճանի վերքեր է ստացել 37 մարդ, այդ թվում՝ 21 կին ու 6 երեխա[2]:

Մարաղայում տեղի ունեցած բարբարոսությունները վկայում են, որ մարդու իրավունքների զանգվածային խախտումներ են եղել, որոնց համար պատասխանատվություն է նախատեսված միջազգային բազմաթիվ կոնվենցիաներով ու պայմանագրերով:

1991-1994 թ. ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության ընթացքում Ադրբեջանի կողմից ԼՂՀ բնակչության նկատմամբ իրագործված ռազմական հանցագործությունների անպատժելիության արդյունքը կարելի է համարել 2016 թ. ապրիլյան քառօրյա պատերազմում Ադրբեջանի հսկողության տակ հայտված տարածքներում ռազմական հանցագործությունների և միջազգային մարդասիրական իրավունքի կոպիտ խախտման դեպքերը: Ադրբեջանի կողմից սանձազերծված այս ագրեսիայի ժամանակ նույնպես խախտվեցին միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը: Սպանվեց Զորավանի դպրոցահասակ աշակերտը՝ Վաղինակ Գրիգորյանը, իսկ երկու երեխաներ ծանր վիրավորվել են: Ապրիլի 3-ին հայտնի է դարձել, որ Ադրբեջանի Հանրապետության զինծառայողները դաժանաբար սպանել են Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղի բնակիչներ Վալերիկ Խալաֆյանին, Ռազմելա Վարդանյանին, 92-ամյա Մարուսյա Խալաֆյանին իրենց տան մեջ, այնուհետև խեղել նրանց դիակները[3]: Նպատակային հրետակոծության ենթարկվեցին խաղաղ բնակավայրեր, ռազմագերու կարգավիճակում հայտված հայ զինվորների նկատմամբ իրականացվել է պատիժ մահվամբ, խոշտանգում և գլխատում: Առանձին դեպքերում առկա են դաժան փաստերի տեսագրությունը, ադրբեջանական կողմը որպես ինֆորմացիայի վտանգավոր արտահոսք շտապել է արգելափակել դրանց տարածումը[4]: 2016թ. ապրիլի 10-ին Ադրբեջանը վերադարձրել է 18 հայ զինվորների դիակները, որոնք առանց բացառության ենթարկվել էին խոշտանգումների և խեղումների[5]: Ապրիլյան պատերազմի ժամանակ ադրբեջանցիների վերահսկողության տակ գտվող Արցախի բնակչության մոտավորապես 90%-ը կամ ենթարկվել են տանջանքների, կամ խոշտանգվել են և ոչնչացվել[6]: Ռազմագերիների միջազգային իրավական պաշտպանությունը նախատեսված է 1907թ. Հաագայի IV կոնվենցիայով, 1949թ. Ժնևի III կոնվենցիայով և 1977թ. I և II Լրացուցիչ արձանագրություններով: Այդտեղ մասնավորապես ասվում էր, որ պատերազմող կողմերը պարտավոր են մարդասիրաբար վերաբերվել ռազմագերիներին, հարգել նրանց անձը և պատիվը, ապահովել ջրով, սննդամթերքով, ռազմագերիների նկատմամբ չկիրառել ֆիզիկական տանջանքներ և այլ միջոցներ՝ տեղեկություն ստանալու համար[7]: Ադրբեջանի կողմից կատարված ռազմական հանցագործությունները միջազգային ատյաններում ներկայացնելու ուղղությամբ մեծ աշխատանք է կատարել Արցախի մարդու իրավունքնների պաշտպան Ռուբեն Մելիքյանը: Դեկտեմբերի 9-ին Թալիշում ներկայացրել է առաջին միջանկյալ զեկույցը, որը վերաբերում է ապրիլյան դեպքերից հետո քաղաքացիների և զինվորականների հանդեպ կատարված ռազմական հանցագործություններին: Մելիքյանը նշել է, որ հարցումներ են արվել պետական մարմիններին՝ ապրիլյան իրադարձությունների վերաբերյալ, տեղի են ունեցել բազմաթիվ խորհրդակցություններ՝ ռազմական, բժշկական մասնագետների հետ: Մելիքյանը իր զեկույցում անդրադարձ է կատարել քառօրյա պատերազմի ընթացքում Արդրբեջանի կողմից իրականացված խոշտանգման դեպքերին: Զեկույցում վայրագությունների փաստերը 3 ուղղություններով են ներկայացված՝ Թալիշի, Մեյսուլանի եւ Հարավային բլուրի՝ Լելեթեփե: Նա նշել է, որ հյուսիսում եղել է 4 միջադեպ, իսկ զեկույցում նկարագրված է երեք էպիզոդ: «Բոլոր երեք դեպքերում էլ ունենք՝ պատիժ

[1] Մելիք-Շահնազարյան Լ., նշվ.աշխ., էջ 98-99:
[2] Նույն տեղում, էջ 102-103
[3] http://www.ombudsnkr.am.
[4] Արցախի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցը 2016 թվականի ընթացքում Արցախի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտումների վերաբերյալ, Շուշի, 2017, էջ 23:
[5] Atrocities Committed By Azerbaijani Military Forces Against The Civilian Population Of The Nagorno Karabakh Republic And Servicemen Of The Nagorno Karabakh Defence Army On 2-5 April 2016, SHUSHI, APRIL 2016
[6] http://ru.a1plus.am.
[7] Քոչարյան Վ., նշվ. աշխ., էջ 278

մահվամբ, մարմինների անարգում և մեկ դեպքում՝ 92 տարեկան տարեց կնոջ դեպքում՝ խոշտանգման փաստ: Երկրորդ էպիզոդը վերաբերում է ԼՂՀ ՊԲ-ի բեռնատար մեքենային, որի նկատմամբ հարձակում է իրականացվել և մենք այստեղ ունենք երկու գլխատման դեպք: Որոնցից մեկին մահացած վիճակում են գլխատել, մյուսին՝ ողջ վիճակում», – հավելեց նա: Մելիքյանի խոսքով, Ադրբեջանի ԶՈւ-ն ապրիլին հանցագործություն է կատարել, և դա բոլոր ուղղություններով համակարգված բնույթ է կրել[1]:

Ադրբեջանի հսկողության տակ հայտված վայրերում հայատյացության դրսևորումները դատապարտելի են միջազգային իրավունքի դիտակետից: Մասնավորապես՝ ըստ *«Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին կոնվենցիայի»* (հաստատված 1948թ.դեկտեմբերի 9-ին) է «Որպես ցեղասպանություն հասկացվում են այն գործողությունները, որոնք կատարվում են որևէ ազգային, էթնիկական, ռասսայական, կրոնական խումբ՝ որպես այդպիսին լիովին կամ մասամբ ոնչացնելու մտադրությամբ».

- այդ խմբի անդամների սպանությունը:
- այդ խմբի անդամներին լուրջ մարմնական վնասվածքներ կամ մտավոր խանգարումներ հասցնելը:
- որևէ խմբի համար այնպիսի կենսական պայմանների կանխամտածված ստեղծումը, որոնք նպատակամղված են այդ խմբի լիովին կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը**:**

Միջազգային մարդասիրական իրավունքի դիտակետից պատերազմի մեջ գտնվող քաղաքացիական բնակչությունը բոլոր պայմաններում իրավունք ունի հավակնել մարդասիրական վերաբերմունքի, և բռնության, ահաբեկման և վիրավորանքների ցանկացած գործողություններից պաշտպանության՝ անկախ նրանից՝ հակառակորդի կողմից ժամանակավորապես օկուպացված տարածքու՞մ է գտնվում, թե՞ իր բանակի թիկունքում:*Քաղաքացիական բնակչության և մշակութային արժեքների միջազգային իրավական պաշտպանությունը* նախատեսված է 1907թ. Հաագայի IV, 1949թ. Ժնևի IV և 1954թ. Հաագայի կոնվեցիաներով:

Միջազգային մարդասիրական իրավունքի *օբյեկտների սահմանափակման սկզբունքի* համաձայն՝

- հարձակումները պետք է խիստ սահմանափակվեն ռազմական օբյեկտներով,
- արգելվում է հարձակումը չպաշտպանվող տեղանքների նկատմամբ,
- արգելվում է որևէ թշնամական գործողություն՝ուղղված այն շենքերին, որտեղ իրականացվում են գիտական հետազոտություններ կամ տեղակայված են բարեգործական հիմնարկներ, նույնը և պատմական հուշարձանների և արվեստի ստեղծագործությունների դեպքում[2]:

Այսպիսով, հոդվածի շրջանակներում արված ուսումնասիրությունը հերթական ապացույցն է Ադրբեջանի ցեղասպան կերպարի, ուստի հայությունն ակնկալում է միջազգային իրավունքի շրջանակներում համարժեք գնահատականների միջոցով զսպման մեխանիզմների կիրառում:

[1] http://armlur.am.
[2] Քոչարյան Վ. Նշվ. աշխ. էջ 263:

ՀՏԴ 941(479.25)

Պատմություն
Մերի Սարդարյան
ԱրՊՀ, Պատմության և իրավագիտության ֆակուլտետ
Պատմության ամբիոն բակալավրիատի ուսանող 2017թ.
Գիտ. ղեկավար՝ պ.գ.թ., դոց. Նունե Սարումյան
merisardaryan1997@mail.ru

1920Թ ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ԴԱՍԵՐԸ

Հոդվածում քննության է ենթարկվել 1920թ թուրք-հայկական պատերազմում Հայաստանի պարտության պատճառները և նրա դասերը:ՈՒշադրություն է դարձվել այն անբարենպաստ աշխարհաքաղաքական իրավիճակին, որում հայտնվել էր Հայաստանը: Ընդգծվել է այն հանգամանքը, որ բացի արտաքին գործոնից պատերազմի պարտության ամենամեծ պատճառներից էին երկրում տեղի ունեցող ներքին հակասությունները՝ հատկապես ռազմական թերությունները, գաղափարական պարտությունը և բարոյահոգեբանական ընկճվածությունը: Քննության առնված հիմնահարցում շեշտադրում է արվել այն հանգամանքին, որ ուշադրություն դարձվի պատերազմի պարտության ներքին խնդիրներին ու դիտարկվի այն որպես պատմության մեծ դաս:

Բանալի բառեր: *Հայաստանի հանրապետություն, Անգլիա, Ֆրանսիա, բոլշևիկյան կուսակցություն, Խորհրդային Ռուսաստան, Քեմալական Թուրքիա, Կարս, հայկական բանակ, գաղափարական պարտություն, բարոյահոգեբանական ընկճվածություն:*

Meri Sardaryan
ASU faculty of history and law
History 3rd year
Supervisor: PHd Nune Sarumyan
merisardaryan1997@mail.ru

THE REASONS OF THE DEFEAT OF ARMENIAN IN TURKISH-ARMENIAN WAR IN 1920 AND ITS LESSONS

In this report we discuss the reasons of the defeat in Turkish-Armenian war in 1920 and its lessons. We stressed the unfavorable geopolitical situatino in which Armenia was. We underlined the fact, that the greatest reason of the defeat was internal conflicts of the country, especially military deficiencies, ideological and moral conditions. The issue under consideration focuses on the fact that attention should be paid to the inner problems of the war and it sould be treated as a great historical lesson.

Keywords: Republic of Armenia, England, France, Bolshevik party, Soviet Russia, Qemal Turkey, Kars, Armenian army, ideological defeat, moral and psychological depression

Мери Сардарян
АрГУ факультет истории и права
Исторический 3-ий курс, бакалавр
Науч. рук.: к.и.н., доцент Нуне Сарумян
merisardaryan1997@mail.ru

УРОКИ И ПРИЧИНЫ ПОРАЖЕНИЯ АРМЕНИИ В ТУРЕЦКО-АРМЯНСКОЙ ВОЙНЕ 1920 ГОДА

В статье рассматривались причины порожения Турецко-армянской войны 1920г-а и её уроки. Уделилось внимание тому неблагоприятному геополитическому положению, в котором оказалась Армения. Подчеркивалось то обстоятельство, что кроме внешнего фактора, причинами поражения являлись внутренние противоречия, особенно военные недостатки, идейные поражения и морально-психологическая депрессия. В рассмотренном вопросе акцентировалось на то обстоятельство, что нужно обратить внимание на внутренние проблемы поражения войны и считать это как уроки истории.

Ключевые слова: Республика Армения, Англия, Франция, большевистская партия, Советская Россия, Кемалистская Турция, Карс, армянская армия, идейное поражение, морально-психологическая депрессия.

1920թ աշնանը տեղի ունեցած թուրք-հայկական պատերազմը Հայաստանի ու հայ ժողովրդի պատմական ճակատագրում ամենածանր ու ողբերգական էջերից մեկն էր: Արտաքին ու ներքին մի շարք աննպաստ գործոնների ազդեցությամբ Հայաստանի հանրապետությունը ծանր պարտություն կրեց իր դարավոր ախոյանից և կորցրեց իր տարածքների շուրջ կեսը: Պատերազմը ճակատագրական եղավ այն տեսակետից, որ գործնականում կանխորոշվեց Հայաստանի առաջին հանրապետության անկումը:

Հայտնի ճշմարտություն է՝ ժողովուրդը կամ պետությունը ուսանելի դասեր է առնում ոչ միայն ձեռք բերված նվաճումներից ու հաղթանակներից, այլև թույլ տված սխալներից ու կրած դառը պարտություններից: Սույն հոդվածում յուրովի փորձել ենք ներկայացնել այդ պատերազմում Հայաստանի պարտության պատճառներն ու դասերն, որոնք հույժ արդիական ու ուսանելի են նորանկախ հանրապետության, 21-րդ դարի հայոց ազգային բանակի և Արցախյան ազատամարտի պայքարում:

Պետք է նշել, որ պատմագրության մեջ քննարկվող հիմնական պատճառներն են Խորհրդային Ռուսաստանի օգնությունը Թուրքիային, և Հայաստանի ռազմադիվանագիտական մեկուսացումը: 1920թ աշնանը Հայաստանը հայտնվել էր քաղաքական բարդ իրավիճակում: Թեև ստորագրվել էր խոստումնաշատ Սևրի պայմանագիրը, սակայն օր օրի ակնհայտ էր դառնում նրա կենսագործման անհնարինությունը: Բանն այն էր, որ տեղի էր ունենում խորհրդա-թուրքական մերձեցում ու համագործակցություն, իսկ մյուս կողմից Ռուսաստանի խորհրդային կառավարությունը, ոգևորվելով քեմալական-ազգայնական շարժման կեղծ հեղափոխական հակաիմպերիալիստական կարգախոսով, առանձնապես կարևորություն չէր տալիս հայկական գործոնին և պատրաստ էր հանուն մուսուլմանական Արևելքում համաշխարհային հեղափոխության տարածման կրկին զոհաբերել Հայաստանի շահերը: Թուրք-հայկական պատերազմում Ռուսաստանի համար ստեղծված բարենպաստ պայմաններում խորհրդային իշխանությունները խուսափում էին Կովկասում լայնամասշտաբ պատերազմի մեջ ներքաշվելուց, ձգտելով տպավորություն ստեղծել, որ Հայաստանը խորհրդայնացվում է միայն հայ ժողովրդի ցանկությամբ և հայհեղկոմի ուժերով:[1]

Ո՛չ Անգլիան և ո՛չ էլ Ֆրանսիան ոչ մի հնարավոր միջոց չձեռնարկեցին և բավարարվեցին միայն բանավոր հավաստիացումներով ու Ազգերի լիգայի ամբիոնից երկար ու հուզիչ, բայց ոչ մի կոնկրետ հետևանքի չհանգեցնող ճառեր արտասանելով: Գլխացավանքից ազատվելու համար մեկ վկայակոչում էին այն, որ «քեմալական պետությունը կազմակերպված պետություն չէ», և հետևապես նրա վրա «տնտեսական կամ որևէ այլ միջոցով ճնշում գործադրել հնարավոր չէ», մեկ այն, որ «Ազգերի լիգան իր տրամադրության տակ զնված ուժեր չունի»[2]:

Անդրկովկասում Ֆրանսիական հյուպատոս և գերագույն կոմիսարի պաշտոնակատար Նեթեմանը հայտարարեց, որ «Հայաստանը կարող է հույս դնել դաշնակիցների ակտիվ աջակցության վրա, բայց ներկայումս օգնական ուժեր ուղարկել չենք կարող: Դաշնակիցները միայն ծովային ուժեր ունեն այդ կողմերում և ակնհայտ է, որ մեր նավատորմը Նոյան տապանը չէ, որ կարողանա Արարատը բարձրանալ»:

Սակայն պարզ ճշմարտություն է՝ թե՛ Անգլիան, թե՛ Ֆրանսիան, ոչ թե չէին կարող, այլև չէին ցանկանում օգնել Հայաստանին:

Ճիշտ է մենք ներկայացնում ենք հանգամանքներ ու աշխարհաքաղաքական բարդ իրավիճակ, որում հայտնվել էր Հայաստանը: ՈՒ պարտության հիմնական մեղավոր ենք համարում Արևմուտքին ու Ռուսաստանին, որոնք որպես Հայաստանի դաշնակից չձեռնարկեցին համապատասխան քայլեր և այդ իսկ պատճառով էլ պատերազմն ավարտվեց պարտության ելքով ու անդառնալի հետևանքով: Բայց նմանատիպ իրավիճակում Հայաստանն հայտնվել էր 1990-ական թվականներին, սակայն տվյալ ժամանակաշրջանում արդեն պատմական հարուստ կենսափորձով, սեփական ուժերին ապավինելու վստահությամբ, ու այն կարգախոսով, որ կռվի՛ր, ու դաշնակիցներն իրենք կհայտնվեն:

[1] Խաչատրյան Կ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թվականներին.,Եր.2007թ. էջ 41 :

[2] Զոհրաբյան Է., Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները.,Եր.1979 էջ 65:

Ուստի անհրաժեշտ է գիտակցել, որ 1920թ թուրք-հայկական պատերազմի պարտության պատճառը ոչ միայն արտաքին գործոնն էր այլև ներքինը: Պետք է անդրադարձ կատարել սեփական ներազգային խնդիրներին, որոնք ուղղորդեցին այդ պատերազմը դեպի պարտության: Հակասական այդ ժամանկահատվածում անհրաժեշտ էր հետևյալը՝ որ հայ ժողովուրդն ու նրա բանակը մարտական ոգի ցուցաբերեին և միասնաբար կյանքի ու մահվան գնով կռվեին ու պաշտպանեին իրենց հայրենիքը, մի բան, որ ցավոք տեղի չունեցավ:

Իսկ ինչպիսի՞ն էր ՀՀ հասարակության ու հայկական բանակի բարոյահոգեբանական վիճակը 1920 թ. աշնանը: Թվում է, թե ամեն ինչ ընթանում էր լավ, բոլշևիկների մայիսյան խռովությունը ճնշվել էր, երկրի տնտեսությունը վերելք էր ապրում, կենսամակարդակը դանդաղորեն բարելավվում էր: Բանակը, որը տարածաշրջանում ամենամարտունակն էր համարվում՝ նախորդ երկու տարիներին մղված պատերազմներում հաղթել էր թուրքերին, ադրբեջանցիներին ու վրացիներին՝ այն էլ ավելի ծանր կենսապայմաններում: Նախկին վարչապետ Ալ. Խատիսյանի հաղորդած տվյալներով պետբյուջեյի ծավալի 75տոկոսը ծախսվում էր բանակի ու պաշտպանության նպատակների վրա:[1] ՀՀ խորհրդարանը և կառավարությունը, հասկանալի պատճառներով, պետբյուջեյի և ֆինանսական հատկացումների հիմնական մասը ուղղորդում էին բանակի ու պաշտպանության նպատակներին: Հայոց բանակի ընդահանուր պատրաստվածությունն եղել է բավարար վիճակում: 1920թ գարնանը Հայաստանի զինված ուժերի ընդհանուր թիվը հասնում էր 40 հազարի, որից 25-26 հազարը կանոնավոր և 10-12 հազարը կամավոր աշխարհազոր էր:[2]

Ինչ վերաբերում է թուրքական զինուժի թվաքանակին, ապա պետք է ասել, որ 1919-1920թթ. ընթացքում այն աճի միտում է ունեցել: Հայաստանի դեմ արշավանքի ելած քեմալական զորքերի ընդհանուր թիվը անցնում էր 50 հազարից:[3] : Այս կապակցությամբ Ալ. Խատիսյանը նշում է՝ «Բայց բանը միայն թուական քանակի մեջ չէր: Պետք է հիշել որ Իզմիրի ուղղությամբ Իզմեթ փաշան ունենալով մինչև 80 հզ.հոգի՝ իննը օրվա մեջ ծովը թափեց գրեթե երկու հարյուր հազարանոց հունական բանակը»:[4] Թուրք-հայկական գրեթե բոլոր պատերազմներում էլ թուրքական զորքերի թիվը գերազանցում էր հայկականին ու բազմիցս անգամ ապացուցվել է այն փաստը, որ հաղթանակի գործոնը կախված չէ զորքերի թվաքանակից:

Հարկ է նշել, որ պատերազմում հաղթանակներ տանելու առաջնային նախապայմաններից մեկը, անշուշտ զարգացած տնտեսություն ունենալն է, մի պարագա, որ Հայաստանի կառավարությունը մեկ երկու տարում չէր կարող ստեղծել: Սակայն զարգացած տնտեսությունը հզոր բանակ ունենալու նախապայման չէ: Անցյալի պատմությունից ու ներկայիս փորձից էլ հայտնի են տնտեսապես հարուստ և բարգավաճ երկրներ, որոնց բանակը, սակայն չես դասի մարտունակների շարքին:Այս դեպքում տվյալ բանակին պակասում են այլ գործոններ՝ բարոյականային, կարգապահական, ռազմական և այլն: Տվյալ ժամանակաշրջանի փաստերը վկայում են, որ հայկական բանակում թուլացել էր զինվորական ղեկավարության զգոնությունը. ժողովուրդը մոռացել էր, որ շրջապատված է թշնամի կամ անբարյացակամ հարևաններով, որ հարկավոր է միշտ պատրաստ լինել պատերազմի՝ խաղաղ ու անվտանգ կյանքն ապահովելու համար:

Պատերազմական գործողությունների հենց սկզբից հայկական բանակը գտնվում էր անկազմակերպ վիճակում: Թեկուզ և կանխատեսվում էր պատերազմական գործողությունների նոր ընթացք, սակայն զինվորական իշխանությունը թույլ էր տվել, որ բանակի զինվորների մի մասը գնա տուն դաշտային աշխատանքներ կատարելու:[5] Թուրքերի ընդհանուր հարձակումը հանկարծակիի է բերել հայկական բարձր հրամանատարությանը: Ինչն էլ պատճառ է հանդիսացել հայկական կողմի անկանոն մարտական գործողությունների և ինքնապաշտպանական մարտերի անփառունակ վախճանի: Եթե 1920թ հոկտեմբերի 20-ին Սուրմալուի ուղղությամբ հայերը վճռել էին ավելի շուտ մեռնել, բայց տեղի չտալ և 3 օր շարունակ, առանց ընդմիջումի, ամբողջ ճակատի վրա մղում էին արյունահեղ կռիվներ[6], ապա հոկտեմբերի 30-ին գրեթե առանց լուրջ դիմադրության մի քանի ժամվա ընթացքում Կարսի անառիկ ամրոցն ու քաղաքը հանձնվեց թշնամուն, որն էլ գործնականում կանխորոշեց պատերազմի

[1] Հակոբյան Ա., 1920թ Թուրք-Հայկական պատերազմի պատմության փորձն ու դասերը., Եր.2004. էջ 9:
[2] Խատիսյան Ալ., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը., Բեյրութ.1968 էջ 262:
[3] Վրացյան Ս.,Հայաստանի Հանրապետություն.,Եր.1993.էջ 505:
[4] Խատիսյան Ալ. Նշվ. աշխ. էջ 278:
[5] Վրացյան Ս. Նշվ. աշխ. էջ 504:
[6] Նույն տեղում էջ 507:

ելքը: Տարօրինակն ու զարմանալին այն էր, որ ամրոցի հրետանու պետը այլազգի էր՝ բուլղար գնդապետ Բաբաջանովը, որն էլ բերդի հանձնումից հետո ժրաջանորեն թուրք հրամանատարությանը ցույց էր տալիս ամրոցի ամրությունները և գաղտնիքները:[1] Կարս քաղաքի, բերդի՝ թշնամու հարձակումներին երկու ամիս դիմանալը զուրկ չէր հիմնավորումից: Բերդն ուներ հրանոթներով պաշտպանված տասը ամրոց, և համարվում էր ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող հենակետ: Հոկտեմբերի 30-ին քաղաքն ու բերդը անձնատուր եղան: Ամենացավալին ու ողբերգականն այն էր, որ առանց կրակոցի: Կարսի գրավման ժամանակ ու հաջորդող շաբաթներին, մինչև Կարսի մարզի ամբողջական հայաթափումը, թուրքերը քաղաքում կոտորել են 8000, մարզում՝ 12000 հայ՝ հիմնականում տղամարդ[2] : Բավարար է ասել, գերության և ստրկության մեջ բազմապատիկ ավելի հայեր (մեծ մասամբ՝ կենսունակ տարիքի տղամարդիկ) են մահացել, քան 1920 թ. աշնանը, հայ-թուրքական պատերազմի ողջ ընթացքում...

Կարսի անփառունակ անկման կապակցությամբ դեպքերին ականատես Գ. արք. Հովսեփյանն իր հուշ-օրագրում ցավով գրում է. «Ազգերի պատմության մեջ դժվար է գտնել այնպիսի խայտառակ պարտություն, ինչպիսին մերն էր այդ օրերին»:[3]

Պարտության հենց առաջին մեղավորը ողջ հայ ժողովուրդն է: Լիովին համաձայն ենք Գարեգին Նժդեհի գնահատականին. «Ընդունել ճշմարտությունը հանրապետական բանակի անհաջողության մասին, պարզել Կարսի անկման իսկական պատճառները կնշանակի պատասխանատվության բաժինն ընդունել»[4]: Նժդեհը հայտարարում է. «Կարսի ամոթը Հայաստանի Հանրապետական կառավարությանը չէ միայն, այլ ողջ հայ ժողովրդինը: Չափվում են, բախվում են բանակները, բայց հաղթում կամ պարտվում են ազգերը, ցեղերը: Կարսի պատերի տակ պարտվողը հայ զինվորն ու զորավարը չէին միայն, այլ բովանդակ հայությունը, հայ ժողովրդի՝ իր ամբողջության մեջ անմարտունակ, անարի, անմշակ հոգին: Ահա՛ ճշմարտությունը, հա՛յ երիտասարդ...»[5]: ՈՒ Կարսի անկումը նախագծեց պատերազմի հետագա պարտությունը:

Հայաստանի պարտությունը զգալի չափով բացատրվում է հոգեբանական գործոնով: Պատերազմական բուռն պայքարի ընթացքում՝ 1920թ սեպտեմբերի 29-ին ՌԿ(բ)Կ կենտկոմի պլենումը որոշում է փողով ու զենքով փաստացի օգնություն ցույց տալ քեմալականներին: Էրզրումում քեմալական կառավարության և ռազմական հրամանատարության ներկայացուցիչներին Խորհրդային Ռուսաստանի իշխանությունները փոխանցեցին 200.6կգ ոսկի ,[6] այդ փաստը ընկճեց հայ զինվորին, և այն հանգամանքը, որ կռվում է ոչ միայն Թուրքիայի այլև Խորհրդային Ռուսաստանի դեմ, գաղափարապես պարտության մատնեց նրան : Ստեղծվեց ապազգային նկարագիր՝ նրա մեջ հայկական անկախ պետականության գաղափարի թուլությունը կամ իսպառ բացակայությունը, դաշնակից զորքերի օժանդակության վրա հույս դնելը , հուսախափվելը, և սեփական ուժերին չվստահելը տարավ հայկական բանակի պարտությանը:

Պատերազմի պարտության զուտ ռազմական պատճառներ ևս շատ էին՝ ռազմական անպատրաստությունը, ռազմական պլանի և քարտեզների պակասը, առկա ռազմուժի խելամիտ օգտագործման սկզբունքի բացակայությունը, տեղանքի առավելություններն ու անպատեհությունները գնահատելու անկարողությունը, ռազմական հետախուզության և հակահետախուզության վիճակը, զորակոչի բարձիթողիությունը, դասալքությունը, հայ զինվորների՝ նոր ստացված կանադական հրացաններին անբավարար տիրապետելը, ՀՀ բանակի և ռազմական նախարարության հույսը Կարսի ամրությունների ու քարերի վրա դնելը:[7]

Կարելի է առանձնացնել նաև բարոյահոգեբանական պատճառները: Պատերազմի նախորդած շաբաթներին ու նրա ընթացքում հայերի՝ կռվելու, տոկալու և հաղթելու կամքի բացակայությունը և թշնամու՝ այդ հատկանիշների գերազանցությունը, անառողջ մթնոլորտը զինվորական բարձրաստիճան հրամանատարների ու պաշտպանության նախարարության փոխհարաբերություններում, թշնամանքի հասնող հակամարտությունը Կարսի նահանգի քաղաքացիական և ռազմական իշխանությունների՝ հատկապես նահանգապետ Ստ. Ղորղանյանի ու

[1] Հակոբյան Ա. Նշվ. աշխ. էջ 15:
[2] Հայկական հարց., հանրագիտարան, Եր. 1996, էջ 179, 181:
[3] Հովսեփյանց Գ.արք., Ոգուն չապավինելու արդյունքը., Եր.2002 էջ 41:
[4] Նժդեհ Գ., Հատընտիր.,Եր. 2001 էջ 86:
[5] Նույն տեղում:
[6] Документы внешней политики. ,(Д.В.П) СССР т 3 Москва 1959 с 675:
[7] Սասունի Կ., Հայ-Թուրքական պատերազմը 1920թ., Բեյրութ 1969.էջ 126:

բերդաքաղաքի պարետ գեներալ-լեյտենանտ Դանիել-Բեկ Փիրումյանի միջև:[1] Քաղաքական և ռազմական պատկառազդու հրամանատարների բացակայությունը թե՛ Երևանում և թե՛ Կարսում, թալանի մոլուցքը ՀՀ քաղաքական ղեկավարության միջավայրում և Կարսի նահանգի հայկական կանոնավոր ու անկանոն զորամիավորումներում, գաղափարական-բարոյական ու արժեչափերի ահավոր անկումը ՀՀ բանակում[2]:

Ահա այսքանը բավական է որպեսզի պարտության հիմնական պատճառները փնտրենք երկրի ներսում այլ ոչ թե երկրից դուրս: Ազգի ու ազգային պետության պահպանման ու հզորացման հույսը պետք է դնել միայն և միայն ազգի սեփական կարողությունների վրա՝ դրանք ծայրաստիճան կենտրոնացնելով ու շաղախելով վեհագույն գաղափարներով և ուղեկցելով բոլոր ոլորտների ղեկավարների անձնական դրական օրինակներով:

Ապացուցված է՝ այն ժողովուրդը, որը դասեր չի քաղում իր անցյալից դատապարտված է նորից այն վերապրելու: ՈՒստի անհրաժեշտ է կատարել անդրադարձ անցյալին, ընդունել սեփական սխալները դրանցից քաղել դասեր, և ազգային անհաջողությունների հիմնական պատճառներն էլ փնտրել երկրի ներսում՝ փորձելով լուծել այն:

Իսկ ինչ վերաբերվում է Հայաստանի քաղաքական կողմնորոշմանը, հայ-ռուսական հարաբերությունների պատմության այն ժամանակվա փորձը դարձյալ սովորեցնում է, որ եթե սեփական ուժերը չեն բավարարում ապա Արևմուտք, Ռուսաստան ընտրության հարցում նախապատվությունը պետք է տալ վերջինիս: Հայաստանի երրորդ հանրապետության և Արցախյան ազատամարտի տարիների փորձը ևս հավաստում է, որ Հայաստանի քաղաքական շահերին ավելի հոգեհարազատ ու նախընտրելի է Ռուսաստանի քաղաքական ռազմավարությունը: Սակայն թե՛ անցյալում թե՛ ներկայումս, որքան էլ, որ Ռուսաստանը դիտարկենք Հայաստանի ռազմավարական դաշնակից ու գործընկեր, այնուամենայնիվ հիմնական հույսը մենք մեզ վրա պետք է դնենք:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հովսեփյանց Գ.արք., Ոգուն չսպավիներու արդյունքը., Եր.2002:
2. Զոհրաբյան Է., Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները.,Եր.1979:
3. Խաչատրյան Կ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թվականներին.,Եր.2007:
4. Խատիսյան Ալ., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը., Բեյրութ.1968:
5. Հակոբյան Ա., 1920թ Թուրք-հայկական պատերազմի պատմության փորձն ու դասերը., Եր.2004թ.
6. Հայկական հարց. հանրագիտարան, Եր. 1996:
7. Նժդեհ Գ., Հատընտիր.,Եր. 2001:
8. Սասունի Կ., Հայ-Թուրքական պատերազմը 1920թ., Բեյրութ 1969:
9. Վրացյան Ս.,Հայաստանի Հանրապետություն.,Եր.1993:
10. Документы внешней политики. ,(Д.В.П) СССР т 3 Москва 1959г.

[1]Սասունի Կ., Նշվ. աշխ. էջ 82:
[2]Հակոբյան Ա. Նշվ. աշխ. էջ 20**:**

ՀՏԴ 941(479.25)

Պատմություն

Ռուզաննա Սարգսյան
ՀՊՄՀ, 3-րդ կուրս
Ruzanna.Sargsyan.1997@mail.ru

ՀԱՅ ՀԵՐՈՍՈՒՀԻ ԿԱՆԱՅՔ ՀԱՅԴՈՒԿԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԵՋ

Հայոց պատմության բոլոր էջերում հայ կինը իր վճռականությամբ փորձել է տղամարդկային ուժին հավասար ուժով նվաճել անկախություն ու պայքարել ապագա սերնդի կյանքի ու բարօրության համար: Միանգամայն փաստ է, որ հայուհու համար ընտանիքն ու պատիվը կազմել են հայրենասիրության գլխավոր առանցքը: Հերոսուհի հայ կանայք, զորավիգ լինելով իրենց ամուսիններին, եղբայրներին, հայ ֆիդայիններին, փորձել են միշտ սառը դատել ու չհավատալ երբեք, որ թշնամին, այն էլ թուրքը, իր գազանական բնազդները մի կողմ կթողնի, հետևաբար նրանք իրենց հերթին ևս ամեն միջոց գործի են դրել թշնամուն տապալելու և հայ ֆիդայուն կորով ու օգնություն տալու՝ հանուն հայրենիքի փրկության ու վաղվա օրվա: Այդ ամենը իր խորը դրսևորումն է ունեցել նաև հայ ֆիդայական շարժման տարիներին, երբ օրեցօր Աբդուլ Համիդի սաստկացող բռնությունների դեմ պայքրի ելած հայությունը իր ֆիդայական խմբերով հայկական տարբեր շրջաններում մարտեր էր մղում: Իսկ ահա այդ մարտերում իրենց մասնակցությամբ ոգեշնչում և տղամարդկանց կողքին կռվում էին նաև հերոսուհի կանայք:

Բանալի բառեր՝ Հայդուկային շարժում, Սասունի ինքնապաշտպանություն, Սամարղանդի բանտ, Բերիայի <<Աշխատանքի տուն>>, համիդյան բռնապետություն:

Ruzanna Sargsyan
ASPU, 3rd year
Ruzanna.Sargsyan.1997@mail.ru

ARMENIAN HEROINE WOMEN ON NATIONAL LIBERATION MOVEMENT

In all the pages of Armenian history Armenian woman with her strength and willingness, tried to achieve freedom and struggled for the life and the welfare of the future generation, with the men. It's an obvious fact that for the Armenian woman her family and pride were the main core of the patriotism. Heroine Armenian woman always tried to support her husband and brothers, Armenian hayduks, tried to discourse coldly, and never believe that enemy, especially the Turkish, would left all his instincts, therefore they used all their means to overthrow the enemy and give help to Armenian fedayeen for the salvation of the country and for the future day. All this has had a profound manifestation of the Armenian fedayeen movement, when Armenians stood against the day by day increasing violence of Abdul Hamid, and made fights in different parts of Armenia with their fedayeen groups. And in that fights took part and stood behind the men heroine women.

Keywords: Liberation movement, self-defense of Sasun, prison of Samarghand, "Work home" of Beria, Hamidian despotism

Рузанна Саргсян
АГПУ, 3-ий курс
Ruzanna.Sargsyan.1997@mail.ru

АРМЯНСКИЕ ЖЕНЩИНЫ ГЕРОИНЬИ В ФИДАИНСКОМ ДВИЖЕНИИ

На всех страницах армянской истории армянка с ее силой и готовностью, пыталась достичь свободы и боролась за жизнь и благополучие будущего поколения с мужчинами. Очевидно, что для армянской женщины ее семья и гордость были основным ядром патриотизма. Героиня Армянская женщина всегда старалась поддержать своего мужа и братьев, армянских гайдуков, старалась судить холодно и никогда не верила, что враг, особенно туркы, оставили бы все свои инстинкты, поэтому они использовали все свои средства для свержения врага и оказания помощи Армянские федаина за спасение страны и за будущий день. Все это имело глубокое проявление в армянском федайинском движении, когда армяне упорно сопротивлялись изо дня в день нарастающему насилию Абдула Хамида и совершали бои в разных частях Армении со своими федаинами. И в этих боях приняли участие и стояли за мужчинами героини женщины.

Ключевые слова: фидаинское движение, Сасунская самооборона, тюрьма Самарканда, "Дом работы" Берии, Гамидский деспотизм

Հայոց պատմության ողջ հերոսական էջերը թերթելուց տեսնում ենք տղամարդկանց հետ պայքարի ելած, նրանց հետ մի բռունցք դարձած հարյուրավոր հերոսուհիների, որոնք չեն համակվել անտարբերությամբ ու հեշտասիրությամբ: Հայ կնոջ հերոսական կերպարը ամենուր է. հնագույն ժամանակներից մինչև ֆիդայական պայքար, հայրենական պատերազմ և վերջապես արցախյան ազատամարտ:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում Օսմանյան կայրսրությունը պարտություն կրեց, որից հետո սաստկացավ երկրի ներքին քաղաքական դրությունը: Այն իր բացասական անդրադարձն ունեցավ նաև կայսրության մեջ ապրող հայության վրա, որը մինչև այդ էլ ծանր վիճակում էր գտնվում: Աստիճանաբար Օսմանյան տիրապետության ներքո ապրող հայ հասարակությունը բաժանվեց մի քանի հատվածների. մի մասը ուղակի դիմեց արտագաղթի, մի մասը սկսեց տարբեր ձևերով հարմարվել, իսկ ազատության ջատագովները զենք վերցրեցին և ելան պայքարի: Վերջիններս ձևավորեցին ֆիդայական խմբեր ու ծավալեցին իրենց պայքարը: Առաջին ֆիդայական խմբերը ստեղծվել են Տարոնում, Վասպուրականում և Կեսարիայում: Թորոս Ծառուկյանի, Արամ Աչըքպաշյանի, Արաբոյի, Մարգար Վարժապետի գլխավորությամբ ֆիդայական խմբերը հսկայական աշխատանք են կատարել հայ ժողովրդի ազատագրության և երկու հատվածների կապերն ամրապնդելու համար: Նրանք դժվարությամբ, բայց կարողացել են համագործակցել արևելահայ գործիչների հետ, աշխատանքներ են տարել զենք, զինամթերք ձեռք բերելու և կամավորներ հավաքագրելու համար:[1]

Ֆիդայական շարժման մեջ իրենց ներդրումն են ունեցել հայ հերոսուհի կանայք նաև: Դարավոր ընդմիջումից հետո ազատ ապրելու համար պայքարը իրեն երկար սպասել չտվեց. հայ կնոջ սխրանքները երևացին Սասունի, Զեյթունի, Վանի, և այլ հերոսամարտերի ընթացքում: Հայ կինը ոչ միայն աչքի ընկավ իր սխրագործություններով կռվի դաշտում, այլ նաև թիկունքում: Նա ոչ միայն հսկել է հայդուկի թաքստոցը, անհրաժեշտ տեղեկություններ, հաց ու ջուր է հասցրել նրան, այլ նաև վիրավորների վերքերն է բուժել ու գաղտնի նամակներ հասցրել, միաժամանակ հետախուզությամբ զբաղվել և այլն:[2]

Հայտնի փաստ է, որ Հայդուկային կռիվներին, ըստ ֆիդայական գործող կանոնների, հայ կանանց մասնակցությունն արգելված էր: Հայ տղամարդիկ այն համարել են անթույլատրելի՝ վտանգի չենթարկելով օջախի և ընտանիքի պահապանին: Բայց մյուս կողմից հայ կնոջ մասնակցությունը ավելի շատ է ոգևորել տղամարդուն՝ նրան մղելով անզիջում ու հերոսական կռիվների: Շատ հաճախ չգրված, բայց սրբորեն պահպանվող կանոնները չխախտելու նպատակով, հայ կանայք կռիվներին մասնակցել են ծպտված՝տղամարդու հագուստով:[3]

Ֆիդայական շարժման գործում մեծ դեր ունեցած Սասուն աշխարհը հայտնի էր նաև իր հերոսուհի կանանցով: Թուրքերը 1900-ական թթ. ցանկանալով Սասունի մի քանի գյուղերում (Տալվորիկ, Սեմալ, Շենիկ) զորանոցներ կառուցել թուրք և քուրդ բանվորների փոխարեն, հարակից հայկական գյուղերից հայեր են տանում Սեմալ: Այդ ժամանակ Սասունցի կանայք մեծ ցույց են կազմակերպում, հարձակվում են արհեստավորների վրա, սպառնում, ասելով. <<Եկել եք ձեր ազգակիցների գերեզմանը փորելու>>, ապա նրանց գործիքները ջարդելով՝ բանվորներին և արհեստավորներին թույլ չէին տվել աշխատել և դուրս էին հանել Սասունից: Շնորհիվ դրա, ծրագրված և կոնկրետ նպատակի համար նախատեսվող զորանոցները չէին կառուցվել:[4]

Հայ ֆիդայական պայքարի հայտնի հերոսուհիներից է Աննա մայրիկը, ով ազգային և պետական նշանավոր գործիչ Կարո Սասունու մայրն է: Աննա մայրիկը Սասունի Ահարոնք գյուղի ոգին էր: Ֆիդայական շարժման ողջ ընթացքում մասնակցել է 1894-1904 թթ. Սասունի ինքնապաշտպանական մարտերին: Աննա մայրիկը իր զորավոր նկարագրով, համարձակությամբ ու խելքով գրավել էր բոլորի ուշադրությունը: Հերոսուհու իսկական կերպար էր նա: 1880-90-ական թթ. բարենորոգումների շուրջ

[1] Ռ. Տեր-Մինասյան, Հայ ֆիդայական շարժման պատմությունից, Թեհրան, 1982, էջ 215
[2] Է.Մինասյան, Հայ հերոսուհի կանայք, Երևան, 2016, էջ 38
[3] Ռուբէն, Հայ Հեղափոխականի մը յիշատակները, հ.3, Թեհրան, 1982, էջ 228
[4] Ռուբէն, Հայ Հեղափոխականի մը յիշատակները, հ.3, Թեհրան, 1982, էջ 229

հաճախ քննարկումներ ու վեճեր է ունեցել Վարդան վարդապետի, Մ.Տամատյանի և այլ նշանավոր այրերի հետ: [1]

1880 թ. Ահարոնքի հայերը հրաժարվել էի քուրդ աղային վճարել 10 փարա կոչվող տուրքը, որի համար Միրզա աղան խաբեությամբ սպանել էր Ահարոնքի իշխան Գրգոյին: Աննա Մայրիկի ղեկավարությամբ ահարոնքցիները հարձակվել էին Միրզա աղայի տան վրա, այրել ու հողին էին հավասարեցրել այն: Միրզա աղան փախել էր լեռները, բայց հայերի բարձրացրած աղմուկն ու ըմբոստությունը այնքան ուժեղ ու ազդու է եղել, որ թուրքական իշխանությունները ստիպված բանտարկել ու կախաղան էին հանել նրան: Այս դեպքերից հետո Աննա մայրիկը դարձել էր պատմական անձնավորություն, նրա մասին պատմություններ ու երգեր էին հյուսվում: Աննա մայրիկը ակտիվորեն մասնակցել է 1904 թ. Սասունի ապստամբությանը իր երկու որդիների՝ Գալուստի և Աբրահամի հետ միասին: Աննա մայրիկը հայտնի հոգևորական Վարդան վարդապետի հետ շարունակ վեճեր է ունեցել և անընդհատ մեղադրել է նրան , քանի որ վերջինս թուրքերին հավատալով, ժողովրդին հեռու էր պահում մարտական վիճակից՝կոչ անելով չզինվել: Նրանց հանդարտեցնելով՝ վերջինս ասում էր, թե ժամանակները փոխվել են և պետք չէ գազանին կատաղեցնել , հուսալով որ նոր լույս կբացվի:[2]

Աննա մայրիկը ավելի ճիշտ էր ու հեռատես: Մեծ եղեռնի օրերին չհամաձայնվելով Վարդան Վարդապետի հնազանդության կոչերին ՝ որոշել էր իր որդիների հետ կռվել մինչև վերջ: Սակայն զենքի բռնհագրավումից հետո բանտ էր նետվել և իր երեք որդիների հետ Բիթլիս տանող ճանապարհին, նահատակվել չարագործ ու արնաքամ թուրքերի հալածանքներից:[3]

1905 թ. Գևորգ Չաուշը Ղարսի կռվում թակարդի մեջ էր ընկել, Մշո Ղարս գյուղից Զրեն, ով ֆիդայի կանանց շարքից էր, տեսնելով, որ թուրք կապիտան Սուլեյմանը, ուր որ է կրակելու է Գևորգ Չաուշին, կայծակնային արագությամբ հարձակվում է Սուլեյմաի վրա և սպանում է նրան:[4]

Կարո Սասունու տեղեկության համաձայն Մշո Մոկք գյուղի հերոսուհիներից էր Եսթերը: Նա հանդգնորեն հրապուրել է քուրդ աղաներին, այնուհետև սպանել է նրանց: Մինչև այս դեպքերը, նա անցել է կյանքի դժվար ճանապարհ: Փոքր տարիքում զրկվել է ծնողներից և ապրել է եղբոր՝ Քյարիմի հետ: Աղքատության պատճառով ստիպված իրենց տան արտերը գրավ էին դրել թուրք աղա Շերիֆի մոտ: Վերջինս ամեն միջոց գործի է դրել Եսթերին իր ձեռքը գցելու և հաճոյանալու համար: Եսթերը չհամակերպվելով ու չհանդուրժելով այդ կացությանը՝ դիմել է հայտնի հայդուկներ Քեռի Ղազարին և Մկրտիչին: Նրանց խորհրդով, երբ Շերիֆը երեկոյան հյուր է գնացել Եսթերին՝ գիշերը անցկացնելու համար, պատվախնդիր հայուհին, թուրքի քնելու ժամանակ դաշույնով սպանել է նրան: 1915 թ. Եսթերը Անդոկում մասնակցել է զինված ելույթներին և նահատակվել:[5]

Հայդուկայիին պայքարում իր նվիրվածությամբ աչքի է ընկել Մշո դաշտի սուրհանդակ Մարիամը: Նա Մշո գյուղերից էր: Շատ փոքր տարիքից սիրել է իրենց գյուղի քուրդ Բեկի տղային՝ 17 ամյա Սմոյին, որի հետ էլ փախել է Ալադաղի լեռներ՝ լքելով ու դեմ գնալով ծնողներին: Սակայն, քուրդը հատկապես զավակի ծնունդից հետո փոխվել է՝ հալածելով Մարիամին և <<գյավուր>> անվանելով նրան: Սմոն իր քուրդ ընկերների հետ հայկական գյուղերը թալանելով է զբաղվել: Երբ զավակը մեծացել է, նմանվել է հորը ու սկսել անարգանքի ենթարկել մորը: Դրոյի կռվի ժամանակ Սմոն կռվել է իր քուրդ ընկերների հետ Դրոյի դեմ: Մարիամը աղաչել-պաղատել է, որ չանեն այդպիսի բան, սակայն ենթարկվել է դաժան ծեծի: Զավակը մեծանալով նույնպես մորը հալածանքների է ենթարկել՝ պաշտպանելով քրդերի արարքները: Վեճերից մեկի ժամանակ Մարիամը սպանել է որդուն, որից հետո երդվել է կյանքը նվիրել ազգին: Նա Իգդիրի շտաբում հետախույզ է աշխատել և քրդական տարազով ծպտված պտտվել է քրդական շրջաններում ու զբաղվել է լրտեսությամբ: Նա առաջնակարգ հետախույզ է եղել: Սասունի կռիվներից մեկում ընդհանուր նահանջի ժամանակ ժողովրդի բեկորները անտառի մեջ են նահանջել: Թշնամու զբաղեցրած դիրքը ճշտելու համար անհրաժեշտ է եղել հետախույզներ ուղարկել: Առաջին կամավորը եղել է Տալվորիկի իշխանական տնից քաջ Գյուլեն: Նա այսպես է ասել <<Ես ծեր եմ, մեռնիմ, ալ բան չի պակասի >>: Իսկ ահա երկրորդ կամավորը Մարիմն էր: Նա լուռ ու մունջ ոտքի է կանգնել ու Գյուլեին հետևել: Նրանք փայլուն կերպով կատարել են իրենց աշխատանքը:[6]

[1] Է. Մինասյան, նշվ. աշխ., էջ 46
[2] Կ.Սասունի, Յուշեր և վկայություններ, Պէյրութ, 1972, էջ 96-97
[3] Է. Մինասյան, նշվ. աշխ. էջ 51
[4] Ս.Զէյթլեան, հայ կնոջ դերը հայ հեղափոխական շարժման մեջ, Քալիֆորնիա, 1992, էջ 84
[5] Կ.Սասունի, նշվ.աշխ.,էջ 571
[6] Է. Մինասյան, նշվ. աշխ., էջ 62

Շատ քչերին է հայտնի հայդուկ Սևքարեցի Սաքոյի կինը՝ Մարո Ղարաքեշիշյանը: Շնորհիվ նրա Արաքսից այն կողմ զենք ու զինամթերք է փոխադրվել: Աննկուն հերոսուհի Մարոն 1900-ական թթ. սկզբին Ռուսաստանից ու Միջին Ասիայից զենք է տեղափոխել և ձերբակալվել է, սակայն որդու՝ Գևորգ Ղարաքեշիշյանի տված կաշառքով Սամարղանդի զինվորական դատախազը բավարարվել է զենքը բռնագրավելով: Այդուհանդերձ Մարոն շարունակել է գործը Թիֆլիսում: 1906 թ. նշանավոր հայդուկապետ Սևքարեցի Սաքոյի հետ ամուսնանալուց հետո տեղափոխվում է Երևան: Նրանց համար կարճ կյանք էր վիճակված: Լեռնային կռիվներում հայդուկի մարմնի մեջ խրված գնդակը 1909թ. նրան գերեզման է տանում և Մարոն երդվում է իրենց կյանքի գործը մինչև վերջ հասցնել ավարտին: Նա Թիֆլիսում Հ. Թումանյանի օգնությամբ ծանոթանում է քաղաքի մեծահարուստների հետ: Նրանց աջակցությաքմբ զենքի համար հանգանակված գումարի չափը հասնում է աննախադեպ չափերի: Թիֆլիս-Ղազախ-Քարվանսար-Դիլիջան-Երևան-Դավալու ուղեգծով զինատար ֆուրգոնը Մարոյի ուղեկցությամբ հրացաններ ու փամփուշտներ է տեղափոխում Արևմտյան Հայաստան: Հայերենին, թուրքերենին, վրացերենին, ռուսերենին տիրապետելը և բնածին համարձակությունն ու հնարամտությունը օգնել են նրան: Սակայն 1909 թ. վերջերին նա ձերբակալվել է և 5 տարի փակված է եղել Սամարղանդի բանտում: Ազատվելուց հետո կրկին շարունակել է իր գործը: 1914 թ. Սևքարից Դիլիջանով հրացաններ ու փամփուշտներ տեղափոխելիս, ավազակային հարձակման արդյունքում նա կնքել է իր մահականացուն:[1]

Բժշկուհի Մարգարիտ Մելիք-Բեգլարյան-Օհանյանը Արցախի նախկին մելիքների շառավիղն էր՝ Գյուլիստանի Դավիթ Մելիք-Բեգլարյանի քույրը և դաշնակցական գործիչ ու Խանասորի արշավանքին մասնակցած Քրիստափոր Օհանյանի կինը: Երբ հայ-թաթարական կռիվները սաստկացել են, բժշկուհի Մարգարիտան գնացել է Գյուլիստանի իրենց կալվածք և այնտեղ հիմնել հիվանդանոց՝օգնելով հազարավոր հայերի:[2]

Հայդուկային կռիվներում աչքի է ընկել խիզախ ու աննկուն հայուհի Գյուլեն՝ առաջին ֆիդայապետ Արաբոյի քույրը: Գյուլեն հաճախ սուրհանդակի դեր է կատարել և թուրքական զորքի շարժումների մասին լուրեր է հասցրել եղբորը: Երբ Արաբոն 17 տարեկանում գնացել է Բռնաշենի լեռնալանջերը, թշնաու դեմ կռվելու, Գյուլեն հետախուզական մեծ աշխատանք է տարել եղբորը օգնելու և հաղթանակի հասնելու համար: Գյուլեն հանձն է առել հսկել, որ կաշառքով և այլ խոստումներով մատնություններ չկատարվեն: Այսպես, երբ 1889 թ. Արաբոն ռես Կրպոյի մատնությամբ ձերբակալվել է, Գյուլեն կորցրել է քուն ու դադարը, մինչև որ պատանի Գևորգն ու Գալշոյի Մանուկն իրենց խմբապետի վրեժը չեն լուծել: Բանտից փախչելուց հետո, երբ Արաբոն Կովկաս է անցել՝ ավելի մեծ ուժերով էրգիր վերադառնալու համար, Գյուլեն կանանց խմբեր է հավաքել, զինել և ինքնապաշտպանություն իրականացրել: 1915 թ. Սասունը չգնաժամի մեջ էր, դաժան կոտորածները մեկը մյուսի հետևից էին տեղի ունենում: Այս օրերին անհավասար մարտում ընկնում է Գյուլեն նաև:[3]

Հայդուկային շարժման տարիների հերոսուհի հայուհիներից է Սոֆի Արեշյան-Օհանջանյանը (Ռուբինա), ինչպես նաև Սաթենիկ Օհանջանյանը: Սոֆի Արեշյանը ծնունդով Թիֆլիսից էր, հայրը և եղբայրը ռուսական բանակի բարձրաստիճան սպաներ էին և ունեին բազում կապեր արտերկրում: Սոֆին մինչև 18 տարեկանը հայերեն չգիտեր: 1903 թ. ՀՅԴ դաշնային ժողովով է գումարվել Նիկոլ Դումանի բնակարանում: Նույն շենքում էր բնակվում նաև Սոֆին: Նա ներկա է գտնվում այդ ժողովին և ծանոթանում Քրիստափոր Միքայելյանի և Համո Օհանջանյանի հետ: Սոֆի Արեշյանի տեղեկությունների համաձայն Քրիստափոր Միքայելյանը ծրագրել էր քաղաքական մեծ ահաբեկչություն կազմակերպել Կարմիր Սուլթանի դեմ: Այն ունեցել է երկու նպատակ. Առաջինը, որ հայկական ջարդերի հեղինակին տապալեն, երկրորդը, որ նույնիսկ անհաջողության դեպքում հարվածով ցնցեն ստրկացած ժողովրդին և արթնացնեն նրան դարավոր թմբիրից: Սոֆին Քրիստափոր Միքայելյանի հետ մեկնել է Բեռլին՝ հավաքագրական աշխաանքների համար, այնուհետև Բուլղարիա, որտեղ ռումբի փորձարկում են արել: 1905 թ. Սոֆին ներկա է գտնվել Սոֆիայի մոտ գտնվող Վիտոշ լեռան լանջին իրականացված ռումբի փորձարկմանը, որի ժամանակ Քրիստափոր Միքայելյանը զոհվել է: Այնուհետև, Սոֆին համառելով մասնակցել է սուլթանի դեմ մահափորձին, որն ավարտվել է անհաջողությամբ: 1906 թ. Ռուբինան և Սաթենիկ Օհանջանյանը Պոլիս են գնացել և մեծ եռանդով գործել են Բերիայի <<Աշխատանքի տան>> համար, որտեղ բացի կար ու ձևից և այլ զբաղմունքներից,

[1] Է. Մինասյան, նշվ. աշխ., էջ 69
[2] Ս.Զեյթլեան, նշվ. աշխ., էջ 37
[3] Ս.Զեյթլեան, նշվ. աշխ., էջ 45

հավաքվում էին ազգային համախմբման շուրջ: Երբ Դաշնակցության գործով Համո Օհանջանյանին ձերբակալում են, Ռուբինան չվախենալով այն փաստից, որ իր անունը ևս վերահսկողության տակ է, և իրեն ևս կձերբակալեն, քաղաքից քաղաք է անցնում, կարողանում է իր կապերի միջոցով բարյացակամ վերաբերմունք ստեղծել բանտի վարչության և բանտարկյալների միջև, բայց մի որոշ ժամանակ ձերբակալվում է և միայն եղբոր՝ Միշա Արեշյանի միջնորդությամբ ազատվում է (վերջինս ռուս-ճապոնական պատերազմին էր մասնակցել): Իրկուրսկի աքսորավայրում Հ.Օհանջանյանը և Սոֆին ամուսնանում են: Հայաստանի Հանրապետության ծագման և անկման օրերին ևս Ռուբինան ամուսնու կողքին էր: Նրանք ունեցել են մեկ զավակ (Վիգեն Օհանջանյան):[1]

Ամփոփելով ֆիդայական պայքարում հայ հերոսուհի կանանց շարքը՝ հարկ է նշել հայդուկային պայքարում իր պատվարժան տեղն ունեցող դեմքերից մեկին՝ Սասունի ինքնապաշտպանության ակտիվ կազմակերպիչ Սոսեին, ով Սասունի ինքնապաշտպանություն իրականացնող ու կազմակերպող Աղբյուր Սերոբի կինն էր: Աղբյուր Սերոբի հետ միասին Սոսեն անձնուրաց կերպով մարտնչում էր համիդյան բռնապետության դեմ: Անդոկ լեռան վրա տողի ունեցած մարտում, անհավասար կռվում ընկավ Աղբյուր Սերոբը, որից հետո Սոսեն իր որդու՝ Հակոբի հետ, մինչև վերջ մարտնչեց: Այնուհետև, երբ Հակոբը նահատակվեց, թուրքերին հաջողվեց վիրավոր ու գիտակցությունը կորցրած Սոսեին գերի վերցնել, բայց մի որոշ ժամանակ անց ազատ արձակվեց:[2]

[1] Ս.Զեյթլեան, նշվ. աշխ., էջ 61-62

[2] Հարազատ պատմություն Տարոնո, Կահիրե, 1962, էջ 103

УДК 94 (470+571:39)

История

Абрамян Элине
Университет Месроп Маштоц (г. Степанакерт)
abramyan_eline@mail.ru

ИСТОРИЯ, КУЛЬТУРА, ТРАДИЦИИ ЦАХУРОВ (ПОСТАНОВКА ПРОБЛЕМЫ)

В данной статье автор рассматривает историю, культуру, традиции, быт цахурского народа, проживающего на территории современного Азербайджана. Автор считает цахуров одним из автохтонных народов Кавказа. Данное исследование является всего лишь началом серьёзного исследования истории и культуры цахурского народа.

Ключевые слова: цахуры, культура цахуров, цахурская проблема

Աբրահամյան Էլինե
Մեսրոպ Մաշտոց Համալսարան (ք.Ստեփանակերտ), 1-ին կուրս
abramyan_eline@mail.ru

ՑԱԽՈՒՐՆԵՐԻ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ, ՄՇԱԿՈՒՅԹԸ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ (ԽՆԴՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ)

Տվյալ հոդվածում հեղինակը քննում է ցախուր ժողովրդի պատմությունը, մշակույթը, ավանդույթները և առօրյա կյանքը, որոնք ապրում են ժամանակակից Ադրբեջանի տարածքում: Ցախուրներին, հեղինակը համարում է որպես Կովկասի բնիկ ժողովուրդ: Այս ուսումնասիրությունը, միայն սկիզբն է ցախուրների պատմության և մշակույթի ուսումնասիրության մեջ:

Բանալի բառեր: ցախուրներ, ցախուրների մշակույթ, ցախուրական խնդիր

Abrahamyan Eline
Mesrop Mashtots University (Stepanakert), 1st year
abramyan_eline@mail.ru

THE TSAKHUR'S HISTORY, CULTURE AND TRADITIONS (ISSUE DEFINITION)

In given article the author examines the history, the culture, traditions, the entity of tsakhur's nation, living on the territory of present-day Azerbaijan. The author defines tsakhur's as one of the native nations of Caucasus. The given research is just the beginning of the thoroughful research of tsakhur'shistory's and culture.

Keywords: tsakhur's, tsakhur's culture, tsakhur's problem

Проблема цахурского народа в последнее время начала интересовать многих кавказских и российских учёных.

Цахурский народ на протяжении последних лет начал терять свою само-идетификацию под влиянием Азербайджанских властей. Происходит насильственная ассимиляция цахурского народа со стороны Азербайджана.

Данная статья преследует две цели. Первая рассказать всем, кто интересуется данной проблемой, о цахурском народе, его истории и культуре. Вторая-показать, что этот народ находиться на грани исчезновения.

История цахурского народа. В мире нет ни одного народа, который бы не имел своей истории, у каждого народа есть свои интересные страницы в истории, история цахурского народа также сложна и интересна. **Цахуры** (самоназвание - йихъбы, цlalхбы)-один из коренных народов Кавказа. Этноним народа происходит от главного селения Цахур в Дагестане. Цlах на общелекском (лезгинском) означает -очаг, также цla (й) огонь. Цахуры-это более позднее название этого народа. Раньше их называли "йихъбы" или "джигбы". Город Цахур, который был основан в 80 г. до н. э., впервые упомянут в документе "Имущество цахурских правителей". Далее цахур в форме "Сахур" упомянут в персидской надписи 293 г. из Пайкули. В древнегрузинских источниках цахуры носили иные названия -"суджи", а их страну называли Суджитией или Цукетией. Именовались они иэрами, а страну называли Эрети. Сейчас многие местности в Цахуре, связаны с данными названиями, например, гора Суджарай в Закатальском районе и площадь Эрай в селе Сувагиль [1].

[1]Из истории цахуров. [Электронный ресурс].http://www.shakasana.com/rus/ (дата обращения: 07.03.2017).

"Народ здесь живёт дикий и необузданный, налоги никогда не платил, не платит и платить не будет", - писал один из русских путешественников, побывавший в XVII в. в верховьях реки Самур. И слова эти относились к одному из малочисленных народов Кавказа-цахурам. История цахуров своими корнями уходит в глубокую древность, во время Кавказской Албании, первые письменные упоминания о народах, населяющих эти места, сделал историк Феофан Метеленский, описывающий поход Помпея на Албанию. Правда, о дикости и необузданности в них речи нет. И это неудивительно, памятники зодчества говорят о достаточно высокой культуре и развитии народа. В селение Кум, например, сохранились остатки христианского храма VI века. А в селение Лякит - развалины круглой церкви, входящей в состав большого монастырского или замкового комплекса VII века. Однако христианство, столь рано принесенное в эти края грузинскими и армянскими миссионерами, так и не успело здесь окончательно утвердиться, уже в VIII веке в эти высокогорные районы пришёл ислам. Именно селение Цахур стало вторым после Дербента оплотом ислама в Дагестане. Название селения Цахур переводится с цахурского языка как горящее селение, его неоднократно сжигали дотла пришлые завоеватели. Вплоть до середины XIX века через земли цахуров поочерёдно проходили арабы, грузины, монголы, турки, иранцы, вновь турки, пока здесь окончательно не утвердилась власть Российской империи. Легенда гласит, что Цахур был сожжён два раза. После того, как он будет сожжён в третий раз, он восстанет из пепла и вновь засияет во всём утерянном когда-то великолепии, писали учёные того времени.[1] Первые сведения о цахурах встречаются в грузинских и армянских источниках VII века, где они упоминают страну **Цукети**, а в других известны под названием "цихайки". Главное селение дагестанских цахуров -Цахур, существовал уже в XI-XII веках, о чём свидетельствуют найденные и датированные этим временем надписи, потому версии о том, что оно возникло в **1278 году** или по версии **Р.М.Магомедова в 1162 году**, вряд ли соответствуют действительности. В XIII в. веке о Цахуре сообщает арабский ученый **Закарья аль-Казвини**. Он писал, что это"....большой город, густонаселенный, расположенный в 6 переходах от **Ганджи**. Он главный город страны **Лакзан.** Холод в нём очень силен. Вода города из реки, называемый Самур…. Пища их состоит из злака, называемого сульт, внешне он похож на ячмень, а качество его, качество пшеницы…… Каждый из них сеет достаточное для него количество этого зерна и питается этим и молоком своих маленьких овец и кислым молоком их. Они носят одежду из шерсти этих овец. Нет у них начальника, но есть у них проповедник, который молится с ними согласно учению Имама аль-Шафии".

Существование цахурских населённых пунктов в указанный период не закрывает вопрос об этногенезе цахурского народа. Степень генетического родства лезгинских языков показывает, что цахуро -рутульский язык наряду с другими языками этой груп-пы до VII века была локальной единицей, с выраженной диалектной обособленностью. В III в. на территории, занимаемой носителями лезгинских языков, в этом числе и ца-хурами, существовало раннефеодальное государственное образование **Лакз**. В част-ности, ни один из авторов IX-XV века ни словом не упоминает о лезгинах, цахурах, рутульцах, и агулах. Все эти народы, а порой и другие, объединялись под названием "жители страны Лакз". Как пишет советский историк, этнограф, кавказовед М.М. Ихилов: "Мы склонны считать, что до XV века цахуры и рутулы ещё не выделялись из лезгинской этнической среды и продолжали считаться одним народом с лезгинами, хотя у них и складывались свои языки и особенности быта и культуры"[2]. Среди русских историков XIX века (Линевич, Эсадзе и других) существовало мнение, что цахуры, которых они называли "лезгины", являются пришельцами, захватившие в XVII веке часть территории **Кахетинского царства**. Однако эта точка зрения является неверной. От царевича **Вахушти** известно, что уже в XV веке в нагорных частях Кахети существовало множество цахурских поселений. К началу XVIII века на указанной территории окончательно оформились аварские и цахурские вольные общества, более известные как **Джаро-белоканские вольные общества.**

В XV веке на территории проживания цахуров образовалось феодальное обра-зование с центром в ауле **Цахур**. После того как в начале XVIII века резиденция владетелей Цахура была перенесена на территорию Закавказья, в селение **Илису** (селение в Гахеком районе Азербайджана), это феодальное образование стало называться **Илисуйским султанос**. В Илисуйский султанос также вошли три вольных общества цахуров, сохранившие при этом своё внутреннее самоуправление. Илисуй-ский султанос просуществовал до 1844 года, пока оно не было ликвидировано Царской Россией. После его ликвидации здесь была введена русская администрация. Часть цахур вошла в состав **Джаро-Белоканского округа**, преобразованного в 1859 году в **Закатальный округ** (особая административно-территориальная единица Российской империи), а остальные в **Самурский округ** (административная единица Каспийской области), входящей сначала в **Коспийскую область** (одна из областей Российской империи), а затем в **Дербентскую губернию и Дагестанскую область**[3].

[1] Абдулаев Б. Прошлое и настоящее цахур. - Махачкала с.,1 2008.

[2] Ихимов М.М. Народности лезгинской группы: этнографическое исследование прошлого и настоящего лезгин, табасаранцев, рутулов, цахуров, агулов-Махачкала: Дагестанский филиал Академии наукСССР, 62 с., 1967.

[3] Цахуры в XV-XIX в.в. [Электронный ресурс]. https://ru.wikipedia.org/wiki/ (дата обращения: 07.03.2017).

Культура, традиции и быт цахуров. Российский исследователь Г.Н. Волков говорил: "Ничто не скрепляет народ как традиции. Именно на них опирается культу-росообразность. Чем богаче традиции, тем духовно богаче народ и тем выше его наци-ональная гордость и человеческое достоинство"[1]. Чем же занимались цахуры, какие обычаи и обряды у них были, как справляли народные праздники, какие родильные и свадебные обряды у них были, что за одежду носили, какая форма семьи у них была? Традиционные занятия цахуров пашенное земледелие и скотоводство. Исторически сложившийся хозяйственно-культурный уклад (зональная специализация) привёл к образованию у одной общины двух поселений с одинаковыми названиями в разных зонах. Одна часть родственников селилась в Закавказье, занималась обеспечением скота на зиму кормами и посевами зерновых, другая оставалась в горах, содержала скот на летних пастбищах и заготавливала продукты животноводства. В горах пахотной земли было мало, узкие склоновые поля не обеспечивали население хлебом (хватало на 3-4 месяца), стационарное скотоводство исключалось из-за невозможности заготовки кормов, многие семьи вместе со скотом перекочевали на зиму в Закавказье (создавая своеобразное отходничество), на лето возвращались в Горный магал. Такая взаимодополняемость, двусторонняя связь была жизненно необходима, она обеспечивала продуктообмен и торговые сношения. Горное земледелие было богарным. Сеяли озимую пшеницу режь, ячмень, полбу, просо. На равнинах применялась ирригация и на большой части возделывали яровые и кукурузу. Для скотоводства характерным являлся большой удельный вес овец и лошадей. Лошадь была единственным видом вьючного транспорта. Существовало половое разделение труда. Женская работа: уход за детьми, приготовление пищи, заготовка топлива, уход за крупным скотом, переработка молочных продуктов, прополка и уборка полевых культур, обработка кожи, овчин, шерсти, изготовление ниток, ковров, паласов, тканей, вязание. Мужчины готовили орудия труда, пахали и засевали поля, молотили и веяли зерно, стригли и доили овец, чабанили, ухаживали за лошадьми, занимались отходничеством (каменщики, плотники, лудильщики, рабочие на нефтяных промыслах, сельскохозяйственные сезонные работы).

Современное хозяйство цахуров основано на традиционных занятиях земледелии и скотоводстве. Вместе с тем произошли большие изменения в организации труда. В хозяйстве преобладает животноводческое направление. В горах возрождается земледелие. Склоновые поля засевают зерновыми, а на приречных террасах выращивают лук, чеснок, капусту, помидоры, сажают фруктовые деревья. Из домашних промыслов сохраняется вязание[2].

Одежда цахуров (верхняя одежда, головные уборы, обувь, украшения).Очень интересен и внешний вид цахуров.Традиционная одежда цахуров имеет много общего с одеждой народов Дагестана в покрое, однако отличается отделкой, цветом, способом ношения. Основным материалом для одежды была продукция скотоводства: шерсть, овчина, кожа. **Мужская одежда**: штаны, туникообразная рубаха, бешмет на подкладке, длинная распашная черкеска, шуба-накидка с ложными рукавами, шуба с рукавами, бурка, войлочный плащ (у чабанов, пастухов), конусообразная островерхая шапка из овчины, каракулевая шапка, башлык.На ноги надевали вязаные носки, поршни-чарухи (кусок кожи, стянутый по форме ноги), сафьяновые сапоги и чувяки, вязаную шерстяную обувь с загнутым вверх носком. Непременный элемент одежды мужчин- кожаный пояс с кинжалом. **Женская одежда**: штаны, туникообразная рубаха, широкая юбка, кофта на подкладке, бешметы разного покроя, передник-фартук. Головные убо-ры: чухта, платок. Сейчас в современной одежде цахуров главным образом у городского населения, из традиционного костюма сохранились шубы, вязаная обувь, носки и каракулевые шапки[3] .

Пища. Традиционная пища цахуров состояла из мучных блюд и мясо-молочных продуктов. В употребление овощей и фруктов существовала разница по зонам, в рационе горцев они занимали незначительное место, их заменяли дикорастущие травы. Распространённым был хинкал разных видов и размеров, подаваемый с мясом, брынзой, чесночной подливой. В рационе питания видное место занимали каши и супы. Ритуальным блюдом служила каша из зёрен злака с добавлением костей позвоночника и челюсти барана. Хлеб готовили разных видов из дрожжевого и пресного теста, пироги (чуду) с теми или иными начинками. Молоко в сыром виде употребляли мало. Часто из него получали сметану, масло, творог, варенец, айру, а из овечьего молока делали сыр. Из свежего мяса готовили соус, шашлык. Осенью забивали скот для приготовления вяленой колбасы и мяса. **Современная пища** сочетает традиционные блюда с новыми, заимствованными из кухни других народов (борщ, голубцы, котлеты и т. д.), широко применяется консервирование, соление. Любимым напитком стал чай [4].

Форма семьи и бракосочетание. Основной формой семьи была малая семья, но наряду с ней существовала неразделённая семья (хэбна-хизан, хэдинхав). Она сох-ранилась до 30-50 годов XX века и состояла обычно из 5-7 семейных пар (30-35 человек, 3 и 4 поколенный состав). Она не была классической

[1] Волков Г.Н. Этнопедагогика.-М.: Издательский центр «Академия», 168., 1999 .

[2] Исламмагомедов А. И. Цахуры // Народы Дагестана / Отв. ред. С. А. Арутюнов, А. И. Османов, Г. А. Сергеева. — М.: «Наука», 2002, с.449-450.

[3] Агаширинова С.С. Материальная культура лезгин в XIX-начало XX в.в.-М.: Наука1978. (Материал данного издательства мы использовали в электронном виде, страниц не было представлено) .

[4] Исламмагомедов А. И. Указанный источник, с.458.

большой семьёй или семейной общиной. Бытование её объясняется традицией и хозяйственной целесообразностью: совместное проживание нескольких семей обеспечивало хозяйство большим количеством рабочих рук. Хозяйственную основу неразделённой семьи ца-хуров составляло скотоводство, которое в отличие от других народов Дагестана, имела свои особенности в формах содержания крупного рогатого скота. Некоторые семьи (из общего числа семей неразделённые составляли около 5-7%) в конце XIX века имели в своём хозяйстве более 3000 голов овец, 60 голов крупного рогатого скота, 20 лошадей. Земля, скот, имущество были общими, кроме приданого невесток, оно как и личная одежда, считались собственностью каждой из них, не подлежали учёту при распаде неразделённой семьи и разделе её имущества. При формальном равноправии всех чле-нов семьи власть главы – старшего - была неограниченной. Обычно семейные пары с не-женатыми детьми жили в отдельной комнате.

Жилище малой семьи могло состоять из одной большой комнаты, одного многокамерного дома, нескольких домов. Все члены семьи пользовались равными правами, организацией работы и быта руководили старший мужчина и его жена. Внутрисемейные отношения строились на патриархальных нормах шариата. Это не исключало хозяйственно-бытовой свободы женщин: многодетные матери и пожилые женщины пользовались большим уважением и могли участвовать в сходах. Обычай избегания существовал, но проявлялся в своеобразной форме; общение молодых женщин со взрослыми мужчинами было сдержанным, при посторонних разговаривали через детей. Проявление отцом ласки к своим детям считалось слабостью. С малых лет шло трудовое воспитание с учётом полового разделения труда[1].

Бракосочетание. У цахуров свадьбы не редко заключались внутритухумные. Зак-лючая такие браки, члены тухума рассчитывали на значительное сокращение мате-риальных расходов. Разводы у цахуров редкость. Для них семья- это святое[2].

Праздники. У каждого народа есть свои народные праздники. Каждый народ индивидуален в этом, очень интересны народные праздники цахуров, интересны своим празднованием, песнями и танцами. В общественном быте особое место занимали развлечения, игры, праздники и обряды, в которых, наряду с мусульманскими, было много элементов древних верований. Широко отличали и праздники Ураза Байрама, Курбай Байрама, начало весны-Новруз и проведение первой ритуальной борозды. Возвращение скота и чабанов с зимних пастбищ было большим событием, которое отмечали всем селением: устраивали взаимное угощение, скачки, собачьи бои, состязания борцов, танцы, совершались жертвоприношения-резали баранов и раз-давали мясо. Особенно любимым был древний домусульманский праздник Сейран, богатый религиозно-магическими действами и спортивно-развлекательными играми. Проводили его летом до начала сенокоса и уборки хлебов на поляне священной горы три дня [3].

Ареал проживания цахуров. В Дагестане цахуры населяют высокогорную зону труднодоступный Рутульский район, верховья реки Самур (в прошлом эта территория называлась Горный магал), в Азербайджане-южные склоны Главного Кавказского хребта (предгорные и равнинные селения в Закатальском, Кахском и Белоканском районах); территория, заселённая цахурами, разделена на две части Главным Кавказским хребтом. Исторически-этнические и языковые данные показывают, что это одно исторически сложившееся этническое общество, занимавшее две естественно-географические зоны: обширные альпийские летние пастбища (высокогорье) и плодородные, тепловые южные склоны (предгорье), позволяющие сочетать скотоводство с земледелием, создать единое комплексное хозяйство[4] .

Язык: Цахурский язык входит в лезгинскую подгруппу нахско-дагестанской ветви кавказской семьи. Цахурский язык вместе с арчинским, хиналукским, удинским, лезгинским, табасаранским, агульским, рутульским, крызским и будухским составляют лезгинскую подгруппу дагестанских языков. Язык распадается на 3 диалекта: цахурско-сувагильский, гельмецкий и сабучинский.

В устном общении цахуры называют свой язык "йихъсум" -"язык йикийцев", а официально принятое название -"цlalхна миз" (цахурский язык). С древних времён ца-хуры имели свою письменность. По мнению ряда учёных, в основу древнего албан-ского письма был положен именно цахурский язык, и это письмо употреблялось на Кавказе до конца IX века.

Раньше цахурскую речь можно было услышать во всех поселениях цахуров. На сегодня есть селения, где этот язык полностью или частично утратил свои позиции. В Илису и Сарыбашах уже не говорят по-цахурски, а в Азгилли, Мухахе и Зарне говорят частично. В 1934 году профессором А. Н. Генко была создана письменность для цахурского языка на основе латинской графики. Впоследствии кавказовед и тюрколог С. А. Джафаров составил учебники для цахурских школ, и многие из них были изданы. С 1934 по 1938 года в школах преподавали на родном языке. Однако через 4 года препо-давание и издание книг на цахурском

[1] Там же.

[2] Эльмурзаев А.Д. О традиционной свадебной обрядности цахуров в XIX-начало XXв. //Вестник Челябинского государственного университета. № 11, с.14-16. 2012.

[3] Исламмагомедов А. И. Цахуры // Народы Дагестана, с.458-459.

[4] Исламмагомедов А. И. Указанный источник, с.445.

языке прекратилось. И только в 1990 году цахурская письменность была возрождена на кириллице. В Азербайджане в школах цахурский язык преподаётся на основе латинского алфавита[1].

Самоидентификация (цахурская трагедия)-одна из составляющих человека, связанная с ощущаемой им принадлежностью к определённому этносу или нации. До того как цахуры вошли в состав царской России 1830 году, они жили в демократически свободных общинах. Общины разделялись на сёла. Сёла цахуров, расположенные в Закатальском округе, остались в составе Азербайджанской ССР. Если в Дагестане 11 селений, то в Азербайджане расположены не меньше 16-ти селений. Цахуры, проживающие в Азербайджане, в подавляющем большинстве записываются азербайджанцами. Меняются без их ведома национальности в паспортах. Новорож-дённых цахуров в роддоме записывают как "азербайджанцев" и это при том, что родители у ребёнка цахуры. Тем самым цахуры теряют свою самоидентификацию. Происходит насильственная ассимиляция цахур. Поэтому численность цахуров особенно в Азербайджане катастрофически уменьшается. Распад СССР подвёл окончательную черту по разъединению цахуров как этноса.

В 80-х годах прошлого столетия в Кахский район Азербайджана добровольно переехали многие семьи из Горного Магала. Они работали в виноградарческом совхозе Агязы, на огромных территориях которого выращивали виноград. Во время перестройки Генсек и первый президент Советского Союза М.С. Горбачёв принял сухой закон, после этого эти виноградники были срублены до основания. Цахуры, компактно проживающие в двух переселенческих сёлах, остались без работы и без единого шанса на нормальное проживание.

Сохранение языка, культуры, и традиций находиться под большой угрозой из-за оттока сельского населения в большие города. Цахуры, проживающие за пределами своих селений, сливаются с другими народами России и Азербайджана, теряют самобытность и забывают свой родной язык. Главная причина негативных тенденций - большая безработица в населённых пунктах района. В сёлах для молодёжи никаких перспектив нет. Если в дальнейшем ситуация не измениться, то многие учителя также в скором времени останутся без работы. Если раньше в школьных классах сидели 20-25 учеников, то сегодня их количество составляет 3-5 человек. Резюмируя вышесказанное, следует подчеркнуть важнейшую роль институтов власти, которые должны способствовать удержанию оттока населения с гор в города республики и другие регионы страны, сохраняя народы в традиционных местах своего проживания[2].

* * *

В заключение отметим, что цахуры один их древнейших автохтонных народов Кавказа, которые имеют сложную, но в тоже время интересную историю, богатую культуру, интересные традиции. У цахуров есть свой язык, что немаловажно. Но увы по стечению обстоятельств (которые указаны выше) и времени будущее этого народа находится под большой угрозой, а если быть точнее, то цахурский народ на грани исчезновения. Я думаю, что люди должны знать об этом древнем народе. Люди дол-жны знать, учёные изучать и писать о них. Это поможет сохранить самоидентификацию цахуров. Не дать волю деградации, исчезновению культур, традиций и самого народа, ибо без цахурского народа Кавказ будет более бедным.

[1] Цахуры и цахурский язык. [Электронный ресурс]. http://www.shakasana.com/rus/(дата обращения: 07.03.2017).

[2] Керимова Г. Цахурская трагедия. Цахурский участок ФЛНКА в Дагестане. 2013. [Электронный ресурс]. http://flnka.ru/jizn_obshin/1757-cahurskaya-tragediya-kavkaza.html(дата обращения: 07.03.2017).

ՀՏԴ 94(470+571/323.1) *Պատմություն*

Ալավերդյան Նոննա
Գորիսի պետական համալսարան, մագիստրատուրա I կուրս
alaverdyan.nonna@mail.ru

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՀԱԿԱՍԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ ՌԽԴՍՀ-ՈՒՄ

Սույն հոդվածը քննում է ազգային քաղաքականությունը ՌԽԴՍՀ-ում: Խորհրդային իշխանությունները իրենց գոյության ողջ ընթացքում ազգային քաղաքականության հարցում թույլ տվեցին բազմաթիվ սխալներ: Այդպիսի քաղաքականության արդյունքում Խորհրդային Ռուսաստանի կազմում հայտնվեցին բազմաթիվ ազգեր, որոնց մի մասը ստացավ ինքնավար մարզի կամ հանրապետության կարգավիճակ, իսկ մյուս մասը՝ ոչ: Այդ ազգերը այդպես էլ չգնացին տվյալ հանրապետությունների հետ լիարժեք «ինտեգրման», այլ պահպանեցին իրենց ազգային դիմագիծը: Խորհրդային Միության տարիներին և դրա փլուզումից հետո ինքնավարությունները դարձան փաստացի չլուծված հակամարտությունների օջախներ:

Բանալի բառեր. Ազգային հարց, սահմանային-տարածքային բաժանում, զանգվածային արտաքսում, Հյուսիսային Կովկաս, ինքնավարություն, բաշկիրա-թաթարական հակասություններ:

Нонна Алавердян
ГГУ, магистратура 1-ый курс
alaverdyan.nonna@mail.ru

СПОРНЫЕ АСПЕКТЫ НАЦИОНАЛЬНОГО ВОПРОСА В РСФСР

Эта статья изучает национальную политику в РСФСР. Советская власть за всё своё существование в национальной политике допускала множество ошибок. В результате такой политики в составе Советской России остались множество наций, часть которых получила статус автономной республики или области, а другая - нет. Эти нации не „ интегрировались” полностью в данной республике, а сохранили свою национальную идентичность. В годы Советского Союза и после его разрушения автономии стали очагами фактически нерешённых конфликтов.

Ключевые слова: Национальный вопрос, погранично- территориальные распределения, массовая депортация, автономная, Северный Кавказ, Татаро-башкирский конфликт.

Nonna Alaverdyan
GSU, Master’s degree 1st year
alaverdyan.nonna@mail.ru

THE CONTRADICTORY ASPECTS OF NATIONAL ISSUE IN RSFSR

This article examines national policy of RSFSR. The Soviet government's national policy allowed a lot of mistakes throughout their existence. As a result of such policies many nations appeared in the part of Russia and some of them received the status of an autonomous republic or region, and another part didn't. These nations have never gone fully with the republics ''integration'' but retained their national identity. In Soviet Union and after its collapse the autonomous republics became unsolved conflicts centers.

Keywords: The national issue, border-territorial division, mass deportation, North Caucasus, autonomy, Tatar-Bashkir conflicts.

Հանգուցային բառեր՝ ազգային հարց, սահմանային-տարածքային բաժանում, զանգվածային արտաքսում, Հյուսիսային Կովկասի ազգային հարց, ինքնավար հանրապետություն, ինքնավար մարզ, բաշկիրա-թաթարական հակասություններ:

Խորհրդային Միությունը, որը բոլշևիկները համարում էին ազգային հարցի լուծման լավագույն ձևը, իրականում կենտրոնացված միաձույլ պետություն էր՝ կոմունիստական կուսակցության վերնախավի

դիկտատուրայով, որտեղ վճռականորեն և ամենայն խստությամբ ճնշվում էր այլախոհության յուրաքանչյուր դրսևորում: Խորհրդային գաղափարախոսությունն անդադար ընդգծում էր «սովետական ժողովուրդների» իրավահավասարությունը և անկախությունը: Այս քարոզչությունը պաշտպանվում էր հանրապետությունների ձևական և խորհրդանշական իրավունքներով, որոնք, իհարկե, իրականության հետ որևէ կապ չունեին:

Ուշադրության է արժանի խորհրդային իշխանությունների ազգային քաղաքականությունը և հատկապես սահմանային - տարածքային բաժանումները: Սահմանները բաժանվում էին տարբեր սկզբունքներով՝ շատ հաճախ հաշվի չառնելով էթնիկական պատմական սկզբունքները. մեկ այլ ազգով բնակեցված և պատմականորեն այդ ազգին պատկանող տարածքները տրվում էին այլ ազգի, ինչը հետագայում հանգեցրեց բարդ բախումների: Մյուս կողմից միութենական որոշ հանրապետությունների կազմում արհեստականորեն հայտնվեցին ինքնավար կազմավորումներ: Նրանք Խորհրդային Միության տարիներին այդպես էլ չգնացին տվյալ հանրապետությունների հետ լիարժեք «ինտեգրման» կամ ձուլման ճանապարհով, այլ պահպանեցին իրենց ազգային դիմագիծը: Խորհրդային Միության փլուզումից հետո ինքնավարությունները փաստացի չլուծված հակամարտությունների օջախներ դարձան, որոնք համապատասխան նախադրյալների առկայության պարագայում անպայման բորբոքվեցին և վերաճեցին միջէթնիկական բախումների ու պատերազմների:

Տրամաբանությունից դուրս նման քայլերը լարվածություն էին առաջ բերում ազգային հարաբերությունների ոլորտում:

Ազգային հարցը հատկապես լուրջ էր Խորհրդային Ռուսաստանում: Չնայած բոլշևիկների՝ ազգային ինքնորոշման մասին կոչերին՝ ԽՍՀՄ-ի կազմավորման ժամանակ Ռուսաստանի կազմում մնացին բազմաթիվ ազգեր, որոնց մի մասը ստացավ ինքնավար մարզի կամ հանրապետության կարգավիճակ, իսկ մյուս մասը՝ ոչ: Այդպիսի ազգերից են չեչենները, ինգուշները, օսերը (Հյուսիսային Օսիա), թաթարները, բաշկիրները, չուվաշները, դարգինները, ավարները, բույրաթները, կալմիկները, ալթայցիները, կամչադալները և այլ ազգեր: Այս ամենը պայթունավտանգ իրավիճակ էր ստեղծում: Ընդ որում, հակասություններ կային ոչ միայն ռուս ազգի հետ, այլ նաև մյուս ժողովուրդների միջև:

Խորհրդային Ռուսաստանի կազմում բարդ էր Հյուսիսային Կովկասի և հատկապես Դաղստանի ազգային հարցը, որտեղ ապրում էին շատ ազգեր (լակեր, կումիկներ, ավարներ, դարգիններ, լեզգիներ, թաբասարաներ և այլն), ու նրանցից որևէ մեկը մեծամասնություն չէր կազմում: Այս ազգերից յուրաքանչյուրը ցանկանում էր անկախություն ձեռք բերել և ստեղծել իր պետությունը: Այս իրավիճակը պայթունային էր, ու ազգային բախումներից խուսափել անհնար էր: Օրինակ՝ 1964 թ. սեպտեմբերի 29-ից մինչև հոկտեմբերի 3-ը ազգային հիմքի վրա Դաղստանի ԻԽՍՀ-ի Խասավյուրտ քաղաքում տեղի ունեցան չեչեն-լակյան բախումներ[1]: Այսպիսի բախումները միշտ էլ եղել են և հետագայում էլ շարունակվել են:

Հարցը բարդ էր նաև այն հանրապետություններում, որտեղ կային երկու տիտղոսակիր ազգեր (օր.՝ Կարաչայ-Չերքեզիա, Կաբարդինո-Բալկարիա): Կարաչայների և չերքեզների միավորումից ստեղծվեցին Կարաչայ - Չերքեզիայի, իսկ բալկարների ու կաբարդինների միավորումից՝ Կաբարդինո - Բալկարիայի ինքնավար մարզերը: 1920 թ. մարտին Տերսկի մարզը լուծարվեց և Չեչնիայի ու Ինգուշեթիայի շրջաններում առաջացան անկախ տարածքային կազմավորումներ: Սակայն մեկ տարի անց՝ 1921 թ. հունվարի 20-ին, Չեչնիան և Ինգուշեթիան, Կարաչայ – Չերքեզիան, Կաբարդինո - Բալկարիայի ու Հյուսիսային Օսեթիայի հետ միասին մտան Լեռնային Ինքնավար ԽՍՀ-ի կազմի մեջ, որն էլ իր հերթին մտնում էր ՌԽԴՍՀ-ի կազմի մեջ[2]: Այսպես, տարբեր ազգերի միավորեցին ինքնավար մարզերի, իսկ նրանց էլ՝ Ինքնավար ԽՍՀ-ի մեջ, ինչի արդյունքում միջէթնիկական հարաբերությունները չէին կարող լարված չլինել: Այս քաղաքականության նպատակը ազգային շարժումները ճնշելն էր: Այդ ազգերը այդպես էլ առանձին անկախություն ձեռք չբերեցին: Չնայած նրան, որ 1924 թ. նոյեմբերի 7-ին Կենտգործկոմի հրամանով Լեռնային Ինքնավար ԽՍՀ-ն լուծարվեց, և դրա փոխարեն ձևավորվեցին ինքնավար մարզեր Հյուսիսային Կովկասի երկրամասի կազմում, այնուամենայնիվ շարունակեց պահպանվել երկու կամ ավելի ազգերի միավորումից առաջացած հանրապետությունների գոյությունը: Պահպանվեցին Կարաչայ - Չերքեզիան, Կաբարդինո - Բալկարիան, Դաղստանը (որտեղ բազմաթիվ ազգեր էին ապրում): 1926 թ. ապրիլի 26-ին

[1] Козлов В., Неизвестный СССР. Противостояние народа и власти 1953—1985, М., 2006, ст 415-419.

[2] Полное собрание законодательства СССР, Сборники документов по хронологии с 1917г по 1992г, Сборник 1, N 822, Декрет ВЦИК от 20.01.1921 "Об Автономной Горской Социалистической Советской Республике".

Կենտգործկոմը Կարաչայ - Չերքեզիայի ԻՄ-ը բաժանեց Կարաչայի Ինքնավար Մարզի և Չերքեզիայի Ինքնավար Շրջանի: 1934 թ. Չեչենական Ինքնավար Մարզը միավորվեց Ինգուշեթիայի Ինքնավար Մարզի հետ, և ստեղծվեց Չեչեն - Ինգուշական Ինքնավար Մարզը, որը 1936 թ. վերածվեց Չեչեն - Ինգուշական Ինքնավար ԽՍՀ-ի: Այն գոյություն ունեցավ մինչև 1944 թ., երբ չեչեններն ու ինգուշները արտաքսվեցին:[1]

Ազգային հարցի սրվածության և լարվածության պատճառ դարձավ խորհրդային իշխանությունների կողմից իրականացված մեկ այլ քաղաքականություն, որը ողբերգությունների ու միջէթնիկական լարվածության պատճառ դարձավ: 1943 - 1944 թթ. իրենց երկրներից արտաքսվեցին չեչենների, ինգուշների, կարաչայների, բալկարների, կալմիկների, Ղրիմի թաթարների ու մի շարք այլ ազգերի մեծ մասը: Այս ազգերը մեղադրվում էին գերմանական զորքերի հետ համագործակցելու մեջ, և որպես ռեպրեսիվ միջոց ընտրվեց այդ ժողովուրդների տեղափոխումը Միջին Ասիայի հանրապետություններ, մասնավորապես Ղազախստան և Ղրղզստան, ինչպես նաև Սիբիր, որի արդյունքում հազարավոր մարդիկ տեղահանության ժամանակ մահացան, տասնյակ հազարավոր մարդիկ թողեցին իրենց հայրենիքը:[2] Ընդ որում, պատմաբան Ալեքսանդր Ստատիևի կարծիքով, այս ազգերի տեղահանության իրական պատճառը ոչ թե նրանց համագործակցությունն էր գերմանացիների հետ, այլ շատ դեպքերում մինչև պատերազմը եղած կոնֆլիկտները, որ գոյություն ունեին այդ ազգերի ներկայացուցիչների և խորհրդային իշխանությունների միջև (Ներքին գործերի նախարարությանը չհաջողվեց այդպես էլ գտնել փաստաթղթեր, որոնք կվկայեին համագործակցության մասին)[3]:

Այս տեղահանությունները ազգային բավական պայթունավտանգ իրավիճակ ստեղծեցին այն երկրներում, որտեղ նրանք վերաբնակվեցին: Նրանց և տեղաբնիկ ժողովուրդների միջև ազգային հակասություններ առաջացան, որն էլ իր հերթին ողբերգական իրավիճակ ստեղծեց: Այդ երկրներից ամենաբարդ վիճակում հայտնվել էր հատկապես Ղազախստանը, որտեղ վերաբնակություն էր հաստատել տեղահանված ազգերի մեծ մասը: Այդպիսի կոնֆլիկներից էր 1950 թ. հունիսի 16-18-ին Արևելյան Ղազախստանում կազմակերպված չեչենների կոտորածը: 1951 թ. ապրիլի 10-ի ղազախա - չեչենական հակամարտության, հետևանքով էլ 20 (կամ 21) չեչեն մահացավ:

Ազգային հակասությունները շարունակվում են նաև հետագայում՝ երբեմն երբեմն վերաճելով լուրջ հակամարտության: Այդպիսին էր 1989 թ. հունիսի 17-28-ին Նովի - Ուզենում ղազախների և Հյուսիսային Կովկասից տեղահանվածների միջև տեղի ունեցած բախումը[4]: Այն շարունակվեց նաև հետագայում՝ ԽՍՀՄ փլուզումից հետո (2007 թ. մարտի 17-19-ին տեղի ունեցավ ղազախա - չեչենական բախումը Ալմա Աթայում):

Ինչ վերաբերում է այդ ազգերի տարածքներին, այդ տարածքային միավորները վերացվեցին, իսկ տարածքը հանձնվեց այլ ազգերի: ՉԻԽՍՀ վերացվեց, իսկ նրա տարածքը բաժանվեց Հյուսիսային Օսեթիայի, Դաղստանի ԻԽՍՀ-ի, Վրաստանի ԽՍՀ-ի և Ստավրոպոլի երկրամասի միջև, իսկ մնացած մասում ձևավորվեց Գրոզնու մարզը:[5]

Նույնպիսի ճակատագիր ունեցան կարաչայները. երկրի տարածքը բաժանվեց, հարավային մասն անցավ Վրաստանին (Կլուխորի շրջան), իսկ մեծ մասը անցավ Ստավրոպոլի երկրամասին: Կալմիկյան ԻԽՍՀ-ն ևս նման ճակատագրի արժանացավ. նրա տարածքը մտավ Աստրախանի մարզի մեջ:[6] Ինչ վերաբերում է Կաբարդինո - Բալկարիայի ԻԽՍՀ-ին, բալկարների տեղահանության պատճառով վերանվանվեց Կաբարդինոյի ԻԽՍՀ-ի:[7]

Խորհրդային իշխանությունները Ստալինի մահից հետո՝ 1950-ական թթ. երկրորդ կեսին թույլատրեցին այդ ազգերին վերադառնալ իրենց հայրենիքը: 1957 թ. փետրվարի 11-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրմանագրով վերականգնվում են բալկարների, չեչենների,

[1] Сборник законов СССР и Указов Президиума Верховного Совета СССР, 1938–1958 гг. ,М., 1959, С. 54.

[2] Архив Алекцандра Н. Якова, Документ № 3.76, http://www.alexanderyakovlev.org/fond/issues-doc/1022096

[3] Alexander Statiev. The Nature of Anti-Soviet Armed Resistance, 1942–44: The North Caucasus, the Kalmyk Autonomous Republic, and Crimea // Kritika: Explorations in Russian and Eurasian History. — Volume 6. — Number 2 (Spring 2005, New Series). — PP. 317—318.

[4] Осьмачко С. Г., Политическое и социально-экономическое развитие СССР, Российской Федерации, 1985-1999 гг: монография, Изд-во ЯГТУ, 2003, ст. 119.

[5] История сталинского ГУЛАГа: В 6 т. Т. 1: Массовые репрессии в СССР / Отв. ред. Н. Верт, С.В. Мироненко; Отв. сост. И.А. Зюзина. М.: РОССПЭН, 2004. С. 491–492. № 164.

[6] Նույն տեղում, էջ 476–477. № 151.

[7] Նույն տեղում, էջ 483–485. № 157,№ 159,

ինգուշների, կալմիկների, կարաչայների ազգային ինքնավարությունները[1]: 1957 թ. Չեչեն - Ինգուշական Ինքնավար ԽՍՀ-ն վերականգնվում է, բայց արդեն ուրիշ սահմաններով: Նրա մի մասը՝ Պրիգորոդի շրջանը, այդպես էլ Հյուսիսային Օսեթիայի տարածքից չհանվեց ու չմիացվեց այդ պետությանը: Որպես փոխհատուցում ՉԻԻԽՍՀ-ին միացան Նաուրսկի և Շելկովսկի շրջանները, որոնք մինչ այդ մտնում էին Ստավրոպոլի երկրամասի մեջ և բնակեցված էին մեծամասամբ ռուսներով: Չեչեններին և ինգուշներին թույլատրվեց վերադառնալ իրենց երկիրը: Նույն թվականին վերականգնվեց նաև Կարաչայ - Չերքեզիայի ԻՄ-ն:

Այսպես, 1950-ական թթ. երկրորդ կեսին բավական մեծ թվով մարդիկ վերադարձան իրենց հայրենիքը: Սակայն խորհրդային իշխանությունների այս քաղաքականությունը ոչ թե հարթեց իրավիճակը, այլ էլ ավելի սրեց ազգային հարաբերությունները: Բանն այն է, որ այն մարդիկ որոնք վերադարձան հայրենք, չկարողացան ապրել իրենց տներում, որոնք թողել էին: Հիշենք, որ այդ ազգերի աքսորումից հետո նրանց պետական կազմավորումները վերացվել էին, իսկ տարածքները տրվել հարևան պետական կազմավորումներին, ինչի արդյունքում այստեղ արդեն ուրիշ ազգեր էին վերաբնակվել: Այսպես օրինակ, ԽՍՀՄ Ներքին գործերի նախարար Ն.Պ Դուդորովը 1957 թ. փետրվարի 25-ին ԽՄԿԿ կենտկոմին և ԽՍՀՄ նախարարների խորհրդին ուղղած գաղտնի զեկույցում նշում է. «Ներքին գործերի նախարարությունը հայտնում է, որ չեչեններից շատերը, որոնք ժամանել են Չեչենա - Ինգուշական Ինքնավար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն, համառորեն ձգտում են տեղավորվել այն բնակավայրերում ու նույնիսկ տներում, որտեղ նրանք ապրել են նախքան տեղահանությունը: Սրա արդյունքում լուրջ հակասություն է առաջացել նրանց և տեղացիների՝ դարգինների ու ավարների միջև»:[2] Այս ամենը հանգեցրեց նրան, որ համատարած բախումներ տեղի ունենան Գրոզնիում, 1958 թ. ապրիլի 23-31-ը: Այն բացառապես էթնիկական լարվածության հետևանք էր:

ԽՍՀՄ-ի անկումից հետո տարածաշրջանում լուրջ կոնֆլիկտներ ի հայտ եկան: Դրանցից էր 1992 թ. տեղի ունեցած ինգուշ - օսեթական կոնֆլիկտը Պրիգորոդի շրջանի համար, ինչպես նաև 1994-96 թթ. Չեչնիայի պատերազմը:

ՌԽԴՍՀ-ում ազգային լարված շրջաններից էր նաև Բաշկիրիայի և Թաթարստանի ԻԽՍՀ-ները: Սրա հիմնական պատճառը տարածքային վեճն էր: 1919 թ. մարտի 23-ին ձևավորվեց Բաշկիրայի ԻԽՍՀ-ն ՌԽՖՍՀ-ի կազմում, որը առաջին ինքնավար խորհրդային սոցիալիստական հանրապետությունն էր: 1919 թ. սկզբին քաղաքացիական պատերազմի ժամանակ խորհրդային կառավարությունը գնաց դաշինքի Բաշկիրիայի քաղաքական և զինվորական գործիչների հետ, որոնք Սիբիրում Ալեքսանդր Կոլչակի ղեկավարած հակահեղափոխականների ճամբարում էին եղել: Այս դաշինքի իմաստն այն էր, որ բաշկիրներն անցնելու էին կարմիր բանակի կողմը, և իրենց զենքը ուղղելու էին Կոլչակի դեմ: Դրա փոխարեն խորհրդային կառավորությունը խոստանում էր ճանաչել Բաշկորտոստանը (Ուրալյան լեռների տարածք)՝ որպես ինքնավար պետություն ՌՍՖՍՀ-ի կազմում: 1920 թ. մայիսի 27-ին ձևավորվեց Թաթարստանի ԻԽՍՀ-ն:[3] Սակայն երկու երկրների միջև սահմանները դեռևս որոշված չէին: Վիճելի էին Բելեբևսկի, Բիրսկի և Ուֆայի շրջանները: Այստեղ բնակչության մեծ մասը թաթարներ էին: Թաթար բնակչությունը բազմիցս դիմել է Կենտրոնական կառավարությանը՝ միանալու Թաթարստանի Ինքնավար ԽՍՀ-ին: Ինչպես հայտնի է Համառուսաստանյան կենտգործկոմի և ժողկոմխորհի որոշման համձայն Ուֆայի, Բիրսկի և Բելեբևսկի շրջաններում պետք է հանրաքվե անցկացվեր, և այդ տարածքները պետք է անցնեին Թաթարստանին: Բայց Ուֆայի մարզային կոմիտեն հրաժարվում է հանրաքվե անցկացնել: Ինչո՞ւ էր Ուֆայի մարզային կոմիտեն եռանդով պայքարում հանրաքվեի դեմ: Պատճառն այն էր, որ այդ շրջաններում թաթարները կազմում էին բնակչության մեծամասնությունը (65-70%): Եվ եթե այն անցկացնեին, ապա այդ տարածքները կանցնեին Թաթարստանին: 1920 թ. սեպտեմբերի 1-ին պատրաստվում է հրամանագիր Թաթարստանին այդ տարածքները միացնելու աննպատակահարմարության մասին: Մասնավորապես պատճառաբանվում էր, որ Բիրսկի և Բելեբևսկի շրջանները Թաթարստանի հետ տնտեսական սերտ կապեր չունեն: 1922 թ. հունիսի 14-ին

[1] Полное собрание законодательства СССР, Сборники документов по хронологии с 1917г по 1992г, Сборник 3,N 1174, Закон СССР от 11.02.1957 "Об утверждении Указов Президиума Верховного Совета СССР о восстановлении национальной автономии балкарского, чеченского, ингушского, калмыцкого и карачаевского народов".

[2]Зенькович Н.А. Собрание сочинений. Том 4. Границы. Споры. Обиды – М., 2003, ст 513.

[3]Полное собрание законодательства, СССР Сборники документов по хронологии с 1917г по 1992г ,Сборник 1,N661, Декрет ВЦИК от 27.05.1920 "О народном образовании в Татарской Республике (Положение)".

Համառուսաստանյան կենտգործկոմի որոշմամբ Ուֆայի մարզի երեք շրջաններ Բելեբեևսկի, Բիրսկի և Ուֆայի շրջաններն անցնում են Բաշկիրային: Հետաքրքրական է, որ այս առումով ռուս պատմաբան Ս. Զենկովսկին ասում էր, թե այս դեկրետը մեծ վնաս է հասցնում Բաշկիրիայի Ինքնավար Հանրապետությանը:[1] Փաստորեն թաթարներով բնակեցված տարածքն անցավ Բաշկիրիային: Այս հանգամանքը բավական բարդացնում էր իրավիճակը երկու ազգերի միջև: Այս հարցը արդիական է նաև մեր օրերում և լարվածություն է մտցնում երկու ժողովուրդների հարաբերությունների մեջ:

Ինչպես տեսնում ենք, Խորհրդային Ռուսաստանում ազգամիջյան հարաբերությունները բավական սրված էին:

Այս ամենը ցույց է տալիս, որ խորհրդային իշխանությունների հռչակած՝ ազգերի ինքնորոշման իրավունքը խաբկանք էր: ԽՍՀՄ կազմում ազգերի ինքնիշխանությունը ևս իրական հիմքերի վրա չէր: Ազգային պետությունների սահմանները գծվում և վերագծվում էին՝ հաշվի առնելով ոչ թե էթնիկական գործոնն ու պատմական փաստերը, այլ առաջնորդվելով կուսակցական շահերով ու առանձին անհատների ցանկությունով:

Ազգային հարցում նման քաղաքականությունը պայթունավտանգ իրավիճակ ստեղծեց և բազմաթիվ ողբերգական իրադարձությունների պատճառ դարձավ հետխորհրդային ժամանակաշրջանում՝ առ այսօր:

Գրականություն

1. Зенькович Н.А. Собрание сочинений. Том 4. Границы. Споры. Обиды – М., 2003.
2. История сталинского ГУЛАГа: В 6 т. Т. 1: Массовые репрессии в СССР/Отв. ред. Н. Верт, С.В. Мироненко; Отв. сост. И.А. Зюзина. М.: РОССПЭН, 2004.
3. Козлов В., Неизвестный СССР. Противостояние народа и власти 1953—1985, М., 2006.
4. Краткая справка об административно-территориальных изменениях Ставропольского края за 1920-1992 гг.
5. Осьмачко С. Г., Политическое и социально-экономическое развитие СССР, Российской Федерации, 1985-1999 гг: монография, Изд-во ЯГТУ, 2003.
6. Полное собрание законодательства СССР, Сборники документов по хронологии с 1917г по 1992г, Сборник 1, Сборник 3
7. Сборник законов СССР и Указов Президиума Верховного Совета СССР, 1938–1958 гг. М., 1959.
8. Архив Алекцандра Н. Якова, Документ № 3.76, http://www.alexanderyakovlev.org/fond/issues-doc/1022096
9. Татаро–башкирский конфликт и пути его разрешения, Источник - http://tatar-tribun.ru/tribuna/tataro-%E2%80%93bashkirskij-konflikt-i-puti-ego-razresheniya.html
10. Alexander Statiev. The Nature of Anti-Soviet Armed Resistance, 1942–44: The North Caucasus, the Kalmyk Autonomous Republic, and Crimea // Kritika: Explorations in Russian and Eurasian History. — Volume 6. — Number 2 (Spring 2005, New Series).

[1] Татаро–башкирский конфликт и пути его разрешения, Источник - http://tatar-tribun.ru/tribuna/tataro-%E2%80%93bashkirskij-konflikt-i-puti-ego-razresheniya.html

ՀՏԴ 94(39/=1=8) *Պատմություն*

Նինա Հայրապետյան
Մեսրոպ Մաշտոց համալսարան (ք.Ստեփանակերտ), 1-ին կուրս
ninka200699@mail.ru

ՈՐՈՇ ԱՍՊԵԿՏՆԵՐ ՈՒԴԻՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ և ՄՇԱԿՈՒՅԹԻՑ (ԽՆԴՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ)

Հոդվածում քննարկվում է ներկայիս Ադրբեջանի տարածքում ապրող ուդի ժողովրդի պատմությունը և մշակույթը: Հոդվածը ուդիների խնդրի հետազոտության միայն սկիզբն է:

Բանալի բառեր: ուդիներ, ուդիների մշակույթը, կենցաղ, ավանդույթներ, սովորույթներ

Нина Айрапетян
Университет Месроп Маштоц (г. Степанакерт), 1-ый курс
ninka200699@mail.ru

НЕКОТОРЫЕ АСПЕКТЫ ИСТОРИИ И КУЛЬТУРЫ УДИНСКОГО НАРОДА (ПОСТАНОВКА ПРОБЛЕМЫ)

В статье рассматривается история и культура удинского народа, проживающего на территории современного Азербайджана. Статья является всего лишь началом исследования проблемы удинского народа.

Ключевые слова: удины, культура удинов, быт, традиции, обычаи

Nina Hayrapetian
Mesrop Mashtots University (Stepanakert), 1st year

SOME ASPECTS OF HISTORY AND CULTURE OF UDI PEOPLE (FORMULATION OF THE PROBLEM)

The article views the history and culture the Udi people living on the territory of the present Republic of Azerbaijan. This article is just the beginning of the research on the issues of Udi people.

Keywords: udi, udi culture, lifestyle, traditions, customs

Население нынешнего государственного образования под названием Азербайджан состоит из более чем 80 национальностей: удины, талыши, лезгины, курды и так далее. Однако с каждым годом их число уменьшается, и причиной этому не только эмиграция.

Отслеживание изменений в переписях населения Азербайджана – увлекательное занятие. В них коренные этносы то исчезают из списка проживающих в Азербайджане народов, то так же внезапно появляются в нем. В первой половине XX века в мире никому не было известно о такой национальности как азербайджанцы, а уже в мае 1918года при самопровозглашении Азербайджанской Демократической республики тюркские племена составляли в ней меньшинство.

Однако уже с первых лет установления советской власти в этой республике начали происходить странные метаморфозы. Например, согласно сельскохозяйственной переписи населения Азербайджана 1921 года, подавляющее большинство населения Апшеронского полуострова (без учета Баку) составляли ираноязычные таты: пятьдесят две тысячи сто восемьдесят восемь татов против пяти тысяч восьмисот шестидесяти трех азербайджанских тюрок и шестидесяти восьми русских. Интересно, что общее количество татов по сельскохозяйственной переписи Азербайджана (без учета городского населения) по данным 1921 года составляло сто одна тысяча пятьсот пятьдесят человек, или 7,4% населения республики. Но уже в 1923 году практически все они были указаны в качестве «азербайджанских тюрок»[1]. В соответствии с материалами переписи 1999года 90,6% населения республики составляли

[1] Мелик-Шахназарян Л. Азербайджан. Толерантные жонглеры от статистики. : [Электронный ресурс].http://fca.narod.ru/forum-kavkaza-perepisi-v-azerbayjane.html (дата обращения: 05.03.2017).

азербайджанцы, а 9,4%- представители свыше 80-ти национальностей[1]. В данной статье мы рассмотрим некоторые аспекты истории, культуры и традиций одной из этих национальностей – удинов. Народ, который смог донести до наших дней свою своеобразность.

К удинам интерес научного мира стал проявляться в начале XIXв. С тех пор появилось более 150 работ по религии, этнографии и истории, истории языка, традициям и обычаям удин.

Кто такие удины и какова история их этнического бытия? Удины (самоназвание уди, ути) являются древнейшими жителями Кавказа и известны только в историко-культурном пространстве Кавказской Албании. Они принадлежат к числу 26 албанских племен, создавших албанское государство(III в. до н.э. – VII в. н.э.).

Первые достоверные сведения об удинах появились 2500 лет тому назад. О предках этого племени – утиях рассказал в своей «Истории» Геродот. Они упомянуты в «Географии» Страбона при описании Каспийского моря и Кавказской Албании. Этноним же «удины» впервые появляется в «Естественной истории» римского автора I в.н.э. Плиния Старшего. В «Географии» эллинского писателя II в.н.э. Птолемея сообщается, что у Каспийского моря живут различные племена, в том числе уды.

Начиная с V в. н. э. об удинах часто упоминают армяноязычные источники. Более обширные сведения о них имеются в «Истории албан» местного автора Моисея Каланкатваци (в переводе на удинский язык Кала-“большой”, Кату-“поселение”) (VII-VIII вв.). По их сведениям, еще за несколько столетий до новой эры удины вместе с другими этносами создали на территории современной Азербайджанской Республики свое государство – Кавказскую Албанию (не путать с современной Албанией на Балканах) и играли в нем главенствующую роль. Не случайно обе столицы Кавказской Албании – Кабала и Партав (Барда) находились на землях исторического проживания удин. Удины были расселены на достаточно обширных территориях – по левобережью и правобережью Куры. Одна из областей Кавказской Албании одноименно называлась Утия (в армянских источниках- Утик; в греческих источниках- Отена). Область Ути, заселенная утиями/удинами, занимала территорию от Каспийского моря до Главного Кавказского хребта, по левобережью и правобережью Куры, вплоть до реки Алазань.

Таким образом, удины были одним из народов-создателей и основных этносов древнего государства Кавказская Албания. Поэтому сама история удинского народа и дальнейшая его судьба оказались неразрывно связанными с ней. Кавказская Албания сложилась уже ко II в. до н.э. и существовала как единое государство на основе объединения различных племен и под властью одного царя. Начиная с I в. до н.э. она вынуждена была отражать постоянные атаки со стороны великих империй: Рима, Персии, хазарского каганата, Арабского халифата. Как пишет Р.А. Данакари, **«стратегическое положение Закавказья, в том числе и территории Азербайджана, на протяжении всей всемирной истории превратило их в арену, поле бесконечных ожесточенных битв, сражений, войн между великими империями Востока и Запада»**[2]**.** В этой ситуации было непросто сохранить самостоятельность государства и не пасть под ударами завоевательных походов великих держав.

После арабского завоевания Кавказской Албании в VII в. был положен конец единству государства, прерван нормальный ход его развития. Это стало переломным моментом в истории, оказавшимся губительным для страны и ее народов. С этого периода начинается процесс деэтнизации местных племен, в том числе и удин, территория проживания и численность которых постепенно начинает сокращаться. Однако, несмотря на все эти процессы, подавляющее большинство удин еще долго сохраняло свое самосознание, язык, культуру и ареал обитания. Еще в XVIII в. многочисленные удинские поселения имелись в Шеки-Габалинской зоне – в левобережной части Куры, а также в зоне Арцаха, Товуза, Гянджи – в правобережной части Куры[3].

Однако азербайджанский автор Г.А. Гейбуллаев в своей работе “К этногенезу азербайджанцев” говорит о том, что происхождение утиев (удинов) в [Кавказской Албании Н.А.] пока окончательно не выяснено[4]. Это мнение считается неприемлемым.

[1] Национальный состав населения Азербайджана. [Электронный ресурс]. http://www.azerbaijans.com/content_439_ru.html (дата обращения: 05.03.2017).

[2] Данакари Р.А. Удины как этническая группа: факторы развития и межнациональные отношения в Российской Федерации // Научный вестник Волгоградской академии государственной службы. Серия: Политология и социология. 2011г. Т.1 с. 82.

[3] Харатян Г.С. Этноконфессиональные процессы в зоне Шеки-Кабала(XVIII-XXвв.) // Научная мысль Кавказа.2003г. № 3. с. 80-89.

[4] Гейбуллаев Г.А. К этногенезу азербайджанцев(историко–этнографическое исследование) Баку. из-во «Элм». 1991г. с. 82.

В начале XIX века с присоединением северного Азербайджана к Российской империи начинается новый этап в истории удин[1]. К тому времени наиболее компактными остаются удинские села Варташен (в дальнейшем стал райцентром, ныне переименован властями Азербайджана в Огузский район) и Нидж. Этот период можно рассматривать как время относительного спокойствия и социально-экономического подъема родного края[2]. В Варташене и Нидже открываются школы, строятся храмы, в том числе православные, строятся фабрики, развивается сельское хозяйство, особенно садоводство, появляются новые ремесла. Варташен и Нидж были одними из самых зажиточных сел в округе.

Одним из самых драматичных периодов в современной истории удин оказался XX век. В этот период можно проследить несколько волн эмиграции удин со своих исконных земель. По разным сведениям, в начале прошлого века в Российской империи насчитывалось десять тысяч удин. На такие данные указывает А. Арутинов в статье «Удины», опубликованной в 1905 году в Русском антропологическом журнале со ссылкой на сведения «Кавказского календаря»[3]. Однако уже по переписи 1926 года в СССР насчитывалось 2500 удин, т.е. численность удин за короткий промежуток времени сократилась в несколько раз. Такие сокращения численности стали возможны после трагических событий Первой мировой войны и начала иностранной интервенции в Закавказье, а затем и Гражданской войны в России.

В 1920-1922 гг. часть удин из села Варташен, православного вероисповедания, переселилась в Грузию. На новом месте они основали село Зинобиани, позже его переименовали в Октомбери. В настоящее время селу вернули исконное название Зинобиани. В результате политики «грузинизации», сильного влияния грузинского языка и культуры среди удин, идут интенсивные процессы ассимиляции, сегодня молодежь практически не знает родного языка. По переписи 1970 года численность удин в Грузии составляла 800 человек. Однако новая перепись, проведенная в 1989 году, показала, что их осталось всего 89 человек, что, наверное, не совсем соответствует действительности. По сведениям сообщества удин Грузии, в настоящее время общее количество удин в Грузии составляет около 1000 человек[4].

Со второй половины XX века у удин началась новая волна миграции. Часть русскоязычной молодежи после окончания средней школы стала уезжать учиться и работать в разные города страны, чтобы приобщаться к достижениям русской и мировой науки, культуры, техники. В это время основными местами проживания удин продолжают оставаться села Нидж, Варташен, Мирзабейли, Солтан-Нуха и Октомбери в Грузии. Однако распад Советского Союза, начало армяно-азербайджанского конфликта и последующее ухудшение социально-экономического положения заставили огромное количество удин покинуть родные места. Большинство из покинувших родные места оказалось в России. В результате, в настоящее время удин в Российской Федерации проживает больше, чем в Азербайджане. По данным Госкомитета по статистике Азербайджанской Республики, за 2009 год в Азербайджане зафиксировано 3800 удин[5]. Как верно подметил Р. А. Данакари, «эмиграция в Российскую Федерацию в первую очередь была связана с тем, что Россия признала себя правопреемником СССР, всегда была содружеством различных народов, культур и цивилизаций, многонациональным и поликонфессиональным государством»[6].

Переселению в Россию способствовал тот фактор, что удины учились в русскоязычной школе. Они с детства многоязычны, учатся в русских школах, знакомы с русской литературой и культурой. Все это значительно облегчило процесс адаптации переселенцев к новой социальной, культурной, языковой и духовной среде. Естественно, что огромное значение имели материальные, экономические факторы, хотя немаловажны причины культурно-языкового и идеологического характера (религия, язык, культура, традиции и пр.).

Как уже было отмечено, процесс миграции начался еще в советский период. Многие молодые люди уезжали учиться в Москву, Ленинград, Свердловск, Ростов, Таганрог и другие города страны, а после окончания институтов, техникумов и профтехучилищ они оставались там жить и работать. По Всесоюзной переписи населения 1989 года только в России проживало 1102 удина. Это были первые

[1] Акты, собранные Кавказской археологической комиссией. Тифлис, 1874. Т. VI. Ч.1. с.957.
[2] Бежанов М.Краткие сведения о селе Варташене и его жителях // Сборник материалов для описания местностей и племен кавказа. Тифлис, 1892. с.213-262.
[3] Арутинов А.Удины // Русский антропологический журнал. 1905г. № 1-2. с. 73-96.
[4] Численность удин в Грузии [Электронный ресурс]. URL: http://www.udi.ge (дата обращения: 05.03.2017).
[5] Этнический состав Азербайджана [Электронный ресурс]. URL: http://pop-stat.mashke.org/azerbaijan-ethnic2009.htm (дата обращения: 05.03.2017).
[6] Харатян Г.С. Этноконфессиональные процессы в зоне Шеки-Кабала(XVIII-XXвв.), с. 88.

группы удин, укоренившиеся в стране, именно они впоследствии стали решающей силой и опорой для очередной волны эмиграции.

В настоящее время большая часть российских удин проживает на Юге России: в Ростовской, Волгоградской и Астраханской областях, Краснодарском и Ставропольском краях[1]. По Всероссийской переписи 2002 года гражданами России являлись 3721 удин[2]. Данные Росстата о национальном составе, в частности, удин, проживающих в регионах Юга России, следующие:

1. **Ростовская область – 1573 человека;**
2. **Краснодарский край – 809 человек;**
3. **Ставропольский край – 336 человек;**
4. **Волгоградская область – 224 человека;**
5. **Астраханская область – 33 человека.**

Недавно появились новые данные, результаты Всероссийской переписи населения 2010 года. Гражданами Российской Федерации являются 4267 удин. Конкретные сведения по регионам в настоящее время не обнародованы. По-прежнему наиболее многочисленные группы удин проживают в краях и областях Юга России. Это подтверждают и удинские общественные организации, действующие на Юге России[3].

Достаточно подробные сведения собраны в региональной Общественной организации содействия в сохранении удинского языка, культуры, традиции «Общины удин Ростовской области». В них отмечается, что крупным местом компактного проживания удин является город Шахты, где проживает 170 семей, в количестве более 600 человек. Несмотря на то, что удины одними из первых приехали в город Таганрог, сегодня здесь насчитывается всего 100 семей, общее количество людей составляет более 350 человек. В южной столице России, Ростове-на-Дону, живут около 40 семей, в Азовском районе области – более 50 семей, причем здесь в основном проживают удины, переселившиеся из с. Мирзабейли. Кроме того, большие группы удин дисперсно живут в Сальском, Неклиновском, Матвей-Курганинском, Мясниковском районах Ростовской области.

Собраны материалы и по Краснодарскому краю. Согласно сведениям Краснодарской краевой общественной организации «Культурный центр удин», наибольшее количество наших земляков, более 400 человек, проживает в самом городе Краснодар. Удины живут также в Динском, Кущевском, Тбилисском, Ленинградском районах. В двух последних районах – преимущественно люди, эмигрировавшие из Варташена (ныне Огуз). В Волгоградской области удины преимущественно живут в самом Волгограде и в сельском поселении Дубовый Овраг Светлоярского района. Численность удин там составляет около 350 человек. В Ставропольском крае удины проживают в Минеральных водах, Пятигорске, много переселенцев в Буденновском районе. Здесь удин более 400 человек. Около 50 удин проживает в Астрахани.

Достаточно многочисленная община удин проживает в Республике Казахстан , а также в Украине – Донецке, Харькове, Горловке.

Удинский язык (самоназвание удин муз, udin muz) входит в лезгинскую группу нахско-дагестанских языков, занимая в ней периферийное положение (отделился раньше всех). Делится на два диалекта – ниджский и варташенский. Степень их расхождения не препятствует их взаимопониманию, хотя каждый диалект развивается самостоятельно. Удинский язык используется только в быту. В качестве официального языка удины используют язык той страны, в которой проживают. Удинский язык занимает достаточно уникальное положение среди языков мира. Уникальной является также удинская (древнеалбанская) письменность. С одной стороны, письменность у удин существовала еще с V века, когда армянским монахом и просветителем Месропом Маштоцом был изобретен алфавит Кавказской Албании, ставший в один ряд с древнейшими алфавитами Кавказа – грузинским и армянским. Эта письменность (кавказо-албанская) отражала язык, который современные исследователи однозначно квалифицируют как древнеудинский. С другой стороны, современный удинский язык, даже в новейших справочниках по языкам Кавказа, характеризуется как бесписьменный. В настоящее время создана новая

[1] Дабаков В.В. Удины юга России: политические и этнические аспекты. 2016г. Астраханский государственный университет. [Электронный ресурс]. URL: http://www.gramota.net/materials/3/2013/11-1/10.html (дата обращения: 05.03.2017).

[2] Всероссийская перепись населения 2002 года. Национальный состав населения [Электронный ресурс]. URL: http://www.perepis2002.ru/index.html?id=17 (дата обращения: 05.03.2017).

[3] Перепись удин [Электронный ресурс]. URL: http://www.udi-center.org/perepis-udin (дата обращения: 05.03.2017).

удинская письменность – в Азербайджане на латинской основе, а в России – на основе кириллицы. Созданный в V веке албанский алфавит представлял собой греческий вариант одного из несемиотических ответвлений арамейской графической основы. Алфавит состоял из 52 букв. В дальнейшем этот алфавит получил широкое применение: на албанский язык были переведены важнейшие библейские тексты, на нем велась церковная служба, велись государственное дело и переписка, готовились литературные труды. После арабского нашествия, разрушения государственности и уничтожения культурных памятников, постепенно перестала использоваться и албанская письменность.

По вероисповеданию удины - христиане.[1]Христианскую веру приняли в начале новой эры, во времена могущества Кавказской Албании. Распространение христианства среди удин связывают с событиями I-II веков, когда апостол Елисей рукоположенный апостолом Иаковым - первым Иерусалимским патриархом, построил первую церковь в Гисе (предположительно современный Киш в Шекинском районе). Святой Елисей был учеником апостола Фаддея, одного из семидесяти учеников Иисуса Христа. Албанская Церковь всегда считала его своим апостолом и покровителем. Многие удинские храмы посвящены его имени.

Следующий этап распространения христианства относится к началу IV века, когда в 313 году албанский царь Урнаир принимает христианство в качестве государственной религии, которая была в каноническом единстве с Армянской апостольской церковью и предстоятель Албанской церкви утверждался армянским католикосом. В дальнейшем в Кавказской Албании складывается уже своя Автокефальная (самостоятельная) Церковь с достаточным числом епископских кафедр, со своим монашеским институтом, богослужением, догматикой.

В IV веке церковным центром был город Кабала, а с V в. – Барда. Ко времени Алуэнского собора (488 г. или 493 г.), созванного албанским царем Вачаганом III Благочестивым, местная церковь имела уже своего архиепископа (резиденция г. Партав – современная Барда) и 8 епархий (Партавская, Кабалинская, Гардманская, Шакинская, Пайтакаранская, Амарасская и др.).

Находясь под идейным влиянием соседей, Албанская церковь вместе с Армянской выступила против Халкидонского собора. В 551 г. Албанская Церковь порвала с Византией, и ее глава стал называться католикосом. Глава Албанской Церкви стал рукополагаться на месте (учреждение католикосата). Неудачная попытка перейти в халкидонитство была предпринята при албанском католикосе Бакуре (688-704 гг.), после низложения которого Албанская Церковь потеряла автокефалию.

В этот период арабский халиф Абу аль-Малик подчинил Албанскую Церковь Армянской. Подчинение армянскому католикосу положило начало ослаблению Албанской Церкви. Формально албанский католикосат (с резиденцией в Гандзасаре – Нагорный Карабах) просуществовал до 1836 г., затем был упразднен рескриптом императора Николая I и решением Святейшего Синодам Русской Православной Церкви. Эти акты положили конец номинальному существованию Албанской Церкви. В результате, большинство приходов оказалось в подчинении Армянской церкви и ее духовного центра с XV века - Эчмиадзина.

До установления Советской власти в Азербайджане в 1920 году многие удинские церкви и храмы, в том числе и в Варташене, селениях Нидж, Мирзабейли, Солтан-Нуха были действующими. С середины 30-х годов XX века все они постепенно начинают закрываться. Со второй половины прошлого столетия удины продолжали посещать церковь с. Джалут, что в Варташенском (ныне Огузский) районе.

В 2003 году по инициативе удинской интеллигенции в Госкомитете Азербайджана по работе с религиозными образованиями зарегистрирована Албано-Удинская Христианская община. Регистрация Общины стала первым шагом на пути к возрождению Албанской Церкви. На сегодняшний день с помощью Норвежской Гуманитарной Организации реставрирована церковь апостола Елисея в с. Киш Шекинского района.

В 2006 году произошло наиболее знаменательное событие в жизни удинского народа – завершились реставрационные работы в удинской церкви Чотари в поселке Нидж Габалинского района Азербайджана. 19 мая 2006 года здесь прошла торжественная церемония открытия Церкви. В ней участвовали официальные лица правительства Азербайджана, Норвегии, депутаты района, а также религиозные деятели, в том числе Епископ Бакинской и Прикаспийской Епархии Русской Православной Церкви отец Александр.

[1] Тер Саакян К., Удины: прошлое и настоящее. [Электронный ресурс] http://hayasanews.com/udini-2/(дата обращения: 05.03.2017).

В последние годы Албано-Удинская христианская община совместно с переводческой организацией ”Ufuq-az” работает над переводом Библии на удинский язык. В настоящий момент переведены и изданы три книги из Священного Писания — Книга Руфь, Книга пророка Ионы и Евангелие от Луки.

В настоящее время Удинская Церковь ”Чотари” функционирует. Однако пока служба в ней не ведется, поскольку отсутствует настоятель храма. В скором времени планируется проводить церковную службу на удинском языке из числа подготовленных духовных лиц.

Кухня удин разнообразна и имеет много общего с кухней армян и других народов Кавказа, включая мучные, молочные, мясные, овощные блюда. Традиционными удинскими блюдами являются долма из листьев грецкого ореха, суп с фасолью, лыкырти, чоротори, чилов, догадж, ыянкъ, хашил, яхни, сийох, хуп. Необходимо отметить харису – разваренную до кашеобразного состояния пшеницу, густо заправленную сливочным маслом и кусочками мяса или птицы. Хариса - традиционная пища земледельцев, издревле известная в Передней Азии, в том числе у сирийцев, от которых под тем же названием была заимствована удинами и их соседями. Важную роль в питании удин играли растительные продукты: фасоль, рис, грецкий орех, каштаны, овощи, зелень, фрукты, ягоды. Из мяса в пищу употребляли телятину, баранину, свинину, а также домашнюю птицу, особенно индейку. Излюбленным мясным блюдом считались свинина и индюшатина в свежем виде. На традиционных праздниках и торжествах удины в знак уважения к гостям-азербайджанцам свинину не употребляют. Хлеб выпекали из пшеничной муки в печи тарнэ. Большое место в питании занимали различные виды плова – из риса, фасоли, изюма, хурмы, каштанов, грецких орехов. Рис ели также с кислым молоком. Популярны были жареные и варёные каштаны, которые удины продавали скупщикам из Баку и Тифлиса. Из грецких орехов изготовляли ореховое масло. Много в удинской кухне блюд из овощей, особенно тыквы, капусты, баклажан, помидоров. Употреблялись дикорастущая зелень, особенно крапива и щавель, из которых готовили супы, начинку для хинкала (род пельменей), фрукты, ягоды. Важную часть питания удин составляли молочные продукты (заквашенное молоко, сливки ("чъо"), сметана, масло, в т. ч. топленое). Напитки – настои из ягод, сушеных фруктов, трав и из сердцевины грецкого ореха; водка из алычи, кизила, сливы, тута, остатков винной браги "чеча". Стоит отметить большой ассортимент вин как из местных (шалаб, фигомбал, меренди, мацитул и др.), так и из привозных сортов (мушкет, молдованка) винограда.

Семейный быт у удин имеет свои особенности. Еще в XIX веке сохранялись большие патриархальные семьи, хотя уже преобладали малые семьи. Удины рано вступали в брак: юноши в 16 лет, девушки в 13 лет. У удин предпочтительны браки в своей среде, действует строжайший запрет на браки даже с дальними и некровными родственниками не ближе седьмого колена. Прежде чем свататься, родители и родственники, собравшись отдельно от всех, выясняли родословную молодых. Удинки в прошлом вели замкнутый образ жизни: лицо закрывали, ели отдельно от мужчин, с посторонними в разговор вступать не смели, без разрешения мужа жена не имела права выйти из дома. Основные свадебные церемонии удин начинались утром, и продолжались затем в узком кругу родственников в течение нескольких дней. У удин также распространен издревле бытующий среди автохтонов Азербайджана танец йаллы. Современные браки у удин тоже строго экзогамны.

Традиционная одежда удин сходна с одеждой других народов Кавказа. У мужчин это чоха с газырями и широким вырезом на груди, под ней более короткий архалук, наглухо застёгнутый, нательная рубаха со стоячим воротником ("гурат"), штаны ("къолъох"). Архалук подвязывали ременным поясом с серебряными бляшками и кинжалом. На ногах – вязаные носки и обувь из сыромятной кожи (чарыхи), а также из более мягкой кожи (чусты и торокалы). Головной убор – конусообразная овчинная папаха. Материалом для костюма служили грубые домотканые сукна - "шаль". Более зажиточные приобретали дорогие привозные сукна, бархат и шелковые ткани. Наряду с домоткаными сукнами и хлопчатобумажными тканями, использовались привозные бязь и ситец. Женская верхняя одежда состояла из широких длинных штанов, очень широкой юбки, поверх которой носили архалук до колен, со сборками в талии, с длинными разрезными по всей длине рукавами. Архалук подпоясывался широким серебряным поясом с крупной пряжкой, а у менее состоятельных – матерчатым поясом (куштук). На ногах – вязаные носки и чарыхи, у состоятельных удинок – коши (кожаная обувь на каблуке без задника). Женский головной убор – дагта, сложное сооружение из нескольких элементов. Вначале на голову надевали круглую шапочку-тюбетейку катар, поверх повязывали челебенд – два матерчатых треугольника, соединенные тесьмой, концы которой завязывали под подбородком. Это и был собственно дагта, а сверху налагали белый треугольный платок

йалыгат, затем - небольшой платок тепелик, концы которого завязывали под подбородком. Поверх всего была динайа – большой черный платок. Замужние удинки закрывали нижнюю часть лица платком (яшмаг). С середины XX века у удин традиционная одежда исчезает, вытесненная обычной современной одеждой.

У удин были распространены различные поверья, гадания, магические действия. Большое влияние имели знахари, лечившие от сглаза и болезней. Были распространены культ предков, традиция поклонения "оджахам" - святым местам за пределами села, которые стали увязываться с христианством (священная роща при церкви св. Елисея, "оджах" св. Георгия, "Кемрат оджах", "Чотари оджах", "Яловлитяпин оджах", "Булун оджах"; их связь с огнем, кроме этимологии названия, проявляется в форме - груда камней со свечой). Фактически сакральная роль "оджахов" больше, чем церкви. Удины пользуются юлианским календарем (так называемый старый стиль) в качестве церковного. Наиболее почитаемые праздники и даты:

- рождество (у удин ортодоксальной конфессии 6 января, у монофизитов-григориан - 7 января);
- масленица (неясно, отмечалась ли вся масленичная неделя);
- великий пост (гъурух, гъирух, урух - этимологизируется как "дни"; 7 недель, заканчивается Пасхой);
- вербное воскресенье - в этот день все девушки и женщины шли в церковь (единственный день в году, когда в церкви встречалась молодежь обоих полов);
- пасха (Калаахсибай, букв. "Большой праздник", воскресенье): в первый день жертвоприношение в ограде церкви (у православных удин в том числе), крашение яиц, большой церковный праздник (ниджцы часто отмечают как календарную дату (последнее воскресенье апреля) по солнечному календарю); второй день - поминки на кладбище (плов, фрукты, сладости); третий день пасхи - Кала Гергец, букв. "Большая церковь", престольный праздник монастыря св. Елисея; 2 мая - праздник Майе ахсибай (букв. "Майский праздник");
- вознесение (Гъокъма, этимологически связано с Гъокъкъа - фокус, шутка, чудо - 40-й день после Пасхи, четверг);
- преображение - накануне девушки красили руки бальзаминой (специально для этой цели женихи посылали ее своим невестам), собравшись у "оджаха" св. Георгия;
- поминальный день, приходится на середину сентября, воскресенье.

В силу оседлого, преимущественно земледельческого образа жизни удин многие обряды, праздники и календарь связаны с земледелием.

Многожанровое устное народное творчество удин свидетельствует о древней духовной культуре народа. Среди жанров устного фольклора можно назвать мифологические рассказы, эпико-героические сказания, религиозные повествования, исторические предания. Культовые представления связаны с природными стихиями (вода, огонь, молния, град, земля). Большое место в различных сказаниях, поверьях и мифических представлениях удин отводится луне, солнцу и огню. Удинские обряды в основе своей восходят к культу изобилия, богатства и плодородия.

Удинские пословицы: «Даже пядь своей земли – Родина», «Летом работай, зимой отдыхай», «Орех жарится в казане», «Если у тебя много друзей – ты живой, нет друзей – мертвый», «За ошибку языка расплачивается голова»[1].

[1] Гусейнов Р. Из-во: журнал IRS Наследие// Министерство Культуры и Туризма Азербайджанской Республики. №3 13.06.2008

УДК 94(391=1=8)

История

Элен Осипян
***Университет Месроп Маштоц (г.Степанакерт).* 1-ый курс**
elenxoxo1998@mail.ru

НЕКОТОРЫЕ АСПЕКТЫ ИСТОРИИ И КУЛЬТУРЫ ТАЛЫШСКОГО НАРОДА (ПОСТАНОВКА ПРОБЛЕМЫ)

В статье рассматривается история и культура талышского народа, проживающего на территории современной Азербайджанской Республики. Статья является началом исследования проблемы талышского народа.

Ключевые слова: талышский народ, культура, быт, традиции, адаты.

Էլեն Հովսեփյան
Մեսրոպ Մաշտոց Համալսարան (ք.Ստեփանակերտ), 1-ին կուրս
elenxoxo1998@mail.ru

ՈՐՈՇ ԱՍՊԵԿՏՆԵՐ ԹԱԼԻՇ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻՑ (ԽՆԴՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ)

Հոդվածում քննարկվում է թալիշների պատմությունը և մշակույթը, ովքեր ապրում են ներկայիս Ադրբեջանի Հանրապետության տարածքում: Հոդվածը թալիշների խնդրի հետազոտության միայն սկիզբն է:

Բանալի բառեր: թալիշներ, մշակույթ, ապրելակերպ, ավանդույթներ, սովորույթ:

Elen Hovseyan
Mesrop Mashtoc University (Stepanakert), 1st year
elenxoxo1998@mail.ru

SOME ASPECTS OF HISTORY AND CULTURE OF TALYSH PEOPLE (ISSUE DEFINITION)

The article views the history and culture of Talysh people living on the territory of the present Republic of Azerbaijan. This article is just the beginning of the research on the issues of Talysh people.

Keywords: talysh people, culture, lifestyle, traditions, customs.

В Азербайджане, особенно последние годы, коренные этносы поднимают вопрос по защите своих прав и независимости. Предметом нашего рассмотрения является талышский этнос, живущий на юге Азербайджанской республики и на севере Ирана. С недавних пор в Азербайджане неожиданно начались протесты. Они проходят на юге страны, в районах компактного проживания этнического меньшинства - талышей. Эксперты связывают протесты с экономическими и социальными проблемами в условиях падения цены на нефть. А власти Азербайджана ничего не говорят об этнической подоплеке конфликта. Это давние претензии талышей на самоопределение, которые Азербайджан называет сепаратизмом. В рамках состоявшегося в Москве круглого стола на тему "Дискриминационные меры властей иностранных государств в отношении российских журналистов" известный лезгинский общественный деятель, председатель Федеральной лезгинской национально-культурной автономии Ариф Керимов высказал интересную мысль: "Если будет война, то Россия получит 1,5 миллиона беженцев из Азербайджана. Ради чего лезгинский народ должен жертвовать собой? Чтобы поддерживать клан президента Азербайджана Ильхама Алиева?" Можно с уверенностью утверждать, что эта мысль касается не только лезгинов, но и других нацменьшинств Азербайджанской Республики. Не случайно Азербайджан панически боится занимающихся общественно-просветительской деятельностью лезгин, аварцев и талышей[1].

[1] Если лезгины, талыши, таты, аварцы и другие автохтонные народы азербайджана скажут "нет" [Электронный ресурс]. http://www.golosarmenii.am/article/18059/esli-lezginy--talyshi--taty--avarcy-i-drugie-avtoxtonnye-narody-azerbajdzhana-skazhut-net#(дата обращения: 07.03.2017).

Как заявил каталонский политолог Абель Риу в интервью местному изданию «Nationalia»- большинство азербайджанских солдат, погибающих на войне, – талыши и лезгины. Алиев посылает их на фронт, потому что они ничего для него не стоят.

Автохтонные народы Азербайджана не забыли, как к ним относились в годы Арцахской войны закавказские турки. Они не упускали случая прибегать к их убийству. Об этом говорит пресса этих народов 90-х годов прошлого века. И без того агрессия против Республики Арцах дала Азербайджану возможность убивать своих врагов их же руками. Армяне, стреляющие в лезгин, аварцев, талышей и других представителей автохтонных народов Азербайджана, невольно укрепляли власть "азербайджанцев" в Азербайджане. И наоборот, стреляющие в армян лезгины, талыши, аварцы и другие пробуждали у закавказских турок надежды на оккупацию Арцаха.

Поэтому естественно, что подавляющее большинство автохтонных народов Азербайджанской Республики в случае войны откажутся воевать с армянами – своими тысячелетними соседями и друзьями – и предпочтут перебраться в приграничную Россию. Удержать этот поток Азербайджан будет не в силах: горские народы просто уничтожат всех тех, кто станет на их пути. Именно их имеет в виду Ариф Керимов, когда говорит о полутора миллионах потенциальных беженцев в Россию.

С географической точки зрения, исторический Азербайджан охватывает только часть территории нынешней Азербайджанской Республики, то есть территорию, заселенную талышами. Эта земля является исконной для талышей с незапамятных времен. Зная это, высшие властные круги Азербайджанской Республики уже на протяжении долгих лет занимаются переселением в исконные талышские земли, расположенные к югу от реки Куры, тюркоговорящего населения.

Нынешняя Азербайджанская Республика (АР) является многонациональным государством, на территории которого, после распада СССР и политико-правового упразднения Азербайджанской ССР (АзССР), проживает несколько различных этнокультурных общностей. Рассматриваемые как национальные меньшинства Азербайджана, отличающиеся по своим национальным, этнокультурным, религиозным и другим качествам от титульной нации в лице азербайджанцев. Таким образом, проводится определенное различие между понятиями «национальное меньшинство» и «коренной народ».

Талыши представляют собой коренное иранское население Азербайджана, что отличает их от большинства современных жителей республики, имеющих тюркское происхождение. Талыши сконцентрированы на юго-востоке Азербайджана близ границы с Ираном, где проживает большая часть этой народности.

Талыши, проживающие в Азербайджанской республике, в подавляющем большинстве своем исповедуют ислам шиитского толка, в отличие от своих южных собратьев, являющихся, в основном, суннитами. Основным источником этногенетических изысканий является самоназвание народа, т.е. талыш.

Топоним «талыш» известен из средневековых арабских источников у Баладзури, Аль-Табари, Якут обозначавших талышей терминам ал-тайласан, в персидских источниках обозначали – Талышан и Тавалыш (Хамд-Аллах Казвини), а в арабской форме множественного числа название талыш. Аль-Табари пишет о тайласанах: “В горах вокруг Азербайджана жили такие народы, как гелы и ал-тайласан, которые не подчинялись арабам и были свободны и независимы”. Однако этноним талыш в его настоящей форме впервые встречается в армянской версии истории Александра Македонского, составленной в XVI веке и переведенной с греческого источника пятого века:“И рассказал он, что он беженец с ворот Каспийских, недалеко от страны Талыш в провинции Гилан”[1].

Античные авторы, говоря об ареале обитания прикаспийских племен, упоминали наряду с гелами, мардами (амардами) также кадусиев. И местные талышские интеллектуалы, и краеведы в обеих частях Талыша единогласно указывают на кадусиев, одного из автохтонных народов региона, как на предполагаемых предков талышей. Устремление к выяснению своих корней и четкое соотнесение талышей с кадусиями в народе привело даже к возникновению определенного мировоззренческого элемента в национальном самосознании талышей и талышской идентичности. Многие объекты в населенных талышами краях Гилана, например, носят название “Кадус”, Кадус также стало распространенным мужским именем.

Согласно официальной переписи 1999 года, в Азербайджане было почти 77 тысяч талышей. По оценкам демографов, реальная цифра достигает приблизительно 250 тысяч человек. Однако по утверждению лидеров талышского национального движения в республике проживает около 1-1.5 млн представителей этой народности. Большинство из них вследствие дискриминационной политики Баку или утратило национальное самосознание или опасается открыто признавать себя талышами. Летом 1993г. на фоне дестабилизации политической обстановки в Азербайджане лидеры национального движения объявили о создании Талышской республики. Она просуществовала всего лишь два месяца и по указанию президента Алиева была упразднена с участием силовых структур[2].

[1] Асатрян Г.С. Введение в историю и культуру талышского народа, Ереван 2011 стр.43.

[2] Агаджанян М. Политико-правовые аспекты положения национальных меньшинств Азербайджанской Республики// Журнал «21-ый век», вып. № 2 (4), 2006, стр. 126.

Талыши расселены преимущественно в Ленкоранском, Астаринском и отчасти в Масаллинском и Лерикском районах. Много их ныне проживает в Баку и Сумгаите. По первой советской переписи 1926г. было взято на учет 77,3 тысячи талышей, что составило 3,3% тогдашнего населения Азербайджана. В переписи же 1939г. зафиксировано только 3 тысячи талышей, а в последующем эта графа вовсе отсутствовала в опросных листах. Лишь в ходе переписи 1989г. 21 тысяч человек указал в графе национальность – талыш. А самую большую неожиданность преподнесла перепись 1999г., по данным которой численность талышей составила уже около 80 тысяч человек, или около 1% всего населения страны. Но можно предположить, что даже эта цифра является заниженной и не отражает действительного количества носителей талышской идентичности.

Как мы видим население Талышей постепенно уменьшалось, этому способствовали многие факторы. Так как в Азербайджанской Республике на них давили, многие даже боялись открыто заявлять себя талышами. "Эта народность (талыши) - они практически ассимилированы, и они пишутся как азербайджанцы, - сказала Правде.Ру Гюльнара Мамедзаде, аналитик, политолог.[1]

Талышский народ не только исторически имел собственную государственность, но и сыграл важную роль в создании ряда образований, влиявших на перипетии судеб южно—кавказского региона. Это и государство Сефевидов (данную династию с легкой руки азербайджанских горе-историков называют азербайджанской, однако это не имеет под собой никакой научной основы: по своему происхождению она - чисто иранская или, если уж локализовывать, скорее талышская, чем какая-либо иная), и Талышское ханство, и две Талыш-Муганские республики, просуществовавшие, к сожалению, недолго.

Однако формирование талышского освободительного движения в новейшее время стоит датировать созданием второй Талыш-Муганской автономной республики в 1993 году. Большинство ее руководителей и идейных вдохновителей было уничтожено либо провело значительную часть жизни в тюрьмах. Фактически уцелели только два человека – президент Талыш-Муганской республики Алакрам Гумматзода, проживающий в настоящее время в Нидерландах, и председатель ее Верховного Совета Фахраддин Абосзода, живущий в Москве.

Несмотря на репрессии, с начала 1993 по 2005 гг. можно выделить первый этап талышского национально-освободительного движения – этап его зарождения и укрепления. Это было время объединения, консолидации талышского народа. Особое внимание уделялось культуре, традициям, обрядам и другим непременным составляющим национальной идентичности. Все это время Фахраддин Абосзода и его ближайшие соратники провели «в поле» - работали с населением, внедряли идею «талышства», отделения талышского этноса от азери-турков. Сама идея витала в воздухе давно, но здесь она получала плоть и кровь, приобретала осязаемые очертания, занимала его мысли, мечты и стремления.

Второй этап движения начался с мая 2005 года, когда в армянском Цахкадзоре состоялась Первая международная конференция по талышеведению. Помимо множества выдающихся ученых и экспертов со всего мира, участие в ней принял и лидер талышского движения Фахраддин Абосзода. Мероприятие дало огромный толчок дальнейшему развитию талышского самосознания. Если до того в талышской среде преобладали идеи сохранения национальной идентичности, то на втором этапе движения народ все более стал склоняться к мысли о независимом Талышистане, его отделении от Азербайджана[2].

Как отмечают специалисты, множество проблем, стоящих перед меньшинствами, одинаковы по всему миру, но в приоритетах существуют значительные различия. К числу приоритетных задач относятся: предотвращение нападений и других форм дурного обращения с отдельными членами меньшинств; предотвращение систематической дискриминации против них и принятие мер против исключения представителей меньшинств из принятия политических решений на национальном и локальном уровнях[3].

Территория расселения талышей входила некогда в состав Мидии и впоследствии отделившейся от нее Атропатены. Источниками упоминаются следующие наименования населения, проживающего в Атропатене: мидяне, каспии, кадуссии, гелы, телкмаи, талаи-талы. И здесь, как мы видим, не говорится об азербайджанцах. Кто они и откуда появились? Даже они сами не знают. И недавно депутат Милли Меджлиса Ариф Рагимзаде в интервью российскому информационному порталу КМ.ру заявил следующее: «Наша беда в том, что в России нас считали турками, но азербайджанцы не турки. Это ошибка! Да, мы, азербайджанцы, имеем общие корни с турками, но народы - совершенно разные. Азербайджанцы использовали религиозную идентичность и называли себя - «мусульмане». В России это же самое население называли татарами. В любом случае, мы - не турки, турки - совсем другие». А как же быть с лозунгом общенационального лидера Азербайджана Гейдар Алиева о том, что: «Мы одна нация – два государства». Это говорит о том, что они

[1]Талыши в Азербайджане подняли головы [Электронный ресурс]. http://www.pravda.ru/world/formerussr/- other/19-01-2016/1289284-talishi-0/(дата обращения: 07.03.2017).

[2]Талышское национальное движение: негасимый огонь свободы [Электронный ресурс]. http://kavkazgeoclub.ru/content/-talyshskoe-nacionalnoe-dvizhenie-negasimyy-ogon-svobody (дата обращения: 07.03.2017).

[3] Агаджанян М. Политико-правовые аспекты положения национальных меньшинств Азербайджанской Республики// Журнал «21-ый век», вып. № 2 (4), 2006, стр. 126.

сами не знают, откуда они появились. Сегодня они турки, а завтра азербайджанцы. Государство-то создали, а вот как назвать его основное население, не знали и не знают до сих пор.

Ученые в этой стране исходили из того, что «современные азербайджанцы как нация – это продукт сложного процесса этногенеза, имевшего своим результатом смешение совершенно немногочисленных носителей огузского языка, прибывших на территорию нынешнего Азербайджана в начале XI века, с более многочисленным коренным нетюркским населением Атропатены, Ширвана и Аррана, в том числе с ираноязычными и кавказоязычными народами, как полностью, так и частично влившимися в новую нацию».

Причина в том, что власти страны понимают: если убрать термин «азербайджанцы» и дать возможность всем заявить о своей реальной этнической принадлежности, то тогда, в первую очередь, сам правящий клан должен будет назвать себя курдами, а количество тюрков в общей массе населения окажется мизерным. А это может привести к скорейшему разрушению искусственной конструкции под названием «Азербайджанская Республика». Вот почему власти до сих пор называли «титульный этнос» страны «азербайджанцами», но при этом никогда ранее не выступали против того, чтобы, по крайней мере, часть из них назвала себя тюрками.

Тем не менее, они оказались правы в своих опасениях. В начале лета 1993 года талыши провозгласили свою Республику, активизировалась национально-освободительная борьба других коренных народов, что грозило полным распадом Азербайджана. Вот почему, когда в июне 1993 года Гейдар Алиев путем вооруженного переворота захватил власть в Азербайджане, он первым делом аннулировал данное постановление и опять объявил эту массу «азербайджанцами». И в этот раз никто из них не выступил с протестом, несмотря на то, что это было политически мотивированным решением Алиева, который понял, что вышеназванное постановление правительства Народного фронта привело к опасности распада Азербайджана. Поэтому, провозгласив «азербайджанство» в качестве официальной государственной идеологией, Алиев на время сумел ослабить напряжение в межнациональных отношениях и тем самым выиграл время для укрепления личной власти.

В Царской России область Талыша была одной из наиболее отсталых уголков страны в культурном отношении. Здесь был очень низкий уровень грамотности населения, почти не было школ. В духовной жизни господствовала религия. Царское правительство ничего не предпринимало в области здравоохранения, в связи с чем поголовно все население страдало от малярии, часты были эпидемии оспы и холеры, распространена была парша.

Следует отметить, что одной из отличительных черт семейного быта талышей от быта азербайджанцев было более независимое положение женщины-талышки, особенно на низменности. Объясняется ее сравнительно независимое положение тем, что она более активно участвовала в хозяйстве. На женщине лежала вся работа по уходу за домашним скотом и изготовлению молочных продуктов—катык, масло и т.д.

В настоящее время многие традиции, унижающие женщину, постепенно уходят в прошлое. При гостях теперь женщина входит в комнату, может сесть и принять участие в беседе. Постепенно отмирает обычай у женщин прикрывать нижнюю часть лица при посторонних мужчинах.

Старые свадебные церемонии претерпели изменения, они имеют тенденцию к упрощению. В прошлом свадебные обряды делились на следующие ступени: сватовство (елчилик), сговор (аксаккал плову - буквально плов для аксаккалов), сладкое угощение (ширни ичди), приглашение жениха в гости в дом невесты, кройка платья (палтар кести), свадьба в доме невесты (хна яхты кеджеси), свадьба в доме жениха (той).

В настоящее время церемонии часто объединяют: или аксаккал плову с ширни ичди, или две первые церемонии с палтар кести[1].

Известный лингвист Б.В.Миллер, изучавший талышский язык, считает его типичным представителем иранских языков, “бытующих на территории исторической Великой Мидии”. Но в то же время Б.В.Миллер предполагал, что в этногенезе талышей участвовали и кавказоязычные племена. Так он отмечает: “талышский язык хотя и развивался на каком-то, предположительно, Кавказском субстрате, но исторически является результатом разложения языка флективного типа, который в новейший исторический период мог подвергнуться влиянию только тюрского языка”. Талышский язык некогда имел более широкий ареал распространения, который постепенно сужался в результате сближения и слияния некоторой части талышей с окружающим азербайджанским населением. Многовековое соседство талышского и азербайджанского народа, тесные экономические и культурные связи способствовали к сближению в области духовной и материальной культуры. И еще одним из важных факторов, способствовавших сближению талышей с азербайджанцами, была принадлежность к единой религии.

Вышеупомянутые факторы оказывали влияние на национальное самосознание талышей, которое еще до революции отличалось двойственностью. И некоторые талыши постепенно стали называть себя тюрками (т.е. азербайджанцами). Большая часть, сознавая себя талышами, в то же время считают себя частью азербайджанского народа. Следует отметить, что у различных социальных слоев наблюдается отличие в

[1] Измайлова А.А. Социалистические преобразования хозяйства, культуры и быта талышей, Москва 1964, стр. 18-19.

степени самосознания. Горожане не первого поколения не сознают себя талышами, и часто не владеют талышским языком[1].

Талыши в северном Талыше - двуязычны, а в южном — трехъязычны. В настоящее время в северном Талыше, кроме талышского, талыши свободно владеют азербайджанским языком, что было несвойственно первой половине XX в. Как отмечал Миллер во время своей поездки в талышские области Азербайджана, женское население талышей, особенно в глухих лесных и горных местностях, не знало тюркского языка. То есть языком семьи, языком матери и женской половины населения являлся исключительно талышский, и говорить в то время о двуязычии можно лишь с оговорками. В южном Талыше жители, наряду с родным языком, талышским, свободно владеют и персидским - государственным языком Ирана, а также тюркским и гилянским.

Иранские народы Южного Каспия – талыши, гилянцы, мазандаранцы – автохтоны региона. Во многих аспектах они, по сути, являют собой единое южнокаспийское пространство. «На путешественника, знакомого с Персией, – пишет Миллер, – Талышский край производит впечатление персидской прикаспийской провинции. Он теснейшим образом связан географически, этнически и культурно с персидскими прикаспийскими областями – Гиланом и Мазандераном...»[2] .

История талышей обычно содержится в хрониках, сообщающих о происхождении и правлении династии Сефевидов (1501-1736гг.). Поэтому первоначальная история талышей прослеживается через историю Ирана в XIV-XVIII вв. Вероятно, это был период интенсивного формирования как народностей, так и политических институтов на этой территории. Дейлам – горный район рядом с Талышом и Гиланом; многие авторы отмечают большое сходство в описании внешнего вида, обычаев и традиций, языка и методов хозяйствования горных талышей и дейламитов.

В составе Российской империи закавказские талыши сохраняли государственность в форме Талышского ханства. После установления советской власти в Закавказье, в местах традиционного компактного проживания талышей были открыты школы, издавалась переводная литература, активизировалась национальная интеллигенция — появились талышские писатели, переводчики и т. д.

В 30-е годы талыши перешли на кириллицу. Затем им "порекомендовали" ассимилироваться с азербайджанцами, то есть стать тюркским народом. Так они оказались вне списка народов СССР, хотя и были четвертым по численности народом Закавказья.

По переписи Азербайджана 2009 года, вместо "талыш" автоматически писалось "азербайджанец" и родной язык - "азербайджанский". По неофициальным данным самих талышей, в Азербайджане проживают 1,5-2,5 млн. соотечественников, в Иране - не меньше 1 миллиона.

«Их притесняют в собственной стране, и они не имеют возможности выразить свое недовольство. И с течением времени растет численность тех нацменьшинств, которые понимают, что армяне для них дружеский народ.

Несколько сот лет назад мы жили вместе, потом явились турецкие завоеватели, захватили регион и подчинили национальные меньшинства себе. Речь идет о нескольких миллионах людей. Надо проводить работу и объяснять, что армяне им не враги. Защищая их права, мы защищаем наши национальные интересы»,- сказал недавно в беседе с журналистами руководитель центра «Модус вивенди», политолог Ара Папян.

В заключение, мы пришли к тому, что талыши должны добиться независимости. Мы должны помочь этому народу, понять простую истину, что армяне им не враги и что не надо им воевать против армян Арцаха за мнимые интересы Азербайджана.

[1]Талышский политический деятель: «Азербайджан будет стерт с карты» [Электронный ресурс]. http://ru.aravot.am/-2016/02/27/201719/(дата обращения: 07.03.2017).

[2] Асатрян Г.С. Введение в историю и культуру талышского народа, Ереван 2011, стр.74 .

ՀՏԴ 94(44) Պատմություն

Զոյա Չատինյան
Վանաձորի պետական համալսարան , մագիստրատուրա 1-ին կուրս
chatinyanz@mail.ru

1848 Թ.-Ի ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ «ԵՎՐՈՊԱ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Եվրոպա» շաբաթաթերթը հայերեն առաջին քաղաքական լրագիրն է, հրատարակվել է Վիեննայի Մխիթարյանների կողմից 1847-1863 թթ.-ին: Այն պատմական, ճանաչողական մեծ արժեք ունի 19-րդ դարի 40-60 ական թվակաների եվրոպական հեղափոխությունների լուսաբանման տեսանկյունից:

1848 թ.-ի ֆրանսիական հեղափոխությունը ամենայն մանրամասնությամբ լուսաբանել է Վիեննայում լույս տեսնող « Եվրոպա» պարբերականը: Այն լույս էր տեսնում ամեն շաբաթ և ի տարբերություն մյուս հայ պարբերականների հնարավորություն ուներ առվելի մանրամասն ու թարմ տեղեկություններ հաղորդելու:

Բանալի բառեր՝ 1848 թ. ֆրանսիական հեղափոխություն, « Եվրոպա» պարբերական, Մխիթարյաններ, հայ հասարակական - քաղաքական գաղափարախոսություն, եվրոպական մամուլ:

Зоя Чатинян
ВГУ, магистратура 1-ый курс
chatinyanz@mail.ru

1848 ФРАНЦУЗСКАЯ РЕВОЛЮЦИЯ В ЕВРОПЕ ПЕРИОДИЧЕСКОЙ ОЦЕНКИ

«Европа» является первой армянской политической еженедельной газетой. Имеет большое значение с точки зрения охвата европейской революции.Французская революция 1848 года была полностью покрыта газетой.Он опубликовывался каждую, неделю, и, в отличие от других армянских периодических изданий, передавала свежую информацию.

Революция в 1848 году во Франции нашла широкий отклик армянских периодических изданий в то время, в томе числе в « Европе». Оно является первой армянской политической еженедельной газетой. Имеет большое значение с точки зрения охвата европейской революции.

Ключевые слова: французская революция в 1848 году, Газета Европа, Мхитаряны, армянская общественно-политическая идеология, европейская пресса

Zoya Chatinyan
VSU, Master's degree 1st year
chatinyanz@mail.ru

1848 FRENCH REVOLUTION IN EUROPE PERIODICAL ASSESSMENT

“Europe's” first political weekly Armenian newspaper is published.Published respectively in 1847-1863 by the Vienna Mekhitarists It is historic. Study of Value 40-60 19th century's revolution in terms of coverage. in the French Revolution of 1848 full details covered the Vienna-based ""Europe"" magazine.It was published every week and unlike other Armenian periodicals had a chance stockpiles detail fresh and reporting

The French Revolution of 1848 has been wildly accepted by the regular Armenian time press , including Vienna's Mkitharyan ' s published “ Europa” in weakly. The newspaper's and particularly the press's basis was organized by Europian time press.

Keywords: The French Revolution in 1848, the Newspaper Europe, Mkhitaryans, the Armenian socio-political ideology, the European press

1848 թ. ֆրանսիական հեղափոխությունը լայն արձագանք է գտել ժամանակի հայ պարբերական մամուլում, այդ թվում Վիեննայի Մխիթարյանների հրատարակած «Եվրոպա» շաբաթաթերթում: «Եվրոպան» 19-րդ դարի հայ պարբերական մամուլի պատմության մեջ առանձնանում է ամենից առաջ նրանով, որ այն հայ քաղաքական առաջին լրագիրն է, որն ամենայն մանրամասնությամբ ներկայացնում էր Եվրոպայի քաղաքական բոլոր կարևոր իրադարձությունները, անգամ առաջին

հայացքից աննշան թվացող դեպքերը: Պարբերականի աշխատակիցները ականատեսի աչքերով հանգամանորեն ներկայացնում են ավստրիական կայսրության մայրաքաղաքում տեղի ունեցած հեղափոխական գործընթացները, որոնք սկզբնաղբյուրի նշանակություն ունեն: «Եվրոպայի» ուշադրությունից չի վրիպում նաև 1848 թ. ֆրանսիական հեղափոխությունը, որի ընթացքի մասին թերթի և հատկապես լրատվության հիմքը կազմում էր ժամանակի եվրոպական մամուլը: Չնայած դրան, թերթը կառչած չի մնացել վերոհիշյալ լրատվական աղբյուրներից: Պարբերականի հրապարակումների վերլուծությունը ցույց է տալիս, որ այն շատ իրադարձություններ ներկայացնում է իր մեկնաբանություններով և գնահատականներով,որը համահունչ է արևմտահայ ազգային պահպանողական հոսանքի դիրքորոշմանը:

1845 թ. Եվրոպայում տարածված կարտոֆիլի հիվանդությունը, 1847 թ. տնտեսական ճգնաժամը և միջազգային հարաբերություններում Ֆրանսիայի դիվանագիտական անհաջողությունները մեծապես նպաստեցին երկրում հեղափողական իրադրության հասունացմանը: 1848 թ. հունվարի 21-ին Ֆրանսիայի ազգային ժողովում սահմանադրական բարեփոխման անհրաժեշտության հարցի քննարկման ժամանակ իր ելույթում այս ամենին անդրադարձավ է. Պ. Պերվիլը: Նրա ելույթը «Եվրոպան» ամբողջությամբ տպագրում փետրվարի 8-ի համարում: Պերվիլը նշում էր, որ ինքը դեմ չէ գործող սահմանադրությանը և թագավորի իշխանությանը, բայց միաժամանակ ցանկանում է բոլորի ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ « 18 տարիէ ի վեր քանի որ հիմակուան թագաւորը գահը անցած է, կը տեսնենք որ տէրութիւնը ո՛չ ներքուստ յառաջացման նշաններ կու տայ , ո՛չ արտաքուստ զօրութիւնը կը ցուցընէ »:[1]

1848 թ. հունվարի 19-ին ընտրական բարեփոխումների համախոհները նշանակել էին բանկետ , որն իշխանությունները արգելեցին:[2] Բանկետը տեղափոխվեց փետրվարի 22-ին, որն ուղեկցվելու էր փողոցային խաղաղ ցույցերով՝ ի պաշտպանություն ժողովների ազատության: «Եվրոպան» հանգամանորեն անդրադառնում է այս իրադարձությանը: Ըստ պարբերականի, փետրվարի 22-ի բանկետին հրավիրվել էին 100-ից ավելի պատգամավորներ, որոնցից բացի «ազգային զօրքին 14 գնդերէն ալ աս խնջոյքին երթալու խոստացեր են»:[3] Պարբերականի հաղորդմամբ այս լուրը Փարիզում մեծ շփոթություն էր առաջացրել, հատկապես մայրաքաղաքում գտնվող օտարերկրյա դեսպանների ու ներկայացուցիչների շրջանում: Մտավախություն կար, որ կարող է վերաճել հեղափոխության: Արտաքին գործերի նախարար Ֆրանսուա Գիզոյի հավաստմամբ « կառավարութիւնը՝ խռովութիւնը արգելելու համար արդէն բաւական միջոցներ ի գործ դրեր է»[4], որը կանխեց նախարարների Փարիզը լքելու մտադրությունը: Պարբերականն այնուհետև տեղեկացնում Փարիզում փետրվարի 22-24-ը կայացած ապստամբության մասին: Թերթը մասնավորապես գրում է. « Գաղղիա տակնուվրայ է , քաղաքացւոց արիւնը կը վազէ, թագաւորն ու իր ընտանիքը փախած են»:[5] «Եվրոպան» գրում է, որ փետրվարի 22-ի խնջույքի կազմակերպիչները որոշեցին կառավարությանը ավելորդ կասկածի տեղիք չտալու համար համեստ բանկետ կազմակերպել: Պարբերականը մանրամասը ներկայացնում է վերջիններիս նախապատրաստական աշխատանքները, նշելով նույնիսկ խնջույքի սեղանին դրվելիք մթերքների ցանկը: Ըստ «Եվրոպայի» բանկետ հրավիրելու իրենց որոշումը փետրվարի 21 –ին թերթում հրապարակելով ընդիմադիր պատգամավորները նպատակ էին հետապնդում նախ և առաջ « Փարիզի բնակչաց ոգիքը՝ կառավարութեան դեմ գրգռելու ու ազգային պահապան զօրքը իրենց կողմը ձգելու»:[6] Փետրվարի 22-ին Փարիզի հազարավոր բնակիչներ, մեծմասամբ ուսանողներ փողոց դուրս եկան: Թագավորական զորքը և մունիցիպալ գվարդիան հարձակվեցին ցուցարարների վրա:[7] Պարբերականի տեղեկություններով արդեն փետրվարի 23-ին կառավարությունը Փարիզում և շրջակայում տեղեկայել էր 80.000-ոց զորք: « Եվրոպան» մանրամասը , ժամ առ ժամ ներկայացնում է մինչև երեկոյան ժամը 7-ը Փարիզում տեղի ունեցած դեպքերը և զորքի տեաղաշարժերը: Երեկոյան թագավոր Լուի Ֆիլիպը , ցանկանալով դադարեցնել ժողովրդական հուզումները, որոշեց զոհաբերել

[1] «Եվրոպա», 1848թ., 8 փետրվարի, թիվ 6, էջ 22
[2] Застенкер Н.Е. Революция 1848 года во Франции ,1948 г., стр.30
[3] «Եվրոպա», 1848թ., 19 փետրվարի, թիվ 9, էջ 35
[4] Նույն տեղում
[5] Նույն տեղում, 1848թ., 7 մարտի, թիվ 10, էջ 39
[6] «Եվրոպա»,1848թ., 7 մարտի, թիվ 10, էջ 40
[7] Эритье Л. История французской революции 1848 г. и Второй Республики.1907 г., стр. 201

Ֆ. Գիզոյին և պաշտոնանկ արեց նրան;[1] Նոր կաբինետը գլխավորեց կոմս Մոլեն: Այս մասին «Եվրոպան» գրում է. « Ժամը 4-ին թագաւորը պաշտօնեաներուն փոխուիլը հրատարակել տուաւ ու Մոլէ կոմսին գահերիցութեամբը գրուելու ժողովրդեան իմացուց»:[2] Այնուհետև թերթը հայտնում է, որ ժողովուրդը մեծ ցնծությամբ է ընդունել այս լուրը: Սակայն փետրվարի 23-ի երեկոյան Փարիզի Կապուցինո պուրակում ողբերգություն տեղի ունեցավ: Եվրոպան գրում է. « Խումբ մը ժողովուրդ գիշերը ժամը 10-ին սկսաւ դէպ ի արտաքին գործոց պալատին գալել»:[3] Զինվորները կրակ բացեցին անզեն ժողովրդի վրա («կսուին որ սխալմամբ»), որի արդյունքում պարբերականի տվյալներով զոհվեց 50, այլ տվյալներով 53 քաղաքացի:[4] Այս լուրը շատ արագ տարածվեց ամբողջ Փարիզում և հանգեցրեց համաժողովրդական ապստամբության, որի արդյունքում թագավորը հարկադրվածեղավ պաշտոնանկ անել կառավարությանը: Այս կապակցությամբ «Եվրոպան» հրապարակում է Լուի Ֆիլիպի՝ Մոլեի փոխարեն նախ Թյերին[5], ապա Օ. Բարրոյին կառավարության ղեկավար նշանակելու մասին փետրվարի 24-ի հրովարտակը: Թերթը այնուհետև ամենայն մանրամասնությամբ նկարագրում է Թյուիլրի պալատի գրավումը, հրապարակում Լուի Ֆիլիպի գահից հրաժարականի տեքստը՝ ի օգուտ իր թոռ՝ Օռլեանի դքսի: Դրանից հետո թագավորը ընտանիքով լքեց Ֆրանսիան և մեկնեց Անգլիա:[6] «Եվրոպան» գրում էր, որ այս օրերին Փարիզի փողոցներում, տների պատերին կարելի էր կարդալ « Ալ Պուրպոն չենք ուզեր: Կեցցէ՛ հասարակապետութիւնը: Առժամանակեայ կառավարութիւնը: Ազգային ժողովքը»:[7] մակագրությունները:

Ֆրանսիական թերթերի լրատվության հիման վրա «Եվրոպան» տեղեկություններ է հաղորդում նաև ժամանկավոր կառավարության և մայրաքաղաք Փարիզում գործող օտարերկյա դեսպանությունների ներկայացուցիչների փոխհարաբերությունների մասին: Մասնավորապես հրապարակում է արտաքին գործերի նախարարի նորանշանակ պաշտոնակատար Լամարթինի նամակն՝ուղղված երկրում գտնվող օտարերկրյա ներկայացուցիչներին: Նրանում ասվում էր, որ Ֆրանսիայում նոր կառավարության ձևավորումը « Գաղղիային Եւրոպային մէջ ունեցած յարաբերութիւնը չփոխեց»:[8] «Եվրոպան» գրում է, որ առաջինը գործող կառավարությունը ճանաչեց Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանը, իսկ մնացած պետությունների դեսպանները որոշեցին սպասել իրենց կառավարությունների հանձնարարականներին: Հետագա համարներում պարբերականը մանրամասն ընթերցողին է ներկայացնում Ժամանակվոր կառավարության հրամանների բովանդակությունը և երկրի ներսում ապստամբության հետևանքները, մայրաքաղաքի վնասված շինությունների վերականգնողական աշխատանքները և այլն: «Եվրոպան» գրում է, որ ժամանակավոր կառավարության անդամները իրար հետ միաբան չէին և մայրաքաղաքի բնակչության անվերապահ վստահությունը չեն վայելում: Պարբերականը սրանով է պայմանավորում այն,որ շատ եվրոպական երկրներ չէին շտապում ճանաչել Ժամանակավոր կառավարությունը, կամ էլ սահմանափակվում էին « անորոշ խօսքերով ու քաղաքավարական բարեմաղթութիւններով և կը սպասեին ժողովքեն վերջ տեսնեն»:[9]

1848 թ. մայիսի 4-ին Բուրբոնյան պալատում տեղի ունեցավ Սահմանադիր ժողովի առաջին նիստը: Ժողովի որոշմամբ Ժամանակավոր իշխանությունը լուծարվեց և ստեղծվեց նոր իշխանական մարմին՝ « Գործադիր հանձնաժողով» : Պարբերականի հաղորդմամբ ամբողջ Եվրոպան երկյուղով էր սպասում այս իրադարձությանը: Թերթը ժամ առ ժամ ներկայացնում է Սահմանադիր ժողովի աշխատանքը: Պարբերականի հաղորդումից իմանում ենք, որ Սահմանադիր ժողովի նիստը նախատեսվածից ուշ է գումարվել, քանի որ Ժամանակավոր կառավարության անդամները ուշացել են: «Եվրոպան» մասնավորապես գրում է. « ժամը 1-ին արդէն 700 պատգամաւոր ժողվուած էին ու դեռ Առժամանակեայ կառավարութեան անդամները չէին երեւնար»:[10]

[1] Молок А.И. Июньские дни 1848 года в Париже, 1949 г. http://vive-liberta.narod.ru/biblio/1848_4.pdf
[2] «Եվրոպա», 1848թ., 7 մարտի, թիվ 10, էջ 40
[3] Նույն տեղում
[4] Молок А.И. указ. соч., http://vive-liberta.narod.ru/biblio/1848_4.pdf
[5] Эритье Л. указ. соч., стр.219
[6] Там. же.,.стр.,231
[7] «Եվրոպա», 1848թ., 7 մարտի, թիվ 10, էջ 41
[8] Նույն տեղում
[9] «Եվրոպա», 1848թ., 28 մարտի, թիվ 13, էջ 56
[10] «Եվրոպա», 1848թ., 4 մայիսի, թիվ 20, էջ 85

«Եվրոպան» հետագա համարներում քննադատում է Սահմանադիր ժողովի վարած քաղաքականությունը: Մխիթարյանները անհասկանալի են համարում Սահմանադիր ժողովի ամբողջ իշխանությունը իր ձեռքը վերցնելու ցանկությունը: Նրանց կարծիքով Սահմանադիր ժողովն իր կազմից 5 հոգու ընտրելով ու իշխանությունը վերջիններիս ձեռքում կենտրոնացնելով, ոչնչով չի տարբերվի թագավորից, քանզի. « Մեկ թագաւորի տեղ, որն որ չկրցան տանիլ ու վռընտեցին, հինգ շինծու ու անանուն թագաւորներ պիտի ունենան»:[1] Եվրոպան անդրադառնում է նաև Սահմանադիր ժողովում լեհական հարցի քննարկմանը, ինչպես նաև մայիսի 15-ի դեպքերին:[2]

«Եվրոպան» հունիսի 8-ի համարում որոշակի անդրադարձ է կատարում գործող կառավարության մեջ տիրող վախի ու ահաբեկման մթնոլորտին և մայրաքաղաքում պարբերաբար տեղի ունեցող ժողովրդական հուզումներին: Թերթի հաղորդմամբ՝ կառավարությունը հունիսի 6-ին հրաման արձակեց երկու հեծյալ գունդ մտցնել Փարիզ, որտեղ երկու օր առաջ 4000-ոց ազգային գվարդիան ցրել էր Սեն Դենի շրջակայքում հավաքված «խռովարարներին»:[3] Պարբերականն այս հարցում համամիտ է ֆրանսիական, ինչպես նաև եվրոպական քաղաքական լրատվամիջոցների կարծիքի հետ, որոնք ցուցարարներին անվանում խռովարարներ:Հունիսի 22-ի երեկոյան Փարիզի փողոցները լցվեցին ցուցարարներով, այն բանից հետո , երբ Սահմանադիր ժողովը ազգային արհեստանոցները փակելու մասին որոշում ընդունեց:[4] Թերթը մեջբերում է «Տեպա» լրագրի հաղորդումն այս մասին, նշելով, որ հունիսի 20-ից սկսած կառավարության շրջանում թյուր կարծիք էր ստեղծվել, իբր թե Ազգային ժողովում ընդունված օրենքները դադարեցրել են համաժողովրդական գործադուլները: «Եվրոպան» հունիսի 22-ի իրադարձությունները անվանում է « մեծ ու արիւնահեղ խռովութեան սկզբնաւորութիւնը»:[5] Հունիսի 23-24-ի հաջողություններից հետո ապստամբները հարկադրված եղան պաշտպանողական գործողություններ ձեռնարկել: Սրան ի պատասխան փարիզի զինված ուժերի գլխավոր հրամանատար գեներալ Գ. Կավենյակը լրացուցիչ զորք մտցրեց մայրաքաղաք: Մխիթարյանները այս «խռովության » առավել սաստկացման պատճառը համարում է այն, որ գործող կառավարության հակառակորդները համախմբվել էին իրենց ուժերը Բուրբոնների կողմնակիցների գլխավորությամբ:[6] Հունիսի 24-ի առավոտյան «Գործադիր հանձնաժողովը » հրաժարական տվեց , Փարիզը հայտարարեց պաշարողական դրության մեջ[7] և ամբողջ իշխանությունը հանձնեց գեներալ Գ. Կավենյակին: Պարբերականը թվային տեղեկություններ է տրամադրում վերջինիս հրամանատարության տակ գտնվող զորքի թվաքանակի, ինչպես նաև հունիսի 25 –ին թնդանոթային ռմբակոծությունների մասին: «Եվրոպան» անուն առ անուն թվում է նաև այն 12 լրագիրները, որոնց գործունեությունը Գործադիր հանձնաժողովի կողմից դադարեցվեց հունիսի 25-ին:[8] Հունիսի 26-ին Կավենյակը ճնշեց ապստամբության վերջին օջախը: [9] Եվրոպան գրում է. « 26 հունիսի, ապստամբները բոլոր իրէնց տեղերնին կորսընցուցած էին. միայն Սէնդ Անդուան արուարձանը մնացած էր»:[10]

Հունիսյան ապստամբության ճնշումից հետո «Եվրոպան» անդրադառնում է 1848 թ. ֆրանսիական հեղափոխության բռնկման պատճառներին: Մխիթարյանները հակադրվում են եվրոպական հայտնի մի շարք լրագրերի, գտնելով, որ որքան էլ ֆրանսիական կառավարության հակառակորդները և «թագաւորութեան բաղձացողները»[11] ամեն կերպ ժողովրդի շրջանում հակակառավարական վերաբերմունք ձևավորեին, այնուամենայնիվ պարբերականի կարծիքով հեղափոխության պատճառը ֆրանսիական ժողովրդի ծանր տնտեսական դրությունն էր և սովը:[12] Հեղափոխության պատճառների վերաբերյալ իրենց կարծիքը արտահայտելուց զատ, հետագա հրապարակումներում Մխիթարյաններն ընթերցողին ներկայացնում են նաև մի շարք եվրոպական

[1] «Եվրոպա», 1848թ., 11 մայիսի, թիվ 21, էջ 90
[2] Молок А.И. указ. соч., . http://vive-liberta.narod.ru/biblio/1848_4.pdf
[3] «Եվրոպա», 1848թ., 8 հունիսի, թիվ 25, էջ 107
[4] Застенкер Н.Е. указ. соч., стр. 98
[5] «Եվրոպա», 1848թ., 22 հունիսի, թիվ 27, էջ 116
[6] Նույն տեղում
[7] Застенкер Н.Е.там. же. Стр.103
[8] «Եվրոպա», 1848թ., 22 հունիսի, թիվ 27, էջ 117
[9] Молок А.И. указ. соч., . http://vive-liberta.narod.ru/biblio/1848_4.pdf
[10] Եվրոպա», 1848թ., 29 հունիսի, թիվ 28, էջ 120
[11] Նույն տեղում, էջ 121
[12] Նույն տեղում

լրագիրների տեսակետները: Ըստ « Եվրոպայի» անգլիական պարբերականները 1848 թ. դեպքերը դիտարկում են Եվրոպայում տիրող ազգային-ազատագրական պայքարների համատեքստում: Գտնելով որ. « խռովութիւնն ու արիւնահեղութիւնը անպակաս պիտ ըլլար »:[1] Մխիթարյանները սա համարում են արտաքին պատճառ և գտնում է, որ խռովությունների ներքին պատճառ ը նախ և առաջ ֆրանսիցի ժողովրդի չափից դուրս ազատություն և հավասարություն սիրելն է:[2]

Գրականության ցանկ

1.«*Եվրոպա», 1848թ., 8 փետրվարի, թիվ 6*

2. «Եվրոպա», 1848թ., 19 փետրվարի, թիվ 9

3. «Եվրոպա», 1848թ., 7 մարտի, թիվ 10

4. «Եվրոպա», 1848թ., 28 մարտի, թիվ 13

5. «Եվրոպա», 1848թ., 4 մայիսի, թիվ 20

6. «Եվրոպա», 1848թ., 11 մայիսի, թիվ 21

7. «Եվրոպա», 1848թ., 8 հունիսի, թիվ 25

8. «Եվրոպա», 1848թ., 22 հունիսի, թիվ 27

9. Եվրոպա», 1848թ., 29 հունիսի, թիվ 28

10. Застенкер Н.Е. Революция 1848 года во Франции ,1948 г.,

11. Молок А.И. Июньские дни 1848 года в Париже, 1949 г. http://vive-liberta.narod.ru/biblio/1848_4.pdf

12. Эритье Л. История французской революции 1848 г. и Второй Республики.1907 г.,

[1] Եվրոպա», 1848թ., 6 հուլիսի, թիվ 29 , էջ 124

[2] Նույն տեղում

ՀՏԴ 94(38)"1453"

Պատմություն

Աստղիկ Օհանյան
Վանաձորի պետական համալսարան, 3-րդ կուրս
aren.ohanyan.1994@mail.ru

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ԱՆԿՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Կոստանդնուպոլսի անկումը առացքային իրադարձություն է համաշխարհային պատմության մեջ: Կոստանդնուպոլսի նվաճման արդյունքում թուրքերը տարածաշրջանում հաստատեցին իրենց գերիշխանությունը: Այդ պատճառով եվրոպացիները ստիպված եղան նոր ճանապարհներ փնտրել՝ Արևելքի երկրների հետ կապ հաստատելու համար: Այդյունքում դրվեց աշխարհագրական հայտնագործությունների սկիզբը:

Բանալի բառեր. Կոստանդնուպոլսի գրավումը, Բյուզանդական կայսրության անկումը, Օամանյան Կայսրություն, Աշխարհագրական մեծ հայտնագործություններ, Սուլթան Մեհմեդ 2-րդ Նվաճող, Կոստանդին 11 Պալեոլոգոս, մշակութային արժեքների ոչնչացում, Ստամբուլ, ստրկավաճառություն, ռուսական ուղղափառ եկեղեցի, Կոստանդնուպոլսի ուղղափառ եկեղեցի, Կաթոլիկական եկեղեցի:

Астхик Оганян
ВГУ, 3-ий курс
aren.ohanyan.1994@mail.ru

ПОСЛЕДСТВИЯ ЗАВОЕВАНИЯ КОНСТАНТИНОПОЛЯ И ЕГО ЗНАЧЕНИЕ В МИРОВОЙ ИСТОРИИ

Падение Константинополя важное событие в мировой истории. В результате завоевания Константинополя турки в регионе установили господство. По этой причине европейцы были вынуждены искать дороги для торговли со странами Востока. В результате было положено начало географических открытий.

Ключевые слова: Завоевание Константинополя, Падение Византийской империи, Османская империя, Географические открытия, Султан Мехмет II Завоеватель, Константин XI Палеолог, Уничтожение культурного наследия, Стамбул, работорговля, Русская православная церковь, Константинопольская православная церковь, Католическая церковь.

Astkhik Ohanyan
VSU, 3rd year
aren.ohanyan.1994@mail.ru

THE CONSEQUENCES OF THE CONQUEST OF CONSTANTINOPLE AND ITS IMPORTANCE IN WORLD HISTORY

Constantinople reducing the key event of the world history. As a result of Costantinoples conquest the Turks established dominance in the region. For this reason, the Europeans were forced to seek ways for trade with the East. As a result, the beginning of geographical discoveries was initiated.

Keywords: Fall of Constantinople, the ruin of the Empire of Byzaantium, Ottoman Empire, geographical discoveries, Mehmed the Conqueror, Constantine XI Palaiologos, Destruction of cultural heritage, Istanbul , the slave trade, Russian Orthodox Church, Ecumenical Patriarchate of Constantinople, Catholic Church.

1453թ. մայիսի 29-ը համաշխարհային պատմության կարևորագույն տարեթվերից մեկն է: Այդ օրը թուրքական զորքերը ներխուժեցին Կոստանդնուպոլիս և Բյուզանդական կայսրությունը դադարեց գոյություն ունենալ: Նրա կործանմամբ ավարտվեց մարդկային հասարակության զարգացման մի մեծ

ժամանակաշրջան և ինչպես Եվրոպայի, այնպես էլ Ասիայի ժողովուրդների կյանքում տեղի ունեցան կտրուկ փոփոխություններ:[1]

Մինչև 330թ մայիսի 11-ը քաղաքը, որը գտնվում էր Բոսֆորի ափին, կրում էր Բյուզանդիում անունը, սակայն այդ օրը այն վերանվանվեց Կոստանդնուպոլիս՝ «Կոստանդինի քաղաք»: Շուրջ 1123 տարի այն եղել է Հռոմեական կայսրության հունախոս մասի մայրաքաղաքը: Այսօր քաղաքը կոչվում է Ստամբուլ, որը «Կոստանդնուպոլիս» անվան թուրքերեն տարբերակ է: 15-րդ դ. Բյուզանդական կայսրությունը ղեկավարում Կոստանդին XI-ը (1449-1453թթ)՝ Արևելյան Հռոմեական կայսրության վերջին կայսը: Իտալական հումանիստ Ֆրանցիսկո Ֆիլելֆոն նրան անվանում է «բարեպաշտ և վսեմ մտքով մարդ» (pio et excelso animo): Կայսեր հակառակորդը դարձավ երիտասարդ մի թուրք՝ Մեհմեդ II Նվաճողը (1451-1481թթ):

Այնպես ստացվեց, որ դեռևս 1300թ. ոչ մեկ ուշադրություն չէր դարձնում թուրք-օսմանների վրա, սակայն 28 տարի անց թուրքերը գրավեցին Մարմարա ծովի ափին գտնվող Բուրսա քաղաքը և սկսեցին վերահսկել Փոքր Ասիայում: [2] Սուլթան Մեհմեդ II Նվաճողը (1451-1481թթ) իր կյանքի նպատակը հռչակեց Կոստանդնուպոլսի գրավումը: որ « Թուրքական կայսրությունը երբեք չի լինի ապահով, քանի դեռ քանի դեռ Կոստանդնուպոլիսը չի անցել թուրքեր ձեռքը»: [3]Մեհմեդը, կամ ինչպես Բարբարոն է ասում՝ «քրիստոնյա ժողովրդի հեթանոս թշնամին», ձեռնամուխ եղավ մեծ քաղաքի պաշարմանը»: [4]

Կայսրը օգնության խնդրանքով դիմեց Արևմուտքին, բայց ռազմական օգնության փոխարեն Կոստանդնուպոլիս եկավ Հռոմեական կարդինալ, Մոսկովյան նախկին մետրոպոլիտ Իսիդորը՝ և առաջ քաշեց արևելյան և արևմտյան եկեղեցիների միավորման հարցը: Հենց այդ ժամանակ էլ բյուզանդացի Լուկա Նոտարասը արտասանեց իր հայտնի խոսքերը. «Ավելի լավ է քաղաքում տեսնել թուրքական իշխանության չարմանները, քան լատինական տիարները»:[5] 1452թ դեկտեմբերի 12-ին Սուրբ Սոֆիայի տաճարում պաշտոնապես հայտարարվեց ունիայի հաստատման մասին: Բայց օգնության համար ասպիսի գին վճարելով բյուզանդական վերնախավը սխալվեց: Արևմտյան երկրները օգնության չհասան կործանվող կայսրությանը:[6] Սովորաբար ասվում է, որ Կոստանդնուպոլսի անկումից 2 օր անց ժամանեց արևմտյան նավատորմը, սակայն երբ իմացան քաղաքի գրավման մասին անմիջապես ետ դարձան: Ներկայումս այդ փաստը մերժվում է. ոչ Պապականության, ոչ ջենովացիների, ոչ էլ արագոնյան նավերը երբեք էլ չեն ուղարկվել արևելք՝ Կոստանդնուպոլսին օգնության:[7]

Բյուզանդական կայսրության կործանումը պայմանավորված էր մի շարք ներքին և արտաքին պարճառներով: Իրադարձությունների ընթացքը ցույց տվեց թուրքերի ռազմական ուժի գերազանցությունը հույներին նկատմամբ: Բյուզանդիայի կործանման գործում վճռորոշ դեր խաղացին ներքին պատճառները: Դրանցից գլխավորը տնտեսական անկումն էր: Վենետիկյան և Ջենովյան առևտրական կապիտալը խարխլեց կայսրությունը ներսից, զրկեց նրան կենսական ուժից և հարստությունից: Վճռորոշ ազդեցություն ունեցավ նաև ֆեոդալների անսահմանափակ իշխանությունը բոլոր ոլորտներում: Ֆեոդալական դասակարգը բաժանվեց թշնամի կուսակցությունների և քաղաքական հոսանքների միջև: Ոչ լատինասերները, ոչ հույն-օրթոդոքսները չկարողացան միավորվել արտաքին թշնամու դեմ պայքարում: Նույնիսկ այն ժամանակ, երբ թուրքերը շրջապատել էին Կոստանդնուպոլիսը, քաղաքում չէր դադարում ունիթորների և հակաունիթորների պայքարը:

---

[1] Рансимен С 'Подение Костантинополя в 1453г.'' (Москва 1983г) Предисловие (И.Е. Петросян и К.Н. Юзбашян)

[2] Нанами Шионо ''Последнй час рицарей' (Москва. 2011г) Глава 1 ДВА ГЛАВНЫХ ГЕРОЯ:Город Константинополь, Султан Мехмед II

[3] Рансимен С. ''Подение Костантинополя в 1453г. '' Москва 1983г

[4] Васильев А.А. История Византийской империи. От крестовых походов до падения Константинополя. Москва 2013г. Том II Глава 3, Падение Византии

[5] Васильев А.А. История Византийской империи. От крестовых походов до падения Константинополя. Москва 2013г. Том II Глава3, Падение Византии

[6] https://topwar.ru/14835-padenie-konstantinopolya-i-vizantiyskoy-imperii.html

[7] Васильев А.А. История Византийской империи. От крестовых походов до падения Константинополя. Москва 2013г. Том II Глава 3, Падение Византии

Բացահայտ դավաճանական դիրք բռնեց ազնվականության մի մասը, որոնք պատկանում էին թուրքասերների հոսանքին: Կայսրության ողբերգությունը կայանում է նրանում, որ չգտնվեց մի հայրենանվեր կուսակցություն, որ կարողանար կազմակերպել ժողովրդի պայքարը թուրքերի դեմ: Այն պահին, երբ անհրաժեշտ էր համախմբել պետության ուժերը, ամենուր տիրում էր թշնամանք, պառակտում, փոխադարձ կասկածամտություն: Բյուզանդացի պատմաբան Սֆրանցին գրում է. «Արևմուտքի երկրների՝ Բյուզանդիային օգնություն ցույց չտալու պատճառն այն էր, որ նրանք չունեին միասնական ղեկավար և նրանց մեջ չկար միաբանություն»:[1] Այն փաստը, որ քրիստոնյա պետությունները չեկան օգնության Կ.Պոլսին ցույց է տալիս, որ նրանք չէին ցանկանում կռվել հավատի համար՝ եթե ձեռք չտան իրենց անմիջական շահերին: Ժամանակակիցներից շատերը Կոստանդնուպոլսի անկման մեջ մեղադրում են Վենետիկին, որը որպես առևտրական , ծովային քաղաք, ուներ հզոր նավարմրմ: [2]

«Երբեք չի եղել և երբեք էլ չի լինի ավելի ահավոր իրադարձություն» - այսպես է գրում Կրետեի Ագարաթոս վանքի ժամանակագրրը՝ Կոստանդնուպոլսի գրավման մասին: Շուտով ողջ արևմտյան աշխարհը իմացավ, որ քրիստոնեական քաղաքը հայտնվել է անհավատների ձեռքում: Իրականում արևմուտքում ոչ ոք նման բանի չէր սպասում: Մարդիկ գիտեին, որ քաղաքը վտանգի տակ է, բայց չէին հասկանում թե որքան մեծ է այդ վտանգը: Հռոմի համար ստեղծված իրադրությունը բավականին պարզ էր. անհրաժեշտ էր կազմակերպել խաչակրաց արշավանք: Նիկոլայ V Պապը 1453թ սեպտեմբերի 30-ին բուլլաներ ուղարկեց արևմտյան տիրակալներին՝ հայտարարելով խաչակրաց արշավանք: Սակայն ոչ մի խաչակրաց արշավանք էլ տեղի չունեցավ, քանի որ Արևմտյան Հռոմեական կայսրության կայսր Ֆրեդերիկ III-ը ոչ քաղաքականապես, ոչ ֆինանսապես ի զորու չէր մասնակցել արշավանքին: Ֆրանսիայի թագավոր Կարլոս V-ը զբաղված էր իր երկրի վերակառուցմամբ: Անգլիան, որը Հարյուրամյա պատերազմից ավելի էր տուժել քան Ֆրանսիան, թուրքերին համարվում էր հեռավոր խնդիր: Այսպիսով՝ ամեն անգամ, երբ հերթը հասնում էր կոնկրետ ռազմական գործողություններին, Արևմուտքը դառնում էր պասիվ: Այդ ժամանակվա գրողների մի մասը, այդ թվում կարդինալ Իսիդորը, հակված էին թուրքերին անվանել տրոյացիներ: Ֆրանսիայում լայնորեն տարածվեց այն նամակը, որը իբր թե գրել էր Մեհմեդ II-ը Նիկոլայ V Պապին և նամակում զարմանք արտահայտել, որ իտալացիները իրենց հանդեպ թշնամական են, մինչդեռ երկուսն էլ սերում են նույն տրոյացիներից: Այս լեգենդը դարձավ արշավանքի կազմակերպմանը խանգարող պատճառներից մեկը: Մնում էր ևս մեկ ուղղափառ պետություն, որի տարածք սուլթանի զորքերը չներխուժեցին: Այն ժամանակ, երբ Բյուզանդիան կործանվում էր թուրքերի հարձակումներից ռուսները ազատագրվում էին թաթարական տիրապետությունից և վերականգնում իրենց անկախությունը: Նրանք կարծում էրն, որ Կոստանդնուպոլիսը ընկավ իր գործած մեղքերի՝ մասնավորապես արևմտյան եկեղեցու հետ միավորվելու համաձայնության համար: 1458թ Մոսկովյան մետրոպոլիտը գրել է. «Կոստանդնուպոլիսն ընկավ որովհետև հեռացավ ճշմարիտ ուղղափառ հավատից: Բայց Ռուսաստանում այդ հավատը դեռևս կենդանի էր: Երկրի վրա գոյություն ունի միայն մեկ ճշմարիտ եկեղեցի՝ ռուսական եկեղեցին»: 1512թ. Ֆիլոֆեյը Մեծ իշխան Վասիլի III-ին գրել է. «Երկու Հռոմները կործանվեցին, բայց երրերդը կանգուն է, իսկ չորրորդը այլևս չի լինի»: Այսպիսով՝ ողջ ուղղափառ աշխարհում միայն ռուսները օգուտ քաղացին Կոստանդնուպոլիսի կործանումից: [3]

1453թ երկու ժողովուրդների համար դարձավ ճակատագրական: Թուքերի համար քաղաքի գրավումը նշանակում էր ոչ միայն հնարավորություն հիմնել կայսրության նոր մայրաքաղաք, այլ նաև ապահովել իրենց մշտական ներկայությունը Եվրոպական մայրցամաքում: Այսօր թուրքերը դեռևս տիրում են Թրակիային և մեկ ոտքով կանգնած են Եվրոպայում: Ինչ վերաբերում է հույներին, ապա նրանց համար Կոստանդնուպոլսի անկումը ավելի նշանակալի իրադարձություն էր: Այն առնվազն նշանակում էր իրենց պատմության ավարտը:[4] Սուլթանը, իրեն հռչակեց կայսեր ժառանգորդը և

[1] Кулаковский Ю.А. История Византии. Том 3 ГЛАВА 13. ОСНОВНЫЕ ПРИЧИНЫ ПАДЕНИЯ ВИЗАНТИИ И ПОСЛЕДСТВИЯ ТУРЕЦКОГО ЗАВОЕВАНИЯ/

[2] Рансимен С. Подение Костантинополя в 1453г. (Москва 1983г)Глава XI. Участь побежденных

[3] Рансимен С. Подение Костантинополя в 1453г. (Москва 1983г) Глава XII. Европа и завоеватель

[4] Рансимен С. Подение Костантинополя в 1453г. (Москва 1983г) Глава XII. Европа и завоеватель

ընդունեց «Հռոմի Կայսր» տիտղոսը: Այս տիտղոսը թուրքական սուլթանները կրեցին մինչև Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը: [1]

Բյուզանդական կայսրության թուրքական նվաճումը ունեցավ պատմական կարևոր հետևանքներ: Նախ՝ Կոստանդնուպոլսի գրավումը հեշտացրեց թուրքերի հետագա առաջխաղացումը Բալկանյան թերակղզի: Թուրքական ֆեոդալները ստացան հնարավորություն ողջ ուժերը կենտրոնացնել Բալկաններում և ամրապնդել իրենց գերիշխանությունը: Հարավ-Արևմտյան Եվրոպայի շատ երկրներ ընկան օսմանյան լծի տակ: XV-XVIդդ թուրքական ներխուժումը իրենից ներկայացնում էր երկրորդ արաբական ներխուժում… ինչպես VIIIդ Պուատիեի ժամանակ, այնպես էլ այժմ վտանգը սպառնում էր ողջ Եվրոպային: [2]

Թուրքական տիրապետության հաստատումը արևելյան Միջերկրականում և հետագա առաջխաղացումը արևմուտք մեծ ազդեցություն ունեցավ Եվրոպայի քաղաքական և տնտեսական կյանքում: Միջազգային հարաբերություններում հանդես եկավ նոր գործոն- Օսմաննյան կայսրությունը, որի հետ սկսեցին հաշվի նստել Եվրոպայի բոլոր միապետները: Արևմտաեվրոպական պետությունները, Պապականությունը և հատկապես Իտալիայի քաղաք-պետությունները պետք է պատասխան տային Բյուզադիայի հանդեպ վարած անհեռատես քաղաքականության համար: Կոստանդնուպոլսի գրավմամբ թուրքերը ոչ միայն տիրեցին ռազմա-ստրատեգիական խոշոր կետի, այլև դարձան նեղուցների տերը, ինչը Թուրքական տերությանը տալիս էր ինչպես ռազմական, այնպես էլ տնտեսական օգուտներ: Թուրքերի վերահսկողության տակ անցան Միջերկրական և Էգեյան ծովերից Սև ծով տանող առևտրական ուղիները, որոնք Եվրոպան կապում էին Մերձավոր և Հեռավոր Արևելքի հետ: Դա մեծ հարված հասցրեց եվրոպական երկրների առևտրին, առաջին հերթին իտալական հանրապետություններին՝ Վենետիկին և Ջենովային, որոնք պետք է հաճոյանային սուլթանին, որպեսզի ստանան առևտրական արտոնություններ: Մյուս կողմից, թուրքերի կողմից Կոստաղնուպոլսի գրավումը խթան հանդիսացավ, որ եվրոպացիները սկսեն նոր ծովային ուղիներ որոնել դեպի Հնդկաստան: Այսպիսով՝ արևելյան Միջերկրականում թուրքական տիրապետության հաստատումը նպաստեց XVդ աշխարհագրական մեծ հայտնագործություններին: [3]

Ինչ վերաբերում է Արևելյան Եվրոպային և Անդրկովկասին, ապա Բյուզանդիայի կործանումը դաժան հարված էր նրանց համար: Վրաստանի, և հատկապես Հայաստանի համար այն հանդիսանում էր նախանշան թուրքական ներխուժման համար: Թուրքական տերության ընդլայնումն ու ամրապնդումը սպառնալիք էր ստեղծում նաև Ռուսիայի համար՝ Ղրիմի կողմից, որտեղ թուրքերի օգնությամբ հաստատվել էին թաթարական խաները: Նրանք դարձան Ռուսիայի թշնամին և նրանց թիկունքին միշտ կանգնած էր Օսմանյան կայսրությունը: Ռուսական տիրակալները իրենց հայտարարեցին Բյուզանդիայի անմիջական ժառանգորդը, իսկ Մոսկվան հռչակեցին «Երրորդ Հռոմ»: Իվան III-ի և Սոֆիա Պալեոլոգոսի դինաստիական ամուսնությունը նպատակ ուներ ամրապնդել Ռուսիայի նկրտումները որպես Բյուզանդիայի ժառանգորդ և բարձրացնել Մոսկվայի հեղինակությունը:[4] Կոստանդնուպոլսի անկումը քիչ ազդեցություն չթողեց նաև համաեվրոպական մշակութային զարգացման վրա: Բյուզանդական կայսրությունը մինչև իր գոյության վերջը եղել է մշակույթի և կրթության խոշորագույն կենտրոն: Նրանում ոչ միայն պահպանվել են անտիկ քաղաքակրթության ժառանգությունները, այլ նաև ստեղծվել սեփական և անկրկնելի մշակույթ: Կոստանդնուպոլսի նոր տերերը չէին խրախուսում հպատակ քրիստոնյաների շրջանում գիտության զարգացումը: Առանց կառավարության հովանավորության սկսեց անկում ապրել: Բյուզնդական քաղաքակրթությունը,բյուզանդական արվեստը այնուամենայնիվ, վերջնակականապես չվերացավ: Կոստանդնուպոլի գրավման նախօրեին հանդես եկան բազմաթիվ փայլուն մտածողներ, ովքեր շարունակում էին պահպանել Հին Հունաստանի և Հռոմի մշակութային ավանդույթները: Եվ այն

[1] https://ru.wikipedia.org/wiki/%D0%9F%D0%B0%D0%B4%D0%B5%D0%BD%D0%B8%D0%B5_%D0%9A%D0%BE%D0%BD%D1%81%D1%82%D0%B0%D0%BD%D1%82%D0%B8%D0%BD%D0%BE%D0%BF%D0%BE%D0%BB%D1%8F_(1453)#.D0.9F.D0.BE.D1.81.D0.BB.D0.B5.D0.B4.D1.81.D1.82.D0.B2.D0.B8.D1.8F

[2] Кулаковский Ю.А. История Византии. Том 3 ГЛАВА 13. ОСНОВНЫЕ ПРИЧИНЫ ПАДЕНИЯ ВИЗАНТИИ И ПОСЛЕДСТВИЯ ТУРЕЦКОГО ЗАВОЕВАНИЯ/

[3] Кулаковский Ю.А. История Византии. Том 3 ГЛАВА 13. ОСНОВНЫЕ ПРИЧИНЫ ПАДЕНИЯ ВИЗАНТИИ И ПОСЛЕДСТВИЯ ТУРЕЦКОГО ЗАВОЕВАНИЯ

[4] Кулаковский Ю.А. История Византии. Том 3 ГЛАВА 13. ОСНОВНЫЕ ПРИЧИНЫ ПАДЕНИЯ ВИЗАНТИИ И ПОСЛЕДСТВИЯ ТУРЕЦКОГО ЗАВОЕВАНИЯ

փաստը, որ հելլենիզմը վերջնականապես չանհետացավ, կապված է հունական ազգային ոգու արիության հետ:[1] Մշակութային և եկեղեցական կապեր էին հաստատվել Արևելյան և Արևմտյան Եվրոպայի երկրների հետ: Կոստանդնուպոլսի անկմամբ կասեցվեցին այդ մշակութային կապերը: Թուրքերի կողմից Կոստանդնուպոլսի մակութային արժեքների ոչնչացումը արդեն իսկ անդառնալի վնաս հասցրեց համաեվրոպական մշակույթի զարգացմանը: Թեև բյուզանդական քաղաքակրթությունը շարունակեց իր գոյություն թուրքական տիրապետության շրջանում, սակայն այն իրենից ներկայացնում էր նախկին շքեղության թույլ փայլը: Մեծ դժվարությամբ Արևմտյան Եվրոպա տեղափոխվեցին հին հունական ձեռագրերն ու բյուզանդական արվեստի արժեքավոր ստեղծագործությունները: Իտալիա փախած բյուզանդական գիտնականները լուրջ դեր խաղացին հումանիզմի զարգացման մեջ: Որոշ բյուզանդական գիտնականներ և եկեղեցական գործիչներ ապաստան գտան Ռուսիայում, Արևելյան Եվրոպայի երկրներում և այդ տերությունների կառավարիչներին ծանոթացրին անտիկ և բյուզանդական մշակույթին:[2]

Թուրքական նվաճումը XV-XVI դդ հանգեցրեց ստրկավաճառության աճին: Թուրքական էքսպանսիային բնորոշ էր առավել առողջ և երիտասարդ կանանց ու տղամարդկանց, ինչպես նաև երեխաների վճառքը կայսրության մի շարք շրջաններում ձևավորված ստրկական շուկաներում: «Թուրք զինվորները այնքան շատ գերիներ էին վերցնում, որ չգիտեին որտեղ պահեն, այնպես որ պատրաստ էին վաճառել նրանց ցացկացած գնով և նույնիսկ, ինչպես ասում են, մեկ գլխարկով»: Թուրքական նվաճումը մեծ հարված հասցրեց Բյուզանդական կայսրության քաղաքներին: Նրանց մեծ մասը ենթարկվեց թալանի և ոչնչացման: Դմիտրի Կիդոնիսը գրում է, որ քաղաքներից մի քանիսը ամբողջությամբ զրկվեցին բնակչությունից, ամենուր բնակչությունը կամ վաճառվում էր գերության, կամ էլ արտագաղթում այլ երկրներ: XVI դ վերջին և XVI դ Օսմանյան կայսրության քաղաքներում թուրք բնակչությունը գերազանցեց տեղական բնակչությանը: Թուրքերը արհեստով և առևտրով չէին զբաղվում, քանի որ ռազմա-ֆեոդալական վերնախավը այն համարում էր նվաստացուցիչ և թողնում նվաճված ժողովուրդներին: Հույն առևտրականների և արհեստավորների սեփականությունն ու կյանքը չուներ ոչ մի երաշխիք թուրքական կառավարության կամայականություններից և բռնություններից: Թեև նրանք աստիճանաբար հարմարվեցին թուրքական տիրապետության ծանր պայմաններին, այնուամենայնիվ օսմանների տեղական առևտուրը կտրուկ նվազեց:

Թուրքերը հարված հասցրին նաև ջենովացիների և վենետիկցիների միջերկրածովյան և սևծովյան առևտրին: Իտալացիներին չփրկեց ոչ իրենց դավաճանական քաղաքականությունը Բյուզանդիայի նկատմամբ, ոչ էլ սուլթանի առջև խոնարհվելն ու թանկարժեք նվերներ տալը: Սկզբում ջենովացիները սուլթանից պարգև ստացան անձնական անձեռնամխելիություն, պահպանեցին գույքը և առևտրով զբաղվելու իրավունքը, սակայն թուրքերը աստիճանաբար նրանց դուրս մղեցին իրենց առևտրական տիրույթներից՝ դեպի նախկին Բյուզանդական կայսրության տարածք:[3]

Եզրակացություն

Այսպիսով՝ Կոստանդնուպոլիսի անկումը առանցքային իրադարձություն է համաշխարհային պատմության մեջ: Շատ պատմաբաններ 1453թ համարում են Միջնադարի ավարտը: Այսինքն կա կարծիք, որ այն առանձնացնում է Միջնադարը Վերածննդի դարաշրջանից: Բյուզանդիայի և Բալկանյան այլ պետությունների թուրքական նվաճումը մի ամբողջ հարյուրամյակ կասեցրեց այդ երկրների քաղաքական, տնտեսական և մշակութային զարգացումը:

Քրիստոնեական կայսրությունը դադարեց գոյություն ունենալ, իսկ նրա տեղում հիմնադրվեց մուսուլմանական կայսրություն: Կոստանդնուպոլսի թուրքական նվաճումը իր ազդեցությունը թողեց Եվրոպայի և Ասիայի երկրների վրա, որոնց միապետները սկսեցին հաշվի նստել Օսմանյան կայսրության հետ: Համաշխարհային պատմության մեջ Կոստանդնուպոլսի գրավման նշանակություն այն է, որ դա նպաստեց Աշխարհագրական մեծ հայտնագործություններին: Արևելքի հետ առևտուր

[1] Рансимен С. Подение Костантинополя в 1453г. (Москва 1983г) Глава XI.Участь побежденных

[2] Кулаковский Ю.А. История Византии. Том 3 ГЛАВА 13. ОСНОВНЫЕ ПРИЧИНЫ ПАДЕНИЯ ВИЗАНТИИ И ПОСЛЕДСТВИЯ ТУРЕЦКОГО ЗАВОЕВАНИЯ/

[3] Кулаковский Ю.А. История Византии. Том 3 ГЛАВА 13. ОСНОВНЫЕ ПРИЧИНЫ ПАДЕНИЯ ВИЗАНТИИ И ПОСЛЕДСТВИЯ ТУРЕЦКОГО ЗАВОЕВАНИЯ/

կատարելը այլևս հնարավոր չէր Կոստանդնուպոլսով և եվրոպացիները սկսեցին նոր ճանապարհ փնտրել դեպի Հնդկաստան: Սկսվեցին աշխարհագրական մեծ հայտնագործությունները:

Գրականության ցանկ

1. Рансимен С. ''Подение Костантинополя в 1453г.'' (Москва 1983г)
2. Нанами Шионо ''Последнй час рицарей' (Москва. 2011г)
3. Васильев А.А. История Византийской империи. От крестовых походов до падения Константинополя. Москва 2013г.
4. Кулаковский Ю.А. История Византии

УДК 316.7(39)

Культурология
Бурназаки К. И.
Русско-Армянский университет, магистратура 1-ый курс
kburnazaki@mail.ru

НАЦИОНАЛЬНАЯ КУЛЬТУРА И ВЫЗОВЫ СОВРЕМЕННОСТИ

По мере распространения массового общества предаются забвению национальные культуры, которые должны являться основой национальной государственности, ресурсом социальной стабильности, экономического роста и национальной безопасности. В результате подобного воздействия возникают угрозы для безопасности национальной культуры, сохранения и процветания нации.

Ключевые слова: национальная культура, этническая культура, индивидуализация человека, омассовление общества, национальная безопасность

Քրիստինա Բուռնազակի
ՀՌՀ, մագիստրատուրա 1-ին կուրս
kburnazaki@mail.ru

ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԻՍ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Ազգային մշակույթները, որոնք պետք է հիմք հանդիսանան ազգային պետականության, սոցիալական կայունության, տնտեսական աճի եւ ազգային անվտանգության համար մոռացվում են զանգվածային հասարակության տարածման հետ: Որպես այս ազդեցության հետեւանք ազգային մշակույթի անվտանգության, ազգի պահպանման եւ բարգավաճման համար սպառնալիքներ են առաջանում:

Բանալի բառեր՝ ազգային մշակույթ, էթնիկ մշակույթ, մարդու անհատականացում, հասարակության զանգվածայնացում, ազգային անվտանգություն:

Christina Burnazaki
RAU, Master's degree 1st year
kburnazaki@mail.ru

NATIONAL CULTURE AND CHALLENGES OF MODERNITY

National cultures which should be the basis for national statehood, social stability, economic growth and national security are forgotten with the spread of mass society. As a result of such an impact threat emerges for the security of national culture, preservation and prosperity of the nation.

Keywords: national culture, ethnic culture, individualization of a person, society aggregation, national security.

Сейчас актуально рассмотрение вопросов, связанных с ролью национальных культур в современных обществах. Весьма актуальным остается вопрос сохранения национальной культуры, переосмысление ее роли в обществе и в обеспечении национальной безопасности.

Информационные технологии и ЭВМ которые появились в конце 1940-х годов сразу стали предвестниками нового этапа научно-технического прогресса. В1970ых гг. происходит информационная революция — радикальные изменения, вызванные информационными технологиями, изобретением ЭВМ. На первый взгляд может показаться, что все создано человеком и должно служить ему для упрощения жизни. Но сейчас мы можем заметить пагубное влияние этих нововведений и превращение человека в раба техники и информации. Можно даже говорить об экономических, политических связях, охватывающих всю планету, они пересекают границы государств и даже вторгаются в жизнь людей. Все это делает весьма значимым переосмысление роли национальных культур народов мира.

Действительно, сегодня необходимо понять, какую роль играет национальная культура в обществах XXI века. Для этого необходимо осмыслить природу национальной культуры и проблемы, с которыми она сталкивается.

Для того, чтобы выявить природу национальной культуры, необходимо рассмотреть феномен нации. Весьма емкое ее определение дает И. В. Сталин: «Нация есть исторически сложившаяся устойчивая общность людей, возникшая на базе общности языка, территории, экономической жизни и психического

склада, проявляющегося в общности культуры... Только наличность всех признаков, взятых вместе, дает нам нацию»[1].

При рассмотрении феномена и природы национальной культуры необходимо учитывать влияние на национальную культуру предшествующих уровней развития человеческих общностей (род, клан, племя, народ). Например, язык появляется именно на уровне этнического единства, а при появлении народа, нации возникает потребность в литературном языке. Таким образом, формируется основа для развития национальной духовной культуры. Этнические сюжеты и образы заимствуются национальной элитой: писателями, композиторами, архитекторами заимствуются мелодии и ритмы, стили и образы. Этническая культура не принимая нововведения составляет основу национальной культуры [5, 297-309].

В своей статье «Новое отечество» русский философ, историк Георгий Федотов писал: «Нация, разумеется, не расовая и даже не этнографическая категория. Нация – категория, прежде всего культурная, а во вторую очередь политическая. Мы можем определить ее как совпадение государства и культуры. Там, где весь или почти весь круг данной культуры охвачен одной политической организацией и где, внутри ее, есть место для одной господствующей культуры, там образуется то, что мы называем нацией» [4, 103].

Федотов верно отмечает, что нация в первую очередь представляет собою культурное единство, потому что общество едино на основе религии, языка, система нравственных понятий, общности быта, искусства, литературы. Культурное единство нации в трактовке Федотова и есть то, что сегодня называют национальной культурой. [4, 103-104]. По моему мнению, пределы национальной культуры нельзя ограничить территорией одного государства поскольку, в мире существует множество общин и диаспор, которые являются носителями разных национальных культур за пределами своей исторической родины. Например, в диаспорах и общин армян, греков, евреев и др. народов осуществляется поддержание, развитие и распространение национальной культуры, посредством создания различных институтов, организации мероприятий, организаций богослужений, развития печатной деятельности, искусства и т.д.

Таким образом, культура на всех уровнях развития человеческих общностей включала в себя верования, язык, мировосприятие, идеи, модели поведения, характер взаимодействия с окружающей средой и т.д. Все эти элементы сами конструируют культуру человеческой общности, и изменение одного из них влияет на всю эту систему. Важно не забывать, что принадлежность людей к определенной нации не определяется государственными границами, национальные границы могут уходить далеко от государственных. Это в свою очередь наводит на мысль об охране других центров национальной культуры, находящихся далеко от своего очага возникновения.

По мнению Вадима Межуева «правильнее считать нацию понятием не субстанциальным (то есть заключающим в себе некий метафизический или психологический субстрат), а функциональным, существующим в системе определенных соотношений». Под этим утверждением понимается следующее: «каждая национальная культура существует только в отношении к другим национальным культурам. Не будь их, не было бы и ее. Каждая национальная культура обладает столькими же отличительными признаками, сколько есть других культур, с которыми она себя соотносит. Русская культура по отношению, например, к немецкой обладает одним набором признаков, по отношению к французской - другим и т.д.» [6].

По моему мнению, эти утверждения являются неверными, поскольку можно характеризовать свою национальную культуру не сравнивая ее с другими, а называя лишь факты представить целостный образ, к примеру, армянского национального характера, языка, мифов и легенд. Необязательно сравнивать армянский народ с каким-либо другим народом для выявления таких черт как традиционализм, уважение к старшим, национальный дух, темперамент и т.д.

Культуру можно назвать второй природой, созданной человеком. Она отражает то, что имеет особую важность для человека: она влияет на сознание людей, на их интеллектуальную жизнь, воздействует на функционирование определенных институтов, производит идеи, ценности, модели поведения, установки, правила, транслирует социальный опыт и т.д., которые разделяет большинство населения [3, 19].

Под национальной культурой понимается совокупность материальных и духовных ценностей нации и способов взаимодействия с природой и социальным окружением.

Мощь страны определяется не только военным потенциалом, сильной экономикой, развитием высоких технологий, важен и творческий, культурный потенциал, то есть духовная обороноспособность нации. Национальная культура является основой государственности, ресурсом социальной стабильности, экономического роста и национальной безопасности. Культура задает ценностно-смысловые ориентиры, которые направляют вектор развития нации, утрата, подмена такого вектора грозит потерей идентичности и исторической памяти народа. Поэтому величие и особенность национальной культуры сводится к ее уникальности и самобытности. Но не надо говорить о культурной автаркии, поскольку, в противном случае, не будет происходить взаимодействия с другими культурами и цивилизациями, что приведет к вымиранию и неправильному функционированию системы национальной культуры. Начнется процесс саморазрушения, поскольку автаркия не позволяет осуществлять процесс обновления и взаимодействия.

[1] Цит. по: Большая Советская энциклопедия, 1 изд., т. 31, М., 1934.

Угрозой для национальной культуры могут стать тяжелые исторические периоды, связанные как с внешними, так и внутренними факторами: конфликты, эпидемии, кризисы, войны, терроризм и т.д., следствием которых может быть увеличение уровня миграции населения, уничтожение исторических памятников, населения, культурный застой, ассимиляция и потери национальных культур и т.д.

Другая проблема – глобализация. Процесс, который отрицательно влиял на национальные культуры. Он не соответствовал ценностям, быту носителей национальных ценностей. Это связано с тем, что власти, надгосударственные организации выбирают путь модернизации и, соответственно, политический вектор развития направлен в сторону модернизации, а социокультурный предполагает движение в сторону традиционных представлений, верований, моделей поведения и т.д. Или же общество впитывает новые ценности, которые не соответствуют традиционным. В результате воздействия глобализации можно отметить также рост уровня активности националистически настроенных группировок, стремление вернуться к привычному образу жизни и отгородиться от влияния инноваций.

Результатом распространения средств массовых коммуникаций стало обнищание духовного начала в человеке, поскольку в современном веке человек становится потребителем все новой и новой техники, новых средств связи, он не интересуется тем, как это устроено и по каким принципам работают эти инновации. В результате античный «микрокосм», средневековый «венец творения» становится жертвой созданной им же цивилизации: им руководят, диктуют ценностную систему и детерминируют его поведение. Человек не руководит тем, что им было создано, сейчас создание стало выше творца.

Информационные сетевые потоки «ускоряют» время: информация может мгновенно передаваться в разные точки пространства. Теряется связь времен, прошлое теряет свое значение, настоящее приобретает гипертрофированное значение, а будущее попадает в зависимость от настоящего. События воспринимаются без всякой критики и оценки, тем самым устраняется смысл всего происходящего.

Фактически народ лишается исторической памяти, утрачивает свои цивилизационные «корни», т.е. традиции, нормы - социокультурные координаты. Такая потеря ценностных ориентиров, опоры, приводит к тому, что человек теряет способность действовать целенаправленно и последовательно, он не может полноценно оценивать настоящее. Появляется ощущение нервозности. [9, 147-148]. Радио, кино, реклама представляют отдельные факты и явления, а не целостную картину мира поэтому теряется связь между явлениями, в них не вкладывается определенного смысла, человек теряет способность к критическому мышлению. Производители товаров и услуг действуют с помощью рекламы на примитивные человеческие инстинкты, тем самым вызывая ажиотаж, они обращаются к подсознанию, к скрытым, подавленным инстинктам. Поэтому возрастает спрос на сенсационные, жуткие и отвратительные события.

Таким образом, рациональное начало в человеке уступает позиции для проявления бессознательного, эмоционального начала, воздействие на которое и осуществляется средствами массовой информации, для формирования в обществе стимулов для наиболее приемлемой реакции для властей со стороны общества.

Эрих Фромм рассуждает о человеке и влиянии семьи, общества на него. С одной стороны, человек развивается, возрастает роль его разума, что с другой стороны приводит к усилиению индивидуализации человека, это в свою приводит к его изоляции, неуверенности, бессилия и ничтожности. Поэтому единственным выходом, по мнению автора, может быть активная солидарность с другими людьми, которая соединяет человека с миром как свободного и независимого индивида [10, 25-27].

Люди, страдающие одиночеством со временем в определенной степени утрачивают позитивные человеческие качества и духовные ценности. Ситуативное одиночество у них может переходить в хроническое состояние, что в свою очередь может привести к психическим расстройствам, к деградации личности и, как следствие последнего, деградации общества [2]. Все это приводит к проблеме омассовления общества - потере индивидуальностей, с одной стороны, но и отделения друг от друга, потери идентификации с членами общества, создание своих индивидуальных миров.

Кризис культуры, как правило, возникает в переходные периоды,когда наблюдается процесс подавления одной цивилизационной системы, слабой в военном и техническом отношении, другой, более сильной по этим параметрам.

Таким образом, общество сталкивается с рядом проблем:

1. Проблемы, связанные с внешними и внутренними условиями (конфликты, войны, кризисы, эпидемии и т.д.);
2. Глобализация и ее последствия:

- потеря исторической памяти, исторического наследства, ценностных ориентиров, ценностной базы, что приводит к потере идентичности;
- следствием является разобщение, потеря целостности общества;
- появление и укоренение в сознании людей чужеродных норм и ценностей, которые легко усваиваются дифференцированным обществом;
- последнее предполагает гибель нации, государства, цивилизации.

Таким образом, первая проблема, связанная с внешними и внутренними условиями (конфликтами, кризисами, эпидемиями, терроризмом) решаема в рамках сотрудничества нескольких государств или всего

международного сообщества, поскольку подобные проблемы имеют мировой масштаб и касаются безопасности каждого государства и как следствие последнего, безопасности национальной культуры.

Проблема распространения массовой культуры является внутренней проблемой каждого государства. Необходимо заботиться о многообразии культур, поскольку диалог культур даёт перспективу развития, но это развитие не должно идти по пути вестернизации, необходимо переосмыслить свое культурное наследие тем самым создав культурно-идеологический заслон от чуждых ценностей.

Литература

[1] Абдурахманов М. И., Баришполец В. А., Манилов В. Л., Пирумов В. С. Основы национальной безопасности России. Под общей редакцией Манилова В. Л. – М, Друза, 1988.

[2] Алейникова О.С.Влияние культурного кризиса на проявление социального одиночества в современной России//Человек постсоветского пространства. –СПб, Санкт-Петербургское //http://anthropology.ru/ru/text/aleynikova-os/vliyanie-kulturnogo-krizisa-na-proyavlenie-socialnogo-odinochestva-v-sovremennoy

[3] Большая Советская энциклопедия, 1 изд., т. 31, -М., 1934

[4] Ионин. Л.Г. Социология культуры: путь в новое тысячелетие. -М., Логос, 1995.

[5] Федотов Г. Новое отечество/Ивасак Ю.П.//Новый град, -Нью-Йорк, «Новый Журнал», 1943.

[6] Культурология. Ред. Ю.Н. Солонин, М.С. Каган – М., Высшее образование, 2007

[7] Межуев В.М. Национальная культура как явление и понятие// Журнал личность, культура, общество, 2005 //http://www.narodru.ru/smi2983.html

[8] Ожегов С. И. Словарь русского языка. – М., Русский язык, 1993.

[9] Фромм Э.Анатомия человеческой деструктивности, -М., АСТ-ЛДТ, 2014.

[10] Фромм Э.Бегство от свободы. -М., Прогресс, 2000.

ՀՏԴ 327(529)

Քաղաքագիտություն

Իրինա Գաբրիելյան
ԱրՊՀ, պատմության և իրավագիտության ֆակուլտետ,
3-րդ կուրս
arina.irina97@mail.r

ԹԱՅՎԱՆ. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԸՆԴԴԵՄ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ

Հաշվի առնելով այն փաստը, որ և՛ Արցախը, և՛ Թայվանը պատկանում են չճանաչված պետությունների շարքին, որոշել եմ ընտրել հենց այս թեման: Այս հոդվածում ներկայացված են Թայվանի ժողովրդավարացման մասին առավել կարևոր և հանգուցային վերլուծություններ ու որոշ համեմատականներ են անցկացված մեր երկրի և Թայվանի միջև:

Բանալի բառեր՝ չճանաչված պետություն, ժողովրդավարացում, դիվանագիտական հարաբերություններ, ռազմական դրություն,տնտեսական աճ, տնտեսական և մշակութային ներկայացուցչություններ, բազմակուսակցական համակարգ:

Ирина Габриелян
АрГУ, факультет истории и права,
3-ий курс
arina.irina97@mail.ru

ТАЙВАНЬ: ПРОЦЕСС ДЕМОКРАТИЗАЦИИ ПРОТИВ ДИПЛОМАТИЧЕСКОГО ОГРАНИЧЕНИЯ

Учитывая тот факт, что и Арцах и Тайвань принадлежат к ряду непризнанных государств, решила выбрать именно эту тему. В данной статье представлены наиболее важные и существенные анализы о демократизации Тайваня и сделаны некоторые сравнения между нашей страной и Тайванем.

Ключевые слова: непризнанное государство, демократизация, дипломатические отношения, экономический рост, военное положение, экономические и культурные представительства, многопартийная система.

Irina Gabrielyan
ASU, The Faculty of History and Low,
3rd year
arina.irina97@mail.ru

TAIWAN: THE DEMOCRATIZATION PROCESS AGAINST DIPLOMATIC LIMITATION

Taking into account the fact that both Artsakh and Taiwan belong to a number of unrecognized states, I decided to choose this topic. This article presents the most important and significant analyzes about Taiwan's democratization and makes some comparisons between our country and Taiwan.

Keywords: unrecognized state, democratization, diplomatic relations, economic growth, martial law, economic and cultural representations, multi-party system.

Թայվանը չճանաչված պետություն է Արևելյան Ասիայում: Պաշտոնական անվանումը՝ Չինաստանի Հանրապետություն: Հաճախ օգտագործվում է Թայվան անվանումը, քանի որ գտնվում է համանուն կղզու վրա: Մայրաքաղաքը Թայբեյն է: Տարածքը 36 000 քկմ է: Բնակչությունը՝ 23 542 782 (2017), 97%-ը չինացիներ են: Բնակչության մեծ մասը՝ 94%-ը, բուդդիզմի, դաոսիզմի և կոնֆուցիականության հետևորդ է: Պաշտոնական լեզուն չինարենն է: Թայվանն ունի խիտ բնակեցվածություն (Ասիայում զբաղեցնում է երկրորդ տեղը՝ Բանգլադեշից հետո, իսկ աշխարհում՝ 15-րդ): Մայրցամաքից բաժանվում է Թայվանի նեղուցով: Թայվանի անկախությունը ճանաչել են աշխարհի 23 պետություն: Թայվանը իր «դիվանագիտական հարաբերությունները» իրականացնում է «տնտեսական և մշակութային ներկայացուցչությունների» (փաստացի՝ դեսպանատների) միջոցով:[1]

[1] Международное право, 1 семинар, Челябинский институт экономики и права им. М.В. Ладошина http://www.studfiles.ru/preview/5473709/

Թայվանը Լեռնային Ղարաբաղի նման համարվում է խնդրահարույց տարածք: Պեկինը պնդում է, որ Թայվանը Չինաստանի Ժողովրդական Հանրապետության (ՉԺՀ) նահանգն է, իսկ Թայբեյի վարչակազմը՝ սոսկ տեղական ինքնակառավարման մարմինը: Թայվանը դուրս է մղված միջազգային կազմակերպությունների մեծ մասից, օրինակ՝ ՄԱԿ-ից, եւ ապրում է Չինաստանի կողմից հնարավոր ռազմական հարձակման հարատեւ վտանգի ներքո: ՉԺՀ-ն իր դիվանագիտական հարաբերությունները հաստատում է այն երկրների հետ, որոնք չունեն նմանատիպ կապեր Թայվանի հետ: Դրա համար ներկայումս 20 պետություններից քիչ ավել երկրներ են ճանաչում Թայվանը, հիմնականում՝ Խաղաղօվկիանոսյան շրջանի, Լատինական Ամերիկայի և Աֆրիկայի երկրները: Այսօր Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը ոչ միայն Չինաստանի հիմնական ներկայացուցիչն է աշխարհում գործող գրեթե բոլոր կարևոր միջազգային կառույցներում և չի ճանաչում Թայվանի անկախությունը, այլև սպառնում է ռազմական միջամտությամբ, եթե հանկարծ կղզին որոշի պաշտոնապես հռչակել իրեն որպես անկախ պետություն:[1] Սրան ի պատասխան, սակայն, ԱՄՆ-ն բազմիցս հայտարարել է, որ հանդիսանում է Թայվանի անվտանգության երաշխավորը և անպայման խնդրին կմիջամտի, եթե ՉԺՀ-ն հարձակվի Թայվանի վրա:

1886 թ. Թայվանը դարձավ Չինաստանի առանձին պրովինցիա, իսկ 1894թ. Թայբեյը դարձավ պրովինցիայի պաշտոնական կենտրոնը: 1894թ. Ճապոնիայի և Չինաստանի միջև սկսվեց պատերազմ՝ ճապոնացիների՝ Կորեա ներխուժելու պատճառով: Չինական նավերը չկարողացան դիմադրել ճապոնական ուժեղ և ժամանակակից նավերին, և 1895թ. Չինաստանը պայմանագիր ստորագրեց, որով էլ Թայվանը և մոտակա կղզիները հանձնեց Ճապոնիային: 1911թ. չինական վերջին դինաստիան անկում ապրեց և նրան փոխարինեց Չինաստանի ազգայնական կուսակցություն Գոմինդանը, որի հիմնադիրը համարվում է Սուն Յաթսենը:

1930-ականներին կղզում գրանցվեց արդյունաբերական արտադրանքի աճ: Տեղի բնակչությունը ակտիվ կերպով ճապոնիականացվում էր: Երկրորդ աշխարհամարտի տարիներին Թայվանը դարձել է ճապոնական զորքերի հենակետ՝ Հարավարևելյան Ասիայի երկրներ ներխուժելու համար: 1945թ. Ճապոնիայի կապիտուլյացիայից հետո կղզին անցավ Չան Կայշիի չինական ազգայնական կարավարությանը: Ճապոնիայի պարտությունից շատ չանցած մայրցամաքում Գոմինդանի և Չինաստանի կոմունիստների միջև սկսվեց քաղաքացիական պատերազմ: Կոմունիստական կուսակցության ներկայացուցիչը Չինաստանում Մաո Ցզե Դունն էր: Գոմինդանը՝ Կայշիի գլխավորությամբ ի վիճակի չեղավ շարունակել պայքարը, և Մաոյի կոմունիստական ուժերը Գոմինդանին վտարեցին մայրցամաքից: Ի վերջո Չինաստանում իշխանության եկան կոմունիստները: 1949թ. հոկտեմբերի 1-ին հռչակվեց Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը:

Չինաստանում քաղաքացիական պատերազմի ժամանակ 1949-1950 թթ. հազարավոր գաղթականներ, նախկին կառավարության կողմնակիցներ փախել են կղզի՝ փրկվելով կոմունիստական զորքերից: Նրանք հաստատվել են կղզում և փաստացիորեն ստեղծել Թայվան պետությունը: 1949թ. Չինաստանի Հանրապետությունը կազմված էր Թայվանից, Պենխու կղզեխմբից, ինչպես նաև Մացզու և Կինմեն կղզիներից:

Ընդհանրապես, դասական կոնֆուցիականության հայրենիքն ու քաղաքական արժեքների հիմնական կրողը Չինաստանն է: Կոնֆուցիականությունը մերժում է քաղաքացիների իրավունքները, իսկ այն բացառիկ դեպքերում, երբ կան որոշակի իրավունքներ, ապա դրանք սահմանված են պետության կողմից: Կոնֆուցիականության՝ ժողովրդավարությանը հակասող ամենակարևոր խոչընդոտներից մեկն այն է, որ այս համակարգերը նույնականացնում են պետությունն ու հասարակությունը և ամբողջությամբ բացառում են պետությունից հարաբերականորեն անկախ սոցիալական խմբերի և ինստիտուտների առկայությունը: Ինչպես արդեն նշվեց, կոնֆուցիականության հայրենիքը Չինաստանն է, իսկ մնացած Ասիական պետությունները, որոնք այս կամ այն պատճառով տեղայնացրել են կոնֆուցիականությունն իրենց երկրներում, ժամանակի ընթացքում կա՛մ անցել են ամբողջական ժողովրդավարացման (Ճապոնիա, Ֆիլիպիններ), կա՛մ փորձել են այն հնարավորինս համապատասխանեցնել իրենց տեղական մշակութային ավանդույթներին և զգալիորեն հեռացել են կոնֆուցիականության դասական սկզբունքներից՝ վերածվելով ավելի ավտորիտար համակարգ ունեցող հասարակությունների (Սինգապուր, Թայվան, Հարավային Կորեա): Թայվանում և Հարավային

[1] Թամրազյան Հ., Ինչ սպասել նոր զարգացումներից. Չինաստանի և Թայվանի հարաբերությունները թևակոխում են նոր փուլ, 13.02.2014
http://blognews.am/arm/news/131081/

Կորեայում 1980-ականների վերջին տնտեսական առաջընթացը ժողովրդավարացման համար դրական նախադրյալներ ստեղծեց: Թայվանը պատմականորեն հանդիսացել է Չինաստանի ծայրամասերից, և այնտեղ առկա կոնֆուցիականությունը հիմնականում պայմանավորված է եղել այդ պատմական իրողությամբ: Չինական դոմինանտությունից է բխել Թայվանի քաղաքական և տնտեսական համակարգի ձևավորումը: Տնտեսական զարգացվածության արդյունքում երկրում ձևավորված միջին խավի քաղաքական ազատությունների պահանջարկները սկսեցին ավելանալ, և արդեն 1990 թվականին կոնֆուցիականությունը Թայվանում լուրջ լեգիտիմության խնդիրների բախվեց: Քաղաքական ղեկավարությունը ստիպված եղավ ազատականացնել Թայվանի քաղաքական համակարգն ու բռնեց ժողովրդավարացման ուղին: Այսօր արդեն Թայվանը, ըստ «Freedom House»-ի հայտարարած ժողովրդավարության ինդեքսի, համարվում է ամբողջական ժողովրդավարական համակարգ ունեցող պետություն, որի ժողովրդավարության միավորը հնարավոր 100-ից 91 է:[1] Ասիական երկրներից շատերը (բացառությամբ Չինաստանի և Սինգապուրի) նախորդ դարեվերջին կա՛մ ամբողջությամբ հրաժարվեցին կոնֆուցիականությունից, կա՛մ կոնֆուցիականությունն այդ երկրներում այնպիսի տրանսֆորմացիոն փուլերով անցավ, որ կորցրեց իր հիմնական քաղաքական բնորոշիչները:

Սկսած 1980-ականներից՝ Թայվանի հասարակության համար բնորոշ էր ժողովրդավարացման ընթացքը, որի հետ միասին այստեղ սկսեց կազմավորվել եւ զարգանալ նոր պատկերացում ազգային ինքնության մասին (մասնավորապես՝ Թայվանի «ապաչինականացման» տեսանկյունից), Թայվանի պատմության շարադրումը եւ վերաիմաստավորումը քաղաքական եւ ակադեմիական շրջանակներում եւ այլն:

«Արտասահմանյան գաղափարների մատակարարների դերը կատարեցին ինտելեկտուալները: Այդ «ուղեղների հակառակ հոսքը» սկսվեց 1970-ականների վերջին եւ 1980-ականների սկզբին, երբ ամերիկյան համալսարաններում գիտական աստիճաններ ստացած ավելի ու ավելի շատ երիտասարդ, տաղանդավոր թայվանցիներ վերադառնում էին հայրենիք եւ աշխատանքի տեղավորվում: Հենց նրանք էլ դարձան բազմաթիվ արեւմտյան եւ գլոբալ արժեքների փոխադրողներն ու տեղայնացնողները… Նրանք դասավանդում կամ գրում էին այդ նոր գաղափարների եւ նոր մտածողության մասին համալսարանական լսարաններում, թերթերում եւ ամսագրերում, թարգմանում էին բազմաթիվ դասական երկեր (փիլիսոփայություն, հոգեբանություն, սոցիոլոգիա, պատմություն, տնտեսագիտություն, քաղաքագիտություն եւ բիզնես)…»:[2] Այս արմատական փոփոխությունները նշանակում էին արվեստների, գրականության, կինոյի եւ երաժշտության, ինչպես նաեւ սոցիալական գիտությունների ժամանակակից դրսեւորումների տեղայնացում՝ յուրացում եւ զարգացում: Այս ամենը խոսում է մասնավորապես մտավորականության՝ որպես ազդեցիկ սոցիալական ուժի մասին: Մյուս կողմից՝ թայվանյան հասարակության փոխակերպման գործում այսօր էլ մեծ է տարատեսակ սոցիալական շարժումների դերը: Շարժումներ, որոնց ակտիվիստներից շատերն արեւմտյան կրթություն ստացած մարդիկ են, եւ որոնց «օգնությամբ Թայվանը գլոբալացվում է՝ հասարակության գիտակցության վրա ազդելով արեւմտյան ծագում ունեցող, բայց տեղայնացման ենթարկված եւ ընդունելի դարձած գաղափարների եւ հասկացությունների միջոցով»:[3]

1987-88թթ. կղզու քաղաքական կյանքում եղան փոփոխություններ՝ 1949թ-ին հայտարարված ռազմական դրությանը վերջ դրվեց, անցկացվեցին ազատ նախագահական ընտրություններ, ոչ մեծ չափով սկսվեցին շփումները ՉԺՀ-ի հետ:

1986թ. ձևավորվեց Դեմոկրատական Առաջադիմական կուսակցությունը, 1987թ-ի ռազմական դրության չեղյալ հայտարարումից հետո կուսակցությունը պաշտոնապես ճանաչվեց: Թայվանում իշխանության մարմինների ամբողջ համակարգը կառուցված է 1947թ. դեկտեմբերի 25-ին ընդունված Սահմանադրության հիման վրա: 1991 թ. տեղի ունեցած Սահմանադրական բարեփոխումների արդյունքում կատարվեցին մի շարք փոփոխություններ, որոնց շարքում է ռազմական դրության չեղյալ հայտարարելը և բազմակուսակցական համակարգին անցում կատարելը: Պետական համակարգի հիմքում դրված է իշխանության 5 ճյուղ՝ օրենսդիր, գործադիր, դատական, քննական, վերահսկիչ,

[1] Սամսոնյան Ն., Կոնֆուցիականություն և ժողովրդավարություն. հակադիր բևեռներ, 2017, մարտի 28 http://civilngo.com/confucianism-and-democracy/

[2] Բայադյան Հ., Մինչեւ ո՞ւր են հասնում Եվրոպայի սահմանները, 2007, սեպտեմբերի 17 http://hetq.am/arm/news/24017/

[3] Նույն տեղում

որոնցից յուրաքանչյուրն իրականացվում է համապատասխան մարմնի կողմից (յուան): Պաշտոնապես շատ երկրների հետ դիվանագիտական հարաբերություններ չունեցող Թայվանն աչքի է ընկնում կիսանախագահական կառավարման համակարգով և դեմոկրատական սկզբունքների պահպանման հետևողականությամբ: Այստեղ գործում են ավելի քան ութսուն կուսակցություններ: Հիմնական քաղաքական կուսակցություններն են՝ Ժողովրդավարական առաջադիմական կուսակցությունը(ԺԱԿ), Գոմինդանը, Նոր կուսակցությունը, Առաջին ազգային կուսակցությունը, Համերաշխության միությունը: 1990-ական թթ.. տեղի ունեցավ իշխանության անցում Գոմինդանից (իշխող կուսակցություն) ԺԱԿ-ին (ընդդիմադիր կուսակցություն): 2016թ. ընտրությունների ժամանակ Թայվանի նախագահ է ընտրվել Ցայ Ինվենը (Թայվանի պատմության մեջ առաջին կին նախագահը):

Սեփական փաստացի անկախության ամրապնդման համար Թայվանի կատարած վերջին քայլը առաջին հայացքից իր գլխավոր թշնամի դիտվող պետության հետ առավել սերտ հարաբերությունների հաստատումն էր: Անցած դարի 80-ական թվականների վերջից Թայվանն իրականացնում է հետզհետե զարգացող տնտեսական ինտեգրումը Չինաստանի հետ՝ վերջինիս նկատմամբ շարունակելով պահպանել քաղաքական պատշաճ հեռավորություն: Անգամ այն ժամանակ, երբ քաղաքական հարաբերությունները բավական թշնամական էին, թայվանցի գործարարները Չինաստանում լայնածավալ ներդրումներ էին կատարում՝ ձգտելով օգուտ քաղել չինական անծայրածիր շուկայից: Այսօր Չինաստանը Թայվանի խոշորագույն առեւտրային գործընկերն է: Չինաստանի հետ Թայվանն ունի առեւտրային նշանակալից առողջ սալդո: 2008 թվականից ի վեր այդ կապերն անգամ ավելի սերտ են դառնում: Քանի դեռ կողմերն ի վիճակի չեն ճանաչելու միմյանց կառավարությունները, փաստացի ուղիղ բանակցություններն ընթանում են կիսապաշտոնական մարմինների միջեւ: Նրանք կարողացել են հասնել մի շարք նշանակալից տնտեսական պայմանավորվածությունների ձեռքբերման՝ առեւտուրն ազատականացնելու, ուղիղ թռիչքներն ու բեռնափոխադրումները կազմակերպելու, զբոսաշրջիկների եւ ուսանողների փոխադարձ այցերը թույլատրելու վերաբերյալ: Այսպիսով, երկու կողմերը, շրջանցելով առկա խորը քաղաքական տարաձայնությունները, զբաղվում են փոխշահավետ տնտեսական հարաբերությունների խորացմամբ: Չինաստանը հույս ունի, որ այս ինտեգրումը նպաստելու է Թայվանը վերամիավորելու նպատակին, մինչդեռ վերջինս, ընդհակառակը, շատ զգուշավոր է՝ բանակցությունները քաղաքական հարցերի քննարկմանը չտղորդելու եւ Թայվանի ինքնիշխանությունը հարցականի տակ չդնելու առումով: Այլ կերպ ասած՝ Թայվանը հույս ունի, որ Չինաստանի հետ առավել սերտ տնտեսական հարաբերությունները գործնականում կամրապնդեն իր փաստացի անկախությունը:

Կղզի-պետությունը տարածաշրջանում առանձնանում է նորագույն տեխնոլոգիաների ոլորտում իր առաջատար դիրքով՝ հատկապես էլեկտրոնային սարքաշարավորումների արտադրանքով: Այստեղ են կենտրոնացած համաշխարհային համակարգչային և էլեկտրոնային սարքավորումներ արտադրող այնպիսի ընկերություններ, ինչպիսիք են HTC, Asus, AU Optronics, TSMC, UMC ընկերությունները, սակայն արդյունաբերության մեջ առաջատար դիրք է զբաղեցնում կիսահաղորդիչների և հեղուկ բյուրեղապակյա էկրանների արտադրությունը: Չունենալով նավթի պաշարներ՝ Թայվանը հանդիսանում աշխարհում ամենախոշոր նավթավերամշակող երկրներից մեկը՝ արտահանելով թերմոպլաստիկ նյութեր, իսկ քիմիական նյութերի արտադրության ոլորտում զբաղեցնում է աշխարհում 9-րդ հորիզոնականը:

Թայվանն այն բացառիկ պետությունն է, որը, ՄԱԿ-ում չունենալով անկախ պետության ներկայացուցչություն, կարողանում է զարգացնել տնտեսությունը՝ համարվելով աշխարհի ամենազարգացած և կայուն տնտեսություն ունեցող երկրներից մեկը: Պետության համար առաջնային նշանակություն ունի կայուն և զարգացած տնտեսություն ունենալը, քան այլ պետությունների կողմից իր սուվերենության հաստատումը: Նույնիսկ այն դեպքում, երբ ՉԺՀ-ը ոչ մի կերպ չի ճանաչում Թայվանի անկախությունը, համարվում է այդ երկրի տնտեսական առումով հիմնական գործընկերներից մեկը: 2012թ-ի Արժույթի համաշխարհային հիմնադրամի տվյալներով Թայվանն ավելի քան 904 մլրդ դոլարով եզրափակում է աշխարհում ամենաբարձր համախառն ներքին արդյունք ունեցող 20 պետությունների շարքը և այս ամենն այն դեպքում, երբ «Փոքր Չինաստան» պետությունը չունի դիվանագիտական հարաբերություններ և ոչ մի զարգացած պետության հետ: ՀՆԱ-ի գերակշիռ

մասը՝ 73%-ը, բաժին է ընկնում ծառայությունների ոլորտին, 23%-ը՝ արդյունաբերությանը և միայն 3%-ը՝ գյուղատնտեսությանը:[1]

Տնտեսության մեջ, ի տարբերություն հարևան երկրների, գերակշռում է փոքր և միջին բիզնեսը, որն էլ տնտեսության կայունության և դինամիկ զարգացման երաշխավորն է: Ինֆլյացիան և գործազրկության մակարդակը բավականին ցածր են, իսկ տնտեսական աճն արդեն երեսուն տարի շարունակ պահպանում է տարեկան միջինը 4% աճ:

Չինաստանի Հանրապետության բնակչության կյանքի որակը բավական բարձր է գնահատվում, իսկ մեկ բնակչին բաժին ընկնող համախառն ներքին արդյունքի ցուցանիշը տասնմեկ անգամ բարձր է, քան Չինաստանի Ժողովրդական Հանրապետության դեպքում:

Կղզու տնտեսական զարգացումը նպաստեց կանանց սոցիալ-տնտեսական և քաղաքական կարգավիճակի բարձրացմանը: Ինդուստրիալիզացիան նրանց հնարավորություն տվեց զբաղված լինել տնից դուրս, ինչը մեծացրեց կանանց հետաքրքրությունը հանրային ոլորտի նկատմամբ, այդ թվում նաև՝ քաղաքականությանը մասնակցելու առումով:

Միջազգային ասպարեզում Թայվանը ներկայանում է որպես հաջողված ժողովրդավարության մոդել՝ ազատ ՋԼՄ-ներով եւ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում գերազանց վարկանիշով: Թայվանում ուղղակի նախագահական եւ խոհրդարանական ընտրություններն անցկացվում են 1990-ականներից սկսած, իսկ «Freedom House»-ը նրան դասում է քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների ոլորտում Ասիայի առավել ազատ երկրների շարքը: Թայվանական դիվանագետներն անընդհատ մատնանշում են սեփական ժողովրդավարության մակարդակի եւ մարդու իրավունքների պահպանման հարցում իրենց եւ Չինաստանի դրության միջեւ առկա ահռելի տարբերությունը: Նրանք հաճախ ներկայացնում են Թայվանը որպես աշխարհի առաջին եւ միակ չինական ժողովրդավարություն: Այդ վարկանիշը վայելում է մեծ ընդունելություն ոչ միայն բուն Չինաստանում, այլեւ աշխարհով մեկ սփռված չինական սփյուռքի համայնքներում: Սեփական երկիրը որպես ժողովրդավարության մոդել ներկայացնելու փորձերից բացի կղզում ստեղծվել է նաեւ «Ժողովրդավարությունների թայվանական հիմնադրամը»՝ արտերկրում ժողովրդավարության եւ մարդու իրավունքների համար պայքար մղելու նպատակով: Թայվանի ազատ, հանդուրժողական եւ լիբերալ ժողովրդավարության կարգավիճակը կարեւորագույն գործոն է, որը երկրին թույլ է տալիս վայելել միջազգային աջակցություն եւ դրական վարկանիշ, մասնավորապես՝ Ճապոնիայի, Եվրոպայի եւ ԱՄՆ-ի կողմից: Իրականում, թայվանական ժողովրդավարությունն անվտանգության ամենահզոր աղբյուրն է, որը շատ ավելի զորեղ է, քան բոլոր ամենազարգացած պաշտպանական համակարգերը:

Ինչ վերաբերում է մեր երկրի և Թայվանի միջև համեմատությանը, ապա նախ և առաջ կարելի է ասել, որ մենք խնդիր ունենք զարգացման սեփական մոդել ստեղծելու: Այսօր ակնհայտ է, որ զարգացումը Հարավարևելյան Ասիայի զարգացումն է, և համաշխարհային այսօրվա պայմաններում հենց Հարավարևելյան Ասիայի երկրներն են գտել այն բանաձևը, որն այսօր տանում է զարգացման: Դրա մասին ասում են տասնյակ տարիներ շարունակվող նրանց բարձր զարգացման տոկոսները: Մենք կարծում ենք, որ պետք է առաջատարների հետ ընկերություն անենք, որոնք իսկապես առաջատար են: Այսինքն՝ մենք միշտ առաջատար ենք համարել ԱՄՆ-ին, Եվրոպային, բայց մենք տեսնում ենք, որ թե տնտեսական տեմպերով, թե սոցիալական կացութաձևի կառուցման առումով այնտեղ ավելի շատ տեղի է ունենում քայքայում, քան թե զարգացում. միասեռականների կամ յուվենալ արդարադատության խնդիրները, փախստականները, հասարակության ոչ ադեկվատ վերաբերմունքը ցույց են տալիս, որ այս արևմտյան մոդելն արդեն որոշակի առումով սպառել է իրեն: Մենք իսկապես պետք է նայենք ավելի արդյունավետ զարգացող մոդելների վրա, քանի դեռ մենք մեր սեփական մոդելը չենք ստեղծել: Մեր միջև հիմնական տարբերությունը մշակույթն է, որը ի վերջո գալիս է կացութաձևից: Ոչ միայն Թայվանում, այլև Չինաստանում, Ճապոնիայում, Հարավային Կորեայում առկա է հատուկ վերաբերմունք պետության նկատմամբ: Պետության հանդեպ շատ մեծ մոտիվացիա կա: Նրանք ձգտում են ունենալ ուժեղ պետություն և արդյունքներն ապշեցուցիչ են: Տնտեսության մեջ կատարվող թռիչքներն այս երկրներում կատարվում են սեփական լավ պետություն ունենալու գաղափարով:

Հաշվի առնելով տնտեսական պոտենցիալն ու համաշխարհային տնտեսության մեջ կարևոր դերակատարությունը՝ կարելի է պնդել, որ այս պետությունը մոտ ապագայում կկարողանա պահպանել նույն դիրքերն ու մնալ ոչ միայն տարածաշրջանի, այլև համաշխարհային տնտեսության մեջ լուրջ

[1] Մխեյան Ա., Թայվան. հզոր տնտեսություն՝ առանց դիվանագիտության, 2013-10-17
https://armmkheyan.blogspot.am/2013/10/blog-post_17.html

դերակատարում ունեցող երկրներից մեկը՝ պաշտոնապես դիվանագիտական հարաբերություններ չունենալով անգամ տնտեսապես դաշնակից երկրների հետ: Ինչևիցե, աշխարհի յուրաքանչյուր երկիր յուրովի բացառիկ է: Միշտ էլ կլինեն սահմանափակումներ՝ մեկ երկիրը մյուս երկրի համար որպես մոդել դիտարկելու հարցում: Կարծում եմ, որ ճկուն ու մեղմ դիվանագիտություն վարող եւ հանդուրժողական ժողովրդավարության վարկանիշը հաջողությամբ օգտագործող Թայվանը, որն իր մշակութային արտադրանքն է արտահանում եւ առեւտուր անում իր հնարավոր թշնամու հետ, կարող է լավ օրինակ հանդիսանալ միջազգային ճանաչման ձգտող երկրների համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա.Գ., Թայվանի նորընտիր կին ղեկավարը ծանր ընտրության առաջ է կանգնած, 2016-01-19 http://orer.am/?p=164740&l=am
2. Բալասանով Ա., 65 տարի ընդմիջումից հետո կկայանա Չինաստանի և Թայվանի պաշտոնյաների պատմական հանդիպումը, 11/02/2014 http://www.panorama.am/am/news/2014/02/11/china-1/353539
3. Բայադյան Հ., Մինչեւ ո՞ւր են հասնում Եվրոպայի սահմանները, 2007,սեպտեմբերի 17 http://hetq.am/arm/news/24017/
4. Թամրազյան Հ., Ինչ սպասել նոր զարգացումներից. Չինաստանի և Թայվանի հարաբերությունները թևակոխում են նոր փուլ, 13.02.2014 http://blognews.am/arm/news/131081/
5. Թայվանական մոդել. 2016 թվականը IT համայնքում Թայվանի տարի է, <<Լրատվական ռադիո>> եթերի «Սա Հայաստան է և վերջ» հաղորդաշարի թողարկումից, 2016,հունվարի 11 https://lratvakan.am/?p=51953&l=am/
6. Մխեյան Ա., Թայվան. հզոր տնտեսություն՝ առանց դիվանագիտության,2013-10-17 https://armmkheyan.blogspot.am/2013/10/blog-post_17.html
7. Սամսոնյան Ն., Կոնֆուցիականություն և ժողովրդավարություն. հակադիր բևեռներ, 2017, մարտի 28 http://civilngo.com/confucianism-and-democracy/
8. Ֆել Դ., Թայվան. ասիական որբի դասերը Լեռնային Ղարաբաղի համա՞ր, Լոնդոն, 2012, մարտ http://theanalyticon.com/?p=1576
9. Антонов М. А., От лжекапитализма к тоталитаризму!, Москва, 2008. С. 160 http://www.rulit.me/books/ot-lzhekapitalizma-k-totalitarizmu-read-425489-85.html
10.Кий Е.А., Тайвань, его культура и общество. Исследования Тайваня как особая область синологии // Серия “Symposium”, Конференция «Путь Востока», Путь Востока: Межкультурная коммуникация., Выпуск 30 / Материалы VI Молодежной научной конференции по проблемам философии, религии, культуры Востока. Санкт-Петербург,2003. С.120-125. http://anthropology.ru/ru/text/kiy-ea/tayvan-ego-kultura-i-obshchestvo-issledovaniya-tayvanya-kak-osobaya-oblast-sinologii
11. Международное право, 1 семинар, Челябинский институт экономики и права им. М.В. Ладошина, 23.02.2016 http://www.studfiles.ru/preview/5473709/
12. Миннуллин, А.Р., Становление демократии в процессе трансформации традиционного общества: Исторический опыт Тайваня, Место защиты диссертации: Казань, 2005. С. 176 http://www.dissercat.com/content/stanovlenie-demokratii-v-protsesse-transformatsii-traditsionnogo-obshchestva-istoricheskii-o
13. Степанова Е.Н., Демократизация Тайваня и решение проблемы защиты прав женщин, Общество и государство в Китае: XLI научная конференция / Ин-т востоковедения РАН. - М.: Вост. лит., 2011. – 440 с. – (Ученые записки Отдела Китая ИВ РАН. Вып. 3 / редкол. А.А. Бокщанин (пред.) и др.). – ISBN 978-5-02-036461-5 (в обл.). С. 287-91. www.synologia.ru/a/Демократизация_Тайваня
14. Хун П.Б., Демократический процесс на Тайване, Место защиты диссертации: Владивосток, 2002 http://cheloveknauka.com/demokraticheskiy-protsess-na-tayvane
15. Lewis J.W., Winckler E.A., Kang Y., Ginsburg N.S., Taiwan: Self-Governing Island, Asia, 27-04-2017 https://www.britannica.com/place/Taiwan
16. Taiwan country profile, BBC News Services, 2017, 28 February http://www.bbc.com/news/world-asia-16164639

УДК 32.019.5

Политология

Лида Гаспарян
Российско-Армянский университет, 4-ый курс
gasparyan.lida@mail.ru

ОСНОВНЫЕ МЕХАНИЗМЫ, ФОРМЫ И МЕТОДЫ ПОЛИТИЧЕСКОЙ ПРОПАГАНДЫ

В современную эпоху все более актуальным становится изучение методов и механизмов политической пропаганды и ее влияние на поведение масс. Начиная с Античности, с помощью использования методов пропаганды оказывалось сильное влияние на массовое сознание как в обыденной жизни, так и в период военных действий. Было замечено, что в период II Мировой войны одним из самых действенных способов воздействия на общество были приемы пропаганды и агитации.

Ключевые слова: политическая пропаганда, методы, нацизм, массовое поведение

Lida Gasparyan
Russian-Armenian University, 4th year
gasparyan.lida@mail.ru

BASIC MECHANISMS, FORMS AND METHODS OF POLITICAL PROPAGANDA

The study of methods and mechanisms of political propaganda and the degree of its impact on public behavior became the most actual and topical in modern times. Since Antiquity, through the use of propaganda methods, there has been a strong influence on mass consciousness, both in everyday life and during the war. It is observed that during World War II, one of the most effective methods of influencing society was the use of methods of propaganda and agitation technologies.

Keywords: political propaganda, methods, Nazism, mass behavior

Լիդա Գասպարյան
Հայ-Ռուսական համալսարան, 4-րդ կուրս
gasparyan.lida@mail.ru

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ, ՄԵԹՈԴՆԵՐԸ և ՁԵՎԵՐԸ

Արդի դարաշրջանում առավել արդիական է դարձել քաղաքական քարոզչության մեթոդների եւ գործիքների ուսումնասիրությունն ու նրանց գործադրած ազդեցության աստիճանը զանգվածների վարքագծի վրա: Սկսած Անտիկ դարաշրջանից՝ քարոզչական մեթոդների օգտագործմամբ մեծ ազդեցություն էր գործադրվում զանգվածային վրա, ինչպես առօրյա կյանքում, այնպես էլ պատերազմի ժամանակ: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին հասարակության վրա ազդեցություն գործադրելու առավել արդյունավետ միջոցներից են եղել քարոզչական մեթոդներն ու ագիտացիան:

Բանալի բառեր՝ քաղաքական քարոզչություն, մեթոդներ, նացիզմ, զանգվածային վարքագիծ

В условиях стремительного развития современного информационного общества методы и приемы пропаганды меняются и совершенствуются. Они влияют на наше поведение в повседневной жизни, стремится изменить наше мировоззрение и идеологию, используя агитационные речи, рекламу, информационные и социальные сети и т.д. Политическая пропаганда имеет большое воздействие на поведение масс во время военных действий.

Теоретическая и практическая значимость работы заключается в том, что с помощью исследования методов пропаганды и степени их влияния на жизнь общества становится возможным проанализировать внедряемые в наше сознание новые формы идеологии, посредством чего можно определить методы противостояния пропагандистской деятельности.

Метод пропаганды использовался в течение всей человеческой истории. В течение различных эпох в ряде государств роль информации ставилась на достаточно высокий уровень. А пропаганда, как вид манипуляции, развивалась в основном в военной сфере. Основываясь на различных источниках, можно сказать, что как методы пропаганды, так и психологическая война часто применялись на подсознательном уровне.

Для того чтобы лучше представить роль пропаганды в жизни общества, необходимо для начала дать определение понятия пропаганды и средств массовой информации. Это поможет нам раскрыть сущность политической пропаганды и показать степень ее воздействия на массовое сознание. Оба данных понятий имеют прямое отношение к теории коммуникаций, так как они являются одними из объектов изучения данной области наук.

Система средств массовой информации – это «социальный институт, который обеспечивает сбор, обработку и распределение информации в массовом масштабе, на основе тех закономерностей, которые господствуют в данном обществе. Эффективность СМИ – это соотношение между целью, их пропагандистской программой и фактическим ее достижением»[1].

Пропаганда – (лат. propaganda – подлежащее распространению) – «деятельность, устная или с помощью средств массовой информации, осуществляющая популяризацию и распространение идей в общественном сознании»[2].

Политическая пропаганда является отдельным подразделом пропаганды, целью которой является намеренное распространение и внедрение в общественное сознание тех или иных политических взглядов, идей, оценок и суждений. Она формирует у масс определенное мировоззрение и стимулирует соответствующие практические действия.

В философском энциклопедическом словаре дается следующее определение понятию пропаганда: пропаганда – (лат. propago – распространяю) – в широком смысле слова, «особый вид социальной деятельности, основная функция которой – распространение знаний, суждений, ценностей и другой информации с целью формирования определенных взглядов, представлений и эмоциональных состояний, оказания влияния на поведение людей. В более узком смысле слова, пропаганда – это деятельность по распространению в массах идеологии и политики определенных классов, партий и государств».[3] Как мы видим, узкое определение отмеченного нами понятия и есть политическая пропаганда.

Все исследователи коммуникационных процессов и СМИ при изучении данных областей, непременно обращались к изучению пропаганды и агитационных кампаний в период военных действий, поскольку именно в это время для влияния на сознание людей достаточно часто используются методы пропаганды и агитации. Пропаганда имеет непосредственное влияние на деятельность масс, поскольку является главным компонентом воздействия на социальное поведение людей и на формирование их сознания посредством передачи специально подготовленной информации, создания новых убеждений и побуждения эмоциональной активности человека.

Несмотря на то, что понятие «пропаганда» существовало еще в античности, а слово «пропаганда» происходит от названия католической организации Congregatio de Propaganda Fide (Конгрегация распространения веры), созданной папой Григорием XV в 1622 году, сами теории пропаганды были созданы в начале XX века. Одними из первых исследователей, которые обратились к проблеме пропаганды и заложили основу теории коммуникаций, были американский политолог Гарольд Лассвелл и австрийско-американский социолог Поль Лазарсфельд.

В течение тысячалетий функция и предназначение пропаганды не изменилась, а менялись лишь ее методы. В своей «Энциклопедии методов пропаганды» В. Сороченко точно описывает наиболее применяемые приемы.

В данной энциклопедии описываются 35 наиболее распространенных методов пропаганды. Опишем нескоторые из них:

1. «Анонимный авторитет». Данный метод хорошо характеризует фраза «Британские учёные выяснили…», которая в течение времени приобрела шуточный характер и уже не воспринимается всерьез. Но если написать данную фразу по-другому, например, «по мнению учёных… или исследователи выяснили…», тогда информация, которая будет следовать данной фразе, сразу же вызовет у аудитории доверие, несмотря на то, что на самом деле описанная информация в большинстве случаев оказывается ложью. «Ссылки на несуществующий авторитет придают ей солидность и вес в глазах обывателей. При этом источник не идентифицирован и никакой ответственности за ложное сообщение журналисты не несут»[4].

2. «Будничный рассказ». Посредством использования данного приема работники СМИ и правительственная власть может “приучить” население к серьезным происшествиям. Данный метод позволяет приучить людей к насилию, убийствам, самым жестоким злодеяниям лишь с помощью поведения человека, который передает новости. Журналисту лишь необходимо сообщать ежедневно трагическую новость со спокойным выражением лица и с ровным голосом, чтобы аудитория привыкла к убийствам, насилию и крови. «Такой прием позволяет СМИ сохранить иллюзию объективного освещения событий, но, в то же время, девальвирует значимость произошедшего, создает у массовой аудитории представление о данном событии как о чем-то малозначительном, не стоящим особого внимания и, тем более, общественной оценки»[5].

---

[1] Рабочая книга социолога // под общ ред. и с предисл. Осипова Г.В. Изд. 4-е, стереотипное. – М.: КомКнига,2006. – С.99.

[2] Политология. Энциклопедический словарь // под общ. ред. и сост. Аверьянов Ю.И. - М.: Изд-во Московского Коммерческого Университета,1993 – С.320.

[3] Философский энциклопедический словарь // под ред. Прохорова А.М. – М.: Советская Энциклопедия,1983 – С.576.

[4] Там же стр 3

[5] Там же

3. «Забалтывание». При использовании этого приема необходимо использовать много слов для того, чтобы снизить актуальность какой-либо проблемы или вызвать негативное отношение к кому-либо. Используя данный метод, который чаще всего используется во время выборов, можно легко справиться с противником, не говоря ничего негативного о нем. Необходимо лишь очень часто явно восхвалять его умения и способности, а также постоянно произносить его имя, что вскоре надоесть слушателю и непременно вызовет неприязнь. Часто данный метод используется для создания информационного шума, в котором из массы второстепенной информации необходимо найти главную проблему.

4. «Эмоциональный резонанс». «Технику эмоционального резонанса можно определить как способ создания у широкой аудитории определенного настроения с одновременной передачей пропагандистской информации»[1]. При использовании данной техники оказывается влияние на эмоциональную сторону человеческого сознания. Известно, что в борьбе против «промывания мозгов» главная роль отходит рациональной части сознания человека, который всячески пытается построить систему логической контраргументации, чтобы предотвратить влияние пропаганды. Но с помощью этого приема пропагандист оказывает влияние на эмоциональную сторону человеческого сознания, после чего человек больше не сможет защитить себя от пропагандистской атаки.

Данная техника использовалась Гитлером (внедренная его пропагандистами) до начала и в период Второй Мировой Войны. На германскую массу имело сильное влияние приемы звукового воздействия, которые искусственно усиливали агрессивные волнения населения. Речи Гитлера произносились при сопровождении музыки из опер Вагнера, которая пробуждала агрессивные эмоции и оказывала сильное влияние на слушателей.

Если же обратиться к современности, можно отметить, что ярким примером приема «Эмоционального резонанса» являются телесериалы, реалити-шоу и т.д. которые непосредственно влияют на массовое сознание. Особенно в последнее время несколько в Армении участились показы индийских сериалов, которые призваны держать зрителя в эмоциональном напряжении и у каждого зрителя тем временем в конце сериала появляется мысль «А что же будет дальше?». А какова цель такого рода пропаганды? Целью является создание у слушателей, зрителей, аудитории эмоциональной зависимости. Тем самым телевизионщики и власти, которые дают заказы на направление развития данного бизнеса имеют при себе постоянную зомбированную, эмоциональную аудиторию, которую можно запрограммировать в желаемом направлении. А иметь постоянную аудиторию – это то же самое, что обладать товаром, который можно выгодно продать тем же рекламодателям. Зомбированную аудиторию можно также причислить к рядам наркоманов, которые будут стараться продлить свою эмоциональную зависимость, чтобы получить еще одну дозу удовлетворения, а тем самым будут всячески перерабатывать новую телепродукцию, которая также сопровождается политической и коммерческой рекламой.

5. «Эффект бумеранга». Данным приемом можно назвать те ошибки, с которыми регулярно встречаются политические власти, когда всеми силами пытаются устроить тотальную травлю своего противника. Данный прием действует, когда группировки, обладающие властью, всячески травят репутацию оппонента, чтобы вызвать у аудитории недоверие к последнему. Но на самом деле получается наоборот – у населения появляется жалость и симпатия к оппоненту.

«Когда официальные СМИ дружно обрушились на Б. Ельцина (конец 1980-х), тот, вопреки логике, сделался национальным героем и с блеском выиграл президентские выборы в июне 1991 года. Затем объектом интенсивного осмеяния и развенчивания стал В. Жириновский, и это способствовало его шумному успеху на выборах в Думу (декабрь 1993). В декабре 1995 большинство мест в Думе получила КПРФ - очередной объект телевизионной травли. Осенью 1999 года развязанная ОРТ травля мэра Москвы Ю. Лужкова только укрепила его позиции среди московского электората. Годом раньше то же самое произошло на Украине с киевским мэром А. Омельченко. Сходная проблема обсуждалась американскими публицистами еще полвека назад, после неожиданной победы Ф. Рузвельта на президентских выборах. Вывод: если вы хотите завоевать популярность у широких масс, создайте себе имидж борца за справедливость, преследуемого властями»[2].

6. «Эффект первичности». Один из важнейших принципов пропаганды был введен Доктором Геббельсом, который определил, что человек, который сказал миру первое слово, всегда прав. Несколько позже американский психолог К. Ховланд и ученые Йельского университета в Англии пришли к выводу, что избиратели во время выборов признают того кандидата, который именно в процессе избирательной кампании первым высказывает свою убедительную речь. Гитлер утверждал: «Публика всегда предпочитает поверить хотя бы и на 90% недоказанному обвинению, чем опровержению, хотя бы оно было обосновано на все 100%»[3].

7. «Эффект присутствия». Данный прием наиболее известен и даже описан во всех учебных пособиях по журналистике. Он был введен и применялся в нацистской Германии. Данный метод создает иллюзию присутствия, чему способствует ряд трюков, которые должны доказать реальность происходящего. Их

[1] Там же стр 4
[2] Там же стр 6
[3] Там же стр 7

используют в течение репортажа во время военных столкновений, говоря иным образом, «Прямой репортаж с места событий». «Эффект присутствия» создают резкие сдвиги камеры, сбивание ее с фокуса, крики людей, выстрелы и т.д. Все делается для того, чтобы создать впечатление, якобы оператор в страхе и волнении, под огнем из пулеметов и оружия снимает реальность, а потом все это называют как «обстрел или нападение на группу СМИ».

Из журналистских воспоминаний: «До начала американских бомбежек Афганистана талибы и Северный Альянс крайне редко стреляли друг в друга, в основном в воздух. Танки били по пристрелянным точкам, чтобы, не дай Бог, никого не задеть, а то вдруг попадешь в соседа по кишлаку. Вот поэтому Америке и России, прилагавшим колоссальные усилия, чтобы столкнуть их между собой, очень трудно было убедить их воевать по-настоящему. Бывало, что журналист приезжал на передовую с заданием снять боевые действия, а их и в помине нет. И тогда он заказывал имитацию. Платил деньги, и моджахеды заряжали свои автоматы и стреляли в сторону талибов, а талибы отвечали им тем же. Все снималось на видеокамеру. После этого мировые информагентства сообщали, что группа журналистов была обстреляна талибами. В теленовостях вовсю крутили «реальные» видеокадры...»[1].

Как мы видим в большинстве случаев, методы и приемы политической пропаганды используют также и политические лидеры как во время выборов, так и во время военных действий. Ярким примером политической пропаганды являются действия Пауля Иозефа Геббельса[2], который являлся начальником управления пропаганды НСДАП. «Массы называют истиной информацию, которая наиболее знакома, — писал Йозеф Геббельс. — Обыкновенные люди обычно гораздо более примитивны, чем мы воображаем. Поэтому пропаганда, по существу, всегда должна быть простой и без конца повторяющейся. В конечном счете, самых выдающихся результатов во влиянии на общественное мнение достигнет только тот, кто способен свести проблемы к простейшим словам и выражениям и у кого хватит мужества постоянно повторять их в этой упрощенной форме, несмотря на возражения высоколобых интеллектуалов»[3].

Отметив некоторые методы и приемы политической пропаганды, можно заключить:

1. Политическая пропаганда оказывает большое влияние на массовое сознание, как в обыденной жизни, так и во время военных действий;
2. Политические лидеры используют много ненужной информации в своих речах, чтобы скрыть истинную мысль;
3. Политические лидеры многократно повторяют одну и ту же мысль, чтобы внедрить ее в сознание масс;
4. Часто пропагандистское воздействие оказывается на эмоциональный уровень сознания;
5. СМИ во время прямого эфира с места событий часто намеренно создают эффект присутствия;
6. Не каждая информация, услышанная первой, является истиной;
7. Трагические и кровавые новости стали для общества обыденными, поскольку так их ежедневно передают СМИ;
8. Не нужно верить анонимным авторам каких-либо открытий;

Методы контрпропаганды:

1. Необходимо уметь анализировать поступающую информацию и понимать основную проблему, заложенную в определенный поток ненужной информации;
2. Необходимо использовать альтернативные источники информации для понимания объективной реальности;
3. При получении информации нужно понимать, что политические лидеры стремятся оказать влияние именно на эмоциональный уровень сознания.

Список использованной литературы:

1. Виктор Сороченко, 2002 г. Энциклопедия методов пропаганды, стр 28
2. Политология. Энциклопедический словарь // под общ. ред. и сост. Аверьянов Ю.И. - М.: Изд-во Московского Коммерческого Университета,1993 – С.320.
3. Рабочая книга социолога // под общ ред. и с предисл. Осипова Г.В. Изд. 4-е, стереотипное. – М.: КомКнига,2006. – С.99.
4. Философский энциклопедический словарь // под ред. Прохорова А.М. – М.: Советская Энциклопедия,1983 – С.576.

[1] Там же стр 8

[2] Пáуль Йóзеф Гéббельс - немецкий политик, один из ближайших сподвижников и верных последователей Адольфа Гитлера. С 1926 года гауляйтер Берлина, а с 1930 года начальник управления пропаганды Национал-социалистической немецкой рабочей партии.

[3] Виктор Сороченко, 2002 г. Энциклопедия методов пропаганды, стр 28

ՀՏԴ 329(479.243) *Քաղաքագիտություն*

Հայրապետյան Ալյոնա
ԱրՊՀ «Քաղաքագիտության» բաժնի 3-րդ կուրս
alyona.hayrapetyan.97@mail.ru

ԱՐՑԱԽԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հոդվածում ներկայացված են Արցախի քաղաքական կուսակցությունների ծրագրային դրույթներն ու նպատակները, կուսակցական համակարգի առաջ ծառացած հիմնախնդիրները: Մանավորապես, մեծ տեղ է հատկացված կուսակցությունների ինստիտուցիոնալիզացմանը: Ընդգծվում են այն հիմնական հատկանիշները, որոնք պետք է ունենան կուսակցությունները՝ բարդ, հորիզոնական կառուցվածք, հարմարվողականություն, բազմակարծություն կուսակցության ներսում և այլն: Իսկ վերջում նշվում է, թե կուսակցությունները իշխանության ձգտելու հետ մեկտեղ ինչ գործառույթներ պետք է իրականացնեն:

Բանալի բառեր՝ կուսակցություն, կուսակցական համակարգ, իշխանություն, ընդդիմություն, ինստիտուցիոնալիզացիա, հարմարվողականություն, իշխանության անձնականացում

Айрапетян Алёна
АрГУ, 3-ий курс “Политологии”
alyona.hayrapetyan.97@mail.ru

ПРОБЛЕМЫ ПАРТИЙНОЙ СИСТЕМЫ АРЦАХА

В этой статье представлены главные тезисы и цели политических партий Арцаха, проблемы, с которыми сталкивается партийная система. В частности, большое место выделено институционализации партий. Подчеркивается те главные качества, которые должны иметь партии: сложная горизонтальная система, адаптация, плюрализм внутри партии. В качестве заключении отмечается какие функции партии должны исполнять при стремлении к власти.

Ключевые слова: партия, партийная система, власть, оппозиция, институционализация, адаптация, персонализация власти.

Hayrapetyan Alyona
ASU, Political science, 3rd year
alyona.hayrapetyan.97@mail.ru

PROBLEMS OF PARTY SYSTEM OF ARTSAKH

In this article are introduced the main clauses of political parties of Artsakh, the problems of party system. In particular, a great place is allocated to institutionalization of parties. Also highlights the main features that parties should have: complex, horizontal structure, adaptability, pluralism within the party. In conclusion it is noticed what functions political parties should do.

Keywords: party, party system, rule, opposition, institutionalization, adaptability, personalization of power.

Ըստ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանադրության Լեռնային Ղարաբաղում գործում է բազմակուսակցական համակարգ առանց մեկ գերիշխող կուսակցության: Այսպիսի պայմաններում կուսակցություններից և ոչ մեկը չի ունենում բացարձակ մեծամասնություն խորհրդարանում և կառավարություն ձևավորելու ժամանակ ստեղծվում է կոալիցիա: 2015թ. մայիսի 3-ի ընտրություններից հետո կոալիցիան կազմել են ԱՀ-ն և ԱԺԿ-ն: Նույն իրավիճակն էր նաև նախորդ ընտրությունների ժամանակ (2005թ. և 2010թ.):

Արցախում գրանցված են թվով 13 կուսակցություն: Դրանք են՝ ՀՅԴ, Կոմունիստական կուսակցություն, Արմենական կուսակցություն, «Մեր տունը Հայաստանն է», ԱԺԿ, «Ազատ Հայրենիք», Շարժում-88, Բարոյական Վերածննդի կուսակցություն, «ԼՂՀ Քրիստոնեա-Դեմոկրատական միություն», «Ազգային վերածնունդ», «Խաղաղություն և զարգացում», Արցախի Հանրապետական կուսակցություն, Լիբերալ-Դեմոկրատական կուսակցություն: Վերջին՝ 2015թ. ընտրությունների ժամանակ իշխանության համար պայքարում էին 7 կուսակցություն՝ «Ազատ Հայրենիք», Արցախի ժողովրդական կուսակցություն, ՀՅԴ, Շարժում-88, Կոմունիստական կուսակցություն, «Ազգային վերածնունդ», «Խաղաղություն և զարգացում»:

Ընտրությունների արդյունքում խորհրդարան են անցել 5 կուսակցություն՝ «Ազատ Հայրենիք» - 47.5%, ԱԺԿ – 19.1%, ՀՅԴ – 18.81%, Շարժում-88 – 6.93%, «Ազգային վերածնունդ» - 5.38%:[1]

Արցախի քաղաքական կուսակցություններն իրենց ծրագրային դրույթներով ու նպատակներով բավականին նման են միմյանց: Ստորև հակիրճ ներկայացնում եմ խորհրդարան մտած կուսակցությունների նպատակներն ու հիմնական սկզբունքները:

1.ՀՅԴ- ազատ, անկախ և միացյալ Հայաստանի կերտում, որի մեջ պետք է մտնեն Սևրի պայմանագրով նախատեսված հայկական հողերը, այդ թվում նաև Արցախի, Նախիջևանի և Ջավախքի երկրամասերը, Թուրքիայի կողմից հայության դեմ գործած և մինչ այժմ անպատիժ մնացած ցեղասպանության ուժերի միջազգային դատապարտում, բռնագրավված հողերի վերադարձ, վնասների փոխհատուցում, տարագիր և աշխարհասփյուռ հայության համախմբում, ԼՂՀ պետականության իրագործում, ժողովրդի բարօրության և սոցիալական արդարության ապահովում:[2]

2.ԱԺԿ- հավատարիմ լինել ազգային արժեքներին, համամարդկային գաղափարներին, ազատության, արդարության, համերաշխության սկզբունքներին, հասարակության զարգացման ժողովրդավարական ուղուն, կերտել անկախ, տնտեսապես հզոր, քաղաքակիրթ, մարդու ազատ, անվտանգ, բարեկեցիկ ու արժանապատիվ ապրելու իրավունքների իրականացումը երաշխավորող իրավական պետություն, պահպանել նրա ազգային նկարագիրը, ստեղծել սոցիալական համերաշխության ու արդարության, հանդուրժողականության և գործընկերության հիմքով քաղաքացիական հասարակություն:

Հիմնադրվել է՝ 2005թ. հունվարի 30-ին: Նախագահն է՝ Աշոտ Ղուլյանը:[3]

3.«Ազատ Հայրենիք»- ԼՂՀ պետականության ամրապնդում և տնտեսական զարգացում, գործազրկության վերացում և սոցիալական համերաշխության ապահովում, ազգային հոգևոր արժեքների վերահաստատում, քաղաքացիական հասարակության ձևավորում, ազգային, սոցիալական, իրավական հասարակության կառուցում՝ հաշվի առնելով երկրի ազգային, հոգևոր և պատմամշակութային առանձնահատկությունները, քաղաքացիների իրավունքների, ազատությունների, արդարության, օրինականության և ժողովրդավարության ապահովում, համահայկական, տարածաշրջանային և տեղական հիմնահարցերի լուծմանը քաղաքացիների ակտիվ մասնակցության պայմանների ստեղծում:[4]

Հիմնադրվել է 2005թ. հունվարի 29-ին: Նախագահն է՝ Արայիկ Հարությունյանը:

4.Շարժում-88 – բոլոր ուղղություններով՝ տնտեսական, կրթական, ռազմական, մշակութային, ԼՂՀ անվտանգության երաշխիքների ապահովում, իշխանության թևերի հստակ տարանջատում, մարդու հիմնարար ազատությունների գերակայության ապահովում, քաղաքացու իրավունքների պաշտպանություն, քաղաքացիական հասարակության, իրավական պետության կառուցում, սոցիալական ուղղվածության մրցունակ շուկայական տնտեսության կայացում, տեղական ինքնակառավարման համակարգի լիիրավ կայացում, պայքար համակարգային կոռուպցիայի և ստվերային տնտեսության դեմ[5]:

Հիմնադրվել է 2005թ. հունվարի 22-ին: Նախագահն է՝ Էդուարդ Աղաբեկյանը:

5.«Ազգային վերածնունդ»- իրականացնել այնպիսի քաղաքականություն, որը կապահովի Արցախի համաչափ զարգացումը, բնակչության ավելացում Արցախի թերբնակեցված շրջաններում, միացյալ Հայաստանի ստեղծում, ուժեղացնել քաղաքական մրցակցություն, ժողովրդին առաջարկել այլընտրանք նոր գործիչների և նոր գաղափարների տեսքով:[6]

Հիմնադրվել է 2013թ. փետրվարի 24-ին: Նախագահն է՝ Հայկ Խանումյանը:

Ինչպես տեսնում ենք կուսակցությունների հիմնական նպատակներն են քաղաքացիական հասարակության ձևավորումը, սոցիալական արդարության, ժողովրդավարության, հասարակության բարեկեցիկ կյանքի ապահովումը և այլն: Բայց թե ինչ չափով են իրականություն դառնում վերը նշված նպատակները, շատ մեծ կասկածի տակ է դրված: Պարզից էլ պարզ է, որ այսօր ԼՂՀ-ում չկա լիովին ձևավորված ու կայացած կուսակցական համակարգ:

Քաղաքական կուսակցությունը դա քաղաքական համակարգի կարևորագույն ինստիտուտներից մեկն է: Ցանկացած ինստիտուտ, այդ թվում և կուսակցությունը համարվում է ուժեղ և կայացած, եթե այն ինստիտուցիոնալիզացված է: Սա այն է, ինչի կարիքը զգում են մեր քաղաքական կուսակցությունները:

[1] ԼՂՀ ԿԸՀ, http://cecnkr.am/category/
[2] ՀՅԴ ծրագիր, http://www.arfd.am/
[3] ԱԺԿ ծրագիր, http://www.dpa.am/wp/
[4] <<Ազատ Հայրենիք>> կուսակցության նախընտրական ծրագիր
[5] Շարժում-88 կուսակցության նախընտրական ծրագիր
[6] ԱՎԿ ծարագիր, http://avk.am/?page_id=26

Ի՞նչ է ընդհանրապես իրենից ներկայացնում ինստիտուցիոնալիզացիան: Սա մի գործընթաց է, որի արդյունքում կազմակերպությունները և գործընթացները ձեռք են բերում կայունություն և արժեք: Այս կամ այն քաղաքական համակարգի ինստիտուցիոնալիզացման մակարդակը որոշվում է նրա կազմակերպությունների և գործընթացների հարմարվողականությամբ, բարդությամբ, ինքնուրույնությամբ և կայունությամբ:[1] Ինչքան հարմարվողական է կազմակերպությունը, այնքան նրա ինստիտուցիոնալիզացման մակարդակն ավելի բարձր է: Հարմարվողականությունը կազմակերպության ձեռքբերովի հատկանիշ է: Կոպիտ ասած, այն շրջապատող միջավայրի կողքից ճնշման գործառույթն է և կազմակերպության տարիքը: Ինչքան շրջապատող միջավայրը շատ պահանջներ է դնում և ինչքան կազմակերպությունը մեծ տարիք ունի, այնքան նա ավելի հարմարվողական է: Իսկ ներկայիս Արցախում կուսակցական համակարգը և նրա մաս կազմող կուսակցությունները չունեն ո՛չ մեկը, ո՛չ մյուսը: Նախ որպեսզի լինի շրջապատող միջավայրի պահանջների առկայություն, պետք է որպեսզի այդ շրջապատը լինի քաղաքական կյանքի ակտիվ մասնակից, ինչը բացակայում է մեր երկրում: Ինչ վերաբերում է տարիքին, ապա այն որոշվում է 3 ձևով: Ըստ քրոնոլոգիական ձևի, ինչքան երկար գոյություն ունի կազմակերպությունը(կուսակցություն), այնքան նրա ինստիտուցիոնալիզացման մակարդակը բարձր է և այնքան մեծ է հավանականությունը, որ այն որոշ ժամանակ գոյություն կունենա նաև ապագայում: Կուսակցության ինստիտուցիոնալիզացումն այս առումով բավականին երկար ժամանակ է պահանջում: Արցախում գործող կուսակցությունների մի մասն ունի 10-15, մի մասն էլ՝ 2-3 տարվա պատմություն: Հարցին, թե կկարողանա՞ն արդյոք այս կուսակցությունները հաղթահարել լուրջ կամ սուր փորձություններ, դժվար է պատասխանել:

Հաջորդ կարևոր հատկանիշը, որը պետք է ունենա ինստիտուցիոնալիզացված կազմակերպությունը, դա սերնդափոխությունն է: Քանի դեռ կուսակցության գլխին մնում է նրա առաջնորդների առաջին սերունդը, կուսակցության հարմարվողականությունը մնում է կասկածի տակ: Ինչքան այն հաճախ է որոշել իշխանության խաղաղ անցումը մի ձեռքից մյուսին, ինչքան հաճախ են փոխվել ղեկավարները, այնքան բարձր է նրա ինստիտուցիոնալիզացման մակարդակը: Լեռնային Ղարաբաղում գործող կուսակցությունների ղեկավարները ստեղծման պահից առայսօր չեն փոխվել: Սակայն խոսքը ոչ միայն զուտ կուսակցության ղեկավարի, այլև այն մարդկանց մասին է, ովքեր հանդես են գալիս որպես կուսակցության ղեկավար մաս (խավ):

Սերունդները տարբերվում են իրարից կյանքի փորձով: Դրա համար մեկ խմբի ղեկավարների միջև սովորական փոխարինումը չունի այնքան մեծ նշանակություն, ինչքան այդ խմբի փոխարինումը այլ, նոր սերնդի ղեկավարների խմբով, որն ունի լիովին նոր կազմակերպական փորձ:

Սովորաբար կազմակերպությունը ստեղծվում է մեկ կոնկրետ գործառույթի իրականացման նպատակով: Երբ այդ գործառույթի իրականացման անհրաժեշտությունը այլևս չի լինում, կազմակերպությունը հայտնվում է ճգնաժամի մեջ կամ այն իր համար գտնում է նոր ֆունկցիա, կամ հաշտվում է աստիճանական մահվան հետ: Կազմակերպությունը, որը հաշտվել է շրջապատող միջավայրի փոփոխությունների հետ և վերապրել է իր հիմնական ֆունկցիաների մեկ կամ մի քանի փոփոխություն, ունի ինստիտուցիոնալիզացման ավելի բարձր մակարդակ, քան այն կազմակերպությունը, որն այդ ամենի միջով չի անցել: Քաղաքական կուսակցությունը հասնում է ֆունկցիոնալ հասունության, երբ ընդդիմությունից անցում է կատարում կառավարության:

Արցախում որպես ընդդիմություն հանդես եկող «Ազգային վերածնունդ», Շարժում-88 կուսակցությունները 2015թ. մայիսի 3-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների արդյունքում միասին հավաքել են շուրջ 12 տոկոս: Կենտրոնում ընդդիմությանը ձայն տվողների թիվն անհամեմատ մեծ էր գյուղական համայնքներում ընդդիմության օգտին քվեարկածներից: Ստեփանակերտում ընդդիմությունը հավաքեց ձայների 20 տոկոսը, մինչդեռ շրջաններում չկարողացավ հաղթահարել անգամ 5 տոկոսի շեմը:[2] Սա խոսում է այն մասին, որ ընդդիմությունը թույլ է աշխատում գյուղական համայնքներում:

Ինչքան բարդ է կազմակերպությունը, այնքան բարձր է նրա ինստիտուցիոնալիզացման մակարդակը: Ինչքան մեծ է ստորաբաժանումների թիվը և բազմազանությունը, այնքան կազմակերպությունը ունի իր անդամներին ապահովելու և հավատարմությանը աջակցելու ավելի մեծ ունակություն: Համեմատաբար քիչ զարգացած ավանդական քաղաքական համակարգերը հաճախ խորտակվում են և քայքայվում

[1] Хантингтон С., Политический порядок в меняющихся обществах, http://yanko.lib.ru/books/politologiya/huntington-polit_poryadok-ru-a.htm

[2] ԼՂՀ ԿԸՀ, http://cecnkr.am/category/

մոդեռնիզացիայի պրոցեսում: Առավել բարդ ավանդական համակարգերը ունեն ավելի շատ հնարավորություններ հարմարվել նոր պահանջներին: Իսկ ամենապարզ քաղաքական համակարգը համարվում է նա, որը կախված է մեկ մարդուց: Նա էլ ավելի քիչ կայուն է: Եվ հակառակը, մի քանի տարբեր քաղաքական ինստիտուտներով քաղաքական համակարգը ունի ավելի մեծ հնարավորություններ հարմարվողականության համար: Արցախում քաղաքական կուսակցությունները շրջաններում ունեն իրենց ստորաբաժանումները, ունեն համապատասխան մարմիններ, որոնք նախատեսված են այս կամ ֆունկցիան իրականացնելու համար (օրինակ՝ Վերստուգիչ-վերահսկիչ մարմինն ԱԺԿ-ում): Իրականում սակայն այս մարմիններն ավելի շատ ձևական բնույթ են կրում:

Կուսակցությունների ներսում բացակայում է հստակ ձևավորված բազմակարծությունը: Դա միանշանակ ժողովրդավարության թուլության պատճառով է: Իսկ ժողովրդավարության թուլությունը պայմանավորված է կուսակցության ուղղահայաց կառուցվածքով և իշխանության անձնականացմամբ: Ամենաընդհանուր իմաստով ուղղահայաց է կոչվում այն կառուցվածքը, որն իրար հետ է կապում մեկը մյուսին ենթակա օրգանիզմներ: Այսպիսի պայմաններում կուսակցության միևնույն մակարդակի վրա գտնվող մարմինները իրար հետ կարող են շփվել միայն կենտրոնի միջնորդությամբ: Եթե համագումարին մասնակցում են միայն կուսակցության ադամների ներկայացուցիչները, ապա տեղական կազմավորումների մասին ոչ մի խոսք չի կարող գնալ: Ուղղահայաց կապի մեխանիզմը ոչ միայն հիանալի միջոց է կուսակցության միասնությունը և համերաշխությունը ապահովելու, այլև այն հնարավորություն է տալիս հեշտությամբ անցում կատարել ընդհատակյա գործունեության:

Իշխանության անձնականացման պայմաններում պատկերացնել կուսակցությունն առանց տվյալ անձի դժվար է: Հատկանշական է նաև այն, որ կուսակցության այս հատկանիշը իր վառ արտահայտությունն է գտնում ընտրությունների ժամանակ: Ժողովրդի մի մասը քվեարկում է այս կամ այն կուսակցության հաշվին ոչ թե նրա համար, որ համաձայն է կամ կողմնակից նրա գաղափարների, ծրագրային դրույթների հետ, այլ միայն տվյալ կուսակցության ղեկավարին ճանաչելու կամ հավանելու պատճառով:

Իհարկե փաստ է, որ քաղաքական կուսակցությունների համար ամենահիմնականը իշխանության նվաճման կամ այն պաշտպանելու հարցն է: Անկախ իրենց բնույթից, կուսակցությունները փորձում են քաղաքացիներին ներկայանալ որպես նրանց բոլորի շահերի արտահայտիչներ, խոսելով հասարակության, ժողովրդի, ազգի և պետության անունից: Միաժամանակ քաղաքական կուսակցությունների գործունեության կարևորագույն ուղղություններից է բնակչության քաղաքական գիտակցության ձևավորումը, նրանց արմատական շահերի պաշտպանության և իշխանության նվաճման համար քաղաքացիների համախմբումն ու ակտիվացումը: Եվ ինքնին հասկանալի է, որ քաղաքական կուսակցությունների գործունեությունը վերջին հաշվով գնահատվում է ոչ թե նրանով, թե ինչ են խոստացել ընտրողներին, ինչ ծրագրեր են առաջարկել, այլ ելնելով նրանից, թե իշխանության իրականացման ժամանակ ինչքանով են նրանք կարողացել պաշտպանել այն սոցիալական խմբերի շահերը, որոնց նրանք ներկայացնում են:

Գրականության ցանկ

1. <<Ազատ Հայրենիք>> կուսակցության նախընտրական ծրագիր
2. ԱԺԿ ծրագիր, http://www.dpa.am/wp/
3. ԱՎԿ ծրագիր, http://avk.am/?page_id=26
4. ԼՂՀ ԿԸՀ, http://cecnkr.am/category/
5. ՀՅԴ ծրագիր, http://www.arfd.am/
6. Շարժում-88 կուսակցության նախընտրական ծրագիր
7. Дюверже М.,Политические партии, http://www.gumer.info/bibliotek_Buks/Polit/Duverg/
8. Хантингтон С., Политический порядок в меняющихся обществах, http://yanko.lib.ru/books/politologiya/huntington-polit_poryadok-ru-a.htm

ՀՏԴ 32(479.24:479.243) *Քաղաքագիտություն*

Թամարա Հակոբյան
Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան,
մագիստրատուրա 1-ին կուրս
toma.hakobyan77@mail.ru

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽԻ ՇՈՒՐՋ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

Այսօր հաղթանակը տեղեկատվական դաշտում նույնքան կարևոր է դարձել, որքան հաղթանակը ռազմի դաշտում: Ղարաբաղյան խնդրի չկարգավորված լինելու պայմաններում հայկական և ադրբեջանական կողմերը գտնվում են մշտական տեղեկատվական պատերազմում: Ստեղծված իրավիճակում շատ կարևոր է ուսումնասիրել ադրբեջանական քարոզչության դրսևորումները և կարողանալ դիպուկ հարվածներով պատասխան տալ:

Բանալի բառեր՝ տեղեկատվական պատերազմ, քարոզչություն, Հայաստան, Ադրբեջան, Արցախ

Тамара Акопян
Российско-Армянский (Славянский) университет,
магистратура 1-ый курс
toma.hakobyan77@mail.ru

ПРОПАГАНДА АЗЕРБАЙДЖАНА В ИНФОРМАЦИОННОЙ ВОЙНЕ ВОКРУГ АРЦАХА

Война сегодня идет по всем фронтам, и победа на информационном поле почти так же важна, как и победа на поле брани. В условиях неурегулированного карабахского конфликта армянская и азербайджанская стороны находятся в постоянной информационной войне. В этой связи очень важно исследовать особенности азербайджанской пропаганды и научиться дать грамотные ответы.

Ключевые слова: информационная война, пропаганда, Армения, Азербайджан, Арцах

Tamara Hakobyan
Russian-Armenian (Slavonic) University,
Master's degree 1st year
toma.hakobyan77@mail.ru

PROPAGANDA OF AZERBAIJAN IN THE INFORMATION WAR AROUND ARTSAKH

The war is now on all fronts, and the victory on the information field is almost as important as the victory on the battle field. In the conditions of the unresolved Karabakh conflict, Armenia and Azerbaijan are in constant information war. In this regard, it is very important to investigate the main features of Azerbaijani propaganda and to learn to give competent answers.

Keywords: information war, propaganda, Armenia, Azerbaijan, Artsakh

Ներածություն

Պատերազմն այսօր արդեն ընթանում է բոլոր ճակատներով: Մեր օրերում ավանդական պատերազմների հետ մեկտեղ մեծ դեր են խաղում նաև տեղեկատվական պատերազմները: Իրադարձությունների լուսաբանումը, ձգտելով ներկայացնել իրավիճակը հարմար տեսանկյունից, հատուկ մշակված և նախապատրաստված տեղեկատվությունը մեծ ազդեցություն են ունենում հակամարտող երկրներում հասարակական կարծիքի ձևավորման վրա ինչպես նաև համաշխարհային հանրության կարծիքի ձևավորման վրա: Տեղեկատվական պատերազմները, որպես կանոն, հատկապես սրվում են զինված հակամարտությունների ժամանակաշրջանում: Վառ օրինակ են հանդիսանում ռուս-վրացական պատերազմի ժամանակ վարվող տեղեկատվական պատերազմը, ուկրաինական ճգնաճամի, Սիրիայում ընթացող քաղաքացիական պատերազմի ժամանակ տեղեկատվական պատերազմները և այլն:

Տեղեկատվական պատերազմների թեման ակտուալ է համարվում, քանի որ այժմ հաղթանակը տեղեկատվական դաշտում նույնքան կարևոր է դարձել, որքան հաղթանակը ռազմի դաշտում: Դրա

վառ ապացույցն է 2008 թվականի ռուս-վրացական հնգօրյա պատերազմի ժամանակ Վրաստանի կողմից նախորոք մշակված քարոզչությունը և ռուսական կողմի հանպատրաստի քարոզչությունը: Արդյունքում Ռուսաստանը պարտվեց տեղեկատվական դաշտում՝ չնայած ռազմի դաշտում հաղթանակին:

Հաշվի առնելով ժամանակակից տեղեկատվական պատերազմները՝ տվյալ աշխատանքում ուսումնասիրվել են Արցախի շուրջ ընթացող տեղեկատվական պատերազմի առանձնահատկությունները: Հատկապես ակտուալ է ուսումնասիրել Արցախի և Հայաստանի դեմ Ադրբեջանի կողմից վարվող քարոզչության առանձնահատկություններ:

Տեղեկատվական պատերազմը հայկական և ադրբեջանական կողմերի միջև հատկապես սրվեց 2016 թվականի Ապրիլյան քառօրյա պատերազմի ընթացքում: Այս ժամանակահատվածում ընկած ադրբեջանական քարոզչական կոպիտ և անհեթեթության հասնող դրսևորումների մասին կնշվի բուն տեքստում: Ստեղծված իրավիճակում չափազանց կարևոր է իրազեկ լինել Ադրբեջանի կողմից վարվող խաղի կանոններին և կարողանալ դիպուկ հակահարվածներ տալ:

Հետազոտման մեթոդներ և նյութեր

Ուսումնասիրելով ադրբեջանական ՋԼՄ-ների Հայաստանի մասին հոդվածները և դրանց վերնագրերը՝ կարելի է եզրակացնել որ լրագրողները հիմնական շեշտը դնում են ինտրիգների, պատմական փաստերի խեղաթյուրման, կեղծիքի, ապատեղեկատվության և Հայաստանի կերպարի ստորացման հաշվին իրենց երկրի մեծարման վրա: Այս ամենը ադրբեջանական ՋԼՄ-ների ոչ պրոֆեսիոնալ գործունեության արդյունքում դառնում է ծիծաղելի և անհեթեթ (Али Пасанов: «Истинное название Армении- агрессор, шовинист, националист и сепаратист» («vesti.az»): Սակայն որքան էլ, որ հակառակորդի կողմից ներկայացված տեղեկատվությունը անհեթեթ է թվում, պետք չէ թերագնահատել Հայաստանը և Արցախը Ադրբեջանի ներսում և համաշխարհային հասարակության առջև խեղաթյուրված կերպարանքով ներկայացնելու հակառակորդի փորձերը: Հարկավոր է միշտ ուշադիր լինել Ադրբեջանի կողմից տարածվող ապատեղեկատվությանը և պատրաստ լինել ոչ միայն դրանք հերքելուն, այլ նաև համապատասխան հակահարվծներին: Ապրիլյան քառօրյա պատերազմը կողմերի միջև ևս մեկ անգամ ապացուցեց, որ յուրաքանչյուր վայրկյան անհրաժեշտ է զգոն լինել հակառակորդի կողմից տեղեկատվության հոսքի նկատմամբ: Այդ իսկ պատճառով ստորև ներկայացված են տեղեկատվական դաշտում ադրբեջանական քարոզչության հաճախ հանդիպող մեթոդներ:

Ռազմական կոնֆլիկտի սրման և տեղեկատվական պատերազմի ակտիվացման շրջանում ադրբեջանական քարոզչության առանձնահատկություններից մեկն այն էր, որ հայտնի համբավ ունեցող ադրբեջանական կայքերում, ինչպիսիք են «day.az»-ը, «vesti.az»-ը, «haqqin.az»-ը, «sputnik.az»-ը, նյութեր տեղադրելիս հղում էր կատարվում այնպիսի հայկական աղբյուրների, որոնց մեծ մասը կամ գոյություն չուներ, կամ կրում էր կեղծ բնույթ, կամ էլ դադարում էր գործունեությունը նյութը տեղադրելուց մի քանի ժամ հետո:

Քառօրյա պատերազմի ժամանակ ադրբեջանական քարոզչության հաճախ հանդիպող բացթողումներից էր նաև կեղծ տեղեկատվության տարածումը՝ առանց որևէ կոնկրետ աղբյուրի հղում կատարելու: «Խուճապի մատնված խաղաղ բնակչության հակամարտության գոտուց դեպի Հայաստան փախուստի» մասին տեղեկատվությունները հակառակորդի կողմից տարածվում էին կայծակնային արագությամբ: Հայկական բանակի շարքերում խուճապ տարածելու նպատակով նաև տեղեկատվություն էր տարածվել այն մասին, թե իբրև Իջևանի շրջանի գեներալներից մեկը և Հադրութի շրջանի երկու զինծառայող ինքնասպանության փորձ էին կատարել՝ բացատրելով, որ նշված անձինք ինքնասպան են եղել ադրբեջանական կողմի հետ ռազմական բախումներից խուսափելու նպատակով: Տեղեկատվություններն ավելի համոզիչ դարձնելու համար հղումներ էին կատարում «հայկական կայքերին» և «սոցիալական ցանցերին», ինչպես նաև «միջազգային աղբյուրներին»: Այս ամենով հատկապես չարաշահում էին այնպիսի կայքեր, ինչպիսիք են «Report.az»-ը, «Haqqin az»-ը:

Վառ օրինակ է հանդիսանում ադրբեջանական «Oxy.az» կայքի տարածած տեղեկատվությունը Մարտակերտի շրջանում հայկական կողմի անհավանական կորուստների մասին (մոտ 80 մարդ)՝ հղվելով նախկինում անհայտ «HayNews.net» հայկական կայքի «Правда как она есть!» անվանումով հոդվածին[1]: Փնտրելուց հետո պարզվել էր, որ նշված կայքում նման վերնագրով հոդված գոյություն

[1] «Промахи азербайджанской пропаганды в ходе четырехдневной войны»// news.armenia.am// http://newsarmenia.am/news/analytics/promakhi-azerbaydzhanskoy-propagandy-v-khode-chetyrekhdnevnoy-voyny/

չունի: Հաջորդ օրը կայքը դադարեցրել էր աշխատանքները, իսկ որոշ ժամանակ անց դադարել նաև գոյությունը:

Ադրբեջանական ԶԼՄ-ները նյութերը ավելի համոզիչ դարձնելու նպատակով ավելացնում էին լուսանկարներ և տեսանյութեր, որոնք իրականում կեղծ էին: Աղմկահար դեպքերից էին Թալիշ գյուղի «գրավումը», ֆոտոշոփի օգնությամբ Ֆիզուլիի ցուցանակի կողքին տեղադրված ադրբեջանցի զինվորներով լուսանկարը և ամենաանհեթեթը՝ հայտնի հաղոդավար Նազենի Հովհաննիսյանին որպես «Բագիրա» մականունով կին դիպուկահար ներկայացնելը: Այս և մի շարք այլ դեպքեր հայերի կողմից ծիծաղի առարկա էին դարձել սոցցանցերում: Օգտատերերի կողմից ծիծաղի առարկա էին դարձել նաև ադրբեջանցիների փորձերը օգտագործել հայկական անուններով կեղծ օգտատերերի էջեր՝ հայերից առաջնագծում ստեղծված իրավիճակի մասին ինֆորմացիա կորզելու նպատակով: Ադրբեջանական կեղծ էջերը հայերի հետ շփվելու համար դիմել էին գուգլ թարգմանչի օգնությանը, ինչն էլ և մատնել էր նրանց:

Ապրիլյան օրերի հետաքրքիր պատահարներից էր նաև «Новостной фронт» տեղեկատվական գործակալության տարածած նյութը այն մասին, որ ադրբեջանական մեդիա-խմբերը գումար էին առաջարկում «naked-science.ru» կայքի հիմնադիր և գլխավոր խմբագիր Ռուսլան Զորաբին , որպեսզի վերջինս կեղծ տեղեկատվություն տեղադրի հայկական բանակի շարքերում կորուստների մասին[1]: Խմբագիրը մերժել էր ադրբեջանցիների առաջարկը՝ հրաժարվելով անգամ կրկնակի գումարից:

Սոցցանցերի ադրբեջանցի օգտատերերը օգտագործում էին նաև այլ թեմ կետերից նկարներ, որոնք ապացուցում են ապատեղեկատվության մեծ հոսքը. տեղադրում էին 2015 թվականի դեպքերի ժամանակ վիրավոր սիրիահայ տղայի լուսանկարը, 2008 թվականի ռուս-վրացական պատերազմի ժամանակ զոհված զինվորի լուսանկարը և այլն:

«Haqqin.az»-ը տարածել էր կեղծ նամակ, որը իբրև թե Արցախի պաշպանության նախարարը ուղղել էր ՀՀ պաշտպանության նախարարին: Նամակը պարունակում էր մեծ քանակությամբ քերականական սխալներ: Այս և ադրբեջանական ոչ հմուտ քարոզչության այլ դրսևորումներ հայերի շրջանում ծաղրի էին ենթարկվում: Սոցցանցերի հայազգի օգտատերերը սկսել էին ծաղրանկարներ տարածել՝ մատնանշելով, օրինակ, թե իրականում ինչ երիտասարդ տարիք ունի Ադրբեջանը: Ի տարբերություն Ադրբեջանի պաշտպանության նախարարության տարածած կեղծ տեղեկատվությանը, որը անգամ չուներ վիզուալ ապացույցներ՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը օպերատիվ կերպով լուսաբանում էր առաջնագծում տեղի ունեցող իրադարձությունները:

Ադրբեջանական քարոզչությունը ուղեկցվում էր նաև կեղծ հայտարարություններով, որոնք վերագրված էին երրորդ անձանց և մարմիններին: Հակամարտության սրման առաջին օրերին Վրաստանի Հայաստանի և Ադրբեջանի պաշտպանության նախարարների միջև տեղի էր ունեցել հեռախոսազրույց, որից հետո Ադրբեջանի նախարարությունը կեղծ տեղեկություն էր տարածել, իբրև թե Վրաստանի պաշտպանության նախարար Թինաթին Խիդաշելին նշել էր, որ միշտ աջակցել է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: Մինչդեռ Վրաստանի պաշտոնական հաղորդագրության մեջ նման հայտարարություն չկար[2]:

Այս ամենի հետ մեկտեղ ադրբեջանական կողմը մեղադրում էր միջազգային մամուլին, մասամբ ռուսալեզու ԶԼՄ-ներին, իրադարձությունները սուբյեկտիվ կերպով լուսաբանելու մեջ: «LifeNews» հեռուստաընկերության աշխատակիցներին անգամ վռնդել էին Ադրբեջանից իրենց ոչ ձեռնտու նյութի պատճառով՝ բացատրելով իրավիճակը լրագրողների մոտ հավատարմագրման բացակայությամբ[3]:

Ադրբեջանական ԶԼՄ-մերի ուսումնասիրության արդյունքում կարելի է եզրակացնել նաև, որ Հայաստանը և հայ ազգը ներկայցված են որպես համար առաջին թշնամի «հրեշի» կերպարանքով: Դրա ապացույցն են տարբեր հոդվածներում հաճախ օգտագործվող այնպիսի բառերը և արտահայտությունները, ինչպիսիք են «հայկական ֆաշիզմ», «նեոֆաշիզմ», «նացիստներ», ագրեսոր, ահաբեկիչներ, արյուն, կռիվ, պատերազմ, «այսպես կոչված հայկական Ցեղասպանություն»՝

1 «Азербайджан тратит тысячи долларов на «вбросы» о потерях армянской армии»// NewsFront// https://news-front.info/2016/04/04/azerbajdzhan-tratit-tysyachi-dollarov-na-vbrosy-o-poteryax-armyanskoj-armii/

2 Тбилиси не подтверждает информацию, распространяемую Баку// SputnikАрмения// https://ru.armeniasputnik.am/karabah/20160404/2748355.html

3Журналистов LifeNews выдворили из Азербайджана за отказ от оценочных комментариев// ren.tv// http://ren.tv/novosti/2016-04-05/zhurnalistov-lifenews-vydvorili-iz-azerbaydzhana-za-otkaz-ot-ocenochnyh

«Руководство Армении пропагандирует и возвеличивает фашизм» («trend.az»), «В Армении не только фашисты, но и террористы почитаются как герои», «В Армении призывают к войне» («haqqin.az»), «Агрессия Армении против Азербайджана, фальшивый «геноцид армян» и двойные стандарты Запада» («sputnik.az»): Հանդիպում են նաև ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին վարկաբեկող վերնագրեր՝ «Саргсян подражает Гитлеру» («haqqin.az») , «Саргсян радикализует общество» («haqqin.az»): Հայկական ԶԼՄ-ներում ավելի հաճախ հանդիպող բառերից են՝ «քարոզչություն», ապատեղեկատվություն, սադրանք, խաղաղ բնակեցված տարածքներ, հաշտություն, հավաստի տեղեկատվություն: «Глава МИД Армении: Азербайджанская пропаганда – прямое нарушение критериев ОБСЕ» (https://news.am/rus/news/18414.html) , «Шармазанов: Подлая политика Азербайджана обречена на провал» (http://www.panorama.am/ru/news/2016/10/29/Армения-Шармазанов-политика-Азербайджан-провал/1668271): Չնայած որ երկու կողմերն էլ գտնվում են տեղեկատվական պատերազմում՝ ի տարբերություն ադրբեջանական ԶԼՄ-ների՝ հայկական կայքերը վարում են ոչ զանգվածային հակաադրբեջանական քարոզչություն. չկա համակարգված քարոզչական արշավ: Հայկական ԶԼՄ-ները երբեմն չեն անդրադառնում առաջին հայացքից չնչին թվացող ադրբեջանական քարոզչության դրսևորումներին:[1]

Հայաստանում հակաադրբեջանական քարոզչության վառ օրինակներից է իրական փաստերի վրա հիմնված «xocali.net» կայքը[2], որը հերքում է ադրբեջանցիների կողմից տարածվող տեղեկատվությունը Խոջալուում կատարված դեպքերի մասին: Եվս մեկ հակաքարոզչական հայկական կայք է «azerichild.info» -ն[3]: Այն ստեղծվել է, որպեսզի ցույց տրվի, թե ինչպես է ադրբեջանական կողմը ադրբեջանցի երեխաների շրջանում հայերի հանդեպ ատելություն և թշնամություն սերմանում: Կայքում տեղադրված են ասացվածքներ, ադրբեջանական դասագրքերի լուսանկարներ, մանկական երգեր և հեքիաթներ, որոնք բեմականացվում են երեխաների միջոցով: Հարկ է նշել, որ նմանատիպ հայկական կայքերը ներկայացված են հանրությանը մի քանի լեզուներով, ինչը կայքերի ինֆորմացիան ավելի հասանելի է դարձնում օգտատերերի համար: Խիստ կարևոր է, որպեսզի նման հայկական կայքերը տարածում ունենան ոչ միայն հայերի շրջանում, այլ նաև ընդհանուր տեղեկատվական դաշտում:

Հակաադրբեջանական քարոզչական գործիքներից է հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով ներկայացված «http://stophatespeech.net» կայքը[4], որի հեղինակներն են ադրբեջանագետներ Արմինե Ադիբեկյանը և Անժելա Էլիբեգովան: Կայքում տեղ է գտել նաև հեղինակների կողմից գրված 19 գլխից բաղկացած «Հայատացությունը Ադրբեջանում» գիրքը: Գրքում ներկայացված է, թե ադրբեջանական քարոզչությունը հայատյացության ինչ աստիճանի է հասնում: Հայատյացությունը ներթափանցում է Ադրբեջանի սոցիալ-տնտեսական և ինտելեկտուալ կյանքի կարևորագույն ոլորտներ: Ագրեսիայի առաջացման առաջին նախապայմաններից է համարվում անհանդուժողականությունը: Այժմ դժվար է պատկերացնել որևէ քաղաքակիրթ ազգ, որին հատուկ են վերոնշյալ դրսևորումները, սակայն Ադրբեջանում դրանք կարող են հող նախապատրաստել քսենոֆոբիայի ստեղծման և դրա հետագա քարոզման համար: Տեղին է մեջբերել ադրբեջանցիների կողմից հնչեցված մի քանի արտահայտություններ, մասամբ Արցախի շուրջ հնչեցված մտքեր, որոնք տեղ են գտել նաև կայքում:

«Фактически С.Оганян одним своим ответом разрушил миф о «непобедимости» армянской армии. А на деле армянская армия без русских хозяев представляет из себя сброд трусов и гомосексуалистов»,- ադրբեջանական «vesti.az» կայքում դեղադրված հոդվածից հատված:

«Если я убью хоть одного армянского оккупанта, значит я чего то стою. Одна пуля в лоб стоит сотни статей. Верно, Батыев?»,- ադրբեջանցի լրագրող Ֆարիդ Թեյմուրխանլիի խոսքերից:

«Кто самый главный враг Азербайджана? Это всем известно – армяне!»,- ադրբեջանում իրանակացված հարցման արդյունքը:

Եզրակացություն

Ադրբեջանական ԶԼՄ-ների ուսումնասիրությունից հետո կարելի է եզրակացնել, որ Արցախի շուրջ հակամարտության սրման ժամանակահատվածում ադրբեջանական քարոզչությունը օգտագործում էր

[1] Информационная война: армянская сторона не должна недооценивать «топорную» азербайджанскую пропаганду//aravot.am// http://ru.aravot.am/2017/02/02/233367/

[2] http://xocali.net/

[3] http://azerichild.info/

[4] http://stophatespeech.net/index.html

ինչպես արդեն ավանդական դարձած մեխանիզմներ, այնպես էլ նոր գործիքներ: Կարելի է վստահաբար ասել, որ հետագայում կգործածվեն նոր մանիպուլյացիոն մեթոդներ և տեխնոլոգիաներ՝ ապատեղեկատվություն տարածելու նպատակով:

Հարկ է առանձնացնել մի քանի հաճախ հանդիպող մեթոդներ, որոնք օգտագործում էր ադրբեջանական քարոզչությունը Արցախի շուրջ տեղեկատվական պատերազմում՝

- Ապատեղեկատվության տարածում՝ հղվելով հայկական աղբյուրներին
- Ապատեղեկատվության տարածում՝ հղվելով կասկածելի և կեղծ կայքերին
- Ապատեղեկատվության վիզուալիզացիա՝ նյութերին կցված լուսանկարներ և տեսահոլովակներ, որոնք չէին համապատասխանում իրականությանը
- Երրորդ անձանց կամ մարմիններին կեղծ հայտարարությունների վերագրում
- Ադրբեջանի զինված ուժերի հարձակումների մասին ինֆորմացիայի թաքցնում

Ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակահատվածում ընկած տեղեկատվական պատերազմի և հակառակորդի քարոզչության առանձնահատկություններից մեկն այն էր, որ քարոզչական գործընթացի մեջ ներգրավվել էին ոչ միայն ԶԼՄ-ները, այլ նաև համացանցի օգտատերերը: Տեղեկատվական պատերազմը ներթափանցել էր նաև սոցիալական ցանցերի տիրույթ և մոբիլիզացրել հասարակ օգտատերերին:

Որքան էլ, որ հայկական կողմը ադրբեջանական քարոզչությունը համարում է անարդյունավետ, այնուամենայնիվ այն իր ուժեղ ազդեցությունն է ունենում առաջին հերթին հարևան պետության վրա: Բացի այն, որ Ադրբեջանի պետական քարոզչությունը արդյունավետ ազդեցություն է ունենում իրենց հասարակության գիտակցության վրա, այն նաև ուղղված է համաշխարհային ասպարեզում Հայաստանի կերպարի վարկաբեկմանը, հայոց պատմությունը խեղաթյուրելուն և Հայաստանին իրականությանը չհամապատասխանող փաստեր վերագրելուն: Այդ իսկ պատճառով հայկական կողմը պետք է ավելի զգոն լինի և կարողանա դիպուկ հակահարվածներով դիմադրել ադրբեջանական ապատեղեկատվությանը: Ուստի խիստ կարևոր է նաև, որպեսզի առցանց լրատվամիջոցներ ընթերցողներն ու սոցցանցերի օգտատերերը չափացանց զգույշ լինեն անծանոթ, ոչ պաշտոնական և կասկածելի թվացող աղբյուրներից օգտվելիս:

Գրականություն

1. «Промахи азербайджанской пропаганды в ходе четырехдневной войны»//newsarmenia//http://newsarmenia.am/news/analytics/promakhi-azerbaydzhanskoy-propagandy-v-khode-chetyrekhdnevnoy-voyny/
2. «Азербайджан тратит тысячи долларов на «вбросы» о потерях армянской армии»// NewsFront// NewsFront// https://news-front.info/2016/04/04/azerbajdzhan-tratit-tysyachi-dollarov-na-vbrosy-o-poteryax-armyanskoj-armii/
3. «Тбилиси не подтверждает информацию, распространяемую Баку»// SputnikАрмения// https://ru.armeniasputnik.am/karabah/20160404/2748355.html
4. «Журналистов LifeNews выдворили из Азербайджана за отказ от оценочных комментариев»// ren.tv// http://ren.tv/novosti/2016-04-05/zhurnalistov-lifenews-vydvorili-iz-azerbaydzhana-za-otkaz-ot-ocenochnyh
5. «Информационная война: армянская сторона не должна недооценивать «топорную» азербайджанскую пропаганду»//aravot.am// http://ru.aravot.am/2017/02/02/233367/
6. http://xocali.net/
7. http://azerichild.info/
8. http://stophatespeech.net/index.html

ՀՏԴ 32(355.4:327.7) *Քաղաքագիտություն*

Մարինե Կիրակոսյան
Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական
լեզվահասարակագիտական համալսարան,
ասպիրանտուրա 2-րդ կուրս
kirakosyan.marine@gmail.com

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՎՐԱ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Հոդվածում ուսումնասիրվում են ինքնորոշման հակամարտությունների ժամանակ միջազգային կառավարման կիրառման հնարավորությունները: Ներկայացվում է տարածաշրջանային ու աշխարհաքաղաքական զարգացումների ազդեցությունը մեխանիզմի կիրառման վրա՝ Կոսովոյի դեպքի ուսումնասիրության ճանապարհով: Վերջինս կարող է առարկայական լինել նաև Արցախյան հակամարտության համար, քանզի ապրիլյան քառօրյա պատերազմից հետո միջազգային հանրության՝ խնդրի կարգավորման նկատմամբ հետաքրքրության մեծացման պայմաններում, անհրաժեշտ է դիտարկել բոլոր հավանական սցենարներն՝ առաջարկվող լուծումներին արդյունավետ կերպով արձագանքելու համար:

Բանալի բառեր. միջազգային կառավարում, ինքնորոշման հակամարտություն, աշխարհաքաղաքական գործոն, Կոսովոյի հակամարտություն, Արցախյան հակամարտություն

Марине Киракосян
Ереванский государственный университет языков
и социальных знаний, аспирантура 2-ой курс
kirakosyan.marine@gmail.com

ВЛИЯНИЕ ГЕОПОЛИТИЧЕСКИХ ФАКТОРОВ НА ПРИМЕНЕНИЕ МЕЖДУНАРОДНОГО ТЕРРИТОРИАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ ПРИ РАЗРЕШЕНИИ КОНФЛИКТОВ

В статье рассматриваются возможности использования международного территориального управления во время урегулирования конфликтов самоопределения. Представлено влияние региональных и геополитических процессов на использование данного механизма на основе исследования косовского конфликта. Исследование может также быть вещественным для НКР, поскольку в частности после апрельской “четырехдневной войны”, на фоне растущего интереса международного сообщества, необходимо рассмотреть все возможные сценарии, чтобы соответсвенно реагировать на предлагаемые решения.

Ключевые слова: международное территориальное управление, конфликт самоопределения, геополитический фактор, косовский конфликт, Нагорно-карабахский конфликт

Marine Kirakosyan
Yerevan Brusov State University of
Languages and Social Sciences,
postgraduate studies, 2nd year
kirakosyan.marine@gmail.com

THE IMPACT OF GEOPOLITICAL FACTORS ON THE APPLICATION OF INTERNATIONAL TERRITORIAL ADMINISTRATION IN CONFLICT REGULATION PROCESSES

The article analyzes the possibilities of applying the mechanism of international territorial administration (ITA) in addressing self-determination conflicts. It reveals the impact of regional and geopolitical realities on the application of ITA through examining the case of Kosovo. The research may also be essential for the case of Nagorno-Karabakh for the increased attention of the international community towards the conflict in the aftermath of the Four-Day April War requires the examination of all possible scenarios to adequately respond to the suggested solutions.

Key words: International territorial administration, self-determination conflicts, geopolitical factor, Kosovo conflict, Nagorno-Karabakh conflict

ՄԱԿ-ի որդեգրած չեզոքության սկզբունքի աստիճանական անկումը և հակամարտության տարածքներում ավելի ակտիվ ներգրավվածությունը՝ ընդհուպ ժողովրդավարական պետության կառուցման գործընթացին լայնամասշտաբ աջակցությունը, ակնհայտ դարձավ 1990-ական թթ. կեսերին: Հենց այդ փուլում էր, որ հակամարտությունների կարգավորմանը և հետկոնֆլիկտային փուլում նորանկախ պետությունների առջև ծառացած մարտահրավերներին արձագանքելու համար ՄԱԿ-ը սկսեց կիրառել տարածքի միջազգային կառավարման մեխանիզմը՝ նոր, ավելի լայն ձևաչափով[*]: Վերջինիս փոփոխության վրա շրջադարձային նշանակություն ունեցավ ՄԱԿ Գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալիի 1992թ. «Խաղաղության օրակարգ» զեկույցը, որով հիմնավորվում էր զինված հակամարտությունների կարգավորման ընթացքում ՄԱԿ-ի գործառույթների ընդլայնման անհրաժեշտությունը[1]: Զեկույցում խաղաղապահ առաքելությունը և դրա դրսևորման տարբեր ձևերը դիտարկվում էին որպես սուր հակամարտությունների կարգավորման գործիքներ: Ընդգծվում էր, որ պետությունների միջև պատերազմի կամ զինված հակամարտությունների բացակայությունը դեռևս միջազգային խաղաղության և անվտանգության երաշխիք չէ, ուստի անհրաժեշտ է ուշադրություն սևեռել այն խնդիրների վրա, որոնք կարող են դրանց բռնկման անմիջական պատճառ դառնալ: Արդյունքում, Անվտանգության խորհուրդը «միջազգային խաղաղությանն ու անվտանգությանն ուղղված վտանգները» սկսեց դիտարկել ավելի լայն շրջանակներում, և նախկինում պետությունների ներպետական իրավասությանը վերագրվող մի շարք խնդիրներ սկսեցին աստիճանաբար ձեռք բերել միջազգային նշանակություն:

Այդուհանդերձ, չնայած կիրառման տևական ընթացքին, միջազգային կառավարման իրականացման իրավական հիմքերը հստակ չեն, ինչը պայմանավորված է ՄԱԿ Կանոնադրության մեջ մեխանիզմի կիրառման ուղղակի հղման բացակայությամբ: Ուստի, ներկայումս միջազգային կառավարումը կարող է դասվել ՄԱԿ-ի սովորութային լիազորությունների (customary powers) շարքին, որոնց տրամադրման հիմքում միջազգային կազմակերպության գործունեության ընթացքում համանման գործողությունների պարբերաբար կրկնությունն է, որը բնորոշվում է ճանաչման համընդհանրությամբ և իրավաբանորեն պարտադիր բնույթով[2]: Միաժամանակ, հակամարտությունների կարգավորման ժամանակ միջազգային կառավարման կիրառման խնդիրները պայմանավորված են ոչ միայն իրավական, այլև (աշխարհա)քաղաքական գործոնով և տարածաշրջանային զարգացումներով: Հատկանշական է, որ միջազգային կառավարման կիրառման բոլոր փուլերի վրա զգալի է տվյալ ժամանակաշրջանի ավելի լայն՝ աշխարհաքաղաքական զարգացումների ազդեցությունը: Վերջինիս հիման վրա հնարավոր է առանձնացնել միջազգային կառավարման երեք փուլ. 1)հակամարտությունների կարգավորման և չեզոքացման փուլ, որը բնորոշ էր Ազգերի լիգայի հետպատերազմյան և Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ՄԱԿ-ի ներգրավվածության պրակտիկային, երբ միջազգային իրավունքը դեռևս ընկալվում էր որպես երկկողմ և պետականակենտրոն իրավական համակարգ՝ ձևավորված լուծելու ինքնիշխանության կամ կառավարման հետ կապված կոնֆլիկտները հակամարտող միջազգային կողմերի միջև; 2)միջազգային կառավարման կիրառման ad hoc փուլ՝ մեծապես ուղղորդվող սառը պատերազմի քաղաքական չափորոշիչներով, որոնք մերժում էին լայնամասշտաբ միջազգային ինտերվենցիան և արտաքին ներգրավվածությունը սահմանափակում բացառապես պետական կառավարմանն աջակցության և համատեղ կառավարման առաքելություններով; 3)1990-ական թթ. ՄԱԿ-ի տարածքի կառավարման նախաձեռնությունները, որոնք համընկան բազմակողմանի համագործակցության ու կոլեկտիվ անվտանգության համակարգի առաջ քաշման փուլի հետ[3]:

Վերջին փուլում միջազգային կառավարման տեսանկյունից առանձնակի ուսումնասիրության է արժանացել Կոսովոյի հակամարտության դեպքը, որտեղ միջազգային կազմակերպությունների

---

[*] Տարածքի կառավարման համար պատասխանատու Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչը մի շարք դեպքերում կարող էր ստանձնել տարածքի կառավարման լիարժեք՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների լիազորությունները:

1 Report of the Secretary-General, An Agenda for Peace: Preventive Diplomacy, Peacemaking and Peacekeeping, (17 June, 1992), available at http://www.unrol.org/files/a_47_277.pdf.

2 **Shaw M.,** International Law, Fifth Edition, Cambridge University Press, 2003, pp. 68-88.

3 **Stahn C,** The Law and Practice of International Territorial Administration: Versailles to Iraq and Beyond, US, Cambridge University Press, 2008, p. 160.

դերակատարությունը զգալի էր ներգրավման ծավալների (լիարժեք օրեսդիր, գործադիր և դատական իշխանությունների լիազորությունների ստանձնում) և առանձնահատուկ՝ կառավարման հաստատման միջավայրի տեսանկյունից[1]: Դեպքի ուսումնասիրությունը հնարավորություն կտա պարզել՝ ինչպիսի հեռանկարներ կան այս մեխանիզմի կիրառման համար ապագաղութացման համատեքստից դուրս՝ ինքնորոշման հակամարտությունների կարգավորման համար: Ուսումնասիրությունը կարող է առարկայական լինել նաև Արցախյան հակամարտության դեպքի համար, քանզի, մասնավորապես, ապրիլյան քառօրյա պատերազմից հետո միջազգային հանրության՝ խնդրի կարգավորման նկատմամբ հետաքրքրության մեծացման պայմաններում, անհրաժեշտ է դիտարկել բոլոր հավանական սցենարները առաջարկվող լուծումներին համապատասխան արձագանք տալու համար: Ընդ որում, հաշվի առնելով միջազգային կազմակերպությունների ոչ համաչափ արձագանքը, մասնավորապես, հակամարտությունների էսկալացիայի փուլին, հարկ է անդրադառնալ ոչ միայն միջազգային կառավարման հաստատման իրավական, այլև քաղաքական բաղադրիչին:

Հակամարտությունների կարգավորման բանակցություններում հաճախ կարելի է նկատել, որ երրորդ կողմերը (հատկապես, եթե դրանք ազդեցիկ պետություններ են) կարող են փորձել ազդել բանակցությունների ընթացքի և արդյունքի վրա՝ հանուն իրենց սեփական պետական, այլ ոչ հակամարտող կողմերի շահերի[2]: Պատահական չէ, որ Կոսովոյում միջազգային կառավարում հաստատվեց միայն այն բանից հետո, երբ ՆԱՏՕ-ի մարդասիրական միջամտությունից հետո Ռուսաստանը դադարեցրեց իր մասնակցությունը հակամարտության կարգավորմամբ զբաղվող Շփման խմբի աշխատանքներին: Ու թեև հետագայում ևս Մոսկվան շարունակում էր վճռականորեն մերժել Կոսովոյի անկախությունը ճանաչելու տարբերակը, Ռուսաստանի բացակայությունը հանգեցրեց միակողմանի միջնորդության՝ ի դեմս Միացյալ Նահանգների, ինչն առանցքային նշանակություն ունեցավ Կոսովոյի հակամարտության կարգավորման համար[3]:

Կոսովոյի՝ որպես եզակի դեպքի, կողմնակիցները տարածքի հատուկ կարգավիճակը նշում են այդ եզակիությունը պայմանավորող գործոնների շարքում[4]: Ընդ որում, հատկանշական է, որ Արցախում ևս հատուկ կարգավիճակ սահմանվել է դեռևս 1989թ. հունվարին, երբ ԽՍՀՄ ԳԽ որոշմամբ դադարեցվեց ԼՂԻՄ մարզային խորհրդի գործունեությունը և ստեղծվեց հատուկ կառավարման կոմիտե՝ Մոսկվայի ուղիղ ենթակայությամբ: Դա եղել է վերջին գործող կարգավիճակը՝ մինչև 1991թ. դեկտեմբեր, երբ տեղի ունեցավ Արցախի անկախության հանրաքվեն: Միաժամանակ, հարկ է հաշվի առնել, որ Կոսովոյում միջազգային կառավարում մտցվեց մարդասիրական աղետը կանխելու համար: Այն դեպքում, երբ միջազգային հանրությունը որևէ գործնական քայլ չձեռնարկեց Արցախում Ադրբեջանի սանձազերծած պատերազմը դադարեցնելու համար, որի արդյունքում զոհերն ավելի շատ էին, քան Կոսովոյի հակամարտության ժամանակ: Պատերազմը հաջողվեց դադարեցնել միայն 1994թ., երբ Արցախի պաշտպանության բանակը ստիպված էր պատերազմական գործողությունները տեղափոխել ԼՂԻՄ-ի հարակից շրջաններ՝ ապահովելով տարածքի անվտանգությունն ու անհասանելիությունը ադրբեջանական հրետանու համար[5]: Ուստի, ակնհայտ է, որ ոչ թե դեպքն էր եզակի, այլ միջազգային հանրության արձագանքը դեպքին՝ համապատասխան:

Կոսովոյում ՄԱԿ-ի ժամանակավոր կառավարումը հաստատվեց Անվտանգության խորհրդի 1244 (1999) բանաձևի հիման վրա՝ երկրում տիրող ծանր մարդասիրական իրավիճակը բարելավելու համար: Առաքելության կազմավորումից հետո ձևակերպվեց հակամարտության կարգավորման ռազմավարություն, որի հիմքում ընկած էր «նախ՝ չափորոշիչներ, ապա՝ կարգավիճակ» կարգախոսը: Փաստաթուղթը սահմանում էր մասնավորապես ժողովրդավարության և օրենքի գերակայության ոլորտներին վերաբերող չափորոշիչներ, որոնք բավարարելու դեպքում հնարավոր կլիներ սկսել

[1] Նախկինում արտաքին կառավարումը չճանաչված պետությունների դեպքում կիրառվում էր գերազանցապես ինքնակառավարման և ինքնակազմակերպման փորձի իսպառ բացակայության արդյունքում առաջ եկած խնդիրներին արձագանքելու համար (Հարավային Սուդան, Արևմտյան Սահարա, Արևելյան Թիմոր և այլն)՝ որպես գաղութային անցյալի «ժառանգություն»:

[2] **Hopmann T.,** The Negotiation Process and the Resolution of International Conflicts, Columbia, University of South Carolina Press, 1996, p. 227.

[3] **Թորոսյան Տ.,** Լեռնային Ղարաբաղ և Կոսովո. հակամարտություններ, բանակցություններ, աշխարահաքաղաքականություն, Երևան, Տիգրան Մեծ հրատ., 2012, էջ 205-206:

[4] **Summers J.,** Kosovo: A Precedent? The Declaration of Independence, The Advisory opinion and Implications for Statehood, Self-Determination and Minority Rights, Leiden, Martinus Nijhoff Publishers, 2011, pp.382-386; **Friedrich J.,** UNMIK in Kosovo: Struggling with Uncertainty...

[5] **Թորոսյան Տ.,** Լեռնային Ղարաբաղ և…, էջ 268:

կարգավիճակի վերաբերյալ բանակցությունները: Ակնհայտ է, որ ժողովրդավարական մեխանիզմների արմատավորումը տարածքում տևական խաղաղության պահպանման կարևոր նախապայման է, սակայն այդ ամենը պետք է հաջորդի կամ առնվազն ուղեկցվի տարածքի կարգավիճակի վերաբերյալ բանակցություններին: Դա առավելապես վերաբերում է ինքնորոշման հակամարտություններին, որոնց դեպքում կարգավիճակի անորոշությունը մեծացնում է ցանկացած պահի ռազմական բախումների վերսկսման հավանականությունը: Դա են փաստում Կոսովոյում 2004թ. վերսկսված արյունալի բախումները: Ուստի, եթե ՄԱԿ-ի ավելի վաղ նախաձեռնությունների դեպքում օբյեկտիվ պատճառներով օրակարգային են համարվել կառավարման հետ կապված խնդիրները, ապա ակնհայտ է, որ նույն մոդելի կիրառումը կարող է վտանգավոր լինել ոչ համարժեք դեպքերում: Միայն այն բանից հետո, երբ վերանայվեց «նախ՝ չափորոշիչներ, ապա՝ կարգավիճակ» ռազմավարությունը հնարավոր եղավ առաջընթաց գրանցել կարգավիճակի վերաբերյալ բանակցային գործընթացում, որի արդյունքում 2008թ. հռչակվեց Կոսովոյի անկախությունը:

Ինքնորոշման հակամարտությունների դեպքում ժամանակավոր կառավարման հաստատման համար առանցքային նշանակություն ունի «հյուրընկալող տարածքի» և/կամ մետրոպոլիայի համաձայնության ձեռքբերումը, ինչն, ինչպես նշում է Զոմը, գրեթե անհնար է հետկոնֆլիկտային պառակտված հասարակությունների դեպքում[1]: Ակնհայտ է, որ դա փոխզիջումային լուծման հասնելու նախնական երաշխիքներից է, սակայն հակամարտության ընթացքով, կողմերի առանձնահատկություններով և երրորդ կողմի շահերով պայմանավորված կառավարումը կարող է հաստատվել առանց երկկողմ համաձայնության: Արդուհանդերձ, նույնիսկ այն դեպքերում, երբ մետրոպոլիան ընդդիմացել է միջազգային կառավարմանը, որի ելքը, որպես կանոն, անկախության հռչակումն է, միջազգային համայնքը, համաձայնությունը ձեռք է բերել «այլընտրանքային ճանապարհով»: Օրինակ, Արևելյան Թիմորի դեպքում միայն այն բանից հետո, երբ ՄԱԿ-ը զգուշացրեց Ինդոնեզիային, որ կարող է վերջինիս պատասխանատվության ենթարկել ցեղասպանության համար, Ինդոնեզիան համաձայնեց Թիմորում հանրաքվե անցկացնելուն և անկախացման օգտին քվեարկելու դեպքում՝ ժամանակավոր միջազգային կառավարման հաստատմանը[2]: Կոսովոյի դեպքը ևս հաճախ որակվում է որպես «հարաբերականորեն լեգիտիմ»՝ հղում անելով, որ Կումանովոյի համաձայնագիրը, որը կնքվեց 1999թ. հունիսի 9-ին միջազգային անվտանգության ուժերի (KFOR) և Հարավսլավիայի ֆեդերատիվ հանրապետության միջև, և որին անմիջապես հաջորդեց Անվտանգության խորհրդի ընդունած բանաձևը, ձեռք բերվեց արտաքին պարտադրանքի ճանապարհով[3]: Բանն այն է, որ համաձայնագիրը կնքվեց ՆԱՏՕ-ի ռազմական միջամտությունից անմիջապես հետո, որը հավանաբար կշարունակվեր, եթե Հարավսլավիայի ֆեդերատիվ հանրապետությունը հրաժարվեր այն ստորագրել: Նման տեսակետն արդարև գոյության իրավունք ունի, բայցևայնպես չի կարող ծառայել որպես ժամանակավոր կառավարման լեգիտիմության հակափաստարկ, քանզի միջազգային կառավարման հիմնական իրավական աղբյուրը Կանոնադրության 7-րդ գլխի հիման վրա ընդունած ԱԽ-ի բանաձևն է[4]: Եթե մետրոպոլիայի համաձայնության ձեռքբերումը օբյեկտիվ պատճառներով ոչ միշտ է հնարավոր, ապա ինքնորոշվող ժողովրդի դեպքում դա պարտադիր պայման է՝ առաջին հերթին ապահովելու միջազգային և տեղի իշխանությունների խաղաղ համակեցությունը: Այն դեպքում, երբ այդ երկուսի միջև առաջանում է պառակտում, ինչն առավել հաճախ օրակարգային հարցերի ոչ հստակ սահմանման և, արդյունքում, կառավարման տևական բնույթի պատճառ է, հնարավոր է նաև զինված բախումների վերսկսում, ինչպես դա եղավ Կոսովոյում 2004թ.:

2016թ ապրիլին Ադրբեջանի սանձազերծած քառօրյա պատերազմն Արցախյան հակամարտության կարգավորման գործընթացի սառեցման տրամաբանական շարունակությունն էր, որը ցույց տվեց, որ անհրաժեշտ է նոր մեխանիզմների կիրառում հակամարտության կարգավորմանը հետամուտ լինելու համար: Ուստի չի բացառվում, որ առաջարկվող մոտեցումների թվում լինի արտաքին կառավարման մեխանիզմների կիրառումը, մասնավորապես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կարգավորման

[1] **Zaum D.,** The Sovereignty Paradox: The Norms and Politics of International Statebuilding, US, Oxford University Press, 2007, pp. 59-60.

[2] **Թորոսյան Տ.,** Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը միջազգային իրավունքի շրջանակներում, Տիգրան Մեծ Երևան, 2008թ.:

[3] **Milano E.,** Security Council Action in the Balkans: Reviewing the Legality of Kosovo's Territorial Status, European Journal of International Law, vol. 14, 5, 2003, pp. 999-1022.

[4] **Wolfrum R.,** International Administration in post-Conflict Situations by the United Nations and Other International Actors, max Planck Yearbook of United Nations Law, vol. 9, 2005, pp. 649-696.

վերաբերյալ վերջին՝ «Մադրիդյան», փաստաթղթի սկզբունքներից մեկն էլ ենթադրում է Արցախի միջանկյալ կարգավիճակ: Միաժամանակ, Արցախի Հանրապետությունն այդ սցենարի հավանականությունը կարող է դիտարկել առնվազն երեք նախապայմանի բավարարման դեպքում. Մադրիդյան փաստաթղթի առաջին սկզբունքի՝ ԼՂԻՄ-ի հարակից տարածքների վերադարձի ի սկզբանե բացառում, քաղաքական կարգավիճակի հստակ սահմանում միջազգային մանդատում, ինչն Արցախի դեպքում լիարժեք անկախությունից բացի այլընտրանք չունի և տեղի իշխանություններին ստանձնած լիազորությունների փոխանցման հստակ ժամանակացույց: Այդ նախապայմանների առկայությունը էապես կնվազեցնի խնդրի վերջնական հանգուցալուծումից խուսանավելու հնարավորությունը:

Իհարկե հաշվի առնելով հակամարտությունների կարգավորման ժամանակ միջազգային կառավարման դրական ելքերը[1]՝ վերոնշյալ սցենարը մեծապես պայմանավորված է շահագրգիռ կողմերի՝ հակամարտության կարգավորմանը հետամուտ լինելու պատրաստակամությամբ: Խնդիրը հատկապես բարդ է այն դեպքում, երբ կարգավորման գործընթացում ներգրավված են մի քանի միջնորդներ, որոնք ունեն հակոտնյա շահեր: Թերևս դա է պատճառը, որ միայն այն բանից հետո, երբ Միացյալ Նահանգները փաստացի դարձավ Կոսովոյի հակամարտության կարգավորմամբ զբաղվող միակ միջնորդ, հնարավոր եղավ դրական տեղաշարժ գրանցել: Մինչդեռ, օրինակ, Արցախյան հակամարտության դեպքում, որում ներգրավված են միաժամանակ երեք միջնորդ, որոնցից երկուսի՝ Միացյալ Նահանգների և Ռուսաստանի, շահերը բախվում են: Այդ երկրները տարբեր ազդեցություններ ունեն Հարավային Կովկասում ծավալվող քաղաքական գործընթացների վրա, սակայն նրանցից ոչ մեկը չունի տարածաշրջանում լիակատար գերիշխանություն: Ուստի, չնայած այն հանգամանքին, որ այդ մեխանիզմի կիրառման հեռանկարներն Արցախյան հակամարտության կարգավորման շրջանակներում այսօր չեն նշմարվում, անհրաժեշտ է նման ուսումնասիրությունների ճանապարհով դիտարկել խնդրի կարգավորման հավանական տարբերակների հնարավոր օգուտներն ու վտանգները:

Օգտագործված գրականության ցանկ

1. Թորոսյան Տ., Լեռնային Ղարաբաղ և Կոսովո. հակամարտություններ, բանակցություններ, աշխարահաքաղաքականություն, Երևան, Տիգրան Մեծ հրատ., 2012:
2. Թորոսյան Տ., Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը միջազգային իրավունքի շրջանակներում, Տիգրան Մեծ Երևան, 2008թ.:
3. Report of the Secretary-General, An Agenda for Peace: Preventive Diplomacy, Peacemaking and Peacekeeping, (17 June, 1992), available at http://www.unrol.org/files/a_47_277.pdf.
4. Friedrich J., UNMIK in Kosovo: Struggling with Uncertainty, Max Planck UNYB, 9, 2005.
5. Hopmann T., The Negotiation Process and the Resolution of International Conflicts, Columbia, University of South Carolina Press, 1996.
6. Milano E., Security Council Action in the Balkans: Reviewing the Legality of Kosovo's Territorial Status, European Journal of International Law, vol. 14, 5, 2003.
7. Shaw M., International Law, Fifth Edition, Cambridge University Press, 2003.
8. Stahn C, The Law and Practice of International Territorial Administration: Versailles to Iraq and Beyond, US, Cambridge University Press, 2008.
9. Summers J., Kosovo: A Precedent? The Declaration of Independence, The Advisory opinion and Implications for Statehood, Self-Determination and Minority Rights, Leiden, Martinus Nijhoff Publishers, 2011.
10. Wolfrum R., International Administration in post-Conflict Situations by the United Nations and Other International Actors, max Planck Yearbook of United Nations Law, vol. 9, 2005.
11. Zaum D., The Sovereignty Paradox: The Norms and Politics of International Statebuilding, US, Oxford University Press, 2007.

[1] Չճանաչված պետություններում միջազգային կառավարման վեց դեպքերից հինգը ավարտվել է անկախության հռչակմամբ, մեկը (Արևելյան Սլովենիա)՝ նախկին մետրոպոլիայի՝ Խորվաթիայի կազմ վերաինտեգրմամբ (ըստ նախանշված մանդատի):

ՀՏԴ 327(479.24:67)

Քաղաքագիտություն

Անուշ Միրզոյան
ԱրՊՀ, Պատմության և իրավագիտության ֆակուլտետ, 3-րդ կուրս
mirzoyananushik64@gmail.com

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՆԱՎԹԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ և ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԻՆ և ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Ադրբեջանի քաղաքականության հիմնական դրույթն այն է, որ նա իր նավթային գործոնն օգտագործում է ուժեղացնելու արտաքին քաղաքականությունը՝ փորձելով ամրապնդել իր դիրքերը տարածաշրջանում: Պաշտոնական Բաքուն, շահարկելով նավթի խնդիրը, փորձում է իրեն ներկայացնել որպես Արեւմուտքի նավթի ու գազի հիմնական մատակարարի՝ այս հարցը շաղկապելով Ղարաբաղյան հիմնախնդրի հետ: Ինչպես նշում են արեւմտյան տեսաբանները, Ադրբեջանի տնտեսական եւ քաղաքական համակարգի կախվածությունը նավթից այնպիսի չափերի է հասել, որ այդ երկրից էներգակիրների՝ նավթի ու գազի արտահանման դադարեցումը, ասենք, հնարավոր ռազմական հակամարտության դեպքում, կահանգեցնի այդ երկիրի իշխանական բուրգի ու տնտեսության փլուզմանը:

Բանալի բառեր՝ նավթային գործոն, արտաքին քաղաքականություն, նավթ,գազ, մատակարար, հիմնախնդիր,տնտեսություն,հակամարտություն:

Ануш Мирзоян
АрГУ, Факультет истории и права, 3-ий курс
mirzoyananushik64@gmail.com

НЕФТЯНАЯ ПРОМЫШЛЕННОСТЬ АЗЕРБАЙДЖАНА И ВЛИЯНИЕ НА ВНУТРЕННЮЮ И ВНЕШНЮЮ ПОЛИТИКУ

Основное положение Азербайджанской политики заключается в том, что он использует коэффициент нефти , чтобы увеличить внешную политику, укрепить свои позиции в регионе. Баку, спекулируя на нефтяном вопросе, пытаясь представить себя в качестве основного поставщика нефти и газа на Запад, связывает этот вопрос с нагорно-карабахским конфликтом. По мнению западных теоретиков экономической и политической зависимости от нефти достигла таких масштабов, что приостановление энергетических ресурсов страны, нефти и газа, например, в случае возможного военного конфликта, в стране приведет к краху пирамиды власти и экономики.

Ключевые слова: Нефтяной фактор, внешняя политика, нефть, газ, поставка, вопрос, экономика, конфликт.

Anush Mirzoyan
Artsakh State University, Faculty of History and Law, 3rd year
mirzoyananushik64@gmail.com

AZERBAIJAN'S OIL INDUSTRY AND ITS IMPACT ON DOMESTIC AND FOREIGN POLICY

The main position of the Azerbaijani policy is that it uses the oil factor to increase foreign policy, strengthen its position in the region. Baku, speculating on the oil issue, trying to present itself as the main supplier of oil and gas to the West, connects this issue with the Nagorno-Karabakh conflict. According to Western theoreticians, economic and political dependence on oil has reached such proportions that the suspension of the country's energy resources, oil and gas, for example, in the event of a possible military conflict, in the country will lead to the collapse of the pyramid of power and economy.

Key words: Oil factor, foreign policy, oil, gas, supply, issue, economy, conflict.

Ադրբեջանական Հանրապետության (Ա.Հ) տնտեսական համակարգը մոնոտնտեսություն է՝ կառուցված ածխաջրածինների զգալի պաշարների, դրանց արդյունահանման և արտահանման վրա:

ԱՀ ազգային եկամուտների ավելի քան 85%-ը գոյանում է արտաքին առևտրից, որում հանածո վառելիքների (հում նավթ, բնական գազ) մասնաբաժինն իր հերթին չի իջել 80% ցուցանիշից (սկսած 2008-ից՝ այն կազմել է մոտ 95%): ԱՀ-ում արդյունահանված ողջ հում նավթի մոտ 90%-ը գոյանում է Կասպից ծովի միայն մեկ նավթադաշտից՝ Ազերի-Չիրագ-Գյունեշլի (ԱՉԳ) դաշտից: Ըստ էության, մերօրյա Ադրբեջանն իր տնտեսական համակարգով ԱՉԳ, Սանգաչալի տերմինալի և Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի կցորդն է: Եվ ինչպես Վրաստանը ժամանակին անվանվում էր «Վրաստանի խողովակաշարային հանրապետություն», այնպես էլ մերօրյա Ադրբեջանը կարող է անվանվել «Ազերի-Չիրագ-Գյունեշլի հանրապետություն»:[1]

ԱՀ տնտեսական համակարգը բոլոր մոնոտնտեսություններին բնորոշ մասնակի և կարճաժամկետ առավելությունները համադրում է երկարաժամկետ ու համակարգային վտանգների հետ: Ածխաջրածինների շոշափելի պաշարների ինտենսիվ արդյունահանումն ապահովում է էական նյութական բարիքների արագ կուտակում:

Այս ծրագիրը՝ այսպես կոչված «Ալիևի դոկտրինը», ԱՀ սոցիալ- տնտեսական համակարգի հենքն ու ձևագոյացնող կաղապարն է: Սակայն Ի.Ալիևի նախագահության, թերևս, ամենակարևոր ու հատկանշական գիծը դարձան երկրի աննախադեպ ռազմականացումը, ծանր, առաջին հերթին՝ գրոհային նշանակության սպառազինությունների ծավալուն գնումները, ԱՀ ռազմարդյունաբերական համալիրի ստեղծումը: Իսկ քաղաքական առումով Ի.Ալիևի նախագահության ամենահատկանշական գիծը դարձան միանձնյա բռնատիրական համակարգի ուժեղացումն ու դրա սահմանադրական ձևակերպումը: 2009թ. սահմանադրական «բարեփոխումների» արդյունքները ոչ միայն հնարավորություն ընձեռեցին Ի.Ալիևին «ցմահ» նախագահ դառնալ, այլև այդ հնարավորությունը կապեցին Լեռնային Ղարաբաղում պատերազմի վերսկսման և հակամարտությունը երբևէ չդադարեցնելու հետ:[2]

1999թ.ին Լոնդոնում Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի կառուցման համար միջազգային կոնսորցիումի ստեղծման շուրջ պայմանագրի կնքումից հետո Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւը հայտարարեց՝ «այս խողովակաշարով ոչ թե նավթ է հոսելու, այլ՝ քաղաքականություն»: Ամրագրվեց Ադրբեջանի քաղաքականության հիմնական դրույթը, որի համաձայն՝ վերջինս իր նավթային գործոնն օգտագործում է ուժեղացնելու արտաքին քաղաքականությունը՝ փորձելով ամրապնդել իր դիրքերը տարածաշրջանում: Պաշտոնական Բաքուն, շահարկելով նավթի խնդիրը, փորձում է իրեն ներկայացնել որպես Արեւմուտքի նավթի ու գազի հիմնական մատակարարի՝ այս հարցը շաղկապելով Ղարաբաղյան հիմնախնդրի հետ: Սակայն Ադրբեջանի նավթային գործոնը ոչ միայն նրա ամրության, այլեւ թուլության պատճառն է:[3] Արեւմուտքում հասկանում են, որ ադրբեջանական նավթը եւ գազը չի կարող այլընտրանք լինել Պարսից ծոցի երկրների էներգակիրներին, սակայն Հարավային Կովկաս եւ հատկապես Կասպից ծովի ավազան ելք ապահովելու ու դեպի Կենտրոնական Ասիայի հումքով հարուստ տարածաշրջան մուտք ունենալու համար կարևոր են հարաբերությունները պաշտոնական Բաքվի հետ: Ադրբեջանի նավթային սեկտորը, որը կազմում է նրա ներքին համախառն արդյունքի 60 տոկոսից ավելին, մեծացնում է նրա կախվածությունը միջազգային հումքային սակարաններում նավթի գներից: Եվ ինչքան Բաքուն ավելացնում է արտահանման ծավալները, այնքան մեծանում է նաեւ նրա կախվածությունը նավթի գների տատանումներից, այսինքն՝ այնքան նրա տնտեսությունը ավելի խոցելի է դառնում: Նավթային ոլորտում ներդրումների մեծացումը բերում է այդ երկրի ներքին համախառն արդյունքի աննախադեպ աճին, ինչը փրկեց այդ երկրի տնտեսությունը ճգնաժամային 2008-2009թթ.: Ներդրումները նավթային ոլորտում, սակայն, քիչ են ազդում երկրի բնակչության կենսամակարդակի վրա, քանի որ այդ ճյուղը, լինելով բավականին ֆինանսատար, միաժամանակ աշխատատար չէ՝ այդ բնագավառում զբաղված է Ադրբեջանի բնակչության 12 տոկոսը:[4] Ադրբեջանը վաղուց արդեն վերածվել է «մեկ տնտեսության» երկրի եւ նավթից ստացվող աննախադեպ եկամուտներն Ալիեւների կլանին հնարավորություն են տալիս ուժեղացնել իր դիրքերը երկրի ներսում՝ կատարելով քայլեր, որոնք բնորոշ են հումքով հարուստ բռնատիրական պետություններին՝ կրճատել

[1] atlas.media.mit.edu - Azerbaijan

[2] Ադրբեջանական Հանրապետության սոցիալ-տնտեսական համակարգը / Ա.Մարջանյան էջ 19

[3] armenpress.am -Նավթային գործոնի ազդեցությունն Ադրբեջանի արտաքին եւ ներքին քաղաքականության վրա20.04.2017 Արմեն Մանվելյան

[4] trend.az- Экономика Азербайджана выросла на 3,1%

հարկերը կամ որոշ դեպքերում դրանք ընդհանրապես վերացնել, նվազեցնել բյուջեի ձեւավորման գործում երկրի բնակչության ու գործարար խավի դերակատարումը, հետեւաբար նաեւ իշխանությունների կախվածությունը այդ շրջանակներից: Փոխարենն ակնկալում են ֆինանսական մեծ մուտքեր նավթի արտահանման ծավալներից, ինչը սակայն մեծացնում է կախվածությունը նավթային վերազգային ընկերություններից: Այն փաստը, որ Ադրբեջանի կախվածությունը նավթից կրիտիկական է, երեւաց ճգնաժամի տարիներին: 2009թ. ճգնաժամի շրջանում արտաքին առեւտրային շրջանառության անկում ապրեց 2,6 անգամ՝ 54 մլրդ դոլարից հասնելով 20.8 մլրդ դոլարի, եւ սա արդյունք էր, ոչ թե նավթի արտահանման ծավալների անկման այլ նավթի գների նվազման միջազգային հումքային սակարաններում: Արտահանման բնագավառում անկումը կազմեց 3.6 անգամ՝ հասնելով 14.6 մլրդ դոլարի: Այդ երկրի արտահանման ծավալում 92,8 տկոսը կազմում են հում նավթը եւ գազը: Այսինքն՝ նավթի գնի տատանումները ուղակիորեն ազդում են այդ երկրի տնտեսության վրա, էլ ավելի մեծացնելով վերջինիս կախվածությունը հումքի գներից ու վերազգային նավթային ընկերություններից: «Բրիթիշ փեթրոլիում», «Սթաթօյլ» եւ միջազգային այլ գերհզոր նավթային ընկերություններ ուղղակիորեն կամ վերահսկողության տակ գտնվող կոնսորցիումների միջոցով իրենց ձեռքում են կենտրոնացրել Ադրբեջանի նավթային սեկտորի ճնշող մեծամասնությունը: Նրանք ոչ միայն կառավարում են այդ երկրի ամենաեկամտաբեր նավթահորերը, այլեւ հսկողություն են սահմանել Ադրբեջանից նավթի եւ գազի առաքման հիմնական խողովակաշարերի՝ Բաքու Ջեյհանի եւ Բաքու Էրզրումի նկատմամբ: Ադրբեջանից արտահանվող նավթի առյուծի բաժինը պատկանում է Ադրբեջանական միջազգային օպերացիոն ընկերությանը (ԱՄՕԸ):[1]

Դառնալով Արեւմուտքի նավթային կցորդը՝ Ալիեւների կլանը լուծում էր կարեւորագույն խնդիր՝ լեգիտիմացնում էր իշխանությունը հորից որդուն փոխանցելու քաղաքական ավանդույթը: Ադրբեջանում նավթային բումը բերում է այդ երկրի կախվածության մեծացմանը նավթային վերազգային ընկերություններից, որոնք փաստորեն հսկում են այդ երկրի տնտեսության մեծ մասը: Այսինքն՝ Ադրբեջանի նավթային սեկտորը նրա ամենախոցելի տեղն է. այդ երկրի ապագան կախված է այդ հումքի արտահանման ծավալներից եւ սակարաններում դրա գներից: 2008-2009թ.թ. ճգնաժամի շրջանում նավթի գների աննախադեպ անկումը լուրջ խնդրներ հարուցեց այդ երկրի տնտեսության համար, սակայն գների անկման կարճաժամկետությունը փրկեց Ադրբեջանի տնտեսական եւ քաղաքական համակարգը կործանումից: Սակայն, ինչպես նշում են արեւմտյան տեսաբանները, Ադրբեջանի տնտեսական եւ քաղաքական համակարգի կախվածությունը նավթից այնպիսի չափերի է հասել, որ այդ երկրից էներգակիրների՝ նավթի ու գազի արտահանման դադարեցումը, ասենք, հնարավոր ռազմական հակամարտության դեպքում, կահանգեցնի այդ երկիրի իշխանական բուրգի ու տնտեսության փլուզմանը:[2]

Այսպիսով՝ Ադրբեջանը խորքային կախվածություն ունի վերազգային նավթային ընկերություններից, որոնք վերահսկում են նավթ ու գազ արդյունահանող հիմնական ընկերությունները, ամենախոշորներն են Ադրբեջանի միջազգային օպերացիոն ընկերությունը (ԱՄՕԸ) և Շահ-Դենիզ կոնսորցիումը: Այդ երկուսը միասին վերահսկում են Ադրբեջանի նավթի ու գազի պաշարների մոտ 75%-ը:[3] Իրերի նման դասավորությունը օբյեկտիվորեն խորքային կախվածության մեջ է դնում պաշտոնական Բաքվին այդ նավթագազային կորպորացիաներից, սակայն միաժամանակ Ալիևյան կլանի համար անվտանգության որոշակի երաշխիքներ է տալիս, քանի որ վերջինիս քաղաքական ռեժիմը դառնում է վերահսկելի և կառավարելի: Ներկա քաղաքականությամբ առաջնորդվելու դեպքում, նավթի ցածր գների պայմաններում, Ադրբեջանը կկանգնի ֆինանսատնտեսական խորը ճգնաժամի եզրին, որից կարող է փորձել դուրս գալ նաև ռազմական արկածախնդրությունների կազմակերպման միջոցով՝ բնակչությանը սոցիալ-տնտեսական սրվող իրավիճակից շեղելու համար: Այսպիսով՝ Ադրբեջանի քաղաքական և տնտեսական համակարգին տեսանելի ապագայում հատուկ կլինեն հետևյալ միտումները՝

1. էներգետիկ համակարգից ֆինանասա-տնտեսական կախվածության ուժեղացում
2. կախվածության մեծացում վերազգային նավթային ընկերություններից, առաջին հերթին՝ BP-ից;

[1] meydan.tv -*ISET Policy Institute (ISET-PI)* , Azerbaijan Economy and the Oil Prices

[2] armenpress.am- Նավթային գործոնի ազդեցությունն Ադրբեջանի արտաքին եւ ներքին քաղաքականության վրա20.04.2017 Արմեն Մանվելյան

[3] tap-ag.com-TAP’s shareholders - 2017 -Trans Adriatic Pipeline

3. իր ներքին ու արտաքին քաղաքականության վրա այդ ընկերությունների ներազդեցության պահպանում ու ուժեղացում՝ պայմանավորված նոր ներդրումների անհրաժեշտությամբ;

4. նավթի ցածր գների պայմաններում տնտեսական ու քաղաքական ճգնաժամի խորացում;

5. ազգային արժույթի՝ մանաթի շարունակական թուլացում;

6. տարածաշրջանում անկայունության աճի պահպանում;

7. Հարավային Կովկասում ռազմաքաղաքական ու անվտանգային հավասարակշռության դինամիկայի փոփոխություն:[1]

Այս տարվա ընթացքում Ադրբեջանը մեջ ջանքեր գործադրեց նաև Իրանի հանդեպ միջազգային պատժամիջոցների թուլացումից օգուտներ քաղելու և Ռուսաստան-Իրան-Ադրբեջան ձևաչափով համագործակցություն կառուցելու ուղղությամբ: Ռուսաստան-Ադրբեջան համագործակցությունը 2016թ.-ին, կարելի է ասել, ավելի շատ ռազմական բնույթ էր կրում: Այս ոլորտում Ռուսաստանի հետ ձեռք բերվեցին մի շարք համաձայնություններ, որոնք նաև ուղեկցվեցին քաղաքական շանտաժներով, մասնավորապես՝ եթե ոչ Ռուսաստանից, ապա այլ երկրներից զենք գնելու հայտարարությունների տեսքով:Այսպես, ռուս-ադրբեջանական բանակցությունների արդյունքում հայտարարվել է Ադրբեջանում ավիացիոն գործարանի բացման հեռանկարի մասին, որտեղ կիրականացվեն ռուսական արտադրության ինքնաթիռների և ուղղաթիռների արդիականացումը և սպասարկումը, իսկ «Вертолеты России» հոլդինգի գլխավոր տնօրենի տեղակալ Ի.Չեչիկովն էլ հայտարարել է Ադրբեջանում Ми-8/17 ուղղաթիռների վերանորոգման կենտրոնի բացման ծրագրի մասին:

Իրանի հանդեպ միջազգային պատժամիջոցների թուլացումից հետո Ադրբեջանն ակտիվ աշխատանք ծավալեց Իրանի հետ հարաբերությունները սերտացնելու ուղղությամբ: Դեռ տարվա սկզբին Ադրբեջանի և Իրանի նախագահների հանդիպման ժամանակ երկու երկրների միջև ստորագրվեց 11 փաստաթուղթ, այդ թվում՝ մաքսային հարցերում փոխադարձ վարչական օգնության, էլեկտրաէներգիայի վաճառքի, ադրբեջանական և իրանական երկաթուղիների միացման, Աստարայի երկաթուղային կամրջի շինարարության ոլորտում համագործակցության մասին: Չնայած պատժամիջոցների չեղարկումից հետո Իրանի հետ հարաբերությունների զարգացմանը՝ Ադրբեջանում լուրջ դժգոհություններ առաջացան Իրանի և Հայաստանի միջև ռազմավարական հարաբերությունների զարգացման, Հայաստանի և Իրանի միջև առանց վիզային ռեժիմի սահմանման հետ կապված: Ադրբեջանի Միլի մեջլիսի պատգամավոր Գ.Հասանգուլիևը հակաադրբեջանական անվանեց Իրանի ներկա քաղաքականությունը և անգամ սպառնաց, որ եթե Իրանը չհարգի երկրում բնակվող «30 միլիոն ադրբեջանցիների» իրավունքները, ապա կբախվի տխուր հետևանքների: Ադրբեջանի և Իրանի միջև խնդիրներ կան նաև Ադրբեջանի կողմից իրանական մշակութային ժառանգության յուրացման փորձերի հետ կապված: 2016թ-ին էլ Ադրբեջանը փորձեց Հիրքանի անտառները ՅՈՒՆԵՍԿՕ-ում որպես ադրբեջանական գրանցել: Նշենք, որ այս անտառների 2 միլիոն հեկտարը գտնվում է Իրանում, իսկ 50 հեկտարը՝ Ադրբեջանի տարածքում:

Ադրբեջանն 2016թ-ին Իսրայելի հետ նունպես ակտիվ համագործակցություն ծավալեց ռազմական, ռազմատեխնիկական և էներգետիկ ոլորտներում: Այս տարի հատկապես մեծ աղմուկ բարձրացավ Ադրբեջանում իսրայելական արտադրության տարբեր տեսակի ԱԹՍ-ների հետ կապված, որոնք ադրբեջանական կողմը կիրառեց ԼՂՀ դեմ ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակ: Ադրբեջանի և Իսրայելի միջև ձեռք է բերվել նաև համաձայնություն Իսրայելից «Երկաթե գմբեթ» հրթիռային պաշտպանության համակարգ գնելու մասին:Ադրբեջանա-իսրայելական հարաբերություններում կարևոր նշանակություն ունի նաև էներգետիկ համագործակցությունը: Իսրայելի նավթի մոտ 40%-ը մատակարարվում է Ադրբեջանից: Բացի տնտեսական բաղադրիչի շուրջ համագործակցությունից, Ադրբեջանի համար Իսրայելի հետ հարաբերությունները կարևորվում են նաև ԱՄՆ-ի հետ Իսրայելի սերտ հարաբերություններով՝ հաշվի առնելով ԱՄՆ-ում ստվար հրեական համայնքի գոյությունը: Բացի այդ, Ադրբեջան-Իսրայել հարաբերությունների խորացումը դիտարկվում է Հայաստան-Իրան հարաբերությունների հակակշիռ: [2]

2016թ-ին, ինչպես և նախկինում, Թուրքիայի հետ Ադրբեջանի «եղբայրական» հարաբերությունները շարունակեցին զարգանալ: Դրանք հատկապես վառ դրսևորվեցին ԼՂՀ դեմ Ադրբեջանի կողմից

[1] Կովկասի Ինստիտուտի Աշխատանքային զեկույցներ: Երևան, նոյեմբեր 2016 **Արմեն Մանվելյան**,էջ 3

[2] Ադրբեջանի արտաքին քաղաքականության հիմնական զարգացումները 2016թ-ին-Գրետա Ավետիսյան, armedia.am

սանձազերծած ապրիլյան ագրեսիայի ժամանակ: Թուրքիան փաստացի դարձավ միակ երկիրը, որը բացահայտ կերպով իր աջակցությունը հայտնեց Ադրբեջանի պատերազմական գործողություններին: «Մինչև չազատագրվեն օկուպացիայի տակ գտնվող ադրբեջանական հողերը, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղը, մենք՝ որպես 78 միլիոն քաղաքացի, շարունակելու ենք կանգնած մնալ Ադրբեջանի կողքին», - ապրիլյան քառօրյա պատերազմից հետո հայտարարել է Թուրքիայի վարչապետը:

2016թ-ին ԵՄ-Ադրբեջան հարաբերություններում բավականին հետաքրքիր զարգացումներ տեղի ունեցան: Չնայած մարդու իրավունքների խախտումների, ակտիվիստների ձերբակալությունների հետ կապված Ադրբեջանին ուղղված մի շարք քննդատություններին՝ Եվրամիության Խորհուրդը Եվրահանձնաժողովին և Եվրոպական Միության միասնական արտաքին քաղաքականության և անվտանգության հարցերով բարձր ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինիին տվեց մանդատ Ադրբեջանի հետ բանակցելու համապարփակ համաձայնագրի շուրջ: Այս համաձայնագիրը նախատեսվում է դառնալ ԵՄ-ի և Ադրբեջանի միջև փոխշահավետ համագործակցության և քաղաքական երկխոսության համար արդիականացված հիմք: Ակնհայտ է, որ Ադրբեջանի նկատմամբ ԵՄ նման մեղմ ու շատ բաների վրա «աչք փակելու» քաղաքականությունը պայմանավորված է Ադրբեջանում վերջինիս շահերով, մասնավորապես էներգետիկ ոլորտում՝ ԵՄ կախվածությունը Ռուսաստանից թուլացնելու համար: Սրա վառ ապացույցն է մայիսի 17-ին ԵՄ-ի կողմից Տրանսադրիատիկ գազատարի (*TAP*) շինարարության մեկնարկի մասին հայտարարությունը: Այս գազատարով նախատեսում է ադրբեջանական գազի արտահանում Եվրոպա «Շահ դենիզ» հանքավայրից: Ինչ վերաբերում է Ադրբեջանի հետ ԱՄՆ հարաբերություններին, ապա 2015թ-ի տարվա հարաբերական լարվածությունը շարունակվեց նաև 2016թ-ին, ինչը հիմնականում կապված էր Ադրբեջանում մարդու իրավունքների խախտումների, մամուլի անազատության հետ: Այնուամենայնիվ, այս լարվածությունը բալանսավորվում է ԱՄՆ-ի՝ տարածաշրջանում ունեցած շահերով՝ իր ազդեցության լծակները չկորցնելու ձգտումով: Իսկ ինչ վերաբերում է Հայաստանի հանդեպ Ադրբեջանի վարած քաղաքականությանը, ապա Բաքուն շարունակում է իր թշնամական կեցվածքը՝ սպառնալով անգամ «գրավել Երևանը», ինչը, ռազմական հռետորաբանության ևս մեկ դրսևորում է:

Ադրբեջանը դիմում է մասշտաբային ստախոսությունների: Սա անվանում են ախտաբանական ստախոսություն, որը ծագում է այն դեպքերում, երբ կան շատ լուրջ հոգեկան խնդիրներ: Երբ մարդը մի քանի անգամ կրկնում է իր սուտը, ինքն էլ է սկսում հավատալ իր ստին եւ դառնում է այդ ստի ջատագովը: Այսօր ադրբեջանցիները դարձել են իրենց ստի ջատագովն ու սկսել են հավատալ իրենց կեղծիքներին: Մեր հարեւան երկրի բնակիչները առանձնապես հպարտանալու առիթներ չունեն, դրա համար էլ ընկել են թերարժեքության մեջ ու երեւակայական թռիչքներով սկսել են ինքնապաշտպանվել:

Օգտագործված գրականություն

1. Ադրբեջանական Հանրապետության սոցիալ-տնտեսական համակարգը / Ա.Մարջանյան. - Եր.: Նորավանք, 2013. - 330 էջ:
2.Կովկասի Ինստիտուտի Աշխատանքային զեկույցներ: Երևան, նոյեմբեր 2016- Արմեն Մանվելյան
3. Ադրբեջանի արտաքին քաղաքականության հիմնական զարգացումները 2016թ-ին-Գրետա Ավետիսյան, armedia.am
4. Armenpress.am - Նավթային գործոնի ազդեցությունն Ադրբեջանի արտաքին եւ ներքին քաղաքականության վրա20.04.2017 Արմեն Մանվելյան
5. economist.com - Baku to the future May 21st 2016
6. Indexmundi.com Oil – production, Economy October 8, 2016
7. Trend.az Экономика Азербайджана выросла на 3,1%
8. Atlas.media.mit.edu - Azerbaijan
9. Tap-ag.com-TAP's shareholders - 2017 -Trans Adriatic Pipeline
10.Meydan.tv- *ISET Policy Institute (ISET-PI)* , Azerbaijan Economy and the Oil Prices
11. Progrep.eiti.org -The importance of natural resources for government revenues - Report 2015
12. Oval.az-The Impact of Declining Oil Prices on the State Budget of The Republic of Azerbaijan Public Finance and Budgeting

ՀՏԴ32(479.243:355.4) *Քաղաքագիտություն*

Արթուր Թունյան
ՀՀ ՊԿԱ, մագիստրատուրա 1-ին կուրս
arttoonyan@gmail.com

ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հոդվածում ուսումնասիրված է Արցախյան հակամարտության կարգավորման քաղաքական ուղիները և հեռանկարները՝ քաղաքական արդիականացման գործընթացի քաղաքակրթական չափման դիտանկյունից: Զարգացված է դրույթ համաձայն որի Արցախյան հակամարտության կարգավորումը հնարավոր է քաղաքակրթական երկխոսության պայմաններում: Ակնհայտ է, որ քաղաքական արդիականացման տարբեր մակարդակներում գտնվող հակամարտող կողմերը տարբեր կերպ են ընկալում իրենց ազգային ինքնության արժեքաբանությունը: Այդ համատեքստում Ադրբեջանի ավտորիտար-տոտալիտար վարչակարգը շահարկում է իր տարածքային ամբողջականության գաղափարը: Հեղինակի համոզմամբ Արցախյան հակամարտության կարգավորման բանալին ինքնորոշման գաղափարի գերակայությունն է:

Բանալի բառեր. Արցախյան հակամարտություն, քաղաքական արդիականացում, քաղաքակրթություն, ինքնորոշում, խաղաղություն, պատերազմ:

Артур Тунян
АГУ РА, магистратура 1-ый курс
arttoonyan@gmail.com

ПОЛИТИЧЕСКИЕ ПУТИ И ПЕРСПЕКТИВЫ УРЕГУЛИРОВАНИЯ АРЦАХСКОГО КОНФЛИКТА

В статье исследованы пути и перспективы урегулирования Арцахского конфликта, рассмотренные с точки зрения цивилизационного измерения процесса политической модернизации. Разработано положение, согласно которому урегулирование Арцахского конфликта возможно в условии цивилизационного диалога. Очевидно, что конфликтующие стороны с различными уровнями политической модернизации имеют различное восприятие своей национальной идентичности. В этом контексте авторитарно-тоталитарный режим Азербайджана манипулирует идея своей территориальной целостности. Автор считает, что ключ к урегулированию Арцахского конфликта является приоритет идеи самоопределения.

Ключевые слова: Арцахский конфликт, политическая модернизация, цивилизация, самоопределение, мир, война.

Arthur Tunyan
PAARA, Master's degree 1st year
arttoonyan@gmail.com

POLITICAL WAYS AND PROSPECTS OF ARTSAKH CONFLICT SETTLEMENT

The article explores the ways and prospects for the settlement of the Artsakh conflict, considered from the angle of the civilizational dimension of the process of political modernization. Developed position, according to which the settlement of the Artsakh conflict is possible in the condition of civilizational dialogue. Obviously, the conflicting parties with different levels of political modernization have different perceptions of their national identity. In this context, the authoritarian-totalitarian regime of Azerbaijan is manipulated the idea of its territorial integrity. The author considers that the key to the settlement of the Artsakh conflict is the priority of the idea of self-determination.

Keywords: Artsakh conflict, political modernization, civilization, self-determination, peace, war.

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո անորոշությունների մեջ զարգացող էթնոքաղաքական հակամարտություններից ամենաակնհայտը, արդեն քառորդ դարից ավելի սրացման փուլում գտնվող Արցախյան հակամարտությունն է: 1991-1994 թվականների ռազմական գործողությունները իրենց տարածքային ընդգրկման մակարդակով և զենքերի օգտագործման չափով գիջում էր միայն Չեչնիայի հակամարտությանը: Սակայն, ինչպես նշել է Սվանտե Կորնելը՝ <<Կովկասյան բոլոր հակամարտություններից արցախյանն ունի ամենաշատ ռազմավարական և տարածաշրջանային

նշանակությունը: Այս հակամարտությունը միակն է նախկին խորհրդային միության տարածքում, որում անմիջականորեն ներքաշված են երկու անկախ պետություններ: Ավելին, 1990-ական թվականների վերջին Արցախյան հակամարտությունը Կովկասում և նրա շուրջ ձևավորեց պետությունների ընդիմադիր խմբեր>>[1]:

Գիտական գրականության մեջ և խորհրդատվական եզրակացություններում Արցախյան հակամարտության մեկնաբանման դեպքում կան իրարամերժ կարծիքներ: Գալինա Ստարովոյտովայի խոսքերով՝ <<Միջազգային իրավունքի տեսանկյունից այս հակամարտությունը 2 ֆունդամենտալ սկզբունքների հակասության օրինակ է. մի կողմից ազգի ինքնորոշման իրավունքն է, մյուս կողմից տարածքային ամբողջականության սկզբունքը, ըստ որի սահմանները կարող են փոփոխվել միայն խաղաղ համաձայնության միջոցով>>[2]:

Չնայած 1991-1994 թվականների պատերազմին, 2016 թվականի ապրիլյան մարտերին և ռազմական հաճախակի սրացումներին՝ Արցախյան հակամարտությունը, 21-րդ դարի քաղաքակիրթ աշխարհի պայմաններում, կարող է կարգավորվել միայն խաղաղ ճանապարհով: Այսինքն <<պատերազմի>> հարացույցը չպետք է գերակայի, իսկ <<խաղաղության>> հարացույցի պահպանումը հակամարտող կողմերի համար պետք է լինի հրամայական:

Մեր կարծիքով գոյություն ունեն այս հակամարտության քաղաքական ուղիներով խաղաղ կարգավորումը խոչընդոտող մի շարք պատճառներ: Այդ պատճառներից են ազարիների ազգային սնափառությունը, ավտորիտար-տոտալիտար կառավարման համակարգը, քաղաքացիների գիտակցության մանիպուլյացիայի բարձր մակարդակը, իշխանության իրականացման մշակույթի լեգիտիմության պակասը և այլն:

Ադրբեջանում ընթանում է ազգային գիտակցության ձևավորման մի գործընթաց, որը հիմնված է հայատյացության և "պատմական հողերի վերադարձի" գաղափարախոսության վրա: Ազգաբնակչության մեջ ներարկվում է, որ "բոլոր հայերը Ադրբեջանի թշնամիներն են", հերոսացվում, շահադրդվում են հայերին դաժանաբար սպանող ադրբեջանցիները: Տարբեր մակարդակներում հնչեցվում են ռազմատենչ սպառնալիքներ, որոնք հիմնականում կորցրեցին իրենց էֆֆեկտիվությունը 2016 թվականի ապրիլի դեպքերից հետո: Հակահայկական ազգային գաղափարախոսություն սերմանելու համար Ադրբեջանում գործում են ամենաբարենպաստ պայմանները՝ ավտորիտար-տոտալիտար ռեժիմը: Ներկայիս իշխանություններն այն ավելի ամրապնդեցին 2016 թվականի սահմանադրական փոփոխություններով, որից հետո առաջացան իշխանությունը ժառանգաբար փոխանցելու հիմքեր:

Հայաստանում նկատվում են հակառակ զարգացումները: Ժողովրդավարության կայացման հիմնաքարը ՀՀ նոր սահմանադրությունն է, որը ամբողջությամբ ուժի մեջ մտնելով 2018 թվականի ապրիլի 9-ից՝ երկիրը կդարձնի պառլամենտական: Ի տարբերություն համայն հայությանը թշնամաբար վերաբերվող մեր հարևաններին, Հայաստանում չի սերմանվում ատելություն ադրբեջանական ազգի նկատմամբ: Ամբողջ պատասխանատվությունն ու բեռը դրվում է միայն Ալիևի ընտանիքի ավտորիտար իշխանության վրա: Ժողովրդավարությունը լայն թափով զարգանում է նաև Արցախի հանրապետությունում: Արցախի սահմանադրական բարեփոխումները իրարամերժ կարծիքներ ի հայտ բերեցին: Ոմանք կարծում են, որ ամբողջությամբ նախագահական կառավարման համակարգին անցնելը մեկ քայլ հետ էր ժողովրդավարությունից, սակայն միջազգային փորձն էլ է ցույց տալիս, որ պատերազմական իրավիճակում գտնվող երկրներում կառավարման համակարգը պետք է ունենա պետության գլուխ: ՀՀ սահմանադրության 123-րդ հոդվածի առաջին կետով և ԱՀ սահմանադրության 61-րդ հոդվածի առաջին կետով՝ <<Հանրապետության նախագահը պետության գլուխն է>>:

Ինչ վերաբերվում է ժողովրդավարության ցուցանիշներին՝ ապա ըստ Freedom House-ի 2017 թվականի վարկանիշի Հայաստանը 46 միավորով զբաղեցնում է 131-րդ հորիզոնականը, համարվելով կիսաազատ երկիր: Մինչդեռ, Ադրբեջանը 16 միավորով զբաղեցնելով 178-րդ հորիզոնականը՝համարվում է ոչ ազատ երկիր:

---

[1] Сванте Корнелл. Конфликт в Нагорном Карабахе: динамика и перспективы решения. 2000. http://old.sakharov-center.ru/publications/azrus/az_015.htm

[2] Старовойтова Галина. Национальное самоопределение: подходы и изучение случаев. Часть 2. Надежды и разочарования: изучение случаев. М.: Вехи, 2002. http://www.vehi.net/politika/starovoit/index.html

Նույն Freedom House-ի մամուլի ազատության վարկանիշով Հայաստանը զբաղեցնում է 136-րդ, իսկ Ադրբեջանը՝ 188-րդ հորիզոնականը:

Համոզված ենք, որ Արցախյան հակամարտությունը սերտորեն կապված է քաղաքական արդիականացման և զարգացման խնդիրների հետ: Քաղաքական արդիականացումը սահմանվում է որպես անցում ավանդականից դեպի ժամանակակից հասարակություն: Այդ անցման ժամանակ տեղի են ունենում փոփոխություններ հասարակական համակարգում, մշակույթում, կենսագործունեությունում և գիտակցության մեջ, որոնք թույլ են տալիս արդիականացումը բնութագրել որպես քաղաքակրթական գործընթաց: Հետխորհրդային երկրների արդիականացման գործընթացներում նկատվում է ազգային գործոնի մեծ ազդեցությունը: Զարգացման հետ կապված ճգնաժամերից խուսափելու համար ավելի նախընտրելի է համարվում բնական ճանապարհով արդիականացումը: «Արդիականացում» հասկացությունն իր մեջ ներառում է նաև ավանդական տիպի պետությունից դեպի արդիական պետություն կերպափոխության գործընթացը: Քաղաքական արդիականացման գործընթացը դերակատարների գործունեության նպատակադրված կամ իրավիճակային փոփոխություններով պայմանավորված ապահովում է քաղաքական համակարգի ժողովրդավարական ինստիտուտների որակական զարգացումը: Սակայն ժողովրդավարացման ալիքների շրջանակներում բոլոր պետությունները՝ Սոմալիից մինչև Շվեյցարիա, արդիականացել են այն տարբերությամբ, որ ժամանակի և տարածության մեջ տեղի ունեցող փոփոխությունների որակական բնույթն ու արդյունքները նրանց քաղաքական համակարգի համար եղել են խիստ տարբեր[1]: Քաղաքական արդիականացումը կերպափոխելով ազգային գիտակցությունը՝ միաժամանակ անմիջական ազդեցություն է ունենում էթնոքաղաքական հակամարտությունների կարգավորման, ինչպես նաև ազգային ինքնության կերպափոխման վրա[2]:

Հասարակության, այնուհետև ազգի արդիականացման գործընթացի սկիզբը ազգային ինքնության ըմբռնումն է, որից հետո ազգային անկախության պայքարը: Այնուհետև տեղի է ունենում դերերի բաժանումը և "խնամակալ" մարմնի ստեղծումը: Ամենավերջում կատարվում է ավտորիտար ռեժիմի թուլացում և ընդդիմության լեգիտիմ հաղթանակ: Սկզբնական փուլում ձևավորվում է ավտորիտար ռեժիմ, անկախությունը պահելու համար, որը, սակայն հետագայում դառնում է խոչընդոտ ժողովրդավարության կայացման գործում: Իսկ էթնոքաղաքական հակամարտությունները լավագույնս կարգավորվում են հենց ժողովրդավարության պայմաններում: Արդիականացման գործընթացում որոշիչ դեր են խաղում քաղաքական էլիտաները, որոնք էլ հենց համարվում են շարժիչ ուժը:

Դիտարկելով Արցախյան հակամարտությունը արդիականացման տեսանկյունից, տեսնում ենք, որ կարգավորման գործընթացում առաջընթացի բացակայությունը կապված է երկու կողմերի արդիականացման և ժողովրդավարության տարբեր մակարդակների հետ: Մի կողմում կայացած ժողովրդավարություն և քաղաքակիրթ հասարակություն, մյուս կողմում բռնապետություն և հակահայկական գաղափարախոսությամբ ներարկված հասարակաություն:

Հարկ է նշել նաև, որ հակամարտության կարգավորումը, սահմանների բացումը և ընդհանուր կապը երկու կողմերի միջև հնարավոր է միայն ընդհանուր շահերի և արժեքների դեպքում, որոնք հիմնված կլինեն երկկողմանի փոխզիջումների և կոնսենսուսի վրա: Կարգավորմանը խանգարող պատճառներից է նաև կողմերի փոխադարձ անվստահությունը և քաղաքական երկխոսությանը պատրաստ չլինելը:

Այսպիսով Արցախյան հակամարտության քաղաքական կարգավորման համար անհրաժեշտ է, որպեսզի երկու կողմերն էլ լինեն քաղաքական արդիականացման էվոլյուցիայի նույն մակարդակի վրա, արդիականացման նույն փուլում, ինչի համար անհրաժեշտ է Ադրբեջանում ավտորիտար ռեժիմի տապալում և ժողովրդավարության կայացում: Դրա շնորհիվ տեղի կունենա ազգային գիտակցության բարձրացում, ազգային արժեքների փոփոխություն, իշխանության իրականացման մշակույթի ժողովրդավարացման նոր մակարդակ: Այդ փոփոխությունների դեպքում երկու կողմերը կունենան ընդհանուր արժեքներ, ազգային գիտակցության ընդհանուր եզրեր, ինչն էլ կրերի հիմնական խոչընդոտներից մեկի՝ փոխադարձ անվստահության վերացմանը:

---

[1] Մարգարյան Մ., Քաղաքական արդիականացման արժեքային համակարգի էվոլյուցիան, Քաղաքական արդիականացումը և ՀՀ քաղաքական գործընթացները (Քաղաքագիտական հանարապետության երրորդ գիտաժողովի նյութեր).- Եր.: Խ. Աբովյանի անց. պետական մանկավարժական համալսարան, 2013, էջ 110-129

[2] Ազգային ինքնության արդիականացման հրամայականները (ըստ Ս. Հանթինգթոնի «Ո՞վ ենք մենք. ազգային ինքնության մարտահրավերները» աշխատության)
https://mmmargaryan.wordpress.com/…/%D5%A1%D5%A6%D5%A3%D5%…/

Եզրափակելով հարկ է նշել, որ զուգահեռ քաղաքական արդիականացումը եթե նույնիսկ ամբողջովին չլուծի Արցախյան հակամարտությունը, ապա կստեղծի ավելի բարենպաստ պայմաններ բանակցություններ վարելու և կոնսենսուսի գալու համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. Сванте Корнелл. Конфликт в Нагорном Карабахе: динамика и перспективы решения. 2000. http://old.sakharov-center.ru/publications/azrus/az_015.htm
2. Старовойтова Галина. Национальное самоопределение: подходы и изучение случаев. Часть 2. Надежды и разочарования: изучение случаев. М.: Вехи, 2002. http://www.vehi.net/politika/starovoit/index.html
3. Մարգարյան Մ., Քաղաքական արդիականացման արժեքային համակարգի էվոլյուցիան, Քաղաքական արդիականացումը և ՀՀ քաղաքական գործընթացները (Քաղաքագիտական հանարապետության երրորդ գիտաժողովի նյութեր).- Եր.: Խ.Աբովյանի անց. պետական մանկավարժական համալսարան, 2013, էջ 110-129
4. Ազգային ինքնության արդիականացման հրամայականները (ըստ Ս. Հանթինգթոնի «Ո՞վ ենք մենք. ազգային ինքնության մարտահրավերները» աշխատության) https://mmmargaryan.wordpress.com/…/%D5%A1%D5%A6%D5%A3%D5%…/

ՀՏԴ 327.5(479.243+497) *Քաղաքագիտություն*

Վիոլետտա Պետրոսյան
Վ. Բրյուսովի անվան Երևանի պետական
լեզվահասարակագիտական համալսարան, ասպիրանտուրա
petrosyan.violetta@gmail.com

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԲՅԵԿՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՂ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ. ԱՐՑԱԽԻ ԵՎ ԿՈՍՈՎՈՅԻ ԴԵՊՔԵՐԸ

Պետության ճանաչման դասական իրավական շրջանակի հիմնասյուներն են Մոնտեվիդեոյի կոնվենցիայում ամրագրված միջազգային իրավունքի տեսանկյունից պետության իրավաասուբյեկտությունը որոշող հատկանիշները և *jus cogens* նորմերի (ինչպիսին է ազգերի ինքնորոշման իրավունքը) անխախտելիությունը, որոնց համընդգրկուն ուսումնասիրությունն առանցքային նշանակություն ունի պետությունների ճանաչման գործընթացի ընկալման և առանձին դեպքերի ուսումնասիրության համար: Հոդվածում ներկայացվում է Մոնտեվիդեոյի Կոնվենցիայում ամրագրված հատկանիշների վերլուծությունը, ինչպես նաև վերջիններիս համապատասխանելիության դիտարկումն Արցախի և Կոսովոյի դեպքերի համար:

Բանալի բառեր՝ Մոնտեվիդեոյի կոնվենցիա, պետության իրավաասուբյեկտություն, միջազգային ճանաչում, Արցախ, Կոսովո

Violetta Petrosyan
Yerevan Brusov State University of Languages and Social Sciences, postgraduate studies
petrosyan.violetta@gmail.com

THE REQUIREMENTS FOR INTERNATIONAL LEGAL PERSONALITY OF STATES: THE CASES OF ARTSAKH AND KOSOVO

The classical legal setting that regulates the process of state recognition is represented by a fairly economical two-pillar framework, consisting of the Montevideo requirements and the non-violation of *jus cogens* norms (such as the right of peoples to self-determination) – the throughout analysis of which is of vital importance for the comprehension of state recognition process and within study of various cases. The article represents the analyses of the requirements for international legal personality of states enshrined in Montevideo Convention, as well as their study for the cases of Artsakh and Kosovo.

Keywords: *Montevideo Convention, legal personality, recognition, Artsakh, Kosovo*

Виолетта Петросян
Ереванский государственный университет языков и социальных знаний, аспирантура
petrosyan.violetta@gmail.com

ПРИЗНАКИ ОПРЕДЕЛЯЮЩИЕ ПРАВОСУБЪЕКТНОСТЬ ГОСУДАРСТВА: АРЦАХ И КОСОВО

Классическая правовая основа, регулирующая процесс признания государств, представлена двухуровневой структурой, состоящей из признаков определяющих правосубъектность государств закрепленных в Конвенции Монтевидео и неприкосновенности норм *jus cogens* (среди которых право народов на самоопределение), всестороннее изучение которых имеет существенное значение для понимания процесса признания государств и изучения различных случаев. В статье представлен анализ признаков закрепленных в Конвенции Монтевидео, а также исследование соответствия этим признакам Арцаха и Косово.

Ключевые слова: *Конвенция Монтевидео, правосубъектность государств, признание, Арцах, Косово*

Մոնտեվիդեոյի կոնվենցիայում ամրագրված միջազգային իրավունքի տեսանկյունից պետության իրավաասուբյեկտությունը որոշող հատկանիշների վերլուծությունն անչափ կարևոր է ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա ձևավորված պետությունների կայացման և կառուցման գործընթացների գնահատման համար՝ հանդիսանալով, ըստ էության, վերջիններիս հիմքը: Միաժամանակ, նմանատիպ վերլուծությունը նաև թույլ է տալիս արձանագրված արդյունքների հիման վրա գնահատել վերոնշյալ պետությունների միջազգային ճանաչում ստանալու հնարավորությունները:

Խոսելով պետության ճանաչման գործընթացի մասին՝ հարկ է նշել, որ դասական իրավական շրջանակը, որը կարգավորում է կամ, համենայնդեպս, փորձում է կարգավորել պետության ճանաչման գործընթացը՝ կարելի է ներկայացնել երկսյուն համակարգի միջոցով, որի հիմնասյուներն են Մոնտեվիդեոյի կոնվենցիայում ամրագրված միջազգային իրավունքի տեսանկյունից պետության իրավասուբյեկտությունը որոշող հատկանիշները և *jus cogens* նորմերի անխախտելիությունը:

Պետության ճանաչմանն առնչվող ամենահայտնի և առավել հաճախ վկայակոչվող իրավական փաստաթուղթը, անկասկած, Մոնտեվիդեոյի կոնվենցիան է, որի Հոդված 1-ն ամրագրում է. «Պետությունը որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, պետք է բավարարի հետևյալ չափանիշներին՝ ա) մշտական բնակչություն, բ) սահմանված տարածք, գ) կառավարություն, և դ) այլ պետությունների հետ հարաբերություններ հաստատելու կարողություն[1]»: Եթե միավորը ճանաչվում է որպես պետություն՝ չհամապատասխանելով այդ չափանիշներին, ապա նման «վաղաժամ» ճանաչումը համարվում է չմիջամտելու սկզբունքի խախտում, հետևաբար ոչ լեգիտիմ գործողություն: Միևնույն ժամանակ դժվար չէ նկատել, որ այդ չափանիշները, անկախ նրանից սահմանված են քաղաքականության ֆորմալ կանոններով, թե՝ ոչ, թողնում են մեկնաբանելու համար զգալի տարածություն, ինչի արդյունքում պետություններն իրենց վերապահում են մանևրելու հնարավորություններ[2]: Հարավսլավիայում, Կոսովոյում և Վրաստանում զարգացումները նշանավորեցին այն ժամանակաշրջանի ավարտը, երբ ճանաչման հարցում պետությունների վարքագիծը հարաբերականորեն հետևողական էր և միասնական: Որպես վերոնշյալի անմիջական հետևանք, օրեցօր աճում է անորոշությունն այն հարցի շուրջ, թե որ նորմերն են ներկայումս կարգավորում պետությունների ճանաչման գործընթացը[3]:

Նմանատիպ «առաձգականությունը», այնուամենայնիվ, չի չեղարկում այն փաստը, որ պետությունները պարտավորված են հետևել այդ չափանիշներին և օգտագործել վերջիններս ճանաչման գործընթացում: Ի վերջո, ոչ այնքան կարևոր է այդ չափանիշների մեկնաբանությունը, այլ այն փաստը, որ այդ չափանիշներն ընդունվել են որպես նորմատիվային հիմք ոչ միայն իրավագետների և իրավաբանների կողմից, այլ նաև, ինչն առավել կարևոր է, հենց պետությունների կողմից: Մոնտեվիդեոյի կոնվենցիայում ամրագրված չափանիշները, հետևաբար, ներկայացնում են ճանաչման առաջին նորմատիվային հիմնասյունը, որի վրա պետությունները հիմնվել են վերջին տասնամյակների ընթացքում: Երկրորդը հիմնասյունը հարաբերականորեն ավելի նոր է և վերաբերում է *jus cogens* նորմերի (ինչպիսին է ազգերի ինքնորոշման իրավունքը) անխախտելիությանը[4]:

Ստորև ներկայացվում է առաջին հիմնասյան՝ Մոնտեվիդեոյի կոնվենցիայում ամրագրված պետության իրավասուբյեկտությունը որոշող հատկանիշների վերլուծությունը, ինչին հաջորդում է Կոսովոյի Հանրապետության և Արցախի Հանրապետության դեպքերի համար յուրաքանչյուր հատկանիշը ներկայացնող աղյուսակը (տես Աղյուսակ 1):

- **<u>Մշտական բնակչություն</u>**

Համաձայն Մոնտեվիդեոյի կոնվենցիայում նշված առաջին հատկանիշի, պետությունը պետք է ունենա մշտական բնակչություն: Սույն չափանիշը, անշուշտ, մեծ կարևորություն ունի, քանզի բնակչության ֆիզիկական բացակայության դեպքում, պետության գոյության հաստատումն առնվազն անհնար է[5]: Այնուամենայնիվ, մշտական բնակչության գնահատման հայեցակարգում կան մի շարք երկսայրաբանություններ. անկախ նրանից, թե բնակչության թվաքանակը մեծ է (Չինաստան, Հնդկաստան) թե փոքր (նույնիսկ Նաուրուն և Վանուատուն, որոնք ունեն ընդամենը մի քանի տասնյակ բնակիչներ) համարվում են լիարժեք պետություններ: Եվրոպայի գաճաճ պետությունները (Անդորրան, Մոնակոն, Լիխտենշտեյնը, Սան Մարինոն) նույնպես համարվում են իրավասուբյեկտ պետություններ և ունեն պետականությանը բնորոշ բոլոր հատկանիշները[6]: Չնայած նրան, որ Լիխտենշտեյնի պաշտպանության խնդրով զբաղվում է Շվեյցարիան, վերոնշյալ հանգամանքը չի խաթարում

[1]Montevideo convention on the rights and duties of states, http://www.taiwandocuments.org/montevideo01.html, (23.03.2017).

[2] Ryngaert C., Sobrie S., Recognition of States: International Law or Realpolitik? The Practice of Recognition in the Wake of Kosovo, South Ossetia and Abkhazia, *Leiden Journal of International Law*, 24 (2), 2011, pp. 467-490.

[3] Crawford J., The Creation of States in International Law, Oxford University Press, Oxford, 2nd edition, 2006, p. 98.

[4] Ryngaert C., Sobrie S., նշվ. աշխ.:

[5]Crawford J., Brownlie's Principles of Public International Law, Oxford University Press, Oxford, 2012, p. 128.

[6]Klabbers J., International Law, Cambridge University Press, New York, 2013, p. 71.

Լիխտենշտեյնի պետականությունը, թեպետ ժամանակին բացասականորեն է ազդել 1920թ. Ազգերի լիգային վերջինիս անդամակցության վրա[1]:

- **Սահմանված տարածք**

Մոնտեվիդեոյի կոնվենցիայում ամրագրված երկրորդ հատկանիշն է «սահմանված տարածքը: Պետությունը պետք է ունենա տարածք. առանց տարածքի չի կարող լինել պետություն: «Կիբեր պետության» (cyberstate), այն է՝ պետություն առանց տարածքի, գաղափարն անհամատեղելի է միջազգային իրավունքի չափանիշներին: Սակայն, հատկանշական է, որ թեև հատկանիշն ամրագրված է որպես «սահմանված տարածք», այնուամենայնիվ, ամբողջ տարածքը պարտադիր չէ լինի սահմանված, այլ բավարար է, որ տարածքի հիմնական և առանցքային մասը լինի սահմանված, եթե նույնիսկ սահմանները մնում են վիճելի: Բանն այն է, որ մեծ թվով պետություններ ունեն սահմանների շուրջ վեճեր: Վերոնշյալը վերաբերում է անգամ այնպիսի խաղաղասեր պետությունների, ինչպիսիք են Նիդերլանդները, Գերմանիան և Բելգիան: Իսկ մի շարք պետությունների (վառ օրինակ է Իսրայելը) սահմանների խնդիրն այնքան հակասական է և խրթին, որ հստակ ամրագրված սահմաններով տարածքի պահանջը կլիներ ոչ իրատեսական: Այդպիսով, միակ կարևոր չափանիշը հիմնական տարածքի առկայությունն է: Միաժամանակ, միջազգային իրավունքը չի առաջադրում տարածքի չափի շուրջ պահանջներ, և, օրինակ, չի նշում տարածքի ոչ՛ նվազագույն, ո՛չ առավելագույն չափը[2]:

- **Կառավարություն**

Տարածքի և բնակչության չափանիշներն, ըստ էության, ինչ-որ առումով ֆորմալ բնույթ ունեն. պետությունը կամ ունի տարածք և բնակչություն (կապ չունի, թե որքան կմ[2] և բնակչության թվաքանակ) կամ պետություն պարզապես չկա: Մնացյալ երկու չափանիշներն ավելի կիրառական են: Թերևս, պետության կայացման համար կարևորագույն պահանջն է, որ պետությունն ունենա գործունակ կառավարություն, թեև Մոնտեվիդեոյի կոնվենցիայում չի օգտագործվում «գործունակ» ածականը[3]: Ի վերջո, կայուն քաղաքական համայնքի լավագույն վկայությունը գործադիր և օրենդիր մարմիններ ունեցող գործունակ կառավարության առկայությունն է[4]: Վերոնշյալի հիմքում ընկած է այն գաղափարը, որ պետությունը կարող է համարվել այդպիսին միայն այն ժամանակ, երբ այն ի վիճակի է պատշաճ կերպով երաշխավորել իրավունքի գերակայություն: Միաժամանակ, կարելի է փաստել, որ միջազգային իրավունքը չի մատնանշում և պարտադրում կառավարության որևէ հստակ տեսակ. քանի դեռ իրավունքի գերակայությունը երաշխավորված է, միջազգային իրավունքն առարկություններ չունի: Որպես պետությունների ինքնիշխան հավասարության տրամաբանական հետևանք, գոյություն չունի կառավարության հստակ սահմանված տեսակ: Անշուշտ, վերոնշյալը վիճահարույց է, քանի որ դա նշանակում է, որ բռնապետություններն ընդունվում են նույն կերպ ինչպես ժողովրդավար պետությունները, և այդ համատեքստում պատահական չեն կառավարման ձևի վրա ազդելու փորձերը: 19-րդ դարում վերոնշյալը կատարվում էր պետությունները քաղաքակիրթ և ոչ քաղաքակիրթ դասակարգելու միջոցով: Թեև պետության քաղաքակիրթ կամ ոչ քաղաքակիրթ լինելու չափորոշիչն այլևս չի գործում, այդուհանդերձ, դեռևս կարելի է նշմարել վերջինիս աղոտ արձագանքը ՄԱԿ Արդարադատության միջազգային դատարանի Կանոնադրության 38-րդ հոդվածում, որն ընդունում է «քաղաքակիրթ ազգերի կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքները» որպես միջազգային իրավունքի աղբյուր[5]:

Այս առումով հետաքրքրական է Կադիչն ընդդեմ Կարաջիչի գործը, որի շրջանակներում ԱՄՆ Վերաքննիչ դատարանը քննում էր այն հարցը, թե արդյոք Բոսնիայի և Հերցեգովինայի տարածքում գտնվող ինքնահռչակ Սերբական Հանրապետությունը (Srpska) պետություն է, որի ղեկավարության հետ կարելի է համագործակցել՝ հաշվի առնելով ինքնահռչակ ղեկավարների կողմից իրականացված բազմատեսակ վայրագությունները և անօրինությունները: Դատարանն իր եզրակացության մեջ ամփոփում է, որ Սերբական Հանրապետությունը բավարարում է պետության չափանիշներին՝ նշելով, որ այն վերահսկում է սահմանված տարածք, վերահսկում է իր ենթակայության տակ գտնվող

[1]Ազգերի լիգան չընդունեց Լիխտենշտեյնին ճիշտ այս պատճառաբանությունը բերելով, սակայն ավելի ուշ այդ նույն հանգամանքը խոչընդոտ չհանդիսացավ ՄԱԿ անդամակցության համար: Լիխտենշտեյնն անդամակցեց վերջինիս 1990թ.:

[2] Klabbers J., նշվ. աշխ., pp. 70-71.

[3] Klabbers J., նշվ. աշխ., p. 71.

[4] Crawford J., Brownlie's Principle..., p. 129.

[5] Klabbers J., նշվ. աշխ., p. 71.

բնակչությունը և այլ պետությունների կառավարությունների հետ համագործակցություն է հաստատել: Այն ունի նախագահ, օրենսդիր մարմին և սեփական արժույթ: Այս հանգամանքներն ակնհայտորեն վկայում են միջազգային իրավունքի շրջանակներում պետության բնութագրիչ հատկանիշներին համապատասխանության մասին: Սերբական Հանրապետությունն իր պետությանը բնորոշ հատկանիշների շնորհիվ, իրավամբ, դե-ֆակտո պետություն է, որին բնորոշ են միջազգային համակարգի շրջանակներում պետություններին վերապահված իրավասությունները և ստանձնած պարտավորությունները»[1]: Վերաքննիչ դատարանի նման որոշումը միանգամայն տրամաբանական էր, քանի որ Գերագույն դատարանն արդեն բավական երկար ժամանակ առաջ ճանաչել է, որ «յուրաքանչյուր կառավարություն, անկախ նրանից, թե որքան բռնի և անօրինական է իր բնույթով, պետք է համարվի դե-ֆակտո կառավարություն, եթե փաստացի լիարժեքորեն վերահսկում է տարածքը և ժողովուրդ համարվելու համար բավարար բնակչությունը... [2]»[3]: Սակայն, գործունակ կառավարությունը մի շարք դեպքերում ոչ պետքական կամ ոչ բավարար է պետականության աջակցության համար: Որոշ պետություններ էլ կազմավորվել են մինչև իրենց կառավարությունների դեռևս ոչ այդքան գործունակ լինելը, ինչպես օրինակ Լեհաստանը 1919թ. և Բուրունդին և Ռուանդան, որոնք անդամակցեցին ՄԱԿ-ին 1962թ.[4]:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ թեև պետությունն անպայման չէ ունենա որևէ հատուկ տեսակի կառավարություն, սակայն անհրաժեշտ պայման է, որ կառավարությունը կարողանա տրամադրել ներպետական կայունության պատկան աստիճան և վայելել բնակչության զգալի մասի վստահությունը: Գործունակ կառավարությունը տրամադրում է իր քաղաքացիներին և բնակիչներին հիմնական ծառայությունները և ստանձնում է մյուս պետությունների հետ *vis-à-vis* պարտականություններ: Բացի այդ, կառավարությունը, ըստ էության, պետք է անկախ լինի այլ պետություններից, այդ թվում նաև՝ «մայր պետությունից»: Իհարկե, հարկ է հաշվի առնել, որ բացարձակ անկախությունն անհնար է, քանի որ այլ պետությունների հետ փոխգործակցությունն անհրաժեշտ է յուրաքանչյուր պետության արդյունավետ գործունեության համար, սակայն հատկապես ճանաչման համար պայքարող պետությունների դեպքում, անշուշտ, անկախության և ինքնավարության գաղափարը բացառիկ նշանակություն ունի: Պետությունը պետք է անկախ լինի այլ պետություններից, և թե՛ այլ պետությունների, թե՛ միջազգային կառույցների կողմից որևէ տեսակ միջամտությունը պետք է լինի բացառապես միջազգային իրավունքի շրջանակներում: Եթե միավորն ունի իր սեփական գործադիր և մնացյալ այլ մարմինները, վարում է իր արտաքին քաղաքականությունն իր սեփական կառույցների միջոցով, ունի սեփական դատական և իրավական համակարգը և սեփական «քաղաքացիություն ձեռք բերելու մասին» իրավունքը, ապա կարելի է վստահաբար խոսել պետականության գոյության մասին: Այդուհանդերձ, չի կարելի արդարացնել արտաքին վերահսկողության անտեսումը, որը, ըստ էության, իրականացվում է անկախ պետական ապարատի միջոցով: Սակայն խոսքը գնում է համակարգված և շարունակական արտաքին վերահսկողության մասին, որը լայնամասշտաբ ազդեցություն է ունենում միավորում որոշումների կայացման գործընթացի վրա: Եվ այդ համատեքստում հարկ է պատշաճ կերպով տարբերակել միջնորդության և վերահսկողության, *ad hoc* միջամտության և «խորհրդատվության» միջև[5]:

- **<u>Այլ պետությունների հետ հարաբերությունների հաստատման կարողություն</u>**

Մոնտեվիդեոյի կոնվենցիայում անկախության գաղափարը ներկայացված է այլ պետությունների հետ հարաբերությունների հաստատման կարողությամբ: Վերջինս կարևոր պահանջ էր գաղութատիրության ժամանակաշրջանում, և Մոնտեվիդեոյի Կոնվենցիան, կնքված լինելով 1930թ., չէր կարող չլինել իր ժամանակաշրջանի արտացոլանքը: Գաղութատիրության դրոշմը հետևյալն էր. թեև մի շարք գաղութացված տարածքներ վայելում էին զգալի ինքնավարություն, այդուհանդերձ, նրանք չէին կարող հարաբերություններ հաստատել այլ պետությունների հետ՝ առանց մետրոպոլիայի

[1] Kadic v. Karadzic, Opinion of 2nd Circuit re: Subject Matter Jurisdiction, US Court of Appeals for the Second Circuit Nos. 1541, 1544, http://avalon.law.yale.edu/diana/4298-12.asp, (27.03.2017).

[2] Ford v. Surget, 97 US. 594, 620 (1878), https://supreme.justia.com/cases/federal/us/97/594/case.html, (27.03.2017).

[3] Eggers A., When is a State a State? The Case for Recognition of Somaliland, *Boston College International & Comparative Law Review*, 30 (1), 2007, pp. 211-222.

[4] Crawford J., Brownlie's Principle..., p. 129.

[5] Crawford J., Brownlie's Principles…, p. 129-130.

համաձայնության: Սակայն, երբեմն վերոնշյալ օրենքը կարող էր նաև խախտվել, եթե քաղաքական նկատառումներից ելնելով համարվում էր նպատակահարմար: Օրինակ՝ Հնդկաստանը (Մեծ Բրիտանիայի գաղութը) դարձել է Ազգերի լիգայի անդամ, չնայած որ ստացել է անկախություն միայն Ազգերի լիգայի փլուզումից հետո: Սակայն, այսօր այլ պետությունների հետ հարաբերություններ հաստատելու պահանջը չի համարվում հույժ կարևոր. պրակտիկայում այն միտված է կարգավորելու այլ պետությունների հետ հարաբերություններ հաստատելու հնարավորությունները դաշնային պետությունների դեպքում: Օրինակ՝ ի շնորհիվ վերջինիս ակնհայտ է, որ ԱՄՆ միջազգային իրավունքի սուբյեկտ է և կարող է հարաբերություններ հաստատել այլ պետությունների հետ, մինչդեռ նրա 51 նահանգները՝ չեն կարող: Այս պահանջը բնութագրվում է ավելի շատ որպես «եզրափակում, այլ ոչ թե ելակետ»[1]:

Չճանաչված պետությունների դեպքում առկա են կայացման լրացուցիչ բարդություններ, մասնավորապես, պայմանավորված միջազգային կապերի խիստ սահմանափակվածությամբ: Այսպիսով, չճանաչված պետությունների կայացման բարդությունները մի կողմից պայմանավորված են ներքին գործոններով՝ սահմանների դյուրաբեկություն, իրավունքի գերակայության անլիարժեքություն, հարկային և ֆինանսական համակարգերի վերահսկողության դժվարություններ, մեծ թվով փախստականներ, իսկ մյուս կողմից՝ միջազգային քաղաքականության առաջատար դերակատարների՝ ազդեցիկ պետությունների, վերազգային կառույցների, միջազգային կազմակերպությունների հետ հարաբերությունների ոչ ստանդարտ համակարգով:

Միաժամանակ, պետության կայացման և կառուցման գործընթացների համար առանցքային նշանակություն ունի արտաքին աջակցությունը: Ընդ որում արտաքին աջացությունը հաճախ ուղիղ կապ ունի ճանաչվածության հետ. պետությունները հիմնականում աջակցություն չեն ցուցաբերում իրենց կողմից չճանաչված պետություններին (իհարկե կան մի շարք բացառություններ. օրինակ ՀՀ-ն մեծամասշտաբ աջակցություն է ցուցաբերում Արցախի Հանրապետությանը, սակայն դեռևս չի ճանաչել այն): Պաշտոնական Ստեփանակերտը հայտարարում է, որ անգամ միջազգայնորեն ճանաչված չլինելով, քայլեր է ձեռնարկում և ձեռնարկելու այն պարտավորությունների կատարման ուղղությամբ, որոնք կստանձնի, երբ ի վերջո անդամակցի միջազգային կառույցների: Հատկանշական է, որ Արցախի Հանարապետությունը սահմանադրաիրավական ժողովրդավարության հաստատման և ամրապնդման ուղին ամենայն հաջողությամբ անցնում է անգամ առանց միջազգային հանրության և կառույցների ուղղորդման և օժանդակության, և այդ համատեքստում կարելի է միայն ենթադրել, թե ինչ հաջողություններ գրանցած կլիներ Արցախի Հանրապետությունը ժողովրդավարության հաստատման գործընթացում, եթե վայելեր միջազգային հանրության և կառույցների աջակցությունը:

Աղյուսակ 1

Մոնտեվիդեոյի կոնվենցիայում ամրագրված պետության իրավասուբյեկտությունը որոշող հատկանիշները Կոսովոյի Հանրապետության և Արցախի Հանրապետության դեպքերի համար

Մոնտեվիդեոյի կոնվենցիայում ամրագրված հատկանիշներ	Կոսովոյի Հանրապետություն	Արցախի Հանրապետություն
Մշտական բնակչություն	2011թ. մարդահամար – 1.739.825 մարդ 2015թ. – 1.870.981 մարդ	1989թ. խորհրդային վերջին մարդահամար – 189.100 մարդ 1995թ. հետկոնֆլիկտային ժամանակաշրջան – 122.600 մարդ 2005թ. մարդահամար – 137.700 2015թ. մարդահամար – 151.161 մարդ

[1] Klabbers J., նշվ. աշխ., p. 72.

Սահմանված տարածք	10.908 կմ^2	11.458 կմ^2 Տարածքի հարցը դեռևս բանակցությունների օրակարգում է
Կառավարություն	2008թ. ի վեր «հետժամանակավոր արտաքին կառավարման համախտանիշ» Ոչ արդյունավետ կառավարում Անգամ ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի, ԵՄ-ի և ՆԱՏՕ-ի ջանքերը բավարար չէին, որպեսզի Կոսովոն, գտնվելով Եվրոպայի՝ ժողովրդավարության բնօրրանի, կենտրոնում, դադարեր լինել բնօրրան այնպիսի անօրինական գործունեության համար, ինչպիսիք են թմրանյութերի, զինամթերքի ապօրինի վաճառքը, թրաֆիքինգը:	Իրականացնում է պետության կառավարումն անկախության հռչակումից ի վեր 25 տարի արդյունավետ ժողովրդավարական կառավարում
Այլ պետությունների հետ հարաբերությունների հաստատման կարողություն	Ճանաչվել է 114 պետության կողմից • 110 – ՄԱԿ անդամ պետություն • 4 – ոչ անդամ պետություն Դիվանագիտական առաքելություններ – 25 Հյուպատոսական առաքելություններ- 27	Չի ճանաչվել ՄԱԿ անդամ պետությունների կողմից Ճանաչվել է հետխորհրդային տարածքի 3 չճանաչված պետությունների՝ Աբխազիայի, Հարավային Օսիայի և Մերձդնեստրի կողմից Մշտական ներկայացուցչություններ՝ ՀՀ, ԱՄՆ, ՌԴ, Ֆրանսիա, Գերմանիա, Ավստրալիա, Մերձավոր Արևելքի երկրներ /գտնվում է Լիբանանում/

Եզրակացություն

Մոնտեվիդեոյի Կոնվենցիայում ամրագրված միջազգային իրավունքի տեսանկյունից պետության իրավասուբյեկտությունը որոշող հատկանիշների ներկայացումն Արցախի և Կոսովոյի դեպքերի համար հանգեցրեց հետևյալ եզրակացությունների.

- Մոնտեվիդեոյի Կոնվենցիայում ամրագրված առաջին երկու հատկանիշները՝ **«մշտական բնակչությունը»** և **«սահմանված տարածքը»** դիտարկելիս հաշվի առնելով, որ միջազգային իրավունքը չի ամրագրում բնակչության թվաքանակի և պետության տարածքի նվազագույն կամ առավելագույն չափ, իսկ «սահմանված տարածք» եզրույթի շրջանակներում ենթադրվում է, որ պարտադիր չէ ամբողջ տարածքը լինի սահմանված, այլ բավարար է, որ տարածքի հիմնական և առանցքային մասը լինի սահմանված, եթե նույնիսկ սահմանները մնում են վիճելի, կարելի է փաստել, որ Արցախը և Կոսովոն լիովին բավարարում են վերոնշյալ չափանիշներին՝ իրենց վերահսկողության տակ ունենալով սահմանված տարածք և մշտական բնակչություն:
- Ինչ վերաբերում է երրորդ՝ **«կառավարություն»** հատկանիշին, ապա հարկ է հիշատակել Կոսովոյի անգործունակ և անարդյունավետ կառավարության մասին: Սեփական անգործունակության պատճառով պետությունը ստիպված էր «հյուրընկալել» ՄԱԿ-ի ժամանակավոր միջազգային

կառավարման առաքելությունը, որի ավարտից հետո, սակայն, կառավարությունը չի կարողանում լիարժեք և, թերևս, ամենակարևորը՝ արդյունավետ իրականացնել պետության կառավարումը՝ տառապելով «հետժամանակավոր միջազգային կառավարման համախտանիշով»: Թե՛ տեղական, թե՛ միջազգային դերակատարների ջանքերը բավարար չեղան, որպեսզի Կոսովոն դադարեր լինել անօրինական գործունեության կիզակետ Եվրոպայի կենտրոնում: Մինչդեռ Արցախի Հանրապետության կառավարությունը ստանձնել է երկրի կառավարումն անկախության հռչակման առաջին իսկ օրվանից՝ արդյունավետ կառավարման ոլորտում գրանցելով նախանձելի արդյունքներ և հաստատուն առաջընթաց: Այսօր Արցախի Հանրապետությունն արդյունավետ ժողովրդավարական կառավարման համակարգով, սակայն դեռևս չճանաչված կարգավիճակով պետության եզակի օրինակ է: Այդուհանդերձ, Կոսովոյի կառավարության անգործունակությունը չի խանգարում վերջինիս համապատասխանել սույն հատկանիշին, քանի որ միջազգային իրավունքը չի պարտադրում կառավարության որևէ հստակ տեսակ:

- Չորրորդ՝ «**այլ պետությունների հետ հարաբերությունների հաստատման կարողության»** հատկանիշի շրջանակներում հարկ է նշել, որ Կոսովոյի Հանրապետությունը, լինելով բամաթիվ ՄԱԿ անդամ պետությունների կողմից ճանաչված, բնականաբար, ունի բազմաթիվ պետությունների հետ սերտ հարաբերություններ, դիվանագիտական և հյուպատոսական առաքելություններ: Սակայն վերոնշյալը հնարավոր է դարձել, բնավ, ոչ Կոսովոյի կառավարության ջանքերի, այլ ՄԱԿ-ի և վերջինիս գլխավոր դոնոր՝ ԱՄՆ-ի հովանավորչության շնորհիվ: Արցախն ունի այլ պետությունների հետ հարաբերություններ հաստատելու համար բոլոր ինստիտուցիոնալ հիմքերը և պատկան կառույցները, և ներկայումս աշխարհի մի շարք պետություններում գործում են Արցախի Հանրապետության մշտական ներկայացուցչություններ, ինչն Արցախի կառավարության հետևողական աշխատանքի արդյունքն է: Վերոհիշյալ փաստը, ըստ էության, այլ պետությունների հետ հարաբերություններ հաստատելու կարողության մասին խոսուն վկայություն է:
- Մոնտեվիդեոյի Կոնվենցիայում ամրագրված միջազգային իրավունքի տեսանկյունից պետության իրավասուբյեկտությունը որոշող հատկանիշների դիտարկումն Արցախի և Կոսովոյի Հանրապետությունների դեպքերի համար ցույց է տալիս, որ երկու պետությունները բավարարում են կոնվենցիայում ամրագրված հատկանիշներին: Այդուհանդերձ, Արցախի Հանրապետությունը դեռևս չի ճանաչվել ՄԱԿ անդամ պետությունների կողմից (ճանաչվել է միայն հետխորհրդային տարածքի մյուս չճանաչված պետությունների՝ Աբխազիայի Հարավային Օսիայի և Մերձնեստրի կողմից), մինչդեռ Կոսովոյի Հանրապետությունը ստացել է ճանաչում ՄԱԿ անդամ բազմաթիվ պետությունների կողմից՝ վերահաստատելով ճանաչումը որպես պետականության ամենաբարդ և ամենաքաղաքականացված ասպեկտ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Crawford J., Brownlie's Principles of Public International Law, Oxford University Press, Oxford, 2012, p. 128.
2. Crawford J., The Creation of States in International Law, Oxford University Press, Oxford, 2nd edition, 2006, p. 98.
3. Eggers A., When is a State a State? The Case for Recognition of Somaliland, *Boston College International & Comparative Law Review*, 30 (1), 2007, pp. 211-222.
4. Ford v. Surget, 97 US. 594, 620 (1878), https://supreme.justia.com/cases/federal/us/97/594/case.html, (27.03.2017).
5. Kadic v. Karadzic, Opinion of 2nd Circuit re: Subject Matter Jurisdiction, US Court of Appeals for the Second Circuit Nos. 1541, 1544, http://avalon.law.yale.edu/diana/4298-12.asp, (27.03.2017).
6. Klabbers J., International Law, Cambridge University Press, New York, 2013, p. 71.
7. Montevideo convention on the rights and duties of states, http://www.taiwandocuments.org/montevideo01.html, (23.03.2017).
8. Ryngaert C., Sobrie S., Recognition of States: International Law or Realpolitik? The Practice of Recognition in the Wake of Kosovo, South Ossetia and Abkhazia, *Leiden Journal of International Law*, 24 (2), 2011, pp. 467-490.

ՀՏԴ 329(479.243) *Քաղաքագիտություն*

Մարգարիտ Պետրոսյան
Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան,
ՌՕԼՄՉ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների,
ժողովրդավարության և եվրոպագիտության ամբիոն, դասախոս
petrossianmaga@gmail.com

ԲԱԶՄԱԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁևԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԿԱՅԱՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ: ԱՐՑԱԽԻ ԴԵՊՔԸ

Հետխորհրդային տարածքում բազմակուսակցական համակարգերի ձևավորումը մեծապես կախված է ժողովրդավարության կայացման ու զարգացման հիմնախնդրի հետ: Հետխորհրդային տաչածքի չճանաչված պետություններում հետխորհրդային տրանֆորմացիայով պայմանավորված խնդիրներին գումարվելու են գալիս նաև լրացուցիչ բարդություններ, որոնք պայմանավորված են նախ չճանաչված լինելու փաստով, ապա նաև տարածաշրջանում լարվածության բարձր մակարդակով, հակամարտության կարգավորման բարդ գործընթացով, միջնորդների ազդեցությամբ, աշխարհաքաղաքական գործոնով, տնտեսական ու քաղաքական կայունության բացակայությամբ: Հոդվածում դիտարկվում են չճանաչված պետութուններում բազմակուսակցական համակարգերի ձևավորման ու կայացման խնդիրներն Արցախի օրինակով:

Բանալի բառեր: Բազմակուսակցական համակարգ, հետխորհրդային տրանսֆորմացիա, հակամարտություն, չճանաչված պետություն, Արցախ:

Margarit Petrosyan
Yerevan Brusov State University of Languages and
Social Sciences, postgraduate studies
petrossianmaga@gmail.com

MULTI-PARTY SYSTEM FORMATION AND CONSOLIDATION IN NON-RECOGNIZED STATES: THE CASE OF ARTSAKH

Multi-party System Formation and Consolidation in Non-Recognized States: The Case of Artsakh

The formation of a multiparty system in the post-Soviet states is highly dependent on the issues of consolidation and development of democracy. If the problem is more distinct in the case of newly settled independent states after the collapse of the USSR, here the additional complications arise in the unrecognized states along with the problems of post-Soviet transformation. First and foremost additional complications are arranged with the fact that they are not recognized, also the high level of tension in the region, complicated and durable process of conflict resolution, the influence of mediators, geopolitical factors, the lack of economic and political stability, etc. cause such a result. The article discusses the problems of formation and consolidation of multi-party systems in the unrecognized states following the case of Artsakh.

Keywords: Multi-party system, post-Soviet transformation, unrecognized state, Artsakh

Маргарит Петросян
Ереванский государственный университет языков и
социальных знаний, аспирантура
petrossianmaga@gmail.com

ФОРМИРОВАНИЕ И КОНСОЛИДАЦИЯ МНОГОПАРТИЙНОЙ СИСТЕМЫ В НЕПРИЗНАННЫХ ГОСУДАРСТВАХНА ПРИМЕРЕ АРЦАХА

Формирование многопартийной системы в постсоветских государствах в большой степени зависит от вопросов консолидации и развития демократии. Если проблема становится более отчетливой в случае новых независимых государств после распада СССР, то дополнительные проблемы возникают в непризнанных государствах кроме проблем связанных с постсоветской трансформацией.В первую очередь дополнительные осложнения связаны с определением статуса, а так же высокий уровень

напряженности в регионе, сложный и длительный процесс разрешения конфликтов, влияние посредников, геополитические факторы, отсутствие экономической и политической стабильности и т. д. В статье рассматриваются проблемы формирования и консолидации многопартийных систем в непризнанных государствах по примеру Арцаха.

Ключевые слова: Многопартийная система постсоветская трансформация, непризнанное государство, Арцах

Բազմակուսակցական համակարգի ձևավորումն ու կայացումը բարդ ու բազմավեկտոր գործընթաց է հետխորհրդային տրանսֆորմացիայի ամբողջ տարածքում: Այն առանցքային նշանակություն ունի քաղաքական կայուն համակարգի ձևավորման ու պետության կայացման տեսանկյունից, քանզի միայն ժողովրդավարական սկզբունքների ներառումը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում կարող է երաշխավորել հստակ ձևավորված քաղաքական համակարգի ու քաղաքացիական հասարակության ինստիտուտների կայուն ու փոխլրացնող աշխատանքը: Հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրներում ստեղծված նոր քաղաքական համակարգերի ուսումնասիրությունը թույլ է տալիս հնարավորինս վեր հանել յուրաքանչյուր երկրում ստեղծված համակարգի յուրահատկություններն ու հնի ազդեցությունը, քանզի բազմակուսակցական համակարգի ստեղծման ու զարգացման վրա կարող են ազդել ոչ միայն քաղաքական, այլ նաև մշակութային, կրոնական ու սոցիալական և այլ գործոնները:

Բազմակուսակցական համակարգի ձևավորման մակարդակը բացառիկ նշանակություն ունի նաև այն պատճառով, որ գտնվում է առավել հակադիր շահերի բախման կիզակետում և, միաժամանակ, կոչված է լուծելու հասարակական իդեալի և տվյալ պայմաններում հնարավոր առավելագույն արդյունք ապահովող քաղաքական կուրսի միջև հավասարակշռության ապահովումը: Ավելին, լինելով հասարակության մեջ պետական կառավարման համակարգ ձևավորող ամենաազդեցիկ ինստիտուտը՝ բազմակուսակցական համակարգն իրենից ներկայացնում է մակրոհամակարգ, որը ձևավորելում կամ ակտիվ դերակատարություն էունենում տարբեր համակարգերի ձևավորման գործում[1]: Հետխորհրդային տրանսֆորմացիայի պետությունների համար բնական է այնպիսի կուսակցությունների գոյությունը, որոնք ժառանգություն են մնացել խորհրդային ժամանակներից կամ կրկնում են խորհրդային անցումային ժամանակների կուսակցական-կազմակերպական համակարգը, որոնք կարող են լինել մեծ և ազդեցիկ, ինչը բացատրվում է այն կարևորությամբ, որ նրանք ունեցել են որպես քաղաքական համակարգի դերակատարներ[2]: Այդպիսի օրինակ է «իշխանության կուսակցություն» հասկացությունը, որն ի հայտ է եկել ռուսական քաղաքագիտական գրականության մեջ դեռևս 1993-1994թթ.: Այն արատավոր երևույթ է և, երբեմն այս տերմինով է նաև բնորոշում ողջ ռուսական քաղաքական էլիտան՝ որպես մեկ ամբողջություն[3]:

Այնուամենայնիվ, հետխորհրդային տարածքում ստեղծված բազմակուսակցական համակարգերը միշտ չէ, որ միանշանակ են ընկալվում հետազոտողների կողմից. օրինակ Պոլունինան նշում է, որ հետխորհրդային տարածքում առկա է ոչ թե բազմակուսակցական համակարգ, այլ կուսակցությունների համախումբ[4]: Կայացած բազմակուսակցական համակարգը ինքնակարգավորվող համակարգ է, սակայն այն ինքնաբերաբար չի ձևավորվում: Առնվազն առաջին փուլում, առավել ևս կարճ ժամանակամիջոցում ձևավորելու համար, անհրաժեշտ է այն ուղղորդել ժողովրդավարական մեթոդներով: Միաժամանակ,

[1]Թորոսյան Տ., Ժողովրդավարական բազմակուսակցական համակարգի ձևավորման նախադրյալները և բարդությունները հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրներում, *Լրաբեր հասարակական գիտությունների*, 2005, № 3, էջ 12-31:

[2]Պողոսյան Լ., Բազմակուսակցական համակարգի ինստիտուցիոնալացման գնահատման չափանիշներն ու դրանց օպտիմալացման խնդիրները հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրներում, *Հայկական քաղաքագիտական հանդես*, 2014, № 1, էջ 34-55:

[3]Голосов Г., Лихтенштейн А., "Партии власти" и российский институциональный дизайн: теоретический анализ., Полис, 2001, № 1, с. 6.

[4] Партии и партийные ситемы в современной России и послевоенной Германии, М., Ростовн/Д., 2004.

արհեստական քայլերն՝ ուղղված կուսակցությունների թվի ստիպողական կրճատմանն ու, մասնավորապես, երկկուսակցական համակարգի ձևավորմանը, դատապարտված են ձախողման[1]:

Յուրաքանչյուր երկրում քաղաքական համակարգը բնորոշվում է կուսակցությունների թվով և նրանց ստեղծման առնաձնահատկություններով, կուսակցությունների միջև գաղափարական տարբերությամբ, ընտրական համակարգով և քաղաքական պայքարի իրավական հիմքերով, կուսակցությունների գործունեության խորհրդարանական առանձնահատկություններով[2]: Հետխորհրդային տրանսֆորմացիայի բոլոր պետություններն էլ ընտրեցին բազմակարծության ու բազմակուսակցական համակարգ ստեղծելու ուղին, քանզի, ըստ նախնական պատկերացումների, երկկուսակցական համակարգը չէր ապահովում սոցիալական բոլոր խմբերի ներգրավածությունը (այդ թվում բոլոր խմբերի ներգրավածությունը կառավարման համակարգի մեջ):

Հետխորհրդային տրանսֆորմացիայի փուլ տեղափոխված պետությունները, որոնք ժողովրդավարական համակարգի հաստատումը համարեցին վերջնանպատակ, բախվեցին մի շարք խնդիրների հետ (այդ խնդիրների լուծումը միայն թույլ կտա հասնել վերջնական արդյունքի)՝

1. Ազգային միասնության ապահովում և ազգային ինքնության ձեռքբերում կամ վերաիմաստավորում:
2. Տնտեսական զարգացման բավականին բարձր մակարդակի ապահովում:
3. Այնպիսի մշակութային նորմերի և արժեքների զանգվածային տարածում, որոնք ենթադրում են ժողովրդավարական սկզբունքների և նորմերի ընդունում, հիմնական քաղաքական ինստիտուտների հանդեպ վստահություն, ինչպես նաև համախմբվածության ու քաղաքացիական գիտակցության բարձր մակարդակ[3]:

Առաջին կառուցվածքային նախապայմանը, ինչպես պատմությունն է վկայում, որոշվում է մինչև ժողովրդավարացման գործընթացը, այլապես կարող է լուրջ խոչընդոտ հանդիսանալ ժողովրդավարության վերափոխումների գործընթացում: Սուր ազգայնական տարաձայնություններն ու հակասությունները գրեթե անհնարին են դարձնում տվյալ հասարակության կողմից ժողովրդավարական համակարգի ընդունումը: Այս խնդիրը, թերևս, առկա է ժամանակակից որոշ ժողովրդավարական պետություններում. որպես օրինակ կարող ենք դիտարկել Բասկերի երկրի և Կատալոնիայի խնդիրները Իսպանիայում, Քվեբեկի խնդիրը Կանադայում, Հյուսիսային Իռլանդիան՝ Մեծ Բրիտանիայում:

Սոցիալ-տնտեսական զարգացածության և ժողովրդավարության միջև կապը թեև առկա է, այնուամենայնիվ, արդեն իսկ հերքվել է ժողովրդավարեցման կառուցվածքային մոտեցման կողմնակիցների այն տեսակետը, որ, որքան բարձր է ժողովրդի բարեկեցության մակարդակը, այնքան ավելի հավանական է, որ նա կլինի կլինի ժողովրդավարական: Կասկածները վերաբերում են ինչպես տեսական պլանին, այնպես էլ փաստերին[4]: Հետևաբար անհրաժեշտ է հասարակության մեջ այնպիսի արժեքների ու մշակութային նախապայմանների ստեղծումը՝ առաջին հերթին արժեքների և նորմերի միջոցով, որոնք կասոցացվեն «քաղաքացիական մշակույթի» հետ (civic culture)[5], ինչպես նաև կրոնական, մշակութային ավանդույթների հետ:

Բազմակուսակցական համակարգերի ստեղծման առանձնահատկությունները չճանաչված պետություններում

ԽՍՀՄ փլուզումից հետո նոր անկախացած պետություններում սկսվեց բազմակուսակցական համակարգերի ստեղծման գործընթացը, ավելին, կուսակցությունների թիվը սկսեց աճել տարերայնորեն: Զուգահեռ գործընթացը, թեև ավելի փոքր ծավալներով, սկսվեց Հարավային Կովկասի երեք չճանաչված պետություններում՝ այդ թվում նաև Արցախում: Ուստի առաջնային պլան մղվեց նաև նոր քաղաքական

1Թորոսյան S., Ժողովրդավարական բազմակուսակցական համակարգի ձևավորման նախադրյալները և բարդությունները հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրներում, *Լրաբեր հասարակական գիտությունների*, 2005, № 3, էջ 12-31:

2Дюверже М., Политические партии. Академический Проект, Москва, 2000.

3 Мельвиль А.Ю. Демократические транзиты, транзитологические теории и посткоммунистическая Россия,

2000, сс. 337-368.

4Lipset M., Some Social Requisites of Democracy: Economic Development and Political Legitimacy,The American Political Science Review, Vol. 53, № 1, 1959, pp. 69-105.

5Almond G., Verba S., The Civic Culture: Political Attitudes and Democracy in Five Nations, 2015, p. 576 .

համակարգի ձևավորման գործընթացը տարածաշրջանի ոչ միայն ճանաչված, այլ նաև չճանաչված պետություններում: Հետխորհրդային տարածքի չճանաչված պետություններում քաղաքական համակարգի և, հատկապես, բազմակուսակցական համակարգերի ձևավորման ու զարգացման գործընթացի ուսումնասիրությունը կարևոր է անցումային շրջանի բարդություններն ու մարտահրավերները հաղթահարելու տեսանկյունից նաև այն առումով, որ բազմակուսակցական համակարգի ստեղծման ու ինստիտուցիոնալացման գործընթացը նպաստելու է ժողովրդավարական ավանդույթների ներդրման բարդ ու երկարատև փուլի հաղթահարմանը: Այս առումով կարևորվեց նաև կուսակցական համակարգերի ստեղծումն ու արդյունավետության մակարդակը նոր՝ բազմակուսակցական համակարգ ստեղծելու ճանապարհին, քանզի չճանաչված պետություններն ավելի շուտ ձգտում են տեղ գրավել այնպիսի համակարգում, որը չի ընդունում նրանց որպես այդ նույն համակարգի մաս կազմող անդամներ[1]: Կուսակցական համակարգի ինստիտուցիանալացումը, ինչպես Հանթինգտոնն է նշում, գործընթաց է, որի արդյունքը պետք է հանդիսանա կուսակցության ստեղծումն իրեն բնորոշ արժեքային հիմքով և կայունությամբ[2]: Եվ, որ ամենակարևորն է, մեկ կուսակցության ինստիտուցիանալացումը դեռևս չի նշանակում ողջ համակարգի ինստիտուցիանալացում[3]: Ըստ այդմ գործընթացի արդյունավետությունն ապահովելու տեսանկյունից կարևոր է փաստել, որ ուշադրություն պետք է դարձնել կուսակցությունների փոխհարաբերություններին հասարակության մեջ, որը պետք է հիմնված լինի փոխզիջումային հիմքի վրա, ինչն էլ ենթադրում է, որ յուրաքանչյուր կուսակցություն պետք է լինի կայուն ու գործի ըստ իր ռազմավարության, որպեսզի պատրաստ լինի համակագործակցության և մրցակցության:

Չճանաչված երկրներում հետխորհրդային տրանսֆորմացիայով պայմանավորված խնդիրներին լրացնելու եկան նաև այն բարդությունները, որոնք պայմանավորված են նախ և առաջ միջազգային հանրության կողմից դե յուրե ճանաչված չլինելու փաստով: Այս պետությունները պետք է դիմակայեին նաև այնպիսի մարտահրավերների, որոնք հետկոնֆլիկտային փուլի արդյունքն էին: Առհասարակ հետկոնֆլիկտային իրավիճակում կուսակցությունների ստեղծման ու բազմակուսակցական համակարգի ձևավորման խնդիրները շատ քիչ են ուսումնասիրվել, թերևս նաև այն պատճառով, որ դրանք դիտարկվել են որպես պետական կառույցների կամ կառավարությունների ստեղծման գործընթացի անքակտելի մաս[4]: Այսպիսով, խնդիրների շարքին, որոնց կարող են բախվել չճանաչված պետությունները բազմակուսակցական համակարգի ստեղծման ճանապարհին, կարելի է դասել՝ խնդիրներ, որոնք ընդհանուր են հետխորհրդային տարածքի ինչպես ճանաչված, այնպես էլ չճանաչված պետությունների համար (քաղաքական համակարգի տրանսֆորմացիա, բազմակուսակցական համակարգի ձևավորում և այլն), միջազգային ճանաչման գործընթաց, հետկոնֆլիկտային փուլի մարտահրավերների հաղթահարում (տնտեսական խնդիրներ, ռազմական գործողություններ վերսկսման վտանգ և այլն):

Քաղաքական համակարգի ձևավորման տեսանկյունից չճանաչված պետությունների առաջին և հիմնական մարտահրավերը կուսակցությունների մրցակցային համակարգ ստեղծելն է: Ժողովրդավարության ամրապնդումը, որը չճանաչված պետությունները հայտարարում են որպես գերակա խնդիր, կարևոր է կուսակցությունների միջև փոխհամաձայնեցման ու փոխստահեցման մթնոլորտի ստեղծման տեսանկյունից: Չճանաչված պետություններում քաղաքական համակարգի զարգացման ուսումնասիրությունն ու վերլուծությունը կարևոր է մի քանի հիմնական պատճառներով[5]՝

1. Կուսակցական համակարգը կարող է հանդիսանալ ցուցիչ, որը հնարավորություն կտա պարզել, թե արդյոք այդ պետություններին (չճանաչված) բնորոշ են իրական ժողովրդավարական հանտկանիշները, թե ոչ:

2. Ի՞նչպես են միջազգային դերակատարներն ու ազդակներն ազդում «ներքին» քաղաքական գործոնների վրա, ինչն էլ իր հերթին ազդում է կուսակցական համակարգերի զարգացման վրա;

1Caspersen, N., 2011. States without sovereignty: imitating democratic statehood. In: Caspersen, N., Stansfield, G. (Eds.), Unrecognized States in the International System. Routledge, London, pp. 73–89, p 4

[2]Хантингтон С., Политическийпорядок в меняющихся обществах. М.: ПрогрессТрадиция, 2004. 480с.

[3]Randall V., Svasand L. Party institutionalization in new democracies, PartyPolitics, 2002. № 1, pp. 21-32.

[4] Neandovic M., An uneasy symbiosis: the impact of international administrations on political parties in post-conflict countries, Democratization, 2010, Vol. 17, № 6, pp. 1153–1175.

[5]IshiyamaJ., Batta A., The emergence of dominant political party systems in unrecognized states, Communist and Post-Communist Studies, N 45. 2012, pp. 123-130.

3. Ուղին, որով կուսակցությունները զարգանում են այդ պետություններում, ցույց կտա, թե ի վերջո ինչ կարգավիճակ կստանա այդ պետությունը:

Հատկանշական է, որ չճանաչված պետություններում ճանաչումը դիտարկվում է որպես առաջնային նախապայման ու վերջնանպատակ, այն չճանաչված պետության հիմնական բնորոշ գիծն է և կենտրոնական դիրք է գրավում քաղաքական էլիտայի ծրագրում[1], ինչպես նաև կարող է օգտագործվել ընտրությունների ժամանակ քարոզչական նպատակներով: Յուրաքանչյուր երկրի համար բազմակուսակցական համակարգի ձևավորման համար ելակետը կարող է լինել տարբեր՝ պետության ձևավորման առանձնահատկությունները, ազատ ընտրությունների անցկացումը, տվյալների կամ աղբյուրների առկայություն (ընտրական և հետընտրական գործընթացների վերլուծություն): Բոլոր երկրներում նախորդ ընտրությունների վերաբերյալ վերլուծությունը ավարտվում է հաջորդ ընտրություններից անմիջապես առաջ[2]:

Այսպիսով, հետխորհրդային տարածքում և, մասնավորապես, չճանաչված պետություններում, բազմակուսակցական համակարգի զարգացման ու կայացման տեսանկյունից առանցքային նշանակություն ունեն բազմակուսակցական ընտրությունների անցկացումը և կուսակցությունների միջև տեղերի բաշխումը խորհրդարանական ընտրությունների անցկացումը անկախացումից ի վեր, ինչը կարևոր է նաև քանզի ժողովրդավարական համակարգի կայացման տեսանկյունից:

Արցախի դեպքը

Արցախում բազմակուսակցական համակարգի ստեղծման գործընթացը սկսվեց Խորհրդային Միության փլուզումից կարճ ժամանակ անց, երբ 1991թ. դեկտեմբերի 10-ին անցկացվեց ԼՂՀ Անկախության հանրաքվեն, որն իրականացվեց «ԼՂՀ հանրաքվեի անցկացման մասին ժամանակավոր կանոնակարգին» համապատասխան[3]: Արցախում անցկացված առաջին խորհրդարանական (Գերագույն խորհուրդ) ընտրություններն անցկացվեցին 1991թ. դեկտեմբերի 28-ին (պատգամավորների թիվը՝ 81): Առաջին գումարման ազգային ժողովի առանձնահատկությունն այն է, որ այստեղ պատգամավորական մանդատ ստացան թվով 13 զինվորականներ: Առանցքային նշանակություն ունեցան 1995թ. ապրիլի 30-ին անցկացված խորհրդարանական ընտրությունները (33 պատգամավորներ), քանզի այն առաջինն էր հրադադարի մասին համաձայնագրի կնքումից ի վեր: 1996թ. Գերագույն խորհուրդը վերանվանվեց Ազգային ժողովի[4]: 2000 թ. հունիսի 18-ին անցկացվեցին հերթական խորհրդարանական ընտրությունները, որի արդյունքում պատգամավորական մանդատ ստացան թվով 33 պատգամավորներ «Ժողովրդավարական Արցախ միություն» (ԺԱՄ), Հայ Հեղափոխական Դաշնակցություն (ՀՅԴ), Արցախի Արմենական, Արցախի սոցիալ-դեմոկրատական կուսակցություններից, ինչպես նաև 2 անկախ պատգամավորներ: Թվով 4-րդ խորհրդարանական ընտրություններին (2005 թ. հունիսի 19, կուսակցություններ՝ Արցախի ժողովրդավարական, «Ազատ հայրենիք», «ՀՅԴ-Շարժում-88» կուսակցական դաշինք, անկախ պատգամավորներ) հաջորդեցին մի քանի առանցքային իրադարձություններ: Նախ՝ Արցախի Հանրապետության մայր օրենքի՝ Սահմանադրության ընդունումը 2006թ. դեկտեմբերի 10-ին, ապա նաև բանակցային գործընթացում ստեղծված նոր իրավիճակն ու Մադրիդյան սկզբունքներ անունը կրող բանակցային փաստաթղթի գաղտնազերծումը: 2010թ. մայիսի 23-ի խորհրդարանական ընտրություններն անկացվեցին բարեփոխված Ընտրական օրենսգրքի հիման վրա[5] մեծամասնական և համամասնական համակարգով՝ համապատասխանաբար 16 և 17 տեղերով: Խորհրդարանում ընդգրկվեցին հետևյալ կուսակցությունները՝ «Ազատ հայրենիք» կուսակցություն,Արցախի ժողովրդավարական կուսակցության, Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության և «Արցախատուն» պատգամավորական խումբը: Սակայն 5-րդ գումարման Ազգային ժողովում ներկայացված չէին ընդդիմադիր պատգամավորներ: Խորհրդարանական վերջին՝ 6-րդ

[1]Caspersen, N., States without sovereignty: imitating democratic statehood. In: Caspersen, N., Stansfield, G. (Eds.), Unrecognized States in the International System. Routledge, London, 2011, pp. 73–89.

[2] Caramani D., The End of Silent Elections: The Birth of Electoral Competition, 1832-1915, , Party Politics 2004, Vol. 9, N 4, pp. 411-443

[3]Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հանրաքվեի արդյունքների մասին,http://nkr.am/hy/referendum/42/ , (12.10.2016)

[4]Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության Ազգային ժողով, http://www.nankr.am/hy/32 , (05.04.2017)

[5]ԼՂՀ Ընտրական օրենսգիրք http://cecnkr.am/լրի-ընտրական-օրենսգիրք/, (05.04.2017)

գումարման ընտրությունների (2015թ. մայիսի 3) արդյունքում խորհրդարանում ընդգրկվեց նաև ընդդիմադիր «Ազգային վերածնունդ» կուսակցությունը: «Ազատ հայրենիք» կուսակցությունը վերջին երկու գումարման ազգային ժողովներում ստացել է առավելագույն թվով պատգամավորական մանդատներ: Եթե համեմատականներ անցկացնենք ընտրություններին բնակչության մասնակցության թվի առումով, ապա կարող ենք փաստել, որ 2010թ. համեմատ 2015թ. աճել է նաև մասնակցության ցուցանիշը, համապատասխանաբար՝ 67.8% և 70.6%:

Կուսակցությունների գործունեությունն Արցախում կարգավորվում է Կուսակցությունների մասին ԼՂՀ օրենքով, որը սահմանում է, որ պետական գրանցման պահին կուսակցությունը պարտավոր է ունենալ ոչ պակաս, քան 100 անդամ և ունենալ տարածքային ստորաբաժանումներ ԼՂՀ շրջանների առնվազն 1/3-ում, այդ թվում նաև Ստեփանակերտում[1]: Օրենքի ուսումնասիրությունը թույլ է տալիս ասել, որ այն չի խոչընդոտում կուսակցությունների ստեծմանն ու գործունեության ապահովմանը, սակայն չկան նաև այդ գործընթացը խթանող հստակ մեխանիզմեր: Ուստի կրկին բախվում ենք այն խնդրին, որ հետխորհրդային տարածքում մենք գործ ունենք ոչ թե բազմակուսակցական համակարգի, այլ մեծ թվով կուսակցությունների գոյության հետ: Կուսակցությունների ինստիտուցիոնալացման համար կարևոր է նաև նրանց միջև փոխզիջումային հարաբերությունները, որն իր վառ արտահայտությունը պետք է գտնի նախ և առաջ ծրագրերում, որդեգրած ռազմավարության մեջ և այլն: Ընդհանուր առմամբ բացակայում է քաղաքական մրցակցությունը, ինչը կարող է հանդիսանալ բազմակուսակցական համակարգի ձևավորման հիմնական գրավականը:Ավելին, երբեմն կուսակցական պայքարը չճանաչված պետություններում կարող է դիտարկվել որպես «շքեղություն», որն իրեն չեն կարող թույլ տալ, քանզի, ելնելով ճանաչված չլինելու փաստով, ընդդիմությունն այստեղ ընկալվում է որպես անկայունության աղբյուր և սպառնալիք անվտանգության համար[2]: Հետպատերազմական շրջանում չճանաչված պետություններին, այդ թվում նաև Արցախին, բնորոշ է զինվորականների ներգրավվումը խորհրդարանում, քանզի նրանք ունեն շատ մեծ հեղինակություն: Այդ է պատճառը, որ առաջին գումարման Ազգային ժողովում պատգամավորական մանդատ ստացան թվով 13 զինվորականներ:

Այս բոլոր գործընթացները խոչընդոտում են կուսակցությունների ինստիտուցիոնալացման գործընթացին, ինչն իր ուղիղ ազդեցությունն է գործում նաև բազմակուսակցական համակարգի ձևավորման վրա: Արցախում կուսակցությունների ձևավորման ու գործունեության վրա մեծ ազդեցություն են գործել նաև պատմական նախընթաց գործընթացներն ու քաղաքական միջավայրը, հակամարտության կարգավորման գործընթացն ու կարգավիճակի խնդիրը: Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ կարգավիճակի որոշման խնդիրը ներառված է գրեթե բոլոր կուսակցությունների ծրագրերում: Հավատարմությունը ժողովրդավարական չափանիշներին ու դրանց կիրառմանը Արցախի համար առանցքային նշանակություն ունի համաշխարհային հանրությանը ներկայանալու առումով, այն նաև հզոր խաղաքարտ է Ադրբեջանի դեմ պայքարում: Ընտրական գործընթացների որակը ևս մեկ անգամ կարող է փաստել Արցախի ժողովրդի նվիրվածությունը ժողովրդավարական գործընթացներին, սկզբունքներին, որն իր արտացոլումն է գտնում նաև անկախության համար մղվող պայքարում: Այսպիսով, չճանաչված պետություններում բազմակուսակցական համակարգերի ձևավորման ու կայացման խնդիրների ուսումնասիրությունը և, մասնավորապես, Արցախում բազմակուսակցական համակարգի ստեղծման առանձնահատկությունների, Արցախում անցկացված խորհրդարանական ընտրությունների, ինչպես նաև կուսակցությունների ու ընտրազանգվածի առանձնահատկությունների ուսումնասիրությունը, թույլ է տալիս եզրակացնել, որ

1. Հետխորհրդային տարածքի չճանաչված պետությունները բազմակուսակցական համակարգերի ստեղծման ճանապարհին բախվեցին խնդիրների, որոնք ընդհանուր էին հետխորհրդային տարածքի ինչպես ճանաչված, այնպես էլ չճանաչված պետությունների համար (քաղաքական համակարգի տրանսֆորմացիա, բազմակուսակցական համակարգի ձևավորում և այլն), սակայն առանցքային խնդիրն այդ պետությունների ճանաչումն է և հետկոնֆլիկտային փուլի մարտահրավերների հաղթահարումը:
2. Բազմակուսակցական համակարգի ձևավորման համար ելակետը կարող է լինել տարբեր՝ պետության ձևավորման առանձնահատկությունները, ազատ ընտրությունների անցկացումը կամ ընտրական և հետընտրական տվյալների առկայությունն ու համալիր վերլուծությունը:

[1]Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքը կուսակցությունների մասին, http://minjustnkr.am/nkr/Պետական-ռեգիստր.php , (05.04.2017)

[2] Nagorno-Karabakh, Freedom in the World 2012, https://freedomhouse.org/report/freedom-world/2012/nagorno-karabakh, (05.04.2017)

3. Բազմակուսակցական համակարգի ստեղծման ու ինստիտուցիոնալացման գործընթացը պետք է նպաստի ժողովրդավարական ավանդույթների ներդրման բարդ ու երկարատև փուլի հաղթահարմանը, ուստի չճանաչված պետություններում առաջին և հիմնական մարտահրավերը կուսակցությունների մրցակցային համակարգի ստեղծումն է:

4. Չճանաչված պետություններում ճանաչումը դիտարկվում է որպես առաջնային նախապայման ու վերջնանպատակ, այն չճանաչված պետության հիմնական բնորոշ գիծն է և առանցքային դիրք է գրավում քաղաքական էլիտայի նախընտրական ծրագրերում և ընտրությունների ժամանակ օգտագործվում են քարոզչական նպատակներով:

5. Արցախում ժողովրդավարական կառավարման համակարգի ստեղծումն ու կայացումը առաջին պլան է մղվել, իսկ այդ տեսանկյունից լիարժեք բազմակուսակցական համակարգի հիման վրա կառավարման համակարգի ստեղծումն ունի առանցքային նշանակություն:

6. Արցախում կարևորվում է կուսակցությունների ստեղծումն իրենց բնորոշ արժեքային հիմքով և կայունությամբ, սակայն մեկ կամ մի քանի կուսակցությունների ինստիտուցիանալացումը չի կարող ապահովել ողջ համակարգի ինստիտուցիանալացումն ու բազմակուսակցական համակարգի ձևավորումը:

Գրականության ցանկ

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հանրաքվեի արդյունքների մասին, http://nkr.am/hy/referendum/42/ ,(12.10.2016)
2. Լեռնային Ղարաբաղի (Արցախի) ՀանրապետությանԱզգային ժողով, http://www.nankr.am/hy/32 , (05.04.2017)
3. ԼՂՀ Ընտրական օրենսգիրք http://cecnkr.am/լղհ-ընտրական-օրենսգիրք/, (05.04.2017)
4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքը կուսակցությունների մասին, http://minjustnkr.am/nkr/Պետական-ռեգիստր.php , (05.04.2017)
5. ԹորոսյանՏ., Ժողովրդավարական բազմակուսակցական համակարգի ձևավորման նախադրյալները և բարդությունները հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրներում, Լրաբեր հասարակական գիտությունների, 2005, № 3, էջ 12-31:
6. Պողոսյան Լ., Բազմակուսակցական համակարգի ինստիտուցիոնալացման գնահատման չափանիշներն ու դրանց օպտիմալացման խնդիրները հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրներում, *Հայկական քաղաքագիտական հանդես*, 2014,№ 1, 34-55:
7. Голосов Г., Лихтенштейн А., “Партии власти” и российский институциональный дизайн: теоретический анализ., Полис.,2001, № 1, с. 6
8. Дюверже М., Политические партии. Академический Проект, Москва, 2000.
9. Мельвиль А.Ю. Демократические транзиты, транзитологические теории и посткоммунистическая Россия, 2000, сс. 337-368.
10. Партии и партийные ситемы в современной России и послевоенной Германии, М., Ростовн/Д., 2004.
11. Хантингтон С., Политический порядок в меняющихся обществах. М.: Прогресс Традиция, 2004. 480с.
12. Almond G., Verba S., The Civic Culture: Political Attitudes and Democracy in Five Nations, 2015, 576 p.
13. Caramani D., The End of Silent Elections: The Birth of Electoral Competition, 1832-1915, , Party Politics 2004, Vol. 9, N 4, pp. 411-443
14. Caspersen, N., States without sovereignty: imitating democratic statehood. In: Caspersen, N., Stansfield, G. (Eds.), Unrecognized States in the International System. Routledge, London, 2011, pp. 73–89, p.78
15. Ishiyama J., Batta A., The emergence of dominant political party systems in unrecognized states Communist and Post-Communist Studies, N 45. 2012, pp. 123-130.
16. Lipset M., Some Social Requisites of Democracy: Economic Development and Political Legitimacy,The American Political Science Review, Vol. 53, № 1, 1959, pp. 69-105.
17. Nagorno-Karabakh, Freedom in the World 2012, https://freedomhouse.org/report/freedom-world/2012/nagorno-karabakh, (05.04.2017
18. Neandovic M., An uneasy symbiosis: the impact of international administrations on political parties in post-conflict countries, Democratization, 2010, Vol. 17, № 6, pp. 1153–1175.
19. Randall V., Svasand L. Party institutionalization in new democracies, PartyPolitics, 2002. № 1, pp. 21-32.

УДК 32(-051:479.243) *Политология*

Лилит Саркисян
[1]Российско-Армянский (Славянский) университет
[2] Институт медиа, рекламы и кино
lilitsarkisian@yandex.ru

ВЛИЯНИЕ ИМИДЖА ПОЛИТИЧЕСКИХ ЛИДЕРОВ НА ФОРМИРОВАНИЕ ОБРАЗА ГОСУДАРСТВ (НА ПРИМЕРЕ РЕСПУБЛИКИ АРЦАХ)

Имидж страны непосредственно связан с политическими деятелями, представляющими её на международной арене. В связи с этим очень важно детально остановиться на взаимосвязи политического имиджа и политического руководства страны на примере Республики Арцах, рассмотрев основные «имиджеформирующие» факторы, влияющие на создание определенного образа данной Республики.

Ключевые слова: имидж, государство, политический деятель, Арцах

L.M. Sarkisyan
[1]Russian-Armenian (Slavonic) University
[2]Institute of Media, Advertisement and Cinema
lilitsarkisian@yandex.ru

INFLUENCE OF THE IMAGE OF POLITICAL LEADERS ON THE IMAGE OF STATES (ON THE EXAMPLE OF THE REPUBLIC OF ARTSAKH)

A country's image is directly related to politicians who represent it on the international stage. In this regard, it seems important to elaborate on the interdependence of the political image and the political leadership via the example of the Republic of Artsakh and to examine the main image-forming factors that have an impact on the Republic's image building.

Keywords: image, state, politician, Artsakh

Լ.Մ. Սարկիսյան
[1]Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան
[2] Մեդիայի, գովազդի և կինոյի ինստիտուտ
lilitsarkisian@yandex.ru

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԿԵՐՊԱՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ (ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ)

Երկրի պատկերը ձևավորում են միջազգային հարթակում երկիրը ներկայացնող քաղաքական գործիչները։ Այդ իսկ պատճառով շատ կարևոր է մանրազննին ուշադրություն դարձնել երկրի քաղաքական իմիջի հարցերով զբաղվող ղեկավարության և ստեղծվող կերպարի միջև եղած փոխկապակցման վրա՝ ուսումնասիրելով Արցախի Հանրապետության քաղաքական պատկերը։

Բանալի բառեր: կերպար, պետություն, քաղաքական գործիչ, Արցախ

Введение

Правильно и грамотно составленный образ политика очень важен и является отнюдь не самым последним шагом на пути к успеху на политической арене.

Политический имидж государства – это четко продуманный, специально смоделированный образ данного государства, направленный на формирование определенного мнения у граждан данной страны и международного сообщества. В свою очередь имидж политика также является искусственно созданным образом на основе реальных фактов и направлен на формирование определенного мнения, образа о политическом деятеле. Данные два явления тесно переплетены друг с другом, поскольку образ политического руководства страны напрямую влияет на формирование имиджа государства в целом. Основными «имиджеформирующими» факторами является представление того или иного политика в СМИ и социальных сетях.

Основное содержание работы

В данной статье мы рассмотрим влияние имиджа политических деятелей Арцаха (НКР) на формирование образа данной республики.

Для начала рассмотрим имидж президента Арцаха Бако Саакяна. И дабы лучше понять образ политического деятеля безусловно необходимо «рассматривать его» через публикации в СМИ и социальных сетях.

Отметим, что Бако Саакян не является активным «юзером», он никак не проявляет себя в медиасреде, а как и полагается главе государства –выступает в СМИ исключительно с официальными заявлениями. К примеру, корреспондент известного французского издания «LeFigaro» Жан Луи Трамбле2 сентября 2016 года, в день независимости Арцаха, побывал в столице республики Степанакерте. Официальную делегацию возглавлял президент АрцахаБако Саакян, являющийся, по словам корреспондента издания, «лицом скромным и даже таинственным, что естественно для человека, который в 1999-2007 гг. был министром внутренних дел, а в 2001-2007 гг. – главой национальной безопасности. В 2007 году же он был избран президентом Арцаха».[1]Невозможно не упомянуть тот самый знаменитый «образ спартанца», о котором пишет тот же французский корреспондент: «Президент НКР своим образом спартанца внушает доверие своим согражданам, считающим себя “воинственным народом”».[2]Именно с именем президента АрцахаБако Саакяном связано также проведение ряда международных фестивалей, в частности, «АрцахЭтноФест», на котором приняли участие как опытные кулинары, так и люди различных профессий из Франции, Грузии, Сирии, Румынии, Южной Кореи, Молдовы, Армении и Арцаха. Проведение подобных фестивалей формирует имидж не только страны, но и политического лидера, поскольку посредством таких мероприятий можно увидеть политика в неофициальной обстановке, и лучше понять его образ.

Что же касается пресс-секретаря президента Арцаха – Давида Бабаяна, то сложилась следующая картина: он активно ведет страницу в социальных сетях Twitter, Facebook. Однако его публикации носят исключительно официальный характер. Как в международных СМИ, так и в региональных, Давид Бабаян является чуть ли не «лицом»Арцаха, а в азербайджанских СМИ к Давиду Бабаяну и вовсе обращаются на «ты» и мягко говоря без уважения. Для создания негативного образа пресс-секретаря НКР ряд азербайджанских СМИ в отношении к Давиду Бабаяну применяют следующий ряд оскорбительных слов: раб, фашист, болтун, психбольной и так далее. Отметим, мы привели в пример отнюдь не все определения, которыми «наградила» азербайджанская пропагандистская машина пресс-секретаря Арцаха. Считаем, что и вышеупомянутые определения полностью отражают отношение азербайджанских СМИ как к Давиду Бабаяну, так и к Республике Арцах. Принижая и выставляя в невыгодном свете арцахских политических деятелей, Азербайджан пытается сформировать на международной арене негативный имидж республики.

Третьим в списке, но не менее важным политическим деятелем Арцаха является Омбудсмен НКР Рубен Меликян, который также активен на различных социальных площадках, причем в отличие от предыдущих политиков, Р. Меликян параллельно с официальными заявлениями на своей странице в Facebook, публикует также и личные фотографии, делает записи, показывающие его не только, как правозащитника, но и заботливого семьянина. Омбудсмен НКР является одной из ключевых фигур в формировании образа республики, поскольку представляет ее на международной арене. И исходя от того, как он будет осуществлять свою деятельность, зависит восприятие Арцаха международным сообществом в целом. Немаловажным фактором является то, что Р. Меликян использует современные методы воздействия на мнение международного сообщества: публикации на трех языках в микроблогеTwitter и социальной сети Facebook.

Безусловно, одной из составляющих имиджа Арцаха является образ армии данной республики. Исходя из того, каким будет образ главы Минобороны и пресс-секретаря данной Республики, зависит восприятие ее международным сообществом. Армия НКР уже успела сформировать для себя имидж армии-победительницы, но для сохранения данного имиджа необходимо проводить постоянную работу. Ярким политическим деятелем, влияющим на формирование образа республики является пресс-секретарь Минобороны АрцахаСенорАсратян. Отметим, что имидж С. Асратяна интересен еще и тем, что он также является поэтом и прозаиком, журналистом. Но в социальных сетях пресс-секретарь МО Арцаха появляется лишь во время обострения ситуации на границе. Образ СенораАсратяна можно описать следующим образом: сильный, смелый, даже строгий, важно именно такое представление пресс-секретаря МО, поскольку оно прямым образом связано и ассоциируется с имиджем армии Арцаха в целом. Ведь именно такой и является армия обороны республики, и именно такой она представляется на международной арене. И именно такой образ, образ сильной и непобедимой армии необходимо сохранять и поддерживать.

Советник Президента Арцаха – Тигран Абраамян также не ограничивается лишь официальными заявлениями, публикациями. Из вышеупомянутых политических деятелей именно Т. Абраамян на своей странице в Facebook пытается изменить, устоявшиеся в мировом сообществе стереотипы об НКР. Даже после соглашения о прекращении огня, подписанного в 1994 году, на международной арене сложился четко укоренившийся стереотип о Республике Арцах, как о «вечной зоне конфликта», на которой просто невозможно мирно жить. Подобный образ государства формировался на протяжении 26 лет и СМИ сыграли в этом деле ключевую роль. В свою очередь Тигран Абраамян рушит этот стереотип, делая интересные заметки о местной жизни. Примечательно, что Т. Абраамян сам выступает в роли автора, то есть периодические также публикуются его собственные аналитические статьи, посвященные Арцаху. Несмотря на то, что Абраамян не так давно вступил в должность советника президента, он уже успел хоть и немного,

[1]LeFigaro: Бако Саакян, президент на линии фронта //Аравот//11.09.2016//http://ru.aravot.am/2016/09/11/220948/

[2] См. Там же

но отвлечь общественность от неурегулированного карабахского вопроса и заострить внимание также и на другие аспекты жизни. Таким образом показав, что кроме карабахского вопроса в Арцахе есть и другие, не менее важные, социальные задачи и проблемы, о которых следовало бы упомянуть.

Но на формирование положительного или отрицательного образа НКР могут повлиять не только образы вышеупомянутых политических деятелей и отображения их имиджа в СМИ, нельзя забывать о факторе «топорной пропаганды», используемой Азербайджаном, медиасреда которого пытается создать для Арцаха-образ вечной конфликтной зоны. Всю суть азербайджанской политики в отношении Арцаха можно выразить следующей цитатой, взятой из азербайджанского источника «Спутник.аз»: «Это имидж сепаратистской, никем не признанной квазигосударственности, образованной за счет прямой агрессии соседнего государства и сепаратистских действий некоторых элементов внутри страны». И добавить нечего к данному высказыванию официального представителя МИД Азербайджана, который по всей видимости обеспокоен имиджем Арцаха, и подобными абсурдными обвинениями пытается ввести в заблуждение мировое сообщество.

Вывод

На данный момент политическое руководство как Арцаха, так и Армении всеми силами пытаются «модернизировать» и восстановить имидж НКР. В первую очередь это делается за счет развития туризма. Конечно, образы политических деятелей играют ключевую роль в формировании имиджа государства и выше мы уже успели убедиться в данном тезисе, но еще одним из действенных рычагов, влияющих на образ страны является сфера туризма и представление данной отрасли политиками. Поскольку посредством развития туристической сферы можно показать мировому сообществу, что помимо неурегулированного карабахского вопроса существуют и другие аспекты жизни Республики. Необходимо показать мирную жизнь, и доказать наглядно, что естьАрцах. Подобную точку зрения выразил в интервью «Де-Факто» замминистра экономики республики Сергей Шахвердян, отметив важность привлечения интуристов в деле формирования положительного образа НКР: «Каждый турист, который будет уезжать от нас довольным, будет рассказывать своим друзьям и знакомым о Арцахе, как о прекрасной стране. Каждый из нас должен воспринимать любого гостя, как своего собственного».

Отметим также, что в телевизионной программе «Публичная дипломатия» директор Института истории, государства и права ПГУ им. Т. Г. Шевченко Илья Галинский, привел в качестве примера успешного продвижения государственного имиджа практику создания представительств за рубежом на примере Республики Арцах. «Представительства Нагорного Карабаха есть в 15 государствах мира. Они целенаправленно занимаются продвижением положительного имиджа НКР», - подчеркнул он. «Есть и специальные люди, которых для этого нанимают.[1] Они профессионально формируют имидж государства за границей», - отметил политолог.

Литература

[1] LeFigaro: Бако Саакян, президент на линии фронта
//Аравот//11.09.2016//http://ru.aravot.am/2016/09/11/220948/

[2] Публичная дипломатия»: «Работаем мы или не работаем над имиджем, он все равно есть»//
05/11/12//http://mid.gospmr.org/ru/vpq

[1] «Публичная дипломатия»: «Работаем мы или не работаем над имиджем, он все равно есть»// 05/11/12//http://mid.gospmr.org/ru/vpq

ՀՏԴ159.9(796.06) *Հոգեբանություն*

Մարիա Բաբայան
Վանաձորի պետական համալսարան, մագիստրատուրա 1-ին կուրս
maria.babayan.1994@mail.ru

ՍՊՈՐՏՍՄԵՆԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ՍՏԱՐՏԻՑ ԱՌԱՋ

Հոգեբանական որակները մեծ ազդեցություն ունեն սպորտսմենի կողմից ձեռք բերված արդյունքների վրա: Մարզումների ժամանակ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել. կամային և հոգեբանական որակներին, բարոյական խորը զգացումներին, մրցության ընթացքում սպորտսմենի հուզական վիճակի դինամիկային: Սպորտը թմրանյութ է: Դրական հույզերը մոտիվ են հանդիսանում այնպիսի ձգտումներին հասնելու համար, ինչպիսիք են <<Բարձր, Ավելի արագ, Ավելի ուժեղ>>: Նա, ով վախենում է պարտությունից, չի ստանեւմայդ դրական հույզերը, այլ փախչում է բացասական հույզերից: Մարդիկ դեռ հազարավոր գրքեր կգրեն հաղթանակի մասին: Բայց այդ հաղթանակի համը չի նկարագրի և ոչ ոք . . .

Բանալի բառեր՝ Սպորտսմեն, սպորտային գործունեություն, մրցություն, սպորտսմենի հոգեբանական պատրաստվածություն, ստարտ

Мария Бабаян
АГУ, магистратура 1-ый курс
maria.babayan.1994@mail.ru

ПСИХОЛОГИЧЕСКОЕ СОСТОЯНИЕ СПОРТСМЕНА ПЕРЕД СТАРТОМ

Психологические качества, которые претерпевают некоторую метаморфозу перед соревнованиями, влияют на достижение спортсменами результатов во время выступления. В проведении тренировок следует обратить внимание, во-первых, на волевые и психологические качества спортсменов, во-вторых, на глубокие нравственные чувства, в-третьих, динамичность эмоциональных состояний во время спортивных соревнований. Спорт – это наркотик. Положительные эмоции – мотив куда более мощный для стремлений “Выше, Быстрее, Сильнее ”, чем боязнь поражения. Тот, кто боится проиграть, не получает положительных эмоций, а убегает от отрицательных. Люди еще напишут тысячу книг про победу. Но вкус победы не опишет никто . . .

Ключевые слова: Спортсмен, спортивное действие, соревнование, психологическая подготовка спортсмена, старт

Maria Babayan
VSU, Master’s degree 1st year
maria.babayan.1994@mail.ru

THE PSYCHOLOGICAL STATE OF THE SPORTSMAN BEFORE THE START

Psychological features have a great influence on the results of the sportsman. While working out one should pay attention to: 1) willing and psychological qualities, 2) deep moral feelings, 3) dynamics of the emotional state of the sportsman during the competition. Sport is like drug. Possitive emotions motivate us to be higher, be faster and stronger. The loser never gets those positive emotions, he evades negative ones.

People will write thousands of books dedicated to the victory. But in feat, none of them will transfer the taste of the victory . . .

Keywords: sportsman, sport activity, a competition, psychological readiness of the sportsman, a start

Սպորտը մարդկային գործունեության յուրահատուկ տեսակներից է, այն միաժամանակ նաև սոցիալական երևույթ է, որը կարող է նպաստել առանձին անհատների, ինչպես նաև պետության սոցիալական կարգավիճակի բարձրացմանը: Սպորտային գործունեությունը հանդիսանում է սպորտի հոգեբանության ուսումնասիրության հիմնական առարկան: Այսօր սպորտային գործունեությունը բաժանվում է երեք կատեգորիաների.

1. Մասսայական սպորտ
2. Բարձրագույն ձեռքբերումների սպորտ
3. Պրոֆեսիոնալ սպորտ

Անկախ այն բանից, թե սպորտսմենը նշված կատեգորիաներից որի մեջ է մտնում, նրան անհրաժեշտ է հոգեբանական պատրաստվածություն: Այդ հոգեբանական պատրաստվածությանը կարող են նպաստել ոչ միայն հենց իրենք՝ սպորտսմենները, այլև այն անձիք, ովքեր մարզիկի հետ միասին ներգրավված են այդ գործունեության մեջ. Մարզիչները, սպորտային ղեկավարները, հոգեբանները, բժիշկները, մենեջերները, սպորտային դատավորները, լրագրողները: Այդ իսկ պատճառով մարզիկի պատրաստվածությունը պահանջում է ֆինանսական ծախսեր, տեսական ոլորտում գիտության վերջին ձեռքբերումներին տեղեկացվածությունը, սպորտային մարզումների համար էֆեկտիվ մեթոդների մշակում: Բայց կենտրոնական տեղում, միևնույնն է, մարզիկն է[1]:

Ցանկացած մարզիկ գիտի, որ մրցությունը – դա միայն ֆիզիկական որակների փորձարկում չէ: Իսկ մարզիկներից ում չի վիճակվել ունենալ տարօրինակ զգացումներ մրցությունից առաջ: Դժվար թե գտնվի այդպիսի մարզիկ: Մրցությունից առաջ մարզիկներն ունենում են անհանգստության, լարվածության զգացումներ, դող ամբողջ մարմնով, կարող են ունենալ նաև կպչուն մտքեր՝ կապված իրենց ելույթի հետ: Այս բոլորը մրցության ժամանակ միավորվում է մեկ հասկացության մեջ. նախաստարտային վիճակ: Սակայն նշենք, որ նախաստրեսային վիճակի ազդեցությունը օրգանիզմի վրա՝միանշանակ չէ: Այն կարող է զգալիորեն գրգռել նյարդային համակարգը, և նրա ազդեցության տակ մարզիկը կորցնի իր ինքնակառավարումը, կամ էլ, հնարավոր է, որ մարզիկի մոտ դիտվի հակառակ էֆեկտը. տեղի է ունենում նյարդային համակարգի ուժեղ արգելակում, երբ մարդը կարող է կառավարել իր հոգեբանական վիճակը[2]:

Սպորտային մրցությունները մարդկային փոխհարաբերությունների յուրահատուկ մոդել են, որտեղ կարող են դրսևորվել տարբեր իրադրություններ. Պայքար, հաղթանակ, պարտություն: Սպորտային մրցությունների ժամանակ դրսևորվող ամենակարևոր պրոբլեմներից մեկն է սպորտսմենի հուզական վիճակը: Մի շարք մասնագետներ գտնում են, որ սպորտսմենի հուզական վիճակի կառավարման հիմնական նպատակն է նրանց մոտ հուզական կայունության բարձրացումը, որը հանդիսանում է մրցության ժամանակ հաջողված ելույթի գլխավոր նախապայմաններից մեկը: Մարզիկի հոգեկանը կատարելագործվում է շրջապատի հետ ակտիվ փոխհարաբերությունների արդյունքում, ակտիվ մարզումների և մրցության գործունեության արդյունքում: Սպորտում հաջողության հասնելը զգալիորեն կախված է մարզիկի անհատական-հոգեբանական առանձնահատկություններից, իսկ սպորտի որոշ տեսակներ պահանջում են կոնկրետ որակներ, որոնք կարող են նպաստել անձնային դրական որակների զարգացմանը: Սպորտային մրցությունների ժամանակ տեղի է ունենում սպորտսմենի կարողությունների առավելագույն դրսևորում: Սպորտային գործունեությունը մարդկային գործունեության մյուս տեսակների հետ համեմատած, իր մեջ պարունակում է ուժեղ և վառ հուզական անհանգստություն: Սպորտային գործողությունների հագեցվածությունը ուժեղ զգացումներով՝ դա անձի վրա սպորտի ունեցած դրական ազդեցության գլխավոր նախապայմաններից է: Բայց հուզական անհանգստությունը կարող է ինչպես դրական, այնպես էլ բացասական կերպով ազդել մարզիկի վարքային ոլորտում[3]: Բազմաթիվ հետազոտություններ են անցկացվել պարզելու համար, թե ինչպես կարող է ազդել մարզիկի տրամադրությունը հիմնական մրցության ժամանակ: Հետազոտության արդյունքում ապացուցվեց տրամադրության կարևորությունը մրցությունից առաջ: Մարզումների ընթացքում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել սպորտսմենի կամային որակներին, անհատական-հոգեբանական առանձնահատկությունների, սպորտային մրցության ժամանակ հուզական ոլորտի դինամիկային[4]:

Սպորտսմենի հոգեբանական պատրաստվածության մասին առաջին անգամ հիշատակվել է 1956 թ. Սպորտի հոգեբանության միջազգային գիտաժողովի ժամանակ: Նշենք նաև, որ հոգեբանական պատրաստվածությունը ունի հետևյալ ուղղվածությունները.

[1] Ильин Е.П., Психология спорта, Издательство Питер, Санкт- Петербург, 2001г., 196 стр
[2] www.dogschool.ru
[3] www.cyberleninka.ru
[4] Петров С.В., Несин А.Н., Венжега Р.А., Сасик А.С., Психологическое состоание спортсменов перед основными соревнованиями / статья

1. Հոգեբանական պատրաստվածություն տվյալ մրցության նկատմամբ,
2. Հոգեբանական պատրաստվածություն կոնկրետ մրցակցի նկատմամբ,
3. Հոգեբանական պատրաստվածություն, որն ուղղված է իրադրային վիճակների կառավարմանը:

Կախված սպորտի տեսակից՝ հոգեբանական պատրաստվածությունը տարբեր ձևերով կարելի է իրականացնել.

1. Անհատական
2. Խմբային
3. Թիմային

Ժամանակակից սպորտային մրցույթները մարզիկից պահանջում են ոչ միայն ֆիզիկական, այլ նաև հոգեբանական էներգիայի պաշար: Նույնիսկ այն դեպքում, երբ մարզիկը ֆիզիկապես և տեխնիկապես պատրաստ է մրցությանը, նա չի կարող հաղթել, եթե նրա մոտ համապատասխան չափով զարգացած չեն հոգեկան ֆունկցիաները և անձի հոգեբանական որակները: Այս ամենը խոսում է հոգեբանական պատրաստվածության, հոգեբանական պատրաստվածության անհրաժեշտության մասին[1]:

Նախաստրտային վիճակում մարզիկների մոտ դիտարկվում են հետևյալ երեք վիճակներից մեկը.

1. Նախաստարտային տենդ. հուզական գրգռվածության չափազանց բարձր մակարդակ: Այս վիճակը ի հայտ է գալիս ուժեղ անհանգստության դեպքում, բարձր տագնապայնության, տրամադրության անկայունության, գրգռվածության դեպքում:
2. Նախաստարտային ապաթիա, որը նախաստարտային տենդի հակառակ վիճակն է: Նախաստարտային ապաթիայի դեպքում սպորտսմենի մոտ դիտվում է թուլություն, քնկոտություն, հուզական գրգռվածության համեմատաբար ցածր մակարդակ, մարզվելու ցանկության բացակայություն, սեփական ուժերի նկատմամբ հավատի բացակայություն, անվստահություն, մրցության նկատմամբ հետաքրքրության կորուստ, ստարտի պահին սթափվելու անկարողություն, կամային ակտիվության կտրուկ նվազում:
3. Մրցութային ատրտից առաջ սպորտսմենի լավագույն վիճակը մարտական տրամադրվածությունն է, որի դեպքում մարզիկի մոտ առկա է հուզական գրգռվածության ամենաօպտիմալ մակարդակը: Մարտական տրամադրվածության ժամանակ մարզիկի մոտ դիտվում է աճող անհանգստություն, վստահություն սեփական ուժերի նկատմամբ, սեփական ուժերի ռեալ գնահատում, սեփական մտքերը, զգացմունքները, վարքը կառավարելու ընդունակություն, ինքնակառավարման առկայություն:

Ստարտից առաջ սպորտսմենի հոգեբանական պատրաստվածության վրա կարող են ազդել մի շարք գործոններ, ինչպես օրինակ, մարզիչի ձայնը, նախկին փորձի առկայությունը, նախանշանների նկատմամբ ունեցած հավատը, նեյրոլինգվիստիկական ծրագրավորումը, սպորտսմենի տրամադրությունը[2]:

Նախաստարտային վիճակների կառավարման լավագույն միջոցներից է մարզիչի հետ ունեցած նախապատրաստական զրույցը: Մրցույթից առաջ մարզիչը պետք է հիշեցնի իր սանին որոշ դետալների մասին, ինչպես նաև այնպիսի փաստերի առաջադրում, որոնք ապացուցում են, որ սպորտսմենն ի վիճակի է դրական արդյունքով ավարտել մրցույթը: Սակայն չպետք է սահմանափակվել միայն զրույցով: Անհրաժեշտ է, որ սպորտսմենն ինքը սովորի իջեցնել նախաստարտային լարվածության մակարդակը: Անհրաժեշտ է, որպեսզի մարզիկը ստարտի ժամանակ լինի սթափ վիճակում: Նախկին փորձի ժամանակ ունեցած հաղթանակները կարող են մարզիկին դարձնել ավելի վստահ: Հոգեբանական պատրաստվածության առանձին մաս է կազմում նախանշանների նկատմամբ ունեցած հավատը: Սակայն պետք չէ սնահավատ լինել. դա ավելորդ լարվածություն և անհանգստություն կարող է առաջացնել սպորտսմենի մոտ: Մարզիկի հոգեբանական պատրաստվածությունը կարող է ամրապնդել նեյրոլինգվիստիկական ծրագրավորումը: Այն փաստը, որ մարդը մտածում է բառերով, մեզ հնարավորություն է տալիս խոսքի միջոցով նպատակաուղղված ազդեցություն ունենալ ուղեղի նեյրոնների վրա: Մարզիկի տրամադրությունը ևս շատ կարևոր հանագամանք է: Մրցույթի ժամանակ դրական արդյունքի հասնելու համար ցանկալի է դրական տրամադրվածությունը և բարձր տրամադրությունը[3]:

[1] www.sportacadem.ru
[2] www.goldmustang.ru
[3] www.psylist.net

Հոգեբանական պատրաստվածության լավագույն դպրոցը սպորտսմենի համար մրցության մեջ մասնակցություն ցուցաբերումն է: Մրցութային փորձը սպորտսմենի հուսալիության կարևոր մասն է կազմում: Սակայն, միաժամանակ, յուրաքանչյուր մրցություն կարող է դառնալ ֆիզիկական և հոգեկան տրավմաների պատճառ: Մրցության մեջ մասնակցությունը իրենից ենթադրում է կոնկրետ արդյունքների ցուցաբերում: Հոգեբանական պատրաստվածությունը մեծամասամբ պետք է ուղղված լինի անձնային որակների ձևավորմանն ու դրանց զարգացմանը, հոգեբանական և հուզական կայուն վիճակի ձեռքբերմանը, որոնցով էլ պայամանավորված է մարզիկի հաջող ելույթը: Հոգեբանական պատրաստվածության հիմանական նպատակն է մարզիկի հարմարումը մրցութային իրավիճակին: Հոգեբանական պատրաստվածության մեջ պետք է ներառվեն այնպիսի միջոցառումներ, որոնք կնպաստեն սպորտային բնավորության ձևավորմանը: Մրցության ժամանակ հաջող ելույթի գրավականը սպորտային բնավորությունն է: Այն ձևավորվում է մարզումների ընթացքում: Սպորտային բնավորության չափանիշներն են.

1. Մրցության ժամանակ ելույթի կայունությունը,
2. Մրցույթից-մրցույթ արդյունքների բարելավումը,
3. Մրցության ժամանակ ավելի բարձր արդյունքի ցուցաբերում, քան մարզումների ժամանակ,
4. Ավելի լավ արդյունք, քան նախորդ ելույթի ժամանակ:

Սպորտսմենի հոգեբանական պատրաստվածության մասին կարող են վկայել հետևյալ որակները.

1. Արտակարգ իրավիճակներում հանգստության պահպանումը, սառնասրտությունը
2. Վստահություն սեփական ուժերի նկատմամբ
3. Մարզիկի մարտական ոգին, որն ապահովում է հաղթանակին ձգտումը:

Հոգեբանական պատրաստվածությունը կարող է ամրապնդվել ներշնչման, ինքնահամոզման միջոցով: Սպորտային գործունեության ընթացքում մարզիկը կարող է ինքն իրեն որոշակի հրահանգներ տա, կամ դիմի որևէ խնդրանքով: Սպորտային գործունեության մեջ ինքնահամոզումը կարող է դիտվել որպես յուրօրինակ հոգեթերապիա, այսինքն, երբ ինքնակառավարումը, ինքնակարգավորումը տեղի է ունենում ինքդ քո հետ խոսելով[1]:

Նախաստարտային վիճակի առանձնահատկություններից մեկն այն է, որ սպորտսմենը ստարտից առաջ ինքնավստահ է, իրենից գոհ, միաժամանակ նաև կարող է դրսևորվել պասիվություն: Վստահության, հանգստության առկայությունը սպորտսմենի մոտ խոսում է այն մասին, որ նա իր հաջողության մեջ վստահ է: Այսպիսի վիճակ կարող է դիտվել նաև այն դեպքում, երբ մարզիկը պետք է մրցության մեջ մտնի ակնհայտ թույլ մրցակցի հետ, հետևաբար առկա է լինում նաև երաշխավորված հաղթանակը: Նախաստարտային մարտական տրամադրվածության վիճակը և վստահությունըվկայում են սպորտսմենի՝մրցությանը հոգեբանորեն պատրաստ լինելու մասին: Մարզիկի մոտ այս կամ այն նախաստարտային վիճակը միշտ պատճառաբանված է: Սպորտսմենի նախաստարտային վիճակի վրա ազդող գործոններից են նաև հետևյալները. լավ մարզավիճակը, մրցույթի բնույթը, մրցույթի մասշտաբն ու նշանակությունը, մասնակիցների կազմը, մրցակցի ուժը, կազմակերպվածությունը, սպորտային կոլեկտիվում պահպանվող կարգապահությունը, ներդաշնակությունը, համախմբվածությունը, երկրպագուների կազմը և վարքը, և այլն: Նշենք, որ անհրաժեշտ է տարբերակել նախաստարտային և ստարտային վիճակները: Ըստ Լեխմանի, ստարտային վիճակը առաջանում է հենց ստառտի պահին, իսկ նախաստարտային վիճակն առաջանում է այն պահից, երբ սպորտսմենը արդեն ժամանել է մրցության վայրը, այսինքն սպորտային իրադրության մեջ հայտնվելը: (wwww.sportacadem.ru)Մրցույթից առաջ սպորտսմենին հատուկ է անհանգիստ վիճակը, որը հետաքրքրում է ոչ միայն մարզիչներին, ֆիզիոլոգներին, այլև հոգեբաններին, և ինչու չէ, նաև հենց իրենց՝ մարզիկներին: Հոգեբանական անհանգստությունները սպորտսմենի մոտ բազմաբնույթ ու տարատեսակ են, քանի որ մրցությունը նրանցից պահանջում է առավելագույն լարվածություն և անհանգստություն: Թե ինչպիսի ազդեցություն կարող է թողնել մարզիկի վրա այդ լարվածությունն ու անհանգստությունը, կախված է նյարդային համակարգի գրգռվածության աստիճանից[2]:

Սպորտում հաջողության հասնելու ամենակարևոր որակներից են մարզիկի կամային որակները: Հաղթելու համար պետք է ուժեղ լինել: Սպորտսմենը պետք է մտածի. <<Ես հիմքեր չունեմ պարտվելու, այլ ընդհակառակը, ունեմ բոլոր նախապայմանները՝ հաղթելու համար>> : Սպորտսմենըպետք է

[1] Гогунов Е. Н., Мартьянова Б.И., Психология физического воспитания и спорта, Издательский центр Академия, Москва 2000г, 288 стр.

[2] www.sportwiki.to

ունենա այն համոզմունքը, որ ինքը ոչնչի առաջ չի կարող կանգ առնել: Հենց դա նրանում կստեղծի չեմպիոն լինելու նախապայմանը: Ինչ-որ մեկը կարող է ունենալ ֆենոմենալ գենետիկա, սակայն ավելի շուտ, դու նրանցից չես: Պարզապես հիշիր, որ ցանկացած գենետիկա մոխրի է վերածվում, եթե նրա դեմն ուղղել հսկայական աշխատանք: Ծանր աշխատանքը ցանկացած նպատակին հասնելու միակ ուղղին է: Կարևոր չէ, թե որքան դժվար է դա հիմա, արքան դժվար է լինելու հետո. նշանակություն ունի միայն այն, որ դու պատրաստ ես գնալ մինչև վերջ. դա այն է, ինչին դու հավատում ես:

Մարդիկ դեռ հազարավոր գրքեր կգրեն հաղթանակի մասին: Բայց այդ հաղթանակի համը չի նկարագրի և ոչ ոք . . .

Գրականության ցանկ

1. Гогунов Е. Н., Мартьянова Б.И., Психология физического воспитания и спорта, Издательский центр Академия, Москва 2000г, 288 стр.
2. Ильин Е.П., Психология спорта, Издательство Питер, Санкт- Петербург, 2001г., 196 стр.
3. Петров С.В., Несин А.Н., Венжега Р.А., Сасик А.С., Психологическое состоание спортсменов перед основными соревнованиями / статья
4. www.cyberleninka.ru
5. www.goldmustang.ru
6. www.sportacadem.ru
7. www.dogschool.ru
8. www.sportwiki.to
9. www.psylist.net

ՀՏԴ 373(82-9)

Մանկավարժություն

Արփինե Բադալյան
ՎՊՀ, 3-րդ կուրս
badalyan.14@list.ru

ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

Ամփոփելով վերոնշյալը ինչպես նշեցի , ռազմահայրենասիրական դաստիարակությունը կրտսեր դպրոցական տարիքում իրականացվում է մանկական ստեղծագործությունների միջոցով: Մանկական գրականությունը այնքանով կարող է նպաստել հայրենասիրական դաստիարակությանը ,որ այն հարուստ է խոսքով և պատմական երևույթների զգացմունքային գեղարվեստական նկարագրություններով ,որոնք օգնում են ներգործելու երեխայի զգացմունքների վրա:Մանկական ստեղծագործությունները հայրենիքի վերաբերյալ երեխաները միշտ պետք է օգտագործեն ,արտասանեն ամեն առիթին թե տոն օրերին, թե խնջույքների ժամանակ ,որպեսզի ոգեշնչվեն և անչափ սիրեն հայրենիքը ,հարգեն մշակույթը ,ավանդույթները և պատմությունը : Սիրել հայրենիքը իմ խորին համոզմամբ նշանակում է ամեն կերպ նպաստել նրա զարգացմանը ,պահպանել և կրկնապատկել նրա գեղեցկությունը, հարկ եղած դեպքում կռվել թշնամու դեմ , որը փորձում է խաթարել հայրենիքի խաղաղությունը

Բանալի բառեր՝ հայրենասիրություն, դաստիարակություն, մանկական գրականություն, միջոցառումներ

Arpine Badalyan
VSU, 3rd year
badalyan.14@list.ru

THE PATRIOTIC EDUCATION IN THROUGH CHILDREN'S LITERATURE AS MENTIONED IN THE ARTICLE

Summarizing the article, the patriotic education in junior school is realized through children's literature as mentioned in the article. Children's literature can promote patriotic education since it is rich in words and artistic emotional describtion of historical events that help to influence children’s emotions. Children should always use children’s literature about their homeland recite it on every occasion, be it a holiday or a banquet, in order to get inspired and love their fatherland greatly, respect its culture, traditions, and history. In my opinion, loving one’s homeland means to contribute to its development, maintain, and increase its beauty, and if necessary to fight against its enemies that try to disrupt the peace of the country.

Keywords: Patriotic education, school, family

Арпине Бадалян
ВГУ, 3 курс
badalyan.14@list.ru

ПАТРИОТИЧЕСКОЕ ВОСПИТАНИЕ МЛАДШЕГО ШКОЛЬНОГО ВОЗРАСТА В ДЕТСКОЙ ЛИТЕРАТУРЕ

Как уже было отмечено выше, патриотическое воспитание младшего школьного возраста реализуется с помощью детской литературы. Детская литература является неотъемлемой частью патриотической литературы вообще, так как она богата художественными описаниями исторических событий, которые производят большое впечатление на ребенка и могут повлиять на его эмоции. Художественные произведения для детей должны стать составной частью детских мероприятий и утренников, должны воспитывать любовь к Родине, уважение к культуре, традициям и истории своего народа. Любить родину, по моему глубокому убеждению, означает делать все то, чтобы внести свой личный вклад в развитие, сохранение традиций и приумножение красоты родного края, уметь при необходимости дать достойный отпор врагу, который пытается нарушить покой в нашей стране.

Ключевые слова: патриотическое воспитание, школа, семья

Մանկական գրականությունը մատաղ սերնդի դաստիարակության կարևոր միջոցներից է: Այն մանկավարժի դաշնակիցն է, փոքրիկի խորհրդատուն ու դաստիարակը:Մանկական գիրքը հարստացնում է երեխայի կենսափորձը , ընդլայնում գիտելիքները ,նպաստում նրա բնավորության ու աշխարհայացքի ձևավորմանը, օժանդակում կենսուրախ և լավատես դառնալուն:

Մանկական գրականության զարգացման հիմքում ընկած է ժողովրդի գեղարվեստական խոսքը , նրա բանահյուսությունը: Հենց այս իմաստուն և բազմահարուստ աղբյուրից է սկզբնավորվել ու սնունդ առել երեխայի առաջին պատկերացումները: Ժողովրդական երգերը , հեքիաթները ,առած-ասացվածքները և այլ բնույթի բանավոր ստեղծագործություններ դարեդար ուղեկցել են մանուկներին և դաստիարակել նրանց: Քանի որ կրտսեր դպրոցականի դաստիարակությունն իրականացվում է մանկական ստեղծագործությունների միջոցով ուրեմն մեր խնդիրն է երեխաների մեջ ձևավորել բարոյական որակներ և զարգացնել այն:

Մանկավարժահոգեբանական ուսումնասիրությունները ցույց են տալիս , որ դաստիարակության արդյունավետությունը մեծ չափով պայմանավորված է ուսուցիչների և ծնողների կողմից երեխաների բարդ , հուզական աշխարհը ներթափանցելու և նրանց զգացմունքների վրա խելացիորեն ներգործելու կարողությամբ:[1]

Ժամանակակից աշխարհաքաղաքական փոփոխությունների պայմաններում ,երբ սրությամբ է դրված Հայաստան –Ադրբեջան , Հայաստան-Թուրքիա հարաբերությունները , երբ լուծված չէ Արցախի հիմնահարցը , դպրոցականների և ուսանողների հայրենասիրական դաստիարակությունն առավել ուշադրության է արժանի : Մասնավորապես ընդգծված կարևոր նշանակություն է ստանում կրտսեր դպրոցականների մոտ ռազմահայրենասրիրական դաստիարակության ձևավորման խնդիրը , որի լուծման մի քանի եղանակ է առաջարկված սույն աշխատանքում:

Միանշանակ հայրենասիրական դաստիարակությունը երեխաների մոտ ձևավորվում է ստեղծագործությունների միջոցով :Այդ նպատակով անհրաժեշտ է ճիշտ ընտրել ծրագրային նյութերն ու մատուցման մեթոդները և այդպիսով հասնել նրան ,որ նոր սերնդի մոտ զարգանա հայրենասիրության,ազգային հպարտության ու արժանապատվության զգացումը և նրանց պարտավորեցնի , որ յուրաքնաչյուրն իր հերթին պահի ու պահպանի իր ազգային դիմագիծը ՝ զերծ պահելով այն օտարամոլությունից: Տարբեր առարկաների դասգործընթացը , ելնելով ծրագրային նյութից և ինքնուրույն աշխատանքի բնույթից, ճիշտ և ժամանակին օգտագործելու դեպքում մեծ հնարավորություն կա ձևավորել ազգային հպարտություն , արժանապատվություն ,որոնցից «կառուցվում է» հայրենասիրության շքեղ ապրանքը: Հայրենասիրությունը այն կարևոր բարոյական որակն է որի մասին պետք է խոսել անընդհատ:[2] Մանկական գրականությունը այնքանով կարող է նպաստել հայրենասիրական դաստիարակությանը , որ այն հարուստ է խոսքով և պատմական երևույթների զգացմունքային գեղարվեստական նկարագրություններով , որոնք օգնում են ներգործելու երեխայի զգացմունքների վրա:

«Հայրենասիրությունը, ազգասիրությունը ամեն անհատի սուրբ պարտականությունն է :

Եվ հայրենիքի պաշտպանության համար կատարած պատերազմը սուրբ պատերազմ է»: [3] Րաֆֆի

Հայրենասիրությունը բարոյական զգացում է , որն առավել վառ դրսևորվում է հայրենիքի պաշտպանության ժամանակ ,իսկ հայրենասիրության ձևավորման գործում հենքային ենք համարում ազգային արժանապատվության և հպարտության ձևավորումը: Հայրենասիրական դաստիարակությունը պետք է սկսել վաղ տարիքից սեր ներարկելով դեպի հայրենիքը, հայ ժողովուրդը այս ամենը իրականացնելով մանկական ստեղծագործությունների միջոցով: Ռաֆաել Պատկանյանը առաջարկում էր հայրենասիրական դաստիարակությունը սկսել օրորոցից : Սիրել հայրենիքը , մայրենի լեզուն, ժողովրդին ,լինել բանիմաց, օգնել խավարում և օտարի բռնակալության տակ տառապող հայ ժողովրդին: Ահա Պատկանյանի բանաստեղծությունների հիմնական իմաստը :

Հայրենասիրությունը փոքրիկի մեջ վառ պահելու նպատակով Թումանյանը մանուկներին հասցեագրված «Ամենից լավ տունը» բանաստեղծության մեջ դիմում է օտարի ուժին: Մարդը իր երջանկությունը կարող է գտնել միայն հայրենի երկրում :Այս է բանաստեղծությունից բխող եզրակացությունը: Կապուտիկյանի համար հայրենասիրությունը ,հայրենիքը մեծ տեղ է զբաղեցնում : Նա երեխաներին հայրենասիրական ոգով դաստիարակելու նպատակն է հետապնդում , երբ ասում է .

[1] Ս.Գ. Լալախանյան «Հայ մանկական գրականության պատմության գծերը» Երևան 1973թ. էջ5

[2] Հանրապետական գիտաժողովի նյութեր, Վանաձոր 2012թ., էջ 146

[3] Րաֆֆի «Սամվել» հատոր 8, 1986թ., էջ 60

Մեծացիր լավին, մեծացիր չարին ու բարուն գիտակ
Մեծացիր որպես ռամիկ ու կտրիճ
Մանկուց սովորիր ատել թչնամուն,
Քանզի նա մանկուց կյանքդ խռովեց:

Անգնահատելի է նաև Եղիշե Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը ,որում մամռապատ քարի , բերքի ,հեզ աղջիկների ,հայոց մեծերի , Հայաստանի հավերժ խորհրդանիշ Մասիս սարի արժևորումն է տրված:

Ճիշտ է մայրենի դասագրքերում բավականին հայրենասիրական թեմաներ կան ,սակայն անհրաժեշտ է նաև ձեռնարկել համապատասխան միջոցառումներ թե նեղ և թե լայն շրջանակներում : Երեխաները պետք է պատկերացում կազմեն հայրենիքի, հայոց բանակի, հայ զինվորի , ռազմական ուժի մասին և անպայման իմանան ռազմահայրենասիրական թե երգեր և թե ստեղծագործություններ ու ոգեշնչվեն դրանով:Միջոցառումների կազմակերպման գործում պետք է կարևորել տվյալ դասարանի բոլոր երեխաների մասնակցությունը, առանձնացնել հերոսների բնորոշ գծերը : Յուրաքանչյուր միջոցառում պետք սկսվի նպատակի, լուծվելիք խնդիրների հստակ ձևակերպումից :Երեխաներին պետք է հարցնել ու իմանալ նրանց կարծիքն ու պատկերացումները . հայրենասիրությունն արտահայտվում է միայն պատերազմների ժամանակ թե՞ նաև խաղաղ կյանքում: Ընտանիքում նախադպրոցական հաստատություններում պետք է աշխատանքներ տարվեն երեխայի գիտակցության մեջ ռազմահայրենասիրություն ներմուծելու ուղղությամբ:

Ծրագրային նյութը, էքսկուրսիաները հնարավորություն են տալիս օգտագործելու հայոց պատմության դրվագները ,որոնց միջոցով ծանոթանում են հայ հերոսների գործունեությանը:Հերոսների վերաբերյալ հարցումները , նրանց նմանվելու ցանկությունը երեխայի կողմից արդեն այն լավագույն սերմերն են որ հետագայում ծլարձակելու, հզորացնելու և ամրապնդվելու են ՝ խոր արմատներ ձգելով հայրենասիրության «հողում»:

Ավելի կանոնակարգված, համակարգված աշխատանքներն սկսվում են տարրական դասարաններում, երբ աշակերտներն արդեն անցնում են նյութեր՝ նվիրված հայոց պատմությանը և հայ մեծերին, սերտում են դրանցից իրենց համար մատչելի դրվագներ: Օրինակ «Հայկ և Բելը», «Հանդիպում Մաշտոցի հետ », «Սասունցի Դավիթը», «Մեծ Վարդանը»և այլն :Բերված օրինակները հնարավորություն են տալիս ձևավորելու կամային որակներ, հասնել ինքնաոգեշնչման ,ինքնահաղթահարման, թեկուզ նրանց վերաբերյալ հանձնարարությունները ՝շարադրություն ,նկար և այլն:Շարադրությունները կարող են լինել հետևյալ թեմաներով ՝ «Ոչ ոք չի մոռացվել», «Նրանք պաշտպանում են հայրենիքը», «Շենացնենք մեր հայրենիքը» :Այս գործընթացն արդեն գիտակցված է և կարելի է բնորոշել որպես առաջին հաղթանակ: Կարևոր է ուշադրության կենտրոնում պահել ազգային արժեքները և դրանց հետաքրքիր ու հուզումնալից հաղորդումը ՝ցերեկույթի, երեկույթի թատերականացված փոքրիկ ներկայացումների ձևով:

Ռազմահայրենասիրական դաստիարակությունը և գրագետ, հոգեպես ու ֆիզիկապես կոփված, բանակի մասին տեղեկացված ու պատրաստված սերունդ դաստիարակելու գործընթացը մեզանում օրեցօր պետք է ավելի կատարելագործվի: Այդ նպատակով էլ հենց դպրոցից տարրական դասարաններից սկսած պետք է պատրաստել գրագետ հայրենասեր զինվոր: Հայրենասիրությունը սկսվում է հենց դպրոցից: Դպրոցն այն վայրն է որտեղ երեխային պետք է հայրենասեր դարձնենք , քանի որ այսօրվա հայրենասեր աշակերտը վաղվա լավ զինորն է և քաղաքացին: Դպրոցի բակում ու ներսում ծածանվող Եռագույնը, ՀՀ և ԶՈՒ զինանշանները, օրհներգերի տեքստերը զգաստություն ու հպարտություն են ներշնչում: Այս մթնոլորտում յուրաքանչյուր աշակերտ՝ անկախ իր ստացած դաստիարակությունից, անշուշտ, տոգորվում է գիտակցված հայրենասիրությամբ, ճանաչում մեր պատմության դրվագները, մշակույթի գանձերը և գիտակցում, որ ինքն արժանի ժառանգորդը, պահապանն ու փոխանցողը պիտի դառնա այս ամենի: Մթնոլորտը շատ է օգնում՝ հետաքրքրություն արթնացնել մեր պատմության, հերոսների, բանակի նկատմամբ:[1]

Մերօրյա պատմության էջերը նոր բովանդակությամբ լրացվեցին Արցախյան ազատամարտում հայ նվիրյալների հերոսական պայքարի օրինակներով, անհնարինը հնարավոր դարձնելու կարողությամբ, կամքի ուժի, քաջարի ու կորովի ռազմական տաղանդի, ազատատենչ ոգու դրսևորումներով: Այս ամենը փոքրիկներին նրբանկատորեն պետք է բացատրել ,հասկացնել :Անհրաժեշտ է վերակառուցել մեր մոտեցումները երիտասարդ սերնդի ռազմական, հայրենասիրական և հոգեբանական

[1] Համացանց՝ http://avangard.am/?page=news&

դաստիարակության հարցերին, փորձելով գտնել լուծումներ: Այսինքն պետք է ղեկավարվել հետևյալ սկզբունքով `«Ես մարտնչում եմ ու պաշտպանում իմ հայրենիքը, տունն ու տեղը, իմ հարազատին և հնարավոր է զոհվեմ, բայց այն ունի մեկ նպատակ՝ անկախ հայրենիք, անդորր, ընտանիք, այդ նպատակին հասնելու միակ ուղին՝ պահպանել և պաշտպանել:[1]

Ռազմահայրենասիրական դաստիարակության, հայրենասիրական գիտակցության ձևավորման համար անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր ուսումնական առարկա բովանդակի աշխարհայացքային և բարոյական գաղափարներ՝ ազգային-հայրենասիրական, պատմական բնույթի հայրենասիրական գիտակցություն ձևավորելու համար: Իրավունքը, դրսևորելով կամք, դժվարությունները հաղթահարելու միանշանակ ձգտում»: Ինչպես նշեցի շատ կարևոր է համատեղ ծրագրեր, միջոցառումներ, հանդիպումներ, նոր նախաձեռնություններ երեխաներին առավելագույնս ներգրավելով հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, դրանով իսկ ապահովելով օրինակելի զինվոր, քաղաքացի դաստիարակելու մեր,մանկավարժներիս բուն աշխատանքը իմաստավորելուխնդիրը: Իհարկե,դպրոց-բուհ-բանակ-հասարակություն համագործակցությունն ավելի արդյունվետ կլինի, եթե մենք կարողանանք ընդլայնել հասարակության տարբեր շերտերի, հասարակական տարբեր կառույցների հետ մեր կապերը:

Իմ կողմից ուսումնասիրվել է Վանաձորի թիվ 3 հանրային դպրոցի , ինչպես նաև Վրաստանի Մառնեուլի ավան Շահումյանի թիվ 1 հանրային դպրոցի արտադասարանային միջոցառումները՝ նվիրված Արցախի հերոսամարտերին: Միջոցառումները, որոնց մասնակցում էի, ունեին ռազմահայրենասիրական մեծ նշանակություն: Հատկապես հուզիչ էր փոքրիկ երեխաների թատերականացված խաղերը, որտեղ նրանց դրսևորում էին հայրենիքի պաշտպանության համար ինքնանվիրումի, հանուն հայրենիքի եզերքի զոհվելու պատրաստակամություն: Ելույթը շատ հուզիչ էր, հուզմունքի արդյունքները `նույնպես: Երեխաները այնքան էին մտել դերի մեջ ,որ հուզմունքը տիրել էր բոլոր ներկաներին: Սա նշանակում է, որ սփյուռքում ապրող հայ երեխաները նույնպես ռազմահայրենասիրական դաստիարակություն են ստանում և այդ ոգով մեծանում ,որպեսզի վերադառնան հայրենիք և պահեն ու պաշտպանեն հայրենիքի սահմանները թշնամուց:

Հայրենասիրական դաստիարակության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով միշտ պետք է ներդնենք աշխատանքի նոր ձևեր և մեթոդներ, ինչպիսիք են զանգվածային լրատվության միջոցները և ժամանակակից տեխնոլոգիաները՝ ֆիլմեր, սկավառակներ, կայքեր , հաճախակի անցկացնել ռազմական հայրենասիրական բնույթի մրցույթներ, հանդիպումներ, զրույցներ և այլ միջոցառումներ, ինչպիսիք են՝ «Հայոց պատմություն», «Հայ ազգ», «Հայոց լեզու», «Հայ ընտանիք» թեմաներով հանդիպումները, զրույցները, սեմինարները և այլ միջոցառումները:

Ամփոփում

Ամփոփելով վերաբերյալը ինչպես նշեցի , ռազմահայրենասիրական դաստիարակությունը կրտսեր դպրոցական տարիքում իրականացվում է մանկական ստեղծագործությունների միջոցով :Մանկական գրականությունը այնքանով կարող է նպաստել հայրենասիրական դաստիարակությանը ,որ այն հարուստ է խոսքով և պատմական երևույթների զգացմունքային գեղարվեստական նկարագրություններով ,որոնք օգնում են ներգործելու երեխայի զգացմունքների վրա:

Մանկական ստեղծագործությունները հայրենիքի վերաբերյալ երեխաները միշտ պետք է օգտագործեն ,արտասանեն ամեն առիթին թե տոն օրերին, թե խնջույքների ժամանակ ,որպեսզի ոգեշնչվեն և անչափ սիրեն հայրենիքը ,հարգեն մշակույթը ,ավանդույթները և պատմությունը : Սիրել հայրենիքը իմ խորին համոզմամբ նշանակում է ամեն կերպ նպաստել նրա զարգացմանը ,պահպանել և կրկնապատկել նրա գեղեցկությունը, հարկ եղած դեպքում կռվել թշնամու դեմ, որը փորձում է խաթարել հայրենիքիխաղաղությունը:

Գրականություն

1.Ս.Գ. Լալախանյան «Հայ մանկական գրականության պատմության գծերը» Երևան 1973 թ
2.Հանրապետական գիտաժողովի նյութեր, Վանաձոր 2012թ., էջ 146
3.Րաֆֆի «Սամվել» հատոր 8, 1986թ., էջ 60
4.Համացանց՝ http://avangard.am/?page=news&cal_date=&news_id=659#.WMGWavKtFGZ
5. Համացանց ՝ dasaran.am

[1] Համացանց ՝ dasaran.am

ՀՏԴ 377 *Կրթություն*

Օկսանա Մարդանյան
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, մագիստրատուրա 2-րդ կուրս
oksanamardanyan@gmail.com

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Հոդվածում ներկայացվում է համալսարանում՝ ուսանողների հաղորդակցության և մասնագիտական կողմնորոշման առանձնահատկությունների կարևորությունը:

Անհատի ինքնաճանաչման, ինքնազարգացման համար կարևոր է հարմարվողական գործընթացի խթանումը՝ կապված բուհական համակարգ ընդունվելու դրդապատճառների հետ, ուսանողների ռեֆլեքսիայի զարգացման և մասնագիտական գործունեության վրա թողած ազդեցության հետ:

Արդիական խնդիր է՝ գտնել ուղիներ ապագա մասնագետների պատրաստման արդյունավետության բարձրացման համար:

Սովորողների մասնագիտական ինքնորոշման արդյունավետությանը նպաստում է ինչպես ընտանիքը, հասարակությունը, այնպես էլ կրթական հաստատությունների պայմանները և միջավայրը, որտեղ սովորում է ուսանողը:

Բանալի բառեր՝ Ուսանողների հաղորդակցում; մասնագիտական կողմնորոշում; արդյունավետության ուղիներ; ապագա մասնագետներ; կրթություն

Оксана Марданян
АГПУ им. Х. Абовяна, магистратура 2-ой курс
oksanamardanyan@gmail.com

ПУТИ ЭФФЕКТИВНОСТИ КОММУНИКАЦИИ И ПРОФЕССИОНАЛЬНОГО САМООПРЕДЕЛЕНИЯ СТУДЕНТОВ

В статье рассматриваются важность коммуникации и особенностей профессионального самоопределения студентов в вузе.

Для самосознании, саморазвитии индивида важно стимулировать адаптивный процесс, который связано с мотивами поступления в университет, с развитием рефлексии студентов и влиянием на профессиональной деятельности.

Современный вопрос в том, что надо найти пути для повышении эффективности при приготовлении будущих специалистов.

В эффективности профессионального самоопределения студентов способствует как семья, общество, так и условия и среда образовательных заведениий, где учится студент.

Ключевые слова: коммуникация студентов, профессиональное самоопределение, пути эффективности, будущие специалисты, образование

Oksana Mardanyan
ASPU, Master's Degree 2nd year
oksanamardanyan@gmail.com

WAYS EFFICIENCY OF COMMUNICATION AND STUDENT'S PROFESSIONAL SELF-DETERMINATION

In the article discusses about importance of communication and student's professional self-determination peculiarities in higher educational establishment.

For self-consclousness, self-development individual importantly stimulate adaptive process which linked with motives income in university with development students and influence on professional activity.

Modern question in volume what will find ways for increase efficiency at making future specialists.

In efficiency professional self-determination students promotes as family, society, so and conditions and environment of educational institution where learn student.

Keywords: student's communication, professional self-determination, ways of efficiency, future specialists, education

Այսօր ժամանակակից հասարակությունը ապագա մասնագետների համար բարձր պահանջներ է առաջադրում: Այդ պատճառով արդիականացվում են այն հարցերը, որոնք կապված են ուսանողների մասնագիտական ինքնորոշման խթանման հետ, հատկապես ցածր կուրսերում: Ուսանողների ինքնաճանաչման, անհատի ինքնազարգացման համար կարևոր բաղադրամաս են հարմարվողական գործընթացների խթանումը՝ կապված բուհական համակարգ ընդունվելու դրդապատճառների հետ,

նրանց ռեֆլեքսիայի զարգացման և մասնագիտական գործունեության վրա թողած ազդեցության հետ:

Այսօր առավել արդիական խնդիր է՝ գտնել ուղիներ ապագա մասնագետների պատրաստման համակարգի արդյունավետության բարձրացման համար:

Հասարակության բարեկեցության համար անհրաժեշտ է, որպեսզի ապագա

մասնագետները արագ և որակյալ տիրապետեն նոր գիտելիքներին, հմտություններին և կարողություններին, ակտիվորեն տիրապետեն մասնագիտական վարպետության ուղու հիմնմանը:

Պետք է նշել, որ «նոր ուղղությունները»՝ ուղղված մասնագիտական ինքնորոշման խթանմանը, անհրաժեշտ է կրտսեր կուրսերի ուսանողների հետ կիրառել, որոնք պետք են մասնագիտացման ավելի վաղ փուլերում՝ ստեղծելով նրանց մոտ դրական հուզական տրամադրվածություն իրենց ընտրած մասնագիտության նկատմամբ, նրանց հետաքրքրության բարձրացմանը կրթական գործընթացի նկատմամբ:

Վերոնշյալ գործընթացը բուհում կապված է անհատի կատարած գործունեության տեսակների որոշմամբ, «ուսանող-բուհ» հարաբերությունների համակարգի ձևավորմամբ՝ բարձրագույն ուսումնական հաստատության ոլորտում [4]:

4. Руфова Н.Л., Психологические условия адаптации молодых специалистов к современному рынку труда: (на примере психолого-педагогических профессий): - М., 1999, с. 250.

Հարմարվողականությունը ենթադրում է ուսանողի անհատի հաղորդակցումը սոցիալական և մասնագիտական փորձին, նոր սոցիալական գործառույթներին, բուհի մշակույթին, վարվեցողության նորմերին:

Բուհում ուսանողի հարմարվողականության հիմնական խնդիրները առանձնացվում են ըստ՝

- ուսանողի հարմարումը բուհական համակարգին (նորմերի, սկզբունքների յուր
ացում, համակարգի ուսուցում),
- ուսանողի հարմարումը նոր խմբում (համակուրսեցիների խմբում),
- խմբում կարողությունների զարգացում՝ որպես համարժեք փոխազդեցություն,
- ուսանողների պատրաստվածության դրդապատճառների խթանում մասնագի
տական ինքնորոշման համար:

Ուսանողների մասնագիտական ինքնորոշման դրդապատճառներից ամենակարևորը սկզբնական փուլերում (1-2 կուրս), հանդիսանում է ապագա մասնագետների ուսուցումը:

Բուհում կարևոր արժեք է ներկայացնում մասնագիտական ինքնորոշման և անհատի գործունեության խթանումը:

Պրյաժնիկովն առանձնացնում է ակտիվության չորս ձևեր, որոնք կարելի է լիովին օգտագործել ուսանողների հետ տարվող աշխատանքներում՝ հատուկ դասընթացներ անցկացնելով՝ ուղղված սեփական 《Ես》-ի նույնականացմանը ընտրած մասնագիտության հետ՝ կառուցելով հեռանկարներ անհատական-մասնագիտական աճի համար [3, էջ 39, 43]:

1. Դրդապատճառային-հուզական, հուզական ակտիվության ձևավորումն է (հետ
աքրքրություններ, պահանջմունքներ), որի հիման վրա կարելի է ձևավորել դրդա
պատճառառներ՝ մասնագիտական ինքնորոշման կոնկրետ խնդիրներ լուծելու հ
ամար: Դրդապատճառների ձևավորում նշանակում է մասնագիտական ինքնորոշ
ման նպատակների ճշգրտում:
2. Ճանաչողական-ինտելեկտուալ, տվյալ ուղղությունը մասնագիտական ինքնոր

ոշման համար իրականացվում է պրոբլեմային ուսուցման հիման վրա՝

- միասնական գործունեության մեջ ընդգրկել մասնագիտական կողմնորոշման խնդիրներ,
- խնդիրները բարդացնել և զուգահեռ ձևավորել պահանջմունքը,
- խնդիրը ինքնուրույն լուծել,

3. Пряжников Н.С., Методы активизации профессионального и личностного самоопределения: учебнометодическое пособие. - М., 2002, с. 400.

- սեփական ընդունակությունները վերլուծելու կարողության ձևավորում և խնդ

րի լուծում:

Պրակտիկ-վարքային ակտիվություն, որը ձևավորվում է աշխատանքում մեթո դների կիրառմամբ: Այս փուլում երիտասարդներին շատ ազատություն է տրվում ինքնուրույն առաջադրանքներ կատարելիս: Օգտագործվում է ցանկացած հնար ավորություն, որպեսզի անհատին տա յուրօրինակ մղում ինքնուրույն գործունեութ յան մեջ (օրինակ՝ հարցազրույցի գնալ, ժամանակավոր աշխատել):

Անհրաժեշտ է օգտագործել ցանկացած հնարավորություն և երիտասարդներին ընդգրկել խմբային գործունեության մեջ: Այն պետք է նպաստի ապագա մասնագետների վստահության զգացողության ձևավորմանը իրենց ուժերի նկատմամբ և հնարավորություններ տա ինքնուրույն լուծել սեփական խնդիրները:

4. բարոյականային, այս փուլում ինքնորոշվող երիտասարդներին, առաջին հերթին, անհրաժեշտ է նեցուկ լինել, քանի որ նրանք դրա կարիքը շատ են զգում:

Անհրաժեշտ է ապագա մասնագետին ցույց տալ նեցուկ լինելու պատրաստակամությունը բարդ իրավիճակներում:Կարելի է պատմել շրջանավարտների, սովորողների ինքնորոշվածության հաջողված օրինակներ, լավ կլինի հոգեբանա-մանկավարժական խաղեր կամ թրեյնինգներ կազմակերպել՝ առաջադրված նպատակներին հասնելու համար:

Ակտիվության այս տեսակները փոխկապված են և ձևավորվում են զուգահեռ:

Ըստ Լ. Ե. Գալագանովայի, մասնագիտական ինքնորոշման գործընթացում պրոֆեսորա-դասախոսական կազմը՝ դեկանը, ամբիոնի վարիչը, դասախոսը ևս կարևոր դեր ունեն ուսանողների մասնագիտական ինքնորոշման գործընթացում՝ նրանց մասնագիտական ինքնորոշման ղեկավարման գործընթացում, կրթական, մասնագիտական գործունեության տեսակներում, հետազոտական աշխատանքում՝ հանդես գալով որպես մասնագետ-խորհրդատու:

Նրանք խորհրդակցում են ուսանողների հետ մասնագիտական ինքնորոշման, կրթադաստիարակչական, անհատական զարգացման հարցերի շուրջ, այս գործառույթը ակտիվորեն պետք է իրագործվի 1-ին կուրսում, քանի որ ապագա մասնագետներին անհրաժեշտ է օգնել, խթանել բուհի կրթական միջավայրին հարմարվելու գործընթացին [1, էջ 139]:

Մանկավարժի գործունեությունը նշանակալի բարձր մակարդակ ունի, եթե իրականացվում են հետևյալ ուղղությունները.

1. Галаганова Л.Е., Педагогические условия формирования профессионального самоопределения студентов университета: - Камерово, 1998, с. 248.

- պրակտիկ պարապմունքների կազմակերպում՝ փոխհարաբերություններ թեմայով զրույց ուսանողական խմբում,
- ապագա մասնագետների մասնագիտական կարևոր որակների և նրա զարգացման նպատակների ձևավորմանն ուղղված քննարկում,
- ապագա մասնագետների սոցիալական դիմանկարի ձևավորմանն ուղղված օգնություն, որը կնպաստի անհատի մասնագիտական կարևոր գծերի, որակների ձևավորմանը:

Այս եղանակով մասնագետը՝ դեկանը, ամբիոնի վարիչը, դասախոսը, հանդես գալով որպես մանկավարժ, մանկավարժ-հոգեբան, խթանում են ուսանողների մասնագիտական ինքնորոշմանը:

Ըստ Մարդախաևի՝ բարձրագույն ուսումնական հաստատության կրթական միջավայրը հատուկ կազմակերպված՝ մարդու, խմբերի ուսուցանման համար տարածություն է: Նա տալիս է ուսումնական հաստատությունների առանձնահատկությունների ընդհանուր նկարագիրը՝ լայն ու նեղ իմաստներով:

Լայն իմաստով՝ ըստ մասնագիտական ուսումնական հաստատությունների առանձնահատկությունների ընդգրկում է՝ պրոֆեսորադասախոսական կազմը, նրանում ձևավորված

մշակույթ ու ավանդույթներ, տեղեկատվության հնարավորություններ:

Նեղ իմաստով՝ ըստ կրթական անմիջական միջավայրի առանձնահատկությունների ընդգրկում է՝ լսարաններ, կենտրոններ, պրակտիկայի անցկացում, պրոֆեսորադասախոսական կազմ, ֆակուլտետի ավանդույթներ, դասավանդող-ուսանող փոխհարաբերություններ:

Պրոֆեսոր Լ. Վ. Մարդախաևը առանձնացնում է բուհի կրթադաստիարակչական միջավայրի հետևյալ ոլորտները, որոնք նշանակալի են ուսանողների մասնագիտական ինքնորոշման խնդիրների հետազոտման համար.

- սոցիալական (բուհի սոցիալական կարգավիճակը, բուհի ղեկավարման համակարգը, ֆակուլտետի, ամբիոնի դերը, ուսանողական ինքնակառավարման կազմակերպությունը, կրթության և պրակտիկայի ուղղությամբ կրթական, մեթոդական հիմքերը),
- մշակութային (բուհի վարչակազմի մշակութային, մասնագիտական ընդհանուր մակարդակը, ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը, ամբիոնները, ուսուցման մշակութային միջավայրը՝ հաստատություն, ամբիոններ, լսարաններ, դասախոս-ուսանող, աշխատակից-ուսանող փոխհարաբերությունների մշակույթը, բուհի թանգարանները, ֆակուլտետի պատմության հասանելիությունը),
- դաստիարակչական և կրթական (կրթադաստիարակչական գործընթացի կազմակերպումը, անմիջական ուսուցում լսարանում, պրակտիկաներ, պրակտիկայի կենտրոնների հեղինակությունը, մասնագիտության մեթոդական հիմքերի և ուսուցման որակն ու հասանելիությունը սովորողների համար):

Միավորելով այս ոլորտները՝ կարելի է կանխատեսել և պլանավորել և' անհատի ինքնորոշման, և' զարգացման գործընթացները՝ կրթական միջավայրում [2, էջ 22-27]:

Սովորողների մասնագիտական ինքնորոշման արդյունավետությանը նպաստում է ինչպես ընտանիքը, հասարակությունը, այնպես էլ կրթական հաստատություններում հաստատված պայմանները, միջավայրը, որտեղ սովորում է ուսանողը:

Բարձրագույն ուսումնական հաստատության կրթական միջավայրը հանդիսանում է անհրաժեշտ պայման և գործոն, հաղորդակցական ոլորտ մասնագիտական համակարգում և սովորողների մասնագիտական ինքնորոշման համար՝ նպաստելով մարդու հաջող հարմարմանը որոշակի միջավայրում և դրա միջոցով ուղղորդում նրանց դեպի հասարակական կյանք [5]:

2. Жукова В.И., Методика преподавания в вузе: - РГСУ, 2006, с. 203.

5. Соловьева И. К., Пути повышения эффективности системы подготовки будущих специалистов, Наука и современность, В., 2011.

Օգտագործված գրականության ցանկ

1. Галаганова Л.Е., Педагогические условия формирования профессионального самоопределения студентов университета: - Камерово, 1998, с. 248.

2. Жукова В.И., Методика преподавания в вузе: - РГСУ, 2006, с. 203.

3. Пряжников Н.С., Методы активизации профессионального и личностного самоопределения: учебнометодическое пособие. - М., 2002, с. 400.

4. Руфова Н.Л., Психологические условия адаптации молодых специалистов к современному рынку труда: (на примере психолого-педагогических профессий): - М., 1999, с. 250.

5. Соловьева И. К., Пути повышения эффективности системы подготовки будущих специалистов, Наука и современность, В., 2011.

ՀՏԴ 159.9(791.4) *Հոգեբանություն*

Ալբերտ Զուրաբյան
Երևանի պետական համալսարանի
Իջևանի մասնաճյուղ, 3-րդ կուրս
zurabyan1@gmail.com

ՌՈՄԱՆՏԻԿ ՖԻԼՄԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎՐԱ

Ժամանակակից մարդու կյանքը հագեցած է տարաբնույթ տեղեկատվությամբ: Այդ տեղեկատվության մի զգալի մաս մարդուն հասնում է տարբեր ֆիլմերի միջոցով: Առավել մեծ ծավալ կարող է կազմել ռոմանտիկ ֆիլմերի միջոցով փոխանցվող տեղեկատվությունը, քանզի դրանք առավելագույնն են ազդում անձի հուզական և անգիտակցական ոլորտի վրա: Սույն հոդվածի շրջանակներում մեր կողմից իրականացվել է հետազոտություն, որի նպատակն էր բացահայտել, թե ինչպիսի ազդեցություն են ունենում ռոմանտիկ ֆիլմերը անձի վրա, ինչ փոփոխություններ են դրանք առաջացնում անձի հոգեկանում: Այդ նպատակով մեր կողմից մշակվել է հարցարան, որի նպատակն էր նշված առանձնահատկությունների բացահայտումը: Մեր կողմից կիրառվել է նաև ներշնչվողականության բացահայտման մեթոդիկա: Անձի ներշնչվողականության մակարդակի և ռոմանտիկ ֆիլմերի ազդեցության առանձնահատկությունների միջև փոխպայմանավորվածությունը ներկայացված է սույն հոդվածում:

Բանալի բառեր. ճգնաժամ, դերասաններ, պրոեկցիա, վարակում, ներշնչում, կերպար, ֆիլմեր

Альберт Зурабян
ИФ ЕГУ, 3-ий курс
zurabyan1@gmail.com

ВЛИЯНИЕ РОМАНТИЧЕСКИХ ФИЛЬМОВ НА ОРГАНИЗАЦИЮ ЛИЧНОЙ ЖИЗНИ МОЛОДЕЖИ

Жизнь современного человека насыщена разнообразной информацией. Разные части этой информации доходят до человека с помощью разных фильмов. Наиболее большую массу имеет информация передаваемая через романтические фильмы, потому что у них наибольшее влияние на эмоциональную и бессознательную сферу человека. В рамках этой статьи с нашей стороны было проведено исследование, задача которой было определить какое влияние на личность имеют романтические фильмы и какие изменения они производят в психике личности. С этой целью, мы разработали опросник, задача которой была раскрытие указанных особенностей. Также мы применили тест проверяющий степень внушаемости. Взаимосвязь между степенью внушаемости у личности и влияния романтических фильмов представлены в настоящей статье.

Ключевые слова: кризис, актер, проекция, заражение, внушение, образ, фильм

Albert Zourabyan
YSU IB, 3rd year
zurabyan1@gmail.com

THE INFLUENCE OF ROMANTIC FILMS ON THE ORGANIZATION OF YOUNG PEOPLE'S PERSONAL LIVES

Modern person’s life is full of various information. A significant part of this information reaches the people through various films.The large volume of information can be transmitted by means of romantic films because they have the maximum impact on the emotive and unconscious sector in person. Within the scope of this article we did a research the purpose of which was to identify what kind of impact do romantic films have on a person and what kind of changes do they cause on a person's psyche.For this purpose we have developed a questionnaire, the purpose of which was to identify the aforementioned characteristics. We also practiced a methodology of inspirational revelation.The mutual agreement between a person's inspirational level and the peculiarities of the influense of romantic films is presented in this current article.

Keywords: crisis, actor, projection, contamination, suggestion, image, film

Ժամանակակից պայմաններում անձի գիտակցությունը հագեցած է տարաբնույթ տեղեկատվությամբ, որի զգալի մասը նա ստանում է հեռուստատեսությունից: Հեռուստատեսությունից ստացվող

տեղեկատվության գերակշիռ մասը փոխանցվում է տարբեր տիպի ֆիլմերի միջոցով: Այն, որ ֆիլմերն ազդեցություն են ունենում անձի վրա, և պահպանվում նրա ենթագիտակցական ոլորտում, ակնհայտ է: Հետաքրքրական է այն հանգամանքը, թե ինչ օրինաչափություն գոյություն ունի անձի ներշնչվողականության մակարդակի և նրա վրա ֆիլմերի ազդեցության առանձնահատկությունների միջև: Անձի հոգեկանն առավել հակված է ենթարկվելու ռոմանտիկ ֆիլների ազդեցությանը, քանի որ այստեղ առավել վառ է արտահայտված հուզական բաղադրիչը: Այդ իսկ պատճառով այս ֆիլմերի բովանդակությունն առանձնացվում է անձի կողմից, տպավորվում նրա մոտ: Այս առումով հարկ ենք համարում նշել, որ ֆիլմն աշխարհում ամենատարածված և ամենահզոր հաղորդակցման միջոցներից մեկն է: Ճիշտ ստեղծված ֆիլմը ներկայանում է հույզերի լայն տարածք՝ մարդկանց առավելագույնս լայն շրջանակի վրա ազդեցություն գործելու հնարավորություններով:

Ժամ Ռենուարն ասել է. «կյանքը ֆիլմ է»: Կարելի է նաև ավելացնել, որ ֆիլմերում ներկայացված է կյանքը, և հասկանալ ֆիլմը կարող է միայն նա, ով հասկանում է կյանքը:

Ամենից առաջ, ֆիլմը տվյալ պահին այն ստեղծողի անգիտակցականում գերակշռող արտացոլման արտահայտումն է: Ֆիլմ ստեղծողն ունակ է արտահայտել անհատի կամ կոլեկտիվի ներաշխարհը: Ֆիլմն ամբողջական ստեղծագործություն է, որում գաղտնի արտահայտվում է հեղինակի գերակշռող, բայց քննադատության ենթարկված մոտիվացիան[1, էջ 20]:

Ինչպես մենք նշեցինք՝ ֆիմը հույզերի լայն հարթակ է, և, հաշվի առնելով այն, որ մարդու վրա ներգործության ազդեցությունը կախված է նրանից, թե ազդեցության ինչ մեխանիզմներ են օգտագործվում (համոզում, ներշնչում կամ վարակում), կարող ենք համարել, որ ֆիլմը ունենում է որոշակի հուզական ազդեցություն:

Վարակումն կիրառվող ամենահին մեթոդներից մեկն է: Այն իրենից ներկայացնում է հուզական-հոգեբանական տրամադրվածության փոխանցում մեկ մարդուց մյուսին, որի հիմքը հուզական անգիտակցականն է: Հետազոտությունները ցույց են տալիս,որ դիրքորոշումների փոփոխման ամենաարդյունավետ ձևը հուզական նշանակության փոփոխությունն է: Տեղեկատվության քանակը և դերը մեծ նշանակություն ունեն: Եթե կոնկրետ մարդու կուտակած տեղեկատվությունը և կարծիքները մոտ են տեղեկատվության աղբյուր հանդիսացողի կողմից տարամդրվող տեղեկատվությաը և կարծիքներին, ապա դրանց ներկայացումից հետո տեղի է ունենում ասիմիլյացիա,այսինքն՝ երկուսի միավորում:

Ընդհանրացված կարող ենք նշել, որ հուզական ներազդման հիմնական մեթոդներն են.

1. Ակտիվության աղբյուրի վրա ազդող մեթոդներ, որոնք ուղղված են նոր պահանջմունքների ձևավորմանը,
2. Մարդու վարքը փոխելու համար պետք է փոխել նրա ցանկությունները և մոտիվները,
3. Մարդու վարքը փոխելու համար պետք է փոխել նրա տեսակետերը, կարծիքները, դիրքորոշումները [2]:

Մենք ապրում ենք հորինված երևակայական կերպարներով, որոնք գտնվում են ենթագիտակցականում և ժամանակ առ ժամանակ մտնում են գիտակցություն: Որքանո՞վ է սա ճիշտ: Եթե բոլորս ապրում ենք կերպարներով, դա նշանակում է, որ ոչ ոք չի՞ ապրում իր կյանքով: Սոցիումը, մշակութային միջավայրը ազդում է անգիտակցականի ձևավորման վրա՝ լրացնելով այն ամենով, ինչը հանդիպել է անհատին կյանքի ընթացքում: Մանկության ժամանակ դա հեքիաթներն են, մուլտիպլիկացիոն ֆիլմերը: Դեռահասության տարիքում՝ ֆիլմերը և գրքերը: Այս ամենը ամրապնդվում է նաև լսածով և տեսնածով: Այսինքն՝ ստանալով տեղեկատվություն ֆիլմից և հանդիպելով տվյալ տեղեկատվությանն իրական կյանքում, այն հաստատվում և ազդում է մարդու վրա: Վերը նշվածը վառ օրինակներով արտահայտվում է մեր անձնական կյանքում[3, էջ 65]:

Բացահայտելու համար, թե ռոմանտիկ ֆիլմերն ինչ ազդեցություն են ունենում անձի հոգեկանի վրա, մեր կողմից իրականացվել է հետազոտական աշխատանք: Հետազոտությունն անցեկացվել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի 18-21 տարիքային խմբին պատկանող 30 հոգու հետ: Կիրառվել են ներշնչվածության մակարդակը բացահայտող թեստ [4], ըստ որի պարզ է դարձել, որ հետազոտվողներից 20%-ի մոտ (6 մարդ) ներշնչվածության մակարդակը ցածր է, 35%-ի մոտ (11 մարդ) միջին մակարդակի վրա է, 45%-ի մոտ (13 մարդ) բարձր է: Ներշնչվողականությունն անձի բնութագիր է, որի տակ հասկացվում է արտաքին աշխարհից եկող ազդեցություններին սեփական կամքը ենթարկելու ընդունակությունը: Ներշնչվող մարդիկ կարող են հեշտությամբ ընդունել ուրիշի գաղափարները որպես սեփական: Ներշնչվողականությունը որպես անձի բնութագիր կապված է այնպիսի գործոնների հետ, ինչպիսիք են ներշնչման համար անհրաժեշտ տեղեկատվության առկայությունը (խոսքի, հույզերի կամ գործողությունների տեսքով), մարդկանց առկայությունը, ովքեր պատրաստ են ընկալել այդ

տեղեկատվությունը, ընկալողների հետ անքննադատ վերաբերմունքի առկայությունը: Մեր հետազոտական խմբում հետազոտվողների գրեթե կեսի մոտ ներշնչվողականությունը բարձր մակարդակում է գտնվում: Նրանք հակված են ոչ քննադատական վերաբերմունք ցուցաբերելու արտաքին աշխարհից ստացվող տեղեկատվության նկատմամբ, անաչառ ընկալելու ազդող տեղեկատվությունը:

Մեր կողմից կազմվել է նաև հարցարան, որն ուղղված էր բացահայտելու հետազոտվողների մոտ այս կամ այն ֆիլմերի ընտրության, դրանց ազդեցության առանձնահատկությունները: Հարցարանի կազմման գործընթացում ուշադրություն ենք դարձրել այն հանգամանքին, որ հնարավորություն ունենանք առանձնացնելու այն մարդկանց, ովքեր հակված են դիտելու ռոմանտիկ ֆիլմեր, և բացահայտելու նրանց հոգեկան կերտվածքի վրա այդ ֆիլմերի ազդեցության առանձնահատկությունները: Մեր կողմից բաղկացած հարցարանը կազմված է եղել 14 հարցերից, որոնց տրված պատասխաններիր մեկնաբանությունները ներկայացնում ենք ստորև: Տվյալ հարցարանի առաջին հարցի վերլուծումից պարզ է դարձե, որ 30 հետազոտվողներից 27%-ը չեն նայում ռոմանտիկ ֆիլմեր, 20%-ը նախընտրում են տվյալ տիպի ֆիլմեր, քանի որ դրանք իրենց հոգեհարազատ են, 27%-ը նախընտրում են քանի որ տվյալ ժանրի ֆիլմերը իրենց հետաքրքիր են, 6%-ը՝ քանի որ սիրահարված են, 6%-ը հազվադեպ են նայում և 3%-ը նախընտրում է տվյալ տիպի ֆիլմեր դերասանների համար: Երկրորդ հարցն ուղղված էր բացահայտելու, թե որն է հետազոտվողների մոտ այս կամ այն ֆիլմերն ընտրելու շարժառիթը: Վերլուծությունից պարզ է դարձել, որ հետազոտվողների մեծամասնությունը ֆիլմերն ընտրում են ընկերների խորհրդով, կամ նայում են, թե ովքեր են դերասաններն ու ինչպիսին է բովանդակությունը: Հետազոտվողներից քչերն ընտրություն են կատարում ըստ ժանրի, տրամադրությունից ելնելով, ելնելով հետաքրքրությունից, կամ նրանց ընտրությունն ուղղակի պատահական բնույթ է կրում: Այն հարցին, թե երբ են առավել հակված դիտելու ռոմանտիկ ֆիլմեր, հետազոտվողների մեծ մասը պատասխանել է, որ դա առավելապես լինում է այն ժամանակ, երբ առկա է բարձր տրամադրություն: Հետազոտվողների մեծամասնությունն առավել հակված է ռոմանտիկ ֆիլմեր դիտելու երեկոյան, երբ առկա է հանգիստ ու տրամադրող մթնոլորտ: Հետազոտվողները նշում են, որ ռոմանտիկ ֆիլմերի դիտումն իրենց տալիս է գեղեցիկ մտքեր և հույզեր (30%), կամ որոշակի տեսակետներ, կարծիքներ, պատկերացումներ (27%): Հետազոտվողների կեսը նշում է, որ ռոմանտիկ ֆիլմերը միանշանակ ազդեցություն են ունենում նրանց հուզական ոլորտի վրա, ինչը վերևում կարևորվել էր նաև մեր կողմից: Հետազոտվողներից նրանք, ովքեր ունեն ներշնչվողականության ցածր և միջին մակարդակ, նշում են, որ ռոմանտիկ ֆիլմերից ոչինչ չեն ընդօրինակում: Բարձր ներշնչվողականության մակարդակ ունեցող հետազոտվողները նշում են, որ ինչ-որ բաներ ընդօրինակում են, բայց գործնականում չեն կիրառում, ընդօրինակում են գաղափարներ կամ բնավորության գծեր: Իրականացված վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ բարձր ներշնչվողականության մակարդակ ունեցող հետազոտվողները ցանկանում են լինել իրենց սիրելի դերասանների դերում, երբեմն առօրյայում փորձում են նմանակել նրանց: Այն հետազոտվողները, ում մոտ ներշնչվողականության մակարդակը ցածր կամ միջին է, նշում են, որ ցանկություն չունեն նմանակելու ֆիլմի գլխավոր հերոսներին կամ դերասաններին կամ ֆիլմից ինչ-որ բան իրենց կյանք ներմուծելու: Բարձր ներշնչվողականության մակարդակ ունեցողները նշում են, որ կյանքը նման է ֆիլմի, ցածր ներշնչվողականության դեպքում առաջ է քաշվում հակառակ կարծիքը, իսկ ներշնչվողականության միջին մակարդակ ունեցողները այն մտքի հետ, որ կյանքը նման է ֆիլմի, մասամբ են համաձայնվում: Հետազոտվողների մեծամասնությունը գրեթե միշտ իր հարցերի պատասխանները ստանում է ֆիլմերից: Հետազոտվողները նշում են, որ ռոմանտիկ ֆիլմեր դիտելիս իրենց հիմնական հակազդեցությունը լինում է ժպիտը, հիացմունքը, հոգեկան բավարարվածության զգացողությունը:

Այսպիսով՝ իրականացված հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ ռոմանտիկ ֆիլմերը հիմնականում դիտում են ներշնչվածության միջին և բարձր մակարդակ ունեցող հետազոտվողները, և նրանք ոչ միայն ընդօրինակում են այդ ֆիլմերում դրսևորվող վարքաձևերը կամ իրենց հարցերի պատասխաններ են ստանում ռոմանտիկ ֆիլմերից, այլ նաև օգտագործում են ֆիլմի միջոցով փոխանցված կարծիքները, մտքերը, վարքային մոդելները:

Օգտագործված գրականության ցանկ

1) Антонио Менегетти - <<Кино, театр, бессознательное том 1>>, ННБФ "Онтопсихология" , 2004
2)https://whatisgood.ru/theory/media/sredstva-i-metody-psixologicheskogo-vozdejstviya-informacii-na-cheloveka/
3) С. А. Зелинский - <<Манипуляции массами и психоанализ>>, СКИФИЯ Санкт-Петербург 2008
4) О.П. Елисеев - <<Конструктивная типология и психодиагностика личности>>, Псков, 1994. С. 72-75

ՀՏԴ 37.07 (377)

Կրթություն

Միշա Թադևոսյան
Հայկական պետական մանկավարժական համալսարան (ՀՊՄՀ), 4-րդ կուրս
misha1995t@mail.ru

ՀՀ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ: ՀԵՏԱՋՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Հոդվածում խոսվում է ներառական կրթության հիմնախնդիրների մասին, որոնք առկա են այսօր Հայաստանի Հանրապետությունում: Դրանք են՝ համապատասխան նյութատեխնիկական բազայի, համապատասխան մասնագետների սակավությունն ու ԿԱՊԿՈՒ երեխաների սահմանազատումը:

Առաջարկվում են այդ հիմնախնդիրների լուծման տարբերակներ՝ ֆինանսական հատկացումներ դպրոցներին, մասնագետների և ամբողջ մանկավարժական համակազմի շարունակական վերապատրաստում:

Բանալի բառեր: Մասնագիտական կողմնորոշում, կառավարում, մասնագիտական կողմնորոշման հայեցակարգ, կրթության պետական քաղաքականություն, օրենսդրական հակասություններ, մասնագիտական կողմնորոշման առկա վիճակի գնահատում:

Миша Тадевосян
АГПУ, 4-ый курс
misha1995t@mail.ru

СОСТОЯНИЕ И ОСОБЕННОСТИ ПРОФЕССИОНАЛЬНОЙ ОРИЕНТАЦИИ В ОБРАЗОВАТЕЛЬНЫХ УЧРЕЖДЕНИЯХ В АРМЕНИИ. РЕЗУЛЬТАТЫ ИССЛЕДОВАНИЯ

В статье говорится о задачах инклюзивного образования, которые имеются в Республике Армения. Это обусловлено отсутствием материально-технической базы, нехваткой соответствующих специалистов и разграничение детей, нуждающиеся в особых условиях обучения. Представлены результаты исследования-направленных на выявление особенностей и оценки текущего состояния профессиональной ориентации в образовательных учреждениях в Армении.

Предлагается решение этих задач: финансовое обеспечение школ, постоянная переподготовка специалистов и всего педагогического состава.

Ключевые слова: Профессиональная ориентация, управление, концепция профессиональной ориентации, государственная политика в области образования, законодательные разногласие, оценка текущего состояния профессиональной ориентации.

Misha Tadevosyan
ASPU, 4rh year
misha1995t@mail.ru

STATUS AND PECULIARITIES OF VOCATIONAL GUIDANCE IN EDUCATIONAL INSTITUTIONS IN ARMENIA. RESULTS OF A RESEARCH

The article presents the results of a study aimed at identifying features and assessing the current state of vocational guidance in educational institutions in Armenia.

The article considers the problems of inclusive education, existing in the Republic of Armenia. This is due to the lack of material and technical base, lack of appropriate staff and the delineation of children who need special conditions of education.

Proposed solution to these problems: financial support for schools, continuous learning specialists and all teaching staff.

Keywords: Vocational guidance, management, the concept of vocational guidance, state policy in the fields of education, legislative disagreement, an assessment of current state of vocational guidance.

Ժամանակակից հասարակությունում մասնագիտությունների զանազանությունը բավականին մեծ է: Մասնագիտությունների աշխարհում կողմնորոշվելը այսօր դժվար է ինչպես հասուն, այնպես էլ երիտասարդ մարդկանց համար: Հասարակության յուրաքանչյուր անդամ պետք է ձգտի ինքն իրեն լավ ճանաչել, կարողանա ճիշտ նպատակներ դնել իր առջև, պատրաստ լինի վերապատրաստվելու, կրկին որակավորվելու և իր մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները թարմացնելու: Այդ նպատակով մասնագիտական կողմնորոշման ոլորտում գիտատեսական հիմքերի անվիարժեքությունը, գործընթացի իրականացման մեխանիզմների ու ընթացակարգերի բացակայությունը, աշխատաշուկա-կրթություն կապի խզումը, կողմնորոշման գործընթացում համագործակցային մոտեցման բացակայությունը հանգեցնում են գործընթացի ոչ արդյունավետությանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջազգային փորձը առաջարկում է կողմնորոշման աշխատանքներն սկսել հանրակրթական ուսումնական հաստատություններում, իսկ Հայաստանի Հանարապետությունը որդեգրել է այդ մոտեցումը, մենք հանրակրթական ուսումնական հաստատություններում մասնագիտական կողմնորոշման աշխատանքների ամբողջական պատկերը, առկա իրավիճակը ստանալու համար ուսումնասիրություններ ենք կատարել

Երևանի մի շարք ավագ դպրոցներում՝ ինչպես աշակերտների, այնպես էլ մանկավարժական կոլեկտիվի շրջանում՝ բացահայտելու համար հանրակրթական ուսումնական հաստատություններում մասնագիտական կողմնորոշման գործընթացի կառավարման առկա վիճակն ու առանձնահատկությունները:

Հետազոտությանը մասնակցել են յուրաքանչյուր դպրոցի մանկավարժական կոլեկտիվի 33 անդամ (յուրաքանչյուր դպրոցից՝ տնօրեն, տնօրենի տեղակալներ, դասղեկներ, առարկայական ուսուցիչներ, սոցիալական մանկավարժ, դպրոցի հոգեբան, գրադարանավար, բուժաշխատող), ավագ դասարանի՝ 12-րդ դասարանի աշակերտներ՝ թվով 30 աշակերտ՝ 20 աղջիկ, 10 տղա:

Հետազոտության ընթացքում կիրառվել է անկետավորման մեթոդը:

Անկետավորումը իրականացվել է 2 փուլով

1. Աշակերտների հետ անկետավորում
2. Մանկավարժական կոլեկտիվի հետ անկետավորում

Աշակերտների հետ տարվող մասնագիտական կողմնորոշման աշխատանքների ամբողջական տվյալները հավաքագրելու համար մենք կազմել ենք հարցաղրումների 2 խումբ, որոնցից 1-ին խմբի հարցաղրումները կրկնվում են հետազոտվող երկու խմբերի մոտ, իսկ 2-րդ խումբ հարցերը նախատեսված միայն հենց այդ խմբի անդամների համար:

Տեսական ուսումնասիրությունների արդյունքներն ու հետազոտության առկա տվյալները համադրելով՝ մենք հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Օրենսդրական դաշտում, ենթաօրենսդրական փաստաթղթերում առկա են մի շարք հակասություններ, բացթողումներ, որոնք հանդիսանում եմ խոչընդոտներ արդյունավետ մասնագիտական կողմնորոշում իրականացնելու համար:

«Կրթության մասին», «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքներով մասնագիտական կողմնորոշումը ամրագրված է որպես հանրակրթական դպրոցի նպատակ, սակայն **ՀՀ ընդհանուր ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների՝ տնօրենի, տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալի, առարկայական ուսուցչի, դասղեկի, հոգեբանի, պաշտոնների նկարագրերում բացակայում է մասնագիտական կողմնորոշում իրականացնելու մասին պարտականության դրույթը, այն ամրագրված է միայն սոցիալական մանկավարժի և դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի (նախկինում՝ մանկապատանեկան կոլեկտիվի կազմակերպիչի) պաշտոնների անձնագրերում:**

2. Ըստ «Հայաստանում մասնագիտական կողմնորոշման համակարգի առաջարկվող մոդելի՝ մասնագիտական կողմնորոշումը պետք է կազմակերպվի հաստատության տնօրենի մասնագիտական աջակցությունների գծով տեղակալի, սոցիալական մանկավարժի, հոգեբանի, դասղեկների կողմից, ինչն հակասում է, ամրագրված չէ **ՀՀ ընդհանուր ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների նկարագրերում:**

3. «ՀՀ մասնագիտական կողմնորոշման համակարգի հայեցակարգում», որը հանդիսանում է ՀՀ-ում ոլորտը կարգավորող հիմնական փաստաթուղթ, որևէ կերպ ներկայացված չէ, թե ինչպես կարգավորել,

կազմակերպել, կառավարել ողջ գործընթացը, գործընթացի մասնակիցների հիմնավորված չէ, կարևորագույն շահագրգիռ կողմերը ներկայացված չեն, բացակայում են մասնագիտական կողմնորոշման իրագործման մեխանիզմների, ընթացակարգերի նկարագրություններ։

4. ՀՀ կրթության պետական քաղաքականության մեջ կարևորվում է մասնագիտական կողմնորոշման գործընթացը, սակայն հիմնավոր գործնական քայլեր՝ մեխանիզմների, ընթացակարգերի տեսքով, այդ ուղղությամբ չեն իրականացվում.

Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմք համարվող «Կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագրում» որպես կրթության ոլորտի ներկա փուլի (2010-2015թթ.) առավել ընդգված հիմնախնդիր դիտարկելով մասնագիտական կողմնորշումը, ծրագրի 4-րդ (կրթության զարգացման նպատակներն ու խնդիրները), 7-րդ (կրթության զարգացման հիմնական ծրագրային ուղղություններ) գլուխներում մասնագիտական կողմնորոշումն ու մասնագիտական կրթության նախապատրաստումը չեն հիշատակվում որպես հանրակրթության հիմնական ծրագրային ուղղություններ։

5. Մասնագիտական կողմնորոշման առնչվող փաստաթղթերում բացակայում է հասկացության մեկ ընդհանուր սահմանումը, ինչի հետևքանով հաճախ մասնագետները չեն կարողանում հասկանալ, թե ինչ է ենթադրում այս գործունեությունը։ Համադրելով առկա գիտելիքները, մենք առաջ ենք քաշում մասնագիտական կողմնորոշման մեր սահմանումը, այն է՝ «Մասնագիտական կողմնորոշումը պլանավորված, կազմակերպված, շահագրգիռ բոլոր կողմերի ակտիվ մասնակցությամբ իրագործվող ու կառավարվող գործունեության համակարգ է, որում գործընթացի մասնակից յուրքանաչյուր կողմ ունի հստակ սահմանված պարտականություններ ու գործառույթներ, որոնք ենթադրում են մասնագիտական տեղեկատվության, խորհրդատվության (նախնական ախտորոշում՝ անձի և մասնագիտության համապատասխանության), աշխատանքի նախնական տեղավորման, մասնագիտական դաստիարակության իրականացում և տրամադրում անձին՝ իր անձնային ընդունակություններին, հետաքրքրություններին, հակումներին, պահանջմունքներին և հասարակության պահանջներին համապատասխան մասնագիտություն ընտրելու հարցում։

6. Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ուսումնական տարվա գրեթե ավարտին հանրակրթական ուսուսմանական հաստատություններում ավագ դպրոցականների 40 %-ը դեռևս չի կատարել մասնագիտության հստակ ընտրություն։ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հետազոտությունը կատարվելէ ուսումնական տարվա գրեթե ավարտին(ապրիլ 4-10, 2017թ.) այս ցուցիչը բավականին մտահոգիչ է։

7. Հետազոտությունը ցույց տվեց, որ մասնագիտական կողմնորոշման գործընթացը ուղեկցվում է միմյանց փոխկապակցված մի շարք դժվարություններով։ Աշակերտների դեպքում դա մասնագիտությունների վերաբերյալ ամբողջական տեղեկատվության բացակայությունն է(թերի լինելը) (35%), աշխատաշուկայի նորագույն պահանջների մասին իրազեկվածության պակասը(30%), իսկ մանկավարժական կոլեկտիվի անդամների համար՝ համապատասխան որակավորմամբ մասնագետների, մեթոդական ռեսուրսների անբավարարվածությունը (30%)։ Մենք գտնում ենք, որ աշակերտների կողմից նշված բոլոր դժվարությունները կարող էին չլինել մասնագիտական ճիշտ կազմակերպված աշխատանքի դեպքում։

8. Հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսումնական պլաններով կամ այլ ծրագրերով մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ գրեթե նախատեսված չեն, որի պատճառն առաջին հերթին օրենսդրական դաշտի հակասությունները, բաղթողումներն են, որոնք քաջ գիտակցվում են հետազոտության բոլոր մասնակիցների կողմից(100%)։

9. Հանրակրթական ուսումնական հաստատություններում կազմակերպվում են մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ, սակայն այդ աշխատանքները կրում են ոչ համակարգված, տարերային բնույթ, ինչի դրսևորումներից մեկը առկա հակասություններն են, օրինակ այն, որ հետազոտության մանկավարժական կոլեկտիվի անդամների մեծամասնությունը որպես մասնագիտական կողմնորոշման աշխատանք ներկայացնում է մասնագիտությունների մասին տեղեկատվության տրամադրումը (45%), որը չի համընկնում աշակերտների հետ իրականցված հետազոտության արդյունքների հետ, իսկ մյուս կողմից այն դիտարկվում է որպես ակնառու դժվարություն, բաց խոչընդոտ աշակերտների կողմից (35%)։

10. Մանկավարժական կոլեկտիվի բոլոր անդամները քաջ գիտակցում և կարևորում են մասնագիտական կողմնորոշման աշխատանքներում շահագրգիռ բոլոր կողմերի ակտիվ մասնակցությունը, սակայն, միևնույն ժամանակ, առկա, իրականացվելիք գործընթացներին մասնակցում են դպրոցի միայն մի քանի մասնագետ։ Բացակայում է միջգերատեսչական համագործակցությունը։ Այնպիսի կարևորագույն օղակներ՝ ինչպիսին են ծնողական կոմիտեն, ՏԻՄ ներկայացուցիչը, Համայնքի

գործատուները, դպրոցին կից Ենթաշեֆ զորամասը, մանկավարժական կոլեկտիվից՝ Մասնագիտական կրթական աջակցությունների գծով տեղակալը (որն, ըստ Հայեցակարգի պետք է կազմակերպի ՄԿ աշխատանքները), Դաստիրակչական աշխատանքների կազմաերպիչը, գրադարանավարը, բուժաշխատողը, չեն մասնակցում մասնագիտական կողմնորոշման աշխատանքներին: Իսկ մյուս մասնագետները՝ հոգեբան, սոցիալական մանկավարժ, որոնք ևս կարևորագույն գործառույթ ունեն մասնագիտական կողմնորոշման աշխատանքներում ցուցաբերում են պակաս մասնակցություն:

11. Մասնագիտական կողմնորոշման աշխատանքներում շարունակում է գերակշռել դասղեկների կողմից իրականացվող աշխատանքը: Այդ գործառույթը որպես պաշտոնային պարտականություն ունեցող մասնագետները՝ սոցիալական մանկավարժը, ՄԿԱ տեղակալները գրեթե չեն իրականացնում համապատասխան աշխատանքներ:

12. Մասնագիտության ընտրության հարցում շարունակվում է աշակերտների կողմից ինքնօգնությունը, ինչը կարող է ունենալ և դրական, և բացասական բովանդակություն Մի կողմից սա խոսում է աշակերտների ինքուրույնության, իր կյանքի կարևորագույն հարցերում որոշում կայացնելու անձնական պատասխանատվության, մյուս կողմից այն մասին, որ ցուցանիշը կարող է լինել մասնագիտական աշխատանքի հնարավոր բացթողումների հետևանք:

13. Առկա դժվարությունները, հակասությունները մասնագիտական կողմնորոշման գործընթացի միասնական համակարգի բացակության պատճառ են: Հետազոտությունները ևս մեկ անգամ փաստեցին, որ մասնագիտական կողմնորոշման արդյունավետ իրագործման համար անհրաժեշտ է համագործակցային մոտեցում: Այդ նպատակով անհրաժեշտ է ներդնել «Մասնագիտական կողմնորոշման ներդպրոցական կառավարման մոդել», որում մասնագիտական կողմնորշման գործընթացի մեջտեղում կլինի աշակերտը՝ իր ընդունակություններով, հետաքրքրություններով, հակումներով ու պահանջմունքներով, և բոլոր այն անձինք, որոնք կոչված են օգնելու նրան: Այս մոդելը հնարավորություն կտա հստակեցնել մասնակից յուրաքանչուր կողմի՝ տնօրենի, մասնագիտական կրթական աջակցության գծով տեղակալի, Դասղեկի, Տարրական դասարանների ուսուցչի, Առարկայական ուսուցիչների, Սոցիալական մանկավարժի, Դպրոցի հոգեբանի, գրադարանավարի, բուժաշխատողի, Ծնողական կոմիտեի, ՏԻՄ ներկայացուցչի, Համայնքի գործատուների, Ենթաշեֆ զորամասի գործառույթները ու պարտականությունները:

Իհարկե, Մասնագիտական կողմնորոշումը մեծ ներուժ, ռեսուրսներ պահանջող գործընթաց է, որի արդյունավետությունը պայմանավորված է մի շարք գործոններով: Սակայն, մենք գտնում ենք, որ միայն համագործակցային, միասնական համակարգված ճիշտ աշխատանքի շնորհիվ մենք կարող են օգնել աշակերտներին կատարել իրենց կյանքում ամենակարևոր որոշումներից մեկը, որոշում, որը էապես նշանակություն ու ազդեցություն ունի ինչպես հենց այդ աշակերտի, այնպես էլ հասարակություն ու մարդկության համար:

Գրականություն

1. «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, 1999թ.
2. «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, 2009թ.
3. **Հայաստանի Հանրապետության ընդհանուր ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների նկարագրեր, ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N 1391-Ն որոշում**
4. Կրթության զարգացման պետական ծրագիր 2011-2015թթ: 2007թ. փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» ՆՀ-37-Ն հրամանագրի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. հոկտեմբերի 30-ի «Կայուն զարգացման ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1207-Ն որոշման հիմնադրույթներին համապատասխան
5. ՀՀ Մասնագիտական կողմնորոշման համակարգի զարգացման հայեցակարգ, 2012թ.
6. ՀՀ երիտասարդական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարության
7. «Հանրակրթական հաստատություններում մասնագիտական կողմնորոշման աշխատանքների արդյունավետությունը գնահատող սոցիոլոգիական հետազոտություն». ՀՀ Աշխատանքի եվ Սոցիալական հարցերի նախարարության Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն, Եր., 2017թ.

ՀՏԴ 159.9(78:-05)

Հոգեբանություն

Ժաննա Թերլեմեզյան
Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, մագիստրատուրա 1-ին կուրս
janulya7@mail.ru

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ՎՐԱ

Այսպիսով, երաժշտությունն իր ազդեցությունն ունի ընկալման, հույզերի, զգացմունքների, հիշողության, տրամադրության, նյարդային համակարգի վրա: Այնուամենայնիվ այն մարդկային գործունեության ամենակախարդիչ ու ամենամոգական ոլորտն է, ինչի արդյունքում էլ ունի այսքան մեծ ազդեցություն:

Երաժշտությունը միջնորդ է հոգեկան ու զգայական կյանքի միջև, ուստի անհրաժեշտ է ավելի լուրջ վերաբերվել բնության և մարդկության այս հիասքանչ երևույթին, լսել ճիշտ երաժշտություն ու նույնը մատուցել մեր ապագա սերունդներին: Անհրաժեշտ է երաժշտության միջոցով գտնել ինքներս մեզ և միայն այդ ժամանակ երաժշտությունը կձուլվի մեր էության մեջ՝ գտնելով իր տեղն ու նշանակությունը:

Բանալի բառեր *- երաժշտություն, ազդեցություն, մարդ, երաժշտաթերապիա, օրգանիզմ, ուսումնասիրություններ, առողջություն.*

Жанна Терлемезян
АГПУ, магистратура 1-ый курс
janulya7@mail.ru

ВЛИЯНИЕ МУЗЫКИ НА ЧЕЛОВЕКА

Таким образом, музыка оказивает влияние на восприятие, эмоции, чувства, память, настроение и на нервную систему. Однако зто самая волшебная и магическая сфера человеческой деятельности, в результате которого имеет такое большое влияние.

Музыка является посредником между духовным и чувственной жизнью, так что нужно, более серьезно относиться этому удивительному явлению природы и человечества, просто слушать правильную музыку и то же самое предлогать нашми будущим поколениям. Нам нужно найти себя через музыку, а только тогда музыка будет ассимилироваться в наше существо, чтобы найти свое место и значение.

Ключевые слова *- музыка, влияние, человек, музыкальная терапия, организм, исследования, здоровье.*

Janna Terlemezyan
ASPU, Master's degree 1st year
janulya7@mail.ru

THE INFLUENCE OF MUSIC ON HUMAN

Thus, music influences perception, emotions, feelings, memory, mood and the nervous system. However, this is the most magical and the urgical sphere of human activity, as a result of which it has such a great influence.

Music is the mediator between spiritual and sensual life, so it's necessary to take this amazing phenomenon of nature and humanity more seriously, just listen to the right music and the same to offer to our future generations. We need to find ourselves through music, and only then the music will be assimilated into our essence in order to find its place and meaning.

Key words *- music, influence, person, music therapy, organism, research, health.*

Երաժշտությունը մի յուրահատուկ լեզու է, որը շրջապատի համար մատչելի է դարձնում մարդու ներքին ապրումները, այն դարձնում է «լսելի»: Երաժշտարվեստն իր զարգացման պատմության ընթացքում անցել է բարդ և հակասական ուղի, ունեցել է ծաղկման և անկման, աստիճանական զարգացման և արմատական բեկումների փուլեր: Հնագույն ժամանակներից ի վեր երաժշտությունը եղել է մարդու կյանքի անբաժանելի մասնիկը: Այն ուղեկցել է մարդկանց թե՛ ուրախության, և թե՛ տխրության պահերին՝ արտացոլելով շրջապատող օբյեկտիվ աշխարհն իր անկրկնելի բազմազանության մեջ: Առանց երաժշտության անհնար է պատկերացնել մեր կյանքը:

Կախված ձայնային տատանումների հաճախականությունից, ծավալից, ռիթմից և հարմոնիայից, երաժշտությունը կարող է դրական, կամ բացասական ազդել մարդու վրա: Իսկ թե ինչ ազդեցություն կարող է ունենալ երաժշտությունը մարդու հոգեկան աշխարհի վրա, հայտնի էր վաղ ժամանակներից:

Բոլոր հույն փիլիսոփաները մեծ հետաքրքրություն էին տածում երաժշտության հանդեպ, քանի որ երաժշտությունը համարվում էր փիլիսոփայության մի մասը: Արիստոտելը նույնպես գտնում էր, որ երաժշտության միջոցով հնարավոր է ազդել անձի ձևավորման վրա: Պյութագորասը համարվում է առաջիններից մեկը, ով ցույց տվեց երաժշտության դերը և ազդեցությունը մարդու վրա: Նա մաթեմատիկայի իր պարապմունքներն անց էր կացնում հենց երաժշտության ուղեկցությամբ, քանզի համոզված էր, որ վերջինս դրական է ազդում ինտելեկտի վրա:

Հին հույների համար երաժշտությունը դաստիարակության յուրահատուկ մեթոդ էր, որն առաջին հերթին համարվում էր դրդող, ակտիվացնող երևույթ, ապա նոր միայն հանգստի և զվարճանքի միջոց: Այն օգնում և թեթևացնում էր կյանքը, ակտիվացնում նրանց ռազմական պարապմունքների ու մրցումների ժամանակ:

Մեսրոպ Մաշտոցի աշակերտ՝ հինգերորդ դարի փիլիսոփա-երաժիշտ Դավիթ Անհաղթը գտնում էր, որ «կա երաժշտություն, որ մաքրում, ձևավորում և առաջ է մղում մարդկային հոգու և մտքի սլացքը և, ընդհակառակը, երաժշտություն, որ իջեցնում է բնազդային մակարդակի, մթագնում սրտի և մտքի պայծառությունը և ի վերջո խաթարում, աղճատում և կործանում այն առողջն ու գեղեցիկը, որ դրված էր ի սկզբանէ մարդկային հոգու մեջ» [1]:

Միջնադարի գիտակ և բժիշկ Ավիցեննան երաժշտության միջոցով բուժում էր հոգեկան հիվանդներին, Հիպոկրատը՝ անքնությամբ և էպիլեպսիայով տառապողներին, Էսկուլապը՝ հուզական խանգարումներ ունեցողներին, իսկ Հալենը խորհուրդ էր տալիս այն օգտագործել որպես օձի կծածի դեմ հակաթույն: Հին Չինաստանում էլ բժիշկները կարծում էին, որ երաժշտությամբ կարելի է բուժել ցանկացած հիվանդություն, նրանք անգամ երաժշտական դեղատոմսեր էին դուրս գրում այս կամ այն հիվանդ օրգանի համար: Դեռևս Ք. ա. 3-րդ դարում Պարթևական տերության մեջ գոյություն ուներ հատուկ երաժշտական-բժշկական կենտրոն:

Հնագույն աշխարհի գիտնականների տեսության համաձայն, երաժշտությունն ունի դրսևորման երեք ձև՝ երգեցողություն, որևէ երաժշտական գործիքի նվագակցություն, պար: Հավանաբար կհարցնեք. «Այս երեքից ո՞րն է առավելապես ազդում մարդու հոգևոր դաստիարակության վրա»: Ինայատ Խանը տալիս է սրա պատասխանը. «Երգեցողության ուժն ավելի կախարդիչ է, որովհետև այն կենդանի է: Երգի մեջ կա ձայն: Ձայնը ինքը կյանք է»[2]: Նա գտնում է, որ ամեն ինչի հիմքում կյանքն է, իսկ կյանքի հիմքում ընկած է շնչառությունը: Իսկ ի՞նչ է ձայնը, հնչյունը, եթե ոչ շնչառության արտաքին դրսևորում: Դժվար չէ հասկանալ, որ մի ձայնը տարբերվում է մյուսից, որ ձայնն ունի հոգեբանական արժեք, և որ ամեն ձայն ունի ազդեցության յուրահատուկ ուժ, որոնք էլ առավելապես դրսևորվում են խոսակցության ու հատկապես՝ երգերի մեջ: Երաժշտությունը, երգը կարող է ազդել ու բուժել, եթե դրա մեջ կյաքն կա:

Սակայն երաժշտության միջոցով կարելի է նաև սպանել մարդուն: Արևմուտքում գոյություն ուներ մահապատժի մի տեսակ, որն իրականացվում էր առանց ընդհատումների, բարձր, աններդաշնակ երաժշտության միջոցով: Այն ճնշում և քայքայում էր օրգանիզմը՝ ազդելով քնի վրա: Արդյունքում՝ մարդը հասնում էր խելագարության և մահանում:

Հայտնի է, որ օրգանիզմի վրա ուժեղ ազդեցություն ունի դասական և ժողովրդական երաժշտությունը: Իսկ հոգևոր, մասնավարապես՝ եկեղեցական երաժշտությունը, վերականգնում է հոգեկան հավասարակշռվածությունը, տալիս է հանգստության զգացողություն:

Ժամանակակից գիտնականներն ապացուցել են, որ երաժշտությունը անմիջականորեն ազդում է մարդու, կենդանիների և բույսերի վրա: Երաժշտության որոշ տեսակներ կարող են վերականգնել մարդու իմունային համակարգը, նյութափոխանակությունը և ամրացնել դիմադրողականությունը: Պատահական չէ, որ ժամանակակից բժշկությունում մեծ տարածում է գտնում երաժշտաթերապիան: Խոսքը մարդու առողջության վերականգնման մասին է երաժշտության օգնությամբ:

Հետաքրքրական է, որ ըստ ուսումնասիրությունների յուրաքանչյուր երաժշտական գործիք յուրահատուկ ձևով է ազդում մարդու վրա: Բժիշկները նշում են, որ լարային գործիքները ամենաշատ

[1] https://marinemkrtchyan.wordpress.com - «Դավիթ Անհաղթը՝ երաժշտության մասին»

[2] http://blog.liberal.am/ - Շուշան Շատիկյան - «Երաժշտության հոգեբանական ազդեցությունը անձի վրա»

արդյունավետություն ունեն սրտի հիվանդությունների դեպքում: Կլառնետի հնչյունները լավացնում են արյան շրջանառությունը, ֆլեյտան ազդում է թոքերի գործունեության վրա, փողային գործիքները դրական են ռադիկուլիտով հիվանդների համար: Բայց երաժշտական գործիքների շարքում կարելի է առանձնացնել առաջատարին՝ մարդու վիճակի վրա ազդելու տեսանկյունից. դա երգեհոնն է:

Կոնկրետ նոտաներն ազդում են կոնկրետ օրգանների վրա[1].

* ձայնային հաճախականությունը, որ համապատասխանում է դո նոտային, ազդում է առավելապես ստամոքսի և ենթաստամոքսային գեղձի ֆունկցիաների վրա.
* ռե- լեղապարկի և լյարդի վրա.
* մի- տեսողական և լսողական օրգանների վրա.
* ֆա – միզասեռական համակարգի վրա.
* սոլ – սրտի ֆունկցիայի վրա.
* լյա – թոքերի և երիկամների վրա.
* սի – էներգափոխանակության ֆունկցիայի վրա՝ տաքացնելով մարմինը:

Իսկ ինչպե՞ս է մարդն ընկալում երաժշտությունը և ի՞նչ է տեղի ունենում գլխուղեղում: Հայտնի է, որ երաժշտությունը մշակվում է մարդու ուղեղի աջ կիսագնդում: Երաժշտության տատանումներն առաջին հերթին ընկալվում են լսողական ապարատի միջոցով, որից հետո այդ տատանումները փոխանցվում են ուղեղում գտնվող համապատասխան կենտրոններ: Երաժշտության տատանումները մարդն ընդունակ է ընկալել նաև ողջ մարմնով: Խուլ ու համր մարդիկ երաժշտության տատանումները մարմնի միջոցով են ընկալում: Ուղեղը, ստանալով այդ տատանումները, ազդակներ է ուղարկում օրգաններին: Յուրաքանչյուր օրգան աշխատում է իրեն համապատասխան կենսառիթմով, երբ օրգանները ազդակներ են ստանում ուղեղից, նրանց աշխատանքն ակտիվանում կամ թուլանում է: Եթե երաժշտությունն արագ ռիթմ ունի, ապա օրգանի աշխատանքն ակտիվանում է, իսկ դանդաղ ռիթմ ունեցող երաժշտությունն ունենում է հակառակ ազդեցություն: Երաժշտությունն անմիջականորեն ազդում է մեր հույզերի վրա, իսկ հույզերը կարող են հաղթահարել նույնիսկ ֆիզիկական ցավը:

Երաժշտությունը մեծ ազդեցություն ունի դեռևս չծնված երեխայի զարգացման վրա: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 26-30 շաբաթական պտուղն արդեն սկսում է արձագանքել ձայներին, երաժշտությանը: Պարզվել է, որ հղիության ընթացքում, երաժշտություն լսած ծնողի երեխաները ծնվելուց հետո ավելի արագ և հեշտությամբ են հաղթահարել շատ խնդիրներ: Պտուղը երաժշտությանն արձագանքում է սրտի աշխատանքի և շարժումների միջոցով: Կան մի շարք ժանրեր, որոնց երեխան արձագանքում է անկախ մոր հույզերից: Պտղի դրական զարգացման վրա մեծ ազդեցություն ունեն դասական երաժշտությունն ու ազգային երգերը:

Մեր մկանները, նյարդային համակարգը, ընդունակ են յուրացնելու ռիթմը: Երաժշտությունը՝ որպես ռիթմիկ գրգռիչ, խթանում է շարժողական և վեգետատիվ ոլորտներում օրգանիզմի ֆիզիոլոգիական գործնթացները:

Ընդհանրապես երաժշտական ստեղծագործություններին ուժեղ հուզական հակազդում են տալիս այն մարդիկ, ովքեր չունեն երաժշտական բարձրագույն կրթություն: Քանի որ մասնագիտական որակները, ինչ շեղում է մասնագետին, չի սպառնում ոչ մասնագետին: Երաժշտական գործերն ընկալելիս պետք է հաշվի առնել նաև ունկնդրողի նյարդային համակարգությունը: Հաճելի երաժշտությունը ուժեղ տիպի մարդկանց մոտ լավացնում է գործունեությունը և՛ լարված, և՛ հանգիստ իրավիճակներում: Իսկ թույլ տիպի մարդկանց մոտ հաճելի երաժշտությունը տանում է գործունեության արդյունավետության անկման:

Հանգիստ երաժշտությունը նորմալացնում է սրտամկանային համակարգի գործունեությունը, իսկ կտրուկ ձայնային անցումներով երաժշտությունը բարձրացնում է նրա ֆունկցիաները: Երաժշտական միջոցների խմբային կիրառումը նպաստում է միմյանց ավելի լավ հասկանալուն:

Դեռևս հնուց կուտակվել է ապացույցների մի ամբողջություն, որ երաժշտությունը էներգիայի հզոր աղբյուր է, որն ունի իր ազդեցությունը մարդկանց վրա: Երաժշտությունը զարգացնում է միտքը, ունակությունները և ինտելեկտը: Երաժշտությունը լավացնում է հիշողությունը: Այն երաժշտությունը, որը հնչում է ներդաշնակության օրենքներին համաձայն, իր դրական ազդեցությունն ունի մարդու առողջության վրա և ոչ միայն: Գիտնականները պարզել են, որ երաժշտությունը ներդաշնակեցնում է զգացմունքների աշխարհը, ավելացնում է էներգիան, երկարացնում է կյանքը: Այդպիսի ազդեցություն կարող է թողնել դասական երաժշտությունը: Մեծ երաժիշտները միշտ կապ են տեսել երաժշտության,

[1] http://life.panorama.am/ - Աշխեն Մկոյան - «Երաժշտության ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա»

հոգեկանի և ֆիզիկականի միջև: Հենդելը բազմիցս նշել է, որ իր երաժշտությամբ ուզում է ունկնդիրներին կախարդել և նրանց ավելի լավը դարձնել: Այն բերում է ոգեշնչում, մխիթարում է հիվանդներին, հանգստացնում է զայրույթը, մխիթարում է վիշտը՝ բերելով ուրախություն: Դասական երաժշտությունը յուրաքանչյուր մարդու ներքին աշխարհը դեպի լավը փոխվելու բարձրագույն արվեստ է:

Ուզբեկ գիտնական Միզակարիմ Նորբեկովն ասում է. «Առողջությունը կախված է մարդու օրգանիզմի էմոցիոնալ կենտրոնից»: Նա ընդգծում է՝ «Քաոսն աշխարհում չէ, այն մեր ներսում է, և հենց երաժշտությունն է, որ հաղթահարում է այդ քաոսը»:

Մենք գիտենք, որ երաժշտությունը մեզ վրա ազդում է արտաքին աշխարհից, իսկ ի՞նչ կարելի է ասել մեր ներսից դուրս եկող երաժշտության մասին: Այս առումով կարևոր են 20-րդ դարասկզբի հնդիկ երաժիշտ Հազրաթ Ինայատ Խանի ուսումնասիրությունները: Վերջինս իր «Հնչյունների միստիկա» գրքում բացահայտում է երաժշտության՝ մարդու վրա թողած հոգեբանական և վերականգնողական ազդեցությունը: Նա պնդում է՝ «Չկա հոգու կատարելության հասնելու ավելի լավ միջոց, քան երաժշտությունը» [1]:

Օգտագործված գրականության ցանկ

1. Մելիքսեթյան Գ. Պոլիֆոնիա: Ուսումնական ձեռնարկ – Երկրորդ վերամշակված հրատարակություն. – Եր. Գրական հայրենիք, 2012թ. – 78 էջ:
2. http://amda.am/ - «Երաժշտական թերապիա»
3. https://abisoghomyan.com - «Երաժշտության ազդեցությունը մարդու վրա.. »
4. http://blog.liberal.am/ - Շուշան Շատիկյան - «Երաժշտության հոգեբանական ազդեցությունը անձի վրա»
5. www.erkusov.com - «Երաժշտության ազդեցությունը ուղեղի վրա»
6. http://hogeban1.do.am/ - Օվսաննա Ադամյան - «Երաժշտության ազդեցությունը մարդու հոգեկանի վրա»
7. http://life.panorama.am/ - Աշխեն Մկոյան - «Երաժշտության ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա»
8. https://marinemkrtchyan.wordpress.com - «Դավիթ Անհաղթը՝ երաժշտության մասին»
9. http://syunikonline.am - «Երաժշտությունն առավել բարձր հայտնություն է, քան իմաստությունն ու փիլիսոփայությունը (Լյուդվիգ վան Բեթհովեն)»
10. http://www.bestreferat.ru/ - Иванова Татьяна - 'Влияние музыки на организм человека'

[1] http://blog.liberal.am/ - Շուշան Շատիկյան - «Երաժշտության հոգեբանական ազդեցությունը անձի վրա»

ՀՏԴ 159.9(343.6: 616.89)

Հոգեբանություն

Արմինե Սևումյան,
Արցախի պետական համալսարան (ԱրՊՀ),
Մանկավարժության և սպորտի ֆակուլտետ,
հոգեբանություն մագիստրատուրա 1 կուրս

ՄԱՆԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎ ԽԱՂԱԹԵՐԱՊԻԱՆ, ՈՐՊԵՍ, ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑ

Երեխայի հանդեպ բռնությունը համընդհանուր խնդիր է: Հոդվածում քննարկվում և բացահայտվում է ժամանակակից ընտանիքներում տիրող բռնության հիմնախնդիրը, երեխաների նկատմամբ բռնության պատճառ հանդիսացող գործոնները, դիտարկվում է բռնության ենթակա լինելու ռիսկի խնդիրը, շեշտվում է հուզական, սեռական, ֆիզիկական բռնության դրսևորումները մանկական տարիքում :

Բանալի բառեր. բռնություն, երեխա, ծնողներ, ռացիոնալիզացիա, հոգեախտաբանություն, խաղային թերապիա,արձագանքման թերապիա

Севумян Армине
Арцахский государственный университет (АрГУ)
Факультет педагогики и спорта ,
Психология 1-й Курс магистратры

ПРОБЛЕМА ТЕРАПИИ НАСИЛИЯ В КАК ОСНОВНЫЕ СРЕДСТВА ПСИХОЛОГИЧЕСКОЙ РАБОТЫ

Насилие в отношении ребенка является общей проблемой. В статье обсуждается и раскрывается проблема насилия в современных семьях, возбудителя насилия в отношении детей, кроме того, он наблюдает за проблемой риска насилия, подчеркивает эмоциональное, сексуальное, физическое выявление насилия в детском возрасте.

Ключевые слова: насилие, ребенок, родители, рационализация, психопатология, игровая терапия абреакционная терапия

Armine Sevumyan
Artsakh State University (ASU),
Faculty of Pedagogy and Sport,
Psychology mag.1 course

THE ISSUE OF VIOLENCE PLAY THERAPY AS BASIC MEANS OF PSYCHOLOGICAL WORK

The violence against a child is a general problem. The article discusses and reveals the problem of violence in modern families, the agent of violence against children, besides it observes the problem of risks in violence, it underlines emotive, sexual, physical detection of violence in childish age.

Keywords: Violence, child, parents, rationalization, psychopathology, game therapy abreaction therapy

Երեխաների նկատմամբ բռնության հիմնախնդիրը հատուկ է նաև մեր հասարակությանը: Չնայած մենք հաճախ փորձում ենք դրա վրա աչք փակել՝ կարծելով, որ մեզ մոտ երեխաների նկատմամբ բռնություններն ընդամենը պատահական երևույթներ են, այնուամենայնիվ, փաստերը հակառակն են ապացուցում: Ակնհայտորեն, մենք ճիշտ չենք պատկերացնում «բռնություն» հասկացության իմաստը, չենք տեսնում այդ երևույթի սահմանները, և հաճախ մեր դաժանությունը ռացիոնալիզացնում ենք՝ այն ներկայացնելով իբրև ավանդական դաստիարակություն: Սակայն հասարակության պատմությունը մեզ կանգնեցնում է՝ ինքներս մեզ կողքից նայելու և իրականությունը այնպիսին, ինչպիսին որ կա, ընդունելու անհրաժեշտության առջև:

Մեր հասարակությանը ևս հատուկ է երեխաների նկատմամբ բռնությունը, և այն գոյություն ունի գործնականում սոցիալականացման բոլոր ինստիտուտներում՝ ինչպես ընտանիքներում, որոնք նորմալ են ընդունվում, այնպես էլ դպրոցում և մանկական հիմնակություններում: Պարզապես, խոսելով բռնության մասին, մենք հակված ենք միայն նկատի ունենալ երեխային ֆիզիկական կամ սեռական վնաս պատճառելը: «Բռնություն» հասկացությունը բավականին լայն է և ընդգրկում է մեծ դիապազոն՝ սկսած անտարբերությունից, մինչև սպանությունը: Երեխայի նկատմամբ վերաբերմունքը հասարակության բարեկեցության ամենակարևոր ցուցիչն է, հասարակության բարոյական պատկերը: Ընդհանրապես,

ամեն մի կենդանի էակի նկատմամբ բռնությունն ինքնին անբարոյական է, իսկ երեխաների նկատմամբ բռնությունը արդեն խոսում է այն մասին, որ հասարակությունը իր մեջ դեռևս չի հաղթահարել սոցիալական վայրենության փուլը: Երեխաների նկատմամբ բռնությունը կրում է սոցիալական ժառանգականության բնույթ:

Որպես կանոն, այն մեծահասակներն են հակված երեխաների նկատմամբ բռնության, ովքեր իրենք ենթարկվել են դրան մանկության տարիներին: Ծնողները ծրագրավորում են երեխայի կյանքի սոցիալական սցենարը: Այսօր ոչ մեկի մոտ կասկած չի հարուցի այն փաստը, որ երեխաների նկատմամբ բռնության պատճառը կամ պաճառներից մեկը հենց ծնողների հոգեախտաբանությունն է: Հոգեպես առողջ մարդը իրեն թույլ չի տա երեխայի հուզական կամ ֆիզիկական անվտանգությունը ոտնձգության առարկա դարձնել: Երեխայի նկատմամբ բռնության խնդիրը, ըստ էության, մեծահասակների հոգեկան ախտաբանության խնդիր է: Նման մեծահասակը իր վիրավոր մանկության համար սկսում է վրեժխնդիր լինել հասարակությունից՝ փոխարինելով վրիժառության օբյեկտը իր կամ օտար երեխաներով:

Մանկական բռնության պատճառների մեկնաբանությունը պետք է ունենա ինտեգրատիվ բնույթ: Տարբեր մշակույթներում երեխայի ֆիզիկական պատիժը աստիճանաբար նորմայի է վերածվում կամ եղել է այդպիսին միշտ: Օրինակ՝ ծոծորակին տալը կամ գոտիով պատժելը համարվում են երեխայի դաստիարակության բնական մեթոդներ: Ավելին՝ շատ ծնողներ հավատացած են, որ ֆիզիկական պատժի մեջ բռնություն չկա, եթե դա օգտագործվում է որպես երեխային սոցիալական նորմեր և արժեքներ ներարկելու միջոց: Համոզմունքների տարածվածությունը, սակայն, դրանց ճշմարտացիության մասին չի խոսում: Ի դեպ, մեծ թվով ծնողներ հենց թողտվության այդ պատնեշի հետևում են թաքցնում իրենց ախտաբանական զծերը: Այս խնդիրը հատկապես սուր ձևով է դրսևորվում երիտասարդ, անփորձ ծնողների մոտ: Որպես կանոն, երիտասարդները ամուսնությանը պատրաստ են լինում միայն կենսաբանական ցուցանիշներով: Կենսաբանական հասունությունը, ցավոք, հոգեբանական հասունություն չի ենթադրում:

Երբեմն երեխաների նկատմամբ բռնությունը բացատրվում է կյանքի սոցիալ-տնտեսական պայմաններով, ընտանիքի ցածր նյութական ապահովությամբ: Ծնողները պետք է հասկանան մի շատ պարզ ճշմարտություն. ծանր նյութական պայմանների համար իրենց երեխաները մեղավոր չեն: Երիտասարդ, հատկապես ոչ լրիվ ընտանիքների կյանքի անբարենպաստ սոցիալական վիճակը պայմանավորված է սոցիալական օժանդակության, աշխատանքային տեղերի բացակայությամբ, սակայն ոչ երբեք երեխաների ծնունդով: Եթե բացառենք սոցիալական գործոնը՝ որպես բռնության պատճառ (բազմաթիվ նյութապես ապահովված ընտանիքներում էլ բռնությունը երեխաների նկատմամբ հաճախ երևույթ է), ապա հաջորդ գործոնը կարելի է դիտել ընտանեկան կյանքի դերային առանձնահատկությունը: Ընտանիքում անբավարար հուզական փոխհարաբերությունները, հույզերի դեֆիցիտը ևս կարող են երեխաների նկատմամբ բռնության պատճառ հանդիսանալ: Այն ընտանիքներում, որտեղ ամուսինների միջև կոնֆլիկտային հարաբերություններ գոյություն ունեն, նույնպես կարելի է սպասել բռնություն երեխաների նկատմամբ: Այսպես, եթե կինը ամուսնու կողմից ենթարկվում է բռնության, ապա նա, ամենայն հավանականությամբ, բռնություն կգործադրի երեխաների նկատմամբ:

Երեխաների նկատմամբ բռնություն ծնող ոչ պակաս կարևոր գործոն է ամուսինների սեքսուալ անբավարարվածությունը կամ նրանց միջև հուզական կապերի դեֆիցիտը: Որոշ հետազոտողներ գտնում են, որ երեխայի նկատմամբ մոր բռնության պատճառ կարող է հանդիսանալ հղիության ախտաբանական ընթացքը և ծանր ծնունդը: Բացի այդ, նվազ կարևոր գործոններ չեն ծնողական բանիմացության պակասը, ծնողական հմտությունների թերզարգացածությունը: Ինչ խոսք, երեխաների նկատմամբ բռնության կարևորագույն պատճառներից է նաև ծնողական պատասխանատվության ախտաբանությունը: Հենց վերջին ախտաբանությունն է, որ ծնողներին հնարավորություն է տալիս հեշտությամբ երեխային հանձնել մանկական հիմնարկություն և մոռանալ նրա մասին:

Դիտարկելով մանկական բռնության հիմնահարցը՝ չի կարելի աչքաթող անել նաև բռնության ենթակա լինելու ռիսկի խնդիրը: Ավելի պարզ ասած՝ ինչպիսի՞ երեխաներն են առավել հաճախ ծնողների կողմից բռնության ռիսկի ենթակա: Որքան էլ տարօրինակ և անընդունելի թվա, այնուամենայնիվ, բռնության ռիսկը մեծանում է հետևյալ դեպքերում.

- երբ երեխաները ունենում են ֆիզիկական թերություններ կամ հոգեկան խնդիրներ,
- անցանկալի հղիությունից ծնված երեխաները,
- բազմանդամ ընտանիքների երեխաները,
- բնածին կամ ձեռքբերովի արատներով երեխաները,

- փողոցային երեխաները,
- մանկական հիմնարկությունների երեխաները:

Ինչպե՞ս բացատրել այս օրինաչափությունը: Չէ՞ որ, եթե բարոյական սկզբունքներին հետևենք, հենց այդ երեխաները պետք է արժանանային առավելագույն բարեգթության, այնինչ իրականում ճիշտ հակառակն է: Մեծահասակների աշխարհը այդ խեղված մանկական ճակատագրերում սպառնալիք է տեսնում իր համար: Այդ դաժան վերաբերմունքի բացատրությունը թաքնված է անգիտակցական ապրումների խորքերում:

Զարգացման հոգեբանությունը առանձնացնում է երեխաների նկատմամբ բռնության մի քանի տեսակներ՝

- ֆիզիկական բռնություն,
- սեռական բռնություն,
- հոգեբանական կամ հոգեհուզական բռնություն,
- արհամարհանք:[1,196]

Չնայած որոշ դասակարգումներում առանձնացվում է նաև հուզական բռնությունը, այնուամենայնիվ, մենք կարծում ենք, որ ցանկացած հուզական բռնություն հոգեբանական է, և նպատակահարմար ենք գտնում դրանք միավորել մեկ տեսակի մեջ: Ֆիզիկական բռնությունը երեխայի նկատմամբ ցանկացած գործողություն է, որի նպատակը ֆիզիկական ցավ պատճառելն է: Այդ գործողությունները կարող են լինել ինչպես գիտակցված, այնպես էլ չգիտակցված: Ուստի ֆիզիկական բռնությունը սահմանելիս չի կարելի սահմանափակվել միայն գիտակցված մոտիվներով: Ավելի խիստ ասած՝ մեծահասակի կողմից գիտակցված կամ պատահաբար երեխային պատճառված ցանկացած ֆիզիկական ցավը իրենից բռնություն է ներկայացնում:

Սեռական բռնությունը մեծահասակի կողմից գաղտնի կամ բացահայտ ճանապարհով երեխային օգտագործելն է իր սեռական ցանկությունները բավարարելու նպատակով: Սեռական բռնությունը չի սահմանափակվում միայն սեռական ակտով կամ բռնաբարությամբ. դրա մեջ մտնում է սեռական հաճույք ստանալուն ուղղված ցանկացած գործողություն, այդ թվում՝ մերկ մարմինը դիտելը, ձեռք զցելը և այլն:

Արհամարհանքը ևս բռնության տեսակ է, որի դեպքում չի ապահովվում երեխայի հոգեբանական և ֆիզիոլոգիական հիմնական պահանջմունքների բավարարումը:

Հոգեհուզական բռնությունն ունի բավականին լայն դիապազոն՝ սկսած ծաղրից, նվաստացումից և վիրավորանքներից, մինչև երեխային հոգեմարմնային խանգարումների հոգեվիճակի հասցնելը:

Որպես կանոն, երեխան տառապում է միաժամանակ բռնության մի քանի տեսակից, ուստի բռնության հիշյալ տեսակները ճիշտ չէ իրարից անկախ դիտարկելը: Ցանկացած ֆիզիկական բռնություն միաժամանակ հոգեհուզական է հանդիսանում: Երեխայի նկատմամբ բռնության դրամատիզմը նրանում է, որ երեխան ի ծնե հուզական կապվածություն է ապրում իր ծնողի հետ: Երեխան ծնողներին ընդունում է իբրև սեփական հոգեբանական և ֆիզիկական անվտանգության աղբյուր, և երեխայի հենց այդ զգացմունքն է, որ մեծահասակների կողմից հանցավոր ձևով ենթարկվում է բռնության: Քայքայելով երեխայի կապվածության զգացողությունը՝ ծնողները կամ նրանց փոխարինող անձինք աննախադեպ բռնություն են իրականացնում վերջինիս նկատմամբ: Նրանք երեխային թողնում են իր ապրումների հետ միայնակ: Հուզական անվտանգության զգացողության քայքայումը, ըստ էության, բռնություն է նրա ֆիզիկական և հոգեկան առողջության դեմ:

Որպես կանոն, մեծահասակների կողմից բռնության ենթարկված երեխաները չեն նայում աչքերի մեջ, նրանք թեքում են հայացքը, քանի որ վախենում են մեծահասակի դեմքին չարություն տեսնել և լսել սպառնալիքներ: Հուզական բռնության կամ արհամարհանքի իրավիճակում հայտնված երեխաների հակազդեցությունները տարբեր են լինում: 3-ից 6-7 տարեկան երեխաներն ինքնամփոփ են դառնում, փորձում են մեկուսանալ մեծահասակներից, առուտիկ կենսակերպ են վարում: Ծնողական արհամարհանքի և երեխայի նկատմամբ ագրեսիայի հետևանքով վերջինիս մոտ ընդհանուր առմամբ շրջակա աշխարհի նկատմամբ անվստահություն է ձևավորվում: Երեխան պարզապես փոխանցում է իր այդ վերաբերմունքը մեծահասակների աշխարհի նկատմամբ այն պարզ պատճառով, որ ծնողները ներկայացնում են այդ աշխարհը: Երեխայի միտքը կարծես արդարացված է. եթե ծնողները չեն սիրում իրենց իսկ երեխային, ապա ուրիշ մեծահասակների աշխարհը իրենից իրական վտանգ է ներկայացնում, ուստի այդ աշխարհից պաշտպանվելու ամենապարզ և լավագույն միջոցը դառնում է փախուստը, մեկուսացումը նրանից: Չստանալով ծնողական սեր՝ երեխան սառեցնում է իր զգացմունքները. նա

նախընտրում է մեկուսացումն ու օտարացումը: Մանկական այս օտարացումը հետագայում՝ տարիքի հետ, դառնալու է չզարգացած էմպաթիայի, ինչպես նաև վարքում ապասոցիալական դիրքորոշումների ձևավորման պատճառ: Հուզական բռնությունը շոշափում է երեխայի ոչ միայն հոգեկան, այլև մարմնային ոլորտը: Բռնության ենթարկվող երեխաները, որպես կանոն, տառապում են և՝ ցերեկային, և՝ գիշերային էնուրեզով, գլխացավով, որովայնի և սրտի շրջանի ցավերով:

Ծնողների վարքի մոդելները, որպես կանոն, առանց քննադատական վերաբերմունքի ընդօրինակվում են նրանց երեխաների կողմից: Նման դաժան վերաբերմունքի հետևանքների հաջորդ տարբերակը կարող է լինել երեխայի դեպրեսիվ բնավորության զարգացումը: Հակազդեցությունը կարող է դրսևորվել երկու ուղղությամբ՝ կա՛մ դեպի ներս, կա՛մ դեպի դուրս: Իհարկե, չի բացառվում նաև երեխայի հոգեբանական ճակատագրի զարգացման երրորդ տարբերակը, որը հաճախ բնորոշում են որպես «կյանք՝ ի հեճուկս ծնողների»: Իհարկե, չնայած որոշակի դրական կողմին՝ սա ևս զարգացման լիարժեք ուղի չէ: Երեխաների նկատմամբ բռնության հարցում պակաս կարևոր չէ սոցիալական ենթատեքստի դերը: Զարգացման հոգեբանությունը առանձնացնում է ընտանիքների մի քանի տիպ, որոնցում երեխաների նկատմամբ բռնությունը առավել հավանական է: Դրանք են՝

- ոչ լրիվ ընտանիքները,
- ավտորիտար ընտանիքները,
- կոնֆլիկտային ընտանիքները,
- բռնության հանդեպ գենետիկական նախահակվածություն ունեցող ընտանիքները:[1,200]

ԱՀ տարածքում անց է կացվել «Երեխայի հանդեպ բռնության վերաբերյալ» հետազոտություն, որն նպատակ ուներ վերլուծել Արցախում երեխաների նկատմամբ կիրառվող բռնության տարածվածության աստիճանը, տեսակները, դրանց պատճառներն ու հետևանքները: Հետազոտությունն անց է կացվել ք. Ստեփանակերտում՝ ինչպես նաև որոշ շրջաններում՝ առնվազն մեկ անչափահաս երեխա ունեցող 125 ընտանիքներում:

Հետազոտության մասնակիցների 38%-ը համարում է, որ մեր հասարակության մեջ երեխաների նկատմամբ բռնությունն այն խնդիրներից է, որը հրատապ լուծում է պահանջում: Հարցվածների 62%-ը համարում է, որ ընտանիքներում առավել տարածված է ֆիզիկական բռնությունը և/կամ ֆիզիկական պատիժը, 43%-ը նշել է հոգեբանական բռնությունը, 37%՝ անտեսումը, 2%-ը՝ սեռական բռնությունը և միայն 11%-ը ասել է, որ ոչ մի բռնության տեսակ էլ տարածված չէ: Հետազոտության մասնակիցները, որպես երեխայի նկատմամբ բռնություն, նշել են՝ երեխային ապտակելը, հրմշտելը (96%)ծեծելը, տարբեր առարկաներով հարվածելը (89%), մյուս ծնողի հետ շփումը արգելելը (78%), մութ սենյակում փակելը (75%), երեխային սպառնալը կամ ահաբեկելը (68%), հարազատի կամ ընկերների հետ շփումը արգելելը (54%), երեխայի արտաքին տեսքը, պահվածքը, մտավոր ունակությունները անընդհատ քննադատելը (47%), երեխային ծաղրելը և/կամ վիրավորելը (25%), քաղցած թողնելը կամ չկերակրելը (7%), անտեսելը (առանց ուշադրության և խնամքի թողնելը) և երեխային աշխատել ստիպելը (13%), հարցվածների 36%–ը փաստել են նաև, որ իրենց երեխաներն ընտանիքում երբեմն ենթարկվում են բռնության, հիմնականում՝ ֆիզիկական բռնության և/կամ ֆիզիկական պատժի (89%), հոգեբանական բռնության (54%), անտեսման (8%): Ի դեպ, 82 %-ը մոր կողմից, 47%-ը՝ հոր կողմից: Որպես բռնության հիմնական պատճառներ հարցվողները առաջին հերթին նշել են ընտանիքում ճգնաժամային իրավիճակի առկայությունը (ծնողների ամուսնալուծություն, մարդկային կորուստ, ընտանիքում մշտապես կոնֆլիկտային մթնոլորտի առկայություն)՝ 76%, ընտանիքում վատ սովորույթների առկայությունը (հարբեցողություն, թմրամոլություն, խաղամոլություն)՝ 34%, բռնություն կիրառողի հոգեկան կամ մտավոր հիվադությունների առկայությունը՝ 8%:

Կարևորվել է նաև ԶԼՄ-ների կամ համացանցի միջոցով ներկայացվող (բռնության տեսարաններ պարունակող) նյութերը՝ 36%: Հետազոտության համաձայն՝ երեխաների 27%-ը շրջապատի կողմից ենթարկվում է բռնության, որոնցից 79%-ը՝ ֆիզիկական բնույթի, 41%-ը՝ հոգեբանական: Երեխաներն ընտանիքից դուրս շրջապատում բռնության են ենթարկվել հիմնականում հասակակիցների կողմից (92%), ուսուցիչների կողմից (27%), դայակների ու դաստիարկների կողմից (45%):Հետազոտության մասնակիցները որպես բռնության երևույթի կանխարգելման արդյունավետ միջոցներ նշել են՝ տևական (մասնագիտական) աշխատանք ընտանիքների հետ (97%), տևական (մասնագիտական) աշխատանք դպրոցներում (75%), հասարակության մոտեցումների և հասարակական կարծրատիպերի փոփոխություն (27%):

Կարևոր է նկատի ունենալ, որ ընտանեկան բռնությունները բացահայտելն ու տիպերը գնահատելը բավականին բարդ խնդիր է նույնիսկ բռնությունների առկայության դեպքում. հարցման մասնակիցները գերադասում են կամ չխոսել դրա մասին կամ պարզապես արձանագրել ընտանիքում բռնությունների բացակայությունը: Իրականացված հետազոտության երեխաների նկատմամբ կիրառվող ֆիզիկական բռնությունը ավելի բարձր տոկոս է կազմում դպրոցում: Ընտանիքից դուրս հանրակրթական, հատկապես, հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում երեխաների նկատմամբ կիրառվում են տարբեր տեսակի չարաշահումներ, որոնց մեջ գերակշռում են հոգեբանական և ֆիզիկական բռնության ձևերը: Այսպիսով, ինչպես ընտանիքներում, այնպես էլ կրթական, խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում կիրառվում են երեխայի հանդեպ բռնության տարբեր տիպեր:

Բռնության իրավիճակում հայտնված երեխաների հետ հոգեթերապևտիկ աշխատանքում կարևոր տեղ ենք հատկացրել խաղաթերապիային: Ինչպես գիտենք, խաղաթերապիան ունի մի քանի ուղղություններ <<հոգեվերլուծական, արձագանքման, հարաբերությունների ստեղծման,ֆանտաստիկ խաղաթերապիա>>, որոնք ունեն թերապևտիկ մասնագետի օգտագործման հիմնավորումն ու հատկանիշները:

Խաղաթերապիա անվանվում է երեխաների հուզական և վարքային խանգարումների բուժման կամ ուղղման այն մեթոդը, որի հիմքում ընկած է երեխային բնորոշ փոխներգործությունը աշխարհի շուրջ որպես մի խաղ: Խաղաթերապիայի հիմնական նպատակն է օգնել երեխային արտահայտել իր մտքերը,ապրումները,առավել ընդունելի նրա համար ձևով՝ խաղի միջոցով,ինչպես նաև ցույց տալ ստեղծագործական գործունեությունը որպես մոտիվ կյանքի դժվարին իրավիճակներում, որոնք հաղթահարված կամ ձևավորված են խաղի ընթացքում: Այս մեթոդաբանական մոտեցումը առավել արդյունավետներից մեկն է և լայնորեն օգտագործվում է երեխաների հետ աշխատելու ժամանակ, ովքեր վերապրել են բռնություն, ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հոգեբանահասարակական պրակտիկայում: Երեխաների՝ բռնության զոհերի հետ, թերապևտիկ աշխատանքի ընթացքում, հատկապես կարևոր է դառնում խաղասենյակում << որպես խաղաթերապիայի գրասենյակ>> սարքավորումները:

Խաղաթերապիայի գործընթացը ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ տարբեր տեսակի խաղային նյութեր և խաղալիքներ: Դրանք կարող են լինել իրատեսական խաղալիքներ՝ տիկնիկային ընտանիք, տիկնիկի տուն կահույք, ավտոմեքենաներ, դրամարկղ, հեռախոս, ծառեր, երկաթգիծ, կենդանիներ, խաղալիքներ և նյութեր որոնք կօգնեն արձագանքելու բացասական զգացմունքները՝հեքիաթներ, զենք, գիշատիչներ, բազմազան փափուկ բարձեր, նյութեր, որոնք նպաստում են երեխաների ստեղծագործական ինքնաարտահայտմանը և թեթևացնում հուզական սթրեսը՝ տարբեր խորանարդիկներ, դիզայներական իրեր ու խճանկարներ, կավ, ներկեր և վրձիններ, թուղթ, մկրատ և սոսինձ, ավազ, ջուր, գործվածքներ, դիմակներ, կեղծամներ և թատերական կոստյումներ, երաժշտական գործիքներ, տիկնիկային թատրոնին վերաբերվող ֆիգուրներ:

Երեխայի խաղին հետևելը և դրանում մասնակցությունը հնարավորություն է տալիս հասկանալ՝ ինչ-պես է նա ճանաչում աշխարհը: Խաղը երեխայի համար լուրջ, իմաստալից զբաղմունք է, որը նպաստում է նրա ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական զարգացմանը: Խաղի համեմատաբար անվտանգ միջավայրում, անկաշկանդության վիճակում երեխան իրեն թույլ է տալիս փորձել վարքի տարբեր եղանակներ: Բացի այդ, խաղը երեխայի հայեցողությանը սիմվոլներ է տրամադրում, որոնք նրա համար փոխարինում են բառերին: Երեխայի կյանքի փորձը շատ ավելի մեծ է, քան նա կարող է արտահայտել բառերով, ուստի նա խաղը օգտագործում է, որպեսզի արտահայտի և ասսիմիլացնի այն, ինչը ապրում է: Խաղը երեխայի համար միաժամանակ ինքնաթերապիայի միջոց է, որի շնորհիվ կարող են կարգավորվել տարբեր կոնֆլիկտներ և գժտություններ[2,13]:

Արձագանքման թերապիաների հիմնադիր Դևիդ Լևին առաջարկում էր. <<որ խաղային թերապիան պետք է ներառի 3 փուլ. առաջին փուլ՝ շփման հաստատում. ներառում է երեխայի ազատ խաղը, նրա ծանոթացումը խաղային սենյակի և հոգեթերապևտի հետ: Երկրորդ փուլ՝ երեխայի խաղում կոնկրետ հոգետրավմատիկ իրադրությունը հիշեցնող որևէ իրավիճակ է մտցվում (հատուկ նախընտրված խաղալիքների միջոցով): Հոգետրավմատիկ իրավիճակի խաղարկման ընթացքում երեխան կառավարում է խաղը և դրանով իսկ տուժողի պասիվ դերից անցում է կատարում ակտիվ գործարար դերի: Երրորդ փուլը երեխայի ազատ խաղի շարունակությունն է: Դ. Լևին խորհուրդ է տալիս դիրեկտիվ սկզբունք, որի համաձայն՝ խաղային իրավիճակներում նախաձեռնությունը պատկանում է բժիշկ-հոգեթերապևտին: Կարևոր է խաղային հոգեթերապիայի սեանսների մանրամասն տեխնիկական և մեթոդական

նախապատրաստությունը:[2,87] Խաղի մասնակիցների տարիքին և հոգեհուզական վիճակի առանձնահատկություններին, ինչպես նաև հոգեթերապիայի վերջնական նպատակին համապատասխան՝ նախապես կազմվում է դերային խաղի պլան: Խաղից առաջ երեխաների միջև բաշխվում են դերերը և այլն» [2,14-15]:

<<Վ. Էքսլայնը խաղը դիտում էր որպես երեխայի առավելագույն ինքնարտահայտման միջոց, որը խաղային ակտիվությանը մեծահասակների չմիջամտելու պայմաններում նրան հնարավորություն է տալիս լիովին բացահայտել իր հույզերը:[3,2] Ոչ դիրեկտիվ խաղային հոգեթերապիայի ընթացքում հոգեթերապևտը՝ 1) հետևում է երեխայի խաղի ընթացքին (ինչպե՞ս էնա խաղում, ինչպե՞ս է մոտենում խաղային իրավիճակին, ի՞նչ է ընտրում, ինչի՞ց է խուսափում, ո՞րն է նրա վարքի հիմնական ոճը, դժվարությա՞մբ է արդյոք տեղափոխում ուշադրությունը, լա՞վ է, թե՞ վատ կազմակերպված նրա վարքը, ինչպիսի՞ն է խաղի հիմնական սյուժեն և այլն). 2) վերլուծում է խաղի բովանդակությունը (խաղարկվո՞ւմ են արդյոք մենակության, ագրեսիայի, հիշողությունների թեմաները, շա՞տ է արդյոք «դժբախտ պատահարների» թիվը խաղի ընթացքում). 3) գնահատում է երեխայի հաղորդակցության հմտությունները (պահպանվո՞ւմ է երեխայի հետ կոնտակտը, քանի դեռ նա տարված է խաղով, ներգրավվո՞ւմ է արդյոք երեխան խաղի մեջ, թե՞ ի վիճակի չէ որևէ խաղում ներգրավվել): Եթե խաղում կրկնվում են միևնույն իրավիճակները, կարելի է երեխային հարցեր տալ, որոնք վերաբերվում են նրա իրական կյանքին («Սիրո՞ւմ ես տան իրերը իրենց տեղերը դասավորել»): Կարելի է երեխայի ուշադրությունը դարձնել այն հույզերի վրա, որոնք նա ապրում է խաղի ընթացքում («Ինձ թվում է, որ այդ խաղալիք մայրիկը շատ դժգոհ է իր որդուց»)>> [2,15-16]:

Խաղի ընթացքում հոգեբանը չպետք է ընդհատի երեխային, նա պետք է ուշադիր հետևի և ընդգծի, այսպես կոչված, խաղի «հանգուցային բլոկները», որոնք ուղղակի կամ սիմվոլիկ ձևով արտացոլում են ապրած տրավման և հակազդում են դրան: Խաղաթերապիան հնարավորություն է տալիս հասնել հետևյալ նպատակներին՝

- կատարել ախտորոշում,
- վստահելի հարաբերություններ ստեղծել երեխայի և հոգեթերապևտի միջև,
- մշակել հոգեբանական պաշտպանական մեխանիզմներ և ձևավորել հոգեբանական պաշտպանական առավել արդյունավետ համակարգ,
- հանել երեխայի հոգեհուզական լարվածությունը և տագնապը,
- վերացնել տրավմաների հետևանքները:

Այսպիսով խաղաթերապիան ունի հատուկ նշանակություն բռնության ենթարկված երեխաների հետ տարվող աշխատանքներում, ովքեր ենթարկվել են հուզական բռնության և մերժման: Բռնության ենթարկված երեխաների հետ տարվող խաղաթերապիայի աշխատանքի միջոցով լուծում ենք հետևյալ հոգեբանական խնդիրները՝ երեխային հոգեբանական տառապանքներից ազատելը, սեփական ես-ի ամրապնդումը, արժանապատվության զարգացման զգացմունքի բարձրացումը, հուզական ինքնակառավարման ունակության զարգացումը, մեծահասակների և հասակակիցների հետ հարաբերություններում վստահության վերականգնումը և օպիամալացումը, վարքագծային շեղումների ուղղումն ու կանխարգելումը:

Չի կարելի, իհարկե, բռնության համար ողջ մեղքը տեսնել ծնողների սոցիալականացման և նրանց արժեհամակարգի բացթողումներում՝ մոռանալով, որ ինքը՝ հասարակությունն է այդ արժեքների ծնողը և դրանով իսկ երեխաների նկատմամբ կամայականություն հանդուրժողը: Մեր հասարակությունում աճող սերնդի նկատմամբ վերաբերմունքը դրսևորվում է տասնամյակներով ձևավորված կարծրատիպերի բազայի վրա: Երեխաների հետ կապված այս կամ այն խնդիրները մենք փորձում ենք լուծել այնպես, ինչպես վարվում էին մեզ նախորդող սերունդները՝ առանց հաշվի առնելու օնտոգենետիկական զարգացման հիմքերը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Միքայելյան Վ., Միքայելյան Լ., Երեխայի հոգեբանական զարգացման խնդիրները:Ք.Երևան 2013թ.224 էջ:
2. Игумнов С. А. Психотерапия и психокоррекция детей и подростков. — М.: Изд–во Института психотерапии, 2000,-112 с.
3. Thompson AE, Kaplan CA. "Childhood emotional abuse." British Journal of Psychiatry. 1996 Feb;168(2):143-8. PMID 8837902

УДК 343.5

Юриспруденция

Ани Тананян
Российско-Армянский университет,
магистратура 1-ый курс
ani-tananyan@mail.ru

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ КВАЛИФИКАЦИИ МОШЕННИЧЕСВА

В настоящее время мошенничество проникло во все сферы жизни общества, в которых присутствуют имущественные отношения. В практической деятельности следственных и судебных органов нередко встречаются такие ситуации, когда признаки отдельных преступлений имеют некоторое сходство с мошенничеством, что создает определенные трудности для правоприменителя в процессе квалификации анализируемых деяний. Данное обстоятельство обуславливает необходимость в проведении разграничения между мошенничеством и другими сходными составами преступлений.

Ключевые слова: мошенничество, кража, грабеж, посредничество, взяточничество.

Ani Tananyan
Russian-Armenian University,
Master's degree 1st year
ani-tananyan@mail.ru

SOME PROBLEMS OF SWINDLE QUALIFICATION

At present, swindle has penetrated all spheres of society in which property relations are present. In practical activities of investigative and judicial bodies, there are often situations where the signs of individual crimes have some similarity to swindle, which creates certain difficulties for the law enforcer in the process of qualifying the acts being analyzed. This circumstance makes it necessary to distinguish between swindle and other similar crimes.

Keywords: swindle, theft, robbery, mediation, bribery.

Անի Թանանյան
Հայ-Ռուսականհամալսարան,
մագիստրատուրա 1-ին կուրս
ani-tananyan@mail.ru

ԽԱՐԴԱԽՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐ

Ներկայումս խարդախությունը թափանցել է հասարակության կյանքի բոլոր ոլորտները,որտեղ գոյություն ունեն գույքային հարաբերություններ: Քննչական և դատական մարմինների պրակտիկ գործունեության ընթացքում հաճախ հանդիպում են այնպիսի դեպքեր, երբ առանձին հանցագործությունների հատկանիշները նման են խարդախության, որը ստեղծում է որոշակի դժվարություններ իրավակիրառողի համար վերլուծվող գործողությունների որակավորման պրոցեսում: Այդ փաստը պայմանավորում է խարդախության և այլ նմանատիպ հանցակազմ ունեցող հանցագործությունների միջև տարանջատում անցկացնելու անհրաժեշտությունը:

Բանալի բառեր՝ խարդախություն, գողություն, կողոպուտ, միջնորդություն, կաշառակերություն

При квалификации мошенничества, наиболее сложной является проблема отграничения мошенничества от иных смежных составов преступлений, как предусмотренных статьями, содержащимися в главе 22 УК РФ (кража, грабеж, разбой, растрата и присвоение чужого имущества, так и от иных (например, взяточничества).

Мошенничество отличается от других форм хищения чужого имущества особенностями объективной стороны преступления и особым способом действия, которым являются обман или злоупотребление

доверием. Но обман нередко применяется при краже, грабеже, разбое, вымогательстве. Следовательно встречаются случаи разграничения мошенничества от указанных составов.

Г. Борзенков правильно отмечает, что «при отграничении мошенничества от других форм хищения следует исходить из того, что в составе мошенничества обман играет роль обстоятельства, под влиянием которого сам потерпевших или лицо, в ведении которого находится имущество, передает это имущество виновному. Будучи причиной заблуждения потерпевшего, обман, в конечном счете, находится здесь в причинной связи с преступным результатом»[1]. Эта точка зрения разделяется и другими юристами. Так В.А. Владимиров пишет, что «нет мошенничества и там, где обман хотя и имел место, но выступал не как способ приобретения чужого имущества, а лишь как средство получить доступ к ценностям, затем похищаемым виновным не только без всякого участия, но и помимо воли и сознания потерпевшего».

Для мошенничества характерен добровольный акт передачи имущества. При совершении мошенничества виновный воздействует на сознание потерпевшего, склоняя его путем обмана или злоупотребления доверием к передаче имущества. Объективная сторона кражи (ст. 158 УК РФ) характеризуется тем, что субъект изымает чужое имущество из владения лица вопреки его воле и без согласия и делает это тайно, тогда как при мошенничестве потерпевший, собственник или владелец вещи, вследствие обмана или использования виновным его доверия, выводит имущество из своего владения, передает его преступнику, предоставляя последнему правомочия владения, пользования, управления и распоряжения им. Обман или злоупотребление доверием возможны и при совершении краж, но они используются не для завладения имуществом, а доступа к имуществу, проникновения в жилище, помещение или иное хранилище и т.п., либо для сокрытия уже совершенной кражи.

Как кражу следует рассматривать случаи использования для завладения имуществом доверия детей и невменяемых, поскольку они неспособны осознавать происходящее. В этих случаях виновный завладевает имуществом тайно, без волеизъявления потерпевшего.

Мошенничество отличается и от хищения чужого имущества, совершенного путем грабежа (ст.161 УК РФ). Открытое хищение чужого имущества совершается в присутствии собственника или иного владельца имущества либо на виду у посторонних, когда лицо, совершившее это преступление, сознает, что присутствующие при этом лица понимают противоправный характер его действий.

В связи со сказанным предлагаем при разграничении мошенничества и кражи, а также мошенничества и грабежа решить вопрос о том, состоялось или нет передача имущества виновному потерпевшим, находящимся под воздействием обмана. При этом саму передачу имущества необходимо понимать не как физическое действие, заключающееся в ее вручении, а также не как передача имущества с одновременной передачей прав на нее. Для кратковременного использования в присутствии лица, вручившего имущества, не могут рассматриваться также как ее передача, так как лицо не намеривается потерять связь с вещью, а напротив, старается сохранять над ней свой контроль.

Передача имущества при мошенничестве, на наш взгляд имеет место и в том случае, если потерпевший осознает, что теряет фактическую связь с вещью на определенный срок либо навсегда.

Так, органами предварительного расследования И. обвинялся в том, что, имея намерение похитить телефон, пришел к своему знакомому П., и, встретив его на пороге квартиры, обратился к нему с просьбой дать сотовый телефон для осуществления звонка. И. согласился и попросил разговаривать, не уходя никуда. Когда П. начал говорить по телефону И. по необходимости вошел в квартиру. Воспользовавшись этим, П. скрылся с телефоном. Его действия органами предварительного расследования квалифицированы по ч.1 ст.159 УК РФ, как мошенничество. Кстовский городской суд переквалифицировал действия И. на ч.1 ст.158 УК РФ, посчитав, что И. совершил кражу, так как он завладел телефоном в отсутствие собственника.

Другой пример. К., находясь со своей гражданской женой Б. в квартире последней, в ее присутствии взял сотовый телефон, принадлежащий ее несовершеннолетнему сыну, пообещав вернуть его через некоторое время. Б. потребовала, чтобы он вернул сотовый телефон. Невзирая на возражение Б., К. ушел из квартиры с сотовым телефоном. К. обратно не вернулся, а сотовый телефон сдал в ближайший ломбард. Органами предварительного расследования действия К. квалифицированы по ч.1 ст.161 УК РФ, как грабеж. Кстовским городским судом Нижегородской области действия К. также были квалифицированы по данному составу, полагая, что потерпевшая, сохраняла контроль над имуществом, и не собиралась передавать его виновному, и осознавала, что К. похищает ее телефон. Однако постановлением Президиума областного суда Нижегородской области действия К. были

переквалифицированы с ч.1 ст.161 на ч.1 ст.159 УК РФ указав, что Б. поняла, что К. похитил указанный сотовый телефон лишь после того, как он не вернулся, и она обнаружила пропажу документов и коробки из-под сотового телефона, т.е. забирая сотовый телефон К. убедил потерпевшую в том, что телефон он, К. вернет.

В другом случае Кстовский городской суд Нижегородской области обосновано квалифицировал, как мошенничество действия И., который под надуманным предлогом позвонить подошел к знакомой В. и попросил ее сотовый телефон, пообещав вернуть через два часа. В., поверив ему, передала сотовый телефон, который И. вскоре продал. В данном случае потерпевшая полагала, что телефон ей будет возвращен, а по этому в действиях И. содержится состав мошенничества.

При разграничении мошенничества и разбоя также могут быть допущены ошибки. Так, разбойные действия П. расценены Кыштымским городским судом как мошенничество и угрозу нанесения тяжких телесных повреждений при следующих обстоятельствах. 18 декабря 1996 г. П., с целью завладения чужим имуществом, пришел в квартиру Щ., представился ей братом женщины, у которой сын Щ. украл 60.000 рублей, и потребовал вернуть похищенное, угрожая ей и сыну нанесением тяжких телесных повреждений и поджогом квартиры. Опасаясь осуществления угрозы, Щ. передала П. 60.000 рублей. В данной ситуации обман являлся лишь условием, облегчавшим изъятие имущества. Деньги у потерпевшей были изъяты вопреки ее воле. Характерная для мошенничества «добровольность» передачи имущества преступнику отсутствовала.

Специфика хищения, совершаемого путем мошенничества, состоит в том, что виновный завладевает имуществом при непосредственном участии лиц, обладающих этим имуществом. Для мошеннического завладения характерен внешне добровольный акт передачи имущества собственником виновному. При этом преступное воздействие со стороны виновного осуществляется не на само имущество, а на сознание и волю потерпевшего при помощи обмана или злоупотребления доверием. Обманывая соответствующее лицо, мошенник внушает ему ложное убеждение о том, что, претендуя на получение имущества, он (мошенник) действует на законных основаниях.

Также в настоящее время актуализирована проблема разграничения мошенничества с таким смежным составом коррупционной направленности как посредничество во взяточничестве (ст.291.1 УК РФ). Норма об ответственности за посредничество во взяточничестве, которой Уголовный кодекс РФ дополнен в мае 2011 г., сразу же породила на практике и в теории споры относительно содержания соответствующего уголовно-правового запрета. В российском уголовном законе посредничество во взяточничестве определяется как непосредственная передача взятки по поручению взяткодателя или взяткополучателя либо иное способствование взяткодателю и (или) взяткополучателю в достижении либо реализации соглашения между ними о получении и даче взятки в значительном размере.

Рассмотрим квалификацию действий субъекта преступления при совершении им «мнимого» посредничества, либо «лжепосредничества». Данное понятие применяется для обозначения действий посредника, который получает материальные ценности в целях передачи их взяткополучателю, но отказывается от этого намерения, присваивает их себе. В современной правоприменительной практике такие действия квалифицируются по ст. 159 УК РФ (мошенничество). В п. 26 постановления Пленума Верховного Суда РФ № 24 от 9 июля 2013 г. «О судебной практике по делам о взяточничестве и об иных коррупционных преступлениях» указано, что в случае, когда лицо, обещавшее либо предложившее посредничество во взяточничестве, заведомо не намеревалось передавать ценности в качестве взятки должностному лицу либо посреднику и, получив указанные ценности, обратило их в свою пользу, содеянное следует квалифицировать как мошенничество без совокупности с преступлением, предусмотренным ч. 5 ст. 291.1 УК РФ.

Представляется, квалификация «мнимого» посредничества в качестве мошенничества порождает очевидные проблемы, связанные с возникновением определенных противоречий в уголовно-правовой теории. Во-первых, возникает вопрос об определении статуса взяткодателя, который при вышеуказанной квалификации действий посредника неизбежно признается потерпевшим от мошеннических действий. Во-вторых, неясность вызывает и юридический статус получаемых для передаче взяткополучателю материальных ценностей, которые могут рассматриваться либо в качестве предмета взятки, либо в качестве предмета мошеннического завладения.

Ряд ученых, учитывая вышеуказанные противоречия, фактически выступают за дикриминализацию «мнимого посредничества», вследствие отсутствия в его составе предмета и объекта правовой охраны. В

этой связи И. В. Шишко подчеркивает, что использование имущества в преступных целях выводит его за «рамки» охраняемых законом объектов. В этом смысле действия «лжепосредника» могут восприниматься положительно, поскольку фактически препятствуют совершению дачи взятки [2].

На наш взгляд, вышеуказанная позиция является несостоятельной, поскольку нормы уголовного закона рассматривают собственность в качестве предмета правовой охраны в абсолютном значении без каких-либо исключений, обусловленных целями и режимом ее использования. В этой связи, как справедливо указывает М. И. Моисеенко, «намерение лица передать через посредника материальные ценности в виде взятки, которое использует лжепосредник в момент мошеннического захвата имущества взяткодателя, не прекращает юридического права собственности взяткодателя на эти ценности, если он, конечно, является их законным владельцем изначально» [3]. Иначе говоря, выбывание из владения собственности, вследствие деятельности «мнимого посредника», не означает потерю на нее юридических прав. Кроме того, факт присвоения материальных ценностей «мнимым посредником» нивелирует их «криминализационный» потенциал в качестве предмета взятки. Исходя из этого, совершение «мнимого посредничества» следует рассматривать в качестве мошенничества, результатом которого явилось завладение субъектом преступления чужой собственности вследствие обмана или введение в заблуждение потерпевшего – потенциального взяткодателя.

Правильность квалификации «мнимого посредничества» в качестве мошенничества подтверждается и логикой гражданско-правового регулирования. В этой связи, очевидно, что передача взяткодателем материальных ценностей посреднику может рассматриваться в качестве безвозмездной сделки, которая в связи с изначальным противоречием ее целей основам правопорядка в соответствии с нормами ст. 169 ГК РФ признается ничтожной. Таким образом, «мнимый посредник», совершая присвоение потенциального предмета взятки, допускает нарушение охраняемого законом права собственности как с уголовно-правовой, так и с гражданско-правовой точки зрения. Таким образом, согласимся с мнением о том, что сущность такого преступления «выражается в завладении чужим имуществом путем обмана, под видом незаконной сделки, к совершению которой субъект склонил обманутого» [4].

Учитывая способы завладения им собственностью, представляется возможным поддержать наиболее распространенную квалификацию «мнимого посредничества» в качестве мошенничества (ст. 290 УК РФ). При этом ключевое значение имеет доказательство умысла лжепосредника, а именно тот факт, что при получении взятки он должен осознавать, что принимаемые им материальные ценности не будут переданы взяткополучателю, а будут обращены им в свою собственность. Наличие такого умысла и является главным определяющим признаком мошенничества.

При квалификации «мнимого посредничества» важно отграничивать его от неудавшегося посредничества, при котором предмет взятки не передается взяткополучателю по объективным обстоятельствам, не зависящим от воли посредника. При таком развитии событий действия посредника необходимо квалифицировать как покушение на посредничество во взяточничестве в соответствии с нормами ч. 1,2 ст. 291.1. УК РФ в случае значительного размера взятки (более 25 тыс. руб.).

По нашему мнению, действия лжепосредника могут быть квалифицированы и по дополнительным основаниям в качестве подстрекательства к покушению на совершение преступления, предусмотренного ст. 290 УК РФ (дача взятки). Такая квалификация возможна в случае, если «мнимый посредник» проявляет устойчивую инициативу в отношении потенциального взяткодателя, в первую очередь, путем введения его в заблуждение относительно наличия возможностей способствовать решению вопроса потенциальным взяткополучателем. В результате таких действий формируется идеальная совокупность преступных деяний (пассивный мошеннический обман в совокупности со склонением лица к даче взятки). Данное обстоятельство позволяет квалифицировать действия лжепосредника как подстрекательство к совершению преступления.

Завершая рассмотрение вопроса об отграничении посредничества от «мнимого посредничества», следует отметить, что последнее характеризует «множественность квалифицирования», что объективно затрудняет привлечение лица, совершившего преступление к уголовной ответственности. Наиболее типичные случаи квалификации действий посредника во взяточничестве выглядят следующим образом:

1. Умысел на дачу взятки возник у взяткодателя самостоятельно. Он передает лжепосреднику предмет взятки, учитывая его потенциальные возможности содействовать реализации коррупционной договоренности, о которых ему заявляет лжепосредник. Однако последний, не собираясь передавать предмет взятки, завладевает им. Квалификация действий лждепосредника – мошенничество (ст. 159 УК

РФ). При неудаче такого рода действия – соответственно как покушение на мошенничество (ч. 3 ст. 30 и ст. 159 УК РФ по совокупности с приготовлением к даче взятки (ч. 1 ст. 30 и ст. 291 УК РФ).

2. Лжепосредник намеренно склоняет взяткодателя к передаче ему предмета взятки, уверяя о наличии у него возможностей выполнить функции физического посредника. В результате мнимый посредник завладевает предметом взятки. Квалификация его действий – по совокупности преступлений: мошенничество, а также подстрекательство к покушению на дачу взятки (ч. 4 ст. 33, ч. 3 ст. 30 и ст. 291 УК РФ).

3. Посредник реально передает взяткополучателю лишь часть предмета взятки, остальную его часть присваивает себе. Квалификация – посредничество во взяточничестве по совокупности с мошенничеством, либо с причинением имущественного ущерба путем обмана или злоупотреблением доверием (ст. 165 УК РФ), если мотив на обогащение за счет предмета взятки возник у посредника после фактического его получения от взяткодателя.

Таким образом, в любом случае преступные действия мнимого посредника не подпадают под основной состав посредничества во взяточничестве, поскольку они не образуют объективной стороны преступления (в физическом, либо интеллектуальном смысле), что, в свою очередь, обусловлено отсутствием у мнимого посредника стремления способствовать достижению договоренности между взяткодателем и взяткополучателем. Основной мотив совершения такого преступления – завладение чужой собственностью, что, учитывая особенности способа его совершения (обман, введение в заблуждение), должно квалифицироваться, в первую очередь, в качестве мошенничества.

Литература

[1] Борзенков Г. Отграничение мошенничества от смежных составов преступлений // Советская юстиция. 1965. № 19. С. 18 .

[2] Шишко И. В. Экономические правонарушения: Вопросы юридической оценки и ответственности. СПб., 2004. С. 186.

[3] Капинус О. А., Изменения в законодательстве о должностных преступлениях: вопросы квалификации и освобождения взяткодателя от ответственности // Уголовное право. 2011. № 2. С. 25.

[4] Сабитов Р. А. Обманы и подлоги в уголовном праве: учебное пособие. Челябинск, 2011. С. 65.

ՀՏԴ 342.7(479.243) *Իրավագիտություն*

Գոհար Խաչատրյան
ԱրՊՀ, Իրավագիտություն, 4-րդ կուրս
gohar.khachatrian.95@mail.ru

ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ. ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ ԱՐՑԱԽԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ

Հոդվածում խոսվում է ժառանգությունը օրենքով սահմանված 6-ամսյա ժամկետի ավարտից հետո ընդունելու՝ քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված հնրավորությունների և այդ կապակցությամբ պրակտիկայում առաջացող հիմնախնդիրների մասին: Այս տեսանկյունից շեշտադրում է կատարվել նշված ոլորտի իրավահարաբերությունների կարգավորման հստակեցմանն ու խնդրի լուծման մի քանի հարցերի:

Բանալի բառեր: ժառանգման իրավունք, ժառանգության ընդունում, ժառանգության ընդունումը 6-ամսյա ժամկետի ավարտի հետո, քաղաքացիական օրենսգիրք:

Гоар Хачатрян
АрГУ, Юриспруденция, 4-ый курс
gohar.khachatrian.95@mail.ru

ПРИНЯТИЕ НАСЛЕДСТВА ПО ИСТЕЧЕНИИ УСТАНОВЛЕННОГО СРОКА: НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ГК АРЦАХА

В статье рассматривается тема принятия наследства после 6-месячного срока предусмотренное гражданским законодательством и в связи с этим обсуждаются некоторые проблемы связанные с этим. По этому поводу в статье подробно рассматриваются проблемы принятия наследства по истечении 6-месячного срока, а также определяются некоторые решения вопроса.

Ключевые слова: наследственное право, принятие наследства, принятие наследства по истечении 6-месячного срока, гражданский кодекс.

Gohar Khachatryan
ASU, Jurisprudence, 4th year
gohar.khachatrian.95@mail.ru

THE ACCEPTANCE OF INHERITANCE AFTER A PERIOD OF 6 MONTHS: SOME QUESTIONS OF ARTSAKH'S CIVIL CODE

The article discusses the issue acceptance of inheritance after a period of 6 months stipulated by civil code and in addition to this discusses some problems associated with this. In regard to this, the article examines in details the problems of accepting of inheritance after the expiration of a six-month period, as well as certain solutions to this issue.

Keywords: Hereditary right, acceptance of inheritance, acceptance of inheritance after the expiry of a 6-month period, civil code.

Ժառանգման իրավունքը քաղաքացիական իրավունքի այն ինստիտուտներից մեկն է, որը հայտնի է ժամանակակից բոլոր իրավական համակարգերին, ինչը, անկասկած, ընդգծում է հասարակական հարաբերություններում նրա կարևոր դերը: Ժառանգման իրավունքի կարևորությունն արտահայտվում է նաև նրանում, որ նրա միջոցով ապահովվում է սերունդների միջև կապի անխախտելիությունը, ինչպես նաև քաղաքացիական կայուն շրջանառություն:

Ինչպես նշել է Սուխանովը. «այսօրվա իրականությունը ցույց է տալիս, որ հարազատներին ժառանգման միջոցով գույքի փոխանցման կամ դրա ստացման հնարավորությունը թույլ է տալիս քաղաքացուն զգալ իրեն ավելի վստահ հասարակության մեջ, քանի որ մարդն աշխատում է ոչ միայն

իր, այլև իր հարազատների համար համապատասխան կայուն նյութական վիճակի ապահովման նպատակով, իսկ ժառանգման ինստիտուտը տալիս է նման հնարավորություն»[1]:

Ու այսօր, թերևս, քիչ հավանական է, որ որևէ քաղաքացի կյանքում գոնե մեկ անգամ առնչված չլինի ժառանգման որևէ հիմնախնդրի հետ (ժառանգման որևէ խնդրի հետ առնչված և չառնչված քաղաքացիների թվի տոկոսային հարաբերակցությունը 100 քաղաքացիների հաշվով (ք. Ստեփանակերտ)):



Իհարկե, ժառանգման վերաբերյալ պրակտիկայում առաջացող խնդիրները բազմաթիվ են ու բազմաբնույթ, սակայն ինչպես ցույց է տալիս վիճակագրությունը (ուսումնասիրություն, որը ցույց է տալիս առավել շատ թվով քաղաքացիների կողմից ներկայացված ժառանգման վերաբերյալ հիմնարցերի տոկոսային հարաբերակցությունը 100 քաղաքացիների հաշվով), դրանց մեծ մասը կապված են ժառանգության ընդունման ժամկետների հարցի հետ:



Ժառանգության ընդունման ժամկետներին են վերաբերում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 1236-րդ և 1237-րդ հոդվածները, որոնց բովանդակությունից և տեսական գրականության վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ ժառանգության ընդունման ժամկետները ընդունված է դասակարգել ընդհանուրի և հատուկի: Օրենսգրքի 1236-րդ հոդվածի 1-ին մասի

[1] Суханов Е.А.,Гражданское право, Том 2, М., 2008, էջ 98

համաձայն՝ ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից[1] վեց ամսվա ընթացքում **(ընդհանուր ժամկետ)**: Ժառանգության ընդունման ընդհանուր ժամկետի շրջանակներում ժառանգությունն ընդունելու իրավունք ունեն.

1. ըստ կտակի ժառանգները,
2. ըստ օրենքի համապատասխան հերթի ժառանգները, եթե չկա կտակ կամ կտակը համարվել է անվավեր, կամ ըստ կտակի ժառանգների բացակայության դեպքում,
3. ըստ օրենքի համապատասխան հերթի ժառանգները նրանց նախորդ հերթի ժառանգների բացակության կամ ժառանգությունից մեկուսացման կամ ժառանգություն ընդունելու իրավունքից զրկված լինելու դեպքում:

Ժառանգության ընդունման **հատուկ ժամկետի** շրջանակներում ժառանգության ընդունման անհրաժեշտությունն առաջանում է օրենսգրքի 1236-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի կիրառման դեպքում, այսինքն ժառանգությունից ժառանգի հրաժարվելու կամ ժառանգությունը չընդունելու պարագայում[2]:

Պրակտիկայում առավել գերակշիռ քանակի են սահմանված ժամկետի ավարտից հետո ժառանգության ընդունման հետ կապված դեպքերը, որի մասին կցանկանայինք խոսել առավել մանրամասն: Նշված ոլորտից բխող իրավահարաբերությունները կարգավորվում են օրենսգրքի 1237-րդ հոդվածով, որը նախատեսում է սահմանված ժամկետի ավարտից հետո ժառանգության ընդունման տարբերակները: Նշված հոդվածի վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ եթե հնարավոր ժառանգը բաց է թողել ժառանգությունն ընդունելու համար սահմանված 6-ամսյա ժամկետը, ապա դա չի նշանակում, որ նա զրկվում է ժառանգությունն ընդունելու իրավունքից ընդհանրապես:

Օրենսգիրքը նախատեսում է սահմանված 6-ամսյա ժամկետի ավարտից հետո ժառանգությունն ընդունելու 2 տարբերակ.

1. արտադատական կարգ,
2. դատական կարգ:

Առաջին դեպքում ժառանգը կարող է առանց դատարան դիմելու ժառանգությունն ընդունել այն ընդունելու համար սահմանված ժամկետի ավարտից հետո, եթե առկա է ժառանգությունն ընդունած մնացած բոլոր ժառանգների համաձայնությունը: Նման դեպքում անձը դիմում է նոտարին և ժառանգությունն ընդունած մյուս ժառանգների համաձայնություն պարունակող փաստաթղթերի վրա ժառանգների դրած ստորագրությունները հիմք են նոտարի կողմից նախկինում տրված ժառանգության իրավունքի վկայագիրը չեղյալ համարելու և նոր վկայագիր տալու համար:

Երկրորդ դեպքում անձը կարող է ժառանգությոջնն սահմանված ժամկետի ավարտից հետո ընդունել դատարանին ներկայացվող դիմումի միջոցով, որի հիման վրա դատարանը կարող է նրան ճանաչել ժառանգությունն ընդունած՝ հարգելի համարելով ժամկետը բաց թողնելու պատճառները, եթե պարզվի, որ ժամկետը բաց թողնելու պատճառ է դարձել այն հանգամանքը, որ ժառանգը չգիտեր և պարտավոր չէր իմանալ ժառանգության բացման մասին ու պայմանով, որ ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգն այդ ժամկետը բաց թողնելու պատճառները վերացվելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, դիմել է դատարան:

Թվում է, թե օրենսդիրը նախատեսել է սահմանված ժամկետի ավարտից հետո ժառանգության ընդունման հնարավոր տարբերակներ հօգուտ հնարավոր ժառանգների, սակայն պետք է ընգծել, որ պրակտիկայում նշված ոլորտի խնդիրները դեռ առկա են և լրացուցիչ կարգավորում են պահանջում: Ու դրա հիմնական պատճառը կապված է նրա հետ, որ չկա հստակ մեխանիզմ, որը կսահմանի ժառանգության ընդունման սամանաված ժամկետը բաց թողնելու դեպքում դա հարգելի համարելու ապացուցման տարբերակները: Դիտարկենք այսպիսի մի դեպք: Օրինակ՝ ժառանգը գիտեր

[1] Օրենսգրքի 1197-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգության բացման ժամանակը քաղաքացու մահվան օրն է, իսկ նրան մահացած ճանաչելու դեպքում այդ մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրը, եթե այլ օր սահմանված չէ վճռում:

[2] Այս կապակցությամբ ՌԴ քաղ. օրենսգիրքը ավելի հստակ կարգավորում է տվել, քանի որ ժառանգի կողմից ժառանգությունից հրաժարվելու և ժառանգությունը չընդունելու հետ մեկտեղ նախատեսել է նաև «ժառանգությունից մեկուսացվելու» հնարավոր տարբերակը: Փաստորեն, եթե պրակտիկայում լինի ժառանգությունից մեկուսացվելու դեպք, հարց է ծագում, արդյո՞ք դա մտնում է օրենսգրքի 1236-րդ հոդվածի կարգավորման ոլորտ, թե ոչ: Հաշվի առնելով նման ամրագրման հստակությունը՝ առաջարկում ենք օրենսգրքի 1236-րդ հոդվածի 2-րդ մասի «…ժառանգությունը չընդունելու» բառակապակցության կողքին ավելացնել նաև «...կամ ժառանգությունից մեկուսացվելու դեպքում» բառերը:

ժառանգության ընդունման սահմանված ժամկետի մասին (ժառանգությունը բացվել է մարտի 1-ին, իսկ 6 ամիսը կլրանա օգոստոսի 1-ին), սակայն աշխատանքի բերումով մեկնում է արտերկիր, մտածելով, որ գալուց հետո կզբաղվի այդ հարցերով: Սակայն հետ դարձի ճանապարհին դառնում է դժբախտ պատահարի մասնակից և ընկնում կոմայի մեջ: Նման պարագայում արդյո՞ք դա կհամարվի հարգելի պատճառ ժառանգության ընդունման սահմանված ժամկետը բաց թողնելու համար, եթե օրենսդիրը նշում է, որ ժառանգը չպետք է իմանար կամ պարտավոր չէր իմանալ ժառանգության բացման մասին: Ու նման օրինակները բազմաթիվ են: Այս կապակցությամբ ճիշտ կլիներ, եթե օրենսդիրը «ժառանգը չպետք է իմանար կամ պարտավոր չէր իմանալ ժառանգության բացման մասին» բառերի կողքին սահմաներ նաև «հարգելի համարվող այլ պատճառներից ելնելով» տարբերակը:

Հաշվի առնելով ժառանգման իրավունքի՝ որպես սերունդների միջև կապի անխախտելությունը ապահովող մեխանիզմի կարևորությունը և դրա իրականացման համար ժառանգությունը սահմանված ժամկետի ավարտից հետո ընդունելու հետ կապված խնդիրները, առաջարկում ենք դրանց լուծման մի քանի ուղիներ.

1. քանի որ ժառանգության ընդունման ընդհունման ընդհանուր 6-ամսյա ժամկետը իրեն պրատկիայում չի արդարացնում, առաջարկում ենք 6-ամսյա ժամկետը երկարաձգել մինչև 1 տարի: Սրա հիմնավորումը կայանում է նրանում, որ ժառանգատուի մահից հետո ենթադրյալ ժառանգները «վերականգնման» կարիք ունեն ինչպես ֆիզիկապես, այնպես էլ հոգեպես, և ժառանգության ընդունման համար կատարվող գործողությունների մասին մտածում են ավելի ուշ: Բացի այց, բավականին ժամանակատար է նաև նոտարին ներկայացնելու համար սահմանված փաստաթղթեր հավաքելու գործընթացը: Արդյունքում, մինչև ժառանգները վերականգնում են իրենց ուժերը, արդեն ժառանգութան ընդունման ժամկետը սպառման եզրին է: Ուստի, զարմանալի չէ, որ նման կարգավորումը պրակտիկայում իրեն չի արդարացնում, ու տեղին է հիշել նաև տարեկան կրտվածքով դատարան ներակայավող հայցերի քանակը ժառանգության ընդունման սահմանված ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու մասին:
2. հստակեցնել ժառանգների կողմից ժառանգության ընդունման սահմանված ժամկետը բաց թողնելու դեպքում դա հարգելի համարելու պատճառները ապացուցելու մեխանիզմը,
3. առաջարկում ենք օրենսգրքի 1237-րդ հոդվածի 2-րդ մասի «…ժառանգը չգիտեր և պարտավոր չէր իմանալ ժառանգության բացման մասին» բառերի կողքին ավելացնել նաև «...կամ հարգելի համարվող այլ պատճառներից ելնելով» բառերը, քանի որ պրակտիկայում հնարավոր է դեպք, երբ ժառանգն իմանա ժառանգության ընդունման սահմանված ժամկետի մասին, սակայն օբյեկտիվորեն զրկված լինի դրա համար անհրաժեշտ գործողությունները կատարելու հնարավորությունից:

ՀՏԴ 342.7

Իրավագիտություն

Մարիամ Մխիթարյան
Արցախի պետական համալսարան,
մագիստրատուրա 1-ին կուրս
mkhitaryan31@gmail.com

ՄԱՐԴՈՒ ՕՐԳԱՆՆԵՐԻ, ՀՅՈՒՍՎԱԾՔՆԵՐԻ, ԲՋԻՋՆԵՐԻ ԵՎ ՄԱՐՄՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՆՐԱ ՄԱՀԻՑ ՀԵՏՈ

Հոդվածում ներկայացված են, թե ինչ են սոմատիկ իրավունքները, ինչպես են դրանք գործում մահից հետո, ինչ կոնվենցիաներ և օրենքներ են կարգավորում այդ իրավունքները, ինչ է մահվան իրավունքը, ինչպես կարող է մարդը օգտագործել սեփական մարմինը, փոխպատվաստման իրավունքը և որ երկրներում է թույլատրվում դա:

Բանալի բառեր. մահ, սոմատիկ իրավունքներ, փոխպատվաստում, մարմին, օրգաններ, բջիջներ, հյուսվածքներ:

Мариам Мхитарян
Арцахский Государственный Университет,
магистратура 1-ый курс
mkhitaryan31@gmail.com

ПРАВОВОЙ СТАТУС ОРГАНОВ, ТКАНЕЙ И КЛЕТОК ЧЕЛОВЕКА ПОСЛЕ СМЕРТИ

В данной статье представляются что такое соматические права, как они действуют после смерти, какие конвенции и законы регулируют эти права, что такое право на смерть, как человек может использовать собственный организм, право на трансплантацию и в каких странах это разрешено.

Ключевые слова: смерть, соматические права, трансплантация, тело, органы, клетки организма, ткани.

Mariam Mkhitaryan
Artsakh State University,
Master's degree 1st year
mkhitaryan31@gmail.com

LEGAL STATUS OF ORGANS, TISSUES AND HUMAN CELLS AFTER DEATH

In this article presents, what are somatic rights, how do they work after death, what conventions and laws govern these rights, what is the right to die, how a person can use his own organism, the right to transplantation and in what countries it is allowed.

Keywords: death, somatic rights, transplantation, body, organs, body cells, tissues.

Մարդու իրավունքների տեսության համաձայն, գոյություն ունեն 5 սերնդի մարդու իրավունքեր. առաջին սերնդի իրավունքներին են դասվում անձնական և քաղաքական իրավունքները (18-րդ դար), երկրորդ սերնդի իրավունքներին են դասվում սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքները (19-20-րդ դարեր), երրորդ սերնդի մեջ են մտնում կոլլեկտիվ իրավունքները, չորրորդ սերնդի մեջ են մտնում հոգևոր-բարոյական իրավունքները և հինգերրորդ սերնդի իրավունքներն են մարդու սոմատիկ իրավունքները:

Իրավաբանական գրականության մեջ, հատկապես՝ ռուսական, սոմատիկ (անձնական) իրավունքերի լուսաբանումը տրված է Վ. Ի. Կրուսսին: Իր՝ այս թեմային վերաբերող, առաջին աշխատության մեջ նա նշում է, որ «Ք.հ. երրորդ հազարամյակի շեմին պետք է առանձնացնել այն իրավունքերը, որոնք կապված են մարդու՝ սեփական մարմնի օգտագործման հետ, և, առավելապես, այդ իրավունքներից են մահի իրավունքը, փոխպատվաստման իրավունքը, սեռի փոփոխումը, թմրանյութերի օգտագործումը և այլն[1]»: Ինչպես նկատում է Ա. Ի. Կովլերը, սոմատիկ իրավունքները անձնական իրավունքի տեսակ են, այսինքն, սոմատիկ իրավունքները կապված են անձի հետ

[1] Крусс В. И. Личностные («соматические») права человека в конституционном и философско-правовом измерении: к постановке проблемы // Государство и право. -2000.-№10, С.43.

«հոգեպես և ֆիզիկապես»[1]: Իր հերթին Օ. Է. Ստարովոյտովան նշում է, որ սոմատիկ իրավունքի մեջ առավելապես պետք է ընդգծել «մահանալու իրավունքը» և կյանքի իրավունքը, և այդ ամենը կարելի է կենտրոնացնել «իրավական սոմատոլոգիա» գիտության մեջ[2]:

«Սոմա» տերմինը առաջացել է հին հունարենից, ինչը նշանակում է «մարմին»[3], գիտության մեջ է մտցվել գերմանացի կենդանաբան Ա. Վեյսմանի կողմից 19-րդ դարում՝ մահից հետո օրգանիզմը ներկայացնելու համար: Իր բնությամբ, այս իրավունքը իրենից ներկայացնում է ֆիզիկական, ինչպես նաև հոգեկան անձեռնմխելիություն, և նրա օբյեկտներն են հանդիսանում մարդու օրգանները, մաշկը, հյուսվածքները և բջիջները: Մարդու օրգանների, հյուսվածքների և բջիջների նկատմամբ տնօրինությունը կենդանության օրոք և մահից հետո իրենից ներկայացնում է «սոմատիկ իրավունքների» իրագործում:

Լայն իմաստով, սոմատիկ իրավունքները իրենց մեջ ընդգրկում են. մահի իրավունք, որը իր մեջ ներառում է էվտանազիայի իրավունքը: Էվտանազիան թույլատրվում է այնպիսի երկրներում, ինչպիսիք են Բելգիա, Լյուքսեմբուրգ, Նիդեռլանդներ, Շվեյցարիա, Շվեդիա, ԱՄՆ-ի Օրեգոն, Մոնտանա, Վերմոնտ, Վաշինգտոն նահանգներում, մարդու իրավունքը կապված իր օրգանների և հյուսվածքների հետ (փոխպատվաստում, դոնոր լինել, կլոնավորում): Եվրոպական միության մարդու իրավունքների մասին խարտիայի 3-րդ հոդվածում նշվում է եվգենիկական փորձերի, մարդու օրգանները շահույթի աղբյուր դարձնելու և բազմանալու նպատակով կլոնավորվելու արգելքի մասին[4], մարդու սեռական իրավունքներ. կապված նրա սեռական կյանքի, զուգընկերոջ ընտրման, ամուսնանալու, սեռական փոքրամասնությունների հետ, մարդու վերարտադրման իրավունքներ. արհեստական բեղմնավորում և աբորտ, թմրամիջոցների ընդունման իրավունք (Լյուքսեմբուրգ, Չեխիա, Շվեյցարիա, Իսպանիա, Պորտուգալիա, Յամայկա, Ավստրալիայի որոշ նահանգներ, Արգենտինա, Բելգիա, Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Կանադա, Մեքսիկա, Նիդեռլանդներ, ԱՄՆ որոշ նահանգներ):

Անձը համարվում է իր մարմնի սեփականատերը, դա համարվում է մարդու աբողջականության իրավունքը, որը միջազգայնորեն կարգավորվում է Եվրոպական Միության Մարդու իրավունքների մասին Խարտիայով. այդ կերպ, մարդը դառնալով իր մարմնի սեփականատերը, իրավունք ունի ինքնուրույն որոշելու իր ամբողջ օրգանիզմի ճակատագիրը:

Մարդու իրավունքների և արժանապատվության մասին 1997թ Կոնվենցիայում նշվում է, որ անհատի հետաքրքրություններն ու բարեկեցությունը գերակշռում են հասարակության և գիտության նկատմամբ: Այստեղ հստակ նշվում է, որ անձը կարող է տալ իր համաձայնությունը բժշկական միջամտության համար: Այսինքն այս իրավական հիմքի վրա է գործում համաձայնության կանխավարկածը, ըստ որի անձը իր համաձայնությունն է տալիս մահից հետո օգտագործել իր օրգանիզմը:

Այս իրավունքների շարադրումը իրենից ենթադրում է մեկ իմաստ. յուրաքանչյուր մարդ իրավունք ունի ինքնուրույն տնօրինել իր մարմինը: Պետք է նշել, որ մարդու մարմնական ծածկույթը չի կարելի անվանել առանձին ինքնուրույն օբյեկտ, քանի որ այն համարվում է անհատի անքակտելի մասը[5]: Ֆիզիկական անձը համարվում է իր մարմնի սեփականատերը այնքան ժամանակ, ինչքան «մարմինը անձ է ներկայացնում»: Հետևաբար, մարդը իր մարմնի օգտագործումը իրականացնում է ոչ թե որպես սեփականատեր, այլ որպես ֆիզիկական անձեռնմխելիությունից օգտվելու իրավունք ունեցող անձ: Ֆիզիկական անձեռնմխելիությունը առաջարկում է մարդու կողմից այնպիսի հարցերի ինքնուրույն լուծում, որոնք կապված են նրա օրգանիզմի, բջիջների, հյուսվածքների, օրգանների հետ: Եվրոպական Միության հիմնական իրավունքների մասին Խարտիայում սահմանվում է մարդու ամբողջականության իրավունքը, համաձայն որի, յուրաքանչյուր մարդ իրավունք ունի ֆիզիկական և հոգեկան ամբողջականության: Սակայն դրա հետ միասին Խարտիայում նշվում է եվգենիկական փորձերի, կլոնավորման արգելքի, օրգանների վաճառքի արգելման մասին:

[1] Ковлер А. И. Антропология права, М.: Норма, 2002, с. 427.
[2] Старовойтова О. Э. Юридический механизм реализации и защиты соматических прав человека и гражданина в Российской Федерации: историко-правовой и теоретический анализ: авторе. дис. д-ра юрид. наук. СПБ, 2006, с. 2-3.
[3] Энциклопедический словарь медицинских терминов. / Гл. ред. Б. В. Петровский. — М.: Сов. энцикл., 1982-1984гг
[4] CHARTER OF FUNDAMENTAL RIGHTS OF THE EUROPEAN UNION
http://www.europarl.europa.eu/charter/pdf/text_en.pdf
[5] Халабуденко О.А. Имущественные права. Книга 1. Вещное право, Кишинев,2011, С 74.

Սոմատիկ իրավունքները չեն դադարում մահից հետո, այսինքն անձը կարող է իր մարմինը, օրգանները, հյուսվածքները կամ բջիջները հանձնել օգտագործման այլ անձանց՝ փոխպատվաստման, դոնոր դառնալու և այլ դեպքերի համար:

Այսօր, սակայն, դեռ իրավաբանորեն հստակ պատասխան չի տրվել «ու՞մ է պատկանում մարդու մարմինը, օրգանները, հյուսվածքները, բջիջները նրա մահից հետո, և որն է դրանց իրավական կարգավիճակը» հարցին:

Մարդու մարմնի փոխպատվաստման իրավական կարգավիճակին են վերաբերում Եվրոպական Միության մարդու իրավունքների և ազատությունների Խարտիան, Կոնվենցիա մարդու իրավունքների և արժանապատվության մասին, կապված կենսաբանության և բժշկության ձեռքբերումների հետ (1997թ. ապրիլի 4, Օվեյդո), Լրացուցիչ արձանագրություն Կոնվենցիայի՝ մարդու իրավունքների և բիոբժշկության, կապված՝ մարդու օրգանների և հյուսվածքների հետ (Ստրասբուրգ, 24 հուվար, 2002թ.):

Գիտնականների մի մասը գտնում է, որ մահացածի մարմինը, հյուսվածքները, բջիջները, օրգանները համարվում են քաղաքացիաիրավական հարաբերությունների օբյեկտներ և հղում են կատարում երկրի օրենսդրությանը կապված մարդուն օրգաններ և հյուսվածքներ փոխպատվաստելու հետ: Այսպես, ռուս գիտնականներ Ապոլոնսկայան[1], Բարկովը[2], Դոնցովը[3], Մըզրովը[4], Մալեինան[5] այսպիսի հետևություն են կատարել. եթե օրենսդրության մեջ նշվում է փոխպատվասման ենթակա օրգանների ցանկը և կարգը (սիրտ,երիկամ, փայծաղ, լյարդ, մաշկ, թոք, անոթներ, էնդոկրին հյուսվածք, ոսկոր, եղջերաթաղանթ և այլն[6]), հետևաբար դրանք համարվում են քաղաքացիական իրավունքի օբյեկտներ: Մարդու մարմինը, օրգանները և հյուսվածքները, բջիջները մահից հետո ենթակա են փոխպատվաստման և կարող են օգտագործվել փորձերի համար, եթե անձը մինչև մահանալը տալիս է իր գրավոր համաձայնությունը. միջազգային պրակտիկայում այս գործընթացը կոչվում է «համաձայնության կանխավարկած»: «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենքի համաձայն, փոխպատվաստման նպատակով դիակից օրգաններ և հյուսվածքներ կարող են վերցվել նրա հարազատների (ազգականների)՝ ամուսնու, չափահաս երեխայի, ծնողներից մեկի, հարազատ եղբոր կամ քրոջ, հայրական կամ մայրական կողմի պապի կամ տատի համաձայնությամբ: Փոխպատվաստման նպատակով դիակից օրգաններ և հյուսվածքներ չեն կարող վերցվել միայն այն դեպքում, երբ տվյալ անձն իր կենդանության օրոք, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, հրաժարվել է մահից հետո հանդես գալ որպես օրգանների և հյուսվածքների դոնոր: Փոխպատվաստման նպատակով մինչև 18 տարեկան երեխաների կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված անձի դիակից օրգաններ և հյուսվածքներ կարող են վերցվել միայն նրա ծնողի կամ օրինական ներկայացուցչի համաձայնությամբ: Օրենքը հստակ սահմանում է՝ որ վիճակն է համրվում մահ, այն է. ուղեղային մահվան փաստը, որը արձանագրում է բուժհանձնաժողովը:

Մարդու իրավունքների և բիոբժշկության հետ կապված Կոնվենցիայի Լրացուցիչ արձանագրության մեջ սահմանվում է, որ փոխպատվաստումը «մի ամբողջ գործընթաց է՝ օրգանի կամ հյուսվածքի հեռացման մեկ անձից և պատվաստման մեկ այլ անձի» (Հոդված 3)[7]: Արձանագրության 16-րդ

[1] Аполинская Н.В. Вновь к вопросу о посмертном донорстве органов, тканей человека // Сибирский юридический вестник. 2007. N 3 (38). С. 21 - 24.

[2] Барков А.В., Грачев Р.Ю. Рынок ритуальных услуг: проблемы гражданско-правового регулирования: Монография. М., 2013. 176 с.

[3] Донцов Д.С. Тело живого человека как нематериальное благо и гражданско-правовая защита его физической неприкосновенности // Медицинское право. 2011. N 2. С. 38 - 42.

[4] Мызров С.Н., Нагорный В.А. К вопросу о вещно-правовом статусе органов и тканей человека: дифференцированный подход к разрешению проблемы // Медицинское право. 2014. N 3. С. 35 - 40.

[5] Малеина М.Н. Личные неимущественные права граждан (понятие, осуществление и защита): Дис. д-ра юрид. наук. М., 1997.

[6] «Փոխպատվաստման ենթակա օրգաններ և (կամ) հյուսվածքների ցանկը սահմանելու մասին» ՀՀ Կառավարության 2007թ. 26 ապրիլի N 502-Ն որոշում

[7] Дополнительный протокол к Конвенции о правам человека и биомедицине относительно трансплантации органов и тканей человека, https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=0900001680081581

հոդվածով սահմանվում է, որ «օրգանները և հյուսվածքները չեն կարող հեռացվել մահացած անձից, եթե այդ անձը համապատասխան օրենսդրությամբ մահացած չի ճանաչվել»: Կոնվենցիայում ամրագրվում է նաև, որ մահացածի համաձայնությունը (մինչև մահանալը), օրենսդրության համապատասխան, պարտադիր է օրգանների փոխպատվաստման համար:

Մարդու իրավունքների և արժանապատվության մասին կոնվենցիայում սահմանվում է, որ բժշկական ուսումնասիրությունների և բժշկական միջամտության համար, օրգանների հեռացման և փոխպատվաստման համար անձի համաձայնությունը պարտադիր է[1]: Ե՛վ Լրացուցիչ արձանագրության, և՛ Մարդու իրավունքների և արժանապատվության մասին կոնվենցիայում, և՛ «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենքում ամրագրվում է դոնորների գաղտնիության իրավունքը և դրա հանդեպ հարգանքը[2]:

Այս կերպ, անձի մարմինը, օրգանները, հյուսվածքները, բջիջները նրա մահից հետո կարող են լինել տարբեր իրավահարաբերությունների օբյեկտներ:

«Արաբկիր» բժշկական կենտրոնում 1991թ-ից մինչ 2012թ. օրգանների ու հյուսվածքների 110 փոխպատվաստում է իրականացվել, և, բժշկական գիտությունների դոկտոր, վիրաբույժ-ուրոլոգ Արա Բաբլոյանի նշելով՝ կատարված փոխպատվաստումներից միայն 25-ի պարագայում օրագաններն ու հյուսվածքները վերցվել են մահացած մարդուց:

Տարեկան աշխարհում տեղի են ունենում 100 հազար օրգանների փոխպատվաստումներ և 200 հազարից ավել հյուսվածքների, մաշկի կամ բջիջների փոխպատվաստում: Կան երկրներ, որտեղ դոնոր դառնալը խրախուսվում է, օրինակ՝ Սինգապուրում դոնորի ընտանիքը ստանում է 50% զեղչ կամ այլ սոցիալական նպաստներ բուժումն անցկացնելու համար: Այստեղ նաև թույլատրվում է օրգանների վերաբերյալ առևտրային գործարքներ կնքել: ԱՄՆ-ում, Կանադայում, Թուրքիայում գործում են հեռուստահաղորդումներ, որտեղ քննարկվում և խրախուսվում է դոնորությունը: Կան երկրներ, որտեղ բժշկության զարգացման համար օրգանների առք ու վաճառքը օրինական է, օրինակ՝ Չինաստան, Հնդկաստան, Բրազիլիա, Պակիստան: Չինաստանում գործում է օրենք, որը թույլ է տալիս վերցնել դատարանի դատավճռով մահվան դատավարտվածի օրգանները և դրանք օգտագործել փոխպատվաստման համար. այստեղ նաև թույլատրվում է փոխպատվաստում կատարել օրտարերկրյա ռեցիպիենտներին (ֆիզիկական անձ, որին բուժական նպատակով պետք է փոխպատվաստվեն օրգաններ և (կամ) հյուսվածքներ): Բրազիլիայում գործում է օրնական պրակտիկա, որը թույլ է տալիս նվիրել օրգաններ (այդ կերպ հանդիսանալ դոնոր): Իրաքում ընդհանրապես փոխպատվաստումներ չեն կատարվում, եթե միայն, պատերազմում վիրավորներին:

Իսպանիայում և Ավստրիայում բնակչության 90%-ը տալիս է իր համաձայնությունը, մահից հետո (մահացած ազգականներ) օրգանների, հյուսվածքների, բջիջների հեռացման. Եվրոպայում այս պետությունները փոխպատվաստման մակարդակներով առաջինն են:

Բելգիայում և Նիդեռլանդներում գործում է օրենք, որը առանց անձի համաձայնության «վերցնում է» օրգանները, հյուսվածքներն ու բջիջները մահից հետո, որն ապահովում է բժշկության ոլորտի 30% տարեկան զարգացում:

1970թ. Լոս-Անջելեսում ուրոլոգ Կեպպի Ռոդմանը առաջին անգամ մահացածից կարողացել է արական բջիջներ (սպերմատազոիդ) վերցնել: Այս երևույթի իրագործումը հետագայում թույլ է տվել շարունակել սերունդ: 1999թ-ին Գաբի Վերնոֆի ամուսնու մահից հետո Կեպի Ռոտմանը նույն գործընթացի շնորհիվ կարողացել է 30 րոպեի ընթացքում վերցնել նրա ամուսնու արական բջիջները (սպերմա). Գաբին հետագայում արհեստական բեղմանվորման միջոցով հղիացել է: Կեպպի Ռոդմանը համարվում է Կալիֆոռնիայում սպերմայի բանկի ՝ կրիոբանկի հիմնադիրը: Այս գործընթացը ԱՄՆ-ում, Իսրայելում, Ռուսաստանում, Անգլիայում թույլատրվում է, եթե տրվել է գրավոր կամ բանավոր համաձայնություն. այն համարվում է անձի սոմատիկ իրավունքներից մեկը: Ֆրանսիայում, Գերմանիայում, Կանադայում այն արգելվում է:

Սակայն, կրկին անդրադառնալով մարդու սոմատիկ իրավունքներին, կարևոր է նշել, որ թեև միջազգայնորեն, ինչպես նաև մեր սահմանադրությամբ արգելվում են եվգենիկական փորձերն ու կլոնավորումը, այնուամենայնիվ, դա մտնում է մարդու սոմատիկ իրավունքների մեջ: Ինչպես նաև կարևոր է նշել, որ, թեև քրիստոնեության մեջ արգելվում է կրեմացիան կամ դիակիզումը (ԱՄՆ,

[1] Конвенция о защите прав и достоинства человека в связи с применением достижений биологии и медицины: Конвенция о правах человека и биомедицине, http://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/rms/090000168007d004

[2] «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենք (2002 թվականի ապրիլի 16)

Ռուսաստանմ Չինաստան, Հնդկաստան), այն նույնպես մտնում է մարդու՝ սեփական մարմինը օգտագործելու իրավունքի մեջ, նույն կերպ, ինչ էվտանազիան:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ում մահացողի տված համաձայնությունը և մահից հետո ազգականների տված համաձայնությունը օրգանների հանման և դոնոր դառնալը պրակտիկայնում կազմում է 3%, իսկ Արցախում ընդհանրապես օրենսդրորեն այս հարցը չի կարգավորվում, պետք է նշել, որ մարդու ֆիզիկական ամբողջականության իրավունքը չի իրագործվում, և խոսք լինել չի կարող սոմատիկ իրավունքների մասին:

Գրականություն

1. «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենք (2002 թվականի ապրիլի 16):
2. «Փոխպատվաստման ենթակա օրգաններ և (կամ) հյուսվածքների ցանկը սահմանելու մասին» ՀՀ Կառավարության 2007թ. 26 ապրիլի N 502-Ն որոշում:
3. Аполинская Н.В. Вновь к вопросу о посмертном донорстве органов, тканей человека // Сибирский юридический вестник. 2007. N 3 (38).
4. Барков А.В., Грачев Р.Ю. Рынок ритуальных услуг: проблемы гражданско-правового регулирования: Монография. М., 2013.
5. Донцов Д.С. Тело живого человека как нематериальное благо и гражданско-правовая защита его физической неприкосновенности // Медицинское право. 2011. N 2.
6. Дополнительный протокол к Конвенции о правам человека и биомедицине относительно трансплантации органов и тканей человека, https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=0900001680081581
7. Конвенция о защите прав и достоинства человека в связи с применением достижений биологии и медицины: Конвенция о правах человека и биомедицине, http://hrlibrary.umn.edu/russian/euro/Rz37.html
8. Ковлер А. И. Антропология права, М.: Норма, 2002.
9. Крусс В. И. Личностные («соматические») права человека в конституционном и философско-правовом измерении: к постановке проблемы // Государство и право. -2000.-№10.
10. Малеина М.Н. Личные неимущественные права граждан (понятие, осуществление и защита): Дис. ... д-ра юрид. наук. М., 1997.
11. Мызров С.Н., Нагорный В.А. К вопросу о вещно-правовом статусе органов и тканей человека: дифференцированный подход к разрешению проблемы // Медицинское право. 2014. N 3.
12. Старовойтова О. Э. Юридический механизм реализации и защиты соматических прав человека и гражданина в Российской Федерации: историко-правовой и теоретический анализ: авторе. дис. д-ра юрид. наук. СПБ, 2006.
13. Халабуденко О.А. Имущественные права. Книга 1. Вещное право, Кишинев,2011.
14. Энциклопедический словарь медицинских терминов/ Гл. ред. Б. В. Петровский. — М.: Сов. энцикл, 1982-1984гг.
15. Charter of Fundamental Rights of the European Union, http://www.europarl.europa.eu/charter/pdf/text_en.pdf

УДК 343.4

Уголовное право

Аделина Саргсян
Российско-Армянский университет
crimlaw.rau@mail.ru

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ КВАЛИФИКАЦИИ ПРЕСТУПЛЕНИЙ ПРОТИВ СОБСТВЕННОСТИ, СОВЕРШАЕМЫХ С ПРИМЕНЕНИЕМ ГИПНОЗА

С течением времени гипноз (гипнология) получает все большее развитие в обществе, и так как зачастую используется не для благих целей, становится серьезным механизмом в руках преступности. Вследствие распространения данного явления и возможности его использования среди населения, увеличивается количество преступлений, совершаемых с применением гипноза и, следовательно, жертв, подвергшихся его воздействию.

Ключевые слова: гипноз, разбой, мошенничество, кража, психическое насилие.

Adelina Sargsyan
Russian-Armenian University
crimlaw.rau@mail.ru

SOME QUESTIONS OF QUALIFICATION OF CRIMES AGAINST OWNERSHIP WITH THE APPLICATION OF HYPNOSIS.

Over time, hypnosis (hypnology) is gaining increasing development in society, and since it is often used not for good purposes, it becomes a serious mechanism in the hands of crime. Due to the spread of this phenomenon and the possibility of its use among the population, the number of crimes committed with the use of hypnosis and, consequently, the victims affected by its consequences is increasing.

Keywords: hypnosis, robbery, fraud, theft, mental abuse.

Ադելինա Սարգսյան
Հայ-Ռուսական համալսարան
crimlaw.rau@mail.ru

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՀԻՊՆՈՍԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԿԱՏԱՐՎՈՂ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Ժամանակի ընթացքում հիպնոսը հիպնոլոգիա ստանում է ավելի մեծ զարգացում հասարակության մեջ, և քանի որ հաճախ օգտագործվում է ոչ բարի նպատակներով, դառնում է լուրջ մեխանիզմ հանցավորության ձեռքերում: Բնակչության շրջանում նշված երևութին նրա օգտագործման հնարավորության տարածման հետևանքով մեծանում է հիպնոսի կիրառմամբ հանցագործությունների, և հետևաբար, նրա ազդեցությանը ենթարկված զոհերի քանակը:

Բանալի բառեր՝ հիպնոս, ավազակություն, խարդախություն, գողություն, հոգեբանականբռնություն.

Введение

Говоря о быстрых темпах увеличения и совершенствования профессиональной преступности,нужно отметить, что намечается тенденция совершения преступлений не только физическими способами, но и интеллектуальными, что свидетельствует о повышенной общественной опасности совершаемого деяния. И одним из интеллектуальных способов совершения преступлений является гипноз. Знания в данной сфере дают возможность гипнотизирующему полностью либо частично контролировать загипнотизированного и манипулировать его действиями для причинения им (или же ему) физического или имущественного вреда, пользуясь беспомощным состоянием этих лиц, вплоть до их самоубийства. Применив гипноз осуществляются преступления не только в отношении загипнотизированного, но и внушается последнему совершение им общественно опасного деяния.

Актуальность исследуемой темы определяется следующими обстоятельствами. Во-первых, судебные и следственные органы в процессе квалификации подобных деяний нередко допускают ошибки, что вытекает из отсутствия достаточных знаний в подобной психофизиологической сфере, или иногда полностью отрицания наличия данного явления. Во-вторых, нужно отметить, что совершаемые загипнотизированным, но в реальности по воле гипнотизера, преступные деяния зачастую определяются как совершенные по его собственному умыслу, и происходит привлечение к уголовной ответственности именно данного лица, а гипнотизер остается за рамками правосудия.

Что представляет собой такое явление как гипноз? Гипноз (от греч. hypnos – сон) – это вызванное самовнушением или воздействием гипнотизера временное состояние сознания, характеризующееся резкой фокусировкой внимания и высокой подверженностью внушению[1].

В процессе нашего научного исследования мы остановимся на следующих аспектах:

-кто и в какой степени будет нести ответственность за преступления, совершённые загипнотизированным лицом;

-проблемы квалификации преступлений против собственности, совершаемых под воздействием гипноза.

Для нашего исследования первостепенный интерес представляет криминальный гипноз. Криминальный гипноз – это изменение состояния сознания,которое путём психического воздействия на личность используют для совершения лицом преступления или для подчинения такого лица.

Нужно отметить, что гипноз относится к виду психического насилия в силу обладания им следующими признаками: общественная опасность; противоправность; умышленность; конкретная преступная цель воздействия; причинение психического вреда потерпевшему.

Говоря о преступлениях, совершённых под воздействием гипноза, в правоприменительной практике встаёт вопрос: кто и в какой степени будет нести уголовную ответственность за преступления, совершённые загипнотизированным лицом? Данная проблема также получила широкое обсуждение в литературе уголовного права. Так, известный учёный Н.С. Таганцев характеризовал такое состояние как одно из оснований от уголовной ответственности с учётом возможной невменяемости преступника. Он указывал: «Я полагаю, что, если действительно доказано, что лицо действительно действовало под влиянием гипнотического внушения, подобные деяния должны быть рассматриваемы как учиненные во временном потемнении психической деятельности, во временно бессознательном состоянии и, следовательно, должны быть признаны невменяемыми». Но так как существуют два критерия невменяемости (юридический и медицинский), состояние гипноза не может считаться состоянием невменяемости, поскольку отсутствует медицинский критерий, то есть болезненное состояние психики. В теории уголовного права преобладает точка зрения об отнесении гипноза к особому виду психического насилия вследствие психического принуждения. Следовательно, квалификация деяния должна осуществляться по нормам статьи 40 УК РФ. Но следственно-судебной практике бывали случаю, когда загипнотизированные лица привлекались к ответственности на общих основаниях и факт их нахождения под гипнозом учитывался как обстоятельство, смягчающее ответственность.

Во время квалификации подобных случаев важно всегда учитывать степень участия воли лиц, подвергнутых гипнозу, в совершении общественно опасного деяния. Возникает вопрос о наличии или отсутствии в действиях лиц признаков соучастия. При наличии заведомой осведомлённости лица о применении в отношении него гипноза с преступной целью или о его подозрении относительно данного обстоятельства либо изъявлении им желания быть введённым в гипнотический сон, такое лицо однозначно подлежит уголовной ответственности в качестве соисполнителя (ч. 2 ст. 33 УК РФ). Если вследствие применения гипнотического воздействия лицо сохранило возможность осознавать свои действия и руководить ими, то содеянное влечет уголовную ответственность. А в том случае, если загипнотизированный заранее не знал о готовящемся гипнотическом сеансе или в процессе этого не осознавал значения действий, проводимых в отношении него, или не был в состоянии оказывать сопротивление гипнотизеру и руководить своими действиями, в силу этого он не подлежит уголовной ответственности. Загипнотизированное лицо в таком случае следует признавать посредственным исполнителем (ч. 2 ст. 33 УК РФ).

Далее остановимся на основных аспектах квалификации общественно опасных деяний против собственности, совершаемых с применением гипнотического воздействия. При квалификации данных деяний правоприменительная практика нередко допускает ошибки, что в свою очередь является следствием неверного толкования термина «психическое насилие». Проблема возникает в том случае, когда судебная практика идёт по пути отождествления гипноза и обмана, что и приводит к ошибкам в квалификации. Так, например, согласно приговору Суздальского районного суда Владимирской области некто Х была приговорена к двум годам лишения свободы условно по ч. 2 ст. 159 УК РФ за совершение «мошенничества, то есть тайного хищения чужого имущества путем обмана или злоупотребления доверием...». Однако данная квалификация является ошибочной, поскольку из материалов дела было видно, что гражданка Х завладела деньгами потерпевшей. У путем активного продолжительного воздействия на психику последней. А также, в соответствии с показаниями самой потерпевшей, в момент передачи денег она, возможно, возможно, находилась под гипнозом или каким-то внушением. В данной ситуации правоприменительной практике остается выбирать между двумя уголовно-правовыми нормами: грабеж и разбой. Поскольку гипноз в рассматриваемом случае не привел к каким-либо тяжким последствиям, например, расстройство психики, физический вред здоровью, то мы можем исключить применение статьи 162 УК РФ. Таким образом, действия гражданки Х подлежат квалификации по п. «г» ч.2 ст. 161 УК РФ (грабеж).

Таким образом, подытоживая рассматриваемый нами пример, приходим к выводу, что совершение преступления против собственности с применением гипноза полностью исключает квалификацию по ст. 159. Мошенничество предполагает совершение преступления путем обмана или злоупотребления доверием, однако гипноз не относится ни к одному из них. Обман представляет собой сообщение заведомо ложных сведений или умолчание о тех или иных фактах, а злоупотребление доверием предполагает использование с корыстной целью доверительных отношений с владельцем имущества. Гипноз же представляет из себя это временное воздействие на сознание человека, в результате которого изменяются функции личного контроля и самосознания.

Определенные проблемы возникают с вопросом квалификации данного деяния по ст. 158 УК РФ. Гипноз представляет собой блокировку сознания потерпевшего, что означает тайное хищение чужого имущества при

отсутствии очевидцев. Кража также, в свою очередь, характеризуется признаком тайности, однако, для квалификации деяния по ст. 158 есть одно препятствие – кража – это ненасильственное преступление, а гипноз же является видом психического насилия.

Что касается попытки квалифицировать преступления против собственности, совершаемые с применением гипноза, по ст. 161 УК РФ (грабеж) и ст. 162 УК РФ (разбой), то и здесь мнения юристов и правоприменительная практика расходятся. Ведь, как известно, характерным признаком грабежа и разбоя является открытость, но гипноз представляет собой так сказать, тайный процесс.

Делаются попытки подвести гипноз, как способ, в рамки разбоя. Однако, по мнению многих ученых, разбою свойственно нападение, которое отсутствует при применении гипноза. Было бы верным провести семантический анализ термина «нападение», который, на мой взгляд и на взгляд ряда юристов, также может охватываться понятием «гипноз». Тем не менее, гипноз необходимо отнести к насилию, опасному для жизни или здоровья, поскольку он может повлечь тяжкие последствия вплоть до психического расстройства или самоубийства[2].

Постановление Пленума Верховного Суда Российской Федерации от 27 декабря 2002 г. № 29 «О судебной практике по делам о краже, грабеже и разбое» в п. 23 содержит указание на введение в организм потерпевшего сильнодействующего, ядовитого или одурманивающего вещества. Подобные действия Пленум предлагает расценивать, в зависимости от степени опасности указанного вещества для организма как способ совершения разбоя или насильственного грабежа — без учета признаков открытости и нападения.

Учитывая указанное выше Постановление, а также тот факт, что гипноз – это насилие, опасное для жизни или здоровья, можно квалифицировать хищение, совершенное путем гипноза, по ст. 162 УК РФ.

Говоря о предмете преступлений против собственности, также возникают некоторые трудности касательно права на имущество, которое является предметом мошенничества (ст. 159 и ст. 159.6 УК РФ), вымогательства. Ввиду того, что мошенничество не является насильственным деянием, получение права на имущество путем гипноза исключает квалификацию по ст. 159 УК РФ. В диспозиции статьи 163 четко указан способ совершения преступления – требование передачи имущества или права на имущество. Однако при гипнозе происходит настройка потерпевшего на совершение того или иного действия, внушение ему определенных фактов и выполнения определенных действий. Потерпевший не в состоянии осознавать характер и значение совершаемых с ним действий или внушаемых ему мыслей, поскольку происходит блокировка его сознания. Данное обстоятельство препятствует рассмотрению настройки, совершаемой в процессе гипноза, как своего рода требования, адресованного потерпевшему. Кроме того, завладение правом на имущество может произойти непосредственно в момент нахождения потерпевшего в состоянии гипнотического транса, в то время как постановление Пленума Верховного Суда Российской Федерации от 4 мая 1990 г. № 3 «О судебной практике по делам о вымогательстве» в п. 2 содержит указание на отдаленность по времени выражения требования и передачи требуемого[3].

В уголовном законе по данному вопросу существует пробел, следствием которого является квалификация завладения правом на имущество, совершенного путем гипноза, как вымогательства. Учитывая насильственный характер гипноза, виновного нужно привлекать к ответственности по п. «в» ч. 2 ст. 163 УК РФ.

Подробно рассматривая проблему совершения хищения имущества посредством применения к потерпевшему гипноза, возникает и такая мысль: квалифицировать содеянное как кражу, учитывая ее тайный характер, но при этом, принимая во внимание ее ненасильственную природу, внести определенные изменения в УК РФ, а именно :

- дополнить его ст. 119.1 «Применение психического насилия» и, таким образом, квалифицировать вышеотмеченное деяние по совокупности ст. 158 УК РФ и ст. 119.1 УК РФ.

В целях привлечения криминальных гипнотизеров к соразмерной содеянному преступлению ответственности, предлагается сформулировать диспозицию п. «г» ч. 2 ст. 158 УК РФ следующим образом: «с применением гипноза или насилия, не опасного для жизни и здоровья, либо с угрозой применения такого насилия».

Также было целесообразно внести дополнение в ч. 1 ст. 162 УК РФ «Разбой, то есть нападение в целях хищения чужого имущества, совершенное с применением гипноза или насилия опасного для жизни и здоровья, либо с угрозой применения такого насилия».

Бывают случаи, когда гипноз сопряжен с обманом, однако обман здесь – это лишь подготовительный этап для последующего гипнотического внушения. Например, имея намерение похитить имущество, преступник с помощью обмана приводит потерпевшего в определенное место, затем осуществляет гипнотическое внушение и похищает имущество. В данном случае также имеет место быть разбой, поскольку непосредственным способом все же выступал гипноз, а обман всего лишь облегчил совершение преступления.

Возможна ситуация, когда потерпевший соглашается на осуществление в отношении него гипноза, однако все это – следствие его обманутости относительно цели гипноза (к примеру, преступник заверяет потерпевшего, что гипноз – это способ излечить его от страшной болезни).

Если в результате гипнотического внушения был причинен вред жизни или здоровью потерпевшего, то деяние надлежит квалифицировать, как и последствия насилия, руководствуясь разъяснениями Пленума Верховного Суда Российской Федерации. При разбое легкий и средней тяжести вред здоровью охватывается составом, предусмотренным ст. 162 УК РФ, тяжкий вред здоровью предусмотрен как квалифицирующий признак разбоя,

причинение тяжкого вреда здоровью, повлекшее смерть потерпевшего, требует дополнительной квалификации по ч. 4 ст. 111 УК РФ [4].

Несмотря на то, что Пленум Верховного Суда РФ не содержит разъяснений Пленума по данному вопросу относительно вымогательства, представляется, что причинение тяжкого вреда здоровью, в результате которого наступила смерть потерпевшего, необходимо квалифицировать по совокупности с ч. 4 ст. 111 УК РФ. Если в результате гипнотического внушения при вымогательстве наступила смерть потерпевшего, содеянное надлежит квалифицировать, согласно п. 12 постановления Пленума Верховного Суда Российской Федерации «О судебной практике по делам о вымогательстве», по п. «в» ч. 2 ст. 163 и п. «з» ч. 2 ст. 105 УК РФ.

Следовательно, можем сделать вывод о том, что хищение имущества, совершенное путем применения гипноза, следует квалифицировать по ст. 162 УК РФ как разбой, а завладение правом на имущество в результате применения гипнотического внушения к потерпевшему необходимо квалифицировать как вымогательство. В случае причинения в процессе вымогательства тяжкого вреда здоровью, повлекшего смерть, содеянное следует квалифицировать по совокупности с ч. 4 ст. 111 УК РФ. Однако если потерпевший был обманут относительно цели проведения гипноза и, таким образом, сам дал свое согласие на это, а преступник во время сеанса завладел имуществом или правом на имущество, то содеянное следует квалифицировать как мошенничество. Если в процессе совершения подобного мошенничества причинен вред жизни или здоровью потерпевшего, деяние надлежит квалифицировать по совокупности со ст. ст. 105, 111, 112, 115 УК РФ. Если в результате гипнотического внушения при вымогательстве наступила смерть потерпевшего, содеянное надлежит квалифицировать по п. «в» ч. 2 ст. 163 УК РФ и п. «з» ч. 2 ст. 105 УК РФ.

Подводя итоги проведенному исследованию, считаем нужным отметить, что учитывая пробелы в законодательстве и возникающие проблемы на практике, следует усовершенствовать определенные положения уголовного кодекса РФ и усилить деятельность по борьбе с профессиональной преступностью.

В целях предупреждения преступлений, совершенных с применением гипноза, предлагается:

принять Федеральный закон РФ «О гипнозе», в котором среди прочего дать законодательное определение гипноза, обозначить круг лиц, имеющих право применять гипноз, запретить сеансы массой гипнотерапии и эстрадного гипноза в случаях, когда у лиц, их осуществляющих, нет возможности дальнейшего наблюдения за людьми, подвергавшимися гипнозу;

внести дополнение в ст. 17 Федерального закона РФ «О лицензировании отдельных видов деятельности», включив в перечень видов деятельности, на осуществление которых требуется получение лицензий, эстрадный гипноз и обучение гипнозу;

включить в разработанный ГИАЦ МВД России Справочник № «Способ совершения преступления» гипноз в качестве способа совершения преступления, что позволит вести статистику указанных противоправных деяний;

создать в органах МВД группы специалистов, включающие следователей, компетентных в области уголовного закона и гипнологии, возложив на них обязанность по расследованию, анализу и профилактики преступлений, совершенных с применением гипноза;

предпринять в отношении лиц из группы риска меры виктимологической профилактики.

Литература

[1] Психотерапевтическая энциклопедия / под ред. Б. Д. Карвасарского.

[2] Чечель Г., Седых Л. Особенности квалификации преступления, совершенного загипнотизированным лицом // Уголовное право. 2009. № 3. С. 56.

[3] Гримак Л. П. Гипноз и преступность. М., 1997; Китаев Н. Н. Гипноз и преступления: лекция. Иркутск. 2006

[4] «О судебной практике по делам о краже, грабеже и разбое»: постановление Пленума Верховного Суда Российской Федерации от 27 декабря 2002 г. № 29. С. 5.

ՀՏԴ 343.5

Իրավագիտություն

Լուիզա Ներսեսյան
Արցախի պետական համալսարան
ղեկ.՝ Սոսի Ալեքսանյան
luiza.nersesyan97@mail.ru

«ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Հոդվածում պարզաբանվում են ընտանեկան բռնություն, կանանց նկատմամբ բռնություն հասկացությունները, բացատրվում են ձևերը: Բերվում են աշխարհում տվյալ երևույթի վերաբերյալ վիճակագրական տվյալներ: ՀՀ-ում այդ խնդրի լուրջ լինելը պատճառաբանվում է բերված երկրում կատարվող սպանությունների թվերի ցուցանիշներով: Ներկայացվում են տվյալ հարցը լուծելուն ուղղված տարբեր մարմինների ու կազմակերպությունների ջանքերը: Իմ կողմից կատարված սոցհարցման արդյունքները ավելի պատկերավոր են դարձնում տվյալ խնդրի արդիականությունը, արդյունքում առաջարկվում են կանանց նկատմամբ բռնության զորրծադրման դեմ պայքարի միջոցները:

Բանալի բառեր՝ Բռնությունը կանանց նկատմամբ, ընտանեկան բռնություն, տնային բռնություն, կանանց իրավունքներ և ազատություններ, կանանց դերը հասարակությունում, բռնության դեմ պայքարի միջոցներ:

Луиза Нерсесян
Арцахский государственный университет
руководитель: Соси Алексанян
luiza.nersesyan97@mail.ru

НЕОБХОДИМОСТЬ ПРИНЯТИЯ ЗАКОНА «О ДОМАШНЕМ НАСИЛИИ»

В статье разъясняются понятия домашнего насилия и насилия над женщинами, объясняются виды применения насилия. Приводятся статистические данные об этом явлении в мире. Серьезность данного вопроса в РА разъясняется приведенными показателями убийств. Приводятся примеры усилий различных органов и организаций по решению этой проблемы. Результаты моего опроса показывают большую актуальность этой проблемы, и в результате предлагаются меры по борьбе с насилием в отношении женщин.

Ключевые слова: Насилие над женщинами, семейное насилие, домашнее насилие, права и свободы женщин, роль женщин в обществе, методы борьбы с насилием.

Luiza Nersesyan
Artsakh state university
Suprovisor: Sosy Aleqsanyan
luiza.nersesyan97@mail.ru

THE IMPORTANCE OF ACCEPTANCE OF THE LAW «ABOUT DOMESTIC VIOLENCE»

The article reveals the concept of domestic violence, clarifies the types of violence. Shows world statistic data about current issues. The serious nature of this problem is determined by the number of murders in the RA. Presented the efforts of different bodies and organizations to solve the issue. The results of my survey shows relevance of the issue, and in the outcome, measures to combat violence against women are offered.

Keywords: Violence Against Women, Domestic Violence, Women's Rights and Freedoms, Women's Role in Society, Measures to Stop Violence.

Կնոջ դերը միշտ էլ կարևորվել է մեր պետության պատմության մեջ: Սակայն դրա հետ մեկտեղ ընտանեկան բռնությունը խորը արմատներ է մտցրել շատ հայկական ընտանիքներում և առ այսօր համարվում է սովորական ու նույնիսկ պետքական մաս: Այդ խնդիրը դարձավ հրատապ և արդիական բոլորիս համար:

Նոյեմբերի 25–ը կանանց դեմ բռնության վերացման միջազգային օրն է: Այդ օրը ընդունվել է 1999 թ.–ին ՄԱԿ–ի Գլխավոր ասամբլեայի կողմից այն նպատակով, որ հասարակությունը ավելի շատ ուշադրություն դարձնի կանանց իրավունքների ոտնահարման խնդիրներին: Ինչպե՞ս եղավ, որ նման օր սահմանելու անհրաժեշտություն առաջացավ:

Շատ մշակույթներում կինը համարվում է, այսպես ասած, երկրորդ կարգի մարդ, և նա «համապատասխան» վերաբերմունքի է արժանանում: Կանանց վերաբերյալ նախապաշարումները խորապես արմատացած են: Նրանց նկատմամբ բռնությունը իր բոլոր դրսևորումներով դեռ շարունակում է մնալ որպես լուրջ խնդիր նույնիսկ, այսպես կոչված, զարգացած երկրներում: ՄԱԿ–ի նախկին գլխավոր քարտուղար Քոֆի Անանի խոսքերով՝ «կանանց նկատմամբ բռնությունը գլոբալ խնդիր է: Այդ երևույթը գոյություն ունի բոլոր հասարակություններում և մշակույթներում: Բռնության են ենթարկվում բոլոր կանայք՝ անկախ ռասայից, էթնիկական պատկանելությունից, սոցիալական դիրքից, ծագումից և այլն»[1]:

Ռաղիկա Կումարասվամին (ՄԱԿ–ի Մարդու իրավունքների հանձնաժողովի՝ կանանց նկատմամբ բռնության մասին նախկին հատուկ զեկուցող) ասում է, որ կանանց ճնշող մեծամասնության համար իրենց նկատմամբ բռնությունն «արգելված թեմա է: Այն կյանքի ամոթալի իրականություն է, որը ծածկված է հասարակության աչքից»:[2]

Պարզաբանենք, թե ինչ է իրենից ներկայացնում ընտանեկան բռնությունը: **Ընտանեկան բռնություն**, նաև օգտագործվում է **տնային բռնություն** կամ **կենցաղային բռնություն**, մտերիմ հարաբերությունների մեջ գտնվող մեկ զուգընկերոջ կողմից մյուսի նկատմամբ կրկնվող բռնություն: Հիմնականում մտերիմ զուգընկերների միջև միակողմանի բռնությունը որակավորվում է որպես տնային կամ ընտանեկան բռնություն, երբ զուգընկերները գտնվում են երկարաժամկետ հարաբերությունների մեջ, որոնց օրինակներ են օրինական կամ քաղաքացիական ամուսնությունը, երկարատև սիրային հարաբերությունները, ընտանեկան կամ ազգակցական կապը և այլն: Տնային բռնությունը կարող է հանդես գալ տարբեր ձևերով, որոնցից են ֆիզիկական բռնությունը (հարվածում, կծում, ծեծ, հրում, իրերի նետում, սանձում), սեռական բռնաբարումը, հետապնդումը, հուզային ճնշումը (գոռոց, հայհոյանքներ, սպառնում), պասիվ ճնշումը (անտարբերություն, արհամարհում) և տնտեսական զրկումը:

Բռնի պահվածքը կարող է զուգորդվել հարբեցողությամբ և հոգեկան խանգարումներով, որոնք բարդացնում են ընտանեկան բռնության կասեցումը:

Տնային բռնության մասին իրազեկությունը, հասարակական ընկալումը, իրավական սահմանումը և քրեական պատժելիությունը տարբերվում են երկրից երկիր, ինպես նաև տարբեր ժամանակաշրջաններում: Գրեթե բոլոր արևմտյան երկրներում տնական բռնությունը քրեականացված է, ի տարբերություն զարգացող երկրների, որոնցից շատերում այս տիպի բռնությունը չի պատժվում օրենքով, որոշ երկրներում էլ համարվում է ընդունված կարգ ընտանիքներում:

Անդրադառնամ վիճակագրական տվյալներին, որոնք ինչքան էլ ցավալի չլինեն, սակայն կազմում են մեր կյանքի իրականությունը, և այդ իրականությունը չընդունելը ու դրա վրա ուշադրություն չդարձնելը չի լուծում մեր առջև դրված խնդիրը: Խնդիր կա, այն համաշխարհային մասշտաբ ունի և մեզանից կախված է օգտագործել բոլոր ռեսուրսները, բոլոր միջոցները սկզբից հարցի մի մասը, ապա և ամբողջ խնդիրը լուծելու համար:

1. Ընտանեկան բռնության երևույթն ուսումնասիրող Նիդեռլանդական մի կազմակերպություն տեղեկացնում է, որ հարավամերիկյան մի երկրում կանանց 23 տոկոսը, կամ՝ 4 կանանցից 1–ը, ընտանիքում ենթարկվում է բռնության:
2. Եվրախորհրդի տվյալներով՝ եվրոպացի 4 կանանցից 1–ը իր կյանքի ընթացքում ընտանեկան բռնության է ենթարկվում:
3. Ըստ Մեծ Բրիտանիայի ներքին գործերի նախարարության՝ Անգլիայում և Ուելսում վերջին տարիներից մեկում միջին հաշվով ամեն շաբաթ երկու կին է սպանվում իր ներկա կամ նախկին զուգընկերոջ կողմից:
4. «Ինդիա թուդեյ ինթերնեշնլ» թերթը հաղորդում է, որ «մշտական վախը ամբողջ Հնդկաստանում կանանց ուղեկիցն է, իսկ բռնաբարությունը այն օտարականն է, որին կարող են հանդիպել ցանկացած ճանապարհում, անկյունում, հասարակական վայրում և ցանկացած ժամի»:
5. Ըստ «Միջազգային համաներում» կազմակերպության՝ կանանց և աղջիկների նկատմամբ բռնությունը մեր օրերում «մարդու իրավունքների ամենատարածված ոտնահարումն է»:

Ցավալի դեպք այլ պետությա օրինակում՝

[1] http://www.iravunk.com/news/11729
[2] https://wol.jw.org/hy/wol/d/r44/lp-rea/102008001

6. 2010 թ. Արաբական Էմիրությունների Գերագույն Դատարանը որոշեց, որ ամուսինը իրավունք ունի իր կնոջը և երեխաներին ֆիզիկական ուժով պատժելու, եթե պատժի հետևանքում տեսանելի վնասվածքներ չեն մնում: Հասարակական ընդունելիությունը տնական բռնության հանդեպ նույնպես տարբերվում է երկրից երկիր: Զարգացած երկերներից շատերում տնական բռնությունը համարվում է անընդունելի բնակչության մեծամասնությոն կողմից, սակայն երկրագնդի այլ մասերում հասարակական կարծիքները կարող են տարբերվել սրանից.

7. ըստ ՅՈՒՆԻՍԵՖի հարցման, 15-49 տարեկան կանայք, որոնք արդարացի են համարում ամուսնու կողմից կնոջ ծեծելը հատուկ հանգամանքներում, կազմում են

90% Հորդանանում,

85.6% Գվինեայում,

85.4% Զամբիայում,

85% Սիերա Լեոնեում,

81.2% Լաոսում, և

81% Եթովպիայում:

Հայաստանում ընտանեկան բռնությունը որպես առանձին հանցագործություն քրեականացված չէ, սակայն կա ՀՀ Աշխատանքի և Սոցիալական Հարցերի նախարարության կողմից մշակված համապատասխան օրենքի նախագիծ, որը մերժվել է ՀՀ կառավարության կողմից 2013 թ. Հունվարին:

Ընտանեկան բռնությունը կարող է հանդես գալ տարբեր ձևերով, որոնցից են ֆիզիկական, սեռական, հուզային, հոգեբանական և տնտեսական բռնությունները:

Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին, Եվրոպայի Խորհրդի կոնվենցիա՝ ուղղված կանանց նկատմամբ բռնության, ինչպես նաև ընտանեկան բռնության դեմ: Այն բացվել է ստորագրության 2011 թ. մայիսի 11-ին Թուրքիայի Ստամբուլ քաղաքում: Կոնվենցիայի նպատակներն են բռնության կանխարգելումը, զոհերի պաշտպանությունը և հանցագործների քրեական հետապնդումը: Այն ստորագրվել է 30 պետությունների կողմից և ռատիֆիկացվել է 5 պետությունների կողմից (ըստ ռատիֆիկացման հերթականության՝ Թուրքիա, Պորտուգալիա, Ալբանիա, Մոնտենեգրո, Իտալիա): Այն ուժի մեջ կմտնի 10 պետությունների կողմից ռատիֆիկացիայից հետո, որոնցից 8-ը պետք է լինեն Եվրոպայի Խորհրդի անդամ պետություններ: Ուժի մեջ մտնելուց հետո կոնվենցիան ռատիֆիկացրած պետություններում այն կկրի օրենքի ուժ:[1] Հայաստանը կոնվենցիան չի ստորագրել:

2010-2015 թվականների ընթացքում ընտանեկան բռնության հետևանքով սպանվել է 30 կին, ինչի հետևանքով մոտ 45 երեխա մնացել է առանց մայրական խնամքի: Կնասպանության դեպքեր Հայաստանում գրանցվել են հիմնականում 20-40 տարեկան կանանց շրջանում:

Անցնող տարվա վերջին կանանց իրավունքների պաշտպանության խնդրով զբաղվող ՀԿ-ներն ահազանգում են՝ 2016-ին կնասպանության 10 դեպք է գրանցվել Հայաստանում: Իսկ 2015թ.-ին ՀՀ քննչական կոմիտեի տվյալներով գրանցվել է ընտանիքի անդամի կողմից կատարված սպանության և ծանր մարմնական վնաս պատճառելու 23 դեպք, որից 16-ը՝ սպանություն, ինչը կազմում է հանրապետությունում ընդհանուր առմամբ գրանցված սպանությունների 17 տոկոսը:

Կնասպանության յուրաքանչյուր դեպք պետք է մանրակրկիտ ուսումնասիրության ենթարկվի, որպեսզի հնարավորինս համակողմանի վերհանվեն բոլոր այն բացերը, պատճառները, պետական մարմինների դրսևորած անգործության կամ կամայական որոշումների դեպքերը, որոնք հանգեցրել են նման ողբերգական ավարտի:

ՀՀ Արդարադատության նախարարության կայքէջում հրապարակված օրինագիծը հանվեց այն բանից հետո, երբ սոցցանցերում սկսվեցին քննադատել ոչ թե օրինագծի դրույթները, այլ դրա հնարավոր «նպատակը»՝ իբր հայ ընտանիքները քանդելը ու երեխաներին ընտանիքից օտարելը:

Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնի ներկայացուցիչ Աննա Հովհաննիսյանը, ով վերջերս մասնակցել է ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայով ստանձնած հանձնառությունների կատարման մասին Հայաստանի պարբերական զեկույցի ներկայացմանը, նշեց, որ Կանանց խտրականության դեմ կոմիտեն մեկ անգամ չէ, որ շեշտադրել է Ընտանեկան բռնության մասին օրենքի ընդունման անհարժեշտությունը[2]:

Աննա Հովհաննիսյանի խոսքով, կոմիտեն անդրադարձել է նաև ԶԼՄ հրապարակումներում առկա կարծրատիպերին ու խտրականությանը: «Հավատացեք, բռնարարին արդարացնող ցանկացած խոսք, նյութ, հոդված, կարծիք հետագա բռնության հիմք է հանդիսանում:

[1] http://www.police.am/international-co-operation/history-of-cooperation/2012-%D5%A9%D5%BE%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6.html

[2] http://www.un.am/res/UN%20Treaties/III_8.pdf

Օրենքի ընդունումը չպետք է դիտարկել որպես ինչ-ինչ կառույցների պահանջ, պետք է հասկանալ, որ դրանց հետևում կանգնած են իրական մարդկային ճակատագրեր: Բռնության ենթարկվող կանանցից յուրաքանչյուրը տառապում է, որևէ մեկը չի կարողանում աջակցել նրանց: Իրավապահ մարմիններն էլ հաճախ բարձրաձայնում են այդ մեխանիզմների բացակայության մասին:

Նշենք, որ մեր տարածաշրջանի մյուս երկրները՝ Ադրբեջանն ու Վրաստանն արդեն ունեն նման օրենք:

Արցախում գործում է Կանանց ռեսուրսային կենտրոն հասարակական կազմակերպությունը, որի գրասենյակը գտնվում է Շուշի քաղաքում: Այս տարվանից այն իր գրասենյակն է բացել նաև Ստեփանակերտում: Անդրադառնալով հասարակության մեջ կանանց նկատմամբ դրսևորած վարքագծին, կանանց նկատմամբ ընտանիքներում բռնություն գործադրելուն, կանանց իրավունքները, ազատությունները ու օրինական շահերը պաշտպանելուն այդ կազմակերպությունը ակտիվորեն աշխատում է թույլ չտալ որպեսզի ոտնահարվեն կանանց իրավունքները, ձեռնամուխ է լինում խախտված իրավունքների պաշըպանությանը:

Խնդրի լուծումը կարելի է տեսնել տարբեր միջոցներով՝

1. “Ընտանեկան բռնության մասին” օրենքի ընդունումը մինչև վերջ,իհարկե, չի վերացնի մեր առջև ծառացած խնդիրը, սակայն դա մի միջոց է, մի քայլ, որով մենք կկանգնենք այդ հարցի լուծման ճանապարհին:
2. Առաջարկում եմ նաև ստեղծել հոգեբանական օգնություն ցուցաբերող ՀԿ, որը անանուն սկզբունքով ընդունելով հաճախորդներին հնարավորին չափ կօգնի վերացնել այդ խնդիրը:
3. Հասարակական դիմումի վրա իրավապահ մարմինների կողմից տվյալ ընտանիքներ այցելելը և բռնություն գործադրողի վրա ներգործություն գորրծադրելը (նախազգուշացման ձևով),
4. Կնոջ ժամանակավոր հեռանալը ընտանիքից,
5. Ամուսնուն կարճաժամկետ ընտանիքից հեռացնելը, նրա հետ հոգեբանական զրույցներ անց կացնելը:
6. Ամուսնալուծությունը և պետության կողմից կնոջ ու երեխաների ապահովածության ու անվտանգության երաշխավորությունը:

Թեմայի արդիականությունը ընդգծելու համար իմ կողմից անց է կացվել սոցհարցում, որի արդյունքները զարմանալի կլինեն բոլորիս համար: Հարցման են ենթարկվել 100 կին, 50-ը մինչև 20 տարեկան, 50-ը 20 տարեկանից բարձր: Հարցերին պատասխանելուց առաջ նրանց բացատրվել է ընտանեկան բռնություն հասկացությունը, ձևերը, անպայման նշվել է հարցման անանուն լինելը, և ցանկության դեպքում հնարավորություն է տրվել հարցերին պատասխանել առանձին՝ առանց իմ ներկայության: Հարցման մեջ ընդրկվել են հետևյալ հարցերը՝ ընտանեկան դրությունը (ամուսնացած թե ոչ), ենթարկված են կենցաղային բռնության թե ոչ, ինչպիսի՞ ընտանեկան բռնության են ենթարկված այդ կանայք (հիմնականում ուշադրությունը դրվեց ֆիզիկական, հոգեբանական և ֆինանսական բռնություններին), ի՞նչ հաճախականությամբ էին կատարվում այդ բռնությունները (պարբերաբար թե ոչ), ի՞նչ շարժառիթով էին կատարվում (ակլոհոլի ազդեցության տակ թե առանց շարժառիթի), ու՞մ կողմից էին կատարվում (ծնող, ամուսին, մերձավոր բարեկամ): Արդյունքում մենք ունենք հետևյալ պատկերը՝

Հարցված 100 կանանցից 64-ը ենթարկվում են ընտանեկան բռնության, որոնցից 22-ը մինչև 20 տարեկանը, իսկ 42-ը 20 տարեկանից բարձր: Ֆիզիկական բռնության են ենթարկվում 44 կին, հոգեբանականը 36 կին (18-ը զուգորդված բռնության այլ ձևով), ֆինանսական բռնության են ենթարկվել 4 կին (2-ը զուգորդված այլ բռնությամբ), պարբերաբար բռնություն է գործադրվել 36 կնոջ նկատմամբ, ալկոհոլի ազդեցության գտնվելու դեպքում մերձավորի կողմից տուժել են 12 կին:

100 կանանց 64 %-ը ենթարկվում են բռնության, 50 կանանցից 37-ը :

Եվ հիմա մի պահ պատկերացրեք, որ այդ կանանցից մեկը ձեր միանուագար աղջիկն է, որին դուք 20-25 տարի պահել, փայփայել եք, և հետո նա ընկնում է այնպիսի մի արարածի ձեռք, ով պատբերաբար բռնության է ենթարկում նրան: Ի՞նչ կանեք Դուք:

ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆ														
	Ինչպիսի՞			*Համախական.*		*Շարժառիթ*		*Ու՞մ կողմից*			*Տարիքը*		*Ընտ. դրություն*	
N	Ֆիզիկ.	Ֆինանս.	Հոգեբան.	Պարբեր.	Ոչ պարբեր.	Ակնհոլ, թմրանյութ և այլն	Առանց շարժառիթի	Ծնող	Ամուսին	Մերձ. բարեկամ	Մինչև 20 տ.	20 տ.-ից բարձր	Ամուսն.	Ոչ ամուսն
1	+				+			+			+			+
2	+		+		+					+	+			+
3	+		+	+				+		+	+			+
4					+			+			+			+
5	+			+				+			+			+
6	+				+			+			+			+
7	+		+	+				+		+	+			+
8	+				+			+		+				+
9	+				+					+	+			+
10	+				+			+			+			+
11	+				+					+	+		+	
12											+			+
13											+			+
14	+					+				+	+			+
15	+		+	+			+	+			+			+
16	+		+	+		+		+			+			+
17											+			+

ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ													
	Ինչպիսի՞			*Հաճախական.*		*Շարժառիթ*		*Ու՞մ կողմից*			*Տարիքը*		*Ընտ. դրություն*	
N	Ֆիզիկ.	Ֆիևասս.	Հոգեբան.	Պարբեր.	Ոչ պարբեր.	Ակնոհոլ, թմրանյութ և այլն	Առանց շարժառիթի	Ծնող	Ամուսին	Սեռ. բարեկամ	Միևչև 20 տ.	20 տ.-ից բարձր	Ամուսն.	Ոչ ամուսն
18	+		+	+				+		+	+			+
19	+		+	+				+		+	+			+
20	+		+	+				+		+	+			+
21	+			+			+	+			+			
22											+			+
23											+			+
24	+		+	+			+			+	+			+
25	+		+		+			+			+			+
26	+			+		+		+			+			+
27			+	+			+			+	+		+	
28			+	+			+	+			+			+
29											+		+	
30											+			+
31											+			+
32		+		+			+		+		+		+	
33	+				+		+	+			+			+
34											+			+
35	+					+				+	+			+

ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ														
	Ինչպիսի՞			*Հաճախական.*		*Շարժառիթ*		*Ու՞մ կողմից*			*Տարիքը*		*Ընտ. դրություն*	
N	Ֆիզիկ.	Ֆիևասս.	Հոգեբան.	Պարբեր.	Ոչ պարբեր.	Ակնոհոլ, թմրանյութ և այլն	Առանց շարժառիթի	Ծնող	Ամուսին	Սեռ. բարեկամ	Մինչև 20 տ.	20 տ.-ից բարձր	Ամուսն.	Ոչ ամուսն
36											+			+
37											+			+
38	+			+			+	+		+	+			+
39			+	+					+		+		+	
40											+			+
41	+			+			+	+			+			+
42	+									+	+			+
43											+			+
44											+			+
45	+				+		+	+			+			+
46	+				+		+	+			+			+
47			+		+		+		+		+		+	
48											+		+	
49											+			+
50	+				+	+				+		+		+
51												+	+	
52	+		+		+			+				+	+	
53	+				+				+			+	+	

ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ														
	Ինչպիսի՞			*Հաճախական.*		*Շարժառիթ*		*Ու՞մ կողմից*			*Տարիքը*		*Ընտ. դրություն*	
N	Ֆիզիկ.	Ֆիևասս.	Հոգեբան.	Պարբեր.	Ոչ պարբեր.	Ակնոհոլ, թմրանյութ և այլն	Առանց շարժառիթի	Ծնող	Ամուսին	Սեռ. բարեկամ	Միևչև 20 տ.	20 տ.-ից բարձր	Ամուսն.	Ոչ ամուսն
54			+						+			+	+	
55	+			+		+			+			+	+	
56												+	+	
57			+	+						+		+	+	
58	+			+		+			+			+	+	
59			+	+					+			+	+	
60			+	+					+			+	+	
61	+		+	+				+				+		+
62	+	+	+	+			+			+		+	+	
63	+			+			+		+			+	+	
64	+		+		+	+			+	+		+	+	
65			+	+			+		+			+	+	
66	+		+		+			+		+		+		+
67												+		+
68												+		+
69												+		+
70												+		+
71		+		+					+			+	+	

ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ														
	Ինչպիսի՞			*Հաճախական.*		*Շարժառիթ*		*Ու՞մ կողմից*			*Տարիքը*		*Ընտ. դրություն*	
N	Ֆիզիկ.	Ֆիևասս.	Հոգեբան.	Պարբեր.	Ոչ պարբեր.	Ակնոհոլ, թմրանյութ և այլն	Առանց շարժառիթի	Ծնող	Ամուսին	Սեռ. բարեկամ	Մինչև 20 տ.	20 տ.-ից բարձր	Ամուսն.	Ոչ ամուսն
72			+	+				+				+		+
73			+	+				+				+		+
74												+	+	
75												+	+	
76			+		+				+	+		+	+	
77	+			+		+				+		+		+
78			+		+	+			+			+	+	
79		+	+	+			+		+			+	+	
80	+		+	+			+			+		+	+	
81	+		+	+		+			+			+	+	
82												+		+
83												+		+
84												+		+
85												+	+	
86	+				+	+				+		+		+
87			+	+			+			+		+	+	
88			+	+			+			+		+	+	
89	+				+		+	+				+		+

ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ														
	Ինչպիսի՞			*Հաճախական.*		*Շարժառիթ*		*Ու՞մ կողմից*			*Տարիքը*		*Ընտ. դրություն*	
N	Ֆիզիկ.	Ֆինանս.	Հոգեբան.	Պարբեր.	Ոչ պարբեր.	Ալկոհոլ, թմրանյութ և այլն	Առանց շարժառիթի	Ծնող	Ամուսին	Սեռ. բարեկամ	Մինչև 20 տ.	20 տ.-ից բարձր	Ամուսն.	Ոչ ամուսն
90												+	+	
91												+	+	
92												+		+
93			+		+		+			+		+		+
94												+	+	
95			+		+			+				+		+
96												+	+	
97												+		+
98	+		+	+			+		+	+		+	+	
99	+				+			+				+		+
100												+		+

100 ԿԻՆ						
	ֆիզիկական	**հոգեբանական**	**ֆինանսական**	**պարբերաբար**	**ալկոհոլի ազդեցության տակ**	**Բռնության ենթարկված կանայք**
Մինչև 20 տ.	27 կին	14 կին	1 կին	17 կին	4 կին	22 կին
20 տ.-ից բարձր	17 կին	22 կին	3 կին	19 կին	8 կին	42 կին
ընդհանուր	44 կին	36 կին (18-ը զուգորդված բռնության այլ ձևով)	4 կին (2- ը զուգորդված բռնության այլ ձևով)	36 կին	12 կին	**64 կին**

Օգտագործված գրականություն

Իրավական ակտեր՝

1. “Ընտանեկան բռնության մասին” օրենքի նախագիծ
2. Կոնվենցիա կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին

Այլ աղբյուրներ՝

3. http://www.iravunk.com/news/11729
4. http://www.un.am/res/UN%20Treaties/III_8.pdf
5. http://www.police.am/international-co-operation/history-of-cooperation/2012-%D5%A9%D5%BE%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6.html
6. https://wol.jw.org/hy/wol/d/r44/lp-rea/102008001
7. http://www.womensupportcenter.org/am/about/
8. http://asyou.pinkarmenia.org/civilsociety/2012/wsc/
9. https://med.news.am/arm/news/5286/yntanekan-brnutyun-inch-e-ayn.html
10. http://hetq.am/arm/news/8703/yntanekan-brnutyun-pattcharner-ev-hetevanqner.html

ՀՏԴ 343.8(479.25)

Իրավագիտություն

Վարազդատ Սուքիասյան
Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան,
մագիստրատուրա 1-ին կուրս
vsuqias@mail.ru

ՏՆԱՅԻՆ ԿԱԼԱՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հոդվածում ուսումնասիրվել են խափանման միջոց հանդիսացող տնային կալանքի կիրառման հիմահարցերը, ինչպես նաև տրվել է տնային կալանքի կիրառման արդյունավետության գնահատական: Հեղինակի կողմից առանձնացվել են տնային կալանքի կիրառման խնդիրները:

Բանալի բառեր ՝ խափանման միջոց, տնային կալանք, կալանավորում, պրոբացիա, մեղադրյալ

Вараздат Сукиасян
Российско-Армянский (Славянский) университет,
магистратура 1-ый курс
vsuqias@mail.ru

ПРОБЛЕМЫ ПРИМЕНЕНИЯ ДОМАШНЕГО АРЕСТА В РА

В данной статье рассмотрены проблемы применения такой меры пресечения как домашний арест. Дается оценка эффективности домашнего ареста как меры пресечения в уголовном процессе. Выделены проблемы применения домашнего ареста.

Ключевые слова: меры пресечения, домашний арест, заключение под стражу, пробация, обвиняемый.

Varazdat Sukiasyan
Russian-Armenian (Slavonic) University,
Master's degree 1st year
vsuqias@mail.ru

PROBLEMS OF APPLICATION OF HOUSE ARREST IN RA

This article examines the problems of applying such a preventive measure as a house arrest. An assessment of the effectiveness of home arrest as a measure of restraint in criminal proceedings is given. The problems of home arrest are highlighted.

Keywords: Preventive measures, house arrest, detention, probation, accused.

Մարդու իրավունքներն ու ազատությունները նրա սուբյեկտիվ, այսինքն՝ անհատական իրավունքներն ու ազատություններն են: Անձի ազատությունը ՄԻԵԿ-ով պաշտպանվող կարևորագույն հիմնարար իրավունքներից է: Յուրաքանչյուր ոք պետք է ընդհանուր առմամբ վայելի ֆիզիկական ազատությունը: Այս իրավունքից զրկելն ուղղակի բացասական ազդեցություն ունի մի շարք այլ իրավունքների, օրինակ ՝ ընտանեկան և անձնական կյանքի հարգման իրավունքի, հավաքների, միավորման և արտահայտվելու ազատության իրավունքի կամ տեղաշարժի ազատության իրավունքի վրա:

Թեև անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքը հռչակվում է Սահմանադրությամբ և միջազգային իրավական ակտերով, սակայն դա չի նշանակում, որ այն բացարձակ բնույթ է կրում: Յուրաքանչյուր օրենսդրությունում անխուսափելիորեն առաջանում են այնպիսի իրավիճակներ, երբ անհրաժեշտ է լինում անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքը սահմանափակել: Լրացուցիչ կարևոր երաշխիք է 2015թ. խմբագրությամբ Սահմանադրության 81-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված պահանջը, որը նախատեսում է, որ հիմնական իրավունքների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները: Նույնաբովանդակ դրույթ ամրագրված էր նաև 2005թ. խմբագրությամբ Սահմանադրության 43-րդ հոդվածի 2-րդ մասում: Միաժամանակ, 2015թ.

խմբագրությամբ Սահմանադրության 75-րդ հոդվածը հատուկ պահանջներ է սահմանում հիմնական իրավունքները կարգավորող օրենքների նկատմամբ, որոնց նպատակը հիմնական իրավունքների արդյունավետ գործողության և կենսագործելիության ընթացակարգային նախադրյալներ ստեղծելն է:

ՀՀ-ում իրավական և դատական բարեփոխումների շարունակականություն ապահովելու համար 2009թ. ապրիլի 21-ին ստորագրվել է «Դատաիրավական բարեփոխումների 2009-2011թթ. ռազմավարական գործողությունների ծրագիրը և դրանից բխող միջոցառումների ցանկը հաստատելու, ինչպես նաև աշխատանքային խումբ ստեղծելու մասին» ՀՀ Նախագահի կարգադրությունը[1]: Կարգադրությամբ որպես առաջնային նպատակ են սահմանվել անկախ ու հանրության առջև հաշվետու, թափանցիկ, մատչելի արդարադատության ապահովումը, կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը, դատաիրավական համակարգի օրենսդրության ու ռազմավարության բարելավումը, ինչպես նաև քրեական արդարադատության և քրեական պատիժների համակարգի արդյունավետության բարձրացումը: 2011 թվականի Կարգադրությանը հաջորդել է 2012 թվականի ՀՀ Նախագահի հունիսի 30-ի ՆԿ-96-Ա կարգադրությունը, որը, իր հերթին, նպատակ ունի շարունակել սկսված բարեփոխումները և մասնավորապես՝ հաստատել «ՀՀ Իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և դրանից բխող միջոցառումների ցանկը»: Իրականացված և իրականացվող բարեփոխումների մեջ քրեակատարողական համակարգի բարելավումը շարունակվում է ընկալվել որպես խիստ սկզբունքային նպատակ և միևնույն ժամանակ խնդիր:[2]

17.05.2016 թվականին ընդունվեց և 04.06.2016 թվականին ուժի մեջ մտավ «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքը, որի 3-րդ գլուխը կարգավորում է այլընտրանքային խափանման միջոցների կատարման ապահովումը, սակայն այն ուժի մեջ կմտնի 2018 թվականի հունվարի 1-ից:

Մշակված և օրենսդիր մարմնին ներկայացված ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ), որում հաշվի է առնվել ինչպես ՀՀ Սահմանադրության փոփոխությունները, պետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունները, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ Սահմանադրական և ՀՀ Վճռաբեկ դատարանների դատական պրակտիկան, նախատեսում է տնային կալանքը որպես ինքնուրույն խափանման միջոց: Խափանման միջոցների հետ կապված՝ նախագծում[3] տրված կարգավորման բնութագրական գծերից մեկը կալանքի ինստիտուտի համապատասխանեցումն է միջազգային չափանիշներին, ինչպես նաև ՀՀ բարձր դատարանների որոշումներում արտահայտված դիրքորոշումներին: Այդ մասին են, մասնավորապես, վկայում նոր օրենսգրքի նախագծում կալանքի կիրառման իրավաչափության՝ Եվրոպական դատարանի մշակած չափանիշներին համահունչ պայմանների նախատեսումը, կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու և կալանավորման ժամկետի երկարացման հիմքերի տարանջատումը: Անձի ազատության իրավունքի անհիմն սահմանափակման դեմ կարևոր երաշխիք է կալանավորման մասին որոշումների պատճառաբանվածության վերաբերյալ օրենսդրական պահանջի հստակ ամրագրումը, ինչը հնարավարություն կտա խուսափելու պրակտիկայում տարածված ստանդարտ արտահայտություններ և սոսկ օրենսդրական դրույթներին հղումներ պարունակող որոշումներից: Նախագծում այն կանոնի նախատեսումը, համաձայն որի կալանավորումը մեղադրյալի նկատմամբ կարող է ընտրվել միայն այն դեպքում, երբ խափանման մյուս միջոցների կիրառումն անհնարին է կամ բավարար չէ մեղադրյալի անօրինական վարքագիծը կանխելու համար, կոչված է վերացնելու տարածված այն արատավոր պրակտիկան, երբ ազատությունից զրկելու հետ կապված այս ծայրահեղ միջոցի կիրառումը կանոն, այլ ոչ թե բացառություն է: Իրավակիրառ պրակտիկայում անհիմն կամ հարկադրված կալանավորումների թվի կրճատմանն է նպատակաուղղված նաև նոր այլընտրանքային խափանման միջոցների (տնային կալանք, ոստիկանության հսկողությանը հանձնելը), ինչպես նաև գրավի՝ որպես ինքնուրույն խափանման միջոցի նախատեսումը:

---

[1] Հայաստանի Հանրապետության Նախագահի Կարգադրությունը Դատաիրավական Բարեփոխումների 2009-2011 Թվականների Ռազմավարական Գործողությունների Ծրագիրը Եվ Ծրագրից Բխող Միջոցառումների Ցանկը Հաստատելու, Ինչպես Նաև Աշխատանքային Խումբ Ստեղծելու Մասին, 21.04.2009թ, հասանելի է՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=66236 հասցեում:

[2] ՀՀ-ում քրեակատարողական համակարգի բարեփոխման հեռանկարները: Պրոբացիոն ծառայության հիմնադրումը ՀՀ-ում (Գնահատման հաշվետվություն) Ասողիկ հրտ. Երևան 2015, էջ՝5:

[3] http://moj.am/storage/files/legal_acts/legal_acts_9006675_29.pdf (ՀՀ Քր. դատ. օր-ի նախագիծ)

Կատարված բարեփոխումներն ուղղված են քրեական արդարադատության ոլորտում մարդկանց իրավունքների և ազատությունների պաշտպանությանը, ինչպես նաև հանրային և մասնավոր շահերի հավասարակշռության ապահովմանը:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ տնային կալանքի իրավական բնույթը ամեն երկրում տարբեր կերպ է ամրագրված: Մասնավորապես կան պետություններ, որոնք տնային կալանքը նախատեսել են որպես պատժի տեսակ և բացառել են այն որպես խափանման միջոց կիրառելու հնարավորությունը: Կան երկրներ որտեղ տնային կալանքը ամրագրված է պատժի, խափանման միջոցի ձևերով[1]: Արտասահմանյան իրավաբանական գրականությանը հայտնի է տնային կալանքի 3 ռեժիմներ: Այսպես՝ տնային կալանքը ունի 3-ռեժիմ, որոնք դասակարգված են ըստ անձի ազատության սահմանափակման աստիճանի: Դրանք են՝

- որոշակի ժամանակահատվածի ընթացքում տնային կալանք (անձը պարտավոր է օրվա ընթացքում սահմանված ժամանակահատվածի դեպքում գտնվել տանը)
- անձը կարող է լքել տան տարածքը միայն աշխատանքի և դպրոց հաճախելու ժամերին (Home confinement)
- տնային կալանքի պատժիչ ձև. անձը կարող է լքել տան տարածքը միայն համապատասխան իրավական և բժշկական հիմքերի առկայության դեպքում (punitive form of house arrest)

ՀՀ-ում քրեական և քրեադատավարական օրենսդրությունները չեն նախատեսում տնային կալանք, սակայն ինչպես արդեն նշվեց այն նախատեսվել է որպես այլընտրանքային խափանման միջոց ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում և արդեն գործող «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքում: Սույն հոդվածի շրջանակներում կանդրադառնանք միայն տնային կալանքի՝ որպես խափանման միջոցի կիրառելիությանը:

Նախագծի 123-րդ հոդվածի առաջին մասը տալիս է տնային կալանքի օրենդրական սահմանումը. տնային կալանքը մեղադրյալի ազատության այնպիսի սահմանափակում է, որի ընթացքում նա պարտավոր է չլքել դատարանի որոշման մեջ նշված բնակության տարածքը: Այսինքն՝ տնային կալանքի կիրառման նպատակն է մեղադրյալի պատշաճ վարքագիծն ապահովելը, նրան թողնելով մեկուսացման համեմատաբար մեղմ պայմաններում, այսինքն՝ պահպանելով բնակարանում բնակվելու իրավունքը՝ նրա նկատմամբ կիրառելով որոշակի արգելքներ: Ինչ վերաբերում է 123-րդ հոդվածի առաջին մասում նշված բնակության տարածք հասկացությանը, ապա օրենսդրական ձևակերպումից երևում է, որ խոսքը չի գնում միայն անձին սեփականության իրավունքով պատկանող բնակարանի մասին, այլ որոշակի բնակության տարածքի, որը կսահմանի դատարանը: Վիճահարույց է այն հարցը, թե պետք է, արդյոք, տնային կալանքը կիրառվի այն մեղադրյալների նկատմամբ ովքեր ունեն 123-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված բնակության վայր: Տվյալ դեպքում քրեադատավարական առումով բնակարան հասկացությունը կիրառելի չէ, քանի որ այն իր մեջ ընդգրկում է նաև մասնավոր տրանսպորտային միջոցը, ինչպես նաև արվեստանոցը և ծառայողական աշխատասենյակը, որը առավելապես վերաբերում է բնակարանի անձեռնմխելիությանը, այլ ոչ տնային կալանքին:

Համաձայն «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի՝ այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին իրավասու մարմնի որոշումն ստանալուց հետո պրոբացիայի ծառայողն անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում պարզում է պրոբացիայի շահառուի գտնվելու վայրը, նրա հետ կապ է հաստատում, նրան պատշաճ ծանուցում է տարածքային մարմին ներկայանալու վերաբերյալ, իսկ տնային կալանք այլընտրանքային խափանման միջոցի դեպքում այցելում է պրոբացիայի շահառուի բնակության վայր, կազմում պրոբացիայի շահառուի անձնական գործ, վերահսկողության պլան, լրացնում հաշվառման քարտ: Վերահսկողության սկիզբը հաշվվում է պրոբացիայի շահառուին հաշվառման վերցնելու պահից: Պրոբացիայի մասին օրենքը նույնպես չի տալիս բնակության վայրի հասկացությունը, ինչպես որ նախագիծը չի տալիս բնակության տարածք հասկացության սահմանումը:

Այս հարցի կապակցությամբ իրավագետների մոտ ձևավորվել է երկու մոտեցում: Լայն մոտեցման կողմակիցները գտնում են, որ տնային կալանքի վայրը պետք է սահմանվի ցանկացած վայրում, որտեղ անձը բնակվում է խափանման միջոց ընտրելու ժամանակ[2]: Նեղ մոտեցումը հիմնված է

[1] Comparative Criminal Justice Systems Авторы: Harry R. Dammer,Jay S. Albanese 2014. P 202.

[2] Цоколова О.И. Домашний арест: сущность и проблемы применения // Правовое и криминалистическое обе-

վերահսկողության ապահովման հնարավորության վրա, այդիսկ պատճառով այս մոտեցման կողմնակիցները դեմ են խափանման միջոցի վայրը սահմանել հանրակացարաններում և այլ բնակարանային շինություններում, որտեղ կդժվարանա խափանման միջոցի վերահսկողական ֆունկցիան[1]:

Կարծում ենք տնային կալանք կիրառելիս պետք է վարույթն իրականացնող մարմինը համոզված լինի, որ մեղադրյալը ունի «տուն» առօրեական իմաստով. փաստացի բնակության վայր:

Համաձայն նախագծի 123-րդ հոդվածի 2-րդ մասի ՝ դատարանի որոշմամբ մեղադրյալին կարող է արգելվել նաև՝

1) ունենալ հեռախոսային հաղորդակցություն, ուղարկել կամ ստանալ նամակագրություն, փոստային, հեռագրական և այլ հաղորդումներ, օգտվել կապի այլ միջոցներից.

2) շփում ունենալ որոշակի անձանց հետ կամ իր բնակության վայրում հյուրընկալել այլ անձանց:

Այս սահմանափակումները կարիք ունեն հստակեցման, քանի որ դրանց բացարձակ բնույթը կարող է էականորեն խախտել մեղադրյալի անքակտելի իրավունքները: Մասնավորապես այս սահմանափակումները պետք է ունենան որոշակի բացառություններ կապված մեղադրյալի կողմից հեռախոսային կապի միջոցից օգտվելու առումով, երբ պետք լինի կապնվել վարույթն իրականացնող մարմնի հետ կամ կանչել շտապ օգնություն:

Կարևոր նշանակություն ունի այն անձանց շրջանակի սահմանումը, որոնց նկատմամբ տնային կալանքը կկիրառվի առաջնահերթորեն: Իրավաբանական գրականության մեջ կա կարծիք, ըստ որի այդ անձանց շրջանակի մեջ պետք է ներառվեն հղի կանայք, ծերերը, անչափահասները և կանայք ովքեր ունեն անչափահաս երեխաներ: Համաձայնվելով այս կարծիքի հետ, հարկ է նշել, որ այդ անձանց շրջանակը կարող է որոշվել նաև մեղադրյալի կողմից կատարված հանցագործության տեսակից:

Համաձայն նախագծի 118-րդ հոդվածի 2-րդ մասի՝ կալանքը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ այլընտրանքային խափանման միջոցների կիրառումը անբավարար է մեղադրյալի անօրինական վարքագիծը կանխելու համար: Այսինքն՝ տվյալ դեպքում կալանքը կարող է կիրառվել, միայն տնային կալանքի(կամ այլընտրանքային փախանման միջոցների) կիրառման անհնարինության դեպքում: Ինչը բազմիցս նշել է ՄԻԵԴ-ը իր նախադեպային որոշումներում:

ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի 1-ին մասի (g) կետում նշվում է, որ ձերբակալման կամ մինչդատական կալանքի նախապայման պետք է լինի «ողջամիտ կասկածը», այլ կերպ ասած՝ հանցագործության կատարման «ողջամիտ կասկածի» առկայությունը անձին կալանավորելու կամ կալանավորման ժամկետը երկարաձգելու նախապայման է՝ sine qua non պայման[2]: Դա նշանակում է, որ եթե անձին ձերբակալելիս անհրաժեշտ է ցույց տալ ողջամիտ կասկածի առկայությունը, անձին կալանավորելիս, ինչպես նաև կալանավորման ժամկետը երկարաձգելիս նույնպես պետք է ցույց տալ, որ հանցագործության կատարման ողջամիտ կասկածը շարունակում է առկա մնալ[3]: Նմանատիպ դիրքորոշում է արտայահտել ՄԻԵԴ-ը նաև Gutsanovi-ն ընդդեմ Բուլղարիայի (- 34529/10 վճիռ 15.10.2013թ. [Բաժանմունք IV]) գործով և նշել, որ Պրն. Gutsanov-ը չորս ամիս ժամկետով զրկված է եղել ազատությունից, որից երկու ամիսը նա գտնվել է տնային կալանքի տակ: Ազատ արձակելու վերաբերյալ նրա ներկայացրած առաջին միջնորդությունների պարագայում իսկ ներպետական դատարանները բացառել էին նրա՝ արդարադատությունից խուսափելու հավանականությունը: Այդուհանդերձ, այդ դատարաններն որոշում էին կայացրել նրա կալանավորման ժամկետը երկարաձգելու մասին, հիմք ընդունելով այն, որ նա կարող էր այլ հանցագործություններ կատարել, մասնավորապես՝ ապացույցները կեղծեր: 2010թ. մայիսի 25-ի որոշմամբ վերաքննիչ դատարանը հանգել էր այն եզրակացության, որ վերջին այդ վտանգը նույնպես դադարել էր գոյություն ունենալ, քանի որ դիմումատուն հրաժարվել էր իր քաղաքային խորհրդի նախագահի պաշտոնից: Սակայն, վերաքննիչ դատարանը պրն. Gutsanov-ի նկատմամբ կայացրել էր տնային կալանք նշանակելու որոշում՝ առանց հիմնավորելու ընտրված այդ միջոցի հիմքում ընկած պատճառները, որն անփոփոխ էր մնացել մյուս երկու ամիսների ընթացքում: Հետևաբար, իշխանությունները չեն կատարել իրենց

спечение управления органами расследования преступлений. М.: Академия управления МВД России, 2011. С. 418–426.

[1] Муртазин Р.М. Дискуссионные вопросы применения домашнего ареста // Вестник ОГУ. 2012. № 3. С. 129–132.

[2] Բիկովն ընդդեմ Ռուսաստանի, թիվ 4378/02, 10.03.2009,պարբ.64

[3] Իլգար Մամմադովն ընդդեմ Ադրբեջանի, թիվ 15172/13,22.05.2014, պարբ.90

պարտավորությունը՝ հիմնավորելու դիմումատուի 2010թ. մայիսի 25-ից հետո կալանավորման պատճառները:

Այսպիսով, թեև Նախագծում բազմաթիվ առաջադիմական դիրքորոշումներ են առաջարկվել խափանման միջոցների, այդ թվում՝ տնային կալանքի վերաբերյալ, սակայն դրանում տնային կալանքի հետ կապված մի շարք հարցեր ամբողջությամբ չեն կարգավորվել:

Օգտագործված գրականության ցանկ:

1. ՀՀ-ում քրեակատարողական համակարգի բարեփոխման հեռանկարները: Պրոբացիոն ծառայության հիմնադրումը ՀՀ-ում (Գնահատման հաշվետվություն) Ասողիկ հրտ. Երևան 2015, էջ՝5:

2. Муртазин Р.М. Дискуссионные вопросы применения домашнего ареста // Вестник ОГУ. 2012. № 3. С. 129–132.

3. Comparative Criminal Justice Systems Авторы: Harry R. Dammer,Jay S. Albanese 2014. P 202.

4. Цоколова О.И. Домашний арест: сущность и проблемы применения // Правовое и криминалистическое обе-

спечение управления органами расследования преступлений. М.: Академия управления МВД России, 2011. С. 418–426.

ՀՏԴ 330.3(479.243) *Տնտեսագիտություն*

Իրինա Արզումանյան
ԱրՊՀ , Տնտեսագիտության ֆակուլտետ, 4-րդ կուրս
mr.arzumanyan1962@mail.ru

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ ԼՂՀ-ում

<<Տնտեսական աճը որպես սոցիալ-տնտեսական զարգացման նախապայման ԼՂՀ-ում>> հոդվածում դիտարկվել են ԼՂՀ սոցիալ-տնտեսական վիճակի և տնտեսական աճի միջև առկա հիմնական փոխառնչությունները: Տնտեսական աճի ապահովումը ցանկացած երկրի այդ թվում նաև ԼՂՀ տնտեսության տնտեսական քաղաքականության հիմնական նպատակներից մեկն է: Ուսումնասիրությունները ցույց են տալիս տնտեսական աճի և սոցիալ-տնտեսական տեղաշարժերի փոխառնչությունները:

Բանալի բառեր- տնտեսական աճ, սոցիալ-տնտեսական մակարդակ, տնտեսական քաղաքականություն, համախառն ներքին արդյունք, իրական ակտիվներում իրականացված ներդրումներ, վարկային ներդրումներ, փոքր և միջին ձեռնարկատիրություն, ՀՆԱ կառուցվածք, գործազրկության մակարդակ, սոցիալական երաշխիքների քաղաքականություն, կայուն տնտեսական աճ:

Ирина Арзуманян
АрГУ, Экономический факультет 4-ый курс
mr.arzumanyan1962@mail.ru

ЭКОНОМИЧЕСКИЙ РОСТ, КАК НЕОБХОДИМОЕ УСЛОВИЕ СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ НКР

В статье <<Экономический рост, как необходимое условие социально-экономического развития НКР>> рассмотрены социально-экономические условия и взаимосвязь между экономическим ростом. Создание условий экономического роста во всех странах, в том числе и в НКР, является главной целью экономической политики страны. Изучение проблемы выявило взаимосвязь стабильного экономического роста и социально – экономических преобразований в НКР.

Irina Arzoumanyan
ASU, Faculty of Economics 4th year
mr.arzumanyan1962@mail.ru

ECONOMIC GROWTH AS A PRECONDITION OF SOCIAL-ECONOMIC DEVELOPMENT OF NKR

In the article <<Economic growth as a precondition of social-economic development of NKR >> the relation both NKR social-economic status and economic growth have been examined. Creation conditions of economic growth in any countries as well as in NKR is one of the main aim of economic policy of the country. The study of the problems revealed interrelation of stable economic growth and social economic transformation in NKR.

Տնտեսական աճի ապահովումը պետության համար ունի ոչ միայն կարևոր տնտեսական նշանակություն, այլև քաղաքական նպատակ է: Երկրի բնակչությունը պետության և կառավարության սոցիալ-տնտեսական քաղաքականությունը գնահատում է հիմնվելով տնտեսական աճի և կենսամակարդակի դինամիկայի ցուցանիշների վրա: ԼՂՀ տնտեսության զարգացման ժամանակակից պայմաններում առկա սոցիալ-տնտեսական մակարդակը, բնակչության իրական եկամուտների ցածր մակարդակը, դրանով պայմանավորված բնակչության բացառիկ մեծամասնության ցածր կենսամակարդակը կարող են հիմնավորապես լուծվել տնտեսական աճի ոչ միայն բարձր, այլև կայուն տեմպերի ապահովման պայմաններում: ԼՂՀ տնտեսության համար կայուն տնտեսական աճի ապահովումը համարվում է բնակչության բարեկեցության բարձրացման և մշտական վտանգված գոյության պայմաններում երկրի պաշտպանության ապահովման անհրաժեշտ միջոցների հայթայթման և ավելացման ուղին:

Տնտեսական աճի ապահովումը փոխառնչվում է ոչ միայն պետական համապատասխան քաղաքականությանը, այլև սոցիալ-տնտեսական այնպիսի տեղաշարժերին, ինչպիսիք են՝ տնտեսության կառուցվածքը, տնտեսության դիվերսիֆիկացման մակարդակը, աշխատուժի արտադրողականության բաշխվածության անհավասարությունը և այլն: 2008-2016թթ. ԼՂՀ ՀՆԱ-ն աճել է գրեթե 2.7 անգամ: ՀՆԱ-ի՝ որպես մակրոտնտեսական հիմնական ցուցանիշի այդպիսի աճը, անշուշտ վկայում է տնտեսության տարբեր բնագավառներում պետական արդյունավետ տնտեսական քաղաքականության իրականացման մասին: 2008-2016թթ. ընթացքում ԼՂՀ-ում գրանցվել է բարձր տնտեսական աճ: Այդ ընթացքում տնտեսական բարձր աճի վրա դրական ազդեցություն են ունեցել և ծառայության, և ապրանքների արտադրության ոլորտները՝ արդյունաբերությունը, շինարարությունը, գյուղատնտեսությունը:

Տնտեսական աճի առկա մակարդակը և միտումները մասամբ բացատրվում են ներդրումների դինամիկայով՝ կապված վերջիններիս միջև առկա ուղղակի կախվածությամբ: Իրական ակտիվներում իրականացված ներդրումների փոփոխությունների գնահատման մակրոտնտեսական մոտեցումները ցույց են տալիս, որ եթե 2008թ. վերջիններս կազմել են ՀՆԱ-ի 24.2%-ը, ապա 2015թ.՝ 32.4%-ը: 2008-2015թթ. ՀՆԱ-ն աճել է մոտ 2.5 անգամ, ապա ընդհանուր ներդրումները նույն ժամանակաշրջանում աճել են 3.3 անգամ: Ներդրումների նման առաջանցիկ տեմպի ապահովումը կարևոր է ՀՆԱ-ի հետագա աճն ապահովելու համար:

Գծապատկեր 1. ԼՂՀ-ում իրականացվող ներդրումների բաշխումը ըստ տնտեսության ճյուղերի , (մլն դրամ)



Գյուղատնտեսության մեջ իրականացվող նեդրումները ամենափոքրն են 2015 թ. կազմել են 1402.3 մլն դրամ, այն դեպքում, երբ ՀՆԱ-ի մեջ գյուղատնտեսության բաժինը կազմել է 13.6%: Իրավիճակը այլ է արդյունաբերության ոլորտում, որտեղ ներդրումները կազմում են ընդհանուր ներդրումների 39.5%, իսկ ՀՆԱ-ի մեջ տեսակարար կշիռը 16% է: Սա նշանակում է ներդրումների ըստ ճյուղերի բաշխումը ունի կենտրոնացման և անհամաչափ բաշխման խնդիր: Ներդրումների մեջ հատկապես հատկանշական է արդյունաբերության կտրուկ աճը: Սակայն, արդյունաբերության մեջ կատարված ներդրումների սահմանային արտադրողականությունը ցածր է, քանի որ չի ապահովում ՀՆԱ համարժեք աճ: Ներդրումների ոլորտում ստեղծված իրավիճակի, մասնավորապես՝ ըստ առկա ծավալների դրանց ճյուղային բաշխվածության և աղբյուրների վերլուծությունից երևում է, որ մակրոտնտեսական կայունության, ներդրումները կարգավորող օրենսդրական դաշտի կատարելագործման պայմաններում անգամ ներդրումների առկա ծավալները դեռևս բավարար չեն՝ փոքր տնտեսության կայուն աճ ապահովելու համար: Հետևապես այսուհետ ևս սեփական խնայողությունների և օտարերկրյա ներդրումների ներգրավման ակտիվացման գործընթացը պետք է դառնա ԼՂՀ ներդրումային քաղաքականության հիմնական խնդիրներից մեկը: Ներկա պայմաններում ներդրումների ակտիվացմանը կարող է նպաստել հարկային ճկուն քաղաքականությունը, որը շատ արտոնություններ է պարունակում ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան ներդրողների համար: Ազատականացված հարկային կլիման երաշխիք է ներդրումային միջավայրի ակտիվացման համար: «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքով, «եթե ռեզիդենտի կանոնադրական կապիտալում ԼՂՀ կառավարության կողմից ձևավորված ներդրումները գնահատող և արտոնություն տրամադրող հանձնաժողովին հայտ ներկայացնելու տարվան նախորդող երեք տարիների ընթացքում հիմնադրի փաստացի կատարած ներդրման ընդհանուր արժեքը կազմում է առնվազն 100 միլիոն ՀՀ դրամ, ապա տվյալ ռեզիդենտի շահութահարկի գումարը նվազեցվում է՝ հայտ ներկայացնելու տարում և դրան հաջորդող երկու տարիներին 100 տոկոսի չափով, հետագա երկու տարիներին՝ 50 տոկոսի չափով, բայց

ոչ ավելի, քան ներդրման ընդհանուր արժեքի 10 տոկոսը»[1]: ԼՂՀ-ում իրականացվող ներդրումների աճի ապահովումը կլուծի մի շարք կարևորագույն խնդիրներ, ինչպիսիք են՝ աշխատատեղերի ստեղծումը, շուկայական տնտեսությանը հատուկ նոու-հաուների ներգրավումը, նոր շուկաների բացահայտումը, նրանց հասանելիությունը, այդ շուկաներ մուտք գործելու հնարավորությունները և այլն:

ԼՂՀ սոցիալ-տնտեսական իրավիճակի բնորոշիչ կարող է հանդիսանալ այն, որ տնտեսության վարկային ներդրումները 2008թ. համեմատությամբ 2016թ. ԼՂՀ ռեզիդենտների կողմից աճել են 7 անգամ, որոնց մեջ գերակշռողը երկարաժամկետ վարկերն են: Այս հանգամանքը վկայում է թե ԼՂՀ ռեզիդենտերի սեփական միջոցների աճի, թե արտաքին ներդրումներից կախվածության թուլացման և թե երկարատև ժամանակահատվածում տնտեսության նկատմամբ ունեցած վստահության մասին: 2008-2016թթ. ընթացքում վարկային ներդրումների բացառիկ աճի դինամիկա է ցուցաբերում «Այլ ճյուղեր» հոդվածը, որտեղ ներառված են կապի, տրանսպորտի և այլ ոլորտներում գործող ընկերությունները՝ 2016թ. հասնելով 88614.6 մլն դրամի: Եթե 2008 – 2014 թթ. արդյունաբերությանը տրամադրված վարկերը աճել են 2,7 անգամ՝ 3333.3 մլն դրամից մինչև 8980.2 մլն դրամ և 2015թ. նախորդ տարվա համեմատությամբ կտրուկ նվազել են շուրջ 2,3 անգամ՝ կազմելով 3900.8 մլն դրամ, ապա 2016թ. նախորդ տարվա համեմատությամբ կտրուկ աճել են շուրջ 6.2 անգամ՝ կազմելով 24104.9 մլն դրամ: Բացասական կարելի է համարել առևտրին և գյուղատնտեսությանը տրամադրված վարկերի տեսակարար կշռի նվազման միտումը:

Գծապատկեր 2. ԼՂՀ վարկային ներդրումներն ըստ տնտեսության ճյուղերի, (մլն դրամ)



Այսպիսով, վարկերի ճյուղային կառուցվածքը դիտարկելիս պարզ է դառնում, որ վարկերի աճը ապահովվել է այլ ճյուղերի հաշվին: Մինչդեռ տնտեսության իրական հատվածի վարկավորումը ցուցաբերում է նվազման տեմպեր, ինչը կապված է վարկառուների անվճարունակության բարձր ռիսկի հետ: Ուստի բանկերը խուսափում են ավելորդ ռիսկերից ու նախընտրում են վարկեր տրամադրել միայն բարձր հուսալիություն ունեցող գրավի դեպքում, ինչը զգալի կրճատում է վարկավորման ծավալները:

«Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը նշանակալի ազդեցություն ունի երկրի տնտեսության զարգացման, զբաղվածության մակարդակի բարձրացման, հասարակության միջին խավի ձևավորման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, երկրում սոցիալական և քաղաքական կայունության ապահովման գործում: Ուստի կարևորելով ոլորտի դերը, ԼՂՀ կառավարությունը այն համարում է երկրի տնտեսության զարգացման գերակա ուղղություններից մեկը և շարունակական քայլեր է ձեռնարկում ոլորտի զարգացման և պետական աջակցության ուղղությամբ»[2]:

Երկրի տնտեսական զարգացման մակարդակը բնութագրող ամենակարևոր ցուցանիշը՝ ՀՆԱ-ի մեջ ՓՄՁ ոլորտի մասնակցության 2015թ-ի ցուցանիշը կազմում է 37%: Այն, անշուշտ, կարևոր նվաճում է, սակայն վերջիններիս զարգացման մակարդակը բավարար չէ ապագա պահանջների բավարարման տեսանկյունից կայուն և բարձր տնտեսական աճ ապահովելու համար: Զարգացման բարձր մակարդակ ունեցող տնտեսություններում ՓՄՁ-ի կողմից արտադրվում է ՀՆԱ-ի կեսից ավելին: 2014թ. ԼՂՀ ՓՄՁ սուբյեկտների գերակշիռ մասը՝ 64.2% գործունեություն է իրականացնում առևտրի ոլորտում, ընդ որում՝ դրանց 95.5% հանդիսանում է գերփոքր սուբյեկտներ: ՓՄՁ սուբյեկտների միայն 0.8% է գործում գյուղատնտեսության ոլորտում, ինչը վկայում է, որ ԼՂՀ գյուղատնտեսական արտադրությունը իրականացվում է տնային տնտեսությունների կողմից: «Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2015թ. հետևողական աշխատանք է իրականացվել ԼՂՀ-ում ՓՄՁ զարգացմանն ուղղված ծրագրի իրագործման ուղղությամբ: «ՓՄՁ սուբյեկտների տրամադրված վարկերի տարեկան

[1] << Շահութահարկի մասին>> ԼՂՀ օրենք, 1999թ., ՀՕ-47
[2] www.mineconomy.am

տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորում» ծրագրի շրջանակներում Արցախի ներդրումային հիմնադրամի հետ համագործակցող առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների միջոցներով 31 ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվել են վարկեր 942.1 մլն դրամի չափով: ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված վարկերի տարեկան տոկոսադրույքների սուբսիդավորմանը Արցախի ներդրումային հիմնադրամի կողմից ուղղվել է 416.8 մլն դրամ»: Կարևորելով ՓՄՁ-ի դերը երկրի տնտեսության զարգացման և քաղաքական կայունության ապահովման գործում՝ կառավարությունը շարունակական քայլեր է ձեռնարկում իրականացնելով՝

1. ՓՄՁ-ի սուբյեկտների աջակցության համապատասխան ենթակառուցվածքների պահպանում և ամրապնդում,
2. ՓՄՁ-ի սուբյեկտների ֆինանսական և ներդրումային աջակցություն,
3. ՓՄՁ սուբյեկտներում նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն աջակցություն,
4. ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի արտահանմանն ու շուկաներում առաջմղմանն աջակցություն,
5. ՓՄՁ սուբյեկտներին ուսուցողական, գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն:

ԼՂՀ ՀՆԱ 2016թ. կազմել է 229.7 մլրդ դրամ, ՀՆԱ-ի հավելաճի տեմպը կազմել է 9.2 տոկոս: Չնայած վերջին տարիներին ԼՂՀ գրանցված տնտեսական աճի առկա բարձր տեմպերին՝ տնտեսության զարգացման մակարդակը չի համապատասխանում հասարակության պահանջմունքների բավարարման աստիճանին: Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշը, 2008թ. 623.1 հազ. դրամից աճելով 2.5 անգամ, 2016թ. կազմել է 1577.3 հազ. դրամ: Տնտեսական աճի հետագա ապահովման անհրաժեշտությունը բխում է բնակչության սոցիալ-տնտեսական անվտանգության ապահովման շահերից: ԼՂՀ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի մակարդակը չի ապահովում տնտեսական անվտանգության շեմային մեծությունը. շեմը համարվում է յոթնյակ երկրների նույն ցուցանիշի առնվազն 50%-ը. այն ցածր է նաև ՀՀ համապատասխան ցուցանիշից: Նշված ցուցանիշի բարելավումը՝ որպես ԼՂՀ բնակչության բարեկեցության ապահովման հիմնական երաշխիք, կարող է ապահովվել ԼՂՀ տնտեսական աճի հետագա կայուն և բարձր տեմպերի պահպանման միջոցով, ինչը հնարավոր է ապահովել տնտեսության թե իրական հատվածի և թե ծառայությունների ոլորտների աճի միջոցով: Հետևապես, ԼՂՀ տնտեսության իրական հատվածի և ծառայությունների զարգացման ծրագրերը պետք է հետապնդեն բարձր աճի ապահովման նպատակներ :

ՀՆԱ-ի կառուցվածքը բնորոշում է տնտեսության զարգացման ոչ միայն տվյալ մակարդակը, այլև հնարավորությունները: Տնտեսական աճի տեմպերը բարձր են այն տնտեսություններում, որտեղ ՀՆԱ-ի կառուցվածքում բարձր են բարձր արտադրողական ճյուղերը: 2008-2016թթ. ընթացքում տնտեսական բարձր աճի վրա դրական ազդեցություն են ունեցել և ծառայության, և ապրանքների արտադրության ոլորտները՝ արդյունաբերությունը, շինարարությունը, գյուղատնտեսությունը:

Գծապատկեր 3. Տնտեսության հիմնական ճյուղերի իրական աճի ցուցանիշները, %-ով



2016թ-ին 2015թ. նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 9.7%: Չնայած արդյունաբերության աճի բարձր տեմպերին, դեռևս պահպանվում է հետխորհրդային շրջանում ձևավորված անհամամասնություններով, ինչպես նաև արդյունաբերության զարգացման ժամանակակից միտումներով պայմանավորված՝ արդյունաբերության ոչ առաջադիմական կառուցվածքը: ԼՂՀ արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում մշակող արդյունաբերությունը կազմում է 33.7%, իսկ հանքագործական արդյունաբերությունը և բացահանքների շահագործումը՝ 29%: ԼՂՀ շինարարությունը 2016թ. նախորդ տարվա

համեմատությամբ նվազել է 9 տոկոսով, որտեղ ներդրումների՝ 27.9%-ը կատարվել է՝ կազմակերպությունների, 30.4%-ը պետական բյուջեի, 11.4%-ը՝ մարդասիրական օգնության միջոցների, 1.4%-ը՝ օտարերկրյա ներդրողների հաշվին: 2016թ-ին 2015թ. նկատմամբ գյուղատնտեսական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 7,4%: Գյուղատնտեսական համախառն արտադրանքի կազմի ու կառուցվածքի վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ բնագավառում ակնհայտ են դրական տեղաշարժերը, այնուամենայնիվ, գյուղատնտեսության ոլորտում տնտեսության առկա ռեսուրսների ոչ լիարժեք օգտագործման, ճյուղի եկամտաբերության ցածր աստիճանով պայմանավորված՝ գյուղատնտեսական համախառն արտադրանքը հեռու է բնակչությանը գյուղատնտեսական մթերքներով ապահովման աստիճանից: Հետևապես, չնայած կառավարության կողմից ոլորտի զարգացմանն ուղղված բազմակողմ միջոցառումներին, գյուղատնտեսական արտադրության ծավալի աճի ապահովման, ճյուղի արդյունավետության բարձրացման խնդրի լուծումը շարունակում է մնալ կառավարության համար որպես գերակա խնդիր:

Պետական բյուջեի և տնտեսական աճի միջև առկա է փոխադարձ կապ: 2016թ. պետական բյուջեի եկամուտները կազմել են 33711.1 մլն դրամ ՀՆԱ-ի՝ 14.7%: Եկամուտները 2009-2016թթ. ընթացքում աճել են գրեթե 1.6 անգամ: Պետական բյուջեի ծախսերը 2016թ. կազմել են 84670.4 մլն դրամ, որը կազմել է ՀՆԱ-ի 36.9%:

Գծապատկեր 4. ԼՂՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտները և ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ, %-ով



Վերլուծելով ԼՂՀ բյուջեի եկամուտների կառուցվածքը կարելի եզրակացնել, որ, ինչպես և Հայաստանում, բյուջեի եկամտային մասում հարկերը և տուրքերն ապահովում են եկամտի գերակշիռ մասը: Այստեղ առավել մեծ դեր ունեն հարկային եկամուտները, որոնք միջինում կազմում են եկամուտների 75%: Հարկային եկամուտների գերակշիռ մասը ապահովվում է ավելացված արժեքի և եկամտային հարկի հաշվին, որոնց միջին տեսակարար կշիռ դիտարկվող ժամանակաշրջանի ընթաքում կազմել է համապատասխանաբար՝ 33% և 44.6%:

«Բյուջեի ծախսային մասի մեծ մասնաբաժին են կազմում աշխատավարձերը և սոցիալական նպաստներն ու կենսաթոշակները՝ համապատասխանաբար բյուջեի ընդհանուր ծախսերի 12 և 23.9 տոկոսները, ինչը հիմնականում կարելի է մեկնաբանել վերջին տարիների կառավարության քաղաքականության սոցիալական ուղղվածությամբ: Ծախսային մասի մեկ այլ կարևոր հոդված է ծառայությունների և ապրանքների ձեռքբերման ծախսերը, որոնք բավականաչափ աճել են վերջին 5 տարիներին և 2016թ. դրությամբ կազմում են ընդհանուր ծախսերի 10.6% »[1] :

«2016թ. պետական բյուջեից կատարվելիք ծախսերի ամենամեծ ծավալները բաժին են ընկնում «Սոցիալական պաշտպանություն» և «Կրթություն» բաժիններին, համապատասխանաբար՝ 23% և 15.8%: Կրթության ոլորտին պետական բյուջեով նախատեսված ծախսերը 2016թ. կազմել են ՀՆԱ-ի 5.8%»[2]: Սոցիալական պաշտպանության ոլորտին պետական բյուջեով նախատեսված ծախսերը 2016թ. կազմել են ՀՆԱ-ի 8.5%, իսկ առողջության ոլորտին պետական բյուջեով նախատեսված ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 2.5% :

Գործազրկությունը սոցիալ-տնտեսական երևույթ է, որը այս կամ այն չափով գոյություն ունի ցանկացած երկրում: 2015թ. ԼՂՀ-ում պաշտոնական գործազրկության մակարդակը կազմել է 1.94%: Հանրապետությունում պաշտոնապես գրանցված գործազուրկների թվաքանակում տեղաշարժերը հետևյալն են. 2008թ. գործազուրկների թիվը կազմել է 3464 մարդ, իսկ 2015թ.՝ 1232 մարդ: Եթե հաշվի

[1] ԼՂՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2016թ. հունվար-դեկտեմբերին, էջ 62
[2] ԼՂՀ 2017-2019 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր, էջ 28

առնենք այն հանգամանքը, որ հասարակական աշխատուժի օգտագործման արդյունավետության բնութագրման հիմնական ցուցանիշը աշխատանքային ռեսուրսների լրիվ զբաղվածության ապահովումն է, ուրեմն ԼՂՀ կառավարության կողմից իրականացվող միջոցառումները պետք է ուղղված լինեն զբաղվածության հիմախնդրի արմատական լուծմանը: Այն ենթադրում է առաջին հերթին թաքնված զբաղվածության բացահայտումը և աշխատաշուկայի ուսումնասիրությունների միջոցով իրական գործազրկության մակարդակի ճշտումը, սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններում հաշվառված՝ աշխատանք փնտրող անձանց աշխատաշուկայում մրցունակ դարձնելը և գործատուի պահանջարկի ապահովումը. երկարատև գործազուրկների ընդգրկումը ծրագրերում և զբաղվածության ապահովումը:

ԼՂՀ-ում կիրառվող սոցիալական երաշխիքների քաղաքականությունը շատ բարդ է: Նվազագույն աշխատավարձը 2016թ. կազմել է ամսական 55000 դրամ, սակայն, նույնիսկ այս մակարդակի պայմաններում աշխատավարձը չի կարող կատարել իր հիմնական գործառույթները: Մինչդեռ, նվազագույն աշխատավարձը, հատկապես անցումային տնտեսությամբ երկրներում, կոչված է նպաստելու աղքատության հաղթահարմանը, եկամուտների մեծ տարբերությունների համահարթեցմանը: Այս պարագայում անհրաժեշտ է նվազագույն աշխատավարձի, ինչպես նաև կենսաթոշակների, նպաստի և սոցիալական այլ վճարների սահմանման համար հիմք ծառայեցնել կենսապահովման նվազագույն բյուջեի, որպես միջազգայնորեն ընդունված կենսապահովման նվազագույն սպառողական զամբյուղի դրամական արժեքը: Ըստ ԼՂՀ ԱՎԾ կողմից հաշվարկված մեծությունների, նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը 2016թ. միջին ընթացիկ գներով կազմել է 54000 դրամ, իսկ նվազագույն պարենային զամբյուղի արժեքը՝ 30000 դրամ:

Այսպիսով, ԼՂՀ տնտեսության համար կայուն տնտեսական աճի ապահովումը համարվում է բնակչության բարեկեցության բարձրացման և մշտական վտանգված գոյության պայմաններում երկրի պաշտպանության ապահովման անհրաժեշտ միջոցների հայթայթման և ավելացման ուղին: ԼՂՀ տնտեսության տնտեսական աճի վերջին փոփոխությունները ակնհայտորեն բացահայտեցին տնտեսության թույլ կողմերը՝ վեր հանելով կայուն տնտեսական աճի ապահովման տեսանկյունից տնտեսության մրցունակության բարձրացման հիմնահարցը՝ տնտեսության աճի խնդիրը՝ քանակականից տեղափոխելով որակական դաշտ:

Հաշվի առնելով հանրապետությունում առկա սոցիալ-տնտեսական իրավիճակի առկա մակարդակը կառավարության ջանքերը պետք է ուղղված լինեն մի կողմից կայուն տնտեսական աճի ապահովմանը, մյուս կողմից՝ սոցիալական արդարության հաստատմանն նպատակաուղղված լայնածավալ ծրագրերի իրականացմանը: Կառավարության բարեփոխումների հետևողական իրագործումը պետք է ամրապնդվի այնպիսի ձեռքբերումներով, որոնցում երկարաժամկետ կայուն զարգացման հիմքերն ու համակարգային լուծումները գերակշռում են կարճաժամկետ արդյունքներին:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Կենսապահովման նվազագույն զամբյուղի և կենսապահովման նվազագույն բյուջեի մասին» ԼՂՀ օրենք, 2004թ., ՀՕ-133
2. «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենք, 1999թ., ՀՕ-47
3. «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ԼՂՀ օրենք, 2001թ., ՀՕ-145
4. ԼՂՀ 2016-2018 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր
5. ԼՂՀ 2017-2019 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր
6. ԼՂՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2016թ. հունվար-դեկտեմբերին
7. ԼՂՀ վիճակագրական տարեգիրք, 2008-2014թթ., Ստեփանակերտ, 2014թ.
8. ԼՂՀ վիճակագրական տարեգիրք, 2009-2015թթ., Ստեփանակերտ, 2015թ.
9. www.mineconomy.am
10. www.mineconomy.nkr.am
11. www.minfin-nkr.am
12. www.stat-nkr.am

ՀՏԴ 330.3(479.243:479.22:478) *Տնտեսագիտություն*

Նինա Բալայան
Արցախի Պետական Համալսարան, 4-րդ կուրս
balayan96@mail.ru

ՉՃԱՆԱՉՎԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (ԼՂՀ, ԱԲԽԱԶԻԱՅԻ, ՄԵՐՁԴՆԵՍՏՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Հոդվածում իրականացվել է երեք չճանաչված պետությունների՝ ԼՂՀ, Աբխազիայի և Մերձդնեստրի տնտեսական զարգացման ցուցանիշների համեմատական վերլուծություն 2005-2016թթ. կտրվածքով: Մասնավորապես վեր են լուծվել այնպիսի տնտեսական ցուցանիշներ, ինչպիսիք են նշված երկրների ՀՆԱ կառուցվածքը, տնտեսական աճը, բնակչության թվաքանակը, բնակչության խտությունը, բնական և մեխանիկական աճը, կյանքի միջին տևողությունը, ծնելիության խթանմանն ուղղված ծրագրերը, գործազրկության մակարդակը, միջին և նվազագուն ամսական աշխատավարձի չափը, միջին ամսական կենսաթոշակի չափը, գնաճի մակարդակը, արտաքին առևտրաշրջանառությունը, արտահանման կառուցվածքը, պետական բյուջեի եկամուտների, ծախսերի կառուցվածքը, դեֆիցիտի չափն ու ֆինանսավորման արտաքին աղբյուրները, բանկային, հարկային և ներդրումային համակարգերը:

Բանալի բառեր՝ չճանաչված պետություն, տնտեսական զարգացում, մակրոտնտեսական ցուցանիշներ, տնտեսական աճ, արտաքին տնտեսական հարաբերություններ:

Нина Балаян
Арцахский Государственный Университет

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ НЕПРИЗНАННЫХ ГОСУДАРСТВ (НКР, АБХАЗИИ, ПРИДНЕСТРОВЬЯ)

В статье проводится сравнительный анализ показателей экономического развития трех непризнанных республик Нагорного Карабаха, Абхазии и Приднестровья в периоде 2005-2016гг. В частности были анализированы такие экономические показатели, как структура ВВП страны, экономический рост, численность населения, плотность населения, естественный и механический прирост, средняя продолжительность жизни, программы повышения рождаемости, уровень безработицы, средний и минимальный размер заработной платы, среднемесячный размер пенсии, уровень инфляции, внешнеторговый оборот, структура экспорта, структуры бюджетных доходов и затрат, размер бюджетного дефицита и внешние источники его финансирования, банковские, налоговые и инвестиционные системы.

Ключевые слова: непризнанное государство, экономическое развитие, макроэкономические показатели, экономический рост, внешние экономические связи.

Nina Balayan
Artsakh State University

COMPARATIVE ANALYSIS OF ECONOMIC DEVELOPMENT OF UNRECOGNIZED STATES (NKR, ABKHAZIA, TRANSDNIESTRIA)

In the article carried out comparative analysis of economic development indicators of three unrecognized republics: Nagorno-Karabakh, Abkhazia and Transnistria within the period of 2005-2016. Particularly there has been resolved such economic indicators, as the GDP structure of noted countries, economic growth, population size, population density, natural and mechanical growth, average life expectancy, programs boosting the childbirth, unemployment rate, average and minimum monthly wage, the average monthly size of pensions, inflation rate, external trade, export structure, the structure of state budget revenues and costs, the size of the budget deficit and its external financing sources, banking, tax and investment systems.

Key words: unrecognized state, economic development, macroeconomic indicators, economic growth, external economic relations.

Ներկայիս միջազգային տնտեսական հարաբերությունների բնագավառում ամենահետաքրքիր ու քննարկվող երևույթներից մեկը այսպես կոչված չճանաչված պետություններն են՝ դե ֆակտո անկախ պետությունները, որոնք չնայած խոչընդոտներին ու սահմանափակումներին, համառորեն քայլում են ժամանակին համընթաց և զարգացման տեմպերով չեն զիջում ճանաչված և նույնիսկ զարգացող երկրներին: Անշուշտ, չճանաչված երկրում տնտեսական կյանքն իր բացասական կողմերն ունի, և թվում է, թե մեկուսացման պայմաններում առաջընթաց գրեթե անհնար է, սակայն ուսումնասիրելով *չճանաչված պետությունների տնտեսությունը, դրա առանձնահատկություններն ու զարգացման հնարավորությունները, գալիս ենք այն եզրահանգման, որ սահմաններն ու շրջափակումը տեղ չունեն այդ երկրների տնտեսական զարգացման գործում:* Խոսքը հատկապես ԼՂՀ, Աբխազիայի և Մերձդնեստրի մասին է՝ գրեթե միևնույն ճակատագրին արժանացած, պատերազմից տնտեսապես մոխրացած պետություններ, որոնք ջանք չեն խնայել փլուզված տնտեսությունը վերականգնելու հարցում: Սույն հոդվածում իրականացվել է նշված երկրների տնտեսական ցուցանիշների համեմատական վերլուծություն 2005-2016թթ. կտրվածքով:

Ինչպես գիտենք, ցանկացած երկրի տնտեսության հիմնական բնութագրիչ ցուցանիշը 1 շնչին ընկնող ՀՆԱ-ն է: Այս ցուցանիշով ԼՂՀ-ն գերազանցել է մյուս 2 երկրներին 2012թ.-ից ի վեր, իսկ մինչ այդ առաջատար դիրքեր է զբաղեցրել Աբխազիան: 2016 թ.-ին ԼՂՀ-ում 1 շնչին ընկնող ՀՆԱ-ն կազմել է 3282.7 ԱՄՆ դոլար, Աբխազիայում՝ 3185.6, իսկ Մերձդնեստրում՝ 2854.3 դոլար: Նշված 3 պետություններն էլ 2015թ.-ի համեմատ աճ են արձանագրել: ԼՂՀ ՀՆԱ կառուցվածքում իր բարձր մասնաբաժնով առանձնանում է ծառայությունների և առևտրի ոլորտը՝ 2016թ.-ին 58.9%, որի կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են զբաղեցնում ֆինանսական և ապահովագրական գործունեության, տեղեկատվության և կապի, առողջապահության և բնակչության սոցիալական սպասարկման ծառայություններ[1]ը: ՀՆԱ-ի մեջ 2-րդ տեղն է զբաղեցնում արդյունաբերությունը՝ 16.9%, որի կառուցվածքում զգալի մասնաբաժինը կազմում են էլեկտրաէներգետիկան, մշակող արդյունաբերությունը և հանքագործությունն ու բացահանքերի շահագործումը: 3-րդ տեղը զբաղեցնում է գյուղատնտեսությունը՝ 13.2%, որի կառուցվածքում գերակշռող բաժինը պատկանում է հացահատիկների, այնուհետև մսի և կաթի արտադրությանը: 4-րդ տեղը զբաղեցնում է շինարարությունը՝ 11.5%, հիմնականում շինմոնտաժահին աշխատանքներով փոխադրումների, պահեստային տնտեսության և անշարժ գույքի հետ կապված գործունեության ուղղություններով:

Աբխազիայում ՀՆԱ-ն հաշվարկել են միայն 2009 թ.-ից սկսած: 2009-2012թթ.-ին Աբխազիայի ՀՆԱ-ում գերակշիռ մասը ապահովում էր շինարարությունը, իսկ 2013թ.-ից ի վեր՝ ծառայությունների ոլորտը և առևտուրը: 2016թ.-ին այն ՀՆԱ կազմում ունեցել է 45.6% մասնաբաժին[2]: Ընդ որում Աբխազիայում ի տարբերություն մյուս 2 պետությունների տնտեսությունը հիմնած է զբոսաշրջության և մանրածախ առևտրի վրա: Տուրիզմը, ելնելով բնակլիմայական նպաստավոր պայմաններից, զարգացման լայն հնարավորություններ ունի՝ առողջարանային տորիզմից մինչ լեռնագնացություն և ապահովում է հարկային եկամուտների 1/3-ը: 2-րդ տեղը զբաղեցնում է շինարարությունը՝ 26.5%, հատկապես զարգացած է կապիտալ շինարարությունը: 3-րդ տեղում է արդյունաբերությունը՝ 14.3%, որը հիմնված է վերամշակող, հանքագործական, սննդի և թեթև արդյունաբերության վրա, զարգացած է գինեգործությունը՝ ի շնորհիվ ոլորտում ՌԴ կողմից կատարված խոշոր ներդրումների: Մասնագետների գնահատմամբ երկրում առկա է նավթամշակման լայն պոտենցիալ, նավթային ռեսուրսները գնահատվում են 200-500 մլն տոննա: 4-րդ տեղում է գյուղատնտեսությունը՝ 8.6%, որի կազմում հատկապես զարգացած է բուսաբուծությունը՝ հիմնականում ցիտրուսների մշակությունը: ՀՆԱ կազմում գյուղատնտեսության այսչափ փոքր բաժինը պայմանավորված է ճյուղին պատերազմից

[1] stat-nkr.am/ ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայություն/ԼՂՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2016թ.
[2] http://ugsra.org/ Управление государственной статистики Республики Абхазия/ Объем и динамика Валового внутреннего продукта,

հասցված վնասներով, ներկայումս երկրի 400 հազար հա հողատարածության ավելի քան 60%-ը չի մշակվում:

Մերձդնեստրի ՀՆԱ կազմում մեծ մասնաբաժինը կազմում է արդյունաբերությունը՝ 2016թ. դրությամբ 58%, հատկապես զարգացած է սև մետալուրգիան, էներգետիկան, քիմիական ու թեթև արդյունաբերությունը[1]: 2-րդ տեղը զբաղեցնում է ծառայությունների և առևտրի ոլորտը՝ 2016թ. դրությամբ 21.6%, հատկապես զարգացած է կապի ծառայությունը, 3-րդ տեղում գյուղատնտեսությունն է՝ 11%, իսկ 4-րդ տեղում՝ շինարարությունը՝ 6%:

Տնտեսական աճի տեմպերով ԼՂՀ-ն զգալիորեն գերազանցում է մյուս 2 պետություններին և պատահական չէ, որ նայելով ԼՂՀ տնտեսական աճի տեմպերին նրան հաճախ անվանում են «անդրկովկասյան վագր». 2016թ.-ին ԼՂՀ-ում գրանցվել է 9.2% տնտեսական աճ, 2015թ.-ի 9.1%-ի փոխարեն: 2005-2016թթ. կտրվածքով ամենաբարձր տնտեսական աճի տեմպը ԼՂՀ-ում արձանագրվել է 2008թ.-ին՝ 14.3%, իսկ ամենացածրը՝2010թ.-ին՝ 5.5%: 2016 թ.-ին Աբխազիայում տնտեսական աճի տեմպը կազմել է 4.2%-ի՝ նախորդ տարվա 3.7%-ի փոխարեն, իսկ Մերձդնեստրում՝ 7.8%՝ նախորդ տարվա 7.4%-ի փոխարեն: Ուսումնասիրվող ողջ ժամանակահատվածում ԼՂՀ-ում տնտեսական անկում չի գրանցվել այն դեպքում, երբ Աբխազիայում տնտեսական անկում գրանցվել է 2013թ.-ին՝ -1.1%, իսկ Մերձդնեստրում՝ 2009թ.-ին՝ -1.8%:

ԲՆակչության թվաքանակով առաջատար դիրքում է Մերձդնեստրը, ԼՂՀ-ն զգալիորեն զիջում է մյուս 2 պետություններին: 2016թ.-ին ԼՂՀ-ում բնակչության թվաքանակը կազմել է 146.1 հազ մարդ՝ նախորդ տարվա 148.1 հզ փոխարեն, Աբխազիայում՝243.6 հզ մարդ՝ նախորդ տարվա 243.2 հզ փոխարեն, իսկ Մերձդնեստրում՝ 475.7 հզ մարդ՝ նախորդ տարվա 475.1 հզ փոխարեն: Նշված 3 երկրներում էլ 1989, 2005 և 2015 թթ. անց են կազվել մարդահամարներ, որոնց արդյունքում ԼՂՀ-ում 1989թ. բնակվում էր 189 հզ, 2005թ.՝ 137.7 հզ, իսկ 2015թ.՝ 148.1 հզ մարդ, Աբխազիայում համապատասխանաբար՝ 530 հզ, 214.6 հզ, 243.2 հզ մարդ, իսկ Մերձդնեստրում՝ 750 հզ, 555.3 հզ, 475.1 հզ մարդ: Ընդ որում, բնակչության խտության բաշխվածությունը ըստ այս 3 երկրների ունի հետևյալ տեսքը. ԼՂՀ՝ 13մարդ/կմ², Աբխազիա՝ 28 մարդ/կմ², Մերձդնեստր՝ 113 մարդ/կմ²:

Բնակչության բնական աճի ցուցանիշով ԼՂՀ-ն առաջատար դիրքում է՝2016թ. 1249 մարդ, 2005-2016թթ. ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2009թ.-ին, իսկ ամենացածրը՝ 2005թ.-ին[2]: Աբխազիայում 2016թ.-ին բնական աճը կազմել է 482 մարդ, ամենաբարձր ցոցանիշը գրանցվել է 2014թ.-ին՝ 537 մարդ, իսկ ամենացածրը՝ 2007թ.-ին՝ 11 մարդ: Մերձդնեստրում մահացությունը միշտ գերազանցում է ծնելությանը, բնական նվազումը 2016 թ.-ին կազմել է -2026՝ նախորդ տարվա՝ -2135 փոխարեն: Բնակչության կյանքի միջին տևողությունը ըստ երկրների ունի հետևյալ տեսքը. ԼՂՀ՝ 74.1 տարի, Աբխազիա՝ 75 տարի, Մերձդնեստր՝ 71 տարի, նշեմ նաև, որ պատմականորեն ԼՂՀ-ն և Աբխազիան հայտնի են եղել իրենց երկարակեցությամբ, որը ցավոք վերջին տարիներին այդքան էլ նկատելի չէ: Ամսական կենսաթոշակի միջին չափը ԼՂՀ-ում 90$, Աբխազիայում՝ 110$, իսկ Մերձդնեստրում՝ 120$: Ինչ վերաբերում է ծնելիության խթանմանն ուղղված միջոցառումներին, ապա Մերձդնեստրում 1-2 երեխա ունեցող ընտանիքներին եկամտային հարկը հետ են վերադարձնում 1400 ռուբլու, իսկ 3 և ավելի երեխա ունենալու դեպքում՝ 3000 ռուբլու չափով, նվազեցվում են հողի հարկն ու գույքահարկը, ընդ որում միայնակ ծնողների համար կրկնակի չափով: Անչափահաս 2 և ավելի երեխա ունեցողներին տրամադրվում է լրացուցիչ 14 օր արձակուրդ՝ հիմնական արձակուրդից բացի: Մերձդնեստրում 3-րդ երեխայի համար տրվում է 2500$, Աբխազիայում՝ 1700$, իսկ ԼՂՀ-ում 1000-1100$ միանվագ գումար: 2015թ. Աբխազիայում 10 և ավելի երեխա ունեցող ընտանիքներին անվճար ուղարկել են առողջարանային հանգստի ՌԴ և Աբխազիայի տարածքում: ԼՂՀ-ում ևս իրականացվում են ծնելիության խթանմանն ուղղված միջոցառումներ ու ծրագրեր. մասնավորապես **5 մինչև 18 տարեկան երեխաներ ունեցող բազմազավակ ընտանիքների համար բնակելի տների կառուցման, վերանորոգման և ընդլայնման ծրագիրը՝ 5.3 մլն$ ընդհանուր արժեքով 135 ընտանիքների համար, ինչպես նաև 7 և ավելի մինչև 18 տարեկան երեխաներ ունեցող ընտանիքներին գույքով ապահովման ծրագիրը՝ 6500$ ընդհանուր արժեքով գույքի տրամադրում շուրջ 58 ընտանիքի, 7 և ավելի մինչև 18 տարեկան երեխաներ ունեցող ընտանիքներին մեղվափեթակով և ընտանի կենդանիներով ապահովման ծրագիր՝**

[1] http://mer.gospmr.org/ Ежегодник Государственной службы статистики ПМР/Основные социально-экономические показатели,

[2] stat-nkr.am/ ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայություն/ԼՂՀ վիճակագրական տարեգիրքը 2009-2015թթ.,/Բնակչություն,

**187 հզ $,** իրականացվում է ընտանիքում ծնված 3-րդ և հաջորդ երեխաների անվամբ նպատակային ժամկետային ավանդների բացման ծրագիրը (3-րդ երեխա՝ 1000$, 4-րդ՝ 1500$)[1]:

Մեխանիկական աճի ցուցանիշով 2010-2015թթ.-ին ԼՂՀ գերազանցում էր Աբխազիային և Մերձդնեստրին: 2016թ.-ին մեխանիկական աճ գրանցվել է միայն Աբխազիայում՝ 93 մարդ, իսկ ԼՂՀ-ում և Մերձդնեստրում մեխանիկական նվազում է եղել՝ -290 և -2113 մարդ: 2005-2016 թթ. ընթացքում ԼՂՀ-ում մեխանիկական նվազում նկատվել է նաև 2006-ին՝ -445, 2007-ին՝ -195, 2008-ին՝ -367, Աբխազիայում՝ 2005-ին՝ -349, 2006-ին՝ -70, 2007-ին՝ -817, իսկ Մերձդնեստրում ուսումնասիրվող ողջ ժամանակահատվածում[2]:

Գործազրկության մակարդակով ԼՂՀ-ն զգալի գորազանցում է Մերձդնեստրին, զիջել է միայն 2014թ-ին՝ կազմելով 2.5%՝ ի համեմատ Մերձդնեստրի 3.2%-ի[3]: Ամենաբարձր գործազրկության մակարդակը ԼՂՀ-ում գրանցվել է 2005թ.-ին՝ 6.2%, իսկ ամենացածրը՝ 2014-ին՝ 2.5%, Մերձդնեստրում 2015թ.-ին գործազրկության մակարդակը կազմել է 1.9%, ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2009թ.-ին՝ 5.7%, իսկ ամենացածրը՝ 2007-ին՝ 1.09%: Երկու երկրներում էլ գործազրկությունը բնական մակարդակի վրա է: Մերձդնեստրում տրամադրվում է գործազրկության նպաստ՝ 35.5 $ չափով, իսկ ԼՂՀ-ում մինչև 2014թ. հունվարի 1-ը տրվում էր 38.5$ նպաստ, որից հետո այն հանվել է:

Միջին և նվազագույն ամսական անվանական աշխատավարձերի համեմատությունը ցուց է տալիս, որ այդ 2 ցուցանիշներն էլ Մերձդնեստրում ավելի բարձր են, 2016թ. դրությամբ՝ 364$ և 118$, ամենաքիչը Աբխազիայում է՝ 130.7$ և 86$, ԼՂՀ-ում միջին և նվազագույն ամսական անվանական աշխատավարձները կազմում են՝317.8$ և 114.5$: Ընդ որում բարձր աշխատավարձերն ըստ ոլորտների ունեն հետևյալ տեսքը. Աբխազիա՝ ֆինանսական հատված, Մերձդնեստր՝ կապի ոլորտ, ԼՂՀ՝ կառավարման համակարգ:

Գնաճի մակարդակով 2013-ից ի վեր բարձր տեմպեր է գրանցել Աբխազիան, իսկ մինչ այդ Մերձդնեստրը: 2016թ.-ին ԼՂՀ-ում գրանցվել է գնանկում՝ -1.4%՝ 2015թ. 3.5% փոխարեն, Աբխազիայում՝ 8%, 2015թ.-ի 9.1% փոխարեն, Մերձդնեստրում՝ 2.4%, 2015-ի -1.8% փոխարեն:

ԼՂՀ-ում գնաճի ամենաբարձր տեմպը գրանցվել է 2008-ին՝ 10.4%, Աբխազիայում՝ 2008-ին՝ 19.2%, իսկ Մերձդնեստրում՝ 2007-ին՝ 29.4% և 2008-ին՝ 25.1%:

Արտաքին առևտրաշրջանառության ցուցանիշով բարձր տեմպեր ունի Մերձդնեստրը, 2016թ.-ին 2034.6 մլն $՝ 2015թ-ի 1750 մլն $ փոխարեն, Աբխազիայում՝ 360 մլն $՝ նախորդ տարվա 310.8 մլն $ փոխարեն, իսկ ԼՂՀ-ում 338 մլն $՝ 2015թ.-ի 315 մլն $ փոխարեն:

Նշված երկրներից Մերձդնեստրի առևտրային գործընկերներն են Մոլդովան, ՌԴ-ն, Ուկրաինան, Իտալիան, Գերմանիան, Ռումինիան, Լեհաստանը, Ֆրանսիան: Այն հիմնականում արտահանում է մետաղ, էլեկտրաէներգիա, սննդամթերք, կոշիկ: Աբխազիայի առևտրային գործընկերներն են ՌԴ-ն, Թուրքիան, Ուկրաինան, Չինաստանը, Բրազիլիան, Մերձբալթյան երկրները: Աբխազիան արտահանում է գինեգործական արտադրանք, ձկնամթերք, ցիտրուսային մշակաբույսեր: ԼՂՀ առևտրային գործընկերներն են ՀՀ-ն, ՌԴ-ն, Բելառուսը, Ուկրաինան, Թուքիան: Արտահանում է հանքահումքային մթերքներ, բուսական ծագման արտադրանք, մետաղներ և թանկարժեք քարեր: ԼՂՀ, Աբխազիայի, Մերձդնեստրի առևտրային հաշվեկշիռը բացասական է: Առևտրային հաշվեկշռի դեֆիցիտը ավելի ցածր է ԼՂՀ-ում, ավելի բարձր՝ Մերձդնեստրում, ընդ որում վերջինիս առևտրային հաշվեկշռի դեֆիցիտը փոխհատուցվում է ՌԴ սուբսիդավորմամբ, որն ապահովում է տեղի անվճար գազի սպառումը, իսկ դրանից գոյացած պարտքը կրում է Մոլդովան, քանի որ դե յուրե Մերձդնեստրը Մոլդովայի մասն է կազմում: Ընդ որում պարտքի չափը, ըստ Մոլդովայի էկոնոմիկայի նախարարության տվյալների, 2016թ. հուլիսին կազմել է 4.6 մլրդ $: 2016թ.-ին Մերձդնեստրի առևտրային հաշվեկշռի դեֆիցիտը կազմել է -464.8 մլն $՝ նախորդ տարվա՝ -527,2 մլն $ փոխարեն, Աբխազիայի առևտրային հաշվեկշռի դեֆիցիտը կազմել է -243.5 մլն $՝ նախորդ տարվա՝ -186,7 մլն $ փոխարեն, իսկ ԼՂՀ-ինը՝ 175.8 մլն $՝ նախորդ տարվա՝ -190,4 մլն $ փոխարեն:

Պետական բյուջեի եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշը 2012-2014թթ. ամենաբարձրն է եղել Աբխազիայում, 2014-2016թթ.՝ Մերձդնեստրում, իսկ ամենացածրը՝ ԼՂՀ-ում: 2016թ. Մերձդնեստրում պետական

[1] http://mss.nkr.am/ ԼՂՀ Աշխատանքի և Սոցիալական Հարցերի նախարարություն/Ծրագրեր/
Ծնելիության և բազմազավակության խթանում,

[2] http://mer.gospmr.org/ Ежегодник Государственной службы статистики ПМР/ Миграционное движение,

[3] stat-nkr.am/ ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայություն/ԼՂՀ վիճակագրական տարեգիրքը 2009-2015թթ.,/Բնակչության զբաղվածությունը,

բյուջեի եկամուտներ/ՀՆԱ-ն կազմել է 23.6%, Աբխազիայում՝ 21.3%, ԼՂՀ-ում՝ 14.7%: 2015թ. համեմատ 3 երկրներում էլ այս ցուցանիշը նվազել է:

Եվ ԼՂՀ-ում, և Աբխազիայում, և Մերձդնեստրում պետական բյուջեի եկամուտների կառուցվածքում գերակշռում են հարկային եկամուտները, ընդ որում հարկային եկամուտների մեջ Աբխազիայում և Մերձդնեստրում գերակշռում են անուղղակի հարկերը, իսկ ԼՂՀ-ում 2014թ.-ից սկսած ուղղակի հարկերը՝ պայմանավորված «Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքի ուժի մեջ մտնելու հետ:

Պետական բյուջեի ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը ամենաբարձրն է ԼՂՀ-ում, իսկ ամենացածրը՝ Աբխազիայում: 2016թ. ԼՂՀ-ում պետական բյուջեի ծախսեր/ՀՆԱ-ն կազմել է 37.3%[1]: Նշված ցուցանիշը Մերձդնեստրում կազմել է 30.9%, իսկ Աբխազիայում՝ 22.3%: 2015թ. համեմատ 3 երկրներում էլ այս ցուցանիշը նվազել է:

Եվ ԼՂՀ-ում, և Աբխազիայում, և Մերձդնեստրում պետական բյուջեի ծախսերի մեծ մասը ուղղվում է սոցիալական պաշտպանությանը:

Պետական բյուջեի դեֆիցիտ/ՀՆԱ ցուցանիշը ամենաբարձրն է Մերձդնեստրում, իսկ ամենացածրը՝ Աբխազիայում: 2016թ. Մերձդնեստրում պետական բյուջեի դեֆիցիտ/ՀՆԱ-ն կազմել է -7.4%, Աբխազիայում՝ -1.5%, ԼՂՀ-ում՝ -1.2%: 2015թ. համեմատ միայն Աբխազիայում է ցուցանիշը աճել: Նշենք նաև, որ Աբխազիայում 2009-2011թթ. արձանագրվել է պետական բյուջեի պրոֆիցիտ և պետական բյուջեի պրոֆիցիտ/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 0.6%, 0.9% և 4.5%: Վերոնշյալ երկրները ստանում են ֆինանսական օգնություններ. Մերձդնեստրն ու Աբխազիան՝ ՌԴ-ից, իսկ ԼՂՀ-ն՝ ՀՀ-ից: 2016թ. դրությամբ ԼՂՀ-ին ՀՀ-ից տրվող միջպետական վարկը կազմել է 94մլն $, Աբխազիայինը՝ 155մլն $, իսկ Մերձդնեստրինը՝ 52մլն $:

Ինչ վերաբերում է ֆինանսական համակարգին, ապա ԼՂՀ-ն ՀՀ հետ վարում է միասնական դրամավարկային քաղաքականություն: ՀՀ-ում բանկային համակարգը ընդգրկում է ՀՀ Կենտրոնական բանկը և 17 առևտրային բանկեր, որոնցից 8-ը ներկայացված է ԼՂՀ-ում: ԼՂՀ-ում շրջանառվում է ՀՀ դրամը: Աբխազիայի բանկային համակարգը ընդգրկում է Աբխազիայի Ազգային բանկը և 15 առևտրային բանկեր, երկրում շրջանառվում է ռուսական ռուբլին, իսկ 2008 թ.-ից սկսած նաև մտցվել է երկրի ազգային արժույթը՝ աբսարը, որը ի համեմատ ռուսական ռուբլու քիչ է շրջանառվում: Մերձդնեստրն ունի սեփական ֆինանսական համակարգ, որի հիմքում մերձդնեստրյան ռուբլին է: Այն հարաբերվում է ռուսական ռուբլու հետ ինչպես 1/5, երկրի բանկային համակարգը ընդգրկում է Մերձդնեստրի Պետական բանկը և 10 առևտրային բանկեր: Վարկեր/ՀՆԱ ցուցանիշով բարձր տեմպեր ունի ԼՂՀ-ն, ցածր՝ Մերձդնեստրը: 2016թ. ԼՂՀ-ում վարկեր/ՀՆԱ-ն կազմել է 43.5%, Աբխազիայում՝ 28.2%, Մերձդնեստրում՝ 27.6%: Նշված ցուցանիշը ԼՂՀ-ում 2005-2016թթ. կտրվածքով ամենաբարձր կետին է հասել 2012-ին՝ 52.9%, Աբխազիայում՝ 2014-ին՝ 35%, իսկ Մերձդնեստրում՝ 2006-ին՝ 30.5%: Նշենք, որ ԼՂՀ վարկային ներդրումներում մեծ տեսակարար կշիռը զբաղեցնում են երկարաժամկետ վարկերը, Մերձդնեստրում՝ ևս երկարաժամկետ վարկերը, իսկ Աբխազիայում՝ կարճաժամկետ վարկերը[2]: Վերաֆինանսավորման տոկոսադրույքները ըստ երկրների ունեն հետևյալ տեսքը. ԼՂՀ-ում՝ 6%, Մերձդնեստրում՝ 7%, Աբխազիայում՝ 12%, այսինքն՝ վարկերն ավելի հասանելի են ԼՂՀ-ում:

Ավանդներ/ՀՆԱ ցուցանիշով ի համեմատ Մերձդնեստրի ԼՂՀ-ն բարձր տեմպեր ունի: 2016թ. ԼՂՀ-ում ավանդներ/ՀՆԱ-ն կազմել է 26.7%, 2015թ.՝ 28% փոխարեն, Մերձդնեստրում՝ 13%, 2015թ.՝ 14.4%: Նշված ցուցանիշը 2005-2016թթ. ընթացքում և ԼՂՀ-ում, և Մերձդնեստրում առավելագույն կետին է հասել 2013-ին՝ 32.9% և 15.5%: Եվ ԼՂՀ-ում, և Մերձդնեստրում քանակային առումով գերակշռում են ցպահանջ ավանդները, իսկ գումարային առումով՝ ժամկետային ավանդները:

Հարկեր/ՀՆԱ ցուցանիշով բարձր տեմպեր ունի Աբխազիան, ցածր՝ ԼՂՀ-ն: 2016թ. Աբխազիայում հարկեր/ՀՆԱ-ն կազմել է 23.3%, Մերձդնեստրում՝ 21.2%, ԼՂՀ-ում՝ 13.9%: Նախորդ տարվա համեմատ ցուցանիշը նվազել է միայն ԼՂՀ-ում[3]: 2005-2016թթ. կտրվածքով Աբխազիայում ցուցանիշը ամենաբարձր կետին է հասել 2011-ին՝ 27.8%, Մերձդնեստրում՝ 2013-ին՝ 20.7%, ԼՂՀ-ում՝ 2009-ին՝ 18.6%:

Ներդրումներ/ՀՆԱ ցուցանիշով բարձր տեմպեր ունի ԼՂՀ-ն, ցածր՝ Մերձդնեստրը: 2015թ. ԼՂՀ-ում ներդրումներ/ՀՆԱ-ն կազմել է 32.5%, Աբխազիայում՝ 21.3%, Մերձդնեստրում՝ 17.5%: 2016թ. նշված ցուցանիշը նվազել է և Աբխազիայում, և Մերձդնեստրում՝ կազմելով 10.5% և 9.7%: Իրականացվող

[1] http://minfin-nkr.am/ԼՂՀ Ֆինանսների նախարարություն/ ԼՂՀ պետական բյուջե,
[2] http://ugsra.org/ Управление государственной статистики Республики Абхазия/ Финансовая деятельность,
[3] http://www.tax.nk.am/Արցախի Հանրապետության Հարկային ծառայություն,

ներդրումները ըստ ոլորտների բաշխված են հետևյալ կերպ. ԼՂՀ-ում արդյունաբերության և շինարարության ոլորտ, Աբխազիայում՝ շինարարություն և տրանսպորտ, Մերձդնեստրում՝ արդյունաբերություն: Ներդրումային գրավչությունը բարձրացնելու համար 3 երկրներում էլ իրականացվում են համապատասխան միջոցառումներ, տրվում են հարկային արտոնություններ. Աբխազիայում շահութահարկը նվազեցվում է մինչև 250 հզ $ ներդրումների դեպքում՝ 25%, մինչև 500 հզ $ դեպքում՝ 50%, մինչև 1մլն $ դեպքում՝ 100%: Մերձդնեստրում շահութահարկը նվազեցվում է մինչև 250 հզ $ ներդրումների դեպքում՝ 10%, մինչև 500 հզ $ դեպքում՝ 30%, մինչև 1մլն $ դեպքում՝ 50%: ԼՂՀ-ում ներդրման ընդհանուր արժեքը սկսած առնվազն 250 հզ $, ապա տվյալ ռեզիդենտի շահութահարկի գումարը նվազեցվում է՝ հայտ ներկայացնելու տարում և դրան հաջորդող երկու տարիներին 100 տոկոսի չափով, հետագա երկու տարիներին՝ 50 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան ներդրման ընդհանուր արժեքի 10 տոկոսը:

Այսպիսով, վերոնշյալ 3 պետությունները տնտեսական զարգացման մակարդակով ունեն մի շարք ընդհանրություններ և տարբերություններ և նրանց 25-ամյա պատմությունը ցույց է տալիս, որ կարելի է հաջողությամբ իրականացնել տնտեսական գործունեություն ու զարգացնել արտաքին տնտեսական կապերը նույնիսկ չճանաչված պետության կարգավիճակով՝ համոզված լինելով, որ վաղ թե ուշ ճանաչումը տեղի է ունենալու, ու գիտակցելով, որ ճանաչման երկարատև գործընթացը արագացնող հիմնական գործոններից մեկը զարգացած տնտեսություն ունենալն է:

Օգտագործված գրականություն

1. www.stat-nkr.am, ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայություն,
2. www.ugsra.org, Управление государственной статистики Республики Абхазия,
3. www.mer.gospmr.org, Государственная служба статистики ПМР,
4. www.minfin-nkr.am, ԼՂՀ Ֆինանսների նախարարություն/,
5. www.minfin-pmr.org, Министерство финансов Приднестровской Молдавской Республики,
6. www.nb-ra.org, Национальный банк Республики Абхазия,
7. **www.cbpmr.net**, **Приднестровский Республиканский Банк**,
8. **www.disput-pmr.ru**, Столичная налоговая инспекция,
9. www.tax.nk.am, Արցախի Հանրապետության Հարկային ծառայություն,
10. www.mss.nkr.am, ԼՂՀ Աշխատանքի և Սոցիալական Հարցերի նախարարություն:

ՀՏԴ 339.5(479.25) *Տնտեսագիտություն*

Ինգա Ղալայան
Հայաստանի Պետական Տնտեսագիտական
Համալսարան, 3-րդ կուրս

ՀՀ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵԱՏՄ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ՀՀ արտահանման ոլորտում կան բազմաթիվ խնդիրներ, որոնք հանդիսանում են ՀՀ տնտեսության խոցելի կողմերը: Սակայն գոյություն ունեն այդ խնդիրների լուծման մի շարք ուղիներ, որոնցից որոշները պայմանավորված են ԵԱՏՄ-ին ՀՀ-ի անդամակցությամբ:

Բանալի բառեր՝ տնտեսական աճ, արտահանում, արտաքին առեվտուր, առեվտրաշրջանառություն, եվրասիական տնտեսական միություն, եվրոպական միություն:

Инга Галаян
Армянский государственный экономический университет, 3-ий

ВОЗМОЖНОСТИ РАСШИРЕНИЯ ЭКСПОРТА АРМЯНСКОЙ РЕСПУБЛИКИ В УСЛОВИЯХ ЧЛЕНСТВОВАНИЯ ЕАЭС

В сфере экспорта Армянской Республики есть много проблем и эти проблемы являются слабой стороной для экономики Армении. Но есть некоторые решения этих проблем, и многие из них связны со вступлением Армении в ЕАЭС.

Ключевые слова: экономический рост, экспорт, внешняя торговля, товарооборот, евразийский экономический союз, европейский союз

Inga Ghalayan
Armenian State University Of Economy, 3rd year

THE OPPORTUNITIES OF EXPORT EXPANSION OF THE RA UNDER CONDITIONS OF THE EAEU MEMBERSHIP

There are lots of problems in the field of export of the Republic of Armenia, which are considered the vulnerabilities of the RA economy. But there are various solutions to these problems, and some of theme are connected with accession of the RA to EAEU.

Keywords - economic growth, export, international trade, turnover of goods, eurasian economic union, european union

Տնտեսական աճը բնակչության բարեկեցության բարձրացման հիմքն է: Միջնաժամկետում տնտեսական աճի կայուն տեմպ ապահովելու կարևոր գործոն է հանդիսանում ազգային մրցունակության բարձր մակարդակը միջազգային շուկայում: Որոշ դեպքերում ազգային մրցունակության բարձրացումն սերտորեն կապված է արտահանող կազմակերպությունների աջակցման և ազգային արժույթի կուրսը ցածր պահելու քաղաքականության հետ:

Արտահանման խթանման և ներմուծման խոչընդոտման միջոցով տնտեսական աճի բարձր տեմպեր ապահովելու կարևոր գործիք է համարվում ազգային արժույթի արժեզրկումը: Սակայն ՀՀ-ում այս գործիքի կիրառումը կարող է մեծ բարդություններ առաջացնել՝ կապված դոլլարացման բարձր աստիճանի հետ:

ՀՀ երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման գործում կարևոր նշանակություն կարող է ունենալ ՀՀ-ի անդամակցությունը ԵԱՏՄ-ին: Մեր կարծիքով ԵԱՏՄ ներքին շուկան մեծ հետաքրքրություն է ներկայացնում ՀՀ-ի արտահանման ընդլայնման համար. նախ ՀՀ-ն մեծ պոտենցիալ ունի ընդլայնելու արտահանումը դեպի ԵԱՏՄ անդամ երկրներ, ԵԱՏՄ-ի շուկան

հայկական ապրանքների հնարավորություն են տալիս պատրաստվելու գլոբալ մրցակցությանը և այլն:

ՀՀ արտաքին առևտրաշրջանառության հարցերը կարևոր նշանակություն ունեն ՀՀ տնտեսության զարգացման գործում, հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ն որդեգրել է արտահանման ուղղված տնտեսական քաղաքականություն: 2015թ.-ի հունվարի 2-ին ՀՀ-ն դարձավ ԵԱՏՄ-ի լիիրավ անդամ և արդեն երկու տարուց ավել է ինչ գործում է այդ կառույցի շրջանակներում: Անդամակցությունից հետո ՀՀ արտահանման և ներմուծման կառուցվածքները լուրջ փոփոխություններ են կրել:

Վերջին տասամյակի տվյալների համաձայն ՀՀ առևտրաշրջանառությունը միջինում կազմել է 4970.5 մլն ԱՄՆ դոլար՝ 2016թ-ին կազմել է 5075.3 մլն ԱՄՆ դոլար , որը նախորդ տարվա համեմատ աճել է 7%-ով , որը պայմանավորված է եղել հիմնականում արտահանման աճով: Արտահանումը նախորդ տարվա համեմատ աճել 20%-ով է և դրանով իսկ բարելավել է առևտրային հաշվեկշռի վիճակը:

ԵԱՏՄ-ին անդամակցելուց արդեն մեկ տարի անց բավականին վաթարացում նկատվեց արտահանման և նորմուծման ցուցանիշների գծով՝ համապատասխանաբար նվազելով 26.5%-ով և 3.9%-ով: Առաջին հայացքից թվում է, որ այդ անկումը պայմանվորված է եղել ԵԱՏՄ-ին անդամակցությամբ , սակայն իրականում 2015թ.-ին արտահանման կրճատումը հիմնականում պայմանավորված էր հայրենական արտադրության ապրանքների նկատմամբ արտաքին պահանջարկի կրճատմամբ, իսկ ներմուծման անկումը գլխավորապես պայմանավորված էր ներքին պահանջարկի կրճատմամբ, արտահանման խնդիրներով՝ հիմնականում միջանկյալ սպառման բնույթի ապրանքների մասով, ինչպես նաև փոխարժեքի արժեզրկմամբ:[1]

Գծապատկեր 1: ՀՀ արտաքին առևտրի շարժընթացը (մլն ԱՄՆ դոլար):[2]



Գծապատկեր 1-ի տվյալները փաստում են, որ վերջին տարիներին ՀՀ արտահանումն ըստ ապրանքամխմբերի արմատական փոփոխություններ չի կրել: 2006թ.-ի տվյալների համաձայն ՀՀ արտահանման կառուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռն է ունեցել թանկարժեք քարերի և մետաղների ապրանքախումբն, որի տեսակարար կշիռն արտահանման մեջ այդ տարվանից սկսած նվազել էր մինչև 2011թ.-ը և 2011-2016թթ.-ին միջինում կազմել է ամբողջ արտահանման 13.4% , իսկ մետաղների (այդ թվում՝ մետաղներից պատրաստված արտադրանքը) տեսակարար կշիռն արտահանման մեջ մինչև ճգնաժամային տարին՝ 2009թ.-ն, աճել էր: 2010թ.-ից արտահանման մեջ մետաղների տեսակարար կշիռն սկսել էր նվազել և միայն 2013թ.-ին էր նկատվել էր մի փոքր աճ, սակայն դրանից հետո նորից նկատվել էր արտահանման մեջ այդ ապրաքախմբի գծով տեսակարար

[1]Աղբյուր՝ ՀՀ մաքսային ծառայության էլեկտրոնային կայք՝
http://www.customs.am/csMD_News.aspx?ntname=csMDOfficialNews&nid=2124
[2] Աղբյուր՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության էլեկտրոնային կայք՝
http://armstat.am/file/article/sv_12_16a_411.pdf

կշռի կրճատում: 2006թ.-ից սկսած մինչև 2011թ.-ն արտահանման մեջ նկատվել էր հանքանյութերի գծով տեսակարար կշռի պարբերական աճ, իսկ վերջին տարիներին որոշ չափով նվազել է այդ ապրանքախմբի տեսակարար կշիռն 2012-2016թթ.-ին միջինում այս ապրանքախմբի տեսակարար կշիռն կազմել է 25.7%:Այս փաստը հնարավորություն է տալիս , որ ապրանքային կառուցվածքն որոշակի բարելավում է ապրել:

Վերջին տարիների տվյալներ փաստում են, որ ՀՀ արտահանումն ըստ ապրաքախմբերի դիվերսիֆիկացված չէ: 2016թ.-ի տվյալների համաձայն հիմնական չորս ապրանքախմբերի՝ հանքահումքային արտադրանքի, թանկարժեք քարերի և մետաղների, մետաղների և դրանից իրերի, սննդեղենի, գյուղատնտեսական հումքի բաժինը ՀՀ արտահանման մեջ կազմել են 69.9%, որը բավականին մեծ ցուցանիշ է: Այս ամենից կարելի է եզրակացնել, որը ՀՀ արտահանումն ըստ ապրանքախմբերի անհարժեշտ է բազմազանեցնել, քանի որ այս փաստը ՀՀ տնտեսության խոցելի կողմերից է: 2015թ.-ի ՀՀ արտահանման վիճակի վրա մեծ ազդեցություն ունեցավ համաշխարհային շուկայում ոսկու, մոլիբդենի, պղնձի գների անկումը, քանի որ այս ապրանքների բաժինը բավականին մեծ է ՀՀ արտահանման մեջ: Չնայած այն հանգամանքին, որ բնեղեն արտահատությամբ այդ ապրանքների գծով արտահանման անկում չնկատվեց, այն արժեքային արտահայտությամբ իր կնիքը թողեց ՀՀ արտահանման վրա:

Եվ կարևոր նշանակություն ունի, որ ՀՀ արտահանման կառուցվածքում բավականին մեծ է փոքր ավելացված արժեք ունեցող արտադրանք բաժինը, որը փաստում է տնտեսական համակարգի զարգացման ցածր աստիճանի մասին և պահանջում շուտափույթ լուծում:

Գծապակեր 2: ՀՀ արտահանման ապրանքային կառուցվածքը 2006-2016թթ.-ին (%): [1]



Արտահանման բազմազանեցումը կարևոր նշանակություն ունի ՀՀ տնտեսության աճի և զարգացման համատեքստում: Այն թույլ է տալիս նվազեցնել արտաքին շուկաներում կտրուկ գնային տատանումներով, ինչպես նաև միջազգային շուկաների կառուցվածքային և ծավալային փոփոխություններով պայմանավորված երկրի տնտեսության խոցելիության աստիճանը:

[1] Աղբյուր՝ Հայաստանի Հնարապետության մաքսային ծառայության էլեկտրոնային կայք՝ http://www.customs.am/Content.aspx?itn=csCIForeignTradeByProducts

Գծապատկեր 3: ՀՀ արտահանման կառուցվածքն ըստ երկրների 2006-2016 թթ.-ին (%): [1]



Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ արտահանման կառուցվածքն ըստ երկրների որոշակիորեն բարելավվել է, սակայն ըստ երկրների ՀՀ արտահանման կառուցվածքի դիվերսիֆիկացման անհրաժեշտությունը դեռ պահպանում է իր արդիականությունը, որի մասին փաստում են վերջին տասնամյակում գրանցված ցուցանիշները՝ 2016թ.-ին արտահանման ոլորտում ՀՀ-ի 10 հիմնական առևտրային գործընկեր երկրների բաժինը կազմում էր ՀՀ արտահանման ծավալի 70%-ը: 2015թ.-ի արտահանման անկման պատճառներից մեկն այն էր, որ ՀՀ արտահանումը դեպի 3 հիմնական առևտրային գործընկեր երկրներ՝ Ռուսաստան, Չինաստան և Գերմանիա, բավականին նվազել էր, որն էլ իր ազդեցությունը թողեց ՀՀ արտահանման ընդհանուր պատկերի վրա՝ ելնելով այդ երկների մասնաբաժնի մեծությունի: Այս ամենը վկայում է , որ այս առումով ՀՀ տնտեսությունը բավականին խոցելի է :

Ելնելով այն հանգամանքից, որ տարիներ շարունակ ՀՀ հիմնական առևտրային գործընկերը եղել է ՌԴ-ն և վերջինիս տնտեսական փոփոխություններն իրենց ազդեցությունն են թողնում ՀՀ տնտեսության վրա և 2015թ.-ին ՌԴ տնտեսությունում առկա դժվարություններն, իրենց ազդեցությունը թողեցին ՀՀ տնտեսության, մասնավորապես՝ արտահանման վրա: Չնայած այս ամենին ՀՀ-ից ՌԴ արտահանման մեծ պոտենցիալին պայմանավորված մի շարք հանգամանքներով՝ նախ 2016թ.-ին ՀՀ բաժինը ՌԴ առևտրաշրջանառության մեջ կազմում էր 0.3%[2], որը փաստում է այն մասին, որ ՌԴ ներքին շուկան բավականին տարողունակ է հայկական ապրանքների համար: Հայաստանի համար Ռուսաստանի ներքին շուկան մեծ հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ Հայաստանը Ռուսաստան արտահանման ընդլայնման և ապրաքային կտրվածքով բազմազանեցման մեծ պոտենցիալ ունի՝ հաշվի առնելով մի շարք առանձնահատկություններ: Նախ՝ Ռուսաստանի ներքին շուկայում հայկական արտադրանքը մեծ պահանջարկ է վայելում, քանի որ ռուսական շուկայում հայկական ապրանքները բավականին մրցունակ են և՛ գնային, և՛ որակի առումով:Կարևոր նշանակություն ունի նաև այն, որ Ռուսաստանում է բնակավում հայկական սփյուռքի մեծ մասը, որը հայկական ապրանքների հիմնական սպառողներ են:

[1] ՀՀ ազգային վիճակագրական ծառայության էլեկտրոնային կայք՝ http://armstat.am/file/article/sv_12_16a_411.pdf
[2] Աղբյուր՝ Ռուսաստանի Դաշնության մաքսային ծառայության էլեկտրոնային կայք՝
http://www.customs.ru/index.php?optioncom_newsfts&view=category&id=125&Itemid

Աղյուսակ 1: ՀՀ արտահանումը երկիր-ապրանք կտրվածքով (հազար դրամ);[1]

ԱՏԳ ԱՄ-ի կոդը	Ապրանքի անվանումը	ԱՊՀ		ԵՄ	
		2015	2016	2015	2016
01-24	Սննդեղեն, գյուղ հումք	198613	264910	9208.5	11386.1
22	Ալկոհոլային, ոչ ալկ. խմիչքներ	101845	152132	6687.1	7846.4
24	Ծխախոտ և հումք	11362	10047.9	744.2	688.2
25-27	Հանքանյութեր	2790.9	4101.2	134939	190021
27	Վառելիքա-էներգետիկ ապր-ր	35.2	118.2	0	0.2
28-40	Քիմիական արտադրանք, կաուչուկ	10017	12490.6	921.1	502.5
41-43	Մորթի, կաշի, արտադրանք	1938.5	5163.8	1623	1625.4
44-49	Փայտեղեն և թղթե արտադրանք	319.3	282.9	363.3	451.6
50-67	Տեքստիլ, կոշկեղեն	28811	51710.6	39088.8	45271
68-70	Քարե, գիպսե արտադրանք, կերամիկա, ապակի	4349.8	7712.2	513.3	837.9
71	Թանկ. քարեր, մետաղներ	19283	37172.9	36905.3	32216.8
72-83	Մետաղներ և արտադրանք	2608.9	5035.5	142876	188561
84-89	Մեքենաներ,սարքավորումներ փոխադրամիջոցներ	9320.1	18107.2	7823.1	3635.6
90-97	Այլ ապրանքներ	4951.1	7789.8	4286	3476.3

2016թ.-ին ՀՀ արտահանումն աճել է և դեպի ԱՊՀ, և դեպի ԵՄ: ԱՊՀ երկրներ ՀՀ-նարտահանում է աննդեղեն, գյուղ հումք, քիմիական արտադրանք, կաուչուկ, թանկարժեք քարեր և մետաղներ, իսկ ԵՄ երկրներ հիմնականում արտահանում է հանքանյութեր, տեքստիլ, կոշկեղեն, թանկարժեք քարեր և մետաղներ: Աղյուսակի տվյալները հաստատել այն փաստը, որ ՀՀ արտահանման մեջ ԵՄ երկների բաժինն ավելի մեծ է, քան ԱՊՀ երկրներինը: Այնուամենայնիվ կարևոր է այն հանգամանքը, որ ՀՀ-ն ԵՄ երկրներ արտահանում է փոքր ավելացված արժեք ունեցող հումքային արտադրանք, իսկ ԱՊՀ երկրներ առավել բարձր ավելացված արժեք ունեցող պատրաստի արտադրանք: Մեր կողմից առաջարկվում է այս ամենը հաշվի առնել ՀՀ արտահանման ընդլայնման հնարավորությունները գնահատելիս:

Ինչպես տեսնում ենք ՀՀ արտահանման ոլորտում ունի մի շարք խնդիրներ: Այդ խնդիրներից առաջնայինն են այն, որ արտահանումն ըստ երկրների և ապրանքային կառուցվածքի դիվերսիֆիկացման խնդիր ունի, ինչպես նաև ապրանքային կառուցվածքում մեծ է փոքր ավելացված արժեք ունեցող ապրանքների բաժինը:Այս խնդիրների հնարավոր են լուծելու մի շարք ճանապարհներով.

ՀՀ-ն միակ երկիրն է, որը հանդիսանալով ԵԱՏՄ լիիրավ անդամ, օգտվում է նաև ԵՄ կողմից տրամադրված GSP+ ռեժիմից:[2] ԵՄ-ի կողմից GSP+ ռեժիմը տրամադրվել է 9 երկրի, որոնցից ոչ մեկ բացի Հայսաստանից ԱՊՀ երկիր չէ: ԵՄ-ն հանդիսանում է Հայաստանի կարևոր առևտրային գործընկերը: ԵՄ ներքին շուկան Հայաստանի համար բավականին մեծ շուկա է՝ 28 երկիր, 500մլն սպառող[3]: Ըստ մեզ, Հայաստանն ամբողջությամբ չի օգտագործում իր արտահանման պոտենցիալը: Մեր կողմից առաջարկվում է հաշվի առնելով այս հանգամանքը՝ ընդլայնել ՀՀ-ն արտահանման ծավալներն, ինչպես դեպի ԵԱՏՄ, այնպես էլ ԵՄ երկրներ: Հայաստանն արտահանման ընդլայնամն

[1] Աղբյուր՝ Հայաստանի Հնարապետության մաքսային ծառայության էլեկտորոնային կայք՝ http://www.customs.am/Content.aspx?itn=csCIForeignTradeByProducts

[2] Աղբյուր՝ Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության էլեկտրոնային կայք՝ http://eeas.europa.eu/delegations/armenia/eu_armenia/trade_relation/pref_reg_gsp/index_hy.htm

[3] Աղբյուր՝ ԵՄ-ի էլեկտրոնային կայք՝ http://europa.eu/european-union/about-eu/figures/living_en

համար մեծ հետաքրքրություն պետք է ներկայացնեն այն երկներ, որոնց հետ ԵԱՏՄ ստորագրել կամ պատրաստվում է ստորագրել ազատ առևտրի գոտի ստեղծման մասին պայմանգիր:

2015թ.-ի մայիսի 29-ին Վիետնամը և ԵԱՏՄ ստորագրեցին ազատ առևտրի մասին պայմանգիրը:[1] Վիետնամի ներքին շուկան բավականին տարողունակ է՝ 90մլն սպառող: Ըստ մեզ, Հայաստանը կարող է ընդլայնել արտահանումը դեպի Վիետնամ՝ օգտվելով Վիետնամի և ԵԱՏՄ-ի միջև կնքված ազատ առևտր մասին պայմանգրից:

ՀՀ արտահանման ընդկայնման տեսնկյունից կարևոր է նաև «թիրախավորված» արտահանումը՝ հաշվի առնելով հայկական սփյուռքի մեծությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանգրին միանալու մասին» պայմանագիր
2. 2014թ.Եվրասիակն տնտեսկան միության ստեղծմնան մասին պայմանգիր
3. Ավետիսյան Ս. և ուրիշներ «Սփյուռքի ներդրումները Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ. զարգացման հեռանկարներ»: Եր.,Տնտեսագետ, 2015. -252 էջ.- (Ամբերդե մատենաշար):
4. Eurasian economic integration:Fact and fuires
5. The World Bank Development Research GroupDepp Trad Policy Of Trad and Integretion Team May 2011
6. Eurasian integration rissia's attempt at the economic unification of the post-soviet area

Ինտերնետային կայքեր՝

- http://www.armstat.am
- http://www.customs.am
- http://mineconomy.am
- https://www.cba.am
- http://www.banks.am
- http://www.customs.ru
- http://www.eurasiancommission.org
- http://eeas.europa.eu
- http://cbr.ru

[1] Աղբյուր՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի էլեկտրոնային կայք՝ http://www.eurasiancommission.org/ru/act/trade/dotp/sogl_torg/Documents

ՀՏԴ 364.3 (479.243) *Տնտեսագիտություն*

Գոհար Հարությունյան,
ԱրՊՀ Տնտեսագիտության տեսություն 4-րդ կուրս

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՂՀ-ՈՒՄ

Հոդվածը ներկայացնում է ԼՂՀ-ում սոցիալական աջակցության հիմնական ուղղությունները, ծրագրերը, դիտարկվել են սոցիալական ոլորտին առնչվող մի շարք ցուցանիշներ կատարելով համեմատական վերլուծություններ:

Բանալի բառեր՝ *սոցիալական քաղաքականություն, սոցիալական աջակցություն, նպաստներ, կենսաթոշակ, կրթական համակարգ, սոցիալական ծրագրեր, սոցիալական արդարություն, զբաղվածություն, առողջապահական համակարգ:*

Гоар Арутюнян
АрГУ, Теория экономики 4 курс

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ СОЦИАЛЬНОГО СОДЕЙСТВИЯ

В статье представлены основные направления социальной поддержки в НКР, программы, целый ряд показателей, связанных с социальной сферой, в том числе сравнительный анализ.

Gohar Harutyunyan
ASU, Theory of Economics 4-th year student

THE MAIN PROBLEMS OF SOCIAL ASSISTANCE IN THE NKR

The article presents the main directions of social support in the NKR, the projects, a number of indicators related to the social sphere, as well as a comparative analysis.

Յուրաքանչյուր պետության հիմնական պարտականությունն իր քաղաքացիների արժանապատվության հարգումն ու պաշտպանությունն է: Ժամանակակից հասարակական հարաբերությունների պայմաններում յուրաքանչյուր պետության առջև դրված գերակա խնդիրներից է եկամուտների վերաբաշխման առանձին մեխանիզմների միջոցով բնակչության պաշտպանվածության և սոցիալական արդարության ապահովումը, յուրաքանչյուր քաղաքացու համար կյանքի արժանապատիվ պայմանների, հավասար ելակետային հնարավորությունների ստեղծումը, բնակչության խոցելի և անապահով խավերի սոցիալական աջակցությունը, առանձին սոցիալական շերտերի միջև սոցիալական անհավասարության հարթեցումը, բնակչության, հասարակության, անհատի կենսամակարդակի բարձրացումը: Նշված հիմնախնդիրների լուծումը մեծ նշանակություն ունի հետպատերազմյան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համար:

ԼՂՀ-ում 2015 թվականին իրականացված սոցիալական քաղաքականության հիմնական նպատակներն էին ժողովրդագրական իրավիճակի բարելավումը, կենսաթոշակային և զբաղվածության համակարգերի կատարելագործումը, տարեցների, հաշմանդամների, զոհված զինծառայողների ընտանիքների, բազմազավակ ընտանիքների ու երեխաների հիմնահարցերի լուծումը:

Ընդհանուր առմամբ սոցիալական պաշտպանության ոլորտի 53 ծախսային ծրագրերի իրականացման համար ԼՂՀ 2015թ. պետական բյուջեով սոցիալական պաշտպանության ոլորտին հատկացվել է 22մլրդ 79մլն, որը բյուջեի ծախսերի նկատմամբ կազմում է 24,6%: Այստեղից հետևություն այն, որ ԼՂՀ պետբյուջեն ունի սոցիալական ուղղվածություն: Ըստ ԼՂՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ամփոփ տեղեկատվության, 2015թ. տարեվերջին կենսաթոշակառուների թվաքանակը կազմել է 31004 մարդ, որոնցից աշխատանքային և սոցիալական կենսաթոշակառուների թվաքանակը կազմել է 23226, զինծառայության հետ կապված կենսաթոշակառուների թվաքանակը՝ 7778 մարդ: Կենսաթոշակառուներին նշանակված կենսաթոշակի միջին չափը կազմել է 42905 դրամ, որը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 15 %ով, նոր նշանակվածների թիվը՝ 1018 է, հիմնական կենսաթոշակի չափը 16000 դրամ: Տարիքային աշխատանքային կենսաթոշակի միջին չափը 2015 թվականի արդյունքներով կազմել է 45200 դրամ՝ 2014 թվականի 40000 դրամի դիմաց՝ ավելացել է մոտ 13%-ով, իսկ սոցիալական կենսաթոշակի միջին չափը 2015 թվականի արդյունքներով կազմել է 19960 դրամ՝ 2014 թվականի 18000 դրամի դիմաց՝ ավելացել է մոտ 10 %-ով: Կենսաթոշակառուների թվաքանակի ուսումնասիրությունը ցույց տվեց,որ կենսաթոշակառուների մեծ մասը կենտրոնացված է Ստեփանակերտ քաղաքում՝ 11620 մարդ , այնուհետ Մարտակերտ՝ 5837մարդ (ներառյալ Շահումյանի շրջանը) և Մարտունի՝ 5537 մարդ:

2015թ. պետական կենսաթոշակների, դրամական օգնությունների և պարգևավճարների տրամադրման համար ԼՂՀ պետական բյուջեի ծախսերը կազմել է 12771,8 մլն.դրամ, որը 2014թ. համեմատ ավել է 1313,0 մլն.դրամով:

ԼՂՀ առողջապահական ծախսերը 2015 թ. կազմել են 5750,0 մլն, 2014 թ.՝ 5052,08 մլն, այսինքն 2015 թվականին 2014 թվականի համեմատությամբ աճել են 13,8 %-ով: 2015 թ. առողջապահական ծախսերի մեջ գերակշռում են արտահիվանդանոցային ծառայությունները(2 253 015,5հազ.), դրանց մեջ մտնում են ընդհանուր բնույթի բժշկական ծառայություններ, մասնագիտացված բժշկական ծառայություններ, ստոմատոլոգիական ծառայություններ, պարաբժշկական ծառայություններ: Գերակշիռ մաս են կազմում նաև հիվանդանոցային ծառայությունները (2 394 475,9հազ.), որոնց մեջ մտնում են ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայություններ, մասնագիտացված հիվանդանոցային ծառայություններ, բժշկական, մոր և մանկան կենտրոնների ծառայություններ:

Ըստ ԼՂՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ամփոփ տեղեկատվության, 2016թ. հունվարի 1-ի դրությամբ նպաստառու երեխաների ընդհանուր թիվը կազմել է 19042 և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 2.4 տոկոսով: Պետական նպաստների ծրագրով 2015թ. ծախսվել է շուրջ 2657.0 մլն. դրամ, իսկ նպաստառուների թվաքանակը կազմել է 19082 հոգի (2014 թ. շուրջ 2639.0 մլն. դրամ): Ծախսը 2014թ. համեմատ աճել է շուրջ 18.0 մլն. դրամով: Մեկ երեխայի հաշվով ամսական նպաստի միջին չափը կազմել է 11667 դրամ՝ նախորդ տարվա հունվարի 1-ի 11503 դրամի դիմաց: 2015 թ. նպաստառու ընտանիքների քանակը կազմել է 22190՝ 1 ընտանիքի ամսական նպաստի միջին չափը 10012 դրամ, 2014 թ. նպաստառու ընտանիքների քանակը կազմել է 22007՝ 1 ընտանիքի ամսական նպաստի միջին չափը 9718 դրամ: ԼՂՀ <<Պետական նպաստներ>> ծախսերի աճը 2009 թ-ի համեմատությամբ կազմել է 18%:

2015 թվականի հունվարի 1-ից բարձրացվել են Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ մարտական գործողություններին մասնակցելու հետևանքով, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված զինծառայողների, առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին տրվող պետական նպաստների չափերը՝ սահմանելով այն 42000 դրամ, նախկինում գործող համապատասխանաբար 21000 և 30000 դրամի փոխարեն: 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ նշված կատեգորիաներին պատկանող նպաստառուների թվաքանակը կազմում է համապատասխանաբար 92 և 35 հոգի:

2015 թվականին կրթության ոլորտին հատկացված ֆինանսական միջոցները կազմել են 13,540.1մլն ՀՀ դրամ, աճը նախորդ տարվա համեմատությամբ կազմել է 1,597.5 մլն ՀՀ դրամ: 2015 թվականին 2009 թվականի համեմատությամբ կրթական ոլորտի ծախսերը աճել են 31%-ով:

2015 թ. աշխատանքային ռեսուրսները կազմել է 99215 մարդ, որից տնտեսապես ակտիվ բնակչության մակարդակը կազմել է 61121մարդ, զբաղվածները՝ 54079մարդ, գործազուրկները՝ 7042 մարդ, տնտեսապես ոչ ակտիվ բնակչությունը՝ 38094 մարդ: Տնտեսական ակտիվության մակարդակը կազմել է 61,6 % (2014 թ-ի համեմատությամբ աճել է 1,9%-ով), զբաղվածության մակարդակը՝ 54,5 % (2014 թ-ի համեմատությամբ աճել է 2,8%-ով), գործազրկության մակարդակը՝ 11,5 % (2014 թ-ի համեմատությամբ նվազել է 1,8 %-ով):

ԼՂՀ-ում սոցիալական աջակցության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով:

Ամուսնություններ խրախուսելու և նորաստեղծ ընտանիքներին պետական աջակցություն ցուցաբերելու նպատակով՝ ԼՂՀ կառավարությունը ամուսնության գրանցման դեպքում նորաստեղծ ընտանիքին պետական բյուջեի միջոցների հաշվին հատկացնում է ամուսնության միանվագ նպաստ՝ 300.0 հազար դրամի չափով:[1]

Երեխայի ծննդյան դեպքում ծնողին տրվում է ծննդյան միանվագ նպաստ, որը հաշվարկվում է ծննդյան նպաստի բազային չափի և ծնված երեխայի հաջորդականությամբ պայմանավորված՝ գործակից արտադրյալով: Ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան դեպքում երեխայի անվամբ բանկային կամ ֆինանսական այլ հաստատությունում բացվում է ժամկետային ավանդ, 6 և ավելի անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքին հատկացվում է բնակելի տուն:[2]

Պետական նպաստների համակարգման, հանրապետությունում ծնելիության և բազմազավակության խթանման նպատակով՝ ԼՂՀ կառավարությունը սահմանում է առանձին խմբերի քաղաքացիներին տրվող պետական նպաստներ, որոնց բազային չափի բազմապատիկ գործակիցներն են: [3]

Միջոցներ է ձեռնարկում նաև ԼՂՀ պաշտպանության ժամանակ զոհված զինծառայողների ընտանիքների կենսամակարդակի բարձրացման հարցերով: 2004 թ. ընդունված՝ «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» և «Զինծառայողների ու նրանց ընտանիքների անդամների

[1] ԼՂՀ Կառավարության N724 որոշում «Նորաստեղծ ընտանիքների համար ամուսնության նպաստ սահմանելու մասին», 25.12.2007թ.

[2] http://mss.nkr.am/home/

[3] ԼՂՀ Կառավարության N 15-Ն որոշում «Պետական նպաստների, ծնելիության և բազմազավակության խթանման միջոցառումների մասին», 20.01.2009թ.

սոցիալական ապահովության մասին» ԼՂՀ օրենքով դրամական փոխհատուցում սահմանվեց նրանց համար:

Այնուամենայնիվ, սոցիալական պաշտպանության ծրագրերի անհրաժեշտությունը զգալիորեն գերազանցում է այն ֆինանսական հնարավորությունները, որ առկա են այդ ծրագրերի ֆինանսավորման համար: Այդ պայմաններում, արդյունավետ միջոց է՝ ծրագրերի և ռեսուրսների մեծ մասը բնակչության ամենակարիքավորներին: Այս բնագավառում խիստ կարևոր է 2016թ.-ից ԼՂՀ-ում գործող ընտանիքների կարիքավորության գնահատման «Արցախ» համակարգը, որի հիմնական նպատակներն են ընտանիքի դիտարկումը որպես սոցիալական պաշտպանության օբյեկտ:[1]

Չնայած բազում դժվարություններին, ԼՂՀ իշխանությունները բազում ծրագրեր են ձեռնարկում հանրապետության բնակչության սոցիալական հարցերը լուծելու ուղղությամբ: Չնայած բազում դժվարություններին, ԼՂՀ իշխանությունները բազում ծրագրեր են ձեռնարկում հանրապետության բնակչության սոցիալական հարցերը լուծելու ուղղությամբ:

Այսպիսով՝

- բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի ստեղծման ու սոցիալական աջակցության տրամադրման խնդիրն իրականացնում է պետությունը,
- պետությունը սոցիալական համակարգի պետական կարգավորման առումով լայն հնարավորություններ ունի, ինչը նախ և առաջ սկսում է օրենսդրության կատարելագործումից,
- սոցիալական պետությունը կարևորում է մարդու անձնական պատասխանատվությունը սեփական նյութական բարեկեցության համար այն պայմանով, որ նա իր աշխատանքով կամ այլ օրինական միջոցով ընդունակ է ապահովել իր և իր ընտանիքի համար նյութական կարիքները,
- աղքատության հաղթահարման հիմնախնդրի լուծումը անհրաժեշտ է կապել աշխատատեղերի ստեղծման հետ, քանի որ բնակչության սոցիալական բևեռացման կանխման ու հաղթահարման հիմնական նախապայմաններից մեկը գործնական զբաղվածությունն է,
- տնտեսական աճը պետք է ապահովվի մրցունակ աշխատատեղերի հաշվին, նպաստի արտագաղթի թուլացմանը,
- պետության կողմից սահմանած նվազագույն սոցիալական երաշխիքները խիստ անբավարար են հանրապետության բնակչության նվազագույն՝ կենսական անհրաժեշտ պահանջմունքները բավարարելու համար,
- սոցիալական ապահովագրության ոլորտում հիմնական գերակայությունը պետք է հանդիսանա միջին կենսաթոշակի համապատասխանեցումը նվազագույն սպառողական զամբյուղին,
- պետք է ձեռնարկվեն համապատասխան միջոցառումներ, որոնց միջոցով ազգային եկամտի, հետևաբար նաև բնակչության մեկ շնչի հաշվով եկամուտների միջին մակարդակը կբարձրանա,
- հիմնականում ուշադրություն է դարձվում բնակչության դրամական եկամուտների առանձին տարրերի՝ աշխատավարձ, նպաստներ, թոշակներ և այլն: Մինչդեռ անհրաժեշտ է ուշադրության կենտրոնում պահել և միաժամանակ վերացնել կարիքը, հիվանդությունները, աղքատությունը: Դրա համար պետք է ստեղծվեն այնպիսի պայմաններ, երբ քիչ կլինի նման օգնությամբ ապրող կարիքավորների թիվը,
- հասարակության սոցիալ-տնտեսական զարգացմանը զուգընթաց ընդլայնվում են սոցիալական քաղաքականության գործառույթները, այն ձեռք է բերում նոր նշանակություն: Կարևորվում է այլ երկրների սոցիալական պաշտպանության համակարգի ուսումնասիրությունը և ԼՂՀ-ի տնտեսությանը համահունչ տարբերակների արդյունավետ ներդրումը,
- ցանկացած հասարակարգում մեծ կարևորություն է ձեռք բերում նաև սոցիալական արդարության ապահովումը, որի վերջնական նպատակը հասարակության պահանջմունքների բավարարումն ու մարդկանց սոցիալական կենսամակարդակի ապահովման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումն է:

Օգտագործված գրականություն

1.ԼՂՀ Կառավարության N724 որոշում «Նորաստեղծ ընտանիքների համար ամուսնության նպաստ սահմանելու մասին», 25.12.2007թ.

2.ԼՂՀ Կառավարության N 15-Ն որոշում «Պետական նպաստների, ծնելիության և բազմազավակության խթանման միջոցառումների մասին», 20.01.2009թ

3.ԼՂՀ Կառավարության N712-Ն որոշում «Ընտանիքների կարիքավորության գնահատման «Արցախ» համակարգը ներդնելու մասին», 2.11.2015թ.

4.http://minfin-nkr.am/

5.http://www.gov.nkr.am

6.http://stat-nkr.am/ ԱՀ վիճակագրական տարեգիրք 2009-2015 թթ.

7.http://mss.nkr.am/home/

8.www.fineco.am

[1] «Ընտանիքների կարիքավորության գնահատման «Արցախ» համակարգը ներդնելու մասին» ԼՂՀ Կառավարության N712-Ն որոշում, 2.11.2015թ.

УДК 338.48(479.243)

Экономика

Жасмина Айрапетян
Российско-Армянский (Славянский) университет, 4-ый курс
jas.ayrapetyan@mail.ru

ТУРИСТСКО-РЕКРЕАЦИОННЫЕ РЕСУРСЫ АРЦАХА

Данная статья написана с целью описания картины древнего и современного Арцаха, а также создания картины его будущего. Представляется историческая справка об Арцахе, описание духовенства Арцаха, подчеркивается особое место города Шуши в духовной жизни Арцаха. Также представляется культурное и духовное наследие Арцаха, дошедшего до нас испокон веков и перечень памятников армянской, русской и исламской культур, где до сегодняшнего дня проводятся восстановительные работы.

Ключевые слова: Арцах, НКР, туризм, культура, ресурсы.

Jasmina Hayrapetyan
Russian-Armenian (Slavonic) University, 4th year
jas.ayrapetyan@mail.ru

TOURIST AND RECREATIONAL RESOURCES OF ARTSAKH

The purpose of the article is to describe ancient and modern Artsakh, as well as to create a picture of its future. The article presents historical information about Artsakh, the description of the clergy of Artsakh, the special place of the city of Shushi in spiritual life of Artsakh is underlined. Cultural and spiritual heritage of Artsakh, which dates back to the centuries, and the list of monuments of Armenian, Russian and Islamic cultures and restoration works carried out to this day are covered in the article.

Keywords: Artsakh, NKR, tourism, culture, resources.

Ժասմինա Հայրապետյան
Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան, 4-րդ կուրս
jas.ayrapetyan@mail.ru

ԱՐՑԱԽԻ ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ԵՎ ՌԵԿՐԵԱՑԻՈՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Սույն հոդվածում պատկերված է հնագույն և ժամանակակից Արցախը, ինչպես նաև ապագայի նկարը: Ներկայացվում է տեղեկատվություն պատմական Արցախի մասին, նկարագրվում է Արցախի հոգևորականությունը, ընդգծվում է Շուշի քաղաքի առանձնահատուկ դերը Արցախի հոգևոր կյանքում: Հոդվածում ներկայացվում է նաև Արցախի մշակութային և հոգևոր ժառանգությունը, որը գալիս է դարերից, հայկական, ռուսական և իսլամական մշակույթների հուշարձանների ցանկը, որտեղ մինչև օրս իրականացվում են վերակառուցման աշխատանքներ:

Բանալի բառեր՝ Արցախ, ԼՂՀ, զբոսաշրջություն, մշակույթ, ռեսուրսներ:

Развитие туризма в Арцахе – это одна из основных задач НКР и РА. Необходимо периодически представлять туристические ресурсы Арцаха и Армении на международном рынке многообразными способами. Можно их продемонстрировать, например в виде рекламно-информационных материалов или же та показов на авторитетных телеканалах, организации новых маршрутов и их распространение на популярных сайтах мира.

В послевоенный период туризм является одним из приоритетных направлений в экономике Арцаха. Развитие сферы связано с рядом труднопреодолимых проблем: нерешенность Карабахского конфликта, пропаганда Азербайджанской Республики, разрушенная инфраструктура. Связанные с этим экономические проблемы препятствуют развитию туризма в Республике. Но география Арцаха, тысячи исторических, культурных и природных достопримечательностей, а также восстановление инфраструктуры, привлечение

инвестиций, участие в экономических и туристических выставках и форумах способствуют развитию отрасли.

Несмотря на то, что древние арцахцы постоянно жили в военной обстановке, они все же оставили изумительное культурное наследие. Нагорно-Карабахская автономная область (НКАО), которая имела площадь 4.5 тысячи кв.км, что больше чем треть территории Арцаха в целом, имела 1700 исторических и архитектурных памятников, из которых множество крепостей, монастырских комплексов, церквей и часовен, мостов, дворцовых сооружений, огромное количество хачкаров, более 1000 единиц настенных и надгробных надписей на древнем армянском языке. Большая часть памятников, которые сохранились на территории Карабаха, - это христианские культовые сооружения, относящиеся к IV веку, то есть времени, когда Армения приняла христианство в качестве своей государственной религии. В числе этих памятников имеются 60 монастырских комплексов и более 500 церквей.

А что касается памятников, построенных до принятия христианства, то на территории Арцаха уцелели первобытные стоянки, руины древних армянских местностей, также те, которые относятся к периоду Араратского царства (Урарту) и последующего армянского царства Ервандидов, гробницы, культовые статуэтки раннеармянской эпохи, межевые камни времен армянской династии Арташесидов, кроме того капители, многообразная домашняя утварь и монеты. Таким образом, на территории нынешней местности Истису (Кельбаджар) долгие годы находилась летняя резиденция араратского царя Руса I (I тыс. до Р.Х.). Но самое большое и известное поселение, находящееся на территории Карабаха с давних времен, еще до принятия армянами христианства, это город Тигранакерт, который построил в 90-е годы до Р.Х. великий армянский царь Тигран Великий. Руины этого древнего города были найдены на современной территории Агдамского района рядом с границей НКР[1].

В эпоху арабского господства армянские цари Арцаха продолжали свою активную творческую деятельность. Под строгим контролем создаются и совершенствуются такие культурные гиганты, как Амарас, Цицернаванк (Кашатагский район НКР), Гтич (Гадрутский район НКР), монастыри Урек и Гандзасар (Мардакертский район НКР), монастыри Дади и Хада в Вайкунике и остальные. Самыми знаменитыми крепостями Карабаха тогда были Шикакар, Хаченаберд, Тигранаберд, Циранакар, Акнаберд, Левонаберд, Джраберд, крепости Гюлистана, Фарисоса, Дизапайт и множество других.

Арцах – это музей под открытым небом. Здесь есть изобилие таких старинных памятников, возраст которых достигает 11 или 12 веков, а некоторых – тысячелетия. Среди них особое место занимают такие сокровища средневековья, как Гандзасар, Дадиванк, Амарас и Гтчаванк. Их непревзойденная красота радует глаз, особенно вызывают восхищение резьбы на камнях. Гениальные мастера, которые построили эти драгоценности, сами не догадывались, какие чудеса они подарили своим потомкам.

Одним из основных и наиболее знаменитых историко-архитектурных памятников Карабаха является Гандзасар, представляющий большой интерес для всех туристов, посещающих Арцаха. Каждый год в монастырь приезжают все больше и больше туристов, причем, если сначала приезжали только армяне со всего мира, то на сегодняшний день увеличивается количество иностранных туристов. Существуют такие памятники, которые храня в себе все бесценное народа на протяжении многочисленных столетий, становятся для своих последующих поколений в символы, которые показывают мудрость своего народа и обширность его мышления. Для Арцаха памятник, который превратился в символ, - это Гандзасар - сокровище, которое гордо стоит на высочайшем холме левого берега реки Хачен. В сооружениях и мемориальных стелах монастыря высечено приблизительно 200 надписей, которые являются неповторимыми источниками для изучения средневековой истории не только этой местности, но и всей Армении. Большинство этих надписей, которые были созданы мастерами, является истинными произведениями средневекового искусства письма. Многие другие памятники, находящиеся вблизи монастыря Гандзасар, как упорные стражи окружили и хранят это изумительное создание армянской архитектуры, гордость арцахцев, «жемчужину» страны Арцах!

Кроме Гандзасараского монастыря туристов интересуют и другие паломнические места, такие как Амарас и Дадиванк. Среди всех памятников НКР, Амарасский монастырь является уникальным, потому что именно здесь началось распространение христианства в Карабахе и Утике. А в дальнейшие века монастырь стал одним из знаменитых очагов духовной и культурной жизни местности. Рядом с Амарасом есть древнее кладбище села Мачкалашен, где был обнаружен хачкар. Он был редкостным образцом средневековой резьбы по камню, который был возвышен в 1091 году. Кроме того, известно имя мастера: надпись гласит, что Казар воздвиг этот крест летом, и он просит поминать его в молитвах к Иисусу Хрисосу.

Там где Карабахские и Мровские хребты присоединяются друг с другом, создалась маленькая горная долина. Здесь на холме застроен один из величавых памятников армянской архитектуры – монастырь Дади, или Хута. (Дадиванк, Хутаванк.).[2] Монастырь неоднократно опустошался и был ограблен персами, арабами, сельджуками, османскими турками, а затем вновь персами. Монастырский комплекс Дадиванк – это один из уникальных и грациозных архитектурных памятников, который всплотил в себе наилучшие традиции

[1] Ballayan V.. Artsakh History from Time Immemorial up to our days, Yer., 2005, C.83
[2] Оганесян Р.. Епархия Арцаха. Ереван, 2009, стр.39

многовекового армянского зодчества. Природа этого края на редкость прекрасна. Поэтому органическое слияние архитектуры комплекса с ландшафтом являлось одной из главный проблем, стоящих перед создателями монастыря. Сооружения, а их более десятка, находятся на склоне холма. Полностью слившись с природой, они стали её составной частью. Монастырь Дадиванк зрительно удивительно впечатляющ. Здесь уместно вспомнить слова сюникской княгини Софии о том, что Вайоц дзор был перстнем без камня (ока) и она вставила этот камень (имеется в виду Гндеванк) в оправу. Эти слова вполне можно отнести и к монастырю Дади.

Значение слова Дади связано с легендой, которая гласит, что один из учеников апостола Тадея – Дади или Дадо, умер мученической смертью в Арцахе за распространение христианства. Говорят, что Дадо был одним из 70-и, который пошел на север Великой Армении по указанию святого Тадея. Он был убит от руки Абгара, после чего его привезли в Малый Сюник, где и похоронили. А на месте, где Дади был похоронен, был построен монастырь, названный в его честь.

Азохская (Ворванская) пещера. Арцах славится также и своими природными памятниками, среди которых пещера, расположенная около села Азох является одной из древнейших и известнейших стоянок первобытного человека в мире. Это жилище древнего человека имеет многочисленные входы и выходы, шесть больших помещений, подобных лабиринту, самое крупное из которых занимает площадь в три тысячи кв. м. Здесь впервые, в так называемом ашельском слое археологической культуры, были обнаружены каменные орудия труда и охоты первобытного человека, который жил здесь более трехсот тысяч лет назад, рисунки на стенах, свидетельствующие о его первых попытках познать мир с помощью искусства, ископаемые останки животного и растительного мира того времени. Около южного входа в пещеру на глубине семи метров археологи обнаружили крупный обломок нижней челюсти неандертальца. До этого останки неандертальца были выявлены лишь в четырех регионах: в Сиди Абд Ерагмане (Марокко), в Штейнгейме (Германия), Спанокомбе (Англия) и Седиадел Диаболоне (Италия). Обнаруженная в Азохской пещере челюсть неандертальца в научной литературе получила пятый номер. Азохское открытие окончательно подтверждает позиции тех ученых, которые считают, что Армения и Кавказ являются одним из мест зарождения и раннего обитания древнейшего человека. В конце 19 века в пещере была найдена также статуя женщины в национальной одежде, грубо высеченная из камня. Большой научный интерес представляют и колония летучих мышей (около 200 000 особей), проживающих в лабиринтах Азохской пещеры, причем некоторые из них не встречаются нигде, кроме Азохской пещеры. “Пещера сокровищ” еще не раскрыла все тайны. Это крупное поселение первобытного человека с 2003 года по сей день систематически исследуется армяно-англо-испанской археологической экспедицией.

Двухтысячелетний платан в селе Схторашен. В тридцати семи километрах к северу от Степанакерта, недалеко от автострады Север-Юг, у деревни Схторашен возвышается огромная чинара, которой был присвоен паспорт, как самому старому и высокому дереву на территории бывшего СССР. Дупло дерева имеет площадь 44 кв.м. На такой площади свободно могут стоять более 100 человек. Диаметр ствола - 27 метров, высота дерева составляет 54 метра. Площадь, на которую дерево отбрасывает тень равна 1400 кв.м[1.] Схторашенская чинара превосходит своими размерами известные деревья на острове Кос в Эгейском море и деревья в ущелье Пирузе у Ашхабада. Согласно преданиям, под этим деревом отдыхали создатель армянского алфавита М. Маштоц (V в н. э.), легендарный певец-ашуг Саят-Нова (XVIII в). В окрестностях платана сохранилось множество исторических памятников. Наиболее примечательна из них раннесредневековая базилика и остатки древнего кладбища с множеством великолепных хачкаров (крест-камней). С 2008 года в окрестностях платана ведутся работы по благоустройству территории.

Качахакаберд. По дороге в Гандзасар, с юго-западного склона горы Геворгасар, открывается прекрасная панорама. Вдали, напротив монастыря Сурб Акоба, на вершине горного хребта, покрытого густым лесом, расположена крепость Качахакаберд (сорочья крепость), лишь птицам доступна её вершина. В источниках это древнейшее укрепление упоминается и под названием Хаченская крепость. По сообщению Мовсеса Каланкатуаци, в 9 веке одна из княгинь края, по имени Спрам, потеряв мужа, “обрела мужскую храбрость и, взяв с собой оставшуюся в живых дочь свою, преодолела трудный ночной путь и укрылась в крепости Хачена”[2].

Ущелье Унот (Джрдзюз). Ущелье Унот – одно из самых красивых мест в Карабахе. Скалистое ущелье протяженностью более трех километров и глубиной 200-220 метров покрыто густыми лесами и представляет собой уникальный природный и историко-архитектурный комплекс. В глубине ущелья находится уникальный природный памятник – грот, войти в который можно только пройдя через завесу водопада. Здесь сохранились руины средневекового села Унот, многочисленные водяные мельницы, 3 каменных моста, а также церковь и крепостные сооружения, которые сыграли важную роль в обороне г. Шуши. Жители окрестных сел все еще пользуются арочным мостом, построенным в 1720 г. На западном склоне видны остатки оборонительных сооружений и древние пещеры, служившие жилищем для людей еще в

[1] Мкртчян Ш., Историко-архитектурные памятники Нагорного Карабаха, стр.139
[2] Мкртчян Ш., Историко-архитектурные памятники Нагорного Карабаха, стр.25

доисторические времена. Спуститься в ущелье можно по крутым каменным уступам с расположенного в восточной части города плато Джрдюз(Ипподром), откуда открывается прекрасная панорама окресностей Шуши.

Целебный источник у села Айгестан. Родник, расположенный в окрестностях деревни Айгестан в десяти километрах по трассе Степанакерт - Гандзасар, известен своей целебной водой, которая лечит кожные заболевания. Тысячи людей избавились от своего недуга лишь совершив омовение и промыв пораженные части тела водой родника.

Горячий источник недалеко от Цицернаванка. В 12-и километрах от Цицернаванка находится знаменитый в этих краях термальный источник. Из него поступает горячая вода в находящиеся неподалеку три бассейна. Один из бассейнов глубокий, два остальных - мелкие, в которых можно организовать отдых детей. Термальный источник славится своими целебными свойствами.

В последнее время увеличивается число туристов, посещающих город Шуши, прежняя столица Карабаха. Шуши - второй по величине город Нагорного Карабаха, расположен в десяти километрах от столицы НКР города Степанакерта. Первое упоминание о Шуши относится к началу XVIII века. Город-крепость Шуши сохранил свое стратегическое значение и в начале XIX века, когда Закавказье перешло во власть Российской империи. С 1857 года, получив статус города, город Шуши усиленно рос и к 60-м годам XIX века превратился в один из духовных центров Кавказа. Здесь формировалась общественно-политическая мысль и научно-культурная элита армян Закавказья. [1]

Во время карабахской войны в Соборе Христа Спасителя «Казанчецоц» азербайджанцы хранили свои оружия и постоянно обстреливали мирных жителей Степанакерта. Именно поэтому освобождение города стало переломным моментом, в результате чего удалось освободить Собор «Казанчецоц» и прекратить каждодневные обстрелы мирного населения Степанакерта. Сразу после освобождения Шуши на соборе Христа Спасителя снова был воздвигнут крест. На сегодняшний день храм действует в рамках Армянской Апостольской Церкви и является местом паломничества многочисленных верующих.

Арцах является страной, где почти все население исповедует христианство. Нельзя не заметить, что это закавказское государство со своими древними традициями и обычаями, которые арцахцы крепко хранят, передавая из поколения в поколение. В основном арцахцам свойственна любезность и гостеприимность, тактичность и приветливость. Но, в то же время, они очень эмоциональны, как и другие представители кавказских народов, так что не стоит удивляться сильной жестикуляции и громкости беседы. Про гостеприимство арцахцев знают все. По любому случаю веселья и праздника обязательно нужно накрывать стол там, где у тебя есть родные люди: в доме, на работе и т.д. Обязательно надо выпить и покушать, в противном случает будет считаться, что ты не рад за них и не желаешь им счастья. Чем чаще ты накрываешь стол, не зависимо от того, какой повод, тем больше, по народному преданию, тебе вернется. В это искренне верят арцахцы.

Правительство Арцаха всеми возможными способами пытается обеспечить развитие туризма. Молодая индустрия туризма активно разрабатывает интересные программы, которые обеспечивают посещение иностранных туристов. Особое внимание уделено на включение монастыря Гандзасар в список объектов Всемирного Наследия ЮНЕСКО.

Кроме программ, разрабатываются и специализированные проекты, которые привлекают капиталовложения в туристическую сферу со стороны местных и иностранных инвесторов. В числе таких проектов включено строительство новых дорог, гостиниц, ресторанов и других объектов туристической инфраструктуры. А также особое внимание уделяется развитию малого бизнеса удаленных сельских местностях, где и находится значительная часть историко-архитектурных памятников Арцаха.

Но стоит помнить, что только маркетинг и реклама на международном рынке полностью не решают проблему, поскольку почти все знаменитые и привлекающие туристов памятники располагаются в труднодоступных местах, и дороги туда занимают почти весь день. Кроме того, очень плохие условия, касательно туалетов, мест питаний вблизи памятных местностей – всё это отрицательно сказывается на привыкших к комфорту иностранных туристах. Для решения этой проблемы, нужно восстановить и улучшить инфраструктуру, снабжать все населённые пункты и зоны туристических объектов биотуалетами, маленькими закусочными и приютами, где туристы могли бы переночевать. Очень важно использовать уникальную природу для создания экстремального и спортивного видов туризма. «»

СПИСОК ЛИТЕРТУРЫ:

1. Ballayan V.. Artskh History from Time Immemorial up to our day. Yerevan, 2005
2. Оганесян Р.. Епархия Арцаха. Ереван, 2009
3. Мкртчян Ш., Историко-архитектурные памятники Нагорного Карабаха, Ереван, 1988
4. Шагинян М.. Нагорный Карабах. М.-Л., 1927

[1] Шагинян М.. Нагорный Карабах. М.-Л., 1927, стр. 87

ՀՏԴ 314 .1(479.25) *Տնտեսագիտություն*

Մինասյան Սուրեն
Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան, 3-րդ կուրս
minasiansouren@gmail.com

ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԴԵՏԵՐՄԻՆԱՆՏՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Միգրացիան, հատկապես արտագաղթը եղել է և ամենայն հավանականությամբ մոտակա տարիներին կմնա ՀՀ իրողության ամենացավոտ անկյուններից մեկը: Դրա հետևանքները և՛ դրական, և՛ բացասական կողմերով տեսանելի են ՀՀ տնտեսության բոլոր հատվածներում: Այս խնդիրը, որը կանգնած է աշխարհի գրեթե բոլոր երկրների առջև, այսօր ավելի վտանգավոր է մեզ համար, ուստի համապատասխան քաղաքականության մշակումը օրակարգային է մեզ համար, որը նախևառաջ պետք է ուղղված լինի արտագաղթի մասշտաբները կրճատելուն:

Բանալի բառեր՝ միգրացիա, արտագաղթ, ներգաղթ, տրանսֆերտ, սփյուռք, միգրացիոն քաղաքականություն

Сурен Минасян
АЭГУ, 3-ий курс
minasiansouren@gmail.com

ДЕТЕРМИНАНТЫ МИГРАЦИИ В АРМЕНИИ

Миграция, особенно эмиграция была и, вероятно, останется одним из самых болезненных частей действительности Армении в ближайшие годы. Ее последствия, как положительными , так и отрицательными сторонами открыты для всех отраслей экономики Армении.Проблема, которая стоит почти перед во всех странах мира сегодня является более опасным для нас, поэтому это актуально для нас, чтобы разработать соответствующую политику, которая в первую очередь должна быть направлена на сокращение масштабов эмиграции.

Ключевые слова: миграция, эмиграция, иммиграция, переводы, политика миграции, диаспора

Souren Minasian
ASUE, 3rd year
minasiansouren@gmail.com

DETERMINANTS OF MIGRATION IN RA

Migration, especially emigration has been and is likely to remain one of the most painful parts of Armenian reality in coming years. Its consequences with both positive and negative aspects are visible to all sectors of the economy. The problem that stands in front of almost all countries of the world today is more dangerous for us, so it is urgent for us to develop appropriate policies, which should first be directed to reduce the scale of emigration.

Keywords: migration, emigration, immigration,transfers, diaspora, policy of migration

Միջազգային միգրացիան բազմաթիվ խնդիրներ է առաջացնում ինչպես միգրանտների, այնպես էլ ելքի և ժամանման երկրների քաղաքացիների համար: Արտերկրից փոխանցված գումարները ուղղակիորեն ազդում են ելքի երկրի տնտեսության վրա: Թե՛ ելքի, թե՛ ժամանման երկրներում փոփոխվում է աշխատանքային շուկան և հասարակական կառուցվածքը:

Բնակչության միգրացիայի զանգվածային բնույթը թույլ է տալիս միջազգային տնտեսական հարաբերություններում այն գնահատել որպես ժողովրդավարական և տնտեսական կայուն երևույթ, որը տարբեր գործոնների ազդեցությամբ փոխում է ինչպես աշխարհագրական ուղղությունները, այնպես էլ տեղաշարժի նպատակները: Ընդհանուր առմամբ, բնակչության միգրացիայի վրա ազդում է գործոնների համալիր, որոնք փոխկապված են և պատմական այս կամ այն ժամանակահատվածում էական դեր են խաղում միգրանտների տեղաշարժի նպատակների ձևավորման գործում:

Բնակչության միգրացիան ավելի զանգվածային բնույթ է ստանում քաղաքական (պատե-րազմ) և տնտեսական (ճգնաժամ, տնտեսության արմատական ռեֆորմ) գործոնների ազդեցու-թյամբ: Օրինակ՝ 1990-ական թվականներին նախկին սոցիալիստական համակարգի երկրներում քաղաքական

անկախությանը հաջորդող ազգամիջյան բախումները, տնտեսական ռեֆորմների անհաջող ընթացքը հանգեցրին բնակչության միգրացիոն հոսքերի ակտիվացմանն այն չափով, որ դարավերջին միգրանտների թիվն ավելացավ 21 միլիոնով, կամ որ նույնն է՝ 14%-ով:

Այստեղից կարելի է ենթադրել, որ մնացած գործոնները բնակչության միգրացիայի հոսքերի ակտիվացման վրա էական դերակատարում չունեն, այլ այդ երևույթին հաղորդում են անընդհատություն: Կրոնական և էթնիկական անհանդուրժողականության հիմքի վրա բնակչության միգրացիոն հոսքերի ակտիվացումը ևս չի բացառվում, սակայն դա զանգվածային բնույթ չի կարող ստանալ, քանի որ երկրները կրոնական և էթնիկական առումով ավելի միատարր են: Այլ խոսքով՝ ազգային և կրոնական փոքրամասնությունները որևէ երկրում այնպիսի կշիռ չունեն, որ նրանց նկատմամբ անհանդուրժողականությունը տեղիք տա զանգվա-ծային միգրացիայի: Նշենք նաև, որ քաղաքական իրավիճակի վատթարացման դեպքում միգրանտների սոցիալական կազմը կարելի է բնութագրել որպես խառը միգրացիա, իսկ տնտեսական միգրացիան սոցիալական առումով՝ ավելի միատարր:

Հայաստանի համար միգրացիան կարևոր և խնդրահարույց երևույթ է: Այս թեմայով քննարկումների մեծ մասը վերաբերում է Խորհրդային Միության փլուզումից հետո հարյուր հազարավոր հայերի արտագաղթին, երբ նրանք ստիպված էին հեռանալ սեփական երկրից՝ իրենց ընտանիքների համար ապրուստ հայթայթելու նպատակով: Երկրից հեռանալու պատճառները, ինչպես նաև սեփական հայրենիքից հեռու ապրելու իրականությունը հաճախ իսկապես ցավալի են: Միաժամանակ, աշխատանքային միգրացիան օգնել է հաղթահարել Հայաստանի ճգնաժամային տնտեսական անկումը՝ ապահովելով հազարավոր ընտանիքների ապրուստի միջոցը:

Չնայած վերջին տարիներին Հայաստանում գրանցվել է տնտեսական աճ, այնուհանդերձ համարվում է, որ երկրի ՀՆԱ-ի մի նշանակալից մաս կապված է արտասահմանից ուղարկված տրանսֆերտների հետ: Մինչ երկիրը կազդուրվում է, անհրաժեշտություն է ծագել՝ մշակելու աշխատանքային շարժ ապահովող առողջ քաղաքականություն՝ միաժամանակ խթանելով ներքին աշխատատեղեր ստեղծելու գործընթացը, որպեսզի վերադառնալու որոշում կայացրածները ունենան այդ հնարավորությունը: Մյուս կողմից, արտերկրում աշխատելու որոշում կայացրածների համար անհրաժեշտ է մշակել այնպիսի քաղաքականություն, որը կերաշխավորի աշխատանքային և կենսական արժանապատիվ պայմաններ, ինչպես նաև կպաշտպանի մարդու հիմնարար և աշխատանքային իրավունքները:

Այս խնդիրները լուծելու համար պահանջվում է ներկայիս իրականության և միտումների մանրակրկիտ վերլուծություն և աշխատանքային միգրացիայի ու դրա զանազան դրսևորումների հանգամանալից պատկերացում:

Հայաստանի Հանրապետության բնակչության զանգվածային միգրացիան սկիզբ է առել անկախությունից ի վեր: Արտագաղթն իր ավելի փոքր ծավալներով շարունակվում է նաև այսօր: Ըստ տարբեր հետազոտությունների՝ անցած տարիների ընթացքում Հայաստանի Հանրա-պետությունից էմիգրացված բնակչության թիվը հասնում է մինչև 1 միլիոն (տե՛ս աղյուսակ 1):

Եթե 80-ականների վերջերին և 90-ականների սկզբներին հանրապետությունից բնակչության արտահոսքի պատճառները բազմազան ու տարաբնույթ էին, ապա հետագայում էմիգրացիոն հոսքերը կրեցին ընդգծված պատճառականություն: Այդ շրջանում իրականացված ուսումնասիրություններն ու հարցումները ցույց են տալիս, որ միգրացիոն գործընթացներում գերակա դիրք է գրավում տնտեսական դրդապատճառներով բնակչության արտահոսքը: Որպես էմիգրացիայի հիմնական դրդապատճառ՝ համարվում են աշխատանքի հետ առնչություն ունեցող հանգամանքները՝ աշխատատեղերի (այդ թվում՝ մասնագիտական) բացակայությունը կամ սղությունը, աշխատանքի վարձատրության ցածր մակարդակը և ինքնուրույն տնտեսական գործունեությամբ զբաղվելու բարդությունները: Այսպիսով, կարելի է արձանագրել, որ աշխատանքային էմիգրացիան շարունակում է էական դեր ունենալ միգրացիոն հոսքերի խճապատկերում:

Տարիներ շարունակ նույնն է մնում աշխատանքային միգրանտների տարիքը, կրթությունը, կարգավիճակը: Նրանք հիմնականում միջնակարգ կամ միջին մասնագիտական կրթություն ունեցող մարդիկ են, ընդ որում՝ կեսից ավելին տղամարդիկ են՝ ամուսնացած և երեխաներ ունեցող: Հիմնական երկիրը, ուր մեկնում են Հայաստանից, Ռուսաստանն է, մեծ մասն աշխատում է շինարարության ոլորտում:

Անկախությունից ի վեր Հայաստանից իրականացվող ժամանակավոր և մշտական միգրացիայի հիմնախնդիրները պետական մակարդակով կարգավորված չեն: Նման արտագաղթը բազմաթիվ խնդիրներ և հարցեր է դնում ինչպես պետության, այնպես էլ հասարակության առջև և պահանջում, որ անհապաղ ձեռնարկվեն գործուն քայլեր ստեղծված իրավիճակը բարելավելու, արտագաղթի

սոցիալական, տնտեսական և իրավական պատճառների վերացման և դրա թողած հետևանքների վրա դրական ներգործություն ունենալու ուղղությամբ:

Աղյուսակ 1 ՀՀ միգրացիոն ցուցանիշները 1992-2015թթ[1]

Տարիներ	Միգրացիայի տարեկան սալդոն, մարդ	Միգրացիայի ընդհանուր սալդոն, մարդ	Տարիներ	Միգրացիայի տարեկան սալդոն, մարդ	Միգրացիայի ընդհանուր սալդոն, մարդ
1992	-228600	-228600	2004	2100	-747100
1993	-141100	-369700	2005	12500	-734600
1994	-127800	-497500	2006	21700	-712900
1995	-37500	-535000	2007	-3200	-716100
1996	-20500	-555500	2008	-23059	-739159
1997	-31300	-586800	2009	-24978	-764137
1998	-24400	-611200	2010	-46486	-810623
1999	-7200	-618400	2011	-43820	-854443
2000	-57500	-675900	2012	-42784	-897227
2001	-60400	-736300	2013	-31188	-928415
2002	-2700	-739000	2014	-41235	-969650
2003	-10200	-749200	2015	-43438	-1013088

Ինչպես տեսնում ենք, վերոնշյալ ժամանակահատվածում ՀՀ ժամանածների թիվը գերազանցում է արտագաղթի թվաքանակին միայն երեք տարի (2004, 2005, 2006):

Հայաստանի անկախացման առաջին տասնամյակի ընթացքում «միգրացիոն շուկայում» Հայաստանը ինչպես ընդունող, այնպես էլ արտահանող երկիր էր: Հայաստանի «ընդունածը» գլխավորապես հարկադիր փախստականներ էին, «արտահանածը»՝ աղետյալներ, էթնիկ ադրբեջանցիներ, ինտելեկտ, երիտասարդություն, մտային և ֆիզիկական աշխատուժ: Եթե մուտքի խումբը հիմնականում սթրեսակիր մարդիկ էին, ապա ելքի խումբն ընդգրկում է ողջ խաճանկարը. սթրեսակիր աղետյալներից մինչև ակտիվ տնտեսական ձեռներեցներ, այդ թվում՝ գիտնականներ, մտավորականներ, արհեստավորներ, ուսում և աշխատանք փնտրող երիտասարդներ, առևտրականներ, գյուղացիներ ու քաղաքացիներ, ընտանիքներ ու անհատներ:

Սրան զուգահեռ սկսվեց էներգետիկ ճգնաժամը, որի արտաքին ամենահիվանդագին դրսևորումը «ցուրտ ու մութ» ժամանակներն էին, աշխատատեղերի փակումը և տրանսպորտային հնարավորություններից ու աշխատանքային շփումներից զրկված մարդկանց ընտանիքներով կամ մեկուսի դեգրադացիան: Աղետի գոտում գործնականում կանգ առավ շինարարությունը, արտերկրում մնացած էվակուացվածներից շատերը սկսեցին հասկանալ, որ իրենց վերադառ-նալու շանսերը նվազում են:

1992-1993թթ. սահմանային գոտու ռմբակոծությունների և «մութ ու ցուրտ» տարիներին սկսվեց արտագաղթի երկրորդ, այս անգամ՝ կամավոր արտագաղթի ալիքը: Քաղաքներից գնացողները մեծ մասամբ մտավորականներ էին, մանր ու միջին ձեռներեցներ, ովքեր եվրոպական արտասահմանում, ԱՄՆ-ում և Ռուսաստանում կապեր, ծանոթներ ու ազգականներ ունեին: Գնում էին հիմնականում ընտանիքներով՝ մեծ մասամբ թողնելով իրենց բնակարանները: Գյուղը, որ այլընտրանքային վառելիք ուներ, տանը պաշարած մթերք, անասուն և անասնակեր, այդ առաջին ալիքին առանձնապես մեծ տեղաշարժերի չենթարկվեց: Այդ տարիների գյուղական բնակչության արտագաղթը տեղի էր ունենում գլխավորապես սահմանային պատերազմական գոտուց, որն անընդհատ ենթարկվում էր ռմբակոծությունների: Գյուղաբնակներից արտահոսքը ընդգրկեց մասնավորապես Տավուշի և Սյունիքի մարզերի ռմբակոծվող բնակավայրերը, որտեղից հեռանում էին կա՛մ քանդված բնակարանների, կա՛մ վախի պատճառով: Այդ գոտիների բնակչությունը մասամբ հաստատվում էր Հայաստանի քաղաքներում, մասնավորապես Երևան քաղաքում, մասամբ մեկնում էին Ռուսաստան: Ուշագրավ է, որ վախի

[1] Տվյալները վերցված են ՀՀ ԱՎԾ կայք-էջից՝ armstat.am

պատճառով հեռացածների մեծ մասը հետագայում՝ զինադադարի շրջանում, վերադարձավ: Արտագաղթի այս լուրջ ալիքը որակական չափումով «տարավ» ինտելեկտուալ ակտիվ և սոցիալապես միջին բնակչությանը:

1992-1993թթ. ազգային համաձայնության հոգեբանությունը սկսեց տեղի տալ առաջացող սոցիալական խմբերի որակների կայացմանը և միջխմբային հարաբերությունների ձևավորմանը: Սկսեցին ուրվագծվել ընտանեկան-ազգակցական կլանները, հարուստներ-աղքատներ, տեղաբնիկներ-փախստականներ սոցիալական խմբերը, որոնց մեջ հարաբերությունների ավելի փոխադարձ մերժման ու օտարման երևույթ էր ձևավորվում, քան պետական կամ էթնիկ ընդհանրության: Այդ նույն շրջանում բնակչության քանակական մեծամասնության մեջ սկսեց ձևավորվել թշնամանքը իշխանության հանդեպ, և 1995-1996թթ. ընտրություններն անցան հակոտնյա խմբերի ակտիվ ընդհարման մթնոլորտում: Գործող իշխանությունը հաղթանակ տարավ՝ ժողովրդական ընդդիմությունը կոպտորեն ճնշելով, և դա խթանեց արտագաղթի երրորդ, այս անգամ բավական հուժկու ալիքի սկիզբը:[1]

Ժամանակավոր կամ մշտական արտագաղթն այս կամ այն չափով առնչվում էր Հայաստանի գործնականում բոլոր ընտանիքներին: 1996թ. տնային տնտեսությունների բյուջեի հետազոտությունը ցույց տվեց, որ մոտ 110 հազար մարդիկ ժամանակավորապես ապրում են Հայաստանից դուրս: Նրանք բացահայտվեցին Հայաստանի տնային տնտեսությունների մոտ 10 տոկոսից: Ժամանակավոր արտագաղթողների հիմնական մեծամասնությունը աշխատանքային ծաղկուն հասակում էր, իսկ նրանց երեք քառորդը տղամարդիկ էին: Մեծամասնությունը մեկնել էր ԱՊՀ երկրներ, հիմնականում Ռուսաստանի Դաշնություն: Շատերը հմուտ աշխատողներ և մասնագետներ էին:

Արտագաղթի այս երրորդ ալիքն ընդգրկեց բնակչության ամենատարբեր խավերին՝ գյուղացիներ ու քաղաքացիներ, մեծ մասամբ աշխատանքային ակտիվ տարիքի տղամարդկանց: Արտագաղթի ալիքով մեկնածները, հետագայում հաստատվելով, կա՛մ տարան իրենց ընտանիքները, կա՛մ «մոռացան» այդ ընտանիքների գոյությունը: Հայաստանում լքված ընտանիքների մեծ մասը բաժին է ընկնում հենց այս շրջանի գնացածներին, ինչը լրացուցիչ վկայում է այս շրջանում գնացողների զգալի մասի անկումային, դեպրեսիոն հոգեվիճակի մասին: Այս շրջանում սկսվեց նաև բանակից խուսափելու երևույթը, որի հետևանքով ավելացավ երիտա-սարդներին հնարավոր բոլոր միջոցներով երկրից «փախցնելու» գործընթացը:

Այսպիսով, արտագաղթի երրորդ խոշոր ալիքը սկսվեց 1995-1996թթ., երբ անկախ Հայաստանի երկրորդ ԱԺ և նախագահական ընտրություններն ի դերև հանեցին այն տարիներին միջին համարվող մարդկանց՝ հնարավորությունների հավասարության և արդարության հույսերը:

Տնտեսական անկման ընթացքի կասեցումը ընդունված է համարել 1996թ., սակայն տնտեսական կայունացման ընթացքն ուղեկցվում էր արտագաղթի ամենամեծ ալիքներով: Այդ ալիքն ուղղվեց հիմնականում դեպի Ռուսաստան: Ալիքը տանում էր նախկինում «խոպանի» միջոցով Ռուսաստանի իրականությանը ծանոթ և աշխատելու կարողություն ունեցող մարդկանց՝ արհեստավորներին, միջին ու բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցող մարդկանց, հուսախաբ եղած փախստականների աշխատունակ մասը: Այս շրջանի արտագաղթը որոշ իմաստով կարելի է բնութագրել որպես «քաղաքական ընդդիմության» ձև, քանի որ գնացողների մեծ մասի հեռանալը պայմանավորված էր երկրում ձևավորվող հարաբերությունների մերժմամբ, դրա դեմ ըմբոստացմամբ: Պատահական չէ, որ սկսեց շրջանառվել այն արտահայտությունը, թե գնացողները «ոտքերով են բողոքում»:

Այդ տարիների արտագաղթողների մեջ իշխում էր երկիրը և իշխանությունն իրականացնողներին «մերժելու» հոգեբանությունը, նրանցից փախչելու ցանկությունը: Իշխանությունը մերժելու հոգեբանությունը սկսեց ստանալ պետությունը և հայրենիքը մերժելու կերպարանք, իշխանությունը շատերի զգացողության մեջ սկսեց նույնանալ հայրենիքի հետ: Բնակչության մեջ նկատելիորեն պակասեց օգնության բարոյական ու նյութական պատրաստակամության պաշարը:

Այդ տարիների արտագաղթի ծավալը կարող էր շատ ավելի մեծ լինել, եթե չլիներ Ռուսաստանում ավելի ու ավելի զգալի դարձող կենցաղային և նույնիսկ հրահրվող հակահայկականությունը: Բացի այդ, օգնության պատրաստակամության պաշարը նվազել էր նաև այն երկրների հայկական համայնքներում, որտեղ հայտնվում էին արտագաղթողները. նրանք ավելի ու ավելի դժկամությամբ էին օգնում իրենց՝ արդեն նկատելիորեն աղքատացած հայրենակիցներին, խուսափում էին նրանցից:

[1] Առաջին հայացքից անկարևոր թվացող հանգամանքը այսօր էլ շարունակում է արտագաղթի հիմնական պատճառներից մեկը հանդիսանալ, ինչում համոզվում ենք սոցիալական հարցումների վրա հիմնված հետազոտությունն ուսումնասիրելիս:

Ահա այս շրջանում սկսեց դրսևորվել արտագաղթող աղքատ հայերի վարքի որոշ քրեականացում: Վարքի զսպման բարոյական մեխանիզմներն այլևս դեր չէին խաղում: Նախ՝ Հայաստանից հեռացածները պարտավորություն չէին զգում իրենց հուսախաբ արած երկրի հանդեպ, երկրորդ՝ հիմնական «ընդունող» երկրի՝ Ռուսաստանի բնակչությունն ապրում էր իր հիասթափությունները, ամբողջ թափով ընթանում էր չեչենական պատերազմը:

Ռուսաստանում լրջորեն փոխվել էր արտագնա աշխատանքի սովոր հայերի ծանոթ միջավայրը, սկսվել էր նորահարուստների մասնավոր շինարարությունը: Ռուսաստանում հայտնվող հայերը ոչ միայն նոր աշխատանքային պայմաններում էին հայտնվում, այլև փոխվում էր նրանց աշխատանքային աշխարհագրությունը, ուրեմն նաև մարդկային զսպող միջավայրը: Նախկին աշխատատեղերը կապված էին այլ մարդկանց հետ, նոր աշխատատեղերը՝ նոր մարդկանց, նոր պահանջների, նոր վայրերի: Հաճախակի էին դառնում այն դեպքերը, երբ Ռուսաստանում մասնավոր գործատուն վերջում կամ չէր վճարում, կամ խիստ ցածր գներով էր վճարում՝ հակառակ պայմանավորվածության: Մարդիկ սկսում են թափանցել առևտրական շուկա, որ ավանդաբար ավելի ադրբեջանցիների աշխատատեղն էր Ռուսաստանում: Սկսում է ձևավորվել «կոպիտ հայերի» առասպելը, որն իր հերթին ավելի է նպաստում վարքի որոշ իրական քրեականացմանը կամ հուսահատ զայրույթն այդպես մատուցելու հնարավորությանը: Սրան ավելանում է նաև 1995-1997 թթ. Ռուսաստանում ծաղկող ռեկետային միջավայրը, որին հակազդելու ջանքերը երբեմն «պատճենում» էին ռեկետ իրականացնողների վարքը:

Արտագաղթի չորրորդ ալիքը հաջորդեց 1998թ. նախագահական և դրան հաջորդած ԱԺ ընտրություններին և իր գագաթնակետին հասավ հոկտեմբերի 27-ի խորհրդարանականների դեմ կիրառված ահաբեկչությունից հետո: Ուշագրավ է, որ տնտեսության իմաստով այս փուլը համարվում է տնտեսական աճի շրջան: Այս չորրորդ ալիքն ընդգրկեց գործնականում խիստ աղքատացած մարդկանց, ինչպես նաև երրորդ ալիքի արտագաղթած տղամարդկանց ընտանիքներին:

Այսպիսով, արտագաղթի երկրորդ և երրորդ ալիքները զուգադիպում են տնտեսության անկման կասեցման և տնտեսության աճի սկզբի շրջաններին:

Ընդհանուր առմամբ, արտագաղթի ծավալների մասին դատողություններ անելու համար թվային տվյալների լուրջ պակաս կա, ինչը կապված է այն հանգամանքի հետ, որ Հայաստանից մարդիկ հեռանում կամ մեկնում էին բավական անկանոն, Վրաստանի հետ սահմանային զոտու անցագրային կետում այդ տարիներին կանոնավոր հաշվառում չէր արվում, և փորձագիտական հետազոտությունները վկայում են արտագաղթողների անհամեմատ մեծ թվերի մասին:

Արտագաղթը 21-րդ դարի սկզբին սկսեց նվազել, և, ինչպես արդեն նշվեց, 2004-2006 թվականներին «ներգաղթը հաղթեց արտագաղթին»: 2007 թվականի նախաճգնաժամային ժամանակահատվածից սկսած արտագաղթի ցուցանիշը սկսեց շարունակաբար աճել՝ կապված տնտեսական ակտիվության անկման՝ հատկապես ընդհատված շինարարության հետ: Ճգնաժամի հետևանքները դեռ չվերացրած երկրում արտագաղթը շարունակաբար աճում էր, իսկ երկրի բնակչության թիվը վերադառնում 3 միլիոնի սահմանագծին: Տնտեսական պատճառներից բացի այս տարիներին կարելի է առանձնացնել նաև քաղաքականը. Հայաստան-Ադրբեջան և Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կառուցումը միանշանակ չէր, ինչն անհետևանք չանցավ: Վերջին շրջանում պատերազմական բախումները ուղղակիորեն և անուղղակիորեն անդրադառնում են բնակչության շարժի վրա: Ոչ պաշտոնական տեղեկություններից մեկի համաձայն՝ 2014թ. օգոստոսյան բախումների արդյունքում (Լեռնային Ղարաբաղ և ՀՀ հյուսիս-արևելյան տարածք) ընդամենը 10 օրում Հայաստանը լքեց շուրջ 70 000 քաղաքացի:

Հայաստանի բնակչության միգրացիոն գործընթացներին հատուկ է նաև ներգաղթը, որը, սակայն, Հայաստանի Հանրապետությունում նույնանում է հայրենադարձության հետ: Մոտ ժամանակներս ՀՀ ներգաղթի միտումները կարող են կանխորոշվել ներքոհիշյալ մի շարք դրույթների դրսևորման պարագայում.

- Հայաստանում սոցիալ-տնտեսական լարվածության տևականությունը աստիճանաբար հաղթահարումը,
- Ղարաբաղյան հակամարտության ընթացքը, նրա լուծման ձևերն ու պայմանները,
- աշխարհում հայ անլեզվալ գաղթականների նկատմամբ միջազգային նորմերին համապատասխանող գաղթի քաղաքականության կիրառման ընթացքը,
- արտասահմանում լեզվալ գաղթականների աշխատանքային և սոցիալական ապահովվածության աստիճանը, ազգային և սոցիալական խտրականությունների դրսևորումները և մարդու միջազգային իրավունքի նորմերի կենսագործման կարգը,

- համաշխարհային տնտեսական ճգնաժամերի հաղթահարումը և հետևանքների կայունացման ընթացքը,
- կապիտալիստական երկրներից հայ լեգալ գաղթականների՝ հայրենիք վերադառնալու շահագրգռվածությունը,
- ԱՊՀ երկրների (այսօր արդեն նաև ԵԱՏՄ)՝ առաջին հերթին՝ ՌԴ սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման, աշխատանքի շուկայում գոյացող իրավիճակները:

Ամեն դեպքում այսօր էլ տնտեսական և քաղաքական շատ գործոններ շարունակում են կանխարգելիչ դեր խաղալ ներգաղթի համար:

Հայրենիքը տարբեր ժամանակներում լքած բնակչությունը Հայաստանի Հանրապետությունից և Լեռնային Ղարաբաղից դուրս ստեղծել է հայկական սփյուռքը, որի թվաքանակի մասին հավաստի տվյալներ կազմելը ինչ-ինչ պատճառներով արժանահավատ չէ: Ամեն դեպքում, ըստ ՄԱԿ-ի մարդահամարով զբաղվող բաժնի 2010 թվականի մոտավոր հաշվարկների՝ աշխարհում 24.12.2010թ. դրությամբ ապրում էր 8.938.781 երկկողմանի հայ:

Համատեքստում քննարկվեց հայերի արտագաղթի հիմնական պատճառները տարբեր ժամանակներում: Ինչպես համոզվեցինք, շարժառիթները տարբեր են, և մեր ժամանակներում դեռ շարունակվող արտագաղթի առավել խորը դրդապատճառները հասկանալու համար անց է կացվել սոցիալական հարցում: Հարցմանը մասնակցել են տարբեր տարիքի, սեռի և զբաղմունքի 1000 ՀՀ քաղաքացի: Հարցման արդյունքները ներկայացնենք թվերի տեսքով:

Հարցման հիմնական նպատակը եղել է արտագաղթի հնարավոր դրդապատճառների բացահայտումը, որի արդյունքում պարզվեց հետևյալ պատկերը.

Աղյուսակ 2. Սոցիալական հարցման արդյունքները

Հ/Հ	Դրդապատճառը	Պատասխանածների	
		թիվը (մարդ)	կշիռը (տոկոս)
1.	Աշխատատեղերի բացակայություն	246	25
2.	Ցածր աշխատավարձեր	178	18
3.	Մասնագիտական աշխատանքի բացակայություն	144	14
4.	Իշխանության նկատմամբ հավատի բացակայություն	112	11
5.	Աշխարհաքաղաքական անկայուն իրավիճակ	84	8
6.	ՀՀ զարգացման անիրական հեռանկարներ	56	6
7.	Սոցիալ-բարոյահոգեբանական անառողջ մթնոլորտ	44	4
8.	Արտերկրում ուսում ստանալու հնարավորություն	38	4
9.	Այլ	98	10

Հարցվողների մեծ մասը՝ գրեթե 80 տոկոսը, այն հարցին, թե որ աշխտավարձի դեպքում կարելի է բարեկեցիկ ապրել ՀՀ-ում և չլքել այն, պատասխանել է՝ ամսական 400-600 ԱՄՆ դոլար, և միայն հարցվողներից 87-ն է պատրաստ ապրելու իր հայրենիքում՝ անկախ հանգամանքներից:

Վերոհիշյալն ամփոփելով՝ նշենք, որ.

- զանգվածային արտագաղթի հետևանքով երկրից մշտական կամ ժամանակավոր հեռացել է շուրջ 1 մլն մարդ, ընդ որում՝ բնակչության առավել ակտիվ, աշխատունակ և վերարտադրողական մասը,
- խաթարվել է բնակչության սեռատարիքային համամասնությունը, ինչը պայմանավորված է արտագաղթողների մեջ տղամարդկանց գերակշռությամբ, արդյունքում՝ հանրապետությունում կտրուկ կրճատվել է ամուսնությունների թիվը,
- ամուսնացողների թվի կրճատման, տղամարդկանց արտագնացության պատճառով, ամուսնական զույգերի երկարատև անջատման, ինչպես նաև սոցիալ-տնտեսական գործոններով պայմանավորված, ծնունդների թիվը նվազել է, որն, իր հերթին, հանգեցրել է ընտանիքի միջին չափերի փոքրացմանը:
- երիտասարդ տարիքի բնակչության մեծ չափերի արտագաղթի և ծնունդների ընդհանուր թվի նվազման հետևանքով, բնականաբար, ավելացել է մեծահասակների տեսակարար կշիռը՝ նախադրյալներ ստեղծելով «ծերացող հասարակության» համար, այս գործընթացի հետևանքով

հասարակությունն արտադրողից վեր է ածվում սպառողի, ավելանում են խնամքի տակ գտնվող ծերերը, քանի որ երիտասարդությունն արտագաղթի մեջ է, իսկ մի զգալի մասն էլ չի աշխատում,

- արտագաղթը և ծնունդների ցածր թիվը վնասում են երկրի պաշտպանունակության և ռազմական հզորության շահերին, այն ընդգրկում է, առաջին հերթին, զինակոչային տարիքի երիտասարդությանը, որի թիվը, ըստ ՊՆ հետազոտություններից մեկի՝[1] 2010թ., 2005թ. համեմատությամբ, կրճատվել է մոտ 10%-ով, իսկ 2010թ. նկատմամբ 2019թ. այն կպակասի ևս 30%-ով, և դա այն դեպքում, եթե բացառենք արտագաղթը,
- զանգվածային արտագաղթն ուղեկցվել է ֆինանսական և մտավոր կարողությունների մեծ ծավալների արտահանմամբ, նվազեցրել է Հայաստանի տնտեսական և գիտական ներուժը, դանդաղեցրել նյութական կայունացման գործընթացը, որով էլ արգելակել է նշմարվող տնտեսական առաջընթացը:
- մեծ է եղել արտագաղթը հատկապես փոքր և միջին քաղաքներից, որը, բնականաբար, չի նպաստում քաղաքային տարաբնակեցման պահպանմանն ու ուրբանիզացիոն գործընթացներին:

Ստացվում է, որ իրավիճակը բավականին սրված է, և ժամանակն է կամային քաղաքականությունից անցում կատարել հստակ մեխանիզմների կիրառմանը, որը կաշխատի 2 ուղղությամբ. նախ՝ կկանխի շարունակաբար աճող արտագաղթը, և երկրորդ՝ հայրենիք կուղղի հայրենադարձների մեծ հոսք:

Եթե վերադարձելիության համար գլխավորը և համար մեկը Հայաստանի տնտեսական հզորացումն է և համաշխարհային հանդիսատեսին ուժեղ պետություն ներկայանալը, ապա արտագաղթն ավելի զգայուն է, ինչի համար պետք է մշակել համակարգային մեխանիզմ՝ ուղղված ՀՀ տարբեր ոլորտներ: Այդ իմաստով օգտակար կլինի՝

- վերանայել կրթական համակարգը և կատարել աչքի ընկնող կտրուկ փոփոխություններ, որոնք կլինեին ոչ թե զարգացած երկրների կրթական համակարգի կրկնօրինակը, այլ լիովին կհամապատասխանեին հայի էթնոսին և կերպարին. կարելի է բարոյական և տնտեսական սահմանափակումներ դնել արտերկրում ուսում ստանալու հնարավորության վրա, օրինակ՝ արտերկրում ուսումն ավարտելուց հետո պարտադիր վերադառնալ հայրենիք, աշխատանքի անցնել որոշակի ժամանակ, կամավորական աշխատանքներ կատարել,
- ուշադրությունը կենտրոնացնել նախազորակոչային տարիքի շարժի վրա՝ բացառելու քաղաքացիության անհիմն փոփոխությունները,
- սոցիալական նպաստների տրամադրման հարցում ուշադրություն դարձնել հասցեատերերի նպատակայնության և համապատասխանության վրա, մշակել սոցիալական այլ նպաստներ հասարակության տարբեր թիրախային խմբերի վրա,
- խթանել ՓՄՁ ոլորտի առաջընթացին, ինչը բազմապատկչի էֆեկտի միջոցով իր ետևից կբերի նոր աշխատատեղեր, հարկման բազա և տնտեսության զարգացման նախապայմաններ,
- մշակել և կենսագործել դրամավարկային և հարկաբյուջետային այնպիսի քաղաքակա-նություն, որը թույլ կտա նվազեցնել տնտեսական դրդապատճառներով էմիգրացիան՝ միաժամանակ խթանելով Հայաստանի քաղաքացի աշխատանքային էմիգրանտների վաստակած ֆինանսական միջոցների արդյունավետ ներդրումը երկրում,

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը. XIX-XX դարերում, XXI դարի շեմին, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան 2001
2. ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջ՝ armstat.am
3. Նորավանք ԳԿ հիմնադրամի «21-րդ դար» ամսագրի 2016թ. 5-րդ համար

[1] Աղբյուրը՝ ՀՀ ՊՆ կայք-էջ՝ www.mil.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նաստասյա Ավետիսյան ԵՐԿՐԱՉԱՓԱԿԱՆ ՄԵԹՈԴՈՎ ԼՈՒԾՎՈՂ ԳԾԽ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ	3
Հայրապետյան Ռինատ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԽԱՆԻԿԱՑԻ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐՈՒՄ	10
Մարինա Հակոբյան, Ռաֆայել Բաբայան ՊԱՀԵՍՏԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ	16
Դիանա Իսրայելյան ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ	20
Աբրահամյան Արթուր Գ. ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՐԿԿԱԶՄ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ	25
Դիանա Ավանեսյան ԻԶՈՄԵՐԻԶԻ ԵՐԵՎՈՒՅԹԸ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՔԻՄԻԱՅՈՒՄ	30
Արփինե Ցարամիշյան ԱՐՑԱԽՈՒՄ ԱՃՈՂ ՎԱՐԴԱԶԳԻՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՈՐՈՇ ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱԽՏԱՀԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՍՆԿԱՅԻՆ	36
Լուսինե Հովհաննիսյան ԱՐՑԱԽՈՒՄ ԱՃՈՂ ՎԱՐԴԱԶԳԻՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՈՐՈՇ ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱԽՏԱՀԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՍՆԿԱՅԻՆ	41
Անուշ Ղարիբյան ԷԼԵԿՏՐԱՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՈՒՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ՎՐԱ	46
Թինա Այվազյան *ՀՐԱՉՅԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐՈՒՄ ՉԸՆԴԳՐԿՎԱԾ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԻ* *ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՓՈՐՁ*	51
Մոնա Ալավերդյան *ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏԱՐԳԱՆԴԱՅԻՆ ՓՈԽԼՈՒՄ ՄԱՅՐ – ՈՐԴԻ – ՀԱՅՐ ԿԱՊԸ* *ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ ՊՈԵԶԻԱՅԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ*	60
Կարեն Մանուչարյան *ՀՐԱՉՅԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԻ «ԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ և ՏՈՆՈ ՏԱԼՅԱՆԸ» ԵՐԿԸ*	67
Մելինե Պետրոսյան ԿՈՄԻՏԱՍ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՆ	72
Շուշան Ներսեսյան ԹԻՖԼԻՍԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԸ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ	76
Էդիտա Ալթունյան ՄԻՋԽՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ ՏԱՐԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԲԱՌԵՐԸ Պ. ՍԵՎԱԿԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ	82
Մայրանուշ Շահումյան ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ (ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ) ՀԱՐՑԵՐԸ ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	88
Արեվիկ Լալայան ԳԼԽԱՎՈՐ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՈՐԵՎԷ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՆՈՂ ՉՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆՆԵՐԸ ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՊԱՏՄԱՎԵՊԵՐՈՒՄ	95
Լուսինե Վարդանյան, Արփինե Թաթլյան ՊՈՂԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ և ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ	101
Վարդուհի Սահակյան ԿՈՄԻՏԱՍ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	105
Նարինե Աղաջանյան	110

ԼՂԻՄ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ	
Բելլա Գասպարյան ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱԿԱՀԱՅ ԳՈՐԾԵԼԱՌՃԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ	115
Նոննա Գյուրջյան ԹՈՒՐՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ 1991-1994ԹԹ. ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ	120
Վարդիթեր Կարապետյան ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱԿԵՐՏ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	125
Արմեն Չոփուրյան ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ, ԻՒՀ)	128
Էլլադա Հայրապետյան *ՀԱՅԱՏՅԱՅՈՒԹՅԱՆ ԴՐՍԼՈՐՈՒՄՆԵՐԸ ԱԴՐԲԵՋԱՆԱ-ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԱՆՑԱԾ ՎԱՅՐԵՐՈՒՄ. ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԻՏԱԿԵՏԻՑ /1991-2016ԹԹ./*	132
Մերի Սարդարյան 1920Թ ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ԴԱՍԵՐԸ	137
Ռուզաննա Սարգսյան ՀԱՅ ՀԵՐՈՍՈՒՀԻ ԿԱՆԱՅՔ ՀԱՅԴՈՒԿԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԵՋ	142
Աբրահամյան Էլինե ՑԱԽՈՒՐՆԵՐԻ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ, ՄՇԱԿՈՒՅԹԸ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ (ԽՆԴՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ)	147
Ալավերդյան Նոննա ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՀԱԿԱՍԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ ՌԽԴՍՀ-ՈՒՄ	152
Նինա Հայրապետյան ՈՐՈՇ ԱՍՊԵԿՏՆԵՐ ՈՒԴԻՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ և ՄՇԱԿՈՒՅԹԻՑ (ԽՆԴՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ)	157
Էլեն Հովսեփյան ՈՐՈՇ ԱՍՊԵԿՏՆԵՐ ԹԱԼԻՇ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻՑ (ԽՆԴՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ)	164
Զոյա Չատինյան 1848 Թ.-Ի ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ «ԵՎՐՈՊԱ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ	169
Աստղիկ Օհանյան ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ԱՆԿՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ	174
Քրիստինա Բուռնազակի ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԻՍ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ	180
Իրինա Գաբրիելյան ԹԱՑՎԱՆ. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՅՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԸՆԴԴԵՄ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ	184
Լիդա Գասպարյան *ՔԱՂԱՔԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ, ՄԵԹՈԴՆԵՐԸ և ՁԵՎԵՐԸ*	190
Հայրապետյան Ալյոնա ԱՐՑԱԽԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ	194
Թամարա Հակոբյան ԱԴՐԲԵՋԱՆԻ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽԻ ՇՈՒՐՋ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ	198
Մարինե Կիրակոսյան *ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՎՐԱ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ*	203
Անուշ Միրզոյան ԱԴՐԲԵՋԱՆԻ ՆԱՎԹԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ և ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԻՆ և ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ	208

Արթուր Թունյան ԱՐՑԱԽՑԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ	213
Վիոլետտա Պետրոսյան *ՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԲՅԵԿՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՂ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ. ԱՐՑԱԽԻ ԵՎ ԿՈՍՈՎՈՅԻ ԴԵՊՔԵՐԸ*	217
Մարգարիտ Պետրոսյան ԲԱԶՄԱԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁևԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԿԱՑԱՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՉՁԱՆԱՉՎԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ: ԱՐՑԱԽԻ ԴԵՊՔԸ	224
Լ.Մ. Սարկիսյան ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԿԵՐՊԱՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ (ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ)	231
Մարիա Բաբայան ՍՊՈՐՏՍՄԵՆԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ՍՏԱՐՏԻՑ ԱՌԱՋ	234
Արփինե Բադալյան ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ	239
Օկսանա Մարդանյան ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ	243
Ալբերտ Զուրաբյան ՌՈՄԱՆՏԻԿ ՖԻԼՄԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎՐԱ	247
Միշա Թադևոսյան ՀՀ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ: ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	250
Ժաննա Թերլեմեզյան ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ՎՐԱ	254
Արմինե Սևումյան ՄԱՆԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎ ԽԱՂԱԹԵՐԱՊԻԱՆ, ՈՐՊԵՍ, ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑ	258
Անի Թանանյան ԽԱՐԴԱԽՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐ	264
Գոհար Խաչատրյան ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ. ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ ԱՐՑԱԽԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ	269
Մարիամ Մխիթարյան ՄԱՐԴՈՒ ՕՐԳԱՆՆԵՐԻ, ՀՅՈՒՍՎԱԾՔՆԵՐԻ, ԲՋԻՋՆԵՐԻ ԵՎ ՄԱՐՄՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՆՐԱ ՄԱՀԻՑ ՀԵՏՈ	273
Ադելինա Սարգսյան ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՀԻՊՆՈՍԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԿԱՏԱՐՎՈՂ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ	278
Լուիզա Ներսեսյան «ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ	282
Վարազդատ Սուքիասյան ՏՆԱՅԻՆ ԿԱԼԱՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀՀ-ՈՒՄ	293
Իրինա Արզումանյան ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ ԼՂՀ-ում	298
Նինա Բալայան ՉՁԱՆԱՉՎԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (ԼՂՀ, ԱԲԽԱԶԻԱՅԻ, ՄԵՐՁՂՆԵՍՏՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)	304
Ինգա Ղալայան *ՀՀ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵԱՏՄ*	310

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ	
Գոհար Հարությունյան, **ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՂՀ-ՈՒՄ**	316
Ժասմինա Հայրապետյան **ԱՐՑԱԽԻ ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ԵՎ ՌԵԿՐԵԱՑԻՈՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**	319
Մինասյան Սուրեն **ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԴԵՏԵՐՄԻՆԱՆՏՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**	323

СОДЕРЖАНИЕ

Настасья Аветисян РЕАЛИЗАЦИЯ ЗАДАЧ ЛИНЕЙНОГО ПРОГРАММИРОВАНИЯ, КОТОРЫЕ РЕШАЮТСЯ ГЕОМЕТРИЧЕСКИМ МЕТОДОМ С ПОМОЩЬЮ СРЕДСТВ ПРОГРАММИРОВАНИЯ	3
Ринат Айрапетян ПРИМЕНЕНИЕ ЗАКОНОВ СОХРАНЕНИЯ В НЕКОТОРЫХ ФИЗИЧЕСКИХ ЗАДАЧАХ	10
Марина Акопян, Рафаэль Бабаян ПРОЕКТИРОВАНИЕ АВТОМАТИЗИРОВАННОЙ СИСТЕМЫ РАБОТ СКЛАДА	16
Диана Исраелян ПРИМЕНЕНИЕ ЭЛЕКТРОННЫХ ОБУЧАЮЩИХ РЕСУРСОВ В СИСТЕМЕ ДИСТАНЦИОННОГО ОБУЧЕНИЯ	20
Абрамян Артур ОРГАНИЗАЦИЯ УЧЕБЫ ДВУХКОМПЛЕКТНЫХ КЛАССАХ ВО ВРЕМЯ ОБУЧЕНИЯ ПРЕДМЕТА «ГЕОГРАФИЯ»	25
Диана Аванесян ЯВЛЕНИЕ ИЗОМЕРИИ В ОРГАНИЧЕСКОЙ ХИМИИ	30
Арпине Ярамищян ПОРАЖЕННОСТЬ ГРИБКОВЫМИ ЗАБОЛЕВАНИЯМИ НЕКОТОРЫХ ВИДОВ ПЛОДОВЫХ ДЕРЕВЬЕВ СЕМЕЙСТВА РОЗОВЫХ, РАСТУЩИХ В АРЦАХЕ	36
Лусине Ованнисян ИССЛЕДОВАНИЯ ГРИБКОВЫХ ЗАБОЛЕВАНИЙ НЕКОТОРЫХ ЛЕКАРСТВЕННЫХ РАСТЕНИЙ ВСТРЕЧАЮЩИХСЯ НА ТЕРРИТОРИИ АРЦАХА	41
Ануш Гарибян ИЗУЧЕНИЕ ВЛИЯНИЯ ЭЛЕКТРОМАГНИТНОГО ПОЛЯ НА НЕКОТОРЫЕ АСПЕКТЫ ПОВЕДЕНИЯ ПЧЕЛ	46
Тина Айвазян *ПОПЫТКА КОМЕНТИРОВАНИЯ ПОВЕСТЕЙ, НЕ ВХОДЯЩИХ В СБОРНИКИ ГРАЧЬИ САРИБЕКЯАНА*	51
Сона Алавердян *СВЯЗЬ МАТЬ-СЫН-ОТЕЦ В КОНТЕКСТЕ СОВРЕМЕННОЙ АРМЯНСКОЙ ПОЭЗИИ В ФАЗЕ ПОСЛЕУТРОБНОЙ ПАМЯТИ*	60
Карен Манучарян *ПРОИЗВЕДЕНИЕ ГРАЧИЯ САРИБЕКЯНА “БЫТИЕ И ТОНО ТАЛЯН”*	67
Мелине Петросян ПОЕЗИЯ КОМИТАСА АКОПЯНА	72
Шушан Нерсесян ХУДОЖЕСТВЕННЫЙ ОБРАЗ ТИФЛИСА В АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЕ	76
Эдита Алтунян	82
Майрануш Шаумян ФОНЕТИЧЕСКИЕ ВОПРОСЫ ЗАПАДНОАРМЯНСКОГО ЯЗЫКА В РАБОТАХ ГРАЧЬЯ АЧАРЯНА	88
Аревик Лалаян ДОПОЛНЯЮЩИЕ НЕ ПРЕОБРАЗОВАННЫЕ ВТОРИЧНЫЕ ПРЕДЛОЖЕНИЯ КАКОГО-НИБУДЬ ЧЛЕНА В РОМАНАХ АЙКА ХАЧАТРЯНА	95
Лусине Варданян, Арпине Татлян НЕКОТОРЫЕ ПРОГМАТИЧЕСКИЕ И СМЫСЛОВИЕ ОСОБЕННОСТИ ВОПРОСОВ С ХВОСТОМ В СОВРЕМЕННОМ АНГЛИЙСКОМ ЯЗЫКЕ	101
Саакян Вардуи НЕСКОЛЬКО ЛИНГВОСТИЛИСТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ В ПРОИЗВЕДЕНИЯХ КОМИТАСА АКОПЯНА	105
Наринэ Агаджанян ВАПРОС ФОРМИРОВАНИЯ НАГОРНО КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ	110
Белла Гаспарян АНТИАРМЯНСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ СОВЕТСКОГО АЗЕРБАЙДЖАНА В ГОДЫ АВТОНОМИИ НАГОРНОГО КАРАБАХА	115
Нонна Гюрджян ТУРЕЦКИЙ ФАКТОР 1991-1994 В АРЦАХСКОМ КОНФЛИКТЕ	120

Вардитер Карапетян КАМЕННЫЕ СВИДЕТЕЛЬСТВА МУЗЫКИ	125
Армен Чопурян **О СВЯЗИ РОДИНА-ДИАСПОРА ЗА РУБЕЖОМ В ПРЕССЕ ЗАРУБЕЖНЫХ АРМЯН**	128
Эллада Айрапетян ПРОЯВЛЕНИЯ АРМЯНОФОБИИ ВО ВРЕМЯ АЗЕРБАЙДЖАНО-КАРАБАХСКОГО КОНФЛИКТА В МЕСТАХ ПЕРЕХОДИВШИХ ПОД КОНТРОЛЬ АЗЕРБАЙДЖАНА. ОСУЖДЕНИЕ С ТОЧКИ ЗРЕНИЯ МЕЖДУНАРОДНОГО ПРАВА	132
Мери Сардарян УРОКИ И ПРИЧИНЫ ПОРАЖЕНИЯ АРМЕНИИ В ТУРЕЦКО-АРМЯНСКОЙ ВОЙНЕ 1920 ГОДА	137
Рузанна Саргсян АРМЯНСКИЕ ЖЕНЩИНЫ ГЕРОИНЬИ В ФИДАИНСКОМ ДВИЖЕНИИ	142
Абрамян Элине **ИСТОРИЯ, КУЛЬТУРА, ТРАДИЦИИ ЦАХУРОВ (ПОСТАНОВКА ПРОБЛЕМЫ)**	147
Нонна Алавердян СПОРНЫЕ АСПЕКТЫ НАЦИОНАЛЬНОГО ВОПРОСА В РСФСР	152
Нина Айрапетян НЕКОТОРЫЕ АСПЕКТЫ ИСТОРИИ И КУЛЬТУРЫ УДИНСКОГО НАРОДА (ПОСТАНОВКА ПРОБЛЕМЫ)	157
Элен Осипян **НЕКОТОРЫЕ АСПЕКТЫ ИСТОРИИ И КУЛЬТУРЫ ТАЛЫШСКОГО НАРОДА (ПОСТАНОВКА ПРОБЛЕМЫ)**	164
Зоя Чатинян 1848 ФРАНЦУЗСКАЯ РЕВОЛЮЦИЯ В ЕВРОПЕ ПЕРИОДИЧЕСКОЙ ОЦЕНКИ	169
Астхик Оганян ПОСЛЕДСТВИЯ ЗАВОЕВАНИЯ КОНСТАНТИНОПОЛЯ И ЕГО ЗНАЧЕНИЕ В МИРОВОЙ ИСТОРИИ	174
Бурназаки К. И. **НАЦИОНАЛЬНАЯ КУЛЬТУРА И ВЫЗОВЫ СОВРЕМЕННОСТИ**	180
Ирина Габриелян **ТАЙВАНЬ: ПРОЦЕСС ДЕМОКРАТИЗАЦИИ ПРОТИВ ДИПЛОМАТИЧЕСКОГО ОГРАНИЧЕНИЯ**	184
Лида Гаспарян ***ОСНОВНЫЕ МЕХАНИЗМЫ, ФОРМЫ И МЕТОДЫ ПОЛИТИЧЕСКОЙ ПРОПАГАНДЫ***	190
Айрапетян Алёна ПРОБЛЕМЫ ПАРТИЙНОЙ СИСТЕМЫ АРЦАХА	194
Тамара Акопян **ПРОПАГАНДА АЗЕРБАЙДЖАНА В ИНФОРМАЦИОННОЙ ВОЙНЕ ВОКРУГ АРЦАХА**	198
Марине Киракосян ВЛИЯНИЕ ГЕОПОЛИТИЧЕСКИХ ФАКТОРОВ НА ПРИМЕНЕНИЕ МЕЖДУНАРОДНОГО ТЕРРИТОРИАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ ПРИ РАЗРЕШЕНИИ КОНФЛИКТОВ	203
Ануш Мирзоян НЕФТЯНАЯ ПРОМЫШЛЕННОСТЬ АЗЕРБАЙДЖАНА И ВЛИЯНИЕ НА ВНУТРЕННЮЮ И ВНЕШНЮЮ ПОЛИТИКУ	208
Артур Тунян ПОЛИТИЧЕСКИЕ ПУТИ И ПЕРСПЕКТИВЫ УРЕГУЛИРОВАНИЯ АРЦАХСКОГО КОНФЛИКТА	213
Виолетта Петросян ***ПРИЗНАКИ ОПРЕДЕЛЯЮЩИЕ ПРАВОСУБЪЕКТНОСТЬ ГОСУДАРСТВА: АРЦАХ И КОСОВО***	217
Маргарит Петросян ФОРМИРОВАНИЕ И КОНСОЛИДАЦИЯ МНОГОПАРТИЙНОЙ СИСТЕМЫ В НЕПРИЗНАННЫХ ГОСУДАРСТВАХНА ПРИМЕРЕ АРЦАХА	224
Лилит Саркисян **ВЛИЯНИЕ ИМИДЖА ПОЛИТИЧЕСКИХ ЛИДЕРОВ НА ФОРМИРОВАНИЕ ОБРАЗА**	231

ГОСУДАРСТВ (НА ПРИМЕРЕ РЕСПУБЛИКИ АРЦАХ)	
Мария Бабаян **ПСИХОЛОГИЧЕСКОЕ СОСТОЯНИЕ СПОРТСМЕНА ПЕРЕД СТАРТОМ**	234
Арпине Бадалян **ПАТРИОТИЧЕСКОЕ ВОСПИТАНИЕ МЛАДШЕГО ШКОЛЬНОГО ВОЗРАСТА В ДЕТСКОЙ ЛИТЕРАТУРЕ**	239
Оксана Марданян **ПУТИ ЭФФЕКТИВНОСТИ КОММУНИКАЦИИ И ПРОФЕССИОНАЛЬНОГО САМООПРЕДЕЛЕНИЯ СТУДЕНТОВ**	243
Альберт Зурабян **ВЛИЯНИЕ РОМАНТИЧЕСКИХ ФИЛЬМОВ НА ОРГАНИЗАЦИЮ ЛИЧНОЙ ЖИЗНИ МОЛОДЕЖИ**	247
Миша Тадевосян **СОСТОЯНИЕ И ОСОБЕННОСТИ ПРОФЕССИОНАЛЬНОЙ ОРИЕНТАЦИИ В ОБРАЗОВАТЕЛЬНЫХ УЧРЕЖДЕНИЯХ В АРМЕНИИ. РЕЗУЛЬТАТЫ ИССЛЕДОВАНИЯ**	250
Жанна Терлемезян **ВЛИЯНИЕ МУЗЫКИ НА ЧЕЛОВЕКА**	254
Севумян Армине **ПРОБЛЕМА ТЕРАПИИ НАСИЛИЯ В КАК ОСНОВНЫЕ СРЕДСТВА ПСИХОЛОГИЧЕСКОЙ РАБОТЫ**	258
Ани Тананян **НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ КВАЛИФИКАЦИИ МОШЕННИЧЕСВА**	264
Гоар Хачатрян **ПРИНЯТИЕ НАСЛЕДСТВА ПО ИСТЕЧЕНИИ УСТАНОВЛЕННОГО СРОКА: НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ГК АРЦАХА**	269
Мариам Мхитарян **ПРАВОВОЙ СТАТУС ОРГАНОВ, ТКАНЕЙ И КЛЕТОК ЧЕЛОВЕКА ПОСЛЕ СМЕРТИ**	273
Аделина Саргсян **НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ КВАЛИФИКАЦИИ ПРЕСТУПЛЕНИЙ ПРОТИВ СОБСТВЕННОСТИ, СОВЕРШАЕМЫХ С ПРИМЕНЕНИЕМ ГИПНОЗА**	278
Луиза Нерсесян **НЕОБХОДИМОСТЬ ПРИНЯТИЯ ЗАКОНА «О ДОМАШНЕМ НАСИЛИИ»**	282
Вараздат Сукиасян **ПРОБЛЕМЫ ПРИМЕНЕНИЯ ДОМАШНЕГО АРЕСТА В РА**	293
Ирина Арзуманян **ЭКОНОМИЧЕСКИЙ РОСТ, КАК НЕОБХОДИМОЕ УСЛОВИЕ СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ НКР**	298
Нина Балаян **СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ НЕПРИЗНАННЫХ ГОСУДАРСТВ (НКР, АБХАЗИИ, ПРИДНЕСТРОВЬЯ)**	304
Инга Галаян ***ВОЗМОЖНОСТИ РАСШИРЕНИЯ ЭКСПОРТА АРМЯНСКОЙ РЕСПУБЛИКИ В УСЛОВИЯХ ЧЛЕНСТВОВАНИЯ ЕАЭС***	310
Гоар Арутюнян **ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ СОЦИАЛЬНОГО СОДЕЙСТВИЯ**	316
Жасмина Айрапетян **ТУРИСТСКО-РЕКРЕАЦИОННЫЕ РЕСУРСЫ АРЦАХА**	319
Сурен Минасян **ДЕТЕРМИНАНТЫ МИГРАЦИИ В АРМЕНИИ**	323

CONTENTS

Nastasya Avetisyan USING THE PROGRAMMING IMPLEMENTATION OF LINEAR PROGRAMMING PROBLEMS WHICH IS SOLVED BY GEOMETRIC METHOD	3
Rinat Hayrapetyan **APPLICATION OF CONSERVATION LAWS IN SOME PHYSICAL PROBLEMS**	10
Marina Hakopian, Rafael Babayan **DESIGNING AN AUTOMATED WAREHOUSE WORK SYSTEM**	16
Diana Israelyan THE APPLICATION OF E-LEARNING RESOURCES IN THE SYSTEM OF DISTANCE LEARNING	20
Abrahamyan Arthur **PLANNING EDUCATION IN TWO-GRADED CLASSES DURING «GEOGRAPHY» COURSE TEACHING**	25
Diana Avanesyan THE PHENOMENON OF ISOMERISM IN ORGANIC CHEMISTRY	30
Arpine Yaramishyan THE FUNGAL DISEASES OF SOME SPECIES OF FRUIT TREES OF THE PINK FAMILY GROWING IN ARTSAKH	36
Lusine Hovhannisyan **RESEARCH FUNGAL DISEASES OF SOME MEDICINAL PLANTS FOUND IN THE TERRITORY OF ARTSAKH**	41
Anush Gharibyan BEHAVIOR INVESTIGATION OF THE ELECTROMAGNETIC FIELD ON THE SOME ASPECTS OF THE BEE'S	46
Tina Ayvazyan ***THE COMMENTING EXPERIMENT OF THE STORIES NOT INCLUDING IN THE COLLECTIONS OF HRACHYA SARIBEKYAN***	51
Sona Alaverdyan ***MOTHER-SON-FATHER RELATIONSHIP PHASE OF POST-WOMB MEMORY IN THE CONTEXT OF MODERN ARMENIAN POETRY***	60
Karen Manucharyan ***HRACHYA SARIBEKYAN'S "SUBSISTENCE AND TONO TALYAN"***	67
Meline Petrosyan **THE POETRY OF KOMITAS HAKOBYAN**	72
Shushan Nersesyan **THE ARTISTIC IMAGE OF TBILISI IN ARMENINAN LITERATURE**	76
Edita Altunyan PART OF SPEECH WORDS WITH DIFFERENT VALUE IN PARUYR SEVAK'S POETRY	82
Miranoush Shahoumyan **PHONETIC ISSUES OF THE WESTERN ARMENIAN LANGUAGE IN THE STUDIES OF HRACHYA ATSHARYAN**	88
Arevik Lalayan SUPPLEMENTARY NOT CONVERTED SECONDARY PROPOSALS OF ANY MEMBER IN THE HOMES OF HAYK KHACHATRYAN	95
Lusine Vardanyan, Arpine Tatlyan SOME SEMANTIC AND PRAGMATIC PECULIARITIES OF TAG QUESTIONS IN MODERN ENGLISH	101
Sahakyan Varduhi **SEVERAL LINGUOSTYLISTIC FEATURES IN THE WORKS OF KOMITAS HAKOBYAN**	105
Narine Agajanyan THE FORMATION OF KARABAKH AUTONOMOUS REGION	110
Bella Gasparyan ANTI-ARMENIAN ACTIVITY OF SOVIET AZERBAIJAN IN THE YEARS OF AUTONOMY OF NAGORNO-KARABAKH	115
Nonna Gyurjyan TURKISH FACTOR 1991-1994 IN THE ARTSAKH CONFLICT	120
Varditer Karapetyan STONE EVIDENCE OF THE MUSIC	125

Armen Chopuryan **MODERLAND-DIASPORAN PRESS**	128
Ellada Hayrapetyan ANTI-ARMENIAN MANIFESTATIONS DURING AZERBAIJAN-KHARABAKH CONFLICT IN AZERBAIJAN UNDER CONTROL IN PLACES. . CONDEMNATION FROM THE POINT OF VIEW OF INTERNATIONAL LAW	132
Meri Sardaryan THE REASONS OF THE DEFEAT OF ARMENIAN IN TURKISH-ARMENIAN WAR IN 1920 AND ITS LESSONS	137
Ruzanna Sargsyan ARMENIAN HEROINE WOMEN ON NATIONAL LIBERATION MOVEMENT	142
Abrahamyan Eline **THE TSAKHUR'S HISTORY, CULTURE AND TRADITIONS** **(ISSUE DEFINITION)**	147
Nonna Alaverdyan THE CONTRADICTORY ASPECTS OF NATIONAL ISSUE IN RSFSR	152
Nina Hayrapetian SOME ASPECTS OF HISTORY AND CULTURE OF UDI PEOPLE (FORMULATION OF THE PROBLEM)	157
Elen Hovseyan **SOME ASPECTS OF HISTORY AND CULTURE OF TALYSH PEOPLE** **(ISSUE DEFINITION)**	164
Zoya Chatinyan 1848 FRENCH REVOLUTION IN EUROPE PERIODICAL ASSESSMENT	169
Astkhik Ohanyan THE CONSEQUENCES OF THE CONQUEST OF CONSTANTINOPLE AND ITS IMPORTANCE IN WORLD HISTORY	174
Christina Burnazaki NATIONAL CULTURE AND CHALLENGES OF MODERNITY	180
Irina Gabrielyan **TAIWAN: THE DEMOCRATIZATION PROCESS AGAINST DIPLOMATIC LIMITATION**	184
Lida Gasparyan ***BASIC MECHANISMS, FORMS AND METHODS OF POLITICAL PROPAGANDA***	190
Hayrapetyan Alyona PROBLEMS OF PARTY SYSTEM OF ARTSAKH	194
Tamara Hakobyan **PROPAGANDA OF AZERBAIJAN IN THE INFORMATION WAR AROUND ARTSAKH**	198
Marine Kirakosyan THE IMPACT OF GEOPOLITICAL FACTORS ON THE APPLICATION OF INTERNATIONAL TERRITORIAL ADMINISTRATION IN CONFLICT REGULATION PROCESSES	203
Anush Mirzoyan AZERBAIJAN'S OIL INDUSTRY AND ITS IMPACT ON DOMESTIC AND FOREIGN POLICY	208
Arthur Tunyan **POLITICAL WAYS AND PROSPECTS OF ARTSAKH CONFLICT SETTLEMENT**	213
Violetta Petrosyan ***THE REQUIREMENTS FOR INTERNATIONAL LEGAL PERSONALITY OF STATES:*** ***THE CASES OF ARTSAKH AND KOSOVO***	217
Margarit Petrosyan MULTI-PARTY SYSTEM FORMATION AND CONSOLIDATION IN NON-RECOGNIZED STATES: THE CASE OF ARTSAKH	224
L.M. Sarkisyan **INFLUENCE OF THE IMAGE OF POLITICAL LEADERS ON THE IMAGE OF STATES (ON THE EXAMPLE OF THE REPUBLIC OF ARTSAKH)**	231
Maria Babayan THE PSYCHOLOGICAL STATE OF THE SPORTSMAN BEFORE THE START	234
Arpine Badalyan	239

THE PATRIOTIC EDUCATION IN THROUGH CHILDREN'S LITERATURE AS MENTIONED IN THE ARTICLE	
Oksana Mardanyan WAYS EFFICIENCY OF COMMUNICATION AND STUDENT'S PROFESSIONAL SELF-DETERMINATION	243
Albert Zourabyan **THE INFLUENCE OF ROMANTIC FILMS ON THE ORGANIZATION OF YOUNG PEOPLE'S PERSONAL LIVES**	247
Misha Tadevosyan STATUS AND PECULIARITIES OF VOCATIONAL GUIDANCE IN EDUCATIONAL INSTITUTIONS IN ARMENIA. RESULTS OF A RESEARCH	250
Janna Terlemezyan **THE INFLUENCE OF MUSIC ON HUMAN**	254
Armine Sevumyan THE ISSUE OF VIOLENCE PLAY THERAPY AS BASIC MEANS OF PSYCHOLOGICAL WORK	258
Ani Tananyan SOME PROBLEMS OF SWINDLE QUALIFICATION	264
Gohar Khachatryan THE ACCEPTANCE OF INHERITANCE AFTER A PERIOD OF 6 MONTHS: SOME QUESTIONS OF ARTSAKH'S CIVIL CODE	269
Mariam Mkhitaryan **LEGAL STATUS OF ORGANS, TISSUES AND HUMAN CELLS AFTER DEATH**	273
Adelina Sargsyan **SOME QUESTIONS OF QUALIFICATION OF CRIMES AGAINST OWNERSHIP WITH THE APPLICATION OF HYPNOSIS**	278
Luiza Nersesyan THE IMPORTANCE OF ACCEPTANCE OF THE LAW «ABOUT DOMESTIC VIOLENCE»	282
Varazdat Sukiasyan PROBLEMS OF APPLICATION OF HOUSE ARREST IN RA	293
Irina Arzoumanyan ECONOMIC GROWTH AS A PRECONDITION OF SOCIAL-ECONOMIC DEVELOPMENT OF NKR	298
Nina Balayan **COMPARATIVE ANALYSIS OF ECONOMIC DEVELOPMENT OF UNRECOGNIZED STATES (NKR, ABKHAZIA, TRANSDNIESTRIA)**	304
Inga Ghalayan *THE OPPORTUNITIES OF EXPORT EXPANSION OF THE RA UNDER CONDITIONS OF THE EAEU MEMBERSHIP*	310
Gohar Harutyunyan **THE MAIN PROBLEMS OF SOCIAL ASSISTANCE IN THE NKR**	316
Jasmina Hayrapetyan **TOURIST AND RECREATIONAL RESOURCES OF ARTSAKH**	319
Souren Minasian **DETERMINANTS OF MIGRATION IN RA**	330

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
(հոդվածների ժողովածու)

SCIENTIFIC READINGS
(collection of articles)

НАУЧНЫЕ ЧТЕНИЯ
(сборник статей)

Տեխնիկական խմբագիր՝ Ռ. Հովսեփյան

Հանձնված է շարվածքի՝13.09.2017 թ.: Ստորագրված է տպագրության՝ 17.11.2017թ.

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ; Ծավալը, 42.5 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 100:

Հիմնադիր՝ Արցախի պետական համալսարան, Ստեփանակերտ, Մ. Գոշի փ. 5
հեռ. (047) 94-04-91, ֆաքս (047) 97-12-14
E-mail: rector@asu.am
ԱրՊՀ հրատարակչություն՝ հեռ. (097) 34-01-86,
e-mail printery.asu@mail.ru

Основатель – Арцахский государственный университет г.Степанакерт, ул.Мхитара Гоша 5,
тел. (047) 94-04-91, факс (0479) 7-12-14
Издательство АрГУ: тел. (097) 34-01-86

Founder - Artsakh State University, 5 Mkhitar Gosh st., Stepanakert
Tel.: (047) 94-04-91, Fax: (0479) 7-12-14
ASU Publishing house: Tel. (097) 34-01-86